ՎԱՀԵ ԵՐԿԱՆՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՐՈՒՅԹ ՀԱՄԱՐ

ԱՆԴՐԿՈՒԿԱՍՈՒՄ



ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ВАГЕ ЕРКАНЯН

БОРЬБА ЗА НОВУЮ АРМЯНСКУЮ ШКОЛУ В ЗАКАВКАЗЬЕ

(1870—1905)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՀԵ ԵՐԻԱՆՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

(1870—1905)

Ա II
4ց932

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1970

37 (c43) (09)
Ե 87

Աշխատության մեջ պատմաքննական վերլուծության են ենթարկվում արևելահայ նոր դպրոցի կազմավորման ու զարգացման հարցերը, ցույց է տրվում այդ դպրոցի դերն ու նշանակությունը ազգային կոնսոլիդացիայի հարաճուն պրոցեսում, լուսաբանվում է դպրոցի դեմոկրատացման ու աշխարհականացման համար ծավալված հասարակական պայքարը, ինչպես նաև ցարիզմի հակաժողովրդական, դաղութային քաղաքականության դեմ, հանուն ազգային կրթության ու մայրենի լեզվի ազատության մղած հայ ժողովրդի պայքարը։ Աշխատությունն ավարտվում է 1905 թ. իրադարձություններով, երբ հեղափոխության բարձրացող ալիքը և հայ ժողովրդի համառ դիմադրությունն ստիպեցին ցարիզմին վերականգնելու XIX դ. վերջին փակված հայկական դպրոցների գոյության իրավունքը։

Պատասխանատու խմբագիր
ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1—6—1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բազմադարյա պատմություն ունի հայ ժողովրդի մշակույթը։ Սկիզբ առնելով խոր անցյալում, այն կտրել է երկար ու համառ պայքարի ճանապարհ, կրել է բազմաթիվ ազդեցություններ, հարըստացել է, հարստացրել հարևան ժողովուրդների մշակույթը, բայց մնացել է միշտ խորապես ազգային, ինքնատիպ։

Իրերի բերումով երկար ժամանակ զրկված լինելով պետականությունից, ենթարկվելով օտար նվաճողների ու վայրագ ցեղերի ասպատակություններին, հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր հոգևոր կորովը, միշտ միջոցներ ու հնարներ է գտել մշակութային կյանքի ամենաբազմազան դրսևորումներում արտահայտելու իր հույզերն ու ձգտումները, միշտ եկող սերնդին ավանդել է աչքի լույսի պես պահպանել նախնիների ստեղծած հոգևոր արժեքները՝ հանուն լուսավոր ապագայի, հանուն ազգային գոյատևման, որին նա խորապես ու սրբությամբ հավատացել է։

Դրա համար էլ դպրոցը, ազգ սերնդի կրթության ու լուսավորության գործը որոշակի ու կարևոր տեղ են ունեցել ժողովրդի հոգևոր ոգորումների ոլորտում։ Հայ գրերի գյուտից հետո դպրոցը նոր նշանակություն է ստանում, դառնում է ժողովրդի ազգային գոյատարտի ակնառու կռվաններից մեկը։ Սկզբում հանդես գալով որպես պետական կազմակերպություն, դպրոցը հետագայում ըստիպված էր ծվարել եկեղեցու շուրջը, մտնել վանական խուցերը, կրելով ազգային ինքնավար ոգու պահպանության ծանր ու պատվավոր հոգսը։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պայմաններ ստեղծեց, որպեսզի հայ ժողովրդի այդ հատվածը տնտեսական ու կուլտուրական կապերով կապվի ավելի առաջավոր մի երկրի հետ, որը հետագա տասնամյակներում դառնալու էր միջազգային հեղափոխական շարժման կենտրոններից մեկը։ Ցարական ռազմա-ֆեո-

դալական տիրապետության դեմ ծավալվող շարժումը, 1860-ական թվականների ազատաշունչ ոգին, ճորտատիրական կարգերի վերացումից հետո Երկրում բուրժուական հարաբերությունների արագացած զարգացումը ավելի խորացրին դասակարգային հակասությունները: Դարավերջին ծնունդ առած սոցիալ-դեմոկրատիան նոր իմաստ ու բովանդակություն հաղորդեց աշխատավորական զանգվածների սոցիալ-քաղաքական պայքարին: Բուրժուական հարաբերությունների ընդհանուր առաջընթացը, տնտեսական զարգացումը լայնորեն շոշափում էին նաև հոգևոր կյանքի ոլորտները: Նոր խնդիրներ ու պահանջներ էին առաջադրվում ժողովրդական լուսավորությանը: Յարիվոն աշխատում էր ժողովրդական զանգվածներին պահել տգիտության ու խավարի մեջ, նրանց զրկել հնագանդ կամակատարներ, իսկ օր-օրի ամրապնդվող դեմոկրատիան ցանկանում էր դպրոցը վերածել իսկական ժողովրդական հաստատության, լուսավորել ժողովրդի զավակներին, նրանց դարձնել ազատության գիտակից մարտիկներ: Նոր դպրոցին, ժողովրդական լուսավորությանը նոր բովանդակություն հաղորդելու համար ծավալվող հասարակական պայքարն իր ուրույն տեղն ուներ ցարիզմի, բուրժուա-կալվածատիրական կարգերի դեմ մղվող սոցիալ-քաղաքական պայքարի ընդհանուր շրջանում:

Ռուսաստանի մյուս ճնշված ժողովուրդների նման, հայ ժողովուրդը ևս մոտիկից հաղորդակցվեց երկրում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական ու հասարակական տեղաշարժերին: Սոցիալական ու ազգային ազատագրության խնդիրները առանձին կարևորություն էին հաղորդում հայ ժողովրդի լուսավորությանը, մանավանդ, որ XIX դարի կեսերից լայն ծավալ էր առացել ազգային համախմբման պրոցեսը: Ազգային զարթոնքը, ժողովրդին ինքնագիտակցության բերելու անհրաժեշտությունը հրամայաբար պահանջում էին հրաժարվել հին կրոնա-սխոլաստիկ դպրոցից, աշխարհականացնել ու դեմոկրատականացնել այն, նոր շունչ ու բովանդակություն հաղորդել նրան:

Ներկա աշխատությունում քննության են առնվում հայ ժողովրդի արևելյան հատվածում տեղի ունեցած կրթական-լուսավորական շարժման հարցերը, լուսաբանվում են ազգային նոր դպրոցի կազմավորման ու նրա համար մղված հասարակական պայքարի խնդիրները:

Աշխատության ընդգրկած ժամանակաշրջանը (1870—1905) բնորոշ է նրանով, որ, եթե XIX դ. նախորդ տասնամյակ-

ները և հատկապես 1850—60-ական թվականները ավելի շատ հայ նոր դպրոցի դաղափարական հիմնավորման շրջանն էին, ապա 1870-ական թվականներից սկսվեց գործնական կիրառությունների շրջանը, ձևավորվեց ու զարգացման որոշակի փուլ ապրեց նոր ժամանակների ոգուն համապատասխանող արևելահայ մասսայական դպրոցը՝ իր բոլոր անհրաժեշտ ատրիբուտներով:

Հայ նոր դպրոցի վերելքի շրջանը տևեց մինչև 1880-ականների կեսերը: 1886 թ., մեկ տարի փակ մնալուց հետո, ցարական բյուրոկրատիայի ստեղծած կապանքներում թիրտալով, այդ դպրոցը աշխատեց ոտքի կանգնել, բայց 1890-ականների կեսերին ցարիզմն անողոք հարվածով վերջ տվեց նրա գոյությանը: Տասնամյա դադարից հետո, 1905 թ. հեղափոխության օրերին նա հնարավորություն ստացավ վերակենդանանալու:

Ուրեմն, 1870—1905 թթ. ընդգրկող շրջանը արևելահայ դպրոցի պատմության մի ամբողջական, որոշակի փուլ է, որի ժամանակ ցցուն կերպով դրսևորվեցին այդ դպրոցի դերն ու նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, նրան եկան նրա բնորոշ առանձնահատկությունները, թույլ և ուժեղ կողմերը:

Միաժամանակ հարցն ուսումնասիրվում է ամբողջ Անդրկովկասի մասշտաբով: Սա ևս ունի իր հիմքերը: Նախ, տվյալ ժամանակաշրջանում արևելահայերի ճնշող մեծամասնությունը ցրված էր Անդրկովկասի գրեթե բոլոր մասերում: Բուն Արևելյան Հայաստանից բացի, հայերը հոծ խմբերով բնակվում էին Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Բաքվի նահանգներում և այլուր: Նախորդ շրջաններում հայերի լուսավորական օջախները ստեղծվում և գործում էին ժողովրդի հիմնական բնակության վայրերից դուրս, օտար երկնակամարների տակ (եվրոպական երկրներ, Հնդկաստան, Մոսկվա, Ղրիմ և այլն): Ազգային ինքնաճանաչողության խորացմանը զուգընթաց, հայ լուսավորական գործիչները զգացին կրթությունը, դպրոցները ժողովրդի բնակության բուն շրջանին մոտեցնելու կենսական անհրաժեշտությունը և լայն պրոպագանդ ծավալեցին այդ ուղղությամբ:

Անդրկովկասն էր այն երկրամասը, որտեղ հատկապես 70-ական թվականներից լայնորեն մուտք գործեց հայկական նոր դպրոցը: Այստեղ կենտրոնացան ազգային կրթական գործիչների հիմնական ուժերը. Անդրկովկասում գործող մի շարք հայկական դպրոցներ դարի վերջին քառորդում զգալի առաջընթաց ապրեցին ու ստացան համազգային նշանակություն: Ռուսաստանի այլ վայ-

յներում գործող հայկական դպրոցներն աստիճանաբար կորցրին իրենց առաջնակարգ նշանակությունը։

Չնայած այն բանին, որ հայկական դպրոցը XIX դարի երկրորդ կեսին արմատական շրջադարձ ապրեց և դարձավ ժողովրդի առանձնահատուկ ուշադրության առարկան, և չնայած, որ նրա նշանակությունն արժանացել է անառարկելի ճանաչման, մինչև օրս այդ շրջանի արևելահայ դպրոցը չի ենթարկվել ամբողջական, ընդհանուր պատմաբննական ուսումնասիրության։

Նախասովետական հայ ուսումնասիրողները բավարարվել են առանձին կրթական հաստատությունների մասին որոշ նյութեր հրապարակելով։ Մեծ մասամբ կապված լինելով դպրոցական կյանքի հետ, նրանք, բնականաբար, վեր են հանել իրենց ժամանակաշրջանի դպրոցների ցավոտ հարցերը, աշխատել են ուղիներ նշել նրանց բարելավման համար (Գ. Խատիսյան, Հովհ. Նազարյան, Լ. Սարդսյան)[1]։ Առանձին դպրոցների պատմության վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել Ա. Երիցյանցը, Ա. Ղևոնյանը, Ստ. Մալխասյանցը, Լեոն և ուրիշներ։ Այս ուսումնասիրողները հիմնականում սահմանափակվել են տվյալ դպրոցի անցած ուղին օբյեկտիվ փաստերի հիման վրա շարադրելով։ Նրբանք մեծ մասամբ չեն խորացել պատմական երևույթների մեջ, չեն վերլուծել կրթական շարժման էական հարցերը, դպրոցը կապել են քաղաքական-հասարակական իրադրությունից։ Սակայն բազմավաստակ պատմաբան Լեոն Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությանը նվիրված աշխատություններում հաջողությամբ փորձել է դուրս գալ մի դպրոցի սահմաններից և ստեղծել կրթական վիճակի ընդհանուր պատկերը, թեմական դպրոցների կյանքը շաղկապել ժամանակի հրատապ խնդիրների հետ։ Լեոյի այդ երկու աշխատությունները մինչև օրս էլ մնում են որպես արևելահայ կրթական հարցերին նվիրված ուշադրավ ու արժեքավոր գործեր։

Դպրոցական կյանքի պատկերը տալու փորձ է արել Գր. Երզընկյանցը իր «Պատմություն մանկավարժության» դրքով։ Սակայն նա ձեռնպահ է մնացել կրթական շարժման ընդհանուր հարցերից և բավարարվել է փաստերի շարադրումով։

Իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը» ևհատոր

---

[1] Այս և նախքոհիշյալ հեղինակների աշխատությունները տե՛ս դրքի վերջում բերված օգտագործված դրականության ցանկում։

աշխատության մեջ Դ. Անանունը կատարել է կրթական գործի վերլուծությունը: Ընդհանուր մեծ շարիխներով տալով արևելահայ դպրոցի ուղին ողջ XIX դարի ընթացքում, հեղինակը սակայն չի խորացել նրա ներքին կյանքի մեջ, չի անդրադարձել կրթական գործիչների ձեռնարկած ջանքերին. դրանով էլ դպրոցի պատկերը ամբողջական չի ստացվել:

Նախասովետական պատմագրության մեջ արևելահայ դպրոցին անդրադարձած մի խումբ հեղինակներ էլ (Գ. Զալխուշյան, Ա. Ջիվելեգով, Մ. Մուրադյան, Է. Ակունի, Ե. Գևորգյան) խնդրին մոտեցել են միմիայն ցարիզմի վարած քաղաքականության տեսանկյունից և անտեսել դպրոցական կյանքի բազմաթիվ այլ էական հարցեր:

Սովետական շրջանում փորձեր արվեցին հայ դպրոցի պատմության նոր լուսաբանման ուղղությամբ: Վերջերս պրոֆ. Մ. Սանթրոսյանը հրապարակեց XIX դարի առաջին կեսի արևելահայ դպրոցի ամբողջական պատմությունն ընդգրկող արժեքավոր մի աշխատություն, երևան եկան հայ խոշոր մանկավարժներին նվիրված ուսումնասիրություններ, որոնց մեջ առանձնահատուկ տեղ գրավեց պրոֆ. Ա. Շավարշյանի կազմած ու խմբագրած «Հայ մանկավարժներ» երկհատորանոց ժողովածուն: Նրանում զետեղված առաջաբանը և առանձին մանկավարժների մասին վերլուծական հոդվածները հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմել նոր ժամանակների հայ մանկավարժական մտքի ձևավորման ու զարգացման, ինչպես նաև հայ դպրոցի հետ կապված մի շարք հարցերի մասին:

Վերջին տարիներին նկատելիորեն մեծացել է հետաքրքրությունը նոր շրջանի արևելահայ դպրոցի պատմության նկատմամբ: Սովետահայ մասնագիտական պարբերականներում հոդվածներ են տպագրվել XIX դարի երկրորդ կեսի դպրոցական առանձին հարցերի մասին (Ն. Սարգսյան, Մ. Գամազկյան, Հ. Ներսիսյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ա. Դանիելյան):

Սակայն հրապարակի վրա մեզ հետաքրքրող հարցի մասին դեռևս չկան պատմագիտական ծավալուն մենագրություններ: Պատմաբանները դպրոցի հետ կապված հարցերին անդրադարձել են միայն մասնակիորեն, այնքանով, որքանով դա առնչվել է իրենց հետազոտած թեմային (Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան, Թ. Հակոբյան):

Նշված ուսումնասիրության ընդգրկած հարցերից պատմագրության կողմից առավել ուշադրության է արժանացել 1903 թ.

հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը (Ն. Մելիք-Յոլչյան, Դ. Դաբրիելյան, Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան, Գ. Հարությունյան, Հ. Մելիքյան, Խ. Բարսեղյան, Ա. Համբարյան, Դ. Մուրադյան, Հ. Իսահակյան և ուրիշներ)։ Սակայն հիշյալ ուսումնասիրողները հարցին մեծ մասամբ մոտեցել են միայն 1905—1907 թթ. հեղափոխության նախօրյակի տնտեսկյանից, հանդամանորեն կանգ չեն առել այդ պայքարի մանրամասնությունների և, մասնավորապես, դրան նախորդած պատմական անցքերի վրա։ Ներկա ուսումնասիրությունը, որի 5-րդ գլուխը նվիրված է 1903 թ. իրադարձություններին, նաև մի փորձ է նրանց թողած բացը լրացնելու ուղղությամբ։

Ասվածից պարզ է, որ մինչև այժմ XIX դարի երկրորդ կեսի արևելահայ գաղթոցի պատմագիտական ընդհանուր, ամբողջական ուսումնասիրություն չի կատարվել, մի բան, որի պակասը խիստ զգալի է։ Այս աշխատությամբ հեղինակը նպատակ է դրել հնարավորության սահմաններում լրացնել այդ բացը։ Ուսումնասիրության թեման ինքնին խիստ ծավալուն է։ Դա ստիպել է գիտակցաբար խուսս տալ որոշ հարցերի մեջ մանրամասն խորանալուց, նեղ-մանկավարժական խնդիրների վերլուծությունից և հիմնական շեշտը դնել հարցի հասարակական կողմի վրա, տալ հայ նոր դպրոցի կազմավորման, զարգացման ու նրա դոյության համար մղված պայքարի ընդհանուր պատկերը։

Անտարակույս, սրանով հարցը բնավ չի սպառվում, և XIX դարի երկրորդ կեսի արևելահայ դպրոցի պատմությունը դեռևս պետք է ունենա նորանոր ուսումնասիրողներ։

Աշխատությունը գրելիս հաշվի են առնվել հիշատակված հեղինակների գործերը, ուսումնասիրվել է թեմայի հետ առնչություն ունեցող մասնագիտական գրականությունը։ Օգտագործվել են նախասովետական շրջանի հայ և ռուսական մամուլի բազմաթիվ օրգանների նյութերը։ Շարադրանքի հիմնական նյութ են ծառայել արխիվային այն հարուստ փաստաթղթերը, որոնք հայտնաբերվել են Լենինգրադի ՍՍՀՄ Պետական կենտրոնական պատմական արխիվում (ՍՍՀՄ ՊԿՊԱ), Հայկական ՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվում (ՀՊԿՊԱ), Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժնում (ԳԱԹ), Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ-Մատենադարանի արխիվային բաժնում (Մատեն.), Հայկական ՍՍՀ Դ.Ա. պատմության ինստիտուտի արխիվում (ՊԻԱ)։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(XIX դարի սկզբից մինչև 1870-ական թթ.)

Նոր իրավիճակ դարասկզբին: 1836 թ. կանոնադրությունը: Առևելահայերի դպրոցական գործի վիճակը մինչև դարակեսը: Դարակեսի տնտեսական ու բաղաքական վերելքը: Հայերի ազգային ճամախմբման ծավալումը և ժողովրդին լուսավորելու խնդիրը: Վերաբերմունք եկեղեցու նկատմամբ: Լուսավորական շարժումը և նրա առաջադրած խնդիրները: Առաջին գործնական քայլերը. հոգաբարձության ձևավորումը: Ամփոփում:

Հայ ժողովուրդը պատմության նոր ժամանակներին էր հասել տնտեսապես ու կուլտուրապես խիստ թուլացած: Թուրք-պարսկական դարավոր լուծը քամել էր երկրի ուժերը, կործանման եզրին հասցրել նրան: Օրհասական դրությունից ելք որոնելով, հայ ժողովուրդն իր հայացքը հառեց Հյուսիսի մեծ հարևանին՝ Ռուսաստանին, նրա հետ կապելով փրկության հույսը: Ռուսաստանի մուտքն Անդրկովկաս և մանավանդ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, նոր պայմաններ, նոր իրավիճակ ստեղծեցին հայ ժողովրդի համար: Նրա արևելյան հատվածը կապվեց Թուրքիայից ու Իրանից ավելի զարգացած մի երկրի հետ, և դա խոշոր նշանակություն ունեցավ նրա հետագա առաջընթացի համար: Թեև չլուծվեց հայ ժողովրդի ազգային ազատագրության խնդիրը, սակայն նախկին անկարգ-անկանոն ռեժիմին, թալանին ու սվերին փոխարինելու եկան անձի ու սեփականության ապահովության, ստեղծվեցին ապրելու և գործելու անհամեմատ նպաստավոր ու խաղաղ պայմաններ:

Տիրելով Անդրկովկասին, ցարիզմը բնականաբար պետք է աշխատեր այնտեղ հաստատել ռուսական միապետության ձգտում-

ներին ու պահանջներին համապատասխանող կարգեր, պետք է տեղական հիմնարկություններին ու կազմակերպություններին տար որոշակի ուղղություն ու դիրք: Հայտնի է, թե ինչպիսի դեր էր խաղում ցարիզմի համար հայ եկեղեցին նրա արևելյան քաղաքականության մեջ: Ցարական իշխանությունները չէին կարող անտարբեր մնալ այդ եկեղեցու հետագա ճակատագրի նկատմամբ և պետք է ձգտեին նրա կազմակերպությանը ևս ցանկալի ուղղություն տալ: Դրա նախաձեռնողը եղավ Կովկասի կառավարիչ Պասկևիչը, որի միջամտությամբ կազմված հանձնաժողովը մշակեց հայ եկեղեցու կանոնադրության նախագիծը: Երկար քննարկումներից ու փոփոխություններից հետո այն հաստատվեց ցարի կողմից 1836 թ. մարտի 11-ին «Հայ-լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրություն» անվամբ, որը պատմության մեջ հայտնի է «Պոլոժենյե» համառոտ անունով:

Ըստ «Պոլոժենյեի» հայոց եկեղեցին «վայելում է Թագավոր-Կայսեր Ամենաողորմած հովանավորությունը»: Կայսրության մեջ հայ-լուսավորչական հոտը բաժանվում էր վեց թեմերի՝ 1. Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի, 2. Աստրախանի, 3. Երևանի, 4. Վրաստանի և Իմերեթիայի, 5. Ղարաբաղի կամ Արցախի, 6. Շիրվանի կամ Շամախու (հետագայում Ռուսաստանին միացված Կարսի մարզը մտցվեց Երևանի թեմի կազմում): Թեմերի ներսում հաստատվում էին հաջորդություններ:

Սրան զուգահեռ ստեղծվում էին մի շարք սահմանափակումներ բյուրոկրատական ասպիճանականության տեսքով՝ սինոդ-կոնսիստորիաններ, սինոդի դատախազ, որը պետության ներկայացուցիչն էր էջմիածնի սինոդում, օժտված բավական լայն լիազորություններով:

Մեզ ամենից ավելի հետաքրքրում է «Պոլոժենյեի» այն մասը, որ վերաբերում է դպրոցական գործին: Ինչպես ասվեց, եկեղեցին վաղուց ի վեր հանդիսացել էր հայոց դպրոցների իրավատերն ու կազմակերպիչը: Եվ այժմ էլ, ստեղծված նոր իրավիճակում, ցարիզմը հաշվի առավ այն քաղաքական դերն ու նշանակությունը, որ ձեռք էր բերել եկեղեցին հայ ժողովրդի կյանքում: Ցարական կառավարության համար այդ եկեղեցին էր այն միակ կազմակերպությունը, որին կարելի էր վստահել հայ երեխաների կրթության գործը և ուշած ժամանակ ցանկալի ուղղություն տալ հայոց դպրոցներին: Այն ժամանակ, երբ երկրամասը դեռ նոր էր նվաճվել, երբ դեռ նոր-նոր էր սկսվում նրա յուրացումը, երբ ամբողջ Ռու-

աստատանն էր ընկղմված տգիտության խավարի մեջ և կառավարությունը ցանկություն էլ չուներ միջոցներ գտնելու ժողովրդի լուսավորության համար, հայերի նման մի փոքրաքանակ ժողովրդին դպրոցական ինքնավարություն տալը ցարիզմի համար առանձին վտանգ չէր ներկայացնում։

Ինչո՞վ էր արտահայտվում հայ դպրոցին «Պոլոժենյեի» տված ինքնավարությունը։ «Պոլոժենյեն» թեմական առաջնորդների պարտականությունն էր համարում դպրոցական գործին հետևելն ու ղարգացնելը։ Այդ առթիվ կանոնադրության մեջ արձանագրված էր.

«§ 1178. Հայոց առաջնորդները նույնպես լուրջ ուշադրություն են դարձնում վանքերի և եկեղեցիների մոտ գտնված դպրոցների վրա ընդհանրապես, և մասնավորապես թեմերը այցելության եկած ժամանակ, օգնելով իրանցից կախված բոլոր միջոցներով այդ ուսումնարանների բարեկավության և տարածման. նրանք պիտի դլխավորապես հոգ տանեն նրանց մեջ կանոնավոր և հարմար դասավանդության եղանակ մտցնել, և բարի վարք ու բարք պահպանել ուսուցիչների և աշակերտների մեջ»[1]։

«Կանոնադրությունը» պարտավորեցնում էր սինոդին կատարելու վանքերի, եկեղեցիների և դպրոցների հիմնարկության գործերի նախնական քննությունը և ներքին գործերի մինիստրի միջոցով կայսեր թույլտվության ձեռք բերումը, ունենալու Ռուսաստանի բոլոր հայոց եկեղեցիների, վանքերի, դպրոցների ճիշտ ցուցակն ըստ թեմերի։ Թեմական կոնսիստորիանները պարտավոր էին հետևել դպրոցների բարեկարգությանը, նոր դպրոցների բացման համար միջնորդություն անել սինոդին, վարել դպրոցական հաշվեվարությունը։

«Կանոնադրության» 7-րդ բաժինը լրիվ նվիրված էր դպրոցական հարցերին.

«§ 1206. Հայ պատանիների աստվածաբանական գիտությունների մեջ կրթվելու համար հաստատված են էջմիածնի վանքում հոգևոր ճեմարան և ամեն մի Ռուսահայոց թեմում մի հոգևոր դպրանոց (սեմինարիա)։

§ 1207. Էջմիածնի հայոց հոգևոր ճեմարանը գտնվում է Ամենայն հայոց վեհափառ Պատրիարք-Կաթողիկոսի գլխավոր իշխանության տակ, իսկ հոգևոր դպրանոցները կախված են իրանց թեմական իշխանություններից։

---

1 Ն. Վ. Մելիք-Թանգյան. *Հայոց եկեղեցական իրավունքը*, դիրք Ա, Շուշի, 1903, էջ 693։

§ 1208. Հայոց հոգևոր դպրանոցների ուսման ընթացքը և բոլոր ներքին կարգը որոշվում են առանձին կանոններով, որոնք կազմվում են այս դպրանոցների հոգևոր իշխանություններում ընդհակոդությամբ և նախագահությամբ արքեպիսկոպոսների (առաջնորդների), քննվում են էջմիածնի Հայոց Սինոդում և հաստատվում բարձր կառավարությամբ»[1]:

Հոգևոր դպրանոցների նյութական միջոցները կազմվում էին ավյալ թեմի եկեղեցիներում և վանքերում կատարված հանդանակությունից, վանքերի եկամուտներից ու նվիրատվություններից:

Այսպիսով, հայ եկեղեցու վրա բավական լայն պարտականություններ էին դրվում դպրոցական գործի կազմակերպման ուղղությամբ:

Սակայն «Կանոնադրությունը» խիստ թերի էր ու հակասական: Շատ հարցեր արտացոլում չէին գտել նրա մեջ: Հաճախ շփոթություն էր առաջանում սովորական եկեղեցական դպրոցի և հոգևոր դպրանոցի (սեմինարիայի) հասկացողության մեջ, որոշակիություն չկար դպրոցների տիպերի, աստիճանների, աշակերտների կազմի, ուսման ծավալի ու տևողության հարցերում, պարզ չէր, թե ինչպիսի կարգ պետք է գոյություն ունենար վանքերին ու եկեղեցիներին կից դպրոցների կանոնադրությունները մշակելիս, ինչպիսի փոխհարաբերություն պետք է լիներ արքունի և հայոց եկեղեցական դպրոցների միջև[2]:

Եվ այս վիճակը պետք է բազմաթիվ տհաճ տիրույթներ առեղծեր, որպեսզի հետագայում «Պոլոժենյեն» դառնար վիճաբանությունների ու մեկնաբանությունների առարկա մի կողմից հայ դպրոցի վրա ճնշումն ամրապնդող ցարական բյուրոկրատիայի և մյուս կողմից այդ ճնշմանն ընդդիմացող հայ հոգևորականության միջև:

«Պոլոժենյեն» թշնամանքով ընդունվեց ազգային պահպանողական շրջաններում և արտասահմանի հայ հասարակության կողմից, որոնք նրա վրա նայում էին որպես հայ եկեղեցու և կաթողիկոսի դարավոր իրավունքները բռնաբարողի, որպես հայերին ձու-

---

1 Նույն տեղում, էջ 701:

2 Դասավանդվող առարկաների մասին «Կանոնադրության» միայն 1836 թ. խմբագրության մեջ նշվում էր, որ, ի թիվս սովորական առարկաների, պետք է պարտադիր կերպով ավանդվեն ռուսաց լեզու, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն: Միայն այսքանը:

գելու միջոցի։ Արտասահմանյան հայերի բողոքները տարի հանդիսացան, որպեսզի դրվի «Կանոնադրության» վերանայման հարցը, բայց ամեն անգամ տարբեր պատճառներով այդ վերանայումը ձգձգվեց ու «Պոլոժենյեն», մշտապես լինելով բազմաթիվ վեճերի ու դժգոհությունների առարկա, մինչև վերջ էլ մնաց առանց էական փոփոխությունների։

Չնայած այս բոլորին, «Պոլոժենյեն», անշուշտ, որոշ դրական դեր կատարեց ինչպես հայ եկեղեցու, այնպես էլ հատկապես դպրոցի կազմակերպման գործում։ Միայն այն, որ այդ դպրոցում պաշտոնապես չէր արգելվում հայոց լեզվի դասավանդումը (դասավանդման լեզվի մասին «Պոլոժենյեն» պարզապես ոչինչ չէր արձանագրում), ցույց է տալիս, թե ինչպիսի տեղ ու նշանակություն կարող էին ստանալ հայկական դպրոցները ապագայում՝ ժողովրդի մեջ լույս ու դիտություն տարածելու իմաստով։

Նվաճելով Անդրկովկասը, ցարիզմն իրեն նպատակ դրեց նաև «յուրացնել» այն, որին հասնելու կարևոր միջոցներից մեկն էր դպրոցական քաղաքականությունը։ Դաստիարակել «բարեխնամ հոգը»՝ ցարին հավատարիմ հպատակներ, երկրամասի տարբեր ազգություններին կտրել ազգային հիմքից և նրանց մղել ռուսականացման ուղուրը, պատրաստել վարչական մարմինների չինովնիկներ, բավարարել խիստ դանդաղ առաջացող տնտեսության չնչին պահանջները— ահա այդ քաղաքականության հիմնական շարժառիթները։ Այս մասին պարզ ու որոշակի արտահայտվել էր Պասկևիչը, գտնելով, որ Անդրկովկասը պետք է «կապել Ռուսաստանի հետ քաղաքացիական ու քաղաքական կապերով մի միասնական մարմնի մեջ և հարկադրել այնտեղի բնակիչներին խոսել, մտածել և զգալ ռուսերեն»[1]։

Սակայն սկզբնական շրջանում ցարիզմը գործում էր շատ դանդաղ ու անվճռական։ Երկար ժամանակ Անդրկովկասի միակ արքունի դպրոցը 1802 թ. Թիֆլիսում հիմնված ազնվականական ուսումնարանն էր։ Միայն երկրամասի վերջնական նվաճումից հետո կառավարությունը ձեռնամուխ եղավ նաև դպրոցական գործի կարգավորմանը։ 1830-ական թվականներին հիմնադրվեցին մի շարք գավառական ուսումնարաններ, այդ թվում՝ Շուշում, Երևանում, Ախալցխայում, Գանձակում, Նախիջևանում հրապարակվեցին կանոնադրություններ, 1848 թ. Հատատալից Կովկասի ու-

[1] «Колониальная политика российского царизма в Азербайджане в 20—60-х годах XIX в.», ч. I, М.—Л., 1936, стр. 21.

սումնական շրջանի հոգաբարձությունը։ Վերջինիս ենթարկվում էին արքունի, դանադան ընկերությունների, մասնավոր, ծխական, հոոմեա-կաթոլիկական հոգևոր դպրոցները, ինչպես նաև մզկիթներին կից դպրոցները։ Այդ ենթակայությունից դուրս էին ուղղափառ և հայ-լուսավորչական եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցները։

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին, ինչպես ասվեց, բարենպաստ պայմաններ ստեղծեց երկրամասի դանդաղ, բայց որոշակի առաջընթացի համար։ Այդ առաջընթացն իր արտահայտությունը գտավ նաև ազգային դպրոցի կյանքում։ Պարսկական և Թուրքական տիրապետության ժամանակ կրթական գործում առաջացած անշարժությունն սկսեց խախտվել։ Տեղ-տեղ երևան եկան հայկական դպրոցներ։

Խոսելով XIX դարի առաջին կեսի ազգային կրթության մասին, դժվար է արձանագրել նրանում դոյություն ունեցող մի որոշակի սիստեմ։ Փաստորեն դա մի ժամանակաշրջան էր, երբ նոր էր սաղմնավորվում մեր ազգային դպրոցը՝ նոր ժամանակների հասկացողությամբ։ Չկար դպրոցական միասնական կանոնադրություն, չկար մի որոշակի մարմին, որն ի վիճակի լիներ կարգավորել և միօրինակություն մտցնել դպրոցների տիպերի ու բնույթի մեջ։ Այդ բանը չկարողացավ անել նաև 1836 թ. «Կանոնադրությունը»։ Նրա մեջ մասնայական դպրոցների մասին հիշատակվում է միայն որպես «վանքերի և եկեղեցիների մոտ գտնվող դպրոցներ»։ Դրա համար էլ դպրոցական գործում ստեղծվեց խառնաշփոթ վիճակ. ազգային դպրոցները հանդես էին գալիս ամենաբազմազան անուններով՝ «մասնավոր», «եկեղեցական», «վանական», «հոգևոր», «ազգային», «ժողովրդական» և այլն։

Սակայն այս բոլորից կարելի է խիստ ընդհանուր գծերով սահմանազատել ազգային դպրոցների երեք տիպ, անկախ նրանց անվանումից։ Առաջինին պետք է վերագրել այն դպրոցները, որոնց նպատակն էր պատրաստել եկեղեցական սպասավորներ։ Դրանցից էին էջմիածնի ժառանգավորաց դպրոցը, վանական դպրոցները, ինչպես նաև 1836 թ. «Կանոնադրության» համաձայն ստեղծված թեմական դպրոցները Երևանում, Շուշում, Թիֆլիսում, Շամախում։ Այս դպրոցներում հիմնականում տիրում էր միջնադարյան սխոլաստիկ ոգին, նրանց լիներալ տերն ու տնօրենը եկեղեցին էր, թեև հետագայում արդեն թեմական դպրոցներն սկսեցին ավելի աշխարհիկ դունավորում ստանալ։ Նախնական շրջանում այդ

դպրոցները (բացառությամբ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի) խիստ ցածր մակարդակ ունեին և որևէ չէին տարբերվում սովորական եկեղեցական դպրոցներից։

Երկրորդ տիպի դպրոցների շարքին պետք է դասել հիմնականում Անդրկովկասի քաղաքներում և հայաշատ խոշոր բնակավայրերում ստեղծված դպրոցները (անկախ նրանց անվանումից), որոնց նպատակն էր կրթություն տարածել ժողովրդի ամենատարբեր խավերի մեջ (Ախալցխայում, Թիֆլիսում, Ախալքալաքում, Դանձակում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Ագուլիսում, Շուշում, Նուխիում և այլ վայրերում)։ Այդ դպրոցների մի մասը ստեղծվում էր հոգևորականների նախաձեռնությամբ, մյուսները ծնունդ էին առնում կրթված ու ժողովրդական լուսավորության գործին նվիրված մարդկանց ջանքերով՝ որպես մասնավոր դպրոցներ, ինչպես, Դ. և Հ. Արլանյանների, Դ. Պատկանյանի, Հ. Օրբելու, Խ. Աբովյանի դպրոցները։ Այս դպրոցների առանձնացումն արդարացվում է նրանով, որ սրանք արդեն զգալիորեն տարբերվում էին հնատիպ դպրոցներից, աշխատում էին լայնացնել դասավանդվող առարկաների շրջանակները, մոտենալ մանկավարժական նոր պահանջներին համապատասխանող կարգեր։

Ա ԿՏ932

Դպրոցների երրորդ տիպը եկեղեցիներին կից, ինչպես նաև տարին հոգևորականների մասնավոր նախաձեռնությամբ ստեղծվող դպրոցներն էին, որոնց հիմնական բնորոշ գիծը խավֆյակատնությունն էր։ Մի քիչ զրել-կարդալ, կրոն, երբեմն էլ թվաբանական նախնական գիտելիքներ— ահա այն ամենը, ինչ որ տալիս էին այդ դպրոցները։ Սրանք մեծ մասամբ զուրս էին եկեղեցու իրավասությունից և ապրում ու գործում էին իրենց ուրույն, վաղուց ի վեր սրբագործված չգրված օրենքներով։ Այս դպրոցների շարքին պետք է դասել նաև զրագետ հայուհիների՝ կույսերի ու վարպետների դպրոցները, որտեղ սովորում էին գեղատի աղջիկներ, ինչպես նաև փոքրահասակ տղաներ։

Այս ամենը, ինչ որ ասվեց դպրոցների տիպերի մասին, խիստ պայմանական է, քանի որ կրթական գործի հեղհեղուկ վիճակը, ընդհանուր առմամբ հոգևորականության ապաշնորհությունը, ժամանակի տնտեսական ու կուլտուրական կյանքի հետամնացությունը հնարավորություն չէին տալիս ստեղծելու ազգային քիչ թե շատ բարեկարգ դպրոցական սիստեմ։

Հատկապես ծանր էր դպրոցների նյութական միջոցների հարցը։ Շատ խղճուկ էին նաև այդ դպրոցների տված գիտելիքները։

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ջնչին բացառությամբ նրանցում սիրում էր միջնադարյան սխոլաստիկան, ուսման ծավալն ու բովանդակությունը կախված էին ուսուցչի ցանկությունից, չկար ուսուցման որոշակի ժամկետ, աշակերտի տարիքային սահմանափակում, ուսուցումը տևում էր կլոր տարին, դպրոցներում գրեթե գոյություն չուներ դաս— դասընթացային բաժանում: Գրագիտության ուսուցումը կատարվում էր հոգևոր տառահեգական մեթոդով, որն ավելի շուտ բթացնում էր աշակերտների միտքը: Ուսուցումը տարվում էր աշակերտներին անհասկանալի գրաբարով: Դպրոցի ուսումնական աշխատանքներին լուրջ խոչընդոտ էր նաև դասագրքերի խիստ պակասը:

Անկախ այս բոլորից, հայկական դպրոցական գործը սկսել էր առաջանալ, թեև շատ դանդաղ ու վարանոտ քայլերով: Դրա հիմնական պատճառը անտեսական կյանքի խիստ հետամնացությունն էր, ժողովուրդը մասսայաբար չէր զգում կրթության, գրագիտության տարածման հրամայական անհրաժեշտությունը: Դրանից էր, որ դեռևս բուն ժողովրդի մեջ մուտք չէր գործել ծխական-ժողովրդական դպրոցը: Լեոյի արտահայտությամբ այդ դպրոցը «դեռ հասարակական գիտակցության հիմնաքար չէր դարձել»[1]: Դպրոցը երերուն էր, անկայուն: Ինչպիսի մեծ դժվարությունների ու զոհողությունների գնով որ նա բացվում էր, նույնպիսի հեշտությամբ էլ կարող էր փակվել, չդիմանալով անասելի խոչընդոտներին:

Այդ և վիճակագրության բացակայության պատճառով հնարավոր չի եղել ճշտել XIX դարի առաջին կեսին Անդրկովկասում գործած հայ դպրոցների թիվը: Տարբեր ուսումնասիրողների մոտ տարբեր թվեր են հիշատակվում: Ս. Երիցյանցը նշում է, որ համաձայն գավառապետերի հաղորդած տեղեկությունների, 1834 թ. Անդրկովկասում եղել է 595 մասնավոր դպրոց, որից 108-ը հայկական՝ 120 ուսուցիչով և 1767 աշակերտով[2]: Պարզ է, որ սրանց մեջ հաշված են եղել նաև գյուղական խալֆայական դպրոցները, որովհետև, երբ մասնավոր դպրոցները կառավարչապետի կարգադրությամբ փակվեցին, 1840 թ. Ռուսաստանում կար ընդամենը 14 հայկական դպրոց, որից 9-ը՝ Կովկասում, իսկ 1857 թ. համա-

---

1 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 227:

2 Աղ. Երիցյան, Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 271—275:

պատասխանաբար 40 և 29-ը[1]: Պրոֆ. Մ. Սանթրոսյանը, հիմնվելով էջմիածնի սինոդի տվյալների վրա, նշում է, որ 1837 թ. Վրաստանի, Երևանի և Ղարաբաղի հայոց թեմերում եղել է 21 դպրոց[2]: Մի բան պարզ է, որ այս տվյալները շատ հեռու են դպրոցների իրական թիվը տալուց և պետք է ենթադրել, որ դրանք շատ ավելին են եղել, ելնելով այն հանգամանքից, որ 1830-ական թվականներից հետո հատկապես ավելի հաճախ էին դպրոցներ բացվում և, բացի այդ, նրանք մեծ մասամբ պաշտոնական հաշվառման չէին ենթարկվում:

Եվ այսպես, XIX դարի առաջին կեսը արևելահայ նոր դպրոցի կազմավորման այն շրջանն էր, երբ նա, զարնվելով ժողովրդական ոգիությանն ապատուժներին, սայթաքելով ու երերալով, ճանապարհ էր հարթում՝ հետագայում ավելի հաստատուն ու որոշակի բայլեր անելու համար:

* * *

XIX դարի կեսերին Ռուսաստանում կյանքի բոլոր բնագավառները սկսեցին աշխուժանալ: 1861 թ. հետո արդյունաբերությունն սկսեց նկատելիորեն զարգանալ՝ հսկայական թեղաշարժեր առաջացնելով ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական կյանքում: Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ «Ճորտատիրական Ռուսաստանին գալիս էր փոխարինելու կապիտալիստական Ռուսաստանը»[3]:

Կործանվող ճորտատիրության և վեր բարձրացող կապիտալիզմի բախումը կյանքի կոչեց հասարակության ամենատարբեր խավերին, հասակ առավ ու ամրապնդվեց դեմոկրատական գաղափարախոսությունը, զարգացման նոր մղում առացան գրականությունն ու արվեստը: Այս ամենը դնում էր գրագետ ու բանիմաց կադրերի պահանջ, որն իր հերթին մեծապես խթանում էր կրթության ու գրագիտության տարածմանը: Ժողովրդական լուսավորության տարածման գործում 1860-ական թվականները հեղաշրջման տարիներ եղան, երբ «Հետաքրքրությունը կրթական գործի նկատմամբ ծայր աստիճանին հասավ: Երբեք նախկինում այնպիսի ո-

1 Դե. Երզնկյանց, *Պատմություն մանկավարժության*, Թիֆլիս, 1895, էջ 302:

2 Մ. Սանթրոսյան, *Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին*, Երևան, 1964, էջ 319:

3 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 17, էջ 88:

պեշտնչ վերելք չի եղել մանկավարժական ստեղծագործության մեջ, ինչպես հենց 60-ական թվականներին»[1]:

Բոլոր այն երկրներում, որոնք ֆեոդալիզմից անցում են կատարել կապիտալիզմին, տեղի է ունեցել դպրոցական սիստեմի արմատական վերակառուցում, որի ընթացքում հրապարակ է եկել ժամանակի առաջավոր մանկավարժական միտքը, որպեսզի հանապարհ հարթի այդ վերակառուցման համար, նախապատրաստի նոր դպրոցի հաղթանակը: Նույն պրոցեսն էր կատարվում նաև Ռուսաստանում, բայց քանի որ կապիտալիստական հարաբերությունների համար հանապարհ էր հարթվում վերևից, ինքնակալական-ճորտատիրական պետության ռեֆորմներով և ոչ թե հեղափոխական միջոցներով, ապա, բնականաբար, լուսավորության տարածումը Ռուսաստանում պետք է հանդիպեր բազմաթիվ խոչընդոտների, պետք է ճնշվեր ու հալածվեր մանկավարժական առաջավոր միտքը:

Ռուսաստանի ծայրամասերի ժողովուրդները ևս դեռ չմնացին 1850—1860-ական թվականներին սկսված տնտեսական ու հասարակական վերընթաց շարժումներից: Անդրկովկասյան երկրամասը նույնպես ներդրավվեց բուրժուական հարաբերությունների ոլորտը:

Տնտեսական աշխուժացումը անհետևանք չէր անցնում Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական կյանքում: «Կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում ուղեկցվում էր վրաց, հայ և ադրբեջանական ժողովուրդների ազգային համախմբմամբ»[2]:

Ազգաճանաչման ու ազգային ինքնագիտակցության համար ծավալված շարժումը, իհարկե, նոր չէր. այն ծնունդ էր առել դեռ ավելի վաղ շրջանում՝ մխիթարյանների ու հնդկահայ գործիչների մոտ: Սակայն այն ժամանակ շարժումը չուներ լայն ընդգրկում և մեծ մասամբ մնում էր նրա հեղինակների ու համակրողների նեղ շրջանի սեփականությունը: XVIII դարում ազգային համախմբման սկսված պրոցեսը գերազանցապես հենվում էր օտար երկրներում զարգացող կապիտալիստական հարաբերությունների վրա:

Այժմ այլ էր վիճակը: Կապիտալիստական արտադրահեղանակը մուտք էր գործել հայերի բնակության հիմնական շրջանները և հնարավորություն ստեղծել, որպեսզի ազգային համախմբման գա-

---

[1] Н. А. Константинов, В. Я. Струминский, Очерки по истории начального образования в России, М., 1953, стр. 122.

[2] «История СССР», т. II, М., 1965, стр. 390.

դափարն ընդդրկի ժողովրդի մեծագույն մասին։ Դա մի անխուսափելի և առաջադիմական շարժում էր՝ հատուկ կապիտալիզմի զարգացման սկզբնական շրջանին, երբ Լենինի արտահայտությամբ՝ «Առաջադիմական է մասսաների արթնացումը ֆեոդալական քընից, նրանց պայքարն ամեն մի ազգային ճնշման դեմ՝ ժողովրդի սուվերենության համար, ազգի սուվերենության համար»[1]։

Պարզ է, որ ազգը չէր կարող կազմավորվել ինքնահոս եղանակով։ Նրան պետք էին ազգային հիմնարկություններ, մամուլ, գրականություն, որոնք միս ու արյուն կտային ազգ հասկացողությանը։ Լծվելով ազգային համախմբման գործին, հայ մտավորականները, անկախ իրենց քաղաքական պատկանելությունից, պիտակցեին, որ ազգը միավորել, նրա մեջ միասնության գաղափարներ տարածել անհնարին է առանց ժողովրդի համատարած արդիության դեմ պայքարելու, առանց զրադիտություն տարածելու։ Եվ այդ գործիչների առաջին քայլը եղավ հնարավոր բոլոր միջոցներով լուսավորություն քարոզելը։ Առանց ազգային նոր դպրոցի, առանց ազգային դասագիրքերի չէր կարող լինել ազգային ինքնաճանաչողություն, որը և ժողովրդական զանգվածների մեջ պետք է ծներ ազգային համախմբման, միասնության գաղափարը։ Դպրոցն ու կրթությունն առաջնակարգ նշանակություն էին ստանում նաև այն պատճառով, որ հայերը զուրկ էին գործունեության ազգային քաղաքական ասպարեզից, պետական կյանքից և նրանց հավաքական գոյությունը խարխլվում էր գերազանցապես հոգևոր ու բարոյական արժեքների վրա։

Ըստ հնամենի ավանդության և նոր իշխողի տված օրենքների, ազգային դպրոցի իրավասները եկեղեցին էր։ Ինչպե՞ս վարվել, ի՞նչ դիրք բռնել եկեղեցու նկատմամբ, որպեսզի հնարավոր լինի ժամանակի առաջ քաշած խնդիրները լուծել դպրոցի միջոցով, այս հարցն էր, որ լուսավորիչները պետք է պարզեին նախ և առաջ։ Անկասկած, նրանք բռնեցին եկեղեցու հետադիմությունն ու անկարողությունը մերկացնելու ուղին, բայց դպրոցական հարցում դիմեցին հասարակական կոմպրոմիսի։ Յարիզմի ազգահալած դաժան քաղաքականությունը հնարավորություն չէր տալիս ազատ զարգացնելու ազգային դպրոցը։ «Նման պայմաններում հրապատակը և մասնավորապես հայը պիտի որոներ թույլ պատնեշներ պետական կառուցվածքի և օրենքի մեջ, որպեսզի ճմռելով այդ

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 23։

երևույն արգելարանը՝ մի այլ հարկի տակ, կառավարական աչքից հեռու՝ կարողանար բավարարություն տալ իր հասարակական հոանդի փթթման։ Հայության համար այդպիսի թախտաբան հանդիսացավ եկեղեցու կազմակերպությունը։ Նա օժտված էր ինքնօրենությամբ և հոտի հոգևոր-բարոյական զարգացման կարիքները հոգալու իրավունքով։ Աշխարհիկ հայությունը կամովին հպատակ հոտի շապիկ և ձյտանց իր աշխարհիկ զարգացման պահանջն իրագործել եկեղեցու կրոնա-կղերական վարագույրի տակ»[1]։ Նույնիսկ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանը գտնում էր, որ եկեղեցին ժողովրդի կազմակերպության միջոց է։

Սա, իհարկե, տեղի ունեցած պայմաններում հարցի ճիշտ լուծում էր, քանի որ իմաստ չուներ արտաքին ձևի պատճառով հրաժարվել գործի էությունից։ Հետագա ժամանակաշրջանը ցույց տվեց, որ հայ կրթական գործիչները կարողացան իրենց նպատակին հասնել աղգային դպրոցների միջոցը լցնել աշխարհիկ բովանդակությամբ, ամեն անգամ նրանց ոտքատակ անող վտանգի ժամանակ իջեցնելով եկեղեցական վարագույրը։

Ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ «19-րդ դարի կեսերին հայերի կրոնական հավատանքը որևէ նշանավոր դեր չէր կատարում այլևս։ Դրանով գրեթե վերանում էր կրոնի աղգապահական ֆունկցիան»[2]։ Սա լրիվ իրավացի դիտողություն է։ Սակայն, եթե հարցին մոտենալու լինենք ցարիզմի՝ աղգային կրթության և առհասարակ հայերի դեմ սկսվող ու հետագա շրջանում ավելի սրված հալածանքի տեսակետից, ապա կարելի է ասել, որ այդ ֆունկցիան որոշ իմաստով դեռ պահպանվում էր։ Ճիշտ է, այդ ֆունկցիան այլ հրանգներ էր ստացել, ժամանակներն այլ էին, ստեղծվում էր բավական ուժեղ մտավորականություն, որն իր ձեռքն էր վերցնում հայերի աղգապահական գաղափարախոսությունը, կապիտալիստական զարգացումը դնալով ավելի ու ավելի շատ մարդկային զանգվածներ էր ներքաշում հասարակական-քաղաքական կյանքի ոլորտները, զանգվածներ, որոնց մտածելակերպը խիստ տարբերվում էր նախկին ժամանակների մտածելակերպից։ Այս ամենն, անշուշտ, տեղում, տեղեկատվական էին եկեղեցու ազդեցության երբեմնի շրջանակները։ Այս պայմաններում հայ

---

1 Դ. Անանուն. Թուրահայերի հասարակական զարգացումը, հատ. 2, էջմիածին, 1922, էջ 117։

2 Աշ. Հովհաննիսյան. Նալբանդյանը և նրա ժամանակը, գ. 2, Երևան, 1956, էջ 224։

եկեղեցին աղևոր շուա կատարում էր ինքնապաշտպանության գործիքի դեր։ Դադարելով նպատակ լինելուց, եկեղեցին դառնում էր միջոց։

Ժողովրդին լուսավորելու ձգտումը ստիպեց հայ գործիչներին աստիճանաբար դպրոցները մոտեցնել այն վայրերին, ուր ապրում էր ժողովրդի հիմնական զանգվածը։

Ավելորդ չէ այս առթիվ հիշատակել Երվանդ Շահազիզի պատկերավոր միտքը. «Հայությյան գլխավոր մասը միշտ համարուել, համարւում է ու պիտի համարուի բուն Հայաստանի հայությիւնը, որ իւր հոծ բազմութեամբ, իւր երկրագործ ու արհեստաւոր դասի ահագին մեծամասնութեամբ, իւր հայախօսութեամբ, իւր մայրենի սրբազան ծէսերի ու սովորութիւնների, իւր նուիրական աւանդութիւնների պահպանութեամբ, իւր բնիկ երկրի կրծքին ամուր կպած լինելու, ազգային եկեղեցու, նախնեաց կանգուն ու փլուած յիշատակարանների հետ կապուած լինելու վիճակով միշտ քաղաքականապէս ու բարոյապէս կազմել է հայութեան սիրտն ու արմատը։ Հայաստանի հայութիւնը հայութեան հաստարմատ ու հաստաբուն ծառի արմատը, բունը, կոճղն է, իսկ հայրենիքից դուրս ապրողները նրա մեծ կամ փոքր ճիւղերն են միայն, որոնք հեռացած լինելով ծառի հիւթալից բնից ու արմատից, շատ անգամ բաւարար հիւթ ու նիւթ էլ չեն ստանում, ուստի և ենթարկուած են թառամելու, թոշնելու, դուրէ և չորանալու վտանգին։ Եւ այդ դէպքում չեն օգնիլ նրանց ոչ հարստութիւնը, ոչ առևտուրը, ոչ նոյնիսկ լուսաւորութիւնը, եթէ միայն քաղաքական հանգամանքներն այնքան նպաստաւոր չլինեն, որ նրանք կարողանան պահպանել իրանց կապն անխզելի կենդրոնի հետ. եթէ նրանք անընդհատաբար հայրենի ջրով չ'ջրուեն, մայրենի հիւթով չ'պարարուեն»[1]։

Այս գաղափարը համակել էր հայ լուսաւորիչներին։ Նրանք շեշտում էին, որ առնվազն նախնական կրթությունը հայը անպայման պիտք է ստանա հայրենի միջավայրում։ «Ամենայն բույս պիտո է աճի յուր հողի վերա, ամենայն կենդանի պիտո է ապրի յուր աշխարհում», «Դպրոցը հարկավոր է հիմնել և պահպանել այնտեղ, ուր է ազգը»,— գրում էր Նալբանդյանը[2]։ Ազգային-պահպանողական Գ. Պատկանյանը ընդհանրացնող իմաստ էր դնում իր մտքի մեջ, երբ դիմելով հայրենակիցներին, գրում էր. «Նոր-Նա-

1 «Լումա», 1911, № 1—2, էջ 12—13։ Նույնը՝ ԳԱԹ, Աղանյանի արխիվ, № 155, էջ 21—22։

2 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 160, 262։

խիչևանցիք ծող իրանց մտքերեն հանեն այն ճանապարհը, որով որ մինչև այսօր իրանց զավակներուն ուսում էին տալիս, իրանց քաղաքեն դուրս ուղարկելով»[1]: Նա զգուշացնում էր, որ դրսում երեխային նախնական կրթություն տալով հայերը դրանով նպաստում են, որ նա խորթանա իր ազգից ու հայրենիքից:

Առաջնակարգ տեղ հատկացնելով դպրոցին, լուսավորական շարժումը գտնում էր, որ այն երեխային պետք է դաստիարակի վառ հայրենասիրության ոգով, ժողովրդի հերոսական անցյալից վերցրած ոգևորող օրինակներով: Այդ ուղին էր բռնել և նոր դրականությունը: Խ. Աբովյանի ու մյուս դրող-լուսավորիչների ամեն մի խոսքը տոգորված էր բոցավառ սիրով դեպի հայրենիքը, նրա բնությունն ու պատմական սխրալի իրագործությունները: Լուսավորիչների խոր համոզմամբ չէր կարելի ճշմարիտ հայրենասեր լինել առանց ժողովրդի պատմությունն իմանալու, առանց նրա լեզուն, գրականությունն ու արվեստը հանաչելու, առանց այդ ամենի նկատմամբ ազգային հպարտության զգացմունքով ներշնչվելու: Զգալով, թե պետական նյութական օժանդակությունն ինչպիսի պայմաններ կարող էր առաջադրել այդ օժանդակության դիմաց, Մ. Նազարյանցը գրում էր. «Հայերը կարոտ են մի այնպիսի կրթության, որ յուրյանց միջից, արմատից դեպ ի վեր և ազգային հիմքից գոյանար ու հառաջ գնար. և այս գործը պարտական է կատարել Հայոց ազգը ամենևին ինքնիշխան, յուր հատուկ ձեռքի վաստակով, առանց նյութական օգնության խնդրելու սերության»*[2]:

Ազգային լուսավորության քարոզիչները մեծ նշանակություն էին տալիս կնոջը կրթելուն և նրան հասարակական ակտիվ գործունեության մղելուն: Նրանք իրավացի կերպով եզնում էին այն հանգամանքից, որ կինը ավելի շատ է շփվում երեխաների հետ և դրա համար էլ նրա ազդեցությունը մեծ է ընտանեկան դաստիարակության մեջ: «Մայրը պիտի ուսուցանեն յուր զավակներին ազգային լեզուն,— գրում էր Մ. Նալբանդյանը,— մայրը պիտի տնկի ազգասական սրտերի մեջ ազգության սերմը այնպիսի խնամքով և հոգաբարձությամբ, որ հյուսիսի ցրտաբեր մրրիկը կամ հարավի այրող տոթը չկարողանան չորացնել նորանից ծլելու բույսը»*[3]:

Առանց դպրոցից միջնադարյան սխոլաստիկան դուրս մղելու,

---

1 *«Հայոց ազգի ուսումնասիրությունը, ուսումնարանները և ուսուցիչները»*, Ս. Պետերբուրգ, 1865, էջ 82—83:

2 *«Հայ մանկավարժներ»*, դիրք Ա., էջ 197:

3 Մ. Նալբանդյան. *Ընտիր երկեր*, էջ 292:

առանց ազատ ու անկաշկանդ կրթության հնարավոր չէր նոր դպրոցը մացնել ժողովրդի լայն զանգվածների մեջ: Հայ լուսավորիչները պայքար ծավալեցին դպրոցի ժողովրդականացման համար, նրանում պատշաճ կարգ ու կանոն հաստատելու, մարմնական պատիժը վերացնելու, մանկավարժական նոր մեթոդներ կիրառելու, աշակերտներին գործնական դիտելիքներ տալու, նոր առարկաներ մացնելու համար: Լինելով ժողովրդական շահերի ջերմ պաշտպաններ, լուսավորիչները ջանում էին, որ առաջին հերթին կրթություն ստանան հասարակ ժողովրդի զավակները, որ դպրոցը անցնի բանիմաց աշխարհականների ձեռքը, այնտեղից դուրս մղելով «սևազգեստ աբեղաներին»: Դպրոցի ժողովրդայնության հարցը ամենից ավելի ուժեղ էին հնչեցնում Աբովյանն ու Նալբանդյանը: Վերջինս ավելի արմատական ձևով էր դնում «հասարակ ժողովրդի» շահերից դպրոցին մոտենալու հարցը, այդ «հասարակին» համարելով ազգության մեջ ենթակայի «առանցքը, լծակը և հաստատարանը»: Նալբանդյանը ժողովրդի լուսավորությունը կապում էր նրա ազատագրության հետ:

Դպրոցի ժողովրդականացման, նրա դեմոկրատացման համար առանձնահատուկ նշանակություն ուներ աշխարհաբար լեզվի արմատավորման հարցը: Աշխարհաբարի տարածման գործում բավական դրական դեր կատարեցին դարասկզբին գործող միսիոներական մի շարք դպրոցներ: Բայց առաջինն Աբովյանն էր, որ դիտական հիմքերի վրա դրեց աշխարհաբարի գործածության անհրաժեշտությունը:

Աբովյանի սկսած պայքարը նոր ուժով ծավալվեց 50—60-ական թվականներին: «Հյուսիսափայլը» եղավ այդ պայքարի դրոշակակիրը: Նրա ջանքերը դուր չէին անցնում և ժամանակի մամուլի, գրականության մեջ պատշաճ արձագանք էին գտնում: Աշխարհաբարն սկսել էր դուրս մղել գրաբարին, դառնալով նաև ուսուցման լեզու: Այս տեսակետից սխալ է Լեոյի այն կարծիքը, թե աշխարհաբարը սիրապետող դարձավ մեր դպրոցներում միայն XX դարի սկզբներին[1]: Արդեն հաջորդ տասնամյակում՝ 1870-ական թվականներին հայկական դպրոցների ճնշող մեծամասնությունում սիրապետում էր աշխարհաբարը:

Պայքարելով աշխարհաբարի համար, հայ լուսավորիչները

---

1 Տե՛ս Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 225:

միաժամանակ մեծ կարևորություն էին տալիս այն հարցին, թե ընդհանրապես ինչ լեզվով պետք է տանել մատաղ սերնդի կրթության գործը: Ժամանակի մանկավարժական միտքը պատասխանել էր այդ հարցին՝ հօդուտ սովորողի մայրենի լեզվի: Հայոց լեզվի պաշտպանության գործում նրանք հանդես էին բերում ջերմ կրթասիրություն, լեզուն համարելով հայ ազգի գոյության կարևորագույն գործոն, «ազգության դրոշակը» (Նալբանդյան):

Աբովյանն իր հռչակավոր «Վերքում», դիմելով հայ երիտասարդությանը, կրքով բացականչում էր. «Ձեզ եմ ասում՝ ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անումին մեռնիմ, ձեր արևին պարբան, տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը գայիմ բռնեցեք»[1]: Արձագանքելով նրան, Նալբանդյանը ավելացնում էր. «Սուտ է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզվով... այդպիսի դիպվածում, դուք ձեր զավակները օտարացնում եք ձեղանից. նոքա օտարի լեզվով դաստիարակվածք, անունով միայն կլինին հայ, բայց ձեր թոռները գուցե այդ անունը ևս ավելորդ համարեն կրել յուրյանց վերա»[2]:

Սակայն, անառարկելիորեն պաշտպանելով հայերենը, մեր լուսավորիչները ոչ պակաս կրքոտությամբ քարոզում էին, որ հայերը չեն կարող առաջադիմել, եթե սահմանափակվեն միայն իրենց մայրենի լեզվով. նրանք անպայման պետք է սովորեն օտար լեզուներ, և առաջին հերթին ռուսերենը: Նալբանդյանը գրում էր. «Հայը, մեր կարծիքով, պիտի լինի քաջ հայագետ և ռուսագետ միանգամայն, իբրև հայ նախահարց որդի և իբրև ռուս թագավորության հպատակ: Աստուծոյն Աստուծոյ, կայսերն կայսեր»[3]:

Այսպիսով, XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին արևելահայ (և ոչ միայն արևելահայ) իրականության մեջ ծայր առավ և նոր դարակեսի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի պատճառով որոշակի ձևավորում ստացավ հայկական լուսավորական շարժումը, որն առավել վառ դրսևորումներ ցուցաբերեց դեմոկրատական շեշտ կրող հոսանքների ու գործիչների մոտ:

Լուսավորական շարժումը, սակայն, մեծ մասամբ դեռևս հետևում էր մնում ժողովրդի հիմնական զանգվածներից, հայ գյուղը նոր-նոր էր սկսել աշխուժանալ և շարժման առաջ քաշած խնդիրները չէին կարող հուզել նրան: Նույնիսկ դեռ բազաքային բնակ-

1 Խ. Աբովյան, նշվ. հատ. 3, էջ 64:

2 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 109:

3 «Հայ մանկավարժներ», գիրք Ա, էջ 228:

չության մեծ մասը չէր զգացել ազգային զարթոնքի շունչը: Հայ այն լուսավորիչների ջանքերը, որոնք աշխատում էին կենսագործել ժողովրդի կրթական խնդիրները, մեծ մասամբ սահմանափակվում էին նեղ շրջանակներով, չդանելով հասարակական լայն արձագանք: Բնութագրելով դարակեսին տիրող վիճակը, Գ. Պատկանյանը գրում էր. «Հայերը նոր սկսան կարդալ. բայց դեռ չեն կարդալ մասին ընթերցասեր, որովհետև դեռ ժողովրդական ընթերցանության գրքեր էլ չկան, և որովհետև դեռ հարյուրեն մեկն է կարդում կամ հազարեն երկուսը»[1]: Ապա զարգացնելով իր միտքը, ավելացնում էր. «Իմ կարծիքս ինձ այսպե՞ս է թելադրում, որ ո՛չ իմ ասելով և ո՛չ այլոց քարոզելով վարժարան կբացվի, մինչև որ ներքուստ հասարակության մեջ վարժատուն ունենալու կարիքը չզգրանա»[2]:

«Վարժատուն ունենալու կարիքը» զգացավ առաջին հերթին քաղաքային կենտրոններում, հատկապես Թիֆլիսում: Գյուտ քահանա Ազանյանն իր հուշերում այսպես է նկարագրում դարակեսի Թիֆլիսը. «Հայտնի է, որ այդ ժամանակները Թիֆլիսի հայ ժողովրդի մեջ ուսման սերը սկսել էր «թաք ու թուր» երևալ, նրա բարոյական վերածնությունը յուր ծիլերն էր արձակում, ...լրագրությունը դուրս էր գալիս յուր խանձարուրից. Աբովյանի «Վերք Հայաստանին» ձեռք-ձեռք էր անցնում. Միհրդատ Ամրիկյանը, որի նմանը դեռ մինչև հիմա էլ չծնեց հայ թատրոնը, շունչ ու հոգի էր տալիս հայ հասարակությանը Թիֆլիսի մեծ թատրոնի բեմի վրա յուր շնորհալի խաղով. վերջապես տիկին Եղիսաբեթ Հովհաննիսյանը 1862 թվից բացել էր յուր տանը անդրանիկ հայ օրիորդական ուսումնարանը»[3]:

Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Շուշում, Երևանում, Ախալցխայում և այլն սկսեցին երևան գալ նոր պահանջներին այս կամ այն կերպ բավարարություն տվող դպրոցներ, հատկապես մասնավոր նախաձեռնությամբ: Աշխուժություն նկատվեց թեմական դպրոցների կյանքում: Սկսեց սկզբնավորվել նաև գյուղական ծխական դպրոցը:

1850—60-ական թվականների լուսավորական շարժման գործնական կիրառության տեսակետից առավել կարևոր նշանակություն ունեցավ հասարակական այն ուշագրավ պայքարը, որ ծա-

1 «Հայոց ազգի ուսումնասիրությունը...», էջ 49:

2 Նույն տեղում, էջ 89:

3 ԳԱԲ, Ազանյանի արխիվ, № 106, էջ 3—4:

վալվից Անդրկովկասի հայկական հոգևոր թեմական դպրոցների և հատկապես Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շուրջը։ Դա ըստ էության դեմոկրատական-ազատագրական շարժում էր և արձագանքում էր Պոլսում տեղի ունեցող ազատագրական շարժմանը։ Սակայն, եթե Պոլսում այդ շարժումը ավելի լայն ընդգրկում ուներ, ներառում էր հայ համայնքի ողջ ներքին կյանքը, ապա Թիֆլիսում այն ծավալվից Ներսիսյան հոգևոր դպրոցի շուրջը։

Պայքարը սկսված էր դեռևս Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի օրոք։ Այն ժամանակից (1837), երբ Ներսեսի հիմնած դպրոցը վերածվից թեմական հոգևոր դպրոցի, ժողովուրդն սկսել էր հետանալ նրանից, մերժել իր նյութական ու բարոյական աջակցությունը։ Ներսեսը միջոցներ ձեռք առավ, իր մոտ հրավիրեց քաղաքացիների ներկայացուցիչներին և «Հայտնեց, որ հայազգի մանուկների կրթության գործում հոգևորականք և աշխարհականք պարտական են միասին ձեռք-ձեռքի տված աշխատել»[1]։ Նա առաջարկեց ընտրել ձեռնհաս մարդիկ՝ դպրոցը կառավարելու համար, թեմական կոնսիստորիանների կազմում մտցրեց աշխարհականների։ Ներսեսի ճկուն միտքը կարողացավ ճիշտ ըմբռնել, որ առանց ժողովրդի աջակցության հոգևորականությունը դատապարտված է ամլության և գնաց ժողովրդին որոշ զիջումներ անելու ուղիով։ 1848 թ. կաթողիկոսը ստեղծեց աշխարհականներից ու հոգևորականներից կազմված մի մարմին, որի ձեռքն անցավ դպրոցի վերկավարությունը։ Այսպես ծնունդ առավ առաջին հոգաբարձությունը։ 1851 թ. հետո նրա կազմում մնացին միայն երեք աշխարհականներ, սակայն հոգաբարձությունը հաշվեհատու չէր ժողովրդի առաջ։ Անհրաժեշտ էր ժողովրդի պայքարը, որպեսզի այդ, ըստ էության դեմոկրատական մարմինը, դառնար իրոք ժողովրդական ներկայացուցչություն։ Դպրոցի տեսուչ Պետրոս Շանշյանն արդեն իր գործունեությամբ բավական օրինակներ էր տալիս, թե ինչպիսին պետք է լինի նոր դպրոցը։

Սակայն Շանշյանի գործունեությունը հանդիպում էր կղերամիտ տարրերի ուժեղ դիմադրությանը։ Ներսեսի մահից հետո Վրաստանի թեմի առաջնորդ Սարգիս եպս. Ջալալյանն էլ ավելի ուժեղացրեց կղերի ճնշումը և դա պայքարի սրման առիթ հան-

---

1 Ադ. Երիցյանց, *Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի*, էջ 437։

դիտացավ։ Մի կողմից հոգևորականությունը և քաղաքի երևելիները գտնում էին, որ կրթական գործի ղեկավարը թեմական առաջնորդն է, և ժողովուրդն իրավունք չունի խառնվելու դրանում։ Մյուս կողմից աղատամիտ գործիչները պնդում էին, որ ժողովուրդն է կրթական գործի տերը, նա պետք է ուղղություն տա դպրոցական կյանքին, իսկ հոգևորականությունը պարտավոր է ենթարկվել ժողովրդի կամքին։ Նրանք պահանջում էին կանոնադրական ձևակերպում տալ իրենց առաջադրած խնդիրներին, որոշել ընտրովի հոգաբարձության իրավասության սահմանները։ Սա փաստորեն սահմանադրական պայքար էր հօգուտ դպրոցական ապարեզի աշխարհականացման։

Նոր կաթողիկոս Մատթեոսը, որ ղպալիորեն կրում էր Պոլսի սահմանադրական շարժման ազդեցությունը, չնայած իր կրոնական մոլեռանդությանը, հասկացավ ժամանակի պահանջը։ Հին հոգաբարձությունն արձակվեց։ Նոր ընտրված հոգաբարձությունը պետք է մշակեր և կաթողիկոսի հաստատմանը ներկայացներ Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը։ Այդ կանոնադրության շուրջը մեծ պայքար ծավալվեց։ Արմատական թևը Երեմիա Արծրունու գլխավորությամբ ներկայացրեց հինգ հիմնական կետ, ըստ որոնց անհրաժեշտ էր համարվում, որ դպրոցի նյութական աղբյուրները դառնան նրա սեփականությունը՝ անկախ հոգևոր իշխանությունից, դպրոցն ըստ հնարավորին ընդարձակվի և հասցվի գիմնազիայի աստիճանի՝ այն հաշվով, որ ավարտողները կարողանան մանել համալսարան, չպարտադրել, որ դպրոցի որդեգիրներն ու ժառանգավոր աշակերտները անպայման հոգևորական դառնան, որ դպրոցը կառավարվեր ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձության կողմից, որի նախագահն էր լինելու թեմական առաջնորդը։ Դպրոցի ծայրագույն կառավարիչը կաթողիկոսն էր համարվում։

Պահպանողական-կղերական թևը կարականապես դեմ էր դրան, գտնելով, որ ժողովուրդը պետք է միայն խորհրդակցական իրավունք ունենա, բայց նյութապես ապահովի դպրոցը։

Սակայն պատմության առաջընթացը կանխորոշել էր սահմանադրականների հաղթանակը։ 1861 թ. հունիսի 9-ին կաթողիկոսը ընդունեց նրանց կետերը և դրանից հետո դպրոցը կոչվեց «Ներսիսյան»։ Մշակվեց ու հաստատվեց կանոնադրություն։ Ընտրովի հոգաբարձությունը լայն իրավունքներ ստացավ. նա էր կատարում աշակերտների ընդունելությունը, փոխադրությունը դասարանից-դասարան, վարձում և արձակում էր ուսուցիչներին, ընտրում և

առաջադրում էր առարկայական դասակրքերը, վարում էր դպրոցի տնտեսական մասը, հոգ տանում նրա բարգավաճման համար: Հոգաբարձության կողմից հրավիրվող տեսուչը հանդիսանում էր ուսումնական մասի իրավասուները: Դպրոցում բոլոր աշակերտները սովորելու էին ձրի, բացի այդ, լինելու էին 30 որդեգիրներ: Դպրոցը պետք է ունենար 6 հիմնական դասարան: Դասավանդվող առարկաներն էին՝ սրբազան պատմություն հին և նոր կտակարանների, քրիստոնեական վարդապետություն, հայոց եկեղեցական պատմություն, հայոց լեզու և քերականություն, ռուսաց լեզու և քերականություն, ֆրանսերեն, լատիներեն, մաթեմատիկա, հայոց, ռուսաց և ընդհանուր պատմություն, հայոց, ռուսաց և ընդհանուր աշխարհագրություն, բնագիտություն, բնական պատմություն, առողջ բժշկություն, վայելչագրություն, նկարչություն, երգեցողություն:

Թիֆլիսում սկսված սահմանադրական պայքարը ոչ պակաս արձագանքներ ունեցավ Շուշում: 1859 թ. շուշեցիների ժողովը դիմեց կաթողիկոսին և պահանջեց թեմական դպրոցին կանոնադրություն և աշխարհիկ հոգաբարձություն սրամադրել: Երեք հոգաբարձության ընտրությունը որոշ չափով հարթ անցավ, ապա կանոնադրության հարցում եղան ընդհարումներ: Ժողովուրդը իր կողմից դպրոցին ցույց տրվող նյութական օժանդակությունը պայմանավորում էր կանոնադրության հաստատմամբ: Այս անգամ ևս կաթողիկոսը գնաց զիջողության ուղիով և հաստատեց կանոնադրությունը, որը Շուշում ընդունվեց մեծ հանդեսներով:

Նման կանոնադրություն ստացավ և Երևանի թեմական դպրոցը, թեև այստեղ սուր պայքար չեղավ, քանի որ Ներսես կաթողիկոսի կարգադրությամբ 1849 թ. փակված դպրոցը վերաբացվել էր միայն 1857 թ. և չէր հասցրել դառնալ հասարակական հետաքրքրության առարկա:

Նոր ստեղծված պայմաններում թեմական դպրոցները վեր էին ածվում դպրոցական շարժման ազդակային կենտրոնների, նրանց հոգաբարձությունները իրավասություն էին ստանում թեմի ծխական դպրոցների նկատմամբ, թեմականները դառնում էին ժամանակի լավագույն մանկավարժական կադրերի հավաքատեղիներ, որոնք իրենց ազդեցությամբ ու գործունեությամբ մեծապես խթանում էին դպրոցական ցանցի ընդլայնմանը:

Մասնավոր կաթողիկոսը զգալիորեն դյուրացրեց ծխական դպրոցների բացման գործը, այն հանձնելով հասարակության նախաձեռնությանը: Հոգաբարձական սկզբունքը մեծապես բարձրաց-

ինչ դպրոցի համայքը: Հասարակությունն իր վճիռներով որոշում էր միջոցներ հատկացնել ծխական դպրոցին, որը բացվում էր եկեղեցու հովանավորությամբ: Այժմ նախաձեռնությունը հոգևորականությունից անցնում էր ժողովրդին, որը սկսում էր մեծ հոժարակամություն հանդես բերել և դպրոցը համարել իր հարազատ գործը:

Թեմական դպրոցների շուրջ ծավալված սահմանադրական շարժումը շրջադարձային նշանակություն ունեցավ մեր ազգային դպրոցի կյանքում: Ինքնիշխանելով ժամանակի առաջադրած պահանջներից, այդ շարժումը պսակվեց աշխարհիկ ուժերի հաղթանակով, նոր ուղի ու հեռանկարներ բացելով ազգային դպրոցի հետագա աշխարհականացման համար, դպրոցը մոտեցնելով ժողովրդին: Ըստ էության, այդ շրջանում էր, որ ազգային առաջատար դպրոցների՝ թեմականների միջուկն սկսեց լցվել աշխարհիկ բովանդակությամբ, օրինակ ծառայելով հետագայում նույն ուղիով ընթանալու մեր մյուս դպրոցներին: Բնութագրելով այդ ժամանակահատվածը, Ստ. Մալխասյանցը գրում էր. «Սա մի երկունքի շրջան էր, որտեղ մանկավարժական նոր սկզբունքներ, առարկաների լայն ծրագիր, իրավունքների և պարտավորությունների սահմանադրություն՝ առաջին անգամ երևան եկան՝ հին դպրոցի և նորան հատուկ կարգերի տեղը բռնելու»[1]:

Դպրոցական առաջին կանոնադրությունների և հոգաբարձության ձևով բերումը դարակնիք լուսավորական շարժման գործնական առաջին խոշոր հաղթանակն էր:

* * *

Այսպիսով, թևակոխելով XIX դարը, հայ ժողովուրդը սոցիալ-տնտեսական ու քաղաքական հանգամանքների բերումով սկսել էր հաղորդակից դառնալ ժամանակի ազդեցություններին: Սկսվել ու դարակնիքն լայն ծավալ էր առացել ազգի համախմբման պրոցեսը, որը շարժման մեջ էր դրել հասարակության մտավորական մասին, խթանելով հայ մշակույթի ամենատարբեր բնագավառների զարգացումը: Հայ ժողովրդի ազգային զարթոնքն իր հետ բերել էր և լուսավորական մի ազդու շարժում: Պայմանների բերումով մեծ

---

1 Ստ. Մալխասյանց, *Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոբելյանական հինգամյա գոյության (1824—1899)*, Թիֆլիս, 1900, էջ 83:

ամասամբ դրծնելով ժողովրդի բուն պանդվածից հետու, հայ լուսավորիչները դդում էին, որ առաջին հերթին պետք է լուսավորել հենց այդ պանդվածին, մղել նրան ազգային ինքնագիտակցության։ Շատ դեպքերում նրանց գաղափարախոսությունը չէր հասնում ժողովրդական լայն խավերի գիտակցությանը, դեռևս չէին ստեղծված սոցիալ-տնտեսական այն պայմանները, երբ պետք է շարժման մեջ մտնեին նրանք՝ իրենց հետևողով ու նախաձեռնությամբ կենդանություն տալու ժողովրդի լավագույն զավակների իղձերին։

XIX դարի առաջին կեսը և հատկապես 1850—1860-ական թվականները ազգային դպրոցի գաղափարական հիմնավորման ու նախապատրաստության շրջանն էր, որոնումների շրջան, երբ հայ դործիչները ճանապարհ էին հարթում ազգային լուսավորության համար, ճանապարհ, որով աշխույժ հրթիռկությունն սկսվելու էր ավելի ուշ՝ 60-ականների վերջերից։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԾԱՎԱԼՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1870—1884 թթ.)

Նոր վերելքի նախապայմաններ: Հայ դպրոցի առաջին կանոնադրություններ և նրանց նշանակությունը: Դպրոցական գործի վիճակը: Դպրոցների տիպերը՝ ծխական, հոգևոր, թեմական: Հայ դպրոցի աշխարհիկ բնույթը: Հասարակության օժանդակությունը կրթական գործին: Ցարիզմը և «այլազգիների» կրթության գործը: Պետական բաղաֆականության երկու գիծ: 1873 թ. կանոնները: Թեմական տեսչության ստեղծումը: 1874 թ. կոնֆլիկտը և նուպիսի 19-ի կանոնները: Տեղական իշխանությունների ճարուցած խոչընդոտները: Էջմիածնի նեմարաևի հիմնումը և նրա կանոնադրությունը: 1876 թ. ծխական դպրոցների կանոնները: Կրթական գործի առաջադրած խնդիրները: Մանկավարժական մամուլը: Հայ մանկավարժների նոր սերունդը: Կին մանկավարժները և առաջին մանկապարտեզը: Հայ մանկավարժության ազգային բնույթը, նրա բնորոշ գծերը: 1874 և 1882 թթ. ուսուցչական ժողովները: Դպրոցական վիճակագրություն: Ամփոփում:

Ճորտատիրության վերացումը արագացրեց կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Ռուսաստանում:

Անկախ ցարիզմի գաղութային քաղաքականությունից, բուրժուական հարաբերությունները մուտք էին գործում ազգային ծայրամասերը: Կառավարությունը ստիպված եղավ Անդրկովկասում ևս վերացնել ճորտատիրությունը: 1864—66 թթ. Վրաստանում, իսկ 1870 թ. Հայաստանում ու Ադրբեջանում անցկացված գյուղացիական ռեֆորմները, որքան էլ կիսատ-պռատ, այնուամենայնիվ, իրենց դրական դերը կատարեցին երկրամասի տնտեսական աշխուժացման ուղղությամբ: Ռուսական և եվրոպական ապրանքները սկսել էին լայնորեն ներխուժել Անդրկովկաս, որի հետևանքով ասպարեզից դուրս էին մղվում տեղական տնայնագործական ար-

հետաները, ստիպելով ավանդական արհեստավորին ու տնայնագործին բռնելու գործարան տանող ճանապարհը։

Կապիտալիստական հարաբերությունները իրենց ոլորտի մեջ էին առնում նաև գյուղատնտեսությունը, այն հարմարեցնելով իրենց կարիքներին։ Գյուղական բնակչությունը շերտավորվում էր։ Քայքայված գյուղացիությունը սկսում էր հոսել դեպի աճող արդյունաբերական կենտրոնները՝ Բաքու, Թիֆլիս, Բաթում։ Տեղի էր ունենում նոր դասակարգերի՝ պրոլետարիատի ու բուրժուազիայի կազմավորում։

Անդրկովկասը 1870-ական թթ. արդեն բավականաչափ նախապատրաստված էր ժամանակի առաջավոր գաղափարները յուրացնելու համար։ Առկա էր այն պարարտ հողը, որի մեջ ընկնելով, այդ գաղափարները կարող էին նոր ծիլեր արձակել, ստանալ երկրամասի օդին ու ջրին հարազատ գույն ու երանգ։ Ժողովուրդն ինքն էր զգում թարմացման ու տեզաշարժի պահանջը։ Եթե դարի առաջին կեսին հայ առաջադեմ գործիչներին մեծ ցավ էր պատճառում հասարակական անտարբերությունը, երբ լուսավորիչների գաղափարները բազմաթիվ խոչընդոտների էին հանդիպում, ապա այժմ դրությունը զգալիորեն փոխվել էր։ 60-ական թվականները հալեցրել էին հասարակական անտարբերության սառույցը։

Հայ արվեստն ու գրականությունը թևակոխում էին վերելքի շրջանը, հայկական ռոմանտիզմը տեղի էր տալիս մի գրականության, որն ամուր կապերով կապվում էր կյանքի հետ, արձագանքում աշխատավոր ժողովրդի պահանջներին, արտացոլում ազգային-ազատագրական շարժման գործնական խնդիրները։ Նոր շրջանում հասարակական կյանքում կարևոր տեղ էր գրավում մամուլը, որի էջերում աշխույժ բանավեճ էր ծավալվում տնտեսական զարգացման ուղիների, ազգային լուսավորության և բազմաթիվ այլ հրատապ հարցերի շուրջը։ Պատահական չէր, որ այդ ժամանակ ծնունդ առավ Արծրունու «Մշակ» թերթը, որը դարձավ հին հասարակության արատները անողոք քննադատող և հայ իրականությունը եվրոպականացնելու համար մարտնչող բուրժուական հոսանքի խոսափողը։

Ստեղծված իրադրությունը նոր իմաստ էր հաղորդում դարակեսին ծավալված լուսավորական շարժմանը, ռեալ հնարավորություններ էր տալիս ընդլայնելու ազգային դպրոցների ցանցը։ Ժողովրդին լուսավորելու սուր կարիքը մղում էր առաջադեմ հայ երիտասարդներին ձեռք բերելու բարձրագույն կրթություն. նրանք

մեկնում էին Ռուսաստանի և Եվրոպայի համալսարանները և գիտության հետ միասին տոգորվում ժամանակի առաջավոր շնչով։ Ռուս նարոդնիկների գաղափարները խորթ չէին նաև նրանց։ Դեպի ժողովուրդը գնալու նարոդնիկական շարժումը որոշակի ազդեցություն էր գործում նրանց վրա, սակայն Անդրկովկասի և մասնավորապես հայ ժողովրդի կենսական պայմանները ստիպում էին, որ հայ իրականության մեջ այդ շարժումը մեծ մասամբ ընդունի լուսավորական ուղղություն։

Հետաքրքրական է, որ հայ առաջադեմ հասարակական-դպրոցական գործիչ Պետրոս Հայկազունին Պետերբուրգում ուսանող, հետագայում անվանի մանկավարժ Հ. Տեր-Միրաքյանին գրում էր. «Եթե իբրև գեներալ էլ հայրենիք վերադառնաս, արժեք չես ունենա, դու պետք է մանկավարժ դառնաս...»[1]։ Այստեղ մեկնաբանություններն իրոք ավելորդ են։

Ժամանակի ոգին տիրաբար բախում էր հայ դպրոցի դռները։

1866 թ. սեպտեմբեր ամսին արևմտահայ Պրուսայի թեմական առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոսն ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս։ Չնայած հոգևոր կոչմանը, Գեորգը բավական մոտ էր կանգնած ժողովրդին, նա իր ողջ կյանքը նվիրել էր կրթական գործին, ձգտել է բարելավել այն և վաստակել էր դպրոցասերի համբավ։

Այնպիսի մի ժամանակ, երբ դպրոցին վիճակված էր խոշոր դեր խաղալու հայ ժողովրդի կյանքում, Գեորգի ընտրությունը դրական դեր կարող էր կատարել։ Հետաքրքրական է, որ երբ նորընտիր կաթողիկոսը 1867 թ. սկզբներին ժամանում է Պոլիս, տեղի վեց հայ խմբագիրներ մի ուղերձ են հղում նրան ու հայ եկեղեցու և ազգի ապահովությունը հոգալու մասին մի շարք խնդիրների հետ միասին առաջ են քաշում դպրոցական գործը բարելավելու հարցը, պահանջում, որ նա ապահովի «ազգային դաստիարակության ծավալումը, այն է սրտով, մտքով և հոգվով հայեր պատրաստել»[2]։

Գեորգի առաջին քայլերից մեկը լինում է դպրոցական գործի կարգավորումը։ 1867 թ. հունիսի 14-ին նա էջմիածնի միաբաններից կազմում է ուսումնական հանձնաժողով՝ կարգադրելով նրան

---

1 Վ. Ա. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 134։

2 Մ. Աբեղյան, Գեորգ Դ Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 29։

մշակել դպրոցական կանոնադրություն: Ապա ուղևորվում է Պետերբուրգ՝ կառավարությանը ներկայանալու և Ճանապարհին շրջագայում է հայոց թեմերում, ծանոթանում կրթական գործին: Վերադառնալով Ճանապարհորդությունից, կաթողիկոսը ստեղծում է տպարանական հանձնաժողով՝ հանձնարարելով նրան կարգավորել գրքերի տպագրությունը, հիմնում է էջմիածնի «Արարատ» ամսագիրը: Միաժամանակ պատվիրում է շտապեցնել կանոնադրության մշակումը:

Դպրոցական կանոնների ընդունումն առավել ևս հրատապ էր դարձել, քանի որ մի տարի առաջ կառավարությունը հրապարակել էր Կովկասի ուսումնական մասի նոր կանոնները, և հայ դպրոցը առանց կանոնադրության թողնել, կնշանակեր դուռ բացել իշխանությունների անցանկալի միջամտությունների առաջ:

1868 թ. հուլիսին ուսումնական հանձնաժողովը կաթողիկոսի անունից թեմերի առաջ խնդիր է դնում յուրաքանչյուր գյուղում դպրոց բանալ: «Գյուղորևից եկեղեցիքը,— ասված է այդ առաջադրանքի մեջ,— եթե ունին սեպհական դրամ, նոցա տոկոսիքեն մասնավոր թոշակ յատկացնեն յուրյանց դպրոցներուն. և երբ ոչ չեն բավեր նոքա՝ դրամագլխեն միայն մի մասը ծախս անեն, գյուղական ազդային մանկունքը բոլորովին տգիտության մեջ չթողնելու համար»[1]:

Նույն թվականին հրապարակվում են ծխական դպրոցների կանոնները: Այս կանոններով առաջին անգամ փորձ էր արվում կարգավորել տարածում գտնող ժողովրդական տարրական կրթական հաստատությունները և պարզել նրանց ենթակայության հարցը: Կանոնների առաջին հոդվածը արձանագրում էր, որ «Ծխական կամ սկզբնական կոչին այնոքիկ եկեղեցական դպրոցաց որք գտանին ամ յուրաքանչյուր եկեղեցավ»[2]: Նման դպրոցների նպատակն էր կրթել մանուկներին և պատրաստել նրանց թեմական դպրոց ընդունվելու, ընդ որում, քաղաքներում և գյուղերում եղած բոլոր եկեղեցիները պարտավոր էին իրենց կից ունենալ մեկական ծխական դպրոց: Սրանց գոյության միջոցները կազմվելու էին աշակերտների ուսման վարձից, կամավոր ժողովրդական նվիրատվություններից և եկեղեցու ունեցած դրամագլխի տոկոսներից: Դպրոցը կազմվելու էր մի դասատնից, իսկ միջոցները ներելու դեպքում կարելի էր ունենալ նաև երկրորդ դասատունը:

---

1 «Արարատ», 1868, հատ. Գ, էջ 35:

2 «Արարատ», 1868, հատ. Զ, էջ 70:

Ամենից կարևորը, որ պարունակում էին կանոնները, հոգաբարձության ստեղծումն էր: Մխակաև դպրոցները պետք է կառավարվեին ժողովրդի կողմից ընտրված և թեմական իշխանությունից հաստատված հոգաբարձությունների միջոցով, ընդ որում, երեք հոգաբարձուներից մեկը պետք է լիներ հոգևորական, իսկ երկուսը՝ աշխարհականներ (սրանցից մեկն էլ լինելու էր եկեղեցու երեցփոխանը): Քաղաքներում թույլատրվում էր ընտրել հինգ հոգաբարձու: Փաստորեն հոգաբարձուները լինելու էին դպրոցի լիիրավ տերը, քանի որ նրանցից էր կախված ուսուցիչների ընտրության, դասաժամերի տևողության, նյութական միջոցների տնօրինության հարցերը:

Կանոնները սահմանում էին ծխական դպրոցում ավանդվելիք առարկաները՝ կրոն, հայերեն ընթերցանություն, քերականություն, վայելչագրություն, ռուսաց լեզու (ընթերցանություն և վայելչագրություն), թվաբանություն: Դպրոց կարող էին ընդունվել 7—11 տարեկան երեխաները: Ուսուցչի ռոճիկի չափը չէր որոշվում և կախված էր ամեն մի դպրոցի ունեցած հնարավորությունից: Ուսուցումը տևելու էր կլոր տարին, առանց արձակուրդի:

Առաջին իսկ հայացքից ակներև է դառնում, որ կանոնները թերի էին, անկատար: Անորոշ վիճակում էր թողնված դպրոցների նյութական միջոցների հարցը. փաստորեն դա լրիվ կախված էր պատահականություններից. եթե եկեղեցին միջոցներ չունենար կամ նվիրատվություններ չլինեին, դպրոցը կկանգներ կործանման առաջ: Որոշակիություն չկար դասաժամերի տևողության, ուսուցիչների իրավունքների, ուսումնական ծրագրերի հարցում, պարզ չէր, թե ավելի բարձր աստիճանի հասած դպրոցը ինչով պետք է տարբերվեր տարրականից: Այս հարցերի լուծումն ինքնահոսի ձեվով թողնված էր յուրաքանչյուր դպրոցի անմիջական ղեկավարների հայեցողությանը՝ կախված լինելով նրանց ըմբռնումներից ու կարողությունից:

Պարզ է, որ հայ նոր դպրոցի կազմավորման շրջանում հնարավոր չէր ստեղծել քիչ թե շատ կատարյալ կանոնադրություն. փորձը դեռ պետք է վեր հաներ նրա բացթողումներն ու նոր խընդիրներ առաջադրեր: Սակայն անկախ թերություններից, 1868 թ. դպրոցական կանոններն առաջին անգամ ընդհանուր ձևով աշխատում էին կարգ սահմանել արևելահայ կրթական գործում և, ամենակարևորը, որ այդ գործի անմիջական հսկողությունը հանձնվում էր ժողովրդի կողմից ընտրվող հոգաբարձուներին, դպրոցա-

կան հարցը դարձնելով հասարակության շահագրգռվածության ու հետաքրքրության առարկա։ Միսկական դպրոցները դուրս էին գալիս թեմական դպրոցների իրավասությունից և ենթարկվում իրենց անմիջական հոգաբարձություններին։ Թեմական դպրոցների ղեկավարության ժողովրդականացման սկզբունքը, որը նվաճվել էր մի քանի տարի առաջ, այժմ ընդհանուր տարածում էր ստանում։ Ըստ էության, ընտրական սկզբունքի ընդունումը ժամանակի ճանաչում ստացող բուրժուա-դեմոկրատական մտայնության արտացոլումն էր արևելահայ իրականության մեջ, և այն կարող էր դրսևորվել միայն կրթական գործում, քանի որ քաղաքական իշխանությունից զուրկ հայ ժողովուրդը իր հասարակական մղումներին բավարարություն տալու այլ ասպարեզ չուներ։

Միսկական դպրոցների կանոնները հրապարակելուց հետո, 1869 թ. փետրվարին Գևորգ կաթողիկոսն ընդունեց թեմական դպրոցների կանոնագրությունը[1], որտեղ դարձյալ հաստատվում ու ամրապնդվում էր հոգաբարձությունների դերը։ Թեմական դպրոցները պետք է ընդունվեին ծխական դպրոց ավարտողները։ Նրանցում պետք է լիներ երեք դասարան, դասավանդվող առարկաների թվում ավելացվում էին հայոց պատմություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, աշխարհաբար և գրաբար շարադրություն, հայ գրականություն, ճարտասանություն, ֆրանսերեն։ Եկեղեցու հսկողությունն ապահովելու համար հոգաբարձության նախագահը անպայման պետք է լիներ թեմական առաջնորդը։ Թեմական դպրոցների նյութական միջոցները գոյանալու էին թեմի եկեղեցական կալվածքների եկամուտներից, կամավոր նվիրատվություններից և ունևոր ծնողների վճարներից գանձվող ուսման վարձից։

Նույն թվականի մայիս ամսին հրապարակվեց նաև վանական դպրոցների կանոնագրությունը։ Այս դպրոցների նպատակն էր աշակերտներ պատրաստել «վասն Ուսումնարանի Մայր Աթոռո Ս. Էջմիածնի առ բարվոք կրթության՝ ի բարձրագույն ուսմունս կարեվորս կուսակրոն, ընտիր, բարեկիրթ և հանճարավոր Եկեղեցականաց»[2]։ Վանական դպրոցների իրավասությունները վանահայրերն էին։ Այստեղ ևս կար երեք դասարան, թույլատրվում էր նաև, որ դպրոցի տեսուչը լինի աշխարհիկ անձնավորություն։ Ուսման ծրագիրը

1 Տե՛ս «Արարատ», 1869, հատ. Ա, էջ 141—146։

2 Նույն տեղում, հատ. Ա, էջ 4։

նույնն էր, ինչ որ թեմական դպրոցներում, միայն մի փոքր կըրճատված և կրոնական թեքումով։

Այս երկու կանոնադրությունները, սակայն, առանձնապես մեծ նշանակություն չունեցան։ Թեմական յուրաքանչյուր դպրոց առաջնորդվում էր իր կանոնադրությամբ (որն էական տարբերություն էլ չուներ 1869 թ. կանոնադրությունից), իսկ վանական դըպրոցները հետագայում զարգացում չապրեցին և շատ աննշան դեր էին կատարում։

Այսպիսով, 1870-ական թվականների նախօրյակին հայկական դպրոցն ստանում էր ընդհանուր կանոնադրություն, հնարավորություն էր ստեղծվում այս կամ այն չափով դպրոցական միասնական սիստեմ կառուցելու։

Եվ հայ հասարակությունը լծվեց այդ գործին։

Արժանանալով հասարակության սևեռուն ուշադրությանը, զարգացման նպաստավոր հող գտնելով, հայ դպրոցն սկսեց արագ տարածվել Անդրկովկասի հայաբնակ շրջաններում։ Պ. Սիմոնյանն իր հուշերում գրում է. «Այդ ժամանակամիջոցում հայերի համար ամենից մխիթարական երևույթն էր միայն մեր հոգևոր և ծխական դպրոցների շատանալն ու բարեկարգվելը, շնորհիվ նոցա մեջ տեղի ունեցած վարչական փոփոխությանց և հայ գաղափարական երիտասարդների եռանդուն մասնակցության ազգային կրթության և դաստիարակության։ Մինչև վերոհիշյալ ժամանակաշրջանը հայ դպրոցները գտնվում էին խալֆայական ղեկավարության ներքո և թվով էլ շատ սակավ էին»[1]։

Ամենուրեք՝ գյուղերում և քաղաքներում հասարակական վճիռներ էին կայացվում՝ որոշվում էին ծխական դպրոցի նյութական միջոցների մեջ եկեղեցու ավանդի չափը, հասարակության հանգանակած միջոցները, ուսման վարձի ծավալը և ձեռնամուխ էին լինում հոգաբարձական ընտրություններին, վերջինիս հանձնարարելով դպրոցի կազմակերպումը և ուսուցիչ գտնելու հոգսերը։ Շատ հաճախ այդ վճիռներով որոշվում էր հասարակության և եկեղեցու միացյալ ջանքերով դպրոցական շինություն կառուցելու հարցը։

Նոր իրավիճակում հայ ժողովրդի կրթական ամենից ճանաչված ու տարածված օջախը ծխական դպրոցն էր դառնում, քանի որ այն ըստ սահմանված կարգի պետք է լիներ յուրաքանչյուր եկե-

---

1 «Հովիվ», 1909, № 46, էջ 723։

ղեցուն կից։ Այդ ժամանակ երկրամասում մեծ տարածում չէր գըտել նաև պետական դպրոցը, որն առանց այն էլ ուսման բարձր վարձի պատճառով անմատչելի էր հասարակ ժողովրդին։ Վանական և թեմական դպրոցներն էլ քիչ էին և կարող էին ընդգրկել խիստ սահմանափակ թվով երեխաների։ Այնպես որ բուն ժողովըրդին բաժին էր մնում ծխական դպրոցը։ Սակայն ժողովուրդը, որի մեջ արմատացել էր այն համոզմունքը, թե իր աղքատության հիմնական պատճառը տգիտությունն էր, միշտ չէ, որ ի վիճակի էր լինում նյութապես ապահովել իր իսկ դպրոցը։ «Նրանք (դըպրոցները— Վ. Ե.) չեն ապրում, այլ միայն շնչում են... նրանց հ-կամուտը ողորմությունն է, իսկ ողորմությամբ շատ երկար ժամանակ չի կարելի ապրել և վերջապես այդ ապրուստը ապրուստի նըման չի կարող լինել»— դառնությամբ արձանագրում էր Երևանում լույս տեսնող «Պսակ» թերթը[1]։

Նյութական անապահովությունը և անորոշությունը եղել են հայ դպրոցի մշտական դաժան ուղեկիցը, շատ հաճախ պատճառ դառնալով, որ հազիվ ծնունդ առած, այն դադարեցնի իր գոյությյունը։ Հաճախ էր պատահում, որ դպրոցը ծվարում էր եկեղեցու գավիթներից մեկում, տեղավորվում խարխուլ ու խոնավ շենքերի մեջ. մեծ բախտավորություն էր, եթե հարուստ բարերարներից մեկը իր տանը մի լուսավոր սենյակ էր հատկացնում դպրոցին։

Նույն խղճուկ վիճակում էր և դպրոցական գույքը, ղգացվում էր գրենական պիտույքների ու դասագրքերի խիստ կարիք։ «Նոր դարը» գրում էր, որ դպրոցների նստարանները հասել են Նոյի ժամանակներից և դառը հեգնանքով ավելացնում էր. «Դրանք խո մեր հնագետների համար թանկագին հետազոտության նյութեր կարող էին դառնալ»[2]։ Նույն չքավորությունն էր ստիպում աշակերտներին տարվա մի զգալի մասը բացակայել դպրոցից և դաշտային աշխատանքների լարված շրջանում օգնության հասնել ծնողներին։ Հաճախ երեխաները հագուստ ու կոշիկ չունենալու պատճառով էին բացակայում դասերից։ Թեև հայկական ծխական դպրոցներում ուսման վարձը շատ ցածր էր և երեխաների մի մասը՝ ձրիավարժ, այնուամենայնիվ շատերը չէին կարողանում այդ ցածր վարձն էլ վճարել և դուրս էին մնում։ Այդ առիթով «Արձագանքը» Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցի մասին գրում էր. «Մի քանի աշակերտներ դասերից հետո իրենց կույր հոր կամ մոր ձեռքից բռնած

1 «Պսակ», 1883, № 1։

2 «Նոր դար», 1884, № 43։

տանում պատեճնում են քաղաքի մեջ ողորմություն մուրալու»[1]։ Եվ սա դեռ Ալեքսանդրապոլի պես քաղաքում էր։

Ժողովրդի չքավորությունը, սոցիալական անհավասարության խորացումը, քաղաքական պայմանները լայն հնարավորություն էին տալիս ազայական խավերին հաճախ միջամտել դպրոցի ներքին կյանքին, նշանակել կամ ազատել տալ ուսուցիչներին և իրենց կամքը թելադրել։ Այդ էր պատճառը, որ դպրոցի շուրջը երբեմն տեղի էին ունենում սուր բախումներ, խավարամիտ ու եսամոլ մարդիկ իրենց անձնական շահերի խաղալիք էին դարձնում այն։

Դպրոցի կյանքում զգալի դեր էր խաղում գյուղական քահանան։ Այն բանից, թե ինչպիսին էր այդ քահանան՝ բանիմաց, գործունյա, թե տգետ ու խավարամոլ, հաճախ կախված էր լինում դպրոցի լինել-չլինելու հարցը։ Քիչ չէին պատահում ժողովրդին մոտ կանգնած, հասկացող քահանաներ, որոնք իրենց անձնական ազդեցությամբ կարողանում էին զգալի օգուտ տալ կրթական գործին։ Բայց ավելի հաճախ հակառակն էր լինում։ Ուլիա-Նորաշեն (Շարուր-Դարալագյազի գավառ) գյուղի դպրոցի հոգաբարձուները բողոքում են իրենց քահանայից և գրում, որ նա «աշխատում է ամեն ջանքով ժողովրդին տգիտության մեջ պահել, որպեսզի յուր պակասությունները չճանաչվեն և չդատապարտվեն գյուղացիներից», նպատակ ունենալով հետագայում իր տեղը զիջել իր որդուն[2]։ Դպրոցական գործում հոգևորականների խաղացած բացասական դերի մասին դժվար թե մեկը ավելի ճիշտ արտահայտված լինի, քան եկեղեցական հայտնի գործիչ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանը. «Ցավալի ճշմարտություն է,— գրում էր այն ժամանակ դեռ վարդապետ Սեդրակյանը,— որ շատ տեղ նույնիսկ առաջնորդներն ու փոխանորդները կամ մյուս եկեղեցական պաշտոնյաներն են պատճառ լինում մեր հոգևոր դպրոցների բարոյական անկմանն, ոմանք մատաղ սերնդյան կրթության կարևորությունն չհամակրելովն, և ոմանք յուրյանց կողմնասեր և շահադետ մետումներովն, իսկ ընդհակառակն՝ ժողովուրդն ավելի ընդունակ և նախանձախնդիր է հանդիսանում նոցա բարեկարգության և առաջադիմության պահպանությանն»[3]։ Սրա համար էլ ժողովրդի կրթական գործի առաջադիմությամբ շահագրգռված հայ մամուլն ու գործիչները բազմիցս նշում էին, որ քահանաներին հարկավոր է ոտում տալ, կապել կյանքի հետ։

1 «Արձագանք», 1884, № 29, էջ 441։

2 ՀՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 29, էջ 50։

3 «Դպրոց», 1875, № 7, մաս Ա, էջ 244։

Ընտրովի հոգաբարձության ձևը բերումը ինքնին ժողովրդական սկզբունքի կարևոր հաղթանակն էր: Սակայն ցարական ինքնակալության տիրապետության, սոցիալական անարդարությունների ու անհավասարության պայմաններում հնարավոր էլ չէր լրիվ օգտվել այդ հաղթանակի պտուղներից: Աղայական քմահաճույքները, քահանաների տգիտությունն ու ստորաքարշությունը, աշխատավոր ժողովրդի անիրավահավասար վիճակը միշտ չէ, որ թույլ էին տալիս հոգաբարձական մարմիններում ընտրելու արժանավոր ու գործիմաց մարդկանց: Հաճախ հոգաբարձության ընտրությունները վեր էին ածվում աղմուկ-աղաղակի, տեղիք տալիս հոգևոր իշխանությունների կամայական միջամտություններին, հոգաբարձու էին ընտրվում շահախնդիր մարդիկ, որոնք երբեմն դպրոցի համար ժողովված գումարներն ի չարն էին գործ դնում, ծառայեցնում այլ նպատակների: Պատահում էր, որ անախորժ ընդհարումներ էին լինում հոգաբարձության անդամների, քահանաների, ուսուցչական կազմի միջև, որոնց միջամտում էին նաև աղաները: Դրանցից տուժողը միայն ժողովրդի լուսավորության գործն էր լինում, «Իսկ աղաների հոգը չէր, որ ուսումնարանն անկարգ է, իրանք այնտեղ զավակ չունեին»[1]:

Այս շրջանում հայ իրականության մեջ հրապարակ եկավ հասարակական մի նոր դաս, որին վիճակված էր դառնալու դպրոցական գործի կենտրոնական, վճռող դեմքը: Դա նոր, ժողովրդական ուսուցիչների դասն էր: Աստիճանաբար թափանցելով Անդրկովկասի գրեթե բոլոր հայաբնակ վայրերը, այդ դասը գնալով հասարակական ավելի ու ավելի լայն ճանաչում էր գտնում: Եթե մի ժամանակ հայ աշխատավորի միակ խորհրդատուն ու հրահանգիչը եղել էր ծխական քահանան՝ մեծ մասամբ այդ աշխատավորի նման տգետ ու անօգնական, ապա այժմ նրան սկսում էր փոխարինել ժողովրդական ուսուցիչը, որն այս կամ այն կերպ կրթություն էր ստացել, որոշ չափով կարողանում էր ճիշտ կողմնորոշվել քաղաքական-հասարակական խնդիրներում, հնարավորին չափ միջամտում էր տեղի կյանքին, օգնում ու խորհուրդներ տալիս գյուղացուն: Ժողովուրդն սկսել էր հաճախ դիմել նրան, ունկնդրել նրա ձայնին: Աղքատ ու չարքաշ գյուղացին միշտ խոր ակնածանքով էր վերաբերվում լավ ուսուցչին, նրանում տեսնելով իր զավակին լուսավորելու կարող մի անձնավորության:

---

1 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1963, էջ 457:

Ուսուցչությունն էր այն գրեթե միակ ասպարեզը, որին դիմելով հայ նոր մտավորականությունը կարող էր մերձենալ բուն ժողովրդին, կենդանի խոսք ասել նրան, օգնել ամենօրյա հոգսերը թեթևացնելու։ Դրա համար էլ մեր համարյա բոլոր մշակութային ու քաղաքական գործիչները իրենց գործունեությունն սկսել են դպրոցից, իսկ նրանցից շատերը մինչև վերջ էլ մնացել են այնտեղ։

Հայ դպրոցի նյութական անապահով վիճակը առաջին հերթին հարվածում էր ուսուցչին։ Եթե քաղաքներում մի շարք դպրոցների ուսուցիչները քիչ թե շատ տանելի ռոճիկ էին ստանում, ապա նրանց մեծ մասը ստիպված էր բավարարվել տարեկան 60—150 ռուբլով։ Շատ դեպքերում նրանք անձամբ շրջում էին տնե-տուն, ուսման վարձ ժողովելու կամ տոն օրերին նվիրատվություններ հավաքելու։ Ուսուցիչ Ռ. Պողոսյանը, դիմելով կաթողիկոսին, այսպես էր նկարագրում հայ ուսուցչի անել դրությունը. «Ամենայն տարի տեղափոխություն, ընտանեկան անհաջող հանգամանքներ, գյուղական հասարակությանց հարուցած խոչընդոտներ, ավելացննենք և զանազան կամայականություններ, ահա ուսուցչի ստացած վարձատրությունը յուր բերած զոհերի փոխարեն... Ջոհ, քաղց, անգործ— ահա բառեր, որոնք պարունակում են իրենց մեջ հայ ուսուցչի անմխիթար պատմությունը»[1]։

Լենինի խոսքերն, արտահայտված ռուսական ժողովրդական ուսուցչի մասին, լրիվ կերպով կարող են վերաբերել և հայ իրականությանը. «Ժողովրդական ուսուցիչները սովահար ուցրտահար են լինում ցուրտ և համարյա անբնակելի խրճիթներում։ Ժողովրդական ուսուցիչներն ապրում են անասունների հետ միասին, որ գյուղացիները ձմեռը բերում են խրճիթ։ Ժողովրդական ուսուցչին հալածում է ամեն մի ուրյադնիկ, ամեն մի գյուղական սևհարյուրյակային, կամ կամավոր պահնորդ և խուզարկու, չխոսելով արդեն իշխանության կողմից կատարվող խծբծանքների ու հետապնդումների մասին»[2]։

Անձնազոհ և ազնիվ շատ երիտասարդներ հաղթահարելով դժվարությունները, հանձն էին առնում ուսուցչի տանջալի ու հոգեմաշ աշխատանքը, սակայն նրանցից քչերն էին, որ կարողանում

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 331, էջ 3։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 157։

էին մինչև վերջ դիմանալ։ «Ձոհ բերել յուր անձն մի հայտնի գաղափարի,— դառնությամբ արձանագրում էր «Մանկավարժական թերթ» ամսագիրը,— դա բացառական անձնավորություններ գործ է։ Մարդիկ շատ քիչ կամ ավելի լավ ասել երբեք յուրյանց զոհ չեն բերում մի գաղափարի խմբովին և ամբողջ կյանքի ընթացքում»[1]։ Նյութական անապահովությունը ստիպում էր ուսուցչին շատ հաճախ տեղից-տեղ փոխադրվել, առաջանում էր ուսուցիչների խիստ անցանկալի հոսունություն, որն անուղղելի վնասներ էր հասցնում դպրոցական գործին։ Աշակերտը, 2—4 տարի սովորելով դպրոցում, գործ էր ունենում մի քանի ուսուցիչների, ամենատարբեր մակարդակի ու կարողության տեր մարդկանց հետ. պարզ է, թե դա ինչպիսի հետևանքներ էր ունենում։ Հաճախ դպրոցական հոգաբարձությունները ուսուցիչ ընտրելիս նախապատվությունը տալիս էին «իրենց» մարդկանց, որոնք համաձայնվում էին ցածր ռոճիկով աշխատել։ Դրա հետևանքն այն էր լինում, որ կրթված ուսուցիչը ևս ստիպված էր ընդունել նույն պայմանները՝ անգործ չմնալու համար, բայց ավելի հաճախ նա ուղղակի հեռանում էր դպրոցական ասպարեզից։

Սակայն, չնայած այս բոլորին, հայ ուսուցչությունը շարունակում էր գործել, հեռացողների տեղը նորերն էին բռնում, նրանցից առավել նվիրվածներն ու տոկունները դիմում էին անձնազոհ քայլերի, պայքարում անարդարությունների դեմ։ Նման պայմաններում հայ ուսուցչի գործն ու կյանքը մի կատարյալ մարտիրոսություն էր դառնում, և կրթական այն օջախները, որոնք ծխում էին նրանց մեծագույն ջանքերի շնորհիվ, խլելով մարդկային անսահման ուժ ու եռանդ, անգնահատելի նշանակություն էին ստանում հայ ժողովրդի մատաղ սերնդի կրթության ու դաստիրակության գործում։

1860-ական թվականների վերջերին Գևորգ կաթողիկոսի հրատարակած ծխական, վանական և թեմական դպրոցների կանոններով որոշ պարզություն ու որոշակիություն էր մտցվում դպրոցների տիպերի և նրանց նպատակների մեջ։ Սակայն կյանքը ցույց տվեց, որ պաշտոնական օրենսդրությունը դեռևս ի վիճակի չէր պարզելու դպրոցների իսկական տիպերը. եթե դատելու լինենք առկա կանոններով, ապա կարելի է ասել, որ հայկական դպրոց-

1 «Մանկավարժական Թերթ», 1878, № 1, էջ 11։

նները բաժանվում էին երեք տիպի՝ ծխական, վանական ու թեմական։ Բայց իրականում այլ պատկեր ստացվեց։ Հոգևորականությունը շատ չանցած սկսեց հաճախ օգտագործել վիճակային կամ հոգևոր դպրոց հասկացողությունը, իսկ վանական դպրոցի մասին սկսեցին ավելի հազվադեպ հիշատակել։

1870—1884 թթ. արևելահայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակահատվածում հայկական դպրոցների հիմնական տիպերն էին ծխական, հոգևոր և թեմական դպրոցները։ Տեսնենք, թե սրանցից յուրաքանչյուրն ինչ էր իրենից ներկայացնում։

Ծխական դպրոցները, որոնք հաճախ հանդես էին գալիս նաև ծխական-եկեղեցական անվամբ (եկեղեցիներին կից լինելու պատճառով), մասսայական, տարրական դպրոցներն էին, որոնք ծնունդ էին առել 1850—1860-ական թվականներին և, ի հակակշիռ խալֆայական դպրոցների, գտնվում էին եկեղեցու իրավասության տակ։ 1868 թ. կանոնադրությունը կարգավորեց ծխական դպրոցների գոյավիճակը և հաջորդ 10—15 տարում դրանք լայն տարածում գտան Անդրկովկասի հայաշատ շրջաններում։ Այս դպրոցների հիմնական նպատակն էր տարրական գրագիտություն սովորեցնել մանուկ սերնդին և միաժամանակ, ինչպես այդ հատատատում էր կանոնադրությունը, կազդեր մատակարարել թեմական դպրոցների համար։ Հատկանշական է, որ թեմական դպրոցներ ունեցող քաղաքների ծխական դպրոցները թեմականների համար համարվում էին որպես նախապատրաստականներ և զգալի ուղղություն ու ղեկավարություն էին ստանում նրանց կողմից։ Ուսուցումը նրբանցում տևում էր 2—3 տարի, սակայն կարող ուժերի և նյութական միջոցների առկայության դեպքում ավելացվում էր ևս 1—2 տարի։ Դասավանդվող առարկաներն էին՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, վայելչագրություն, թվաբանություն, երգեցողություն։ Դեպքեր էին լինում, որ այս առարկաների վրա ավելանում էին նաև նախնական դիտելիքներ աշխարհագրությունից, պատմությունից, բնագիտությունից, նկարչությունից, երբեմն մասնավոր նախաձեռնությամբ մտցվում էին լրացուցիչ գործնական առարկաներ՝ ձեռագործ (աղջիկների համար), կազմարարություն և այլն։ Հայ դպրոցի նախկին շրջանի անորոշ, հեղհեղուկ վիճակն անշուշտ իր կնիքն էր դրել ծխական դպրոցների վրա, 1868 թ. կանոնադրությունն իր հերթին բազմաթիվ հարցեր բաց էր թողել. այդ էր պատճառը, որ սկզբնական շրջանում շատ տեղերում պատշաճ կարգ ու կանոն չկար՝ աշակերտների ընդունելությունը կատար-

վում էր տարվա բոլոր եղանակներին, լրիվ չէր կիրառվում դպրոցական ծրագիրը, դասաժամերը սահմանափակված չէին, չկար ամառային արձակուրդ, միշտ չէ, որ ծեծը դուրս էր մղված դպրոցից։ Սակայն այս բացերը աստիճանաբար սկսեցին վերանալ։ Ծխական դպրոցում մեծ մասամբ լինում էին 1—3 ուսուցիչներ, որոնցից մեկը տեղական քահանան էր (կրոնական առարկաներ)։

Բազմաթիվ թերություններով ու բացերով հանդերձ ծխական դպրոցը կրթական գործի մի նոր աստիճան էր, որը որակապես տարբերվում էր նախորդ շրջանի դպրոցից։ Նախ այն դուրս էր հանել վանական խուցերի հեղձուցիչ մթնոլորտից և լայնորեն թափանցում էր գյուղերն ու քաղաքները, կրթության գործը հանձնելով աշխարհիկ մարդկանց ձեռքը։ Մեծ առավելություն էր հիշատակված կանոնադրությունը, որը լավ թե վատ, այնուամենայնիվ որոշակիություն էր մտցրել և պարզել էր հսկողության հարցը։ Նախկին դպրոցներում տիրող կրոնական միօրինակությունը սկսել էր տեղի տալ աշխարհիկ առարկաներին. դրանց շարքում հաստատուն տեղ էր գրավել նաև ռուսաց լեզուն։ Գրաուցման հնչական մեթոդը տիրապետող էր դարձել։ Եվ, վերջապես, դպրոցը դադարել էր մեկ անհատի կամայական «մանկավարժության» ասպարեզ լինելուց։

Հաջորդ տիպը հոգևոր դպրոցն էր։ Դժվար է որոշակի սահման գծել բարձր աստիճանի ծխական և հոգևոր դպրոցների միջև։ Սրբանք կարծես ծխականների շարունակությունն էին կազմում և ավելի լայն գիտելիքներ էին տալիս։ Նրանք մեծ մասամբ կազմված էին լինում նախակրթարաններից, որոնք իրենց ուսման ծավալով հավասարվում էին սովորական ծխական դպրոցին և 3—5 հիմնական դասարաններից, այնպես որ ուսման ողջ ընթացքը տևում էր 6—8 տարի։ Հոգևոր դպրոցներում դասավանդվում էին, բացի ծխական դպրոցի առարկաներից, նաև հայոց, ռուսաց և ընդհանուր պատմություն ու աշխարհագրություն, թվաբանություն, բնական պատմություն, գծագրություն, հաճախ նաև հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, մարդակազմություն. այս և մի շարք այլ նոր առարկաների մուծումը դպրոցում գերազանցապես կախված էր լինում առաջատար մանկավարժների կարողությունից և նախաձեռնությունից։ Հոգևոր դպրոցները հիմնվում էին քաղաքներում և խոշոր բնակավայրերում, ուր հնարավոր էր ստեղծել նյութական ավելի տանելի պայմաններ, ներգրավել կարող ուսուցիչների, բարելավել դպրոցի վիճակը։ Գործելով նման պայմաններում, հոգե-

վոր դպրոցները արագ բարգավաճում էին և արդեն 1880-ական թվականների սկզբներին նրանցից մի քանիսը իրավամբ դարձել էին միջնակարգ կրթական հաստատություններ:

«Հոգևոր» անվանումը զուցե ամենից շատ չէր համապատասխանում այդ դպրոցներին, քանի որ նրանցում առավել ակնառու էին հանդես գալիս աշխարհիկ սկզբունքն ու հասարակական նախաձեռնությունը: Այդ անվանումը զուտ ձևական բնույթ էր կրում:

Էջմիածինը, ձգտելով կարգավորել դպրոցական գործը, կանոնագրություն տվեց միայն ծխական, վանական և թեմական դպրոցներին. հոգևոր հայրերը այդ շրջանում չէին կարող ենթադրել, որ շատ կարճ միջոցում ազգային դպրոցների միջից կառանձնանան մի խումբ դպրոցներ, որոնք համընթաց քայլելով ժամանակի պահանջներին, արձագանքելով հայ առաջադեմ կրթական գործիչների նպատակադրումներին, կբռնեն միջնակարգ կրթության ուղին և «ծխական» կոչումը նրանց համար խիստ նեղ կդառնա: Հոգևոր դպրոցներն իրենց մեջ պարունակում էին ազգային կրթության հետագա ծավալման ու զարգացման նախատիպը, կրթություն, որը բարեհաջող պայմանների առկայության դեպքում ի վիճակի էր դառնալու մի ամբողջական կազմակերպված սիստեմ՝ սկսած տարրական դպրոցից մինչև միջնակարգը: Այդ պրոցեսը խմորվում էր հոգևոր դպրոցի շուրջը: Բայց դա միևնույն ժամանակ մեծագույն վտանգ էր պարունակում իր մեջ: Ցարական բյուրոկրատիան համաձայնվել էր հայկական դպրոցի ինքնավարությանը, պայմանով, որ նա սահմանափակվի հայ-լուսավորչական ծխականների զավակներին դրել-կարդալ սովորեցնելով և նրանց կրոնական բարեպաշտության և կույր հնազանդության ոգով դաստիարակելով: Թույլ էր տրված նաև «Հայ պատանիների աստվածաբանական գիտությունների մեջ կրթվելու համար» բացել թեմական դպրոցներ: Պաշտոնական իշխանությունների համար անցանկալի էր դպրոցի չափից ավելի բարգավաճումն ու ընդարձակումը. ուստի հայ եկեղեցին աշխատում էր աննկատելի դարձնել նրա գոյությունը՝ ավելորդ ու վտանգավոր միջամտություններից խուսափելու համար: Ջափազանց հատկանշական է այդ տեսակետից Մակար եպիսկոպոսի (ապագա կաթողիկոս) տված խորհուրդը «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պ. Սիմոնյանին, որն իր հուշերում այդ մասին գրում է. «ոսոցա մասին (ծխական դպրոցների— Վ. Ե.) էլ շատ ընդարձակվելու խնդրանոք արգելք էր լինում Թիֆլիզի առաջնորդ՝ ի տեր Հանդուցյալ Մակար արքեպիսկոպոսը (ապա կաթողիկոս)

ասելով. «Ի՜նչ թմբկահարելու բան է, մի քանի երեխայք կարդալ գրել են սովորում, որ եկեղեցիներում փոխանացներ ունենանք, ի զուր ուրիշների ուշադրությունն էլ գրավելու առիթ պիտի տանք»[1]:

Բայց ինչպես վարվել, երբ կյանքի առաջընթացը թափ էր հաղորդել դպրոցին ու երևան հանել նրա մի նոր, զարգացած տիպը: Էջմիածինը չէր կարող և չէր էլ ձգտում արգելակել կրթական գործի զարգացումը. նրա հոգսը այդ կրթական գործը իր իրավասության տակ պահելն էր: Եվ ահա հոգևոր իշխանություններն ու նրանց հետևությամբ ժամանակի մամուլն ու հասարակայնությունը նոր տիպի դպրոցների համար քաղաքացիություն ավելին «հոգևոր» անվանմանը, որը դրանց կրոնական ուղղվածության պատրանք էր ստեղծելու և շեղելու էր իշխանությունների ուշադրությունը: Այդ էր պատճառը, որ հետագայում էլ հոգևոր դպրոցները միասնական կանոնադրություն չստացան, դրանով իսկ հայ առաջադեմ դպրոցական գործիչներին անկաշկանդ գործելու հնարավորություն ստեղծելով:

Հոգևոր դպրոցները հաճախ կոչվում էին նաև վիճակային, սակայն դրանով նրանց էությունը չէր փոխվում:

Քանի որ հոգևոր դպրոցները կարևոր դեր էին խաղում, կարելի է մի փոքր ավելի մանրամասն կանգ առնել նրանցից առավել աչքի ընկնողների վրա:

Ընդհանրապես XIX դարի կեսից հայ դպրոցի կյանքում նշանակալի տեղ էր գրավում Ալեքսանդրապոլը: Շնորհիվ իր նպաստավոր դիրքի, բնակչության ձեռներեցության (Կարինից և Կարսից դաղթած արհեստավորական խավերի), Ալեքսանդրապոլը համեմատաբար արագ զարգացման էր հասել և ստեղծել ուրույն քաղաքական-հասարակական կյանք: Արհեստների և առևտրական կապերի զարգացումը բավական աշխույժ անց ու դարձ էին առաջացրել քաղաքում, որի շնորհիվ էլ այնտեղ ավելի վաղ էր ծայր առել դպրոցական շարժումը: Վաղուց ի վեր գոյություն ունեին խալֆայական տիպի մասնավոր դպրոցներ, իսկ 1840 թ. հիմնված սբ. Փրկչի եկեղեցուն կից դպրոցին վիճակված էր 2—3 տասնամյակ անց դառնալու ազգային աչքի ընկնող կրթական օջախներից մեկը: Դպրոցի պատմությունը գրի առնող Ա. Ղևոնյանը նշում է, որ այն գրեթե միշտ կառավարվել է ժողովրդի ներկայացուցիչների՝ վերատեսուչների (իմա՝ հոգաբարձուների) ձեռքով, որը արհեստավորական Ալեքսանդրապոլին հատուկ մի ժողովրդական սկզբունք

1 «Հովիվ», 1909, № 43, էջ 676:

էր[1]: Ընդհանուր խալֆայական միջավայրում այս դպրոցը մի լուսավոր կետ է եղել և, պայքարելով քիչ թե շատ տանելի դպրոցական պայմանների համար, հետզհետե իր վրա է գրավել հասարակության ուշադրությունը: 1858 թ. էջմիածնի սինոդը նրան մի շարք եկեղեցական եկամուտներ է հատկացրել: Հին մանկավարժ Ն. Նիկողոսյանն իր գրառումներում նշում է, որ դպրոցն ունեցել է մի քանի ուսուցիչներ, հոգաբարձություն, ավանդվել է 11 առարկա, այնտեղ սովորել են նաև հույներ ու թուրքեր[2]:

1868 թ. հետո սկսվում է դպրոցի վերելքը. կատարվում է դասարանային որոշակի բաժանում՝ ըստ սովորողների հասակի ու գիտելիքների, հաստատվում են ամառային արձակուրդներ, դասավանդվող առարկաների շարքից հանվում է ճարտասանությունը: Սկսված վերելքն ավելի որոշակի է դառնում, երբ այստեղ 1871 թ. հավաքվում են մի քանի կրթված ու ժամանակի շնչով տոգորված երիտասարդներ՝ Գերմանիայից վերադարձած մանկավարժ Սարգիս Բեգնազարյանը, Ղազարոս Աղայանը, բժիշկ և գրող Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի), շնորհալի ուսուցիչ Հայրապետ Ղուկասյանը և ուրիշներ: Այս խմբին կազմակերպում և օժանդակում էր Պետերբուրգի դինվորական բժիշկների ինստիտուտն ավարտած Ավետիք Բաբայանը:

Սբ. Փրկչի դպրոցը, որ հայտնի էր դարձել հոգևոր վիճակային անվամբ, սկսեց արագ բարգավաճել: Բեգնազարյանի ջանքերով, որը դպրոցի տեսուչն էր, մտցվեցին նոր առարկաներ՝ հանրահաշիվ, երկրաչափություն, ֆիզիկա, բնական պատմություն, տեղագրություն, մարմնամարզություն, գերմաներեն: Պետերբուրգից Սանահասարյանի միջոցով ստացվեցին ֆիզիկական գործիքներ, մարդաբանական մոդելներ և դպրոցական այլ պիտույքներ: Լուրջ տեղ հատկացվեց մանկավարժական ժողովներին, դասավանդումը կանոնավոր, օրինակելի ընթացք ստացավ: Արդեն 1874 թ. վիճակային դպրոցն ուներ 3 պատրաստական և 4 հիմնական դասարաններ՝ 266 աշակերտով[3]: Ավանդվող առարկաների թիվը հասնում էր 18-ի: Այս շրջանում դպրոցը իր մակարդակով ու նշանակությամբ ավելի բարձր աստիճանի վրա էր, քան Երևանի և Շուշու թեմական-

1 Տե՛ս Ա. Ղլտճյան, Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912), Ալեք-պոլ, 1912, էջ 24—25:

2 Տե՛ս ՊԻԱ, Ն. Նիկողոսյանի արխիվ, № 103, «Դյումրի— Լենինականի անցյալը»:

3 Ա. Ղլտճյան, Պատմություն Ալեք-պոլի... դպրոցի, էջ 66:

նները, որոնք երեք դասարան ունեին միայն: (Այս հանգամանքը հաճախ շփոթություն է առաջացնում և առիթ տալիս պնդելու, որ Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցը թեմական է եղել)[1]: 1883/84 ուսումնական տարում վիճակայինն իրեն կից բացում է երեք ծխական դպրոց՝ փակված մասնավոր դպրոցների փոխարեն և նրա աշակերտների թիվը հասնում է 816-ի[2]: Աշակերտների այդպիսի թիվ այդ ժամանակ չուներ Անդրկովկասի և ոչ մի դպրոց:

Հոգևոր մյուս դպրոցներից աչքի էր ընկնում Ախալցխայի Կարապետյան դպրոցը: Սա հայկական հնագույն դպրոցներից մեկն է եղել, հիմնվել է 1830 թ., Կարինից Անդրկովկաս եկած գաղթականների ղեկավար Կարապետ արքեպիսկոպոսի ջանքերով: Այդ նշանավոր հոգևորականը իր մահից հետո դպրոցին բավական նյութական միջոցներ է թողնում, որը միացվելով եկեղեցու եկամուտներին, համեմատաբար ապահով վիճակ է ստեղծում դպրոցի համար: Սկսած 60-ականների վերջերից, Կարապետյան դպրոցը ևս նկատելիորեն բարեկարգվում է. այն միշտ դեպի իրեն է գրավում աշակերտների մեծ քանակություն, որոնց թիվը տարբեր տարիներին տատանվում էր 100—400 միջև:

Հիշատակության արժանի են նաև Ախալքալակի Մեսրոպյան դպրոցը՝ բացված 1836 թ՝. նույն Կարապետ արքեպիսկոպոսի ջանքերով և բնակչության նյութական օժանդակությամբ, Վ. Ագուլիսի հայոց հոգևոր ուսումնարանը (1867), Բաքվի դպրոցը (1866), հետագայում նաև Կարսի ս. Լուսավորչական դպրոցը:

Այս բոլոր դպրոցները արական էին: Սակայն իրողությունը ցույց է տալիս, որ հոգևոր դպրոցների մեջ ավելի կարևոր ու աչքի ընկնող դեր են խաղացել իգական մի շարք դպրոցներ, որոնք արժանացել են հասարակության ու կրթական գործիչների առավել սևեռուն ուշադրությանն ու աջակցությանը: Մինչև 1860—70-ական թվականները աղջիկների կրթությունը պատահական բնույթ էր կրում: Դեռևս տիրապետող նախապաշարմունքները հնարավորություն չէին տալիս կնոջը հասարակական ասպարեզ դուրս գալու: Բայց տնտեսական ու հասարակական վերելքը աստիճանաբար խարխլում էր նաև այդ նախապաշարմունքների հիմքերը: Արդեն հայ վերնախավերի շրջանում, քաղաքներում սկսում էին, թեկուզ և արտաքին փայլի համար, կրթության տալ աղջիկներին մասնավոր ու պետական դպրոցներում:

---

1 Տե՛ս Արիստակես վ. Սեդրակյանի «Մեր ազգային հոգևոր դպրոցները այսկայս Կովկասում» հոդվածը «Դպրոց» ամսագրի 1875 թ. № 7-ում:

2 «Արձագանք», 1884, № 29, էջ 437:

Ստեղծվող իգական դպրոցները մեծ մասամբ եկեղեցական-ծխական տիպի էին, արականից մի փոքր ավելի սեղմված ծրագրով, որտեղ ավանդվում էին նաև հատուկ առարկաներ՝ ձեռագործ, կար ու ձև։ Լինում էին նաև խառը, երկսեռ դպրոցներ։ Որպես կանոն իգական դպրոցները հանդես էին գալիս այնտեղ, ուր արդեն գոյություն ունեին արական դպրոցներ, կար որոշ նախապատրաստական աշխատանք, առկա էին կարող ուսուցչական ուժեր։

1870-ական թվականներին իգական կրթությունը զգալի հաջողություններ հասավ։ Այդ բանն առանձնապես աչքի ընկավ, երբ Անդրկովկասի մի շարք խոշոր կենտրոններում գործող հայկական իգական դպրոցներից մի քանիսը հասան ավելի բարձր աստիճանի, հաղթահարեցին ծխականի ծավալները և դարձան փաստորեն թերի միջնակարգ կամ միջնակարգ ուսումնարաններ։ Նման դպրոցների թիվը ավելին էր, քան արական նույնատիպ դպրոցներինը։ Սա պետք է բացատրել նրանով, որ նախ հոգևոր արական դպրոցներից բացի, կային նաև թեմական դպրոցներ, որոնք միջնակարգ էին համարվում։ Բացի այդ, տղաների համար ստեղծված էին ավելի նպաստավոր պայմաններ այլ տիպի դպրոցներում սովորելու համար։ Ոչ պակաս կարևոր էր և այն հանգամանքը, որ հայ կրթական գործիչները հսկայական նշանակություն տալով կանանց լուսավորելու գործին, և հիմնականում կենտրոնացած լինելով քաղաքներում, անձնական ու հասարակական եռանդը ուղղում էին աղջիկների դպրոցները բարեկարգելուն, դիմում էին բաղմազան ողոհողություններին, միաժամանակ հույս ունենալով այդ դպրոցներում պատրաստել նաև ուսուցչուհիներ ապագային դպրոցների համար։

Ապագային իգական դպրոցների ստեղծման գործում խոշոր ավանդ մուծեց գրող Պերճ Պռոշյանը։ Դեռևս 1861 թ. գրողը մեծ դժվարություններով «Գայանյան» կոչվող դպրոց է հիմնում Թիֆլիսում, որը թեև կարճ կյանք է ունենում, բայց վարակիչ օրինակ է դառնում ուրիշների համար։

Առաջին իգական կանոնավոր ու հարատևած դպրոցի հիմնադրման պատիվը պատկանում է Շուշուն։ 1864 թվականին այստեղ աշխատում էր դպրոցական գործիչների մի եռանդուն խումբ՝ Պետրոս Շանշյան, Գարեգին (Մելիքսեդեկ) Մուրադյան, Պերճ Պռոշյան։ Վերջինիս ազդեցությամբ շուշեցի մեծահարուստ Համբարձում Հախումյանի կինը՝ Մարիամը կանանց մի ընկերություն է կազմում իգական դպրոց հիմնելու համար։ Այս նախաձեռնությու-

նը լայն արձագանք է գտնում, հավաքվում է անհրաժեշտ գումար, շատ տիկիններ պարտավորվում են որդեգիրներ պահել։ 1864 թ. գարնանը դպրոցը բացվում է։ Այս առթիվ Պերճ Պռոշյանը ոգևորված գրում էր. «Ո՜հ, բայց ի՞նչ մեծ ուրախություն էլ տեսնվում է Շուշվա հայերի երեսին, մեծ պահքն ամենքին ավետում էր ամեն տեղ Շուշվա տիկնանց աղգասիրությունն և ո՞ր գերդաստանի հայրն և ճշմարիտ հայը կարող էին չուրախանալ իրենց ընտանեաց արած այսպիսի օգտավետ և ընդհանուրին վերաբերյալ գործի համար»[1]։ Տիկին Հախումյանը նորաբաց Մարիամյան դպրոցին հատկացնում է իր տան հինգ սենյակները, թեմական դպրոցի ուսուցիչները Շանշյանի և Պռոշյանի ղեկավարությամբ համաձայնվում են ձրի պարապել և իրենց վրա են վերցնում դպրոցի ուսումնական մասի հսկողությունը։ Հետագայում, գործելով Շուշու թեմական դպրոցի հարևանությամբ, Մարիամյան դպրոցը զգալի առաջադիմության է հասնում։

Երկու տարի անց, 1866 թ. Երևանում, գարձյալ Պռոշյանի նախաձեռնությամբ, բացվում է Գայանյան օրիորդաց դպրոցը, որի նյութականը կազմվում էր քաղաքի միջոցներով։ Այստեղ ևս դպրոցի վրա բարերար ազդեցություն են թողնում թեմականի ուսուցիչները, թեև Գայանյան դպրոցը քաղաքի մյուս հայկական ուսումնարանների նման չէր ենթարկվում թեմականին։ 1870-ական թվականների վերջին Ս. Բեգնազարյանի ջանքերով քաղաքի Կոնդի թաղամասում բացվեց նաև Սահականուշյան իգական դպրոցը։ Երևանի այս երկու դպրոցների միացյալ տեսուչի էր Գայանե Հովհաննիսյանը (Մատակյան), դպրոցներն ունեին հոգաբարձություններ, որոնց մեջ մտնում էին 4 կին և 3 տղամարդ։ 1883 թ. Գայանյան և Սահականուշյան դպրոցները միավորվեցին և Գայանյան դպրոցը դարձավ միջնակարգ[2]։

1869 թ. Թիֆլիսի մի խումբ հայրենասեր աշխարհիկ ու հոգևոր գործիչներ, հետանալով Խորեն Ստեփանեի մասնավոր իգական դպրոցից, անձնական նախաձեռնությամբ բացեցին ևս մի Գայանյան դպրոց։ Նախաձեռնողները պարտավորվել էին ձրի դասավանդել, մինչև որ հասարակությունը կզգար դպրոցի անհրաժեշտությունը և կդիմեր նյութական զոհաբերության։ Կարճ ժամանակում Գայանյան դպրոցը հասավ շո-

---

1 «Ղարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվիլը», Շուշի, 1864, էջ 18։

2 Տե՛ս Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 291։

շափելի արդյունքների։ 1875 թ. Թեմական առաջնորդ Մակար եպիսկոպոսի հրամանով դպրոցը վերածվեց միջնակարգի։ Այդ թվականին դպրոցն ուներ երկու պատրաստական և չորս հիմնական դասարաններ։ 1878 թ. բացվեց հինգերորդ դասարանը, և աշակերտուհիների թիվը անցավ 200-ից, դպրոցում կար 28 ուսուցիչ, որոնցից 15-ը դեռևս դասավանդում էր ձրի։ Գայանյան դպրոցը գնալով ընդունում էր մանկավարժական թեքում. դպրոցի դեկավարները ուսման ծրագրի մեջ մտցնելով մանկական խաղեր, ձայնագրություն, պարուսուցում, աշխատում էին նրա սաներից պատրաստել ուսուցչուհիներ՝ տարրական դպրոցների համար։ Ավարտական դասարանների աշակերտուհիները մանկավարժական պրակտիկա էին անցնում ցածր դասարաններում։

Մի փոքր ավելի ուշ Թիֆլիսի դպրոցական կյանքում ոչ պակաս կարևոր դեր սկսեց խաղալ մի այլ իգական դպրոց։ 1877 թ. մեծահարուստ, պետական խորհրդական Հ. Անանովը ի հավերժացումն իր կնոջ՝ Մարիամի հիշատակի, 400 հազար ռուբլի արժողությամբ մի քարվանսարա է նվիրում սբ. Ստեփաննոսի վանքին՝ դրա եկամուտներով իգական դպրոց բացելու համար։ Հենց սկզբից լինելով նյութական ապահով պայմաններում, Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան դպրոցը, որտեղ սովորում էին առավելապես չքավորների զավակները, արագ զարգացում ապրեց, նույնպես հասնելով միջնակարգի մակարդակի և մանկավարժական թեքում ստանալով։ Ներսիսյան դպրոցի լավագույն մանկավարժներից շատերը դասավանդում էին ինչպես այստեղ, այնպես էլ Գայանյան դպրոցում։

Իգական հոգևոր դպրոցների շարքում իր արժանի տեղն ունի նաև Ալեքսանդրապոլի Արղության դպրոցը։ 1868 թ. մեռած իշխան Ղահրաման Արղությանը մի խոշոր գումար է կտակում օրիորդաց դպրոց հիմնելու համար։ Ալեքսանդրապոլի կանայք իրենց կողմից ևս նյութական օգնություն են ցույց տալիս, և 1871 թ. դպրոցը բացվում է։ Հենց սկզբից Արղության դպրոցը սերտ հարաբերություններ է ստեղծում վիճակային դպրոցի հետ և նրա զարգացումը մեծապես պայմանավորվում է վերջինիս առաջընթացով։ Երկու դպրոցներն ունեին միացյալ մանկավարժական ժողով, դասձարան։ Ուսուցչական ուժեղ խմբի առկայությունը Ալեքսանդրապոլում, Ղ. Աղայանի մի քանի տարվա տեսչությունը նպաստում են Արղության դպրոցի վերելքին։ 1881 թ. այնտեղ արդեն գործում

էր չորրորդ հիմնական դասարանը և դպրոցը հասարակական լայն ճանաչում էր ստացել։

1873 թ. Ղ. Աղայանի և Ս. Բեգնազարյանի ջանքերով ու հասարակության ջերմ օժանդակությամբ քաղաքում բացվում է ևս մեկ իգական դպրոց՝ Սահականուշյան, որտեղ վիճակային և Արդուբյանի ուսուցիչները պարապում էին անվճար։ Վերջինիս սանուհիներից ոմանք որպես ուսուցչուհիներ աշխատանքի էին անցնում ինչպես Սահականուշյան, այնպես էլ շրջակա ծխական դպրոցներում։

Մյուս առավել նշանավոր իգական դպրոցներից կարելի է հիշատակել Ախալցխայի Նվիրաբերյան օրիորդաց ուսումնարանը (բացված 1870 թ.), որն աչքի էր ընկնում աշակերտուհիների մըշտական մեծ թվով (200—400), Վ. Ագուլիսի Հայկանուշյան դպրոցը (1867), Բաքվի սբ. Գր. Լուսավորչի (1866), Կարսի Շուշանիկյան դպրոցները և այլն։

Քննվող ժամանակաշրջանի հայկական դպրոցի ամենից բարձրը տիպը թեմական դպրոցն էր (այս դպրոցները հաճախ կոչվում էին նաև դպրանոց, հոգևոր սեմինարիա)։ Սրանք, ինչպես արդեն ասվել է, բացվել էին 1836 թ. «Կանոնագրության» հիման վրա, ըստ որի յուրաքանչյուր առաջահայ թեմ պետք է ունենար իր թեմական դպրոցը։ Սակայն իրերի անբարեհաջող բերումով նման դպրոցներ հիմնվել էին միայն Թիֆլիսում՝ Ներսես Աշտարակեցու ստեղծած դպրոցի հիման վրա, 1837 թ., Երևանում՝ 1837 թ., Շուշում՝ 1838 թ.։ Թեմականի անուն էր կրում նաև Շամախու դպրոցը՝ բացված 1844 թ.։ Սակայն նյութական խիստ անապահով վիճակը, կադրերի բացակայությունը հնարավորություն չեն տվել այս դպրոցին զարգանալու. մի կերպ քարշ տալով իր գոյությունը, այն հաճախ փակվել է և չի կարողացել բարձրանալ ծխականի մակարդակից։ 1886 թ. հետո Շամախու դպրոցը լրիվ և պաշտոնապես դասվել է ծխական դպրոցների շարքը, թեև շարունակել է գոյություն ունենալ թեմի աղքատիկ եկամուտներով։

Թեմական դպրոցները, ունենալով համեմատաբար երկար կյանք, ժամանակի ընթացքում աստիճանաբար զարգացել էին և դարձել կրթական շարժմանը գործնական ուղղություն տվող կենտրոններ. մեր դպրոցական կյանքի մեջ ներդրվող նորմուծությունները հիմնականում՝ ծնունդ էին առնում, փորձվում ու տարածվում էին այս դպրոցներից։ Ունենալով ուսման ավելի ընդլայնված ծրագիր, թեմական դպրոցները համեմատաբար առավել լայն հնա-

րավորություն էին տալիս ժամանակի հայ մանկավարժներին ծավալելու իրենց գործունեությունը, դեպի իրենց էին գրավում լավագույն ուսուցիչների։ 1860-ական թվականներից սկսած կրթական աշխույժն առաջին հերթին իրեն զգացնել տվեց այստեղ։ Թեմական դպրոցները նկատելիորեն առաջադիմեցին, միաժամանակ դառնալով հասարակական տարբեր խմբավորումների ու հոսանքների պայքարի ասպարեզ։

Թեև թեմական դպրոցները ստեղծվել էին յուրաքանչյուր թեմի հոգևոր կարիքները բավարարելու (կրթված քահանաներ պատրաստելու) համար, բայց շուտով նրանք շատ ավելի լայն նշանակություն ստացան և նրանց հոգևոր բնույթը մղվեց հետին դիրքերի վրա, տեղ բացելով աշխարհիկ սկզբունքների համար։ Հայ կրթական գործիչները ամեն կերպ ջանում էին թեմական դպրոցները վերածել բազմակողմանի կրթություն տվող միջնակարգ ուսումնական հաստատությունների, որոնց սանները կարող էին դուրս գալ կյանքի ասպարեզ, ընդունվել բարձրագույն դպրոցները կամ նվիրվել մանկավարժական աշխատանքի։ Թեմականների պատմությունը ցույց է տալիս, որ նրանց այս ջանքերը որոշակի հաջողություն էին ունենում։ Հավվագյուտ շրջանավարտներ էին դիմում հոգևոր կոչմանը։ Ճիշտ է, 1869 թ. թեմական դպրոցների կանոնադրությամբ նախատեսվում էր, որ նրանք պետք է ունենան երեքդասարանյա կազմ, սակայն կյանքի պահանջն ստիպեց այդ դպրոցներին շուտով դուրս գալ այդ շրջանակներից և մեծացնել ուսման ծավալն ու դասարանների թիվը։ Ընդհանուր բարեկարգման հետ միասին թեմական դպրոցները սկսեցին մուտք գործել նաև բնական գիտությունները, դրանով կանխորոշելով նրանց բազմակողմանի հանրակրթական ուղղությունը։

Թեմական դպրոցների, ինչպես և ողջ արևելահայ կրթական գործում, բացառիկ կարևոր դեր է խաղացել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։ Դառնվելով ավելի նպաստավոր պայմաններում, բոլորից շուտ հաղորդակցվելով ժամանակների առաջավոր գաղափարներին ու մանկավարժական մտքի նվաճումներին, վայելելով հայ լուսավորական-կրթական գործիչների ու հասարակության աջակցությունը, Ներսիսյան դպրոցը հասել էր զարգացման այնպիսի աստիճանի, որ դարձել էր հայ կրթական գործի դրոշակակիրն Անդրկովկասում։ Այստեղ էին ծնունդ առնում մանկավարժական առաջադեմ մտքերն ու գործերը, այստեղից էին հայ պատանիները մեկնում բարձրագույն կրթություն ստանալու, այստեղ սովորելն

ու դասավանդելը մի առանձին պատիվ էր հայ մարդու համար։ Մինչև Գևորգյան ճեմարանի ոտքի կանգնելը, Ներսիսյան դպրոցը միակ ուսումնական հաստատությունն էր Անդրկովկասում, ուր սովորողը կարող էր քիչ թե շատ բավարար գիտելիքներ ձեռք բերել հայագիտության ուղղությամբ։

Արդեն 1863 թ. դպրոցում բացվեց հինգերորդ դասարանը։ 1869—71 թթ. դպրոցում տեսուչ եղած Ստ. Նազարյանցը զգալիորեն բարելավեց ուսման դործը, կարգավորեց մանկավարժական ժողովի աշխատանքները, հայոց և ռուսաց լեզուների դասավանդումը, քաղաքի հայկական ծխական դպրոցների վիճակը, որով և բարձրացավ հետագայում Ներսիսյան դպրոց ընդունվողների որակը։ 1877 թ. բացվեց վեցերորդ դասարանը, իսկ հաջորդ տարին՝ նաև յոթերորդը, որը Ս. Մանդինյանի նախաձեռնությամբ ու աշխատակցությամբ դարձավ մանկավարժական դասարան։ Մանդինյանի հեռանալուց հետո այդ դասարանը փակվեց, սակայն հաջորդ տարին՝ 1881 թ. Առաքել Բահաթրյանի ղեկավարությամբ վերաբացվեց և մինչև 1885 թ. ուսուցիչներ էր պատրաստում ազգային դպրոցների համար։

Այդ տարիներին Ներսիսյան դպրոցը եղավ մի շարք այլ նորությունների նախաձեռնողը՝ 1881 թ. ուսուցիչների ապահովության համար այնտեղ հիմնվեց փոխադարձ-խնայողական գանձարկղ, պատրաստվեցին ու հրապարակվեցին մի շարք հայերեն դասագրքեր ու ձեռնարկներ, առարկաների մեջ մտցվեց հնագիտություն, եվրոպական ձայնադրություն, աշակերտական գրական երեկոները ավանդական դարձան։ Ուշադրավ երևույթ էր 1881 թ. ուսուցիչ Պալյանի ղեկավարությամբ չորրորդ դասարանցիների հրատարակած ձեռագիր «Աշակերտական թերթը»[1], որը լույս էր տեսնում ամիսը երկու անգամ։ Աշխարհաբարի մեջ վարժվելու նպատակով աշակերտները հոդվածներ ու շարադրություններ էին գրում մայրենի լեզվի, ազգային դաստիարակության նշանակության, մանկավարժական հարցերի մասին, հանդես էին գալիս գրական փորձերով։ 1880-ականների կեսին Ներսիսյան դպրոցն արդեն լիարյուն միջնակարգ դպրոց էր տասը տարի տևողությամբ ուսման ծրագրով, այնտեղ սովորում էր մոտ 500 աշակերտ։

Անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա էին կանգնած Երևանի և Շուշու թեմականները։ Այս երկու դպրոցների մշտական դաժան ուղեկիցն է եղել օրհասական աղքատությունը, որը հաճախ

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ.2, ց. 1, գ. 97, էջ 2։

է մղել նրանց ուսուցիչներին անձնազոհության՝ դպրոցները կործանումից փրկելու համար: Շուշու դպրոցի պատմության 75-ամյակին նվիրված դրքում կարդում ենք. «Ամեն տարի հոգաբարձությունը կամ նրա ներկայացուցիչը աղքատության ցուպը ձեռքին շրջել է քաղաքե քաղաք, դռնե դուռն և մուրալով մի կերպ պահպանել է թեմական դպրանոցի գոյությունը. հետևանքն էլ կրթական և դաստիարակչական տեսակետից մխիթարական չէր կարող լինել և չէ, որովհետև մեծապես նյութականի պատճառով դպրանոցը զրկված է եղել կարող ուժերից, ստեղծագործող ու դաստիարակության գործին նվիրված անհատներից (բացառությունները հարգելի են). ուստի և անկարող է եղել կանգնել յուր բարձր կոչման վրա և տալ հասարակության, ազգին և եկեղեցուն ավելի պատրաստի և պիտանի անդամներ»[1]:

Չնայած նման աննախանձելի վիճակին, դպրոցական շարժման վերելքը իր ոլորտի մեջ առավ նաև Երևանի ու Շուշու թեմական դպրոցները:

Երևանի թեմականը զգալի աշխուժացում ապրեց 1872 թ., երբ այնտեղ տեսուչ նշանակվեց կրթված ու եռանդուն Խորեն վ. Ստեփաննեն: Վերջինս ձեռնամուխ եղավ ամենից առաջ նյութական վիճակի բարելավմանը, կազմակերպեց հասարակական նախաձեռնությունը, ժողովեց 8000 ռուբլու նվիրատվություն: Խ. Ստեփաննեն դպրոցում մտցրեց մանկավարժական ժողով և մի շարք այլ նորություններ: Դպրոցի գործունեության ավելի բեղմնավոր շրջանը սկսվեց 1876 թ., երբ նորընտիր հոգաբարձության մեջ մտան բանիմաց ու գործունյա մարդիկ և տեսուչ հրավիրվեց Ս. Բեգնազարյանը: Նա անմիջապես սկսեց բարեփոխել դպրոցի կյանքը, բացեց չորրորդ դասարանը, փորձ արեց հիմնել նաև մանկավարժական դասարան՝ վարժապետանոց, որը, սակայն, անհաջողության մատնվեց: Մեծացավ մանկավարժական ժողովի նշանակությունը, մտցվեցին մի շարք նոր առարկաներ՝ բնագիտություն, երկրաչափություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, սահմանվեց աշակերտական համազգեստ, աշխուժացավ դպրոցի գրադարանի գործունեությունը: Բժիշկ Լևոն Տիգրանյանը՝ դպրոցին մոտ կանգնած մի հայրենասեր անձնավորություն, առաջին անգամ այնտեղ մտցրեց մարմնամարզություն, ըստեղծեց «Թեմական դպրանոցի մարզարանին նպաստող ընկերու-

1 «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանոցի 75-ամյակը», Շուշի, 1913, էջ 5:

բյուն»: Ջնայած, սակայն, այս ամենին, դպրոցը չկարողացավ բարձրանալ Թերի միջնակարգի մակարդակից, մի բան, որին նա հասավ ավելի ուշ շրջանում՝ 1880-ականների երկրորդ կեսին:

Գրեթե միևնույն աստիճանի վրա էր գտնվում և Շուշու դպրոցը, սակայն այստեղ ավելի աշխույժ էր հասարակական կյանքը: Դպրոցի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ 1863—64 թթ. այստեղ եղած Պետրոս Շանշյանի գործունեությունը, որը ջանք չխնայեց եվրոպական լուսավորության բակըզբունքները դավառական Շուշում ներդնելու համար: Թեմականի համար որոշ վերելքի տարիներ եղան նաև 1870—73 թթ., երբ տեսուչ էր Մաղաքիա Պլուզյանը: Նա առանձնահատուկ ուշադրություն դարձրեց հայկաբանության վրա, մեծապես բարելավեց հայոց լեզվի ուսուցումը, խրախուսեց աշակերտների գրական փորձերը: Պլուզյանին փոխարինեց Ս. Ստեփաննն, որը Շուշի փոխադրեց իր «Հայկական աշխարհը»՝ առաջին պարբերաթերթը այդ փոքրիկ գավառական քաղաքում: Ժամանակի պահանջներին մոտենալու իմաստով որոշակի քայլեր արվեցին նաև Երևանից հրավիրված, փիլիսոփայության դոկտոր Վասակ Պապաջանյանի, ապա նաև բժիշկ Բ. Աղասարյանի տեսչության օրոք: Բարելավվեց բնական գիտությունների դասավանդումը, դպրոցը ձեռք բերեց մի շարք լաբորատոր սարքեր ու գործիքներ, մանկավարժական ժողովը նոր իրավունքներ ստացավ, ղգալիորեն աճեց աշակերտների թիվը: 1880 թ. Աղասարյանի առաջարկով Շուշի հրավիրված Ս. Մանդինյանը կազմակերպեց հինգերորդ՝ մանկավարժական դասարանը, որը հաջորդ տարին տվեց առաջին ավարտողները: Սակայն սկսված վերելքը երկար չտևեց. քաղաքից հեռացան Մանդինյանը, Ղ. Աղայանը, ծայր առան երկպառակությունններ հոգաբարձության, թեմականի և ուսուցչական խմբի միջև, որոնք տևեցին մի քանի տարի և դպրոցի վնաս հասցրին թեմական դպրոցի առաջընթացին:

Դպրոցական այս շարքը շուտով համալրվեց ևս մեկ ուսումնական հաստատությամբ, որը, սակայն, գործում էր Անդրկովկասից դուրս՝ Նոր Նախիջևանում: Դրանից առաջ, 1857 թվականից, Թեոդոսիայում գործում էր Գաբրիել Այվազյանի ջանքերով բացված Խալիպյան ուսումնարանը, որը հասել էր բավական բարձր մակարդակի: Ցարական իշխանությունները որոշակի հույսեր էին կապում այս դպրոցի հետ՝ նպատակ ունենալով այնտեղ սովորելու համար բերել տալ հայ պատանիների Արևելքի երկրներից, որոնք դպրոցն ավարտելուց հետո իրենց երկրներում կզբաղնային

ռուսական ազդեցության տարածողներ։ Դրա համար նույնիսկ կառավարությունը դպրոցին տարեկան 11 հազար ռուբլու նպաստ նշանակեց։ Սակայն կառավարության հույսերը չարդարացան և նա ղգալիորեն թուլացրեց իր հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ։ Խալիպյան ուսումնարանը փաստորեն թեմականի դեր էր խաղում, նրա պահպանության մեջ ղդալի մաս էին կազմում թեմի արդյունքները։ Այս հանգամանքը գրավից Նորընտիր Գեորգ կաթողիկոսի ուշադրությունը և նա միջոցներ ձեռք առավ այն Նոր-Նախիջևան փոխադրելու համար։ Դրան դեմ էր դպրոցի բարերարը՝ Հարություն Խալիպյանը։ Նա գիտեր, որ թեմականի վերածվելով, դպրոցի վրայից կհանվեր իր անունը։ 1870 թ. կառավարության կարգադրությամբ դպրոցը փակվեց, պայմանով, որ նրա բազայի վրա Նոր Նախիջևանում թեմական դպրոց բացվի կաթողիկոսի տնօրինությամբ։ 1875 թ. Նոր Նախիջևանում բացվում է այդ դպրոցը, բայց առայժմ ոչ որպես թեմական, քանի որ կառավարությունը չէր հաստատել նրա կանոնադրությունը։ 1880 թ. ցարը հաստատեց այն և հաջորդ տարվանից, նոր հոգաբարձական ընտրությունից հետո, Նոր Նախիջևանի դպրոցը դարձավ թեմական։ Նոր Նախիջևանի քաղաքային դուման 1881 թ. հունիսի 8-ին որոշեց հնդկահայ մեծահարուստ Մասեհ Բաբաջանյանի կտակած կապիտալի տոկոսները հատկացնել նոր թեմական դպրոցին՝ նրա պահպանության համար[1]։

Այսպիսով, թեմական դպրոցների թիվը դարձավ չորս։ Այս շարքին պետք է դասել նաև էջմիածնի վանքին կից ժառանգավորաց դպրոցը, որը գործում էր դեռ 1640 թվականից։ Հաստատված լինելով գերազանցապես հոգևորականներ պատրաստելու համար, այստեղ շատ ավելի էր ընդգծված ուսուցման կղերա-սխոլաստիկ ոգին։ Սակայն ժառանգավորաց դպրոցը ևս զերծ չմնաց ժամանակի վերափոխող ազդեցությունից։ Թեև ավելի դանդաղ ու փոքր չափերով, այստեղ ևս մուտք գործեցին նոր երևույթներ, նոր առարկաներ ու սկզբունքներ, բայց, իհարկե, աշխարհիկ տարրն այնպիսի ազդեցություն չէր կարող ունենալ նրա վրա, ինչպես մյուս դպրոցներում։ Ժառանգավորաց դպրոցը, անշուշտ, որոշակի դեր խաղացել է կրթական գործում և էջմիածնի ճեմարանի հիմնումից մի քանի տարի անց, 1882 թ. դադարեցրել է իր գոյությունը՝ ձուլվելով նրա հետ։ Հենց ճեմարանը, որը կազմված էր դա-

1 Տե՛ս ՊԻԱ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 111, էջ 1—2։

աարանական ու լսարանական բաժիններից, իր մեջ ներառում էր և թեմական դպրոցի ծրագիրը՝ դասարանական բաժինը փաստորեն նույն թեմական դպրոցն էր։

Դպրոցական այս երեք հիմնական տիպերի (եկեղեցական-ծխական, հոգևոր և թեմական) կողքին դեռ շարունակում էին գոյություն ունենալ վանական որոշ դպրոցներ Տաթևում, Ջալեթում, Գեղարդում, Հառիճում, Սանահինում, Սաղիանիում, Երնջակում, Գանձասարում և այլ վայրերում, սակայն սրանք լրիվ կորցրել էին իրենց նշանակությունը և մեծ մասամբ վեր ածվել սովորական ծխական դպրոցների։ Մոռացության մատնված, աշակերտների խիստ նվազ քանակով, նրանք մի կերպ գոյություն էին պահպանում։

Նույն վիճակին էին արժանացել նաև մասնավոր դպրոցները։ Անդրկովկասի որոշ վայրերում (Ալեքսանդրապոլի գավառ, Ղարաբաղ) դեռ գործում էին խալֆայական տիպի մասնավոր դպրոցներ, սակայն սրանք ևս չէին կարողանում դիմանալ նոր դպրոցի մրցակցությանը, աստիճանաբար հեռանում էին ասպարեզից։ Եթե նախկինում հայ կրթական գործիչներից շատերը անձնական նախաձեռնությամբ բացում էին մասնավոր դպրոցներ, ապա այժմ նրանք ևս նախընտրում էին աշխատել ազգային դպրոցներում, որտեղ ստեղծվել էին գործելու համեմատաբար տանելի պայմաններ։ Մասնավոր դպրոցները ենթարկվում էին պետական հսկողությանն ու կանոնադրությանը՝ կորցնելով իրենց ազգային դեմքը և վեր ածվելով փաստորեն ռուսական դպրոցների, որտեղ սովորող հայ աշակերտներին ավանդվում էր նաև հայոց լեզու և կրոն։

Այսպիսով, վերելքի ուղին բռնած հայկական դպրոցը մշակեց երեք հիմնական տիպ։ Սակայն այդ սահմանաբաժանումը որոշակի չէր, շատ դեպքերում կրում էր պայմանական բնույթ. հաճախ հոգևոր էին անվանվում ամենասովորական ծխական տիպի դպրոցները, թեմական էր կոչվում Շամախու դպրոցը, որը անգամ հոգևորի մակարդակ չուներ։

1870-ական թվականներին էջմիածինը չկարողացավ և մասամբ հնարավորություն էլ չուներ կանոնադրական ձևակերպում տալ կրթական կյանքի առաջադրած դպրոցական երեք հիմնական տիպերին։ Հայ մանկավարժներից շատերը բազմիցս նշում էին, որ վաղուց ժամանակն է ստեղծել ազգային դպրոցների մի որոշակի սիստեմ, ապահովելով ստորին տիպի դպրոցից դեպի բարձրն անցնելու հաջորդականությունը։ Այդ գաղափարը հատկապես առա-

ջադրում էր Ս. Մանդինյանը և նրա անմիջական աղդեցությամբ էր, որ 1883 թ. Էջմիածնի ճեմարանի ուսումնական ժողովը փորձեց կազմել դպրոցական ընդհանուր ծրագիր՝ նպատակ ունենալով միօրինակություն և որոշակիություն մտցնել ազգային դպրոցների սիստեմում[1]: Ըստ այդ ծրագրի Ռուսաստանի հայ դպրոցն ունենալու էր չորս տիպ՝ ծխական, հոգևոր, դպրանոց և ճեմարան: Սրանցից յուրաքանչյուրի ուսման տևողությունը երեք տարի էր և նրանք, ըստ առարկայական ծրագրի, պետք է կազմեին միմյանց շարունակությունը:

1885 թ. Ներսիսյան դպրոցն արդեն կազմված էր այդ սկզբունքով՝ նրանում եղած առաջին երեք բաժանմունքները կոչվում էին պատրաստական՝ «Ծխական ուսումնարան», Ա—Գ միջին դասարանները՝ «Հոգևոր դպրոց» և Դ—Զ բարձր դասարանները՝ «Դպրանոց»:

Նույն ժամանակաշրջանի աչքի ընկնող երևույթներից էր Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հիմնումը 1874 թ., որը, թեև նախատեսված էր բարձր կարդի հոգևորականներ պատրաստելու համար, սակայն իր խաղացած դերով ավելի լայն նշանակություն ձեռք բերեց ու որոշ ժամանակ անց, փաստորեն, դարձավ Անդրկովկասի հայկական բարձրագույն ուսումնական հաստատությունը, իրենով սահմանագծելով ազգային կրթական սիստեմի ամենավերին աստիճանը: (Գևորգյան ճեմարանի մասին հանդամանորեն կխոսվի հետագա շարադրանքում):

Արևելահայ նոր դպրոցի ձևավորման ու հետագա զարգացման պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ դպրոցը, եթե ոչ անառարկելիորեն, ապա մեծ մասամբ աշխարհիկ բնույթ էր կրում: Ստեղծված պայմաններն ու ազգային վերածննդի բուռն ընթացքը դպրոցը մոտեցրել էին ժողովրդին: Ուշագրավ է այս առթիվ ռուս դեմոկրատ-մանկավարժ Ն. Վ. Չեխովի (1865—1947) արտահայտած միտքը. «Հայ եկեղեցու կառուցվածքը խստորեն դեմոկրատական է, ինչպես որ դեմոկրատական է հոդագործների ու առևտրականների այդ ժողովուրդը, որը դրեթե չունի իր աղնվականությունը: Ընտրական սկզբունքը ծխերում և ամբողջ եկեղեցում, իր ունեցվածքը կառավարելու համար ծխի իրավունքը— ահա թե ինչն էր հայ ծխական

---

1 Այդ մասին տե՛ս «Տեղեկագիր 1882/83 ուսումնական տարվա (Ս. Էջմիածնի ճեմարանի)»:

դպրոցին երաշխավորում և՛ մոտիկությունը ժողովրդին և՛ լրիվ հնարավորությունը բավարարելու նրա հոգևոր պահանջները»[1]։

Այն հանգամանքը, որ հայկական դպրոցները բացվում ու պահվում էին մեծ մասամբ ներքևից եկող նախաձեռնությամբ, հասարակության դիտակից ու անձնվեր ներկայացուցիչների անդուլ ջանքերի շնորհիվ, է՛լ ավելի էր շեշտում նրանց ժողովրդական-դեմոկրատական բնույթը։

Հետաքրքիր է այս տեսակետից 1900-ական թվականների կեսերին Կովկասի փոխարքայի գրասենյակի կառավարիչ Պետերսոնի խոստովանությունը, որ նա արել է փոխարքային ուղղած զեկուցագրի մեջ։ Խոսելով 1870-ական թվականների հայ դպրոցի մասին, Պետերսոնը գրում էր. «Հոգևոր գերատեսչության հայկական դպրոցները իսկական ժողովրդական դպրոցներ էին։ Քահանաները, որոնք հայերի մոտ մեծ մասամբ թերուսներ էին, սովորաբար ներգավվում էին միայն կրոնի դասավանդման գործում։ Դպրոցները կառավարվում էին թեմական տեսուչների հսկողության տակ գտնվող ծխական համայնքների կողմից՝ հանձին ընտրովի ուսումնարանական-եկեղեցական հոգաբարձուների։ Այդ դպրոցները խիստ ժողովրդականություն ունեին։ Ցունևոր դասակարգերի ծնողները (ունևոր դասակարգերը իրենց զավակներին ուղարկում էին գիմնազիաներն ու ռեալական ուսումնարանները) դրանք գերադասում էին պետական-մինիստրական դպրոցներից։ Գյուղական հասարակությունները, չնայած սատրին գավառական վարչության ճնշմանը, վճիռներ էին կայացնում հոգևոր վարչության և ոչ թե ժողովրդական լուսավորության մինիստրության դպրոցներին օժանդակելու մասին։ Գործի այսպիսի վիճակը պետք է հայ եկեղեցուն հասցներ և հասցրեց ընդհարման Կովկասի ուսումնական վարչության հետ»[2]։

Հայկական դպրոցի ժողովրդական-աշխարհիկ բնույթի լավագույն ապացույցներ են այս և ցարական աստիճանավորների բազմաթիվ այլ վկայությունները, մանավանդ, որ այդ աստիճանավորներն իրենք շատ հեռու էին հայ դպրոցի բարեկամներ համարվելուց և դառնությամբ էին նման վկայություններ անում։

Եթե ցարական բյուրոկրատիային մեծ դժգոհություն ու մտահոգություն էր պատճառում հայ դպրոցի ժողովրդական-աշխարհիկ բնույթը, ապա առաջադեմ ռուս գործիչները դրանում տեսնում

1 **Н. В. Чехов**, Народное образование в России с 60-х годов XIX века, М., 1912, стр. 171.

2 ՀՊԿՊԱ, ֆ. *113*, ց.*5*, գ. *65*, էջ *4*։

էին ընդօրինակության արժանի երևույթ։ Յուրի Վեսելովսկին, անդրադառնալով 1870—80-ական թվականների հայ դպրոցին, գրում էր. «Եկեղեցական-ծխական կարգին պատկանող այդ դպրոցներն ունեին ղուտ ազգային, համաժողովրդական բնույթ և ժողովրդական կրթության գործում հասարակական նախաձեռնության ուսանելի օրինակ էին հանդիսանում»[1]։

Ի տարբերություն 1880-ական թվականներից Ռուսաստանում լայն տարածում գտնող ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցների, որոնք վայելում էին կառավարության աջակցությունը, հայ դպրոցը գնաց այլ ուղիով։ Ռուսաստանում այն ժամանակ լուսավորության գործին ուղղություն էր տալիս տոլստոյ-պոբեդոնոսցևյան խմբավորումը, որն աշխատում էր ժողովրդական կրթությունը պահել կրոնական խիստ շրջանակների մեջ։ 1884 թ. հետո Ռուսաստանում այդ նպատակով կառավարությունն սկսեց պայքար մղել աշխարհիկ դպրոցի դեմ, որն արտահայտվեց կղերական-ռեակցիոն ոգով պարուրված եկեղեցական-ծխական դպրոցների ցանցի աննախընթաց ծավալումով։ Արքունի դպրոցները կառավարությունից ստանում էին անհամեմատ ավելի քիչ միջոցներ, քան ժողովրդական լուսավորության մինիստրության իրավասությունից դուրս գտնվող եկեղեցական-ծխական դպրոցները։ Եթե 1896 թ. վերջիններիս տրվող կառավարական օգնությունը հասավ 8,5 մլն ռուբլու, ապա արքունի դպրոցների բաժինը կազմեց 1,5 մլն ռուբլի[2]։

Բայց սրանով, իհարկե, կառավարությունն ի վիճակի չեղավ կասեցնել առաջադիմական վերելքը։ 1860-ական թվականների կեսերին ծնունդ առած զեմստվոյական դպրոցները դարձան ռուս առաջադեմ հասարակայնության եռանդուն գործունեության ասպարեզներ։ Պրոֆ. Վ. Յա. Ստրումինսկին այդ դպրոցների մասին գրում է, որ «ռեակցիայի պայմաններում փաստորեն աճում էին այնպիսի դպրոցներ, որոնք ամենից մեծ իրավունքով, քան բոլոր մյուսները, կարող էին կոչվել ժողովրդական դպրոցներ»[3]։ Զեմստվոյական դպրոցների գործունեության մեջ ակտիվ մասնակցություն էին ունենում ռուս դեմոկրատ մանկավարժներ՝ Կ. Դ. Ուշինսկին, Ն. Ա. Կորֆը, այդ դպրոցների պահպանության հիմ-

1 «Вестник воспитания», 1905, № 9, стр. 130.

2 **Н. А. Константинов, В. Я. Струминский,** Очерки по истории начального образования в России, М., 1953, стр. 169.

3 Նույն տեղում, էջ 184։

նական միջոցները որոշ չափով պայմանավորում էր գյուղական բնակչության, նրանցում առավել լայնորեն էին կիրառություն գտնում մանկավարժական նոր մեթոդներն ու աշխարհիկ սկզբունքները։

Այս տեսակետից էլ, հայկական եկեղեցական-ծխական դպրոցները, թեև նրանք գտնվում էին հոգևոր իշխանության իրավասության տակ, ունեին ընդհանուր բազմաթիվ գծեր զեմստվոյական դպրոցների հետ։ Բայց ամենից էական ընդհանրությունը այդ երկուսի ընդգծված ժողովրդական-աշխարհիկ բնույթն էր։ Այդ ընդհանրությունն էր պատճառը, որ ցարիզմը շատ չանցած սկսեց խոչընդոտել երկու դպրոցի առաջընթացը, աշխատելով նրբանցում ևս ուժեղացնել կղերական ոգին։ Նա ձգտում էր սեղմել հասարակական նախաձեռնության շրջանակները, միաժամանակ, պարզանալու լայն ասպարեզ տրամադրելով պոբեդոնոսցևյան ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցներին։

Ուրեմն, ժամանակի սոցիալ-քաղաքական պայմաններից դրդված հայ դպրոցն ստիպված էր ծվարել լուսավորչական եկեղեցու հովանու տակ, ընդունել «եկեղեցական», «հոգևոր» անվանում, և հիմնականում մերժելով կղերական ոգին, ամուր կանգնել աշխարհիկ սկզբունքի հողի վրա, լայն դուռ բացել առաջադեմ-ժողովրդական ոռնումների ու ձեռքբերումների առաջ։

Բուրժուականացող հայ հասարակությունը, արձագանքելով ժողովրդին լուսավորելու պահանջներին, ձեռնամուխ եղավ գործնական քայլերի։ Մեկը մյուսի հետևից հրապարակի վրա սկսեցին երևալ զանազան խմբակներ, միություններ, ընկերություններ, որոնք իրենց հիմնական և առաջին անելիքը համարում էին նորաբաց դպրոցներին նյութական օգնություն ցույց տալը։ Կազմակերպվում էին նաև գրադարաններ, ընթերցարաններ։

Այն վայրերում, ուր կային բանիմաց ու կարող ուժեր, անմիջապես նկատվում էր շեշտված կրթական շարժում, աշխուժանում էին դպրոցները, բարելավվում էր ուսման գործը, ծրագրեր էին մշակվում դպրոցական ցանցն ընդլայնելու և նրանում ավելի շատ երեխաներ ընդգրկելու մասին։ Այդ երևույթն ամենից շատ նկատելի էր Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում, Բաքվում, Շուշում և Անդրկովկասի մի շարք այլ հայաշատ կենտրոններում։ Հասարակական-կրթական գործիչ Հ. Առաքելյանը իր հուշերում, անդրադառնալով 1880-ական թվականների սկզբներին Շուշում տեղի ունեցած անցքերին, գրում է. «Եվ շուտով կազմվեց մի մտերմական գրական-մտավոր շրջան։ Հաճախ հավաքվում էինք ինձ

մոտ կամ Ղազարոս Աղայանի մոտ: Դպրոցի տեսուչն էր այդ ժամանակ Սեդրակ Մանդինյանը: Մեր շրջանին մոտեցան գրեթե բոլոր ուսուցիչները: «Թեմականի» հետ (այսպես էր կոչվում թեմական տեսուչը մեր շրջանում) շարունակ խոսում էինք եկեղեցական-ծխական դպրոցների թիվը Ղարաբաղում ավելացնելու անհրաժեշտության մասին»[1]:

Լուսավորական շարժումը հայ իրականության մեջ ծնունդ տվեց և մի շարք կազմակերպությունների, որոնց վիճակված էր աչքի ընկնող դեր խաղալ կրթական ասպարեզում. դրանք բարեգործական ընկերություններն էին: Դեռևս Ս. Նազարյանցն էր «Հյուսիսափայլում» առաջարկել Ռուսաստանում ստեղծել մի «ընդհանուր հայկական ընկերության», որի առաջնահերթ խնդիրը լիներ չքավոր հայերի զավակներին կրթություն տալ և օգնել նրանց՝ կյանքում տեղ գրավելու: Եթե պայմանները հնարավորություն չըտըվեցին «ընդհանուր» ընկերություն ստեղծելու, ապա գոնե մի շարք կենտրոններում երևան եկան ավելի նեղ ընդգրկումով ընկերություններ, որոնք և հիմնականում ստանձնեցին «Հյուսիսափայլի» առաջարկած դերը: Այս դեպքում հատկանշականն այն էր, որ ի տարբերություն մինչ այդ եղած ընկերությունների, նոր կազմակերպվողները ապրեցին հարատև գոյության մի շրջան և հնարավորություն ունեցան կատարելագործվել ու ամրապնդվել:

Առաջինն արձագանքեցին նոր-նախիջևանցիները, որոնք 1860 թ. հիմնեցին Հայոց բարեգործական ընկերությունը, որի կանոնադրությունը հաստատվեց իշխանությունների կողմից 1866 թ.: Ընկերությունը սկսեց դրամով օգնել չքավոր աշակերտներին և սաներ պահել տեղի դպրոցում: Հետագայում այն զբաղվել է հիմնականում Նոր Նախիջևանի Դայանյան օրիորդաց դպրոցի խնամակալությամբ:

«Հյուսիսափայլին» արձագանքող երկրորդ հայաշատ կենտրոնն արդեն Անդրկովկասում էր՝ Բաքուն: Նահանգական բժիշկ Դ. Ռոստոմյանը, որը «Հյուսիսափայլի» հետևողներից էր, մի եռանդուն ու բանիմաց մարդ, նախապատրաստական լայն աշխատանք է ծավալում, հավաքում է 10 հազար ռուբլուց ավելի դրամագլուխ, կազմում է կանոնադրություն և 1862—63 թթ. հիմնում «Մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչին Հայաստանի»: 1864 թ. կառավարության կողմից հաստատվում է ընկերության կանոնադրությունը և սկսվում նրա պաշտոնական գոր-

1 «Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը», էջ 47—48:

ծունեությունը: Ըստ կանոնադրության, «Մարդասիրականը» կոչված էր Ռուսաստանի հայերի մեջ, անկախ նրանց դիրքից ու դավանանքից, տարածելու լուսավորություն և բարեգործություն: «Ընկերության գործունեության առարկաներին վերաբերվում են, — կարդում ենք կանոնադրության մեջ,— աղքատ հայերի երկու սեռի զավակների մեջ, ըստ չափու յուր կարողության՝ տարածել բարոյական և մտավորական կրթություն, ևս և քրիստոնեական բարեգործություն նոցա (հայերի) չքավոր անդամներին»[1]:

Մինչև 1870 թ. ընկերության գործունեության շրջանակները սահմանափակ էին: 1865—66 թթ. ընկերությունը բացում է Բաքվի հայկական արական և իգական դպրոցները, նյութապես օժանդակում նրանց, օգնում չքավորներին: Սակայն 1870 թ., երբ ընտրվում է Խորհուրդը, ընկերության գործունեությունն ընդլայնվում է: Բարեկարգվում և նոր շենք են ստանում երկու դպրոցները, որոնք թեև գտնվում էին էջմիածնի իրավասության տակ, բայց նրանց անմիջական ղեկավարը ընկերությունն էր՝ հանձին իր կողմից ընտրվող հոգաբարձության: Աստիճանաբար ընդլայնվում է և մյուս դպրոցներին ցույց տրվող օգնությունը, հատկապես այն վայրերի, ուր հայոց լեզուն մոռացվելու վտանգի տակ էր՝ Նուխի, Ղուբա, Գանձակ, Շամախի: Միջոցների շատանալու հետ մեկտեղ ընկերությունն ավելացնում է կրթական-լուսավորական գործին տրամադրվող գումարները:

1870-ական թվականներին բացում է գրադարան, ապա նաև թանգարան, որտեղ աշխատում է հավաքել արժեքավոր ձեռագրեր, գրքեր, հայկական թերթեր ու ամսագրեր է բաժանորդագրում կարիքավոր դպրոցներին: 1880 թ. ընկերությունը հանգանակություն է կազմակերպում, բացում է նաև ընթերցարան բոլոր ազգերի համար, որտեղից ուսանողներն ու աշակերտներն օգտվում էին կամ ձրի կամ կես վճար մուծելով: Զգալի գումարներ են հատկացվել բարձրագույն դպրոցներում սովորող որդեգիրներին. նրանցից մանկավարժություն սովորողները պարտավոր էին հետագայում ուսման տարիների քանակի չափ աշխատել ազգային դպրոցներում, իսկ մյուսները պետք է աստիճանաբար վերադարձնեին իրենց վրա ծախսված գումարը: 1870 թ. հիմնվում է տպարանը և ընկերությունը կաթողիկոսից թույլտվություն է խնդրում այնտեղ տպագրել հայկական դպրոցների համար ընդունված դասագրքեր ու ձրի կամ էժան վճարով տարածել դպրոցներում, սակայն կաթողիկոսը

1 ՀՊԿՊԱ, ֆ. 27, գ. 55, էջ 46:

չի համաձայնում իր հսկողությունից դուրս թողնել դասագրքերի հրատարակության գործը, և տպարանը շուտով փակվում է։ 1882 թ. ընկերության դպրոցական մասնաժողովի առաջարկությամբ Բաքվի հեռավոր թաղամասում՝ Շամախու ճանապարհի վրա, բացվում է ևս մեկ դպրոց չքավորների համար։ Փորձ է արվում նաև մեծահասակների անգրագիտության վերացման կիրակնօրյա դպրոց ստեղծելու ուղղությամբ։ Ընկերության հեղինակությունը գնալով այնքան է աճում, որ Անդրկովկասի տարբեր վայրերի հայկական դպրոցները դիմում են նրան օգնության խնդրանքով, սակայն միջոցների սղությունը հնարավորություն է տալիս բացի Բաքվի երկու դպրոցներից, օգնություն ցույց տալ նաև 7 այլ դպրոցների։ Երբեմն ընկերությունը միանվագ նպաստներ էր հատկացնում սուր կարիքի մեջ գտնվող դպրոցներին։

1885 թ. «Մարդասիրական ընկերության» մեջ ընդգրկված էր 255 անդամ, որոնց մուծած անդամավճարներից, ձանապան նվիրատվություններից և հանգանակություններից էլ կազմվում էին նրա նյութական միջոցները։ Սկսելով իր գործունեությունը 10 հազար ռուբլի մայր գումարով, ընկերությունը 1880-ական թվականների սկզբներին այն հասցրեց ավելի քան 40 հազարի և հնարավորություն ուներ տարեկան 7—8 հազար ռուբլու ծախս անել։ Այդ գումարի մեծագույն մասը ծախսվում էր կրթական նպատակներին։ 1882 թ. կատարած 8803 ռ. ծախսից ավելի քան 7 հազարը գնացել է դպրոցների օգնության և որդեգիրների վրա[1]։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմը մեծ աշխուժություն առաջացրեց հայ հասարակական կյանքում, որն իր արտահայտությունը գտավ նաև եղած բարեգործական-կրթական ընկերությունների ակտիվացման և նորերի ստեղծման գործում։ 1880 թ. Երևան նկավ Թիֆլիսի հրատարակչական ընկերությունը, որը նպատակ էր դրել նպաստավոր պայմաններով լույս աշխարհ հանել հայ գրողների ու թարգմանական գործեր և տարածել հայերի մեջ։ Զգալի աշխատանք կատարվեց կանանց բարեգործություն կազմակերպելու ուղղությամբ։ 1882 թ. Նոր Նախիջևանում սկսեց գործել իգական սեռի կրթության գործին օժանդակելու նպատակով ստեղծված Հայուհյաց խնամատար ընկերությունը։

1879 թ. Պոլսում հիմնված «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», որը հետապնդում էր գերազանցապես կրթական նպատակներ, դիմեց Թիֆլիսի հայ կանանց՝ խնդրելով նրանց նյութա-

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 27, գ. 21, էջ 118։

կան օժանդակությունը։ Վրա հասած սովը խանգարեց իրագործել այդ օժանդակությունը. միջոցները հատկացվում էին սովյալներին։ Բայց մի տարի անց Թիֆլիսի հարյուրից ավելի հայ կանայք ժողով են գումարում, քննում Պոլսի հայրենակցուհիների դիմումը և հանգանակում որոշ գումար։ Այդ դեպքն առիթ է դառնում, որ նրանք ևս մտածեն իրենց սեփական ընկերությունն ունենալու մասին։ Ընտրվում է կանոնադրություն մշակող հանձնաժողով, որի մեջ մտնում են Դարյա Հովհաննիսյանը, Թագուհի Մելիք-Ազատյանը, Սոֆյա Բաբայանը, Սրբուհի Երիցյանը և ուրիշներ։ Նրանց մշակած կանոնադրությունը թեմական առաջնորդ Գ. Այվազյանի միջնորդությամբ հաստատվում է կովկասյան իշխանությունների կողմից 1881 թ. վերջին, և հրապարակ է գալիս «Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունը»[1]։ Անդամավճարների, նվիրատվությունների, իր նախաձեռնությամբ կազմակերպվող ներկայացումների, պարահանդեսների ու դասախոսությունների միջոցով հավաքվող գումարներով ընկերությունը ուժերը ներածին չափ օգնություն է ցույց տալիս Թիֆլիս քաղաքի հայկական դպրոցներին, հատուկ ուշադրություն դարձնելով օրիորդաց կրթության վրա։ Տարբեր ժամանակներում ընկերությունն ունեցել է 100—170 անդամ։

Հետաքրքրական է 1879 թ. Անանիա վարդապետ Համազասպյանի ջանքերով Նոր Բայազետում «Մարդասիրական ընկերության» ստեղծման փաստը։ Կաթողիկոսի կողմից հաստատված ընկերության կանոնադրությունն արձանագրում էր. «Մարդասիրական ընկերության նպատակն է Նոր Բայազետու մեջ գտնված երկսեռ դպրոցաց օժանդակել նյութապես և հսկել նոցա հառաջադիմության վերա և ըստ կարելվույն օգնել որը երեխայոց ի պայծառություն եկեղեցուա»[2]։ Անանիա վարդապետին հաջողվում է ընկերության շուրջը համախմբել 113 անդամ, հավաքել զգալի դրամական միջոցներ և դրանցով օժանդակել տեղի դպրոցներին մինչև 1885 թ., երբ հայկական դպրոցների փակումից հետո ընկերությունը դադարեցնում է իր գոյությունը։

Համեմատաբար ավելի լայն էին Թիֆլիսում հիմնված ընկերության գործունեության շրջանակները։ Ընկերության ստեղծման գաղափարը ծնվել էր ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Արևմտյան Հայաստանից գաղթածներին օգնելու շարժումից։ Էջ-

1 Տե՛ս «Արձագանք», 1892, № 62։

2 ՀՊԿՊԱ, ֆ. 7, գ. 50, էջ 61 հ. կ.։

միացնում գտնվող գաղթականներին բուժող և օգնող բժիշկ Բ. Նավասարդյանը 1880 թ. «Մշակում» հոդված է հրապարակում և կոչ անում համախմբել ուժերը, ստեղծել ընկերություն՝ ընդհանուր բշվառության դեմ միասնաբար պայքարելու համար: Նրա կոչը ջերմ արձագանք է գտնում Թիֆլիսի հայրենասերների շրջանում: Հատկապես եռանդուն աջակցություն է ցույց տալիս գրող Գաբրիել Սունդուկյանը: Նա մեծ ոգևորությամբ Նավասարդյանի հետ միասին մշակում է ընկերության կանոնադրությունը, որի առաջին հոդվածում ասված էր. «Ընկերության նպատակն է նպաստել լուսավորության տարածմանը հայերի մեջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նյութապես»[1]:

1881 թ. հունիսի 6-ին Կովկասի իշխանությունները հաստատեցին կանոնադրությունը, պայմանով, որ ընկերության գործունեությունը սահմանափակվի փոխադրքայության շրջանակներով: Դրա համար էլ այն ստացավ «Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում» անվանումը:

Գտնվելով Կովկասի կենտրոնում, «Բարեգործականը» կարողացավ բավական լայն գործունեություն ծավալել: Եթե Բաքվի «Մարդասիրականը» որոշ օժանդակություն էր ցույց տալիս Արևելյան Անդրկովկասի հայկական դպրոցներին, ապա Թիֆլիսի ընկերությունն իր ջանքերն ուղղեց դեպի երկրամասի արևմտյան ու հարավային շրջանները, օգնելով հատկապես կարիքավոր և այն վայրերի դպրոցներին, որտեղ հայոց լեզուն դուրս մղման վտանգի առաջ էր կանգնած: Ուշագրավ է այն փաստը, որ 1885 թ. Գորիում ընկերության միջոցներով բացվել էր աշակերտական մի փոքր հանրակացարան, որտեղ բնակվում էին հավասար չափով հայախոս և վիրախոս հայ աշակերտներ, որպեսզի վերջիններս վարժվեին հայերենում: Ազգային դպրոցների ուսուցիչներ պատրաստելու գործին նպաստելու համար ընկերությունը 1887 թ. հատուկ թոշակ է սահմանում Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում՝ պայմանով, որ նրա ստացողը հայկական դպրոցի սան լինի: Ընկերությունը օգնում էր նաև ուսուցիչներին, հայ ուսանողներին, գրքեր էր տրամադրում դպրոցներին, միաժամանակ վարում էր ընդհանուր բարեգործություն՝ աջակցություն էր ցույց տալիս սովյալներին, հիվանդներին, աղետյալներին, հետագայում նաև՝ գաղթականներին:

---

1 Լեո, Երևանամյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում, Թիֆլիս, 1911, էջ 40:

Այն հանգամանքը, որ կանոնագրությամբ իրավունք էր վերապահված ունենալու տեղական ճյուղեր, թույլ էր տալիս ընկերությանը լայնացնելու իր գործունեության աշխարհագրությունը: Կարճ ժամանակում Երևանում, Շուշում, Ախալցխայում, Հին Նախիջևանում, Քարվանսարայում, Կարսում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում, Նուխում, Բաքումում, Թելավում և այլ վայրերում ստեղծվեցին բարեգործականի տեղական ճյուղեր, որոնց թիվը հասավ 19-ի: Այս կազմակերպությունները տեղերում նույն գործն էին կատարում, ինչ որ Թիֆլիսի կենտրոնական խորհուրդը: Նրանցից շատերը փորձեցին ստեղծել հասարակական գրադարաններ, սակայն դա միայն հինգ ճյուղերի հաջողվեց, որովհետև իշխանությունները ցանկալի չէին գտնում ազգային լեզվով գրքերի կուտակումը: Բացի այդ, կազմված էին թույլատրված գրքերի ցուցակներ, որոնց մեջ բացակայում էին հայերեն գրքերը և դրանց համար պետք էր լրացուցիչ թույլտվություն ստանալ:

Իհարկե, չպետք է գերագնահատել կրթական գործին բարեգործական ընկերությունների ցույց տված օգնությունը, որը կախված էր գերազանցապես հասարակական նախաձեռնությունից: Հայ բուրժուազիան, որն ամենից ավելի հնարավորություն ուներ նյութական ներդրումներ կատարելու, միշտ չէ, որ հաճույքով էր ձեռքը դրպանը տանում. մեծահարուստներից շատերն էլ տարված լինելով իրենց անունը հավերժացնելու հոգսով, գերադասում էին առանձին հանդես գալ, դրանով իսկ հաճախ ցրելով նույն նպատակին ծառայող դրամական միջոցները: Բարեգործական միջոցառումներին ավելի սրտացավ մասնակցություն էին ցույց տալիս մանրբուրժուական, արհեստավորական խավերը և հայրենասիրական գաղափարներով տոգորված մտավորականությունը: Այնուամենայնիվ, բարեգործական ընկերություններն այն կազմակերպություններն էին, որոնց միջոցով հայ հասարակությունը կարողանում էր շփվել կրթական-լուսավորական գործի հետ, վարժվել կոլեկտիվ ջանքեր կիրառելուն: Այս ընկերությունները, որոնք գործունեության երկար շրջան ապրեցին, կարողացան գոյատևելու հնարավորություն ստեղծել մի շարք դպրոցների համար, կյանքի կոչեցին ազգային գրադարան-ընթերցարանները, բարձրագույն կրթություն ստանալու միջոց տվեցին հայ ուսումնածարավ երիտասարդներին: Սրանք գործեր էին, որ այլ ճանապարհով չէին կարող իրականանալ, քանի որ պաշտոնական իշխանությունը բնավ շահագրգռված չէր ազգային փոքրամասնությունների մշակույթի ու լուսավորության առաջընթացով:

Քննարկվող ժամանակաշրջանում երևան են գալիս նաև մի շարք այլ կազմակերպություններ, որոնք փորձ են անում զբաղվել քաղաքական հարցերով ևս՝ ժողովրդի լուսավորության խնդիրը սերտորեն կապակցելով սոցիալական և ազգային-ազատագրական շարժման հեռանկարների հետ:

Այս տեսակետից ուշագրավ օրինակ է տալիս Ալեքսանդրապոլը, որտեղ հասարակական նախաձեռնությունն ու հետաքրքրությունը ազգային խնդիրների նկատմամբ բավական կազմավորված ավանդություններ ուներ: Դեռևս 1860-ական թվականների սկզբներին այստեղ կազմակերպվել էր ընթերցասիրական ընկերություն: Քիչ անց երևան եկավ և մեկ ուրիշը՝ դպրոցական գործին օգնելու նպատակով, իսկ 1868 թ. Վիճակային դպրոցին կից հիմնվեց որբախնամ ընկերությունը՝ 100-ի չափ անդամներով: Շուտով ընկերությունից անջատվեց դեմոկրատական տրամադրություններով տոգորված մի խումբ, որը տեղի մասնավոր դպրոցի ուսուցիչ Արսեն Կրիտյանի գլխավորությամբ 1869 թ. ստեղծեց Բարեկամական ընկերությունը: Նրա մեջ մտնում էին ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտներ, արհեստավորական խավերի ներկայացուցիչներ: Ընկերության գլխավորները՝ Կրիտյանը, Պ. Հայկազունին, Կ. Մատինյանը, Ա. Աֆրիկյանը խմբակի անդամների մեջ քարոզում էին ազգային-ազատագրական, հայրենասիրական գաղափարներ: Նրանց աղդեցության տակ վիճակային դպրոցի աշակերտները, որոնց մեջ տարածվել էր Նալբանդյանի «Ազատն աստվածը», ոտանավորներ էին գրում՝ «կոչ անելով վերականգնել հայ ազգը և նրա նախկին անկախ դրությունը»[1]: Ընկերությունը և հատկապես նրա աչքի ընկնող գործիչներից Հայկազունին անխնա պայքար էին մղում քաղաքի աղայական խավերի աջակցությունը վայելող տարրերի դեմ:

Լուսավորական և ազգային-ազատագրական գաղափարները տարածելու համար Բարեկամական իր մասնաճյուղն էր ստեղծել Մեծ Ղարաքիլիսայում՝ «Կանաոր հայրենյաց սիրո» անունով: Սակայն այս երկու կազմակերպությունները երկար կյանք չունեցան: 1875 թ. ցարական ոստիկանությունը հայտնաբերեց կիսալեգալ գործող ընկերությունները և ձերբակալեց նրանց գլխավորներին: Վ. Պարսամյանը, ուսումնասիրելով Ալեքսանդրապոլի ու Մեծ Ղարաքիլիսայի ընկերությունների գործունեությունը, հետևյալ կերպ է բնութագրել նրանց. «Բարեկամական ընկերու-

1 Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 201:

թյան հիմնական նպատակներից մեկը եղել է ժողովրդի մեջ կրթություն և լուսավորություն տարածելը։ ...Կրիտյանը և նրա ընկերներից մի քանիսը ուսուցիչներ էին, ժողովրդի ծոցից դուրս եկած մտավորականներ, ժողովրդի մեջ սիրված ու հարգված մարդիկ։ Իրենց քաղաքական գործունեությունը նրանք սերտորեն կապում էին երիտասարդության հայրենասիրական դաստիարակության, ժողովրդի մեջ կրթության և լուսավորության տարածման հետ։ Աբովյանի, Նալբանդյանի և մյուս լուսավորիչների հետևությամբ, նրանք մեծ նշանակություն էին տալիս լուսավորությանը։ Այդ պատճառով էլ հատուկ ուշադրություն էին դարձնում դպրոցներ բացելու, գրադարաններ, ընթերցարաններ, թատրոն հիմնելու, դրքեր և թերթեր կարդալու վրա»[1]։

Ալեքսանդրապոլի ընկերությունն ուշագրավ է նրանով, որ այն փաստորեն բուն Հայաստանում ստեղծված առաջին կազմակերպությունն էր, որը, թեև բավական մշուշապատ ձևով, աշխատեց ժողովրդի լուսավորության գործը կապակցել ազգային-ազատագրական, մասամբ նաև սոցիալ-քաղաքական խնդիրների հետ, առաջինն էր, որ խոսքից անցավ գործի և իր կարողությունների սահմաններում ջանաց նոր ուղղություն տալ երիտասարդության որոնումներին։

Նույն ժամանակաշրջանում Անդրկովկասի մի շարք կենտրոններում (Թիֆլիս, Երևան, Էջմիածին) սկսեցին աշխուժանալ աշակերտական-երիտասարդական խմբակները, որոնք գտնվում էին Նալբանդյանի սոցիալ-քաղաքական հայացքների ազդեցության տակ։ Ավելի հասուն շրջանակներում սկսել էին հետաքրքրվել ռուսական հեղափոխական-դեմոկրատական մտքի նվաճումներով։ Գ. Ղարաջյանը (Սրկոմեդ) իր հուշերում գրում է. «70-ական թվականների վերջում և 80-ական թվականների սկզբներում հիմնվեցին այդ նպատակով (ինքնազարգացման— Վ. Ե.) Թիֆլիսի զանազան թաղերում— Կուկիայում, Վանքի թաղում, Մողնու թաղում, Անչիսխատի, Ս. Գևորգի, Խարիուխի և այլ թաղերում ուսանողական-աշակերտական խմբեր և ժողովներ, որոնց մասնակցում էին գիմնազիաների և հայոց սեմինարիայի բարձր դասարանների հայ աշակերտները և Ռուսաստանի զանազան համալսարանների ուսանողները»[2]։ Տարերայնորեն կազմակերպված

---

1 Նույն տեղում, էջ 164։

2 Գ. Ղարաջյան (Ս. Մ. Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 13։ Այդ մասին տե՛ս նաև նույն հեղինակի ձեռագիր «Հեղափոխականի հիշատակարանը», ՊԻՄ, № 88։

10—15 հոգիանոց այդ խմբակների անդամները հավաքվում էին գիշերները, կարդում Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Պիսարևի, Շչեգրինի, Բելինսկու գործերը, վիճում, որոնում։ Նրանց վիճաբանությունների առարկան հաճախ լինում էր նաև արևմտահայերի ազատագրության խնդիրը։ Այս խմբակներից էր, որ շուտով կազմավորվեց հայ առաջին հեղափոխական խմբակը՝ իր վրա կրելով նարոդնիկական ուժեղ ազդեցություն։ Սրա ջանքերով հեկտոգրաֆի վրա տպագրվեց ու տարածվեց Նալբանդյանի «Երկրագործությունը»։ Թիֆլիսի օրինակով, Գ. Ղարաջյանը, որ 1883—86 թթ. ուսուցչություն էր անում Գանձակում, այնտեղ նույնպես կազմակերպեց ինքնազարգացման աշակերտական խմբակներ։

Այսպիսով, դպրոցական շարժմանը զուգընթաց արևելահայ իրականության մեջ երևան եկան հասարակական մի շարք կազմակերպություններ, որոնք կոչված էին ուղղակի և անուղղակի ճանապարհներով նպաստելու այդ հարաճուն շարժմանը։

* * *

1860-ական թվականներին սկսված հասարակական-քաղաքական վերելքը մեծ աշխուժություն էր մտցրել ռուսական ողջ կայսրության դպրոցական գործի մեջ։ Գնալով ակտիվանում էր ժողովրդի հասարակական նախաձեռնությունը նոր դպրոցների ստեղծման ուղղությամբ։ Ցարիզմն այլևս անկարող էր այդ ընթացքի առաջն առնել և նա որոշեց «գլխավորել» այն, որպեսզի լուսավորության գործը իր ձեռքից բաց չթողնի և կարողանա ուզած ուղղությունը տալ նրան։ Այդ գործում ամենահիմնական նշանակությունը պիտք է ունենար կենտրոնացված վարչական հրսկողության սահմանումը։ 1860-ական թվականների վերջերից ընդունվեցին մի շարք որոշումներ, ստեղծվեց ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների, իսկ ապա նաև դիրեկտորի պաշտոնը։

Ցարական ռեակցիան ավելի ցցուն կողմերով դրսևորվեց Ռուսաստանի «այլազգիների» լուսավորության հարցում։ «Այլազգիներին» տիրապետող ազգի մեջ ձուլելու պաշտոնական ճանապարհում գտած քաղաքականությունը մեծ տեղ էր հատկացնում դպրոցին, որի միջոցով էլ առաջին հերթին տեղի էր ունենալու այդ ձուլումը։ 1867 թ. իր ամենահպատակ հաշվետվության մեջ ժողովրդական լուսավորության մինիստրությունը գրում էր. «Կայսրության արևելյան և հարավային ծայրամասերում ապրող այլ-

ազգինների կրթությունը կարևոր նշանակություն ունի հատկապես այն պատճառով, որ բազմաթիվ ու տարացեղ այլազգի բնակչությունը տիրապետող ռուս ազգի հետ ձուլելու ուղղությամբ մինչև այժմ կիրառվող բոլոր միջոցառումները քիչ հաջողություն են ունեցել»[1]: Դրա համար հատուկ ուշադրություն էր դարձվում «այլազգինների» շրջանում տարրական (առավել տարածված) դպրոցները պետական վերահսկողությանը ենթարկելուն, այդ դպրոցներից տեղական մայրենի լեզուն դուրս մղելուն:

Ցարական չինովնիկները եռանդով ուսումնասիրում էին գաղութատեր երկրների կրթական քաղաքականությունը, դրանում ընդօրինակելու եղանակներ գտնելու միտումով: Ցարական գաղութարարների ուշադրությունը գրավում էր ֆրանսիական Ալժիրը: Ժողովրդական լուսավորության մինիստրության պաշտոնյա Ա. Կոչետովը գործուղվեց Ալժիր՝ տեղի արաբո-ֆրանսիական դպրոցների դրվածքն ուսումնասիրելու: «Այլազգինների դպրոցների վերաբերյալ մեզանում առաջացած հարցի առթիվ,— գրում էր Կոչետովը,— ծանոթությունը այլ պետությունների նման դպրոցների հետ անօգուտ չի լինի: Կարծում եմ, անօգուտ չի լինի նաև իմ ուրվագիծը մեր ռուսական Ալժիրի՝ Կովկասի համար»[2]:

Մշակվում էին կանոններ «այլազգինների» դպրոցների համար, որոնց հիմնական բնորոշ գիծը ուսուցումը ռուսերենով վարելն էր: Գնալով ուժեղանում էր հալածանքը տեղական լեզուների նկատմամբ: Ուկրաիներենը հայտարարվեց ռուսաց լեզվի «փչացած բարբառ» և արգելվեց նրա դասավանդումը դպրոցներում: Նույն վիճակն էր և Բելոռուսիայում: Շատ տեղերում լեհերենի դասավանդումը նույնպես արգելքի տակ դրվեց: Ոչ պակաս հալածանքի էին ենթարկվում տեղական լեզուները Մերձբալթիկայում, Պովոլժյեում, Միջին Ասիայում:

1867 թ. Անդրկովկասի համար ևս մշակվեցին կանոններ ուսումնական գործի վերաբերյալ, որոնց նպատակն էր կովկասյան դպրոցը հիմնականում համապատասխանեցնել ընդհանուր կայսերական դպրոցական սիստեմին, կտրել տարրական դպրոցը միջնակարգից և դրանով սահմանափակել ժողովրդի լայն զանգվածների մուտքը դեպի կրթության ավելի բարձր աստիճանները: Պետական դպրոցներում դասավանդման պարտադիր լեզուն դարձավ ռուսերենը: Տեղական լեզուների ուսուցումը սահմանափակ-

1 «Журнал Министерства Народного образования», 1869, ч. 142, стр. 72.
2 Նույն տեղում, էջ 91:

վից. այդ առարկաները դարձան երկրորդական։ 1871 թ. կովկասյան իշխանությունները նույնիսկ ավելորդ համարեցին տեղական լեզուների ուսուցիչներին հատկացվող պետական նյութական միջոցները, և նրանց համար, ովքեր ցանկանում էին սովորել այդ լեզուները, սահմանվեց հատուկ ուսման վարձ։

Հայկական նոր դպրոցի կազմավորման սկզբից ցարիզմը հատուկ ուշադրություն դարձրեց նրա վրա։ Այն հանգամանքը, որ այդ դպրոցը զարգանում էր պետականին զուգահեռ և նրանից անկախ, չէր կարող չդառնալ պետական պաշտոնյաների մտահոգության առարկա։ 1867 թ. կանոններով Կովկասի բոլոր դպրոցները ենթարկվել էին ուսումնական վարչության հսկողությանը, բացի հայ-լուսավորչական և ուղղափառ եկեղեցու իրավասության տակ եղածներից։ Երբ ստեղծվեց ժողովրդական դպրոցների վերահսկուչների ինստիտուտը, կովկասյան իշխանությունները փորձեցին հայկական դպրոցները ևս ենթարկել այդ տեսուչների հսկողությանը։ Սակայն կաթողիկոսը, պատճառաբանելով, որ հայ եկեղեցին անհիշելի ժամանակներից ի վեր եղել է ազգային դպրոցի միակ իրավատերը, հրաժարվեց ենթարկվել նման հսկողությանը։

1871 թ. կառավարությունը որոշեց երկրի բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները ենթարկել ժողովրդական դպրոցների տեսչությանը, և հայկական դպրոցները այս անգամ ևս դուրս մնացին այդ հսկողությունից ու պահպանեցին իրենց ինքնավարությունը։ Ո՞րն էր դրա պատճառը։

Ղրիմի պատերազմը ծանր հարված էր հասցրել ցարական Ռուսաստանի արտաքին-քաղաքական հեղինակությանը, նրա ազդեցությանը Մերձավոր Արևելքում և Բալկաններում։ Ցարիզմը եռանդուն դիվանագիտական ու քաղաքական միջոցների էր դիմել իր խախտված հեղինակությունը վերականգնելու համար։ Համասլավոնական շարժման մեջ առաջին ջութակի դերն ստանձնելու, Փարիզի ստորացուցիչ դաշնագրի պայմանները վերանայելու, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները իր քաղաքական նպատակներին ծառայեցնելու, օսմանյան կայսրությունում հենարան ունենալու ձգտումը կանխորոշում էին ցարիզմի արևելյան քաղաքականության ուղիները։

Այդ քաղաքականության մեջ ոչ պակաս դեր էր հատկացվում Թուրքիայի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի երկրներում բնակվող հայությանը։ Իր տիրապետության սահմաններում ունե-

նալով հայերի կրոնական կենտրոնը՝ էջմիածինը, ցարական կառավարությունն աշխատում էր հնարավոր բոլոր միջոցներով օգտվել այդ հանգամանքից, կաթողիկոսներին դարձնել նպաստավոր գործիք Թուրքիայի քրիստոնյա հայ բնակչության վրա ազդեցությունն ուժեղացնելու համար: Ուրեմն պետք էր խաղալ էջմիածնի և հայության բարեկամի դերը, պետք էր մի շարք անցանկալի երևույթների առաջ աչք փակել, հիմնական նպատակին հասնելու համար: Այդ պատճառով էլ ցարիզմը արտաքնապես ընդառաջ էր գնում հայերի ազգային որոշ ձգտումներին. Պոլսի ռուսական դեսպան Ն. Իգնատևի կարծիքները՝ հայերի նկատմամբ վարել մեղմ ու զգույշ քաղաքականություն, հաշվի էին առնվում կենտրոնական կառավարության կողմից: Այսպիսի մոտեցումը դրդեց ցարական կառավարությանը ընդառաջ գնալ հայերի ցանկությանը և 1858 ու 1866 թթ. կաթողիկոսական գահի վրա հաստատել պոլսահայերի թեկնածուներ Մատթեոսին ու Գևորգին:

Այդ տարիներին հայերի նկատմամբ ցարիզմի վարած քաղաքականության հետաքրքիր բնորոշումն է տալիս 1904 թ. Կովկասի կառավարչապետի գրասենյակի կազմած պատմական ակնարկը. «Մատթեոսի և Գևորգի կաթողիկոսության ընթացքում, այսինքն՝ 1860—70-ական թվականներին Ներքին գործերի մինիստրությունը և նրան աջակցող Արտաքին գործերի մինիստրությունը... Արևելքում մեր քաղաքական ազդեցության տեսակետից անվիճելիորեն կարևոր նշանակություն տալով էջմիածնի կաթողիկոսական աթոռին, մշտապես ձգտում էին բոլոր տեսակետներից պաշտպանել հայ-լուսավորչական հոգևորականության արտոնությունները և հատկապես ժողովրդական կրթության գործում, այդ հոգևորականությանը և նույնիսկ ամբողջ հայ ազգությանը հատկացնում էին ինչ-որ անօրինակ ու բացառիկ արտոնյալ վիճակ պետության մեջ, կովկասյան իշխանությանը խորհուրդ էին տալիս համակերպվել իրենց այդ հայացքին և վստահության ու ներողամտություն հանդես բերել էջմիածնի կաթողիկոսների ու նրանց հնթակա հոգևորականության գործողությունների նկատմամբ: Իրենց նման ցուցումները մինիստրությունները հիմնավորում էին մեծ մասամբ կամ վաղուց անցած պատմական փաստերով, կամ թե վկայակոչելով մեր նկատմամբ թշնամաբար տրամադրված Թուրքիայի հայ մամուլը»[1]:

1 «Положение 11 марта 1836 г. и Эчмиадзинские католикосы под русским владычеством», Исторический очерк, Тифлис, 1904, стр. 31.

Պատմական փաստերի կամ հայ մամուլի հիշատակությունն, իհարկե, երկրորդական էր, հիմնական խաղաթղթերը չբացելու համար։

Ոչ պակաս արձագանք էր գտնում պաշտոնական քաղաքականության մեջ նաև Պոլսում ծավալված հայկական սահմանադրական շարժումը։ Զգալով, որ թուրքական կառավարությունը զիջումներ է անում հայերին նրանց օտար ազդեցությունից հեռու պահելու համար, ցարիզմն իր հերթին միջոցներ էր մշակում արևելահայերի շրջանում ռուսական քաղաքակրթություն տարածելու, որոշ բարեկարգ դպրոցներ բացելու համար։ Ներքին գործերի մինիստրության հոգևոր գործերի դեպարտամենտի դիրեկտոր կոմս Սիվերսը 1864 թ. գտնում էր, որ հայերի մեջ նկատվող որոշ ոչ ռուսասիրության պատճառը նրանց նկատմամբ խիստ լինելն է, արտոնությունների սահմանափակումը։ 1836 թ. «Պոլոժենյեի» վերանայման հայերի պահանջը նա իրավացի էր համարում և գտնում էր, որ պետք է նոր կանոններ մշակել արտասահմանի հայերի մասնակցությամբ, որով այդ հայերը կկապվեն Ռուսաստանին ու երախտապարտ կլինեն նրան։ Սիվերսն առաջարկում էր. «Տեղական իշխանությունների միջոցով, բարոյական ազդեցությամբ հայ հասարակություններին մղել ուսումնական հաստատությունների հիմնադրմանը, նրանց հատկացնելով դասավանդման հնարավոր ազատություն, որպեսզի դեպի Ռուսաստան ներգրավվեն Թուրքիայի և Պարսկաստանի հայ պատանիները։ Մի քանի նման, մեծ չափեր ունեցող հաստատություններ անհրաժեշտ կլինի հիմնել սահմանամերձ շրջաններում»[1]։

Վերոհիշյալ «Պատմական ակնարկը» նշում էր, որ «Ներքին գործերի մինիստրության բոլոր հետագա գրությունները, որոնք ստացվել են Կովկասյան իշխանության կողմից մինչև 1880-ական թվականների սկիզբը, իրենց ոճով և ուղղությամբ հիշեցնում էին 1864 թվականի գրության այդ նույն հեղինակին»[2]։

Եվ, իրոք, 1869 թ. ցարը հաստատում է պետական հատուկ խորհրդակցության որոշումը[3], որով նախատեսվում էր քաղաքական նկատառումներով արտասահմանի հայերին օտար երկրների ազդեցությունից շեղելու համար փակել Թեոդոսիայի Խալիպյան ուսումնարանը և նրա փոխարեն բացել հոգևոր դպրանոց, իսկ

1 Նույն տեղում, էջ 36։

2 Նույն տեղում։

3 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 880, ց. 5, գ. 369, էջ 2—3։

Օդեսայում պետության նյութական օժանդակությամբ բացել գիշերօթիկ դպրոց արտասահմանի հայերի ընդգրկումով, որտեղ դասավանդումը հայերեն էր լինելու (այն դեպքում, երբ ցարիզմն ամեն տեղ մտցնում էր ռուսերեն լեզվով դասավանդում)։ Նման դպրոց ցարական կառավարությունը ցանկանում էր բացել նաև Պոլսում։ Այս ձեռնարկումներից բան դուրս չեկավ, սակայն որոշման ընդունման փաստն իսկ շատ բան է ասում տվյալ ժամանակի ցարիզմի վարած քաղաքականության մասին։

Քաղաքական նմանօրինակ նկատառումների հետևանքով էր, որ ցարական կառավարությունը խիստ միջոցների չէր դիմում էջմիածնի նկատմամբ, երբ վերջինս հրաժարվում էր հայ և ռուս եկեղեցիների միավորման ծրագրից, չէր կատարում կառավարության ցուցումը՝ Սսի կաթողիկոսությունը և Պոլսի պատրիարքարանը լրիվ էջմիածնի իշխանությանը ենթարկելու մասին, կամ ձախողում էր Երուսաղեմի հայոց վանքը Ռուսաստանին վաճառելու նախագիծը։

Սակայն միագիծ չէր ցարիզմի վարած քաղաքականությունը հայերի նկատմամբ։ Կովկասյան իշխանությունները այլ կերպ էին մոտենում հարցին։ Մոտիկից շփվելով իրականության հետ, կոչված լինելով կենսագործելու ցարիզմի ընդհանուր ռուսացման քաղաքականությունը «այլազգիների» նկատմամբ, այդ իշխանությունը մեծ դժվարությամբ էր ենթարկվում կենտրոնի ցուցումներին և համեմատաբար հեռու կանգնած լինելով կառավարության հետապնդած արտաքին-քաղաքական ձգտումներից, գտնում էր, որ միջոցները հայերի նկատմամբ ոչ մի լավ բան չեն խոստանում պետությանը։ Ազգային դպրոցների նկատմամբ կիրառվող խոչընդոտները ծնունդ էին առնում հենց այս օղակում։ 1867 թ. վերականգնված Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունը սկզբից ևեթ վարեց ազգային դպրոցները դուրս մղելու կուրս։ Հոգաբարձությունը լայն աջակցություն էր գտնում փոխարքայի գլխավոր վարչության պետ, փորձված ու ազդեցիկ բյուրոկրատ բարոն Նիկոլայիի կողմից, որը երկրամասի ռուսացման մոլեռանդ պաշտպանն էր։

Ցարական բյուրոկրատիան չէր կարող անտարբերությամբ նայել, թե ինչպես տեղացի ժողովուրդները հոժարակամ միջոցներ էին հատկացնում ազգային դպրոցների համար։ Կովկասի ուսումնական հաստատությունների գլխավոր վերատեսուչ Նևերովը դեռևս 1860-ականների կեսերին իր զեկուցագրում դժգոհում էր,

որ «դրեթե բոլոր այն քաղաքներում, որտեղ արքունի ուսումնարաններ կան, հայերը և մահմեդականները, ոչ մի կոպեկ չհատկացնելով նրանց, պահում են իրենց սեփական ազգային դպրոցները, որոնց վրա, հատկապես հայերը, մեծ գումարներ են ծախսում»[1]:

Նվ վերատեսուչն առաջարկում էր դրա դիմաց արքունի դպրոցների հայ և մահմեդական կրոնի ուսուցիչների վարձը հավաքել տեղական համապատասխան հասարակություններից: Կովկասյան վարչությունը ցանկանում էր տիրանալ ազգային դպրոցներին, տնօրինել դրանց հատկացվող ժողովրդական միջոցները, իսկ հնեղեցուն թողնել միայն կրոնական դաստիրակության հսկողությունը: Բարոն Նիկոլային առիթը բաց չէր թողնում վարկաբեկելու հայկական դպրոցները, նա առաջիններից էր, որ սկսեց կենտրոնական կառավարությանը վախեցնել «ազգային սեպարատիզմի» խրտվիլակով: Նա հայտարարում էր, որ հայկական դպրոցները շատ քիչ են նպաստում ճշմարիտ կրթության տարածմանը, միաժամանակ կլանելով նշանակալի գումարներ: Իր հաշվետվության[2] մեջ Նիկոլային առաջարկում էր այդ դպրոցները ենթարկել ուսումնական գերատեսչության հսկողությանը, որով և զգալիորեն կպակասեն հայերի «սեպարատիստական ձգտումները»:

Միաժամանակ կովկասյան իշխանություններն սկսեցին մոտիկից հետաքրքրվել հայկական դպրոցների կառուցվածքով ու կազմով: Նրանց ամենից շատ հուզում էր այն հարցը, թե ինչու այդ դպրոցները հոգևոր են համարվում, բայց ունեն մեծ թվով աշակերտներ. իսկ եթե իրականում նրանք հոգևոր չեն, ապա ինչու չեն ենթարկվում ուսումնական գերատեսչությանը: Նման հարցադրումով բարոն Նիկոլային 1872 թ. փետրվարին դիմեց կաթողիկոսին[3]:

Որոշ ժամանակ անց, ձգտելով ավարտել կայսրության դպրոցական սիստեմի միակերպության ստեղծումը, Պետական խորհուրդը ցարի հաստատմանը ներկայացրեց կարծիք Կովկասում ուսումնական մասի վերափոխման մասին: 1873 թ. նոյեմբերի

---

1 «Доклад Его Императорскому Высочеству Наместнику Кавказскому Главного Инспектора учебных заведений Д. С. С. Неверова», стр. 29.

2 *Տե՛ս* «Отчет по главному управлению Наместника Кавказского...», Тифлис, 1873, стр. 277—280.

3 *Տե՛ս* ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 31, էջ 5—6:

22-ին ցարը հաստատեց նոր կանոնները, որով տեղական դպրոցական սիստեմը հավասարվում էր ընդհանուր կայսերականին։ Կանոնների 8-րդ կետի համաձայն կովկասյան երկրամասի բոլոր պետական, հասարակական, մասնավոր դպրոցները պետք է ենթարկվեին՝ Թիֆլիսի նահանգում՝ ժողովրդական ուսումնարանների դիրեկցիային, մյուս նահանգներում՝ վերատեսուչներին, իսկ այլադավան (այսինքն՝ ոչ ուղղափառ) եկեղեցական-ծխական դպրոցների նկատմամբ այդ նույն օրակները պետք է իրականացնեին հսկողություն։ Ընդ որում այդ բոլոր դպրոցների վրա տարածվում էին կայսրությունում գործող այն օրենքները, ըստ որոնց ռուսաց լեզուն պարտադիր էր, իսկ Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը պետք է դասավանդվեին այն դպրոցներում, որտեղ անցնում էին ընդհանուր պատմություն և աշխարհագրություն։

Ձգալով նախօրոք, որ հայ դպրոցի ինքնավարության դլխին ամպեր են կուտակվում, Գևորգ կաթողիկոսը որոշեց իր կողմից դիմել հակամիջոցների։ 1873 թ. կանոնների ընդունման հետ գրեթե միաժամանակ տեղի ունեցավ հայկական դպրոցների թեմական տեսչի պաշտոնի ստեղծումը։ Թեմական տեսչության անհրաժեշտությունը՝ ազգային դպրոցի ինքնավարությունը պահպանելու տեսակետից բացի, պետք էր նաև հենց այդ դպրոցի ներքին կարիքների համար։ Դպրոցների թիվը գնալով աճում էր, մեծանում էին նրանց պահանջները, զգացվում էր մերձավոր ղեկավարության կարիք։ Բացի այդ, հաճախակի էին դառնում հոգաբարձական և ուսուցչական մարմինների ընդհարումները ինչպես նյութական, այնպես էլ ուսումնական հարցերի շուրջը։ Պետք էր մի երրորդ օղակ, որը կկարգավորեր և ուղղություն կտար դպրոցի համար կենսականորեն անհրաժեշտ այդ երկու մարմինների գործունեությանը։

«Արարատ» ամսագրի 1873 թ. դեկտեմբերյան համարում տպագրվեցին թեմական տեսչության ստեղծման մասին կաթողիկոսական կարգադրությունը և հրահանգը։

Ըստ հրահանգի թեմական տեսուչը ստորադրվում էր առաջնորդին, ընտրվում նրա կողմից և հաստատվում կաթողիկոսի կոնդակով։ Նա պետք է ունենար առնվազն պետական միջնակարգ կամ հայկական թեմական դպրոցի կրթություն, կարող էր լինել նաև աշխարհիկ անձ։ Տեսչի շրջագայությունների ծախսը պետք է դույանար դպրոցների կամ վիճակի միջոցներից։ Թեմի հաջորդությունների քանակի համեմատ տեսուչը տեղերում ունենալու էր օգ-

նականներ։ Ազգային բոլոր դպրոցները, բացի թեմականներից, ենթակա էին թեմական տեսչին։ Թեմական տեսուչը պարտավոր էր շրջել թեմի դպրոցները, հաստատել և արձակել ուսուցիչներին, քննել և լուծել առօրյա հարցերն ու վեճերը, մշակել ուսման հարմար եղանակներ, պատրաստել դյուրըմբռնելի դասագրքեր, քննել իր օգնականների ու դպրոցների հաշիվները, հոգաբարձությունների մասյանները, գումարել մանկավարժական ժողովներ, տարեկան հաշվետվություն ներկայացնել թեմական առաջնորդին։

Հայ կրթական գործի լավագույն ներկայացուցիչներից շատերը՝ Երևանի թեմում՝ Պ. Պռոշյանը, Վրաստանի թեմում՝ Գևորգ Բարխուդարյանը, Ղ. Աղայանը, Հ. Տեր-Հովհաննիսյանը, Ղարաբաղում՝ Արիստակես վ. Սեդրակյանը, Հովհ. ք. Տեր-Գրիգորյանը այդ տարիներին ստանձնելով թեմական տեսչի ծանր ու շնորհակալ պաշտոնը, կարողացան զգալի ավանդ մուծել ազգային դպրոցի վերելքի գործում։ Հատկանշական է, որ այդ շրջանում թեմական տեսուչների մեծ մասը աշխարհիկ անձնավորություններ էին։

Թեմական տեսչության ստեղծումը զգալիորեն սրեց դրությունը և ստիպեց կովկասյան վարչությանը շտապ միջոցների դիմել 1873 թ. կանոնները հայկական դպրոցների վրա տարածելու համար։ Բարոն Նիկոլային 1874 թ. հունվարին դիմեց կաթողիկոսին և պահանջեց անմիջապես ընդունել կանոնները։ Միաժամանակ Նիկոլային տեղեկացրեց կենտրոնական կառավարությանը, որ հայ հոգևորականությունը սկսել է ավելացնել ազգային դպրոցների թիվը՝ «հետապնդելով կառավարական ամեն տեսակ հսկողությունից դրանք հեռու պահելու միտքը և դրանց տալով բացառապես հայկական բնույթ[1]» և զգուշացրեց, որ այժմ էլ կաթողիկոսը կաշխատի խույս տալ պետական օրենքի կատարումից։

Կովկասյան վարչությունը չէր սխալվում։ 1874 թ. հունվարի 26-ի իր պատասխան նամակում[2] Գևորգը պատճառաբանում էր, որ 1836 թ. «Պոլոժեննյեն» հայ հոգևորականությանը բացարձակ իրավունք է տվել կառավարելու դպրոցները և որ այդ կայսերահաստատ օրենքը դեռևս ուժի մեջ է։ Կաթողիկոսը գտնում էր, որ հայկական դպրոցները երբեք չեն շեղվել օրինականությունից և իր ստեղծած թեմական տեսուչներն իրենց հերթին կոչված են է՛լ

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. 1, էջ 26։

2 Նույն տեղում, էջ 33—37։

ավելի կարգավորելու դպրոցների կյանքը։ Նա գտնում էր, որ 1873 թ. կանոնների մեջ պարզորոշ չի նշված, թե պետական վերատեսուչները ինչ պարտավորություններ են կատարելու հայկական դպրոցների նկատմամբ, ինչ վերաբերմունք են ունենալու թեմական տեսուչների հանդեպ։ Կաթողիկոսը սա մեծ թերություն էր համարում և գտնում էր, որ դրանից կարող են անցանկալի թյուրիմացություններ ծագել, որի պատճառով էլ անհրնարին էր համարում ընդունել նոր կանոնները։

Գործը բավական լարված դրադրության բնույթ ստացավ և սպառնում էր վերածվել լուրջ կոնֆլիկտի։

1874 թ. հունիսի 1-ին կաթողիկոսը դիմեց փոխարքային և տարակուսանք հայտնեց ստեղծված իրադրության համար։ Նա բողոքում էր, որ փորձեր են արվում հայ եկեղեցուց խլելու նրա դարավոր իրավունքը, որ նախկինում հարգվել էր նույնիսկ ոչ քրիստոնյա նվաճողների կողմից։

Ի դեպ, 1873 թ. կանոնները չէին էլ դնում այլադավան եկեղեցական-ծխական դպրոցների ենթակայության փոփոխության հարցը, այլ միայն պետական հսկողություն էին սահմանում նրանց վրա։ Եվ քանի որ կանոններն իրոք որոշակի չէին սահմանում, թե կոնկրետ ինչում էր արտահայտվելու այդ հսկողությունը, ապա կովկասյան վարչությունը, յուրովի մեկնաբանություն տալով կանոններին, հայ հոգևորականությանը թողնում էր միայն կրոնի հսկողության պարտականությունը։

Խճճված իրավիճակից ելք չգտնելով և խուսափելով լարվածություն ստեղծելուց, փոխարքան դիմեց Պետերբուրգ և խնդրեց լուծել հարցը։ Ներքին գործերի մինիստրության օտար դավանանքների հոգևոր գործերի դեպարտամենտը մշակեց նոր ընդունելի կանոններ հայկական դպրոցների համար, որը ներկայացվեց ցարին և հաստատվեց նրա կողմից 1874 թ. հուլիսի 19-ին։

Այս հարցում որոշ դեր խաղաց նաև արտաստհմանի հայության և հատկապես պոլսահայերի մեջ սկսված այն հուզումը, որն առաջացել էր արևելահայ դպրոցները եկեղեցու իրավասությունից խլելու մասին տարածված լուրերի հետևանքով։ Պոլսի Ներսես պատրիարքը, տեղեկանալով ստեղծված վիճակի մասին, դիմել էր ռուսական դեսպան Իգնատևին և նրանից հավաստիացումներ ստացել, որ դպրոցները չեն խլվելու։ Այս մասին «Արևելյան մամուլը» հետագայում գրում էր. «8—10 տարի առաջ, Գեորգ կաթողիկոսի կենդանության, երբ Ռուսիո կառավարության դիտա-

վորությունն հայտնվեցավ ի մասին Հայոց վարժարանաց Կովկասիո, այնժամ Ներսես պատրիարք հանուն Թուրքիո Հայոց բողոքել գնաց առ ժեններալ Իկնաթիև, դեսպանն Ռուսիո, որ հերքեց. թե այդպիսի դիտավորություն բնավ չկա։ Բայց հետո ստույգ աղբյուրներե տեղեկացանք, թե Ներսես պատրիարքի այդ դիմումըն ունեցած է յուր բարձր ազդեցություն, զոր հոգելույս Պատրիարքն ևս կհաստատեր մեզ ուրախությամբ[1]»։

Կառավարությունն անտեսեց կովկասյան իշխանության մի շարք պահանջները, այդ թվում նաև փոխարքայի այն պնդումը, թե թեմական տեսչության ստեղծումը կաթողիկոսի կողմից անօրինական քայլ է։

1874 թ. հուլիսի 19-ի կանոնները սահմանում էին.

«1. Հայ-լուսավորչական հոգևորականության պարտականությունն է մնում, համաձայն հոդ. 975, մ. 1-ին, հատ. 11-րդ, եկեղեցական դպրոցների հիմնումը և նրանց տեսչությունը, ինչպես նաև հոգատարությունը ուսուցման ճիշտ ու հարմարավոր կարգի և ուսուցիչների ու աշակերտների միջև բարի բարքերի պահպանության վերաբերյալ։

2. Հայ հոգևորականության կողմից հիմնվող և ղեկավարվող հանրակրթական եկեղեցական-ծխական ուսումնարանների նկատմամբ ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների վրա պարտավորություն է դրվում, համաձայն Պետական խորհրդի 1873 թ. նոյեմբերի 22-ի բարձրագույն հաստատված կարծիքի, հսկել. ա) որպեսզի բոլոր ուսումնարաններում դասավանդվի ռուսաց լեզուն, իսկ այն ուսումնարաններում, որտեղ անցնում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, դասավանդվեն Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, և ռուսաց լեզվով, բ) որպեսզի այդ ուսումնարաններում դասավանդողները լինեն ռուսահպատակներ և ունենան անհրաժեշտ բարոյական հատկություններ։ Վերատեսուչներին իրավունք չի վերապահվում միջամտել ուսումնարանների տեսչական մասին և վերահսկել նրա վրա։

3. Հոգևորականներ պատրաստելու նշանակում ունեցող ուսումնարանները հնթակա չեն ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների հսկողությանը և մնում են հոգևոր իշխանության բացարձակ տեսչության ներքո։ Այս հաստատությունների ուսման

1 «Արևելյան մամուլ», 1886, № 5, էջ 204։

դասընթացի և ներքին կարգի կանոնները պետք է ներկայացվեն բարձրագույն կառավարության հաստատմանը»[1]:

Հայ դպրոցն ստացավ կառավարական առաջին կանոնները, որոնք առանձնապես չէին նեղում նրա ինքնավարության սկզբունքը:

Սակայն Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունը, որ կոչված էր ռուսական կրթական սիստեմի սկզբունքները տարածելու երկրամասում և բոլոր տեսակի դպրոցները ենթարկելու այդ սկզբունքներին, չէր կարող անտարբերությամբ ականատես լինել հայկական դպրոցի ինքնավար ընթացքին: Հոգաբարձությունը ատիթը բաց չէր թողնում վատաբանելու հայկական դպրոցները և խոչընդոտներ հարուցելու նրա առաջ: Յուրովի ընկալելով 1874 թ. կանոնները, Երևանի նահանգապետը հոգաբարձության թելադրանքով հոկտեմբերի 28-ի շրջաբերականով պատվիրում է գավառապետներին և ոստիկանությանը հայկական դպրոցների «ուսուցիչներից ստորագրություն պահանջել, թե սրանք՝ կամ երկու ամսվա (!— Վ. Ե.) ընթացքում պետք է Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունից ուսուցչական վկայական ձեռք բերեն, կամ հակառակ դեպքում պարտավոր են հրաժարվել իրենց պաշտոնը կատարելուց, ապա թե ոչ պատասխանատու են օրենքի առաջ»[2]: Կաթողիկոսի բողոքից հետո փոխարքան չեղյալ հայտարարեց այդ կարգադրությունը: Նույն Երևանի նահանգապետը բարձրից եկող հրահանգի համաձայն 1875 թ. կարգադրեց փակել Ալեքսանդրապոլի մասնավոր դպրոցները, որպես թույլտվություն չունեցողներ. ոգևորված ոստիկանությունը դրանց հետ միասին փակում էր նաև եկեղեցական-ծխական դպրոցները:

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Նևերովին ամենից շատ մտահոգում էր տարրականից բարձր մակարդակ ունեցող հայկական դպրոցների առկայությունը, որտեղ դասավանդվում էին պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆրանսերեն: Նա ցանկանում էր հսկողություն սահմանել այնտեղ ավանդվող բոլոր առարկաների վրա, ուսուցիչների նշանակման հարցը պայմանավորել իր տեսուչների համաձայնությամբ: Գրտնվելով Պետերբուրգում, Նևերովը այս և մի շարք այլ հարցերի պարզաբանման համար դիմեց ներքին գործերի մինիստրությանը,

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 147, գ. 20, բաժ. 2, էջ 5:

2 «Մշակ», 1905, № 126:

որը 1875 թ. նոյեմբերի 25-ին տվեց իր բացատրությունները[1] հոգուտ հայկական դպրոցների։

Չբավարարվելով սրանով, այս անգամ արդեն փոխարքայի գլխավոր վարչությունը դիմեց ներքին գործերի մինիստրին նման հարցապնդումով[2]։ Վարչությունը ցանկանում էր 1874 թ. կանոնների երկրորդ կետում հիշատակված «հանրակրթական եկեղեցական-ծխական ուսումնարաններ» անվանմանը վերագրել միայն տարրական դպրոցի իմաստ։ Որպես օրինակ բերվում էր Ագուլիսի դպրոցը, որը ուներ 9 ուսուցիչ և տարրականից բարձր ծրագիր. վարչությունը գտնում էր, որ նման դպրոցները պետք է դուրս գան էջմիածնի ենթակայությունից։ Մինիստրի տեղակալ Լոբանովը 1876 թ. ապրիլի 29-ի տված բացատրություններով պարզաբանեց, որ 1874 թ. կանոններով նախատեսված է հայկական դպրոցներում թույլատրել պատմության և աշխարհագրության դասավանդումը, մի բան, որն ինքնըստինքյան դուրս է գալիս տարրականի ծրագրից։ «Օրենքում (խոսքը «Պոլոժենյեի» մասին է— Վ. Ե.),— գրում էր Լոբանովը,— հայ հոգևորականության կողմից ղեկավարվող ուսումնարանները չեն կոչվում եկեղեցական-ծխական, այլ «վանքերի և եկեղեցիների մոտ գտնված դպրոցներ», 1874 թ. հուլիսի 19-ի Բարձրագույն կարգադրության մեջ դրանք կոչված են՝ § 1-ում՝ եկեղեցական, և § 2-ում՝ եկեղեցական-ծխական և պահվում են այդ եկեղեցիների միջոցներով կամ նպաստ են ստանում եկեղեցական եկամուտներից, բայց դրա հետ մեկտեղ, ի տարբերություն ինչպես տարրական-ծխական դպրոցների, այնպես էլ հատուկ հոգևոր ուսումնարանների, կոչված են «հանրակրթական»[3]։

Թվում է, որ իրականությանը համապատասխանող սրանից ավելի հաջող բացատրություն հնարավոր չէր տալ։ Այնուհետև Լոբանովը շարունակում էր. «Այս պատճառով, առաջնորդվելով 1874 թ. հուլիսի 19-ի Բարձրագույն կարգադրության ուղղակի իմաստով, Վեհափառ Պատրիարք Կաթողիկոսը իրավունք ունի, առանց ուսումնական շրջանի հոգաբարձուի թույլտվությունը հայցելու, բացել ծխական ուսումնարանների համեմատությամբ ավելի լայն ու լրիվ դասընթացով ուսումնական հաստատություններ, այն պայմանով, որ այդ ուսումնարաններում ռուսաց լեզվի,

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 272, էջ 14—19։

2 Տե՛ս նույն տեղում, ց. 140, գ. 53, մ. 1, էջ 108—114։

3 Նույն տեղում, էջ 125—126։

Ռուսաստանի պատմության և աշխարհագրության դասավանդումը լինի ժողովրդական ուսումնարանների վերատեսուչների հսկողության տակ»[1] (ընդգծումը իմն է —Վ. Ե.)։

Հայ հոգևորականությունը պարտավոր էր միայն ուսումնական վարչության տեղյակ պահել նոր բացվող դպրոցների և նշանակվող ուսուցիչների մասին և հայտնել հոգաբարձուի պահանջած տեղեկությունները, իսկ վերատեսուչները, չխառնվելով ուսուցիչների նշանակման հարցում, իրավունք ունեին միայն պահանջելու առանձին անբարեհույս և վատ վարք ունեցող ուսուցիչների հեռացումը։

Ասված էր պարզ ու որոշակի։ Դրանից հետո կովկասյան իշխանությունները որոշ ժամանակ փորձ չարեցին այլևս անդրադառնալ այդ հարցերին։

* * *

1870-ական թվականներին արևելահայ կրթական ասպարեզում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից մեկը էջմիածնի Գևորգյան ճեմարանի հիմնումն էր։ Հոգևորականության կրթական ցածր մակարդակը և ազգային դպրոցների որակյալ ուսուցիչների մեծ կարիքը պահանջում էին էջմիածնից բարելավելու ավելի բարձր կրթության դրվածքը։

Դեռևս 1865 թ. Ս. Շահազիզը գրում էր.

«Ուսում և ուսում մեզ հարկավոր է,
Ուսումը լինի թող մեզ բազավոր,
. . . . . .
Ակադեմիա Մայր էջմիածնում»[2]։

Այս բանը լավ էր ըմբռնել Գևորգ կաթողիկոսը, որը հենց սկզբից ձեռնամուխ էր եղել ժառանգավորաց դպրոցի բարեկարգմանը։ 1869 թ. նա սկսեց դպրոցի նոր, մեծ շենքի շինարարությունը։ Գևորգը մտադրվել էր ժառանգավորացը դարձնել լիարժեք միջնակարգ դպրոց։ Ապագա դպրոցի տիպը և նպատակները պարզելու համար կաթողիկոսը 1872 թ. ամռանը խորհրդակցության է հրավիրում Վահրամ Մանկունի, Գևորգ Սուրենյանց, Վահան Բաստամյան և Արիստակես Սեդրակյան վարդապետներին, որոնք գտնում են, որ ավելի նպատակահարմար կլինի ստեղծել

1 Նույն տեղում, էջ 126։

2 Ս. Շահազիզ, Երկեր, Երևան, 1961, էջ 311։

հոգևոր ճեմարան, քանի որ դա հնարավորություն կտա ավելի քիչ ծախսերով և կարճ ժամանակում պատրաստել ցանկալի կրթության տեր մարդիկ, եթե նրանում ընդունվեն արդեն որոշ պատրաստություն ունեցող թեմական դպրոցավարտ աշակերտներ: Գևորգը համաձայնություն է տալիս այս առաջարկին և պատվիրում կազմել ապագա ճեմարանի ծրագիրը: Նա մի քանի բարձրաստիճան հոգևորականներ է գործուղում ռուսահայ թեմերը՝ նոր ուսումնարանի համար նյութական միջոցներ ժողովելու և ընդունակ աշակերտներ ընտրելու[1]:

1874 թ. տպագրվում է ճեմարանի կանոնադրությունը, որի համաձայն այն պիտի պատրաստեր հոգևորականներ և ուսուցիչներ ազգային դպրոցների համար:

Հետաքրքիր են կանոնադրության հետևյալ տողերը. «Ի ճեմարանի ս. էջմիածնի ընդունին Հայկազն պատանիք ամենայն վիճակաց Եկեղեցվո Հայաստաննեայց, որք պարտին լինիլ որբք կամ ի դասակարգն աղքատ ծնողաց, եվ ամենեքեան պահպանին և ուսանին ձրիապես»[2]: Ընդունվողների տարիքը պետք է լիներ 14—16-ի սահմաններում, ուսման տևողությունը՝ 6 տարի, 6 դասարանով:

Ճեմարանի ստեղծման հարցը կայսեր հանձնարարությամբ քննության առարկա է դառնում Պետերբուրգի Կովկասյան Կոմիտեում, որտեղ այն արժանանում է ընդհանուր հավանության: Ճեմարանի ստեղծումը նախատեսվում էր դեռևս 1836 թ. «Պոլոժենյեով», իսկ այժմ ցարական կառավարությունը նպատակահարմար էր գտնում ճեմարանի հիմնումը: Նույնիսկ արտասահմանի հայերին սիրաշահելու համար նախատեսվում էր, որ ճեմարանում դասավանդվող ռուսաց լեզուն, Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը պարտադիր կլինեն միայն ռուսահպատակների համար: Արտաքին գործերի մինիստրությանը առաջարկվում էր իր արտասահմանյան ներկայացուցիչների միջոցով նպաստել ճեմարանի համար այնտեղ հեղինակություն ստեղծելուն:

Կոմիտեն մի շարք փոփոխություններ մտցրեց ճեմարանի կանոնադրության մեջ, և 1874 թ. հոկտեմբերի 1-ին այն հաստատվեց կայսեր կողմից: Կանոնադրության առաջին կետով՝ «Էջմիածնի հայկական հոգևոր ճեմարանը բարձրագույն հոգևոր-ու-

1 Տե՛ս ԳԱՔ, Ա. Սեդրակյանի արխիվ, թղթ. 1, բաժ. 1, վավ. 4, էջ 185—198:
2 «Արարատ», 1874, № 7, էջ 264:

սումնական հիմնարկություն է, որի նպատակն է՝ ընդհանուր և աստվածաբանական կրթություն տալ հայ եկեղեցու լուսավորյալ ծառայության համար և պատրաստել ուսուցիչներ հայ-լուսավորչական դավանանքի հոգևոր-ուսումնական հաստատությունների համար»[1]: Ճեմարանի գլխավոր տնօրենը կաթողիկոսն էր, դասավանդումը կատարվելու էր հայերեն լեզվով, նախատեսվում էր, որ ճեմարանն ունենալու է ներկայացված 6-ի փոխարեն 9 տարվա ուսման տևողություն (սեմինարական 6 դասարան և բարձրագույն ճեմարանական՝ երեք դասարան՝ լսարան): Դասավանդվելու էր ընդամենը 22 առարկա, որից 9-ը կրոնական (մյուս առարկաներն էին՝ մանկավարժություն, փիլիսոփայություն (հոգեբանություն, տրամաբանություն և փիլիսոփայության պատմություն), հայոց պատմություն և աշխարհագրություն, ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, տիեզերագրություն, բնական պատմություն, հայոց լեզու և գրականության պատմություն, ռուսաց լեզու, հին և նոր լեզուներ (լատիներեն, հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն), եբրայերեն և աստվածաշնչային հերմենևտիկա, գծագրություն և նկարչություն (եկեղեցական), եկեղեցական երգեցողություն):

Հատկանշական է, որ կաթողիկոսի ներկայացրած նախագծից (որը հրատարակվել էր «Արարատում») հանվել էր այն դարձվածքը, թե ճեմարան պետք է ընդունվեն որբ և աղքատ ծնողների երեխաները, և պարզապես նշված էր, որ ընդունվել կարող են հայ-լուսավորչական դավանանքին պատկանող բոլոր դասակացողները՝ անկախ դասից և հպատակությունից:

Հաստատելով կանոնադրությունը, Կովկասյան կոմիտեն հարմար գտավ, որ ճեմարանի լրիվ դասընթացը՝ 9 տարի, անցնելուց հետո, կաթողիկոսը, հաշվի առնելով անցած ժամանակաշրջանի փորձն ու առաջացած խնդիրները, կազմի և հաստատման ներկայացնի նոր կանոնադրության նախագիծ:

1874 թ. աշնանը Ժառանգավորաց դպրոցի համար կառուցված նոր շենքում էջմիածնի ճեմարանը սկսեց իր գործունեությունը: Արևելահայ իրականության մեջ ծնունդ առավ կրթական մի խոշոր կենտրոն, որը շուտով հաղթահարեց նախնական շրջանի դժվարությունները և 1880-ական թվականների սկզբներին արդեն ունեցավ նախատեսված դասարանների լրիվ կազմն ու

1 Մատեն., Մատենաս արբեպիսկոպոսի ֆոնդ, թղթ. 168, վավ. 1:

դարձավ հայկական առաջնակարգ կրթական հաստատությունը։ Գնալով աճեց Ճեմարանի նշանակությունը նախ և առաջ որպես հայագիտական կենտրոնի, որի պատրաստած կադրերը հետագայում նշանավոր դեր խաղացին հայ լեզվաբանության, պատմագիտության և հայագիտության մյուս բնագավառներում։

Գևորգ կաթողիկոսը շարունակեց իր գործունեությունը ազգային դպրոցների զարգացման ուղղությամբ։ Գնալով, թե որքան կարևոր է ծխական քահանաների կրթական մակարդակի բարձրացումը ժողովրդի ընդհանուր լուսավորության բարձրացման համար, կաթողիկոսը կարգադրեց, որ քահանա ձեռնադրվեն միայն որոշակի դրադիտություն ունեցող մարդիկ։ Սակայն նա մեծ մասամբ շրջապատված էր շատ ցածր մակարդակ ունեցող հոգևորականներով և նրա ձեռնարկումներից ու հրահանգներից շատերը կիսակատար էին մնում։

Այնուամենայնիվ կաթողիկոսին հաջողվեց 1872—1873 թթ. կարգավորել հայ եկեղեցական նրաժշտության մեջ միօրինակություն մտցնելու և ձայնագրության հարցը։ Ջայնագրագետ Նիկողայոս Թաշճյանը էջմիածնում հավաքեց տարբեր-թեմերից եկած ձայնեղ երիտասարդների և կազմեց երգեցիկ խումբ։ 9 ամիս տևած պարապմունքներից հետո խմբի անդամները ցրվեցին տեղերը և դպրոցներում իրենց սովորածի օրինակով կարգի գցեցին երգեցողության դասավանդումը, որը դրանից հետո բավական հաստատուն տեղ գրավեց դպրոցի կյանքում։ Հետագայում այդ գործին նպաստեցին նաև էջմիածնում հրատարակված ձայնագրությունները և եղնիկ քահանա Երզնկյանի ձայնագրության դասագրքերը։

1874 թ. կանոնները և անցած մի քանի տարիների փորձը թելադրեցին էջմիածնին թարմացնել ու բարելավել 1868 թ. ծխական դպրոցների կանոնները։ 1876 թ. հոկտեմբերին «Արարատ» ամսագիրը հրատարակեց «Կանոնք ծխական դպրոցաց», թեև սրբրանք էապես չէին տարբերվում նախորդ կանոններից։

Ծխական դպրոցն այժմ պետք է ունենար երկու դասատուն, յուրաքանչյուրը երկու տարվա տևողությամբ։ Դասավանդվող առարկաների վրա ավելացվել էին պատմություն, աշխարհագրություն, սկզբունք բնագիտության, երգեցողություն, գծագրություն։ Ներկա կանոններում ակնհայտորեն խուսր էր տրվել արտացոլել ազգային դպրոցների՝ իրականում գոյություն ունեցող տիպային բաժանումը և առարկաների ընդգրկման հարցը թողնվել էր անո-

րոշ վիճակում: Սահմանվել էր նաև, որ յուրաքանչյուր ուսուցչին 60-ից ավելի աշակերտ հանձնելու դեպքում պետք է բացել երկրորդ զուգահեռ դասարան, մտցվում էր գնահատականների 1—5 թվանշանային սիստեմ, արձանագրվել էր, որ կարելի է աշակերտներին մինչև 40 օրվա ժամկետով արձակուրդ տալ՝ նայած հանգամանքներին: Կանոնների մեջ տեղ էր գրավել և թեմական տեսուչը, որի հիմնական պարտականությունների վրա ավելացել էր նաև դպրոցները գրադարաններով ու անհրաժեշտ պիտույքներով ապահովելու հոգսը:

Սակայն, ինչպես 1868 թ. կանոնների մեջ, այս անգամ ևս մի շարք հարցեր որոշակի չէին պարզաբանված. դպրոցների մեծ մասի, և հատկապես գյուղական վայրերում եղածների, անհատատ ու երերուն վիճակը հնարավորություն չէր տալիս կանոնադրական սահմանում տալ մի շարք հարցերի՝ աշակերտների ընդունելության ժամկետը, ուսուցիչների ռոճիկների մինիմումը, դասաժամերի տևողությունը, կայուն ամառային արձակուրդները, նյութական միջոցները:

Նոր կանոններում նշվում էր նաև, որ բացի հոգաբարձությունից, պետք է առաջադրվի մի քահանա կամ սարկավագ, որն իր հերթին մշտապես կհետևի դպրոցի կյանքին: Սա պարզապես ձևական մի քայլ էր, որ նախատեսված էր իշխանություններին ցույց տալու, թե հոգևոր վարչությունը մշտարթուն հսկողներ ունի դպրոցների վրա. հետագայում էլ դպրոցների հիմնական տնօրենները մնացին ընտրովի հոգաբարձական մարմինները:

1876 թ. կանոնները նախատեսված էին չորս տարվա փորձի համար և ենթակա էին հաստատման կամ փոփոխությունների: Հետագա տարիներին, մինչև 1886 թ., այլևս հնարավոր չեղավ դպրոցական նոր կանոնադրություն մշակել:

* * *

Հայ նոր դպրոցը, եթե ցանկանում էր իրոք նոր լինել և կատարել իր առջև դրված խնդիրները, պետք է մշակեր ուրույն ազգային մանկավարժական միտք, որը հենվելով այդ դպրոցի առաջավոր ավանդների վրա, մղվելով դարաշրջանի կոնկրետ իրավիճակից, կկարողանար յուրացնել և կիրառել նոր մանկավարժության սկզբունքները: Հայ կրթական գործի նախորդ տասնամյակներն անպտուղ չէին մանկավարժության ասպարեզում. Ալամդարյանի, Թաղիադյանի, Աբովյանի, Նազարյանցի, Շանշյանի, Նալբանդյանի բեղմնավոր գործունեությունը, ազգային լուսավո-

րության խնդիրներին նվիրված նրանց մեծարժեք ստեղծագործությունը ամուր հիմք էին ստեղծել, որի վրա նոր պայմաններում պետք է ծլարձակեր ազգային մանկավարժական միտքը, ավելի մոտիկից կապվեր դպրոցի առօրեական խնդիրների հետ։ Այդ օրերին «Մշակը» գրում էր. «Մենք հասկացանք մեր դաստիրակության թերությունները, և ամենքս սկսեցինք (գոնե այդպես ենք կարծում) մանկավարժությամբ պարապել»[1]։

Մանկավարժական գրականության ստեղծման մեջ մեծ դեր խաղաց արևելահայ մանկավարժական մամուլի երևան գալը, որը նաև խոշոր իրադարձություն էր դպրոցական կյանքում։

Դեռ 1868 թ. հրատարակվող «Արարատ» ամսագիրը իր էջերում զգալի տեղ էր հատկացնում նաև դպրոցական-մանկավարժական հարցերին, իրենց ծրագրային հոդվածներով երբեմն հանդես էին գալիս աչքի ընկնող մանկավարժներ։ Լինելով հայ եկեղեցու պաշտոնական օրգանը, «Արարատը» հրատարակում էր դպրոցներին վերաբերող կանոնադրություններն ու ծրագրերը, պարզաբանում դրանց իմաստը։ Սակայն «Արարատը» դեռևս լրիվ մանկավարժական մամուլի օրգան չէր, այն կրում էր պաշտոնական էջմիածնի կնիքը և դպրոցին նվիրված նյութերի մեծ մասը շաղախված էին կրոնա-բարոյական ոգով։

Իր բնույթով «Արարատից» քիչ էր տարբերվում աչքի ընկնող եկեղեցական-կրթական գործիչ Խորեն Ստեփաննեի (Ստեփաննոս Ստեփանյան) կողմից դեռևս 1865 թ. Թիֆլիսում հրատարակվող «Հայկական աշխարհ» պարբերականը։ Խորեն Ստեփաննեն նպատակ էր դրել իր պարբերականը ծառայեցնել «ազգային կրթությանը և լուսավորությանը»։ 1874 թ., երբ «Հայկական աշխարհը» սկսեց վերահրատարակվել Շուշում, խմբագիրը հարմար դատեց ավելի ուժեղացնել նրա մանկավարժական թեքումը, որը սակայն կրում էր շեշտված կրոնական ուղղություն։ Խ. Ստեփաննեն մեծ նշանակություն էր տալիս կրոնական բարոյախոսությանը, տպագրում էր խրատական հոդվածներ, քարոզներ, ջանում էր հայ հասարակության մեջ տարածել հոգևոր ընթերցասիրությունը, հուսալով դրանով կենդանացնել ժողովրդի մարող կրոնական բարեպաշտությունը։ Նա գտնում էր, որ «Մեր ազգի բարոյական փըրկությունը, եթե հնարավոր է, ուսումնարանով և եկեղեցիով պիտի հասնե» և, դյուղացու թշվառության պատճառը անգրագիտությունը համարելով, ավելացնում էր. «Եթե մենք կամենում ենք ազգի բարոյական կյանքը կործանման վտանգից փրկել, մեր բոլոր ու-

1 «Մշակ», 1872, № 1։

ժերը կրթության տալու ենք»[2]։ «Հայկական աշխարհը» միաժամանակ զգալի դեր խաղաց հայ նոր աշխարհաբար լեզվի մշակման ուղղությամբ, թարգմանաբար տպագրեց ու հայ հասարակությանը ծանոթացրեց Հյուգոյի, Շեքսպիրի, Մոլիերի, Գյոթեի, Շիլլերի երկերին։ «Հայկական աշխարհը» նրա խմբագրի աշխատավայրերի տեղափոխությունների կապակցությամբ հրատարակվեց Թիֆլիսում, ապա Շուշում, Գանձակում, դարձյալ Թիֆլիսում և Բաքվում, որտեղ 1879 թ. դադարեցրեց իր գոյությունը։

Սակայն անհանգիստ ու եռանդուն բնավորության տեր Ստեփաննեն որոշ ժամանակ անց ձեռնամուխ եղավ մի նոր մանկավարժական պարբերականի հրատարակությանը. 1884 թ. մարտին Թիֆլիսում լույս տեսավ «Մանկավարժանոց» ամսագիրը։ Արդեն եվրոպական կրթություն ստացած խմբագիրը այս անգամ ավելի արմատական հարցեր էր բարձրացնում, թեև նրա մտայնության կրոնական երանգը չէր փոխվել։ Այս պարբերականում ևս, դրժբախտաբար, իշխում էր խրատական-վերացական ոգին, հոդվածների մեծագույն մասը գրվում կամ փոխադրվում էին խմբագրի կողմից. որքան որ Ստեփաննեն եռանդուն էր, այնքան էլ ինքնագլուխ ու ինքնապաստան էր և չէր հանդուրժում այլ մանկավարժների կարծիքների առկայությունը իր ամսագրում։ «Մանկավարժանոցը» մինչև փակվելը՝ 1887 թ., այդպես էլ չկարողացավ դուրս գալ մի անձնավորության ցանկությունների շրջանակներից ու հասարակական լայն հնչեղություն ձեռք բերել, չկարողացավ գործնական կապ ստեղծել իրական դպրոցի հետ։ Ամսագրի տպաքանակը երբեք չանցավ 200-ից, որի միայն 50 օրինակն էր բաժնեգրված. 100 օրինակ խմբագիրը առանց վարձի ուղարկում էր դպրոցներին։

Որոշ հետաքրքրություն է ներկայացնում Թեոդոսիայում 1873—74 թթ. Գրիգոր Դեոլվենյանի հրատարակած պատկերազարդ «Դաստիարակ» ամսագիրը։ Այստեղ տպագրվում էին զրույցներ գիտության նորություններից, աշխարհագրությունից, պատմությունից, բնագիտությունից, հանապարհորդական նկարագրություններ և այլն։ Չնայած իր խոստումնալից անվանը «Դաստիարակը» հեռու էր կանգնած մանկավարժական խնդիրներից և ավելի շատ կրում էր հետաքրքիր ընթերցարանի բնույթ։ Պատահական չէ, որ առաջին համարում խմբագիրը հայտարարում էր, որ իր պարբերականը չի զբաղվելու քաղաքական ու կրոնական խնդիրներով և ցանկանում է դաստիարակել «ազգն առհասարակ»։

2 «Հայկական աշխարհ», 1874, № 1։

Հիշատակված պարբերականների համեմատությամբ էջմիածնի Գայանյան վանքի վանահայր Վահան վ. Բաստամյանի 1874—76 թթ. հրատարակած «Դպրոց» ամսագիրը առաջընթաց քայլ էր։ Թեև Բաստամյանը ևս միայնակ էր հրատարակում այն, սակայն «Դպրոցը» շատ ավելի մոտ էր կանգնած կյանքին, արձագանքում էր ազգային կրթության հրատապ հարցերին, ջանքեր էր գործադրում մանկավարժական գրականության ստեղծմանը մասնակից դարձնելու կարող ուժերին։ «Միությունը հզոր զորություն է, և այդ զորությունը, այդ ուժը ավելի հարկավոր է, գուցե, ազգային մտավոր զարգացման, ազգային լուսավորության գործի համար։ ...Ազգային դպրոցի շուրջը պիտի ժողովվի ազգի բարեմիտների բոլոր գործունեությունը»[1],— գրում էր «Դպրոցը»։

Ընդհանրապես դեմ չլինելով դպրոցի նկատմամբ եկեղեցու ունեցած իշխանությանը, Բաստամյանն իր ամսագրում քննադատում էր հետամնաց ու անգործունյա հոգևորականությանը, պահանջում էր մեծացնել բնագիտական առարկաների տեղը դպրոցում, գործնական դիտելիքներ տալ սովորողներին։ «Դպրոցը», որը փաստորեն ռուսահայերի առաջին մասնագիտական մանկավարժական ամսագիրն էր, նյութական կարիքի պատճառով կարողացավ գոյությունը պահպանել հազիվ երկու տարի։

1878 թ. Վրաստանի թեմական տեսուչ Հակոբ Տեր-Հովհաննիսյանի խմբագրությամբ Թիֆլիսում սկսեց լույս տեսնել «Մանկավարժական թերթ» ամսագիրը։ Այժմ պայմաններն ավելի բարենպաստ էին, պարբերականը չէր ծանրացել միայն խմբագրի ուսերին, այն ավելի լայն տարածում էր գտնում (տպաքանակն էր 350 օրինակ)։ Մանկավարժական գրականության համեմատական աշխուժացումը, դպրոցական գործի ծավալումը իրավունք էին տալիս խմբագրին ամսագրի առաջին համարում հայտարարելու. «Եվրոպայում կրթված հայ մանկավարժը թող ձեռք մեկնե մեր թերթի միջնորդությամբ յուր ասիացի եղբորը, թող առաջինը պատմե վերջինիս, հաղորդե նորան, թե ի՞նչ կա լուսավորյալ երկրներում, ի՞նչ է կատարվում մանկավարժական աշխարհում, պարզե նորան ուսման և դաստիարակության հիմունքները և այլն, և այլն, իսկ վերջինս նկարագրե առաջնույն յուր փորձառությունից, թե ի՞նչ առանձին հատկություններ ունի ազգային ուսումնարանը, ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհով այս կամ այն մանկավարժական գաղափարը կարելի է իրագործել, հարմարեցնել մեր

1 «Դպրոց», 1874, № 1, էջ 13։

կյանքի մեջ համեմատ կենսական, պատմական, ազգային և տեղական հանգամանքներին»[2]:

Թեև «Մանկավարժական թերթը» գոյություն ունեցավ ընդամենը մեկ տարի, սակայն նա կարողացավ զգալիորեն կատարել իր առջև դրված խնդիրները. ամսագիրը բավական աշխույժ բնույթ էր կրում, «Եվրոպայում կրթված հայ մանկավարժը»՝ Ա. Բահաթըրյանը, Ս. Մանդինյանը, Սոֆյա Բաբայանը և «ասիացի» մի շարք դպրոցական գործիչներ իրոք իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին ամսագրին:

Է՛լ ավելի նպատակային և աշխույժ գործունեություն ծավալեց հաջորդ պարբերականը՝ «Վարժարանը», որը սկսեց լույս տեսնել 1882 թ. օգոստոսից, Թիֆլիսի Գայանյան դպրոցի տեսուչ Ն. Խոսրովյանի խմբագրությամբ: «Վարժարանը» նույնպես կարճ կյանք ունեցավ, տպագրվեց ընդհատումներով և նյութական պայմաններից ստիպված 1884 թ. դադարեց լույս տեսնելուց: Սակայն այդ ժամանակաշրջանն էլ բավական էր, որ նա աչքի ընկնող տեղ գրավեր հայ մանկավարժական մամուլի պատմության մեջ: Ժամանակի գրեթե բոլոր նշանավոր մանկավարժներն արդեն աշխատակցում էին «Վարժարանին», աշխույժ բանավիճում: Նախկին պարբերականների համեմատ, վերջինս ավելի լայն ուշադրության էր արժանանում ուսուցչության շրջանում:

1880—83 թթ. Երևանում լույս տեսած Վ. Պապաջանյանի «Պսակ» լրագիրը ուներ նաև մանկավարժական թևքում, թեև թերթը ավելի շատ զբաղվում էր առօրյա քաղաքական-հասարակական հարցերի լուսաբանմամբ: «Պսակում» հրատարակվող դրպրոցներին վերաբերվող հոդվածներն ու նյութերը մեծ մասամբ լուրերի բնույթ էին կրում և վեր չէին հանում մանկավարժական լուրջ խնդիրներ:

Մանկավարժական մամուլի պատմության մեջ հիշատակվում է 1892 թ. Մոսկվայում լույս տեսած «Մանկավարժական դրադարան» տարեգիրքը, որը կրթական հարցերին նվիրված մի ժողովածու էր և դժբախտաբար չշարունակվեց:

Ուշագրավ է նաև, որ ազգային դպրոցի վերելքի շրջանում՝ 1883 թ. Ծնունդ առավ արևելահայ առաջին մանկական ամսագիրը՝ «Աղբյուրը» (խմբագիր-հրատարակիչ Տ. Նազարյան), որին վիճակված էր երկար կյանք ունենալու և դաստիարակելու հայ մանուկների մի քանի սերունդներ: «Աղբյուրը» հատուկ բաժնում հաճախ անդրադառնում էր նաև մանկավարժական հարցերին:

2 «Մանկավարժական թերթ», 1878, № 1:

Ազգային դպրոցների և մանկավարժության հարցերին աշխուժորեն անդրադառնում էին ժամանակի հայ պարբերական մամուլի մյուս օրգանները ևս։

Արևելահայ մանկավարժական մամուլին թուրքիկ ծանոթությունն իսկ ցույց է տալիս, որ մեկ-մեկուկես տասնամյակի ընթացքում այն կարողացավ բավական կատարելագործվել, վերացական-խրատական ոգին փոխարինել դպրոցներին հուզող կոնկրետ խնդիրներով։ Այդ մամուլը հաճախ մեղադրվում էր կյանքից կտրվելու մեջ, նկատելի էր կոնկրետ քննադատության բացակայությունը։ Սակայն սրանում ոչ այնքան մեղավոր էր մամուլը, որքան կյանքի հետամնացությունը։ Շատ դեպքերում հոդվածագիրները քննադատական որևէ խոսք ասելիս, կեղծանունով էին ստորագրում, խույս էին տալիս գոյություն ունեցող բացասական երևույթները իսկական անուններով կոչել, որովհետև գավառներում տիրող աղայական դասը, զանազան խմբակցությունները պատրաստ էին անխնա վրեժ լուծել հանդուգն հոդվածագիրներից։

Պատահում էր, որ մանկավարժական մամուլը մեղադրվում էր նաև ոչ ինքնուրույն, թարգմանական նյութերի տպագրության համար։ Ընդհանրապես այդ մամուլի բոլոր օրգաններն էլ մեծ տեղ էին հատկացնում եվրոպական մանկավարժությանը, տպագրում էին Ժան Ժակ Ռուսսոյի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Ֆրեոբելի, Կոմենսկու կյանքն ու գործը լուսաբանող հոդվածներ, ամեն առիթով օրինակ էին բերում եվրոպական դպրոցներն ու դպրոցական սիստեմը։ Այս հարցում մեղադրանքը նույնպես օբեկտիվ չէր։ Միայն հայ մամուլը չէր, որ թարգմանական նյութերի էր դիմում· ռուսական մանկավարժական մամուլը ևս լի էր գերմանական և ընդհանրապես եվրոպական մանկավարժների թարգմանություններով։ Իսկ գերմանական մանկավարժության նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը պատահական չէր։ Նախ, գերմանական մանկավարժական միտքը խոշոր նվաճումներ էր ձեռք բերել, իսկ հայ մասնագետ մանկավարժների մի զգալի մասը կրթություն էր ստացել գերմանական համալսարաններում։ Բացի այդ, ֆրանս-պրուսական պատերազմում Գերմանիայի տարած հաղթանակը և ընդհանուր ճանաչում գտած այն միտքը, թե պատերազմում հաղթել է գերմանական ժողովրդական ուսուցիչը, անհայտ չէր հայ գործիչներին և նրանց աչքում մեծացնում էր գերմանական կրթական սիստեմի հմայքը։

1860-ական թվականներից համեմատաբար նպաստավոր պայմաններ էին ստեղծվում մանկավարժների պրակտիկ ու մը-

տավոր գործունեության համար։ Ասպարեզ մտած մի խումբ եռանդուն կրթական գործիչներ, լինելով միևնույն սերնդի մարդիկ, ըմբռնելով ժամանակի հրատապ խնդիրները, անդուլ պայքար սկսեցին ազգային դպրոցի բարենորոգման համար։ Չնայած ժամանակի օտարամուտ մանկավարժական մտքի հզոր ազդեցությանը, հայ մանկավարժությունը խոսեց շեշտված ազգային առանձնահատկությունների սեփական ձայնով, չդավաճանեց իր մեծ նախորդների սկզբունքներին։

Այդ սկզբունքները նոր սերնդին փոխանցելու գործում ղգալի ավանդ մուծեցին Պ. Շանշյանը և Ստ. Նազարյանցը։

Պետրոս Շանշյանը *(1819—1883)* ժամանակի եվրոպական փայլուն կրթություն ստացած մտավորական էր և իր կրոնասիրությամբ հանդերձ անկեղծորեն նվիրվել էր ազգի լուսավորության գործին։ «Ազգային ուժեղ ինքնագործունեություն եվրոպական լուսավորության առաջնորդությամբ— ահա Շանշյանի կառավարած դպրոցի նշանաբանը»[1],— գրում էր Լեոն։ Շանշյանի եռանդուն գործունեությունը Ներսիսյան դպրոցում՝ հոգաբարձության և աշխարհիկ սկզբունքների համար մղված պայքարի շրջանում, այնտեղ նրա մտցրած մանկավարժական նորությունները՝ հայերին լեզվով դասավանդումը, մի շարք նոր առարկաների ներմուծումը, ծեծի արգելումը, ընկերական, ստեղծագործական մթնոլորտի աշխուժացումը և, վերջապես, նրա անձնական հմայքը որպես լուսամիտ և առաջադեմ մարդու, մեծ դեր խաղացին ինչպես դպրոցի կյանքում, այնպես էլ խոր հետքեր թողեցին նրա սանների հետագա գործունեության վրա։ Իզուր չէր Շանշյանին իր իդեալը համարող Պ. Պռոշյանը նրա գործունեության շրջանը Ներսիսյան դպրոցում ոսկեդար համարում։ Նույն ոգով ու եռանդով գործեց Շանշյանը նաև Շուշու թեմական դպրոցում, այստեղ ևս թողնելով երկրպագուների մի ստվար խումբ, որի մեջ էր ապագա անվանի մանկավարժ Առաքել Բահաթրյանը։

Եթե Շանշյանն իր պրակտիկ գործունեությամբ էր դարբնում ապագա մանկավարժական կադրերին, ապա Ստ. Նազարյանցը *(1814—1879)* 1860-ական թվականների վերելքի և դրան հաջորդած տարիներին հսկայական աշխատանք կատարեց ազգանվեր գործիչների գաղափարական լիցքավորման համար։ Լազարյան ճեմարանում Նազարյանցին աշակերտեցին բազմաթիվ հայ երիտասարդներ (այդ թվում ապագա մանկավարժներ Ս. Շահազիզը, Ս.

1 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 284։

Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Խ. Ստեփաննն)։ Ներսիսյան դպրոցի առաջընթացի գործում նույնպես նպաստյանցը զգալի ավանդ մուծեց՝ 1869—71 թթ. վարելով տեսչի պաշտոնը։

Մանկավարժների նոր սերնդի կրթական-դաստիարակման կազմավորման գործում ոչ պակաս դեր խաղացին նաև Մոսկվայի ու Պետերբուրգի հայ ուսանողական խմբակցությունները։

Ուսանողական-գրական այդ շրջանակների ազդեցությամբ էր, որ ինքնակրթությամբ պարապելու նպատակով Ռուսաստան մեկնած Ղ. Աղայանը (1840—1911) ընդմիշտ կապվեց կրթական գործին։

Որտեղ էլ որ աշխատեց Աղայանը, իր հետ բերեց թարմ հոսանք, պայքարեց հին դպրոցի, աղայական տարրերի կամայականությունների դեմ, եղավ աշակերտի մտերիմ բարեկամն ու հոգատար դաստիարակը։ Լինելով «Արարատ» ամսագրի առաջին խմբագիրներից մեկը, Աղայանը նկատելիորեն փոխեց նրա բնույթը, աշխատեց մանկավարժական հարցերին նվիրված իր հոդվածներով նոր խոսք ասել կրոնական ամսագրի էջերում։ 1870 թ. սկսած նա իր գրական գործունեությունը կապեց դպրոցի հետ, ուսուցիչ եղավ Ախալցխայում, Ալեքսանդրապոլում, Երևանի և Շուշու թեմականներում, վարեց Վրաստանի թեմի հայ դպրոցների տեսչի դժվարին պաշտոնը, գրեց բազմաթիվ հոդվածներ, կազմեց հայոց լեզվի մի շարք դասագրքեր։ Աղայանն առաջինն էր Աբովյանից հետո, որ մեծ նշանակություն տվեց աշակերտների աշխատանքային դաստիարակությանը և կյանքում կիրառեց այդ սկզբունքը։ Ինքնուս, բնածին մանկավարժի տաղանդով և գործելու անսպառ եռանդով օժտված Աղայանը մեծ հարգանքի ու հեղինակության արժանացավ ժամանակակիցների կողմից և վաստակեց «ուսուցիչների ուսուցիչ» անունը։ Պրոֆ. Ա. Շավարշյանի դիպուկ բնորոշմամբ «Իբրև ուսուցիչ նա ինքնատիպ էր, արտիստ»[1]։

Հայ գրական անդաստանի մեկ ուրիշ երախտավորը՝ նույնպես ինքնուս Պ. Պռոշյանը (1837—1907) իր դժվարին կյանքի մեծ մասը նվիրեց դպրոցին, անդավաճան սիրով ծառայեց նրան։ Լինելով ժողովրդայնության ոգու մարմնացում, Պռոշյանը վառ պահեց մեր դեմոկրատ լուսավորիչների ավանդները, լայնորեն իրականացրեց նրանց երազանքը հայ կնոջը ազգային կրթություն տալու վերաբերյալ, Անդրկովկասի տարբեր վայրերում և 1879—85 թթ. Երևանի թեմական տեսուչ եղած ժամանակ բացեց ու կյանք տվեց շատ դպրոցների, պայքարեց խալֆայականության դեմ ու

1 «Հայ մանկավարժներ», գիրք Ա, էջ 341։

թևև եկեղեցուն նվիրված, ազգային-պահպանողական հայացքների տեր մարդ էր, սպանիչ քննադատության ենթարկեց հոգևորականության արատները: Մանկավարժական գրականության ասպարեզում Պռոշյանը խոշոր գործ չկատարեց, սակայն նրա գրական դպրոցական գործունեությունը միևնույն բավական է, որ նա իր պատվավոր տեղն ունենա նաև հայ կրթական գործիչների շարքում:

Մ. Նալբանդյանի դաղափարական ազդեցությամբ գրական-հասարակական հրապարակ մտած Րաֆֆին (1835—1888) չէր կարող անտարբերությամբ անցնել ժողովրդի լուսավորության այրող հարցերի կողքով: Նրա ամբողջ մեծարժեք գրական ժառանգության միջով կարմիր թելի պես անցնում է ժողովրդին լուսավորելու գաղափարը: Իր գեղարվեստական գործերում և մամուլում տպված բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներում Րաֆֆին վեր է հանել նոր դպրոցի առաջ կանգնած խնդիրները, շեշտել, որ լուսավորության միջոցով կարելի է հասնել դիտակցված հայրենասիրության, սթափվել դարավոր թմրությունից ու պայքարի ելնել ազատության նվաճելու համար: Րաֆֆու մանկավարժական արժեքավոր խորհրդածությունները՝ շաղախված նրա մարտական հայրենասիրությանը, մեծ ազդեցություն են գործել հայ մտավորականության և մասնավորապես ուսուցչության վրա: Բայց Րաֆֆին միայն դաղափարախոսությամբ չի սահմանափակվել: Դ. Աղայանի հետ 1868 թ. ունեցած մի զրույցի ժամանակ նա ասել է. «Ճշմարիտ որ ամենից առաջ պետք է լուսավորել ժողովրդին, պետք է ազատել նրան շատ նախապաշարմունքներից, և նա, ևթե դիպքը բերի, ամենայն ուրախությամբ հանձն կառնեմ վարժապետ լինել»[1]: Եվ Րաֆֆին շուտով «վարժապետ» էլ եղավ՝ սկզբում Թավրիզում, ապա Ադուլիսում: Որքան էլ որ մեծ են Րաֆֆու ծառայությունները հայ գրականությանը, այնուամենայնիվ, նա իր ուրույն տեղն ունի նաև հայ դպրոցի ու մանկավարժության մեջ:

Նոր դպրոցի համար պայքարողների շարքերում եղել են հայ գրականության նաև ուրիշ գործիչներ (Ս. Շահազիզ, Ռ. Պատկանյան և ուրիշներ):

Կրթական-գրական գործիչների կողքին ասպարեզ էր մտնում նաև մասնագետ-մանկավարժների մի պատկառելի խումբ, որի մոտ թևև ժողովրդայնության ոգին չէր հասնում Աղայանի, Պռոշյանի, Րաֆֆու վառ անհատականությունների աստիճանին, սակայն նրանք, շնորհիվ ստացած բարձր կրթության, նոր հրանդներ մըտ-

---

1 Դ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հատ. 4, էջ 429:

ցըրին ազգային մանկավարժության մեջ, աշխատեցին դիտական հիմնավորում տալ նրան, մշակեցին ու առաջ մղեցին այն։

Պետերբուրգի հայ ուսանողական նույն շրջանների ազդեցության տակ էր, որ այնտեղ իրավաբանություն սովորելու գնացած Ս. Մանդինյանը (1844—1915) փոխեց իր մտադրությունը և Մ. Սանասարյանի օժանդակությամբ ուղևորվեց Եվրոպա՝ մանկավարժություն ուսումնասիրելու։ Թեև իր գործունեության առաջին շրջանում Մանդինյանը գտնվում էր գերմանական հերբարտ-զիլլերյան մանկավարժական շկոլայի ազդեցության տակ, նա երբեք կուրորեն չենթարկվեց դրան և նրա անձնվեր ծառայությունը դրպրոցին նշանավորվեց հայ մանկավարժության ազգային երանգավորման ակնառու ձեռքբերումներով։ Մանդինյանը մինչև իր կյանքի վերջը ապրեց դպրոցի հոգսերով ու երբեք չհեռացավ նրանից։ Կ. Եզյանը 1874 թ. խորհուրդ է տալիս Եվրոպայից վերադարձած երիտասարդ մանկավարժին. «Ով դիտե, Սեդրակ, հայոց դպրոցների դեմին ինչ կարող է գալ, լավ է, որ ռուսական համալսարանի դիպլոմ էլ ունենաս, որ համալսարաններում դասախոսես ու ժամանակին քաղցած չմնաս»։ Մանդինյանը տալիս է շատ ուշադրավ պատասխան. «Եթե ես ռուսական համալսարանի դիպլոմ ստանամ. կարող եմ տրամադրվել, մանավանդ երբ նեղության մեջ ընկնեմ. Թողնել հայ դպրոցը։ Ես չեմ կամենում այդ դիպլոմն ունենալ, որպեսզի ստիպված լինեմ կյանքս հայ դպրոցում մաշել»[1]։

Մանդինյանի գործունեությունն ընթացել է հայկական թեմական դպրոցներում և էջմիածնի ճեմարանում։ Այստեղ է, որ նա աշխատել է իրականացնել իր մանկավարժական սկզբունքները, կիրառել է ուսուցման գիտական մեթոդը, զարկ է տվել հումանիտար գիտություններին, անգնահատելի ծառայություններ մատուցել հայ իրականության մեջ մանկավարժական ուսուցում կազմակերպելու գործում։ Նա կազմել ու հրատարակել է դպրոցական ծրագրեր, նախագծեր, բազմաթիվ գիտա-մանկավարժական հոդվածներ, գրել է տասի չափ դասագրքեր։ Եռանդուն ու բանիմաց մանկավարժը ջանքեր էր գործադրում, որպեսզի հայ դպրոցը ուներ միասնական կանոններ ու սկզբունքներ, որպեսզի նրա տարբեր օղակները օրգանապես կապված լինեն և միմյանց շարունակություն կազմեն։ Այս բոլորի հետ մեկտեղ, Մանդինյանը կրոնական-ուսուցման պաշտպան էր։ Նրա խոցելի կողմերից էր նաև այն, որ տեսականորեն հիանալի պատրաստված լինելով, նա գործնականում բավական թույլ էր, չէր կարողանում մատչելի դարձնել իր

1 Ա. Գ. Դանիելյան, Սեդրակ Մանդինյան, Երևան, 1964, էջ 46

ճիշտ հարցադրումները, ներքին կապ ստեղծել աշակերտի հետ, որի համար էլ հաճախ նրան քննադատում էին մամուլն ու մանկավարժները: Այս հանդամանքը, սակայն, չի նսեմացնում Մանդինյանի դերը հայ մանկավարժության մեջ, և այսօր էլ նրա շատ տեսակետներ չեն կորցրել իրենց նշանակությունը:

Եվրոպական կրթություն ստացած մանկավարժ էր նաև Առաքել Բահաթրյանը (1848—1883), որը թեև կարճ ապրեց, բայց անջնջելի հետք թողեց դպրոցի կյանքում: Նա ընդամենը երկու տարի աշխատեց հայ դպրոցում (Ներսիսյան և Նոր-Նախիջևանի թեմական դպրոցներ), իսկ Եվրոպայից վերադառնալուց հետո 1876—1881 թթ., որպես պետական թոշակառու, պայմանագրով աշխատեց Սիմֆերոպոլի թաթարական ուսուցչական սեմինարիայի տեսչի պաշտոնում: Ե՛վ այդ, և՛ իր կյանքի վերջին տարիներին նա ակտիվորեն աշխատակցեց հայ մանկավարժական մամուլին, գրեց արժեքավոր հոդվածներ, դասագրքեր, մշակեց հոգեբանության տերմինաբանությունը, առաջին անգամ գիտական ձևակերպում տվեց հայոց լեզվի մեթոդիկային: Բահաթրյանը գերմանական մանկավարժության աղդեցության տակ էր, սակայն նա ևս գնաց Մանդինյանի ուղիով:

Սարգիս Բեգնազարյանը (1840—1903) Շվեյցարիայում ուսուցչական սեմինարիան ավարտելուց հետո 1870 թ. իրեն նվիրեց դպրոցական գործին: Նա այն հազվագյուտ մանկավարժներից էր, որոնք երկար տարիներ աշխատել են միևնույն դպրոցում (հինգ տարի՝ Ալեքսանդրապոլում, տասը տարի՝ Երևանի թեմականում), մի բան, որ խոսում է նրա մանկավարժական լավագույն կարողությունների մասին: Ղ. Աղայանը գրում է, որ Բեգնազարյանը «ուսուցանում էր որպես արվեստ կամ ինչպես կասեն՝ արվեստի բոլոր կանոնների համեմատ, բայց ոչ իբրև Մեսրոպ, որ «Ոչ իբրև զարուեստ ուսուցաներ, այլ որպէս զհոգի առաքելաբար աշակերտանց տայր»[1]: Բեգնազարյանի ծառայությունը հայ դպրոցին արտահայտվեց նրանով, որ նա անդուլ պայքար մղեց խալֆայականության դեմ, մտցրեց նորի շունչը, նոր առարկաներ, բարձրացրեց դպրոցի հեղինակությունը:

Կրթական գործիչների շարքում յուրահատուկ տեղ է գրավում Խորեն Ստեփանեն (1840—1900): Նա նպաստել է Երևանի, Ախալցխայի, Շուշու, Բաքվի և մի շարք այլ վայրերի դպրոցական կյանքի աշխուժացմանը, սակայն նրա կրոնասիրությունն ու կամակոր և

1 Ղ. Աղայան. Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 478:

ըմբռնած բնավորությունը շատ անգամ խանգարել են նրան մինչև վերջ օգտագործելու իր եռանդի հնարավորությունները:

Հայ դպրոցին զգալի ծառայություններ է մատուցել դիտնական-հայագետ Ստ. Պալասանյանը (1837—1883), որն իր բեղուն գիտական գործունեությունը զուգակցել է դրեթե անընդմեջ ուսուցչությամբ՝ Թեոդոսիայում, Նոր-Նախիջևանում, Թիֆլիսում և Էջմիածնում, զբաղվել է հայոց լեզվի քերականության, բանահյուսության ու հայ ժողովրդի պատմության մշակման հարցերով: Նոր-սիսյան դպրոցի և Գևորգյան ու Լազարյան ճեմարանների հետ է կապված բազմամասնակ հայագետ Կարապետ Կոստանյանի (1853—1920) մանկավարժական երկարամյա կյանքը: Անկախ իր կղերա-պահպանողական հայացքներից, եկեղեցական-դպրոցական գործիչ Գաբրիել Այվազյանը (1812—1880) որոշակի դեր է խաղացել հայ նոր դպրոցի կազմավորման գործում, մասնակցել և օժանդակել է դպրոցական մի շարք կանոնադրությունների մշակմանը, եղել է Գևորգյան ճեմարանի հիմնադիրներից մեկը: Շնորհակալ ներդրում է կատարել կրթական գործում իրավագետ Վահան Բոստամյանը (1835—1881), որն առաջինը ձեռնարկեց հատուկ մանկավարժական պարբերականի հրապարակմանը, արժանանալով ցարական պահնորդական բաժանմունքի տհաճ ուշադրությանը[1]:

Անդրկովկասի տարբեր վայրերում արնաջան աշխատանքով հայ դպրոցի վերելքին իրենց լուման են ներդրել նաև բազմամյա մանկավարժներ Նիկ. Տեր-Ղևոնդյանը՝ լայն ճանաչում գտած «Մայրենի լեզու» դասագրքերի հեղինակը, տարբեր դասագրքերի հեղինակներ Հայրապետ Ղուկասյանը, Ավ. Տեր-Հակոբյանը, Կ. Տեր-Դավթյանը, Եզնիկ Երզնկյանը, հասարակական գործիչ Հ. Աոաֆելյանը, թեմական տեսուչներ Գ. Բարխուդարյանը, Ստեփանոս Տեր-Ստեփանյանցը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Արիստակես Սեդրակյանը և ուրիշներ:

Մանկավարժների կողքին հայ դպրոցի հոգսերով ապրում ու նրան աջակցում էին նաև մի խումբ հայրենասեր բժիշկներ, որոնք բացի աշակերտներին բժշկական օգնություն ցույց տալուց, հանդես էին գալիս դպրոցական առողջապահության մասին հոդվածներով, օգնում էին ուսուցչական մարմիններին: Ուշագրավ է, որ Բաքվի և Թիֆլիսի հայկական բարեգործական ընկերությունների հիմնադրման նախաձեռնողները եղան բժիշկներ Դավիթ Ռոստոմյանցն ու Բագրատ Նավասարդյանը: Պետերբուրգի հայ ուսանողական շրջա-

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 115, գ. 5, էջ 9:

նի ակտիվ անդամներից էր ապագա բժիշկ Ավետիք Բաբայանը, որը դպրոցը դարձրել էր իր գործունեության ասպարեզ։ Բաբայանը հաճախ էր մամուլում հանդես գալիս՝ պրոպագանդելով առողջ սերունդ դաստիարակելու, դպրոցական մարմնամարզության հարցերը, ծրագրային ելույթներ էր ունենում, բոլոր միջոցներով աշխատում էր կազմակերպել օրինակելի դպրոցներ։ Երևանցի առաջադեմ բժիշկ Լևոն Տիգրանյանը ևս իր մասնագիտական կարողություններն ու ուժը ի սպաս էր դրել թեմական դպրոցի բարգավաճմանը, հոդ էր տանում աշակերտների մաքրության ու առողջության մասին, 1881—1884 թթ. հրատարակում էր արևելահայ առաջին «Առողջապահական թերթ» ամսագիրը, որին աշխատակցող մի խումբ հայ բժիշկներ վեր էին հանում նաև դպրոցական հիգիենայի հետ կապված հարցերը։ Անդրկովկասի տարբեր վայրերում բժշկությունը հաջողությամբ ուսուցչության հետ էր զուգակցում Գաբ. Տեր-Հովհաննիսյանը (Քաջաբերունի), որը 1871—1875 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել Ալեքսանդրապոլի «կուլտուրական ոահվիրաների» գործունեությանը։

Այս շրջանում էր, որ արևելահայ իրականության մեջ հրապարակ եկան նաև առաջին հայ մասնագետ կին-մանկավարժները։ Նրանց գործունեության շնորհիվ Անդրկովկաս մուտք գործեց մանկական պարտեզը։

Նախադպրոցական գործի սկիզբը դրվել էր Գերմանիայում, Ֆրեոբելի կողմից դեռևս XIX դարի առաջին կեսին։ 1860-ականներին մանկապարտեզներն սկսեցին տարածում գտնել նաև այլ երկրներում։ Արևելահայերի մոտ առաջին փորձերն արվեցին Նոր Նախիջևանում 70-ական թվականներին Հ. Ալըճյանի և Ռ. Պատկանյանի կողմից։ Բայց ահա Անդրկովկասում հայտնվեցին Եվրոպայում և Ռուսաստանում հատուկ կրթություն ստացած կին-մանկավարժները՝ Սոֆյա Բաբայաևր, Գայանե Հովհաննիսյանը, Սոֆյա Աւդուլյանը։

Ս. Բաբայանը 1877 թ. Թիֆլիսի Գայանյան դպրոցում մրցըրնում է մանկապարտեզային խաղեր, ապա իր տանը բացում մասնավոր մանկական պարտեզ։ Նա իր շուրջն է համախմբում քաղաքի առաջադեմ հայ տիկնանց, ամուսնու (բժ. Ավ. Բաբայան) օգնությամբ նրանց մեջ պրոպագանդում է մանկական խաղերը, բացատրում դրանց նշանակությունը, հաճախ հանդես գալիս մամուլում, պարզաբանում Ֆրեոբելի նախակրթական սկզբունքները,

ընտանիքի դերը երեխայի դաստիրակության գործում: Նա գրանում էր, որ «Աղքատ դասի երեխայից ավելի պետք են մանկական պարտեզներ»[1]:

1880 թ. կանանց այդ խումբը հիմնում է ֆրեոբելյան ընկերություն, որի ջանքերով էլ Թիֆլիսի Զրկինենց եկեղեցուն կից 1882 թ. մայիսին բացվում է արևելահայ առաջին ժողովրդական մանկապարտեզը, որպես տեսուչ ունենալով Դ. Հովհաննիսյանին: Հայ հասարակությունը ջերմորեն ողջունեց այդ երևույթը: Աղայանը մի ամբողջ տարի աշխատակցեց Ս. Բաբայանին և իր իսկ վրկայությամբ մանկապարտեզը, «այդ երանելյաց աշխարհը», պատճառ դարձավ, որ ինքը դրանից հետո գլխովին նվիրվի մանկական դրականությանը: Րաֆֆին «Մշակում» նկարագրելով մանկապարտեզի բացումը, ոգեշնչված եղրակացրեց. «Հայ կինը զարթնել է, նա խոսում է, նա գործում է...»[2]: 1884 թ. «Արձագանքը» իր 41-րդ համարում հայտնում էր, որ Ս. Բաբայանի գործակիցհիններից մեկը Ալեքսանդրապոլում բացում է ֆրեոբելյան մանկապարտեզ:

Սակայն, դժբախտաբար, մանկապարտեզային գործը երկար կյանք չունեցավ: Երբ 1885 թ. փակվեցին հայկական դպրոցները, ֆրեոբելյան ընկերությունը և մանկապարտեզները ևս դադարեցրին իրենց գործունեությունը:

Ինչպես հայ, այնպես էլ ընդհանրապես կովկասյան իրականության հետամնացությունը հնարավորություն չէր տալիս տեղում աճեցնելու բարձրորակ մանկավարժական կադրեր: Չնչին բացառությամբ, հայ մանկավարժները պատրաստվում էին Ռուսաստանում և Եվրոպայում, մի բան, որը շարունակվեց ողջ նախահոկտեմբերյան շրջանում: Այս հանգամանքը կանխորոշում էր, որ ուժեղ լինեն օտար ազդեցությունները մեր մանկավարժական մտքի վրա: Այդ ժամանակ Եվրոպայում կրթություն ստացած մանկավարժները, գրեթե առանց բացառության, հերբարտականներ էին: Իր բոլոր բացասական կողմերով հանդերձ, հերբարտականության մուտքը հայ իրականության մեջ դրական երևույթ էր և օգնում էր հայ մանկավարժության ձևավորմանը, նպաստում էր մտքերի բախմանը և ճշմարտության հաղթանակին:

Հայ հերբարտականները, սակայն, կուրորեն չէին հետևում այդ սխեմային և աշխատում էին ինքնուրույն լինել, կամ ընդհար-

---

1 «Հայ մանկավարժներ», գիրք Բ, էջ 368:

2 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, 1959, էջ 54:

վելով կյանքի բոլորովին այլ պայմաններին, հրաժարվում էին դրանից (սիստեմից)։ Պրոֆ. Շավարշյանն իրավացիորեն նշում է, որ «հայ ուսուցչության մեծամասնությունը անծանոթ և անհաղորդ մնաց «ձևական աստիճաններին», չհետևեց ու չկաշկանդվեց դրա տրաֆարետային միօրինակությամբ»[1]։ Սրան հակառակ, արևելահայ իրականության մեջ լայն ընդունելություն էին գտնում եվրոպական մանկավարժության խոշոր ներկայացուցիչների՝ Կոմենսկու, Ռուսսոյի, Պեստալոցցու, Դիստերվեգի, Ֆրեոբելի և մյուսների գաղափարները։ Այդ գաղափարների համընդհանուր ճանաչումից ու ընդունումից մեծապես պայմանավորված էին հայ մանկավարժության մի շարք էական ընդհանուր բնութագծերը՝ նորաբարությունը, պայքարը միջնադարյան սխոլաստիկայի դեմ, դիդակտիկ մեթոդների կիրառումը, աշակերտի ինքնուրույնության զարգացմանը նպաստելը և այլն։

Ազգային մանկավարժություն ստեղծելու անհրաժեշտության մասին խիստ ուշագրավ է ռուս մեծ մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու հետևյալ եզրակացությունը.

«1) Բոլոր ժողովուրդների համար դաստիրակության ընդհանուր սիստեմ գոյություն չունի ոչ միայն պրակտիկայում, այլև թեորիայի մեջ, և գերմանական մանկավարժությունն ավելի մի բան չէ, քան գերմանական դաստիարակության թեորիան։

2) Յուրաքանչյուր ժողովուրդ ունի դաստիարակության իր սեփական ազգային սիստեմը. իսկ դրա համար էլ մի ժողովրդի կողմից մյուս ժողովրդից դաստիարակչական սիստեմներ փոխառնելը անհնարին է։

3) Դաստիարակության գործում այլ ժողովուրդների փորձը թանկարժեք ժառանգություն է բոլորի համար, սակայն ճիշտ այն իմաստով, ինչ իմաստով որ համաշխարհային պատմության փորձերը պատկանում են բոլոր ժողովուրդներին։ Այնպես, ինչպես չի կարելի ապրել ուրիշ ժողովրդի կենսափորձով, ինչքան էլ դրական լինի այդ ձևը, նույնպես և չի կարելի դաստիարակվել մանկավարժական օտար սիստեմով, ինչքան էլ այն լինի բարեկերտ ու լավ մտածված։ Յուրաքանչյուր ժողովուրդ այդ տեսակետից պետք է փորձի իր սեփական ուժերը»[2]։ Այս պատճառով էլ հայ մանկավարժական միտքը, յուրացնելով ժամանակի առաջավոր դաղա-

---

1 «Հայ մանկավարժներ», գիրք Բ, էջ 293։

2 Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հատ. 1, Երևան 1958։ էջ 153։

փարները, դրանց տալիս էր ազգային երանգ, մշակում իր առանձնահատուկ դիծը:

Հայ ժողովրդի կյանքի յուրահատուկ պայմանները, նրա դարերով ձևավորված ու ավանդական դարձած հոգեկան դեմոկրատիկ խառնվածքը, նախորդ շրջանի կրթական-լուսավորական գործիչների ոգեշունչ հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը նոր պայմաններում կանխորոշեցին հայ մանկավարժության ընդհանուր դեմոկրատական բնույթը:

Եկեղեցու և կրոնի հանդեպ ունեցած վերաբերմունքով հայ մանկավարժները չէին տարբերվում նախորդներից: Նրանք բոլոր միջոցներով պայքարում էին աշխարհիկ սկզբունքների խորացման համար, սեղմում էին կրոնական ոգին դպրոցներում: Նույնիսկ այն մանկավարժները, որոնց մոտ կրոնասիրության տարրեր կային (Մանդինյան, Պռոշյան, Բեղնազարյան), առիթը բաց չէին թողնում խարազանելու հոգևորականության հետամնացությունն ու կամայականությունները, աշխատում էին, որ կրթական հարցերում եկեղեցին ունենա միայն սիմվոլիկ իրավունքներ: Ինչպես հայ մտավորականությունն ընդհանրապես, այնպես էլ մանկավարժները ընդունում էին, որ ստեղծված իրավիճակում եկեղեցին է այն կազմակերպությունը, որը կարող է պաշտոնապես տնօրեն լինել ազգային դպրոցների համար և պատասխանել նրա ինքնավարության:

Ուշագրավ է Ղ. Աղայանի կարծիքը եկեղեցու տեղը որոշելու հարցում: 1877 թ. Սուքիաս Պարոյանին ուղղած նամակում, փաստորեն նույնացնելով եկեղեցուն ու կաթողիկոսին, նա գրում էր. «Մեզ պետք է այսուհետև մեր կաթողիկոսի վերա քաղաքական կետից նայել ու ոչ հնադարյան վանական, ըստ որում այժմ հանդամանքները փոխվել են և մենք թշնամիներ ունենք, որոնց աչքում հայոց կաթողիկոսը աչքի փուշ է»[1]:

Չխորանալով մեր մանկավարժների նեղ մասնագիտական հայացքների և ուսուցման մեթոդների մեջ, անդրադառնանք այն խնդիրներին, որոնց լուծման հարցում նրանք ընդհանուր մոտեցում ունեին, և որոնցով էլ հենց որոշվում է հայ մանկավարժության ազգային բնույթը:

Պայքարելով ժողովրդի ազգային վերածնության համար, հայ լուսավորիչները մատաղ սերնդի դաստիարակության գործում մեծ տեղ են հատկացրել ընտանիքին ու մորը: Այս գաղափարը սրբու-

---

[1] Ղ. Աղայան, *Երկերի ժողովածու*, հատ. 4, էջ 505—506:

թյամբ որդեգրվեց մանկավարժների նոր սերնդի կողմից։ Դեռ ժամանակին մեծ աղմուկ հանած «Լևոնի վիշտը» պոեմում Ս. Շահազիզը գրում էր.

«Մայր ենք պահանջում, կատարյալ մի կին,—
Այդ մեծ վարժապետն մարդկեղեն սրտի,
Այդ առողջ, քնքուշ կրթության որդին,
Որ տա՛ր աղգության, որ տա՛ր մեզ հոգի»[1]։

Բաֆֆին օրորոցը համարում էր մանկան առաջին դպրոցը, իսկ մորը՝ առաջին ուսուցիչը, որին նախ պետք է կրթել։ «Եթե պետք է սկսել մեր ժողովրդի կրթության գործը,— գրում էր նա,— սկիզբը դնելու է անպատճառ կանանց կրթությունից», քանի որ «Հայոց լեզուն ընտանիքի մեջ պահպանողը և իր զավակների բերանը դնողը կինն է»[2]։ Արձագանքելով Բաֆֆուն, Ղ. Աղայանն ավելացնում էր. «Եթե բոլոր մայրերը այնքան հայրենասեր և ազգասեր լինեն, որ իրենց զավակների հետ մայրենի լեզվով խոսեն, նրանց սրտի մեջ ազգային պատասխանատվություն ձգեն, հայրենիքի սեր, էլ այսուհետև ի՞նչ մահ կարող է սպառնալ մեզ»[3]։

Հայ կնոջ կրթության գործը կազմակերպելու համար մանկավարժները համառ ու դժվարին պայքար ծավալեցին։ Նրանք այդ շնորհակալ առաքելությունը պատվով կատարեցին։

Հայ մանկավարժներին հուզող մյուս առավել ևս կարևոր հարցը դասավանդման լեզվի հարցն էր։

Ցարական բյուրոկրատիան ձգտում էր ամեն կերպ դպրոցներից դուրս մղել տեղական մայրենի լեզուները։ Այդ բանը նա ավելի մեծ հաջողությամբ էր կատարում պետական հսկողությանը ենթակա դպրոցներում։ 1881 թ. հունվարի 13-ին փոխարքան պետական տարրական դպրոցների համար հաստատեց ուսուցման կանոններ, ըստ որոնց ուսուցման առաջին տարվա երկրորդ կիսամյակից տեղական դպրոցներում մտցվում էր ռուսաց լեզուն, իսկ երկրորդ տարվանից ուսուցումը դնալու էր հիմնականում ռուսերեն լեզվով։ Սա մի վատ քողարկված մանյուվր էր, որն ապահովում էր տարածվել բոլոր տեսակի դպրոցների վրա և պարտադրել ռուսերենի տիրապետությունը։

---

1 Ս. Շահազիզ, Երկեր, էջ 280։

2 «Հայ մանկավարժներ», գիրք Բ, էջ 161։

3 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 288։

Անդրկովկասի ժողովուրդների կրթական գործիչները զգացին վերահաս վտանգը և եռանդուն պայքար ծավալեցին հանուն մայրենի լեզվի գոյության իրավունքի: Վրաց ուսումնասիրող Ն. Պապավան այդ առթիվ գրում է. «Վրաց լեզվի պաշտպանության համար մղվող պայքարը կազմում էր 19-րդ դարում վրաց ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հիմնական կողմերից մեկը»[1]:

Թեև հայ դպրոցը առայժմ բավական ազատ էր ուսուցման լեզվի ընտրության հարցում, սակայն մանկավարժներն զգում էին, որ վաղ թե ուշ նրա վրա ևս կախվելու է մայրենի լեզվից հրաժարվելու սպառնալիքը, և նրանք ամեն առիթով մայրենի լեզու էին քարոզում, դիմում էին անցյալի հայ և եվրոպական լուսավորիչներին, որոնք բաղմիցս հիմնավորել էին մանուկների տարրական կրթության առանձնահատկությունները: Նրանց համար գործունեության լավագույն օրինակ էին ծառայում ռուս մեծ ժողովրդական մանկավարժ Ուշինսկու հայտնած փայլուն մտքերը ի պաշտպանություն մայրենի լեզվի և նրանով երեխային դաստիարակելու անհրաժեշտության:

Ուշինսկին, մեծ նշանակություն տալով մայրենի լեզվին, պնդում էր, որ այն միևնույն ժամանակ «ժողովրդի մեծագույն դաստիարակն» է, «պարմանալի մանկավարժ», որով երեխան ճանաչում է իրեն ու շրջապատը, սովորում է հաճույքով ու «պարմանալիորեն» հեշտությամբ: «Այն երեխան,— գրում էր Ուշինսկին,— որի զարգացումը բոնի կերպով չի աղճատվել, մեծ մասամբ հինգ կամ վեց տարեկան հասակում, արդեն իր մայրենի լեզվով խոսում է աշխույժ ու ճիշտ: Սակայն մտածնկեք, թե ինչքա՜ն դիտելիքներ, զգացմունքներ, մտքեր, տրամաբանություն և նույնիսկ փիլիսոփայություն է հարկավոր, որպեսզի կարելի լինի որևէ լեզվով խոսել այնպես, ինչպես իր մայրենի լեզվով խոսում է վեց կամ յոթ տարեկան սովորական երեխան»[2]:

Այս պատճառով մեծ մանկավարժը երեխայի կրթության առաջին նախապայմանը համարում էր մայրենի լեզուն, մանավանդ, որ օտար լեզվով դաստիարակվածը միշտ խորթ կմնա իր ժողովրդին, ոչինչ չի կարող տալ նրան և կդառնա «մի խղճուկ մարդ առանց հայրենիքի, հայրենասիրության, ինչպիսի դիմակ էլ հետո

---

[1] **Н. А. Папава**, Народное обр-не в Грузии во второй половине XIX в., (Автореферат), Тбилиси, 1964, стр. 11.

[2] *Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական բնտիր երկեր, հատ 2, Երևան, 1959, էջ 606:*

նա հագնելու լինի»[1]: Ուրեմն, օտար լեզուների ուսումնասիրությունը պետք է սկսել ավելի ուշ, երբ երեխայի մեջ արդեն բավական խոր արմատներ դցած կլինի մայրենի լեզուն:

Պաշտպանելով մայրենի լեզվի իրավունքները, «Մշակը» 1872 թ. գրում էր. «Այն օրից սկսած, երբ Հայր և Վրացին կհրաժարվեն իրենց մայրենի լեզվից,— նոքա մի ամենածանր հանցանք կգործեն մարդկության առաջ,— և այդ հանցանքը կանվանվի հրաժարումն իր պարտականություններից»[2]:

Հայ մանկավարժներն ու մամուլը բազմիցս հանդես են եկել հօգուտ այն բանի, որ երեխայի կրթությունը, առավելապես նախնականը, մայրենի լեզվով լինի:

Սակայն մայրենի լեզվով ուսուցումը դեռևս բավարար չէր երեխայի մտավոր զարգացումը ճիշտ ուղիով տանելու համար: Հայ մանկավարժները գտնում էին, որ դրան հավասարազոր նշանակություն ունի ուսուցմանը ազգային բովանդակություն հաղորդելը: Ս. Մանդինյանը նշում էր, որ պետք է «Ուսումն ազգային լինի և մանուկի կյանքին ընտանի, ոչ բառով, այլ հոգով»[3]: Մանդինյանը 1882 թ. ուսուցչական ժողովում հայտարարում էր. «Ազգային լեզուն առանց բուն ազգային պարունակության լոկ ձևական հնչյուն է և դատարկ ման: Եթե ուզում եք Ձեր և Ձեր խնամքին հանձնված սանիկների մեջ ճշմարիտ հաղորդակցություն հաստատել, եթե ուզում եք նոցա մեջ ազգային տարերք խնամել,— Դուք ընտրեցեք այն միակ կամուրջը, որ Ձեր և նոցա մեջ բնությունից հաստատված է— այսինքն ազգային ստեղծագործությունը— ազգային լեզվով»[4]: Նա գտնում էր, որ հայոց լեզուն պետք է մատուցվի ժողովրդի բանաւոր ու գրավոր ստեղծագործության օրինակներով: Ընդհանուր մանկավարժության սկզբունքներից էր ելնում «Մանկավարժական թերթը», որն իր առաջին համարի խմբագրականում գրում էր. «Ծխական-ժողովրդական ուսումնարանի վերաբերությամբ մեծ նշանակություն ունի ազգայնությունը: Ինչ արդյունք կունենա խելացի կրթությունը կամ խելացի ուսումն, եթե դոցա մեջ չեն մտնում իրրև գործիչներ ազգի լեզուն և գարերով աշխատած նորա կուլտուրան: Ազգային լեզուն ուսումնարանի լեզուն պետք է լինի. մանկական ընթերցանության նյութը պետք է քա-

---

1 Նույն տեղում, էջ 613:

2 «Մշակ», 1872, № 11:

3 «Վարժարան», 1882, № 1—2, էջ 52:

4 «Արարատ», 1883, № 1—2, էջ 38:

ղած լինի ազգային գրականության դանձարանից, աշխարհագրության և պատմության դասատվությունը մենք պետք է սկսենք մանուկների ծննդյան տեղից և հայրենիքից, բոլոր դասատվության կենտրոն մենք պետք է շինենք մայր-ազգի բնակության տեղը, նորա պատմությունը, տնտեսական դրությունը և քաղաքակրթությունը, բնագիտությունը պետք է սկսվի մեզ շրջապատող բնության հետ ծանոթանալուց և այլն։ ...Ի՞նչ խելոք դաստիարակ կկամենար բաժանել մանուկին յուր ազգիցը։ ...Բայց, իհարկե, սորանից չպետք է հետևացնել, որ մանուկներին պետք է զրկել ժամանակակից մյուս քաղաքակրթյալ ազգերի հետ ծանոթանալուց»[1]։

Ազգային դաստիարակությանն այսքան մեծ նշանակություն տալը նախ և առաջ պայմանավորված էր ծավալվող ազգային զարթոնքին նպաստելու անկեղծ ձգտմամբ։ Կար և մեկ ուրիշ, ոչ պակաս կարևոր, հանգամանք։ Կյանքի ընդհանուր զարգացումը, միջազգային կապերի խիստ ընդլայնումն իրենց հետ բերում էին լուսավորված մեծ ազգերի մշակույթի հզոր ազդեցությունը։ Պետք էր կարողանալ խելացի կերպով օգտվել այդ ազդեցությունից, և կուլ չգնալ դրան, չկորցնել սեփական դեմքը։ «Ազդեցություննները,— գրում է Լեոն,— որքան էլ հզոր լինեն նրանք, ապազգայնացման վտանգը չեն բերում մի երկրի, երբ նրանց հետ հավասար ուժով գործում է և ազգային դաստիարակությունը»[2]։

Ահա հենց այդ ազդեցություններին դիմանալու, հայ մանուկին ազգային դիմագրկությունից զերծ պահելու լավագույն միջոց համարվեց դպրոցներում ազգային ոգին ուժեղացնելը, հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը անդրադառնալը։ Սա բնավ չէր նշանակում ազգային սահմանափակում, ինքնամփոփում (հակառակ ցարական բյուրոկրատիայի գնալով ուժեղացող միզադրանքների), քանի որ հայ դպրոցներում հավասարապես տեղ էին գրավում ընդհանուր ու Ռուսաստանի պատմությունը, աշխարհագրությունը, թեմականներում՝ նաև գրականությունը։

Ազգային դաստիարակության հարցն իր հնարքին սերտորեն կապված էր նոր դասագրքերի, հատկապես հայոց լեզվի դասագրքերի և ընթերցարանների ստեղծման հետ։

---

1 «*Մանկավարժական թերթ*», *1878, № 1, էջ 4։*

2 Լեո, *Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 12։*

Ընդհանրապես նոր դասագրքերի պահանջը, բնականաբար, աճեց դպրոցի ծավալման հետ միասին: Հայ մանկավարժները միշտ մեծ նշանակություն են տվել դասագրքին և իրենց հնարավորությունների չափով աշխատել են բարելավել ու ժամանակի ոգուն համապատասխանեցնել այն:

Արդեն 1850-ականներին հրապարակ եկան մի շարք մանկավարժների (Ստ. Նազարյանց, Ռ. Պատկանյան, Մ. Պատկանյան, Հ. Բերբերյան) հայոց լեզվի դասագրքերը, որոնք բավականաչափ նպաստեցին հին, սխոլաստիկ ոգին դպրոցներից դուրս մղելուն: Նոր դասագրքերի ստեղծման ու հրատարակման գործում աչքի ընկնող դեր խաղային նաև Լազարյան հնմարանը, ապա Պետերբուրգի հայ ուսանողները: Այնուհետև դասագրքերի հրատարակման կենտրոններ են դառնում Թիֆլիսը, Շուշին, Էջմիածինը: Հայոց լեզվի ուսուցումը բարելավելու տեսակետից մեծ նշանակություն ունեցավ Խ. Աբովյանի «Նախաշավիղի» սկզբունքների՝ դրուսուցման հնչական մեթոդի վերականգնումը: 1860-ական թվականներին Թիֆլիսի դիմնազիայի մի խումբ հայ աշակերտներ (Գ. Տեր-Ալեքսանդրյան, Ալ. Երիցյան, Զ. Գրիգորյան, Գ. Բաբայան և ուրիշներ) այդ մեթոդով կազմեցին այբբենարան և ծխական դպրոցներում ձրի դասավանդելով սկսեցին տարածել հնչական մեթոդը: Սրան հետևեց Պետերբուրգի հայ ուսանողների խումբը, որի հանձնարարությամբ Ս. Մանդինյանը 1869 թ. հրատարակեց «Հայերեն կարդալ և գրել ուսուցանելու հրահանգը», նպատակ ունենալով հայ ուսուցչությանը ծանոթացնել հնչական մեթոդին: Միաժամանակ խումբը հրատարակեց հայերեն խոշոր շարժական տառեր: Հնչական մեթոդը, որ դրուսուցման գործում տառահնդականի փոխարեն մտցնում էր տառերի ուղղակի հնչյունները, լավագույն ելք էր աշակերտներին փրկելու տանջալի ու բթացնող եղանակներից: Այդ մեթոդը արագ հանաչում գտավ ու մի տեսակ փրկության դուռ դարձավ հայ ուսուցչության համար, թեթևացրեց աշակերտի գործը, արագացրեց ու դյուրըմբռնելի դարձրեց դրուսուցումը: Չնայած հայերենի նկատմամբ ունեցած մի շարք թերություններին, հնչական մեթոդը դարապլուխ էր կազմելու հայ մանկավարժության մեջ:

Արդեն երկու տարի անց «Հրահանգի» հիման վրա և Ուշինսկու հռչակված դասագրքի հետևությամբ Ն. Տեր-Դևոնդյանը Թիֆլիսում հրապարակ հանեց «Մայրենի լեզու» դասագրքի առաջին մասը, որն իրոք հեղաշրջում մտցրեց հայ դպրոցում: Այն իր բո-

վանդակությամբ պարզ էր, պատկերավոր, հարուստ, լեզուն սահուն էր և, ամենակարևորը, մոտ էր մանկան հոգուն: Գիրքը լայն տարածում գտավ, մուտք գործեց նույնիսկ Պոլիս: 40 տարվա ընթացքում «Մայրենի լեզուն» ունեցավ 37 հրատարակություն: Այնուհետև Տեր-Ղևոնդյանը կազմեց նաև «Մայրենի լեզվի» բ, գ, դ մասերը՝ ուսուցման հաջորդ տարիների համար:

Կարճ անց երևան են գալիս Ն. Տեր-Հակոբյանի, Կ. Տեր-Դավթյանի, Հ. Ղուկասյանի, Գ. Տեր-Ալեքսանդրյանի ու Ալ. Երիցյանի և ուրիշների նոր սկզբունքներով կազմված դասագրքերը: Սակայն Ղ. Աղայանի 1875 թ. հրատարակած «Ուսումն մայրենի լեզվի» դասագրքերը ամենից ավելի էին համապատասխանում հայ մանուկի պահանջներին ու հոգուն, կրում էին ժողովրդականության վառ կնիքը, գրված էին պարզ ու խոսուն լեզվով: Աղայանը, հետևելով Ուշինսկու սկզբունքներին, միաժամանակ աշխատել էր հայացնել գրքի ընթերցանության մասը, օգտագործել էր նյութեր հայկական իրականությունից: Սրա համար էլ ժամանակակիցներից շատերը Աղայանին կոչեցին «հայկական Ուշինսկի»:

Նույն Պետերբուրգի խմբակի ազդեցությամբ, իրեն ազգի լուսավորությանը նվիրած, ապա Մ. Միանասյանը 1872 թ. առաջին անգամ հայ դպրոցում ներդրեց գծված տետրը, լայպցիգում տպագրեց և տարածեց իր կազմած հայերեն վայելչագրության օրինակները, որոնց հետագայում ավելացավ և Մ. Տեր-Սարգսյանի գիրքը:

Դպրոցներում հայոց լեզվի ուսուցման բարելավման գործում զգալի դեր կատարեց Ստ. Պալասանյանի աշխարհաբարի քերականության առաջին դասագիրքը (1870): Քերականության դասագրքեր գրեցին Ն. Տեր-Ղևոնդյանը, Ս. Բահաթրյանը: Աստիճանաբար հրապարակի վրա ավելացան հայոց լեզվի դասագրքերը և ընթերցարանները, որոնց հեղինակներն էին Ս. Բահաթրյանը, Հ. Նազարյանը, Գ. Այվազյանը, Կ. Կոստանյանը և ուրիշներ:

Սակայն ստեղծված դասագրքերի մեծ մասը դեռևս իր վրա կրում էր գրսի ազդեցությունը: Մամուլում սկսեցին հոդվածներ երևալ, որոնք պահանջում էին առավել հայացնել գրքերը: Այս հարցում ամենից հետևողականը Ս. Մանդինյանն էր: 1877 թ. «Փորձ» ամսագրում Մանդինյանը, գրախոսելով Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզուն», գրեց մի շարք պահանջներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեցան հայ մանուկի ազգային դաստիարակության կազմակերպման հարցում: Մանդինյանը գտնում էր, որ

մանուկի աշխարհայացքի կազմավորման գործում մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե նրան հենց սկզբից ընթերցանության ինչպիսի նյութ է մատուցվում: «Հին հայտնի ճշմարտություն է,— շարունակում էր Մանդինյանը,— թե լեզուն, աշխարհը, ժողովուրդը,— ահա՛ սոքա են այն երրորդությունը, որ ազգության միությունն են կազմում: «Ընթերցարանի» բովանդակությունն էլ պետք է լինի, նախ՝ լեզուն, որով որ ժողովուրդը մտածում և ըմբռնում է, երկրորդ՝ վայրերը, որի վրա որ ժողովուրդը այնպես կազմվել է, ինչպես որ նա կա, և երրորդ՝ զարգացման ընթացքը, որով որ նա այդ դրությանը հասել է»[1]:

Այս առումով էլ Մանդինյանն առաջարկում էր ընթերցարանում բացահայտել հայի խաղաղասիրությունը, քաջությունը, հայրենասիրությունը, օրինակներ բերել նշանավոր հայերի կյանքից, տպագրել ազգային առածների, հնչերանների նմուշներ, ծանոթացնել մանուկին հայրենի երկրի առանձնահատկություններին, ազգային ծեսերին ու սովորություններին, տեղ տալ նաև նոր գրականության գործիչներին՝ Աբովյանին, Սայաթ-Նովային, Սրվանձտյանցին, Բաֆֆուն և ուրիշների:

1878 թ. լույս տեսավ Մանդինյանի կազմած «Նահապետական և հայրենի աշխարհ» դասագիրքը, որը նախատեսված էր երրորդ տարվա ուսուցման համար: 1880 թ. հրապարակ եկան նաև «Ազգային ընտանեկան աշխարհը» (առաջին տարի) և «Ազգային դյուցազնական աշխարհ» (երկրորդ տարի) դասագրքերը: Սրանցում ականավոր մանկավարժը իրականացրեց իր գաղափարները՝ առաջնակարգ տեղ հատկացնելով ազգային նյութերին, հրաժարվելով թարգմանական հոդվածների օգտագործումից: Մանդինյանի գործունեությունն ուսումնասիրած Ա. Գ. Դանիելյանն այդ առթիվ գրում է, որ «դա առաջին և լուրջ քայլն էր հայկական բովանդակությամբ ընթերցարան տալ հայ մանուկին, ապա և հայ մարդուն հայ դաստիարակելու համար»[2]:

Ընթերցարաններում տեղ գրավեցին հայկական էպոսը, ազգային մատենագրությունը, ժամանակակից գրական մշակները: Հայ մամուլն ու գործիչները ողջունեցին Մանդինյանի նորամուծությունը, սակայն չխուսափեցին նաև քննադատել եղած լուրջ թերությունները, որոնցում արտահայտվում էր նրա հիմնական թուլությունը՝ մանկական գրողի ձիրքի պակասը: Դասագրքերը նաև

---

1 «Փորձ», 1877, № 4, էջ 351—352:

2 Ա. Գ. Դանիելյան, Սեդրակ Մանդինյան, էջ 145:

կատված էին երեխայի անմիջական շրջապատից և կրում էին կրոնա-բարոյախոսական թեքում: Մանդինյանը կարողացավ միայն սկզբունքորեն լուծել ազգային ընթերցարանի բովանդակության հարցը, բայց ի վիճակի չեղավ գործնական հաջող ձևավորում տալ իր տեսական ճիշտ դրույթներին: Այս բանն ինքը՝ Մանդինյանն էլ էր զգացել և գտել, որ իր սկսած գործը պետք է զարգացվի ընդհանուր ուժերով:

Հայ մանկավարժները առաջնակարգ նշանակություն էին տալիս նաև ռուսաց լեզվի դասագրքեր ստեղծելուն: Նրանք գտնում էին, որ հայ մանուկը պետք է սովորի ռուսերենը այդ նպատակի համար հատուկ կազմված դասագրքերով, որտեղ անհրաժեշտ է հաշվի առնել տեղի պայմանները, հայ միջավայրի առանձնահատկությունները և ոչ թե նույնությամբ ընդօրինակվի Ռուսաստանում հրատարակված դասագիրքը, որը նախատեսված էր ռուս մանուկի համար: Այս նկատառումներով էլ հենց կազմվեցին Ն. Տեր-Հակոբյանի, Կ. Տեր-Դավթյանի, Ստ. Նազարյանցի դասագրքերը: Մանդինյանը ևս իր ներդրումը կատարեց՝ հրատարակելով մի դասագիրք և ռուսաց լեզվի դասավանդման ուղեցույց: Բացի այդ, հայ դպրոցներում օգտագործվում էին նաև Ուշինսկու, Պաուլսոնի, Ռոդոնեժսկու և այլոց դասագրքերը:

Ոչ պակաս կարևորություն ուներ թվաբանության դասագրքի ստեղծումը, քանի որ թվաբանությունը հիմնական առարկաներից մեկն էր: Այս հարցում ևս ձգտում կար մոտեցնելու թվաբանության առարկան կյանքի պահանջներին, հրաժարվելու մեխանիկական ուսուցումից և գործնական դիտելիքներ տալու աշակերտին: 1860-ական թվականներին փորձեր արվեցին այդ ուղղությամբ: Պետերբուրգի հայ ուսանողները 1869 և 1871 թթ. թարգմանեցին ու հրատարակեցին Դրուբեի ու Մասեի թվաբանության դասագրքերը: Ապա Թիֆլիսում Մ. Սիմոնյանցը փոխադրեց Եվտուշևսկու դասագիրքը: 1881 թ. Ս. Մանդինյանը գերմաներենից փոխադրեց Հենչելի «Բանավոր և գրավոր հաշվելու խնդիրներ» ձեռնարկը և ապա «Կյանքի հանգամանքների համեմատ թվաբանությունը» ըստ Գոլչի: Մանդինյանն այս դեպքում ևս աշխատել էր հնարավորին չափ տեղայնացնել դասագրքերը և մոտեցնել կյանքին: Բացի սրանցից, հայ դպրոցներում օգտագործվում էին նաև Գևորգևկյանի ու Պանճուլազյանի և Վարձելյանի թվաբանության դասագրքերը:

Հաճելի նորություն էին Եղնիկ Երզնկյանի և Ղ. Հովսեփյանի երգեհոնային ձեռնարկները տարրական դպրոցների համար:

Հիմնականում վերը նշված այս դասագրքերով էին ուսուցանվում հայկական մասսայական դպրոցներում ավանդվող գլխավոր առարկաները։ Եթե մինչև 1870-ական թվականները դպրոցը զգում էր դասագրքի սուր կարիք, ապա մանկավարժության զարգացումը հետագայում մեղմացրեց այդ կարիքը։ Սակայն վատն այն էր, որ ինչպես մի շարք այլ, այնպես էլ դասագրքերի հարցում միասնություն չկար։ Էջմիածինը դպրոցներին հանձնարարում էր հրապարակի վրա եղած գրեթե բոլոր դասագրքերը, դրանց ընտրությունը թողնելով հիմնականում ուսուցչի ճաշակին ու ցանկությանը։ Այս հանգամանքը զգալի շփոթ էր առաջացնում։

Բայց եթե քիչ թե շատ տանելի վիճակ էր ստեղծվել տարրական դպրոցի դասագրքերի հարցում, ապա նույնը չի կարելի ասել ավելի բարձր դասարանների անհրաժեշտ գրքերի մասին։ Այդտեղ հիմնականում իշխում էին թարգմանություններն ու փոխադրությունը։ Շատ դեպքերում բարձր դասարանցիներն ստիպված էին գրի առնել ուսուցչի պատմածը, որպեսզի ձեռքի տակ սովորելու նյութ ունենային։ Համեմատաբար լավ էր հայոց պատմության ու աշխարհագրության դասագրքերի վիճակը։ Հրապարակի վրա կային հայոց պատմության մի քանի համառոտ ձեռնարկներ, որոնք, սակայն, զգալի թերություններ ունեին, վերացական էին, նյութը հասցնում էին մինչև հայկական թագավորության վերջը և դրանով սահմանափակվում։ Այս բացը զգալիորեն լրացրեց Ստ. Պալասանյանն իր «Պատմություն հայոց» գրքով, որը լույս տեսավ 1890 թ.։ Հայաստանի աշխարհագրությունն ավանդվում էր Ամբ. Գալֆայանի գրքով, իսկ 1881 թ. լույս տեսավ նաև Ա. Տեր-Հակոբյանի «Ֆիզիկական ժողովրդական աշխարհագրություն Հայաստանի» դասագիրքը։

Ընդհանուր պատմության և աշխարհագրության դասագրքերի մեջ կային և՛ թարգմանություններ, և՛ կոմպիլյացիոն գործեր, որոնց հեղինակներն էին Հ. Ղուկասյանը, Պ. Սիմոնյանը, Ն. Սիմոնյանը, Սաֆարյանը և ուրիշներ։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի պատմությանն ու աշխարհագրությանը, ապա այդ առարկաները ավանդվում էին ռուսերեն և Ռուսաստանի դպրոցներում ընդունված դասագրքերով։

Բնական գիտությունների՝ երկրաչափության, հաշվարկի, բուսաբանության, ֆիզիկայի, մարդակազմության, բնական պատմության դասագրքերը դերազանցապես փոխադրություններ կամ

թարգմանություններ էին, որոնք աստիճանաբար հրապարակ եկան և տեղ գրավեցին հայոց դպրոցներում:

Ուշագրավ երևույթ էին Մանդինյանի հրատարակած «Համառոտ մանկավարժություն» (1878) և Բահաթրյանի հրատարակած «Համառոտ դործնական հոգեբանություն» (1882) դրքերը, որոնք երկար ժամանակ օդտակար ձեռնարկ եղան հայ ուսուցիչների համար:

Այսպիսով, հայ դպրոցի վերելքին զուգընթաց, կազմավորվեց նաև նոր դասագիրքը, մշակվեցին ազդային դպրոցի դասագրքի սկզբունքները:

Հայ կրթական դործիչների և մամուլի ուշադրության կենտրոնում եղած մյուս կարևոր հարցը ազդային դպրոցների համար ուսուցիչների պատրաստումն էր: Ակնհայտ էր, որ նոր պայմաններում զարգացող դպրոցը չէր կարող դոյություն ունենալ հին ուսուցչական կադրերով, որ միայն առանձին բանիմաց մանկավարժների ջանքերը դեռևս բավարար չէին: Սկզբից ևեթ մամուլը ահազանդում էր ուսուցիչների կարող ուժերի խիստ պակասը: «Արարատը» 1869—1870 թթ. հարց էր դնում ազդային դպրոցներում նախապատրաստել որոշ թվով պատանիների՝ հետագայում նրանց մանկավարժություն սովորելու համար Եվրոպա ուղարկելու նպատակով: Հայ մանկավարժական մամուլի օրգաններն իրենց ծնունդը պատճառաբանում էին նաև նրանով, որ ցանկանում էին լրացնել մանկավարժական կրթության բացը: «Մեր ազդային ուսումնարանների համար այս րոպեիս մահու և կենաց խնդիր է լավ պատրաստված վարժապետներ ունենալու խնդիրը»[1],— դրում էր Վ. Բաստամյանը: «Որքան անբնական և անիմաստ է մեր վարմունքը,— արձագանքում էր նրան Խ. Աստիանեն,— մարմիններ — դպրոցներ— շինում ենք, բայց այդ մարմիններին հոգի— մանկավարժ-ուսուցիչ—տալու մասին մենք չենք հոդում»[2]:

Լազարյան ճեմարանն ի վիճակի չէր բավարարել հայ դպրոցի աճող պահանջները: Եվ հայացքներն ուղղվեցին դեպի ներքին օդակները: Նախ, սկսեցին լուրջ ուշադրություն դարձնել դպրոցներում մանկավարժական ժողովների կազմակերպման ու դրանց դերի բարձրացման վրա, դտնելով, որ այդ ժողովները միաժամանակ ընդօրինակման, ուսուցիչների դաստիարակման լավագույն դպրոց կարող են լինել: Մանկավարժական ժողովներում

---

1 «Դպրոց», 1875—76 թթ., № 6, էջ 217:

2 «Մանկավարժանոց», 1884, № 1, էջ 1:

էր, որ Ղ. Աղայանը, Ս. Բեգնազարյանը, Մ. Մանդինյանը, Ստ. Նազարյանցը և ուրիշներ պրոպագանդում ու կիրառում էին մանկավարժական նորագույն սկզբունքները: Սակայն հիմնական ուշադրությունը դարձվեց թեմական դպրոցների ու ճեմարանի վրա:

1874 թ. բժիշկ Ա.վ. Բաբայանը «Գյումրեցի» սոորագրությամբ երկու գրքույկ տպագրեց, որտեղ կոչ էր անում էջմիածնին և հայ հասարակությանը միջոցներ ձեռնարկել ապագա ուսուցիչների մանկավարժական կրթության գործը կարգավորելու համար:

Իհարկե, պայմաններն ու հնարավորությունները թույլ չտվեցին ուսուցչական հատուկ հաստատություն ստեղծել: (Ջիրականացվեց նաև Լազարյան ճեմարանը Անդրկովկաս տեղափոխելու Գևորգ կաթողիկոսի ձգտումը): Մնում էր բարձրացնել եղած քիչ թե շատ բարեկարգ դպրոցների մակարդակը, աշակերտներին տալ հնարավորին չափ առավել գիտելիքներ: Այս խնդիրը հայ մանկավարժները լուծեցին իրենց ինքնամոռաց, անձնուրաց աշխատանքով, որի շնորհիվ թեմական դպրոցների և մի քանի այլ ուսումնարանների (հատկապես իգական) շատ սաներ հնարավորություն ստացան մուտք գործել աղգային դպրոցները: Այս միջոցները, սակայն, չէին կարող վերջնական լուծում տալ ուսուցչական կադրերի պատրաստման հրամայական պահանջին, և այդ բացը մինչև վերջ էլ մնաց հայ դպրոցի ամենացավոտ կողմերից մեկը:

Միաժամանակ կարևոր միջոց ճանաչվեց ուսուցչական ընդհանուր ժողովների անցկացումը, որոնք լայն կիրառություն էին գտնում մի շարք երկրներում:

Դեռևս 1874 թ. օգոստոսին Վրաստանի թեմական տեսուչ Ս. Տեր-Սահինյանցի նախաձեռնությամբ գումարվել էր թեմի ուսուցիչների առաջին ժողովը, որին մասնակցել էր 60-ի չափ ուսուցիչ: Թեև այդ ժողովը հասարակական լայն արձագանք չէր գտել, սակայն ունեցել էր դրական ազդեցություն, նպաստել էր ուսուցիչների մակարդակի բարձրացմանը: Ժողովը մշակել էր ծխական դպրոցների ուսումնական ծրագրեր, ընտրել էր հանձնարարելի դասագրքեր, կազմակերպել էր փորձնական դասեր և դրանց քննարկումներ: Հ. Տեր-Հովհաննիսյանն իր ամսագրում գրում էր, որ «Այդ ժողովի մեջ հին ուսուցիչն իմացավ, որ այժմ չէ պահանջվում միայն կարդալ, գրել և համարել սովորացնել ժողովրդական ուսումնարանի աշակերտներին, այլ և կարևոր է ծանոթացնել նորան յուրյան շրջապատող բնության, հայրենիքի և աղգի հետ: Այս-

տեղ նա հասկացավ, որ յուրյան ունեցած գիտությունը և տեղեկությունները ուսուցչության համար բավական չեն, հարկավոր է ուրեմն, որ նախ ինքն զարգանա»[1]: 1874 թ. ժողովը զգալի դեր խաղաց Վրաստանի թեմի հայկական դպրոցների կյանքում:

Չորս տարի անց «Մանկավարժական թերթը» հարց բարձրացրեց նոր ուսուցչական ժողով հրավիրելու մասին: 1878—79 թթ. Թիֆլիսի հայկական դպրոցների մի խումբ ուսուցիչներ Գաբրիել արքեպիսկոպոսի նախագահությամբ երկար ժամանակ նիստեր էին գումարում դպրոցական նոր ծրագրեր մշակելու համար, սակայն այդ աշխատանքը հաջողություն չունեցավ: Հաջորդ, 1880 թ. ամռանը Թիֆլիսում տեղի ունեցավ Անդրկովկասի տարբեր վայրերից հավաքված ուսուցիչների ժողով, որը որոշեց ընդհանուր ուսուցչական ժողով հրավիրել: Կազմվեց ծրագիր: Կաթողիկոսը, հավանություն տալով այդ նախաձեռնությանը, կարգադրեց հօգուտ առաջիկա ժողովի քաղաքային եկեղեցիներից 10-ական, իսկ գյուղականներից՝ 5-ական ռուբլի հավաքել:

Ժողովի հրավիրումը ձգձգվեց և 1881 թ. հուլիսին տեղի ունեցած նոր հավաքի ժամանակ որոշվեց ժողովը հրավիրել հաջորդ տարի և լավ նախապատրաստել: Ընտրվեց մասնաժողով՝ ծրագիրը նախապատրաստելու համար, հատուկ կարգադրիչ հանձնաժողովը սկսեց միջոցներ հավաքել, մամուլը հանդես եկավ առաջիկա ուսուցչական ժողովին վերաբերող հոդվածներով ու դիտողություններով: Հասարակությունը այս անգամ լայն հետաքրքրություն հանդես բերեց ժողովի նկատմամբ: Դրամական որոշ օժանդակություն ցույց տվեցին Բաքվի «Մարդասիրական» և Թիֆլիսի «Բարեգործական» ընկերությունները: Գր. Արծրունին «Մշակում» պահանջում էր, որ Թիֆլիսի հայությունը գրկաբաց ընդունելություն ցույց տա գավառներից ժամանող ուսուցիչներին: «Արձագանքը» ժողովի առթիվ գրում էր. «Եվ մինչ Արևելք և Արևմուտք քաղաքական շահերի եռևից ընկած մեր օրերում մաքառում են միմյանց հետ ուժի և զորության արյունաշաղախ ասպարեզում... հայն պարապած է այն սրբազան գործով, որ օրհնել է երկինքը, քաղաքակրթությունը, առաջադիմությունը»[2]: Ժողովի նախօրյակին Թիֆլիսում լույս տեսավ «Վարժարան» ամսագրի առաջին համարը, բացվեց առաջին հասարակական ազգային մանկապարտեզը, նկարիչ Ս. Ներսիսյանը ժողովի համար նկարեց Մեսրոպ Մաշտոցի և Սա-

1 «Մանկավարժական թերթ», 1878, № 2, էջ 10:

2 «Արձագանք», 1882, № 27, էջ 417:

հակ Պարթևի դիմանկարները, քաղաքի հայությունը ճաշկերույթներ ու հանդեսներ կազմակերպեց պատգամավորների պատվին, տպագրվեց «Ուսուցչական ժողովի հարցերը» գրքույկը:

Այդ օրերին լույս տեսավ Գ. Խատիսյանի «Մանկավարժական խորհրդածություններ» գիրքը, որտեղ նա առաջիկա ժողովի կողմից դպրոցական ծրագրեր մշակելու գործին նպաստելու նպատակով առաջ էր քաշում մի շարք կարևոր հարցեր, հատկապես ընդգծում էր աշակերտներին գործնական գիտելիքներ հաղորդելու մեծ անհրաժեշտությունը: Ուսուցչական ժողովի առիթով լույս տեսան նաև Ա. Բահաթրյանի և Սոֆյա Բաբայանի գրքույկները, նվիրված ուսուցման մեթոդիկայի, հոգեբանության և նախադպրոցական հասակի երեխաների կրթության հարցերին:

1882 թ. օգոստոսի 20-ին բացվեց հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը: Ժամանակի գրեթե բոլոր աչքի ընկնող մանկավարժները՝ Ղ. Աղայանը, Պ. Պռոշյանը, Ս. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Ստ. Պալասանյանը, Ս. Բեկնազարյանը, Հ. Ղուկասյանը, Աբ. Հովհաննիսյանը, Գ. Բարխուդարյանը, Հ. Նազարյանը, Սոֆյա Բաբայանը, Գայանե Հովհաննիսյանը և շատ ուրիշներ ակտիվ մասնակցություն ունեցան ժողովին: Մոտ 200 մասնակիցների թվում կային Անդրկովկասի ամենատարբեր վայրերից եկած տարահասակ ու խայտաբղետ ազգատեսակով ուսուցիչներ: Կարգադրիչ հանձնաժողովը հույս ուներ մասնակից դարձնել նաև արտասահմանի հայ ուսուցչությանը և դրանով ժողովին տալ համահայկական բնույթ, բայց կարողացել էին ներկայանալ միայն Պոլսի երեք ներկայացուցիչներ: Այդ առիթով «Արձագանքը» սիրտոսանքով գրում էր. «Ժամանակն էր և շատ հարմար ժամանակն էր կապել այդ երկու վաղուց անջատված եղբայրներին մտավոր կապերով, հարաբերություն և համերաշխություն հաստատել նոցա մեջ, փոխ առնել և փոխ տալ տեղեկություններ, կարծիքներ, հմտություններ»[1]:

Ժողովը բանեմայ մանկավարժներից ընտրեց հատուկ մասնախմբեր՝ ըստ առարկաների ծխական և միջնակարգ դպրոցների ծրագրեր մշակելու համար: Կազմվեց օրինակելի դպրոց, որտեղ փորձնական-ցուցադրական դասեր էին տրվում և քննարկումներ արվում, կարդացվեցին մի շարք զեկուցումներ: Մայրենի լեզվի և նրա նշանակության մասին զեկուցում կարդաց նաև Գր. Արծրունին:

---

1 «Արձագանք», 1882, № 28, էջ 434:

20 օր տևած ժողովը հաստատեց ծխական դպրոցների առարկայական ծրագրերը, դպրոցական տոների օրերը, առաջարկություն եղավ ուսուցչական ուսումնարան հիմնելու մասին։ Որոշվեց, որ չորս տարի հետո պետք է հրավիրվի երկրորդ ընդհանուր ժողովը։ Ընդհանրապես քննվեցին բազմաթիվ դպրոցական հարցեր, սակայն առաջին անգամ լինելու հանգամանքը, ուսուցիչների մեծ մասի անփորձությունը և խնդիրների բարդությունը պատճառ դարձան երկար ու ձանձրալի վիճաբանությունների, հնարավորություն չըտրվեցին համաձայնության գալ մի շարք էական հարցերի շուրջը։

Բայց և այնպես, ժողովը մի բացառիկ երևույթ էր արևելահայ դպրոցի կյանքում։ Այն հնարավոր եղավ գլուխ բերել շնորհիվ հայ կյանքի ընդհանուր առաջընթացի, շնորհիվ այն բանի, որ դպրոցն իր զարգացմամբ, մանկավարժությունն իր ձեռքբերումներով հասունացել էին նման լուրջ ձեռնարկման համար։ Առաջին անգամ հայ շարքային ուսուցիչն զգաց, որ ինքը հասարակական մեծ նշանակություն է ստացել, առաջին անգամ նա լայնորեն հաղորդակից եղավ մանկավարժության նոր պահանջներին, ունկնդրեց հայ ականավոր մանկավարժների ցուցադրական դասերը։

Թեև հետագա տարիներին ստեղծված անբարենպաստ պայմանները հնարավորություն չտվեցին կիրառելու ժողովի նախագծումները և զարգացնելու նրա տրադիցիաները, այնուամենայնիվ ուսուցչական առաջին ընդհանուր ժողովի նշանակությունը չի կարելի անտեսել։ Ցարական ստատուսացող ռեակցիայի պայմաններում ժողովի հրավիրման փաստն իսկ բավական է, որպեսզի ապացուցվի, թե որքան էր խորացել հայ դպրոցի աշխարհականացումը, թե ինչպիսի դեր էին խաղում ազգային կրթության ծավալման ու կատարելագործման ուղղությամբ հայ աշխարհիկ գործիչները, որոնք իրենց նախաձեռնությամբ որոշում էին ուսուցչական ընդհանուր ժողով դումարել և իրենց ազդեցիկ խոսքն ասել մի հիմնարկության վերաբերյալ, որի իրավասությունը պաշտոնապես եկեղեցին էր։ Ժողովն իրենով նշանավորեց արևելահայ դպրոցական շարժման բարձրակետը։

* * *

Այժմ տեսնենք, թե քանակական ինչպիսի փոփոխություններ կրեց հայկական դպրոցը։

Հենց սկզբից պետք է նշել, որ հայ դպրոցի վիճակագրության գործը բավական անկանոն էր։ Էջմիածինը տեղերից ստանում էր

հակասական կամ ոչ լրիվ տվյալներ. երբեմն նույնիսկ նման հաղորդումներ չէին արվում: Միաժամանակ դպրոցների անկայուն վիճակը, տնտեսական ծանրաբեռնվածության պատճառով աշակերտների անկանոն հաճախումը հնարավորություն չէին տալիս քիչ թե շատ որոշակի տվյալներ ունենալ դպրոցների և աշակերտության քանակի մասին: Մեր մամուլում և գրականության մեջ հաճախ օգտագործվող թվական տվյալների տարբերությունը գալիս էր նաև մի այլ հանգամանքից: Որոշ ուսումնասիրողներ օգտվում էին Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի հրատարակած տվյալներից, որոնք ընդգրկում էին կովկասյան փոխարքայության սահմանները, որն ավելի մեծ տերիտորիա էր ընդգրկում, քան բուն Անդրկովկասը և միաժամանակ չէին արտացոլում ողջ ռուսահայ դպրոցի քանակական վիճակը: Ոմանք էլ օգտվում էին էջմիածնի սինոդի տվյալներից, որոնց մեջ կամ արտահայտված էր լինում ողջ Ռուսաստանի հայ դպրոցների թիվը, կամ միայն Անդրկովկասի հայկական չորս թեմերի վիճակագրությունը: Սա որոշ թյուրիմացությունների առիթ է տվել, երբ ուսումնասիրողները օգտագործել են թվերը և չեն նշել, թե դրանք կոնկրետ ինչ տերիտորիա են ընդգրկել:

Էջմիածնի սինոդի տվյալներով 1871 թ. Անդրկովկասի հայկական չորս թեմերում (Վրաստանի, Երևանի, Ղարաբաղի, Շամախու) եղել է մոտ 90 դպրոց (15-ը իգական), 4194 աշակերտով և 230 ուսուցիչով[1]: Ալ. Երիցյանը 1870 թ. համար նշում է 138 (11-ը իգական) հայկական դպրոց[2]. պարզ է, որ այստեղ հաշվի են առնված Ռուսաստանում գործող բոլոր հայ դպրոցները:

Այս թվերն սկսեցին աստիճանաբար աճել տարիների հետ, սակայն 1874—1875 թթ. թռիչք տեղի ունեցավ, և դպրոցների ու աշակերտների քանակը կրկնապատկվեց: Սրա պատճառն այն էր, որ 1874 թ. հուլիսի 19-ի կանոններից հետո էջմիածինն աշխատեց իր ենթակայության տակ կենտրոնացնել հայկական բոլոր դպրոցները, ներառյալ մասնավոր համարվող և խալֆայական տիպի դպրոցները: Դրանով նախ վերանում էր այդ դպրոցները փակելու վտանգը և ապա դրանք մտնում էին թեմական տեսուչների հսկողության տակ և ենթարկվում որոշ կարգ ու կանոնի:

1874 թ. կանոններից հետո բավական կարգի գցվեց վիճակագրության գործը: «Դպրոց» ամսագիրը 1875 թ. տպագրեց վիճա-

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 32:

2 «Արձագանք», 1882, № 11:

կադրական տվյալներ, որոնք պետք է համարել առաւել հավաստի, քանի որ դրանք հրատարակվել էին կաթողիկոսի թույլտվությամբ։ Տեսնենք, թե ինչ պատկեր էր ներկայացնում հայ դպրոցի վիճակագրությունը այդ տվյալների համաձայն[1].

Թեմեր	Արական	Իգական	Խառն	Ընդամենը	Աշակերտների թիվը	Ծախսերը	Ընդամենը	Ծախսվել է աշակերտի համար	Ուսուցիչների թիվը	Աշ. մեկին քանի ուս.
Վրաստանի և Իմերեթիայի	66	15	—	81	3038	674	3712	232	229	46
Երևանի	65	8	—	73	2652	437	3089	105	131	42
Ղարաբաղի	42	1	2	45	1217	18+47	1282	216	53	30
Շամախու	11	3	—	14	490	85	575	117	26	41
Ընդամենը Անդրկովկասում	184	27	2	213	7397	1214 +47	8658	670	439	40
Ատրպատականի թեմ	11	4	—	15	663	235	898	—	59	60
Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի	17	6	3	26	687	162 +68	917	—	57	35
Ընդամենը	212	37	5	254	8747	1611 +115	10473	670	555	41

Այսպիսով, Անդրկովկասի 213 հայկական դպրոցներում սովորում էր 9328 աշակերտ (թեմականների հետ միասին)։

1880 թ. դպրոցների թիվը մի փոքր պակասել՝ 192։ Դրա պատճառն այն էր, որ մինչ այդ էջմիածնի հնթակայության տակ մտցված մի շարք մասնավոր-խալիֆայական դպրոցներ (հատկապես Ղարաբաղի թեմում) չդիմացան ժամանակի փորձությանը և փակվեցին։ Սակայն դա չէր նշանակում դպրոցի նահանջ։ Ընդհակառակը, աշակերտության թիվը դնալով աճում էր. 1880 թ. Երևրամասի հայկական դպրոցներում սովորում էր 10194 աշակերտ, որից 2377-ը աղջիկ[2]։

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում շարունակվեց դպրոցների քանակական աճը։ Դրան հատկապես նպաստեց ռուս-

1 «Տե՛ս «Դպրոց», 1875—76, № 4, էջ 125—142։

2 Տվյալները վերցված են «Արարատ» ամսագրի 1880 թ. № 4-ից, էջ 170—171։

թուրքական պատերազմից հետո սկսված ազգային նոր վերելքը։ Որոշ նշանակություն ունեցավ նաև Կարսի Հայաբնակ մարզի միացումը Ռուսաստանին։ Կան մի շարք վիճակագրական ցուցանիշներ այդ շրջանի մասին, սակայն դրանցից ամենից ամբողջականը «Արձագանքի» 1882 թ. օդոստոսի 20-ի համարում տպագրված ավյալներն են, որոնք կազմել է պատմաբան Ադ. Սրիցյանը՝ հենվելով թեմական տեսուչների, մամուլի և Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի հաղորդագրությունների։ Այդ ավյալները որոշ չափով տարբերվում են իրարից և նա աշխատել է մոտավոր միջինն ստանալ։ Սրիցյանի ավյալներից ելնելով կարելի է կազմել մեզ հետաքրքրող վիճակագրական հետևյալ աղյուսակը 1882 թվականի համար[1] (տե՛ս հաջորդ էջում)։

Հաջորդ երկու-երեք տարիների ընթացքում ևս շարունակվեց դպրոցների աճը։ Էջմիածնի սինոդում եղած ավյալների համաձայն, որոնք ստացվել էին թեմերից առանձին-առանձին, առ մեկը հունվարի 1885 թ. Անդրկովկասի հայկական դպրոցները հետևյալ պատկերն էին ներկայացնում[2].

Երևանի թեմ՝ 103 դպրոց, որից 15-ը՝ իգական
Վրաստանի և Իմերեթիայի թեմ՝ 80 դպրոց (18-ը իգական)
Ղարաբաղի թեմ՝ 24 դպրոց (3-ը իգական)
Շամախու թեմ՝ 11 դպրոց (2-ը իգական)
Կարսի և Բաթումի վիճակ՝ 52 դպրոց (3-ը իգական)։

Ընդհանուր առմամբ կար 270 հայկական դպրոց, որից 41-ը իգական էր։ (Այստեղ հաշվված են նաև թեմական դպրոցները և Թիֆլիսի 5 ու Ախալցխայի 1 մանկապարտեզները։ Կարսի և Բաթումի վիճակի 52 դպրոցից 24-ը ավյալները հայտնելուց մեկ ամիս առաջ փակվել էին ուսուցիչ չունենալու պատճառով)։

Բերված թվերը ցույց են տալիս, որ 10—15 տարվա ընթացքում հայ դպրոցը ընթացել է վերելքի ուղիով ոչ միայն կազմակերպական-մանկավարժական տեսակետից, այլև քանակական ցուցանիշներով։ Աղյուսակներից երևում է, որ Անդրկովկասից դուրս հայկական դպրոցները սկզբում ավելի բարվոք վիճակում են եղել, ունեցել են ուսուցիչների և աշակերտների առավել քանակություն, նյութական միջոցներով ավելի ապահովված են եղել։ Սակայն աստիճանաբար Անդրկովկասն սկսել է գերակշռող տեղ գրավել (հետագա տասնամյակում այդ գերակշռությունն ավելի շոշափելի դարձավ)։

---

1 Տվյալները տե՛ս «Արձագանք», 1882, № 27, էջ 427։

2 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 5, 11 և հաջորդ էջերը։

Թեմեր	Արարկան վերցված	Դադարած վերցված	Ներկայումս վերցված	Աշակերտների թիվը	Աշխատասիրների թիվը	Ընդհանուր աշակերտների թիվը	Ուսուցչի դեր	Դպրոցների վրա կատարած ընդհանուր ծախսը (սուրհկան)	Ցուցադրված տարեկան միջին թիվը	Ամսական միջին հաշվով տարեկան (հիմնական)	Ցուցադրված տարեկան միջին թիվը	Աշակերտների միջին թիվը քան մեկ վերցված
Վրաստանի և Իմերեթիայի	81	22	103	4072	1611	5683	267	128764 ռ.	1250 ռ.	482 ռ.	22,5 ռ.	55
Երևանի	79	16	95	3323	762	4085	163	106284	1118	652	26	43
Կարսի նահանգի (վիճակ)	6	1	7	440	89	529	17	4900	700	300	9	75
Ղարաբաղի	13	3	16	1095	171	1266	54	56346	3521	1043	44	80
Շամախու	7	4	11	610	148	758	37	32045	2913	893	42	70
Ընդամենը Անդրկովկասում	186	46	232	9540	2781	12321	538	328339	1415	610	26	53
Ախալցխայի	22	16	38	1275	680	1955	130	109700	2887	844	56	52
Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի	39	21	60	1740	862	2602	164	124860	2081	761	48	43
Ընդամենը	247	83	330	12555	4323	16878	832	562899	1705	675	33	51

Անդրկովկասից դուրս եղած դպրոցների նյութական գերազանցությունը բացատրվում է նրանով, որ հայ բնակչությունը Ռուսաստանում մեծ մասամբ ապրում էր քաղաքներում և դպրոցներին օժանդակելու ավելի մեծ հնարավորություն ուներ, քան Անդրկովկասի գյուղական հայ բնակչությունը:

Ինչ վերաբերում է ուսուցիչների միջին աշխատավարձին, ապա Երիցյանի տվյալներն այստեղ չափազանցված են, քանի որ նա աշխատավարձի միջին չափն ստանալու համար դպրոցների վրա ծախսված ընդհանուր գումարը բաժանել է ուսուցիչների թվի վրա: Այնինչ այդ ծախսերի մեջ մաիլ են նաև մի շարք այլ գումարներ՝ շենքերի պահպանությունը, գույքի ձեռքբերումը, վառելանյութը և այլն: Այս գումարները դուրս գալուց հետո ուսուցիչների ռոճիկի միջին թիվը խիստ կնվազի: Հենց ինքը՝ Երիցյանը մի այլ առիթով[1] նշում է, որ Թիֆլիսում 1881 թ. հայ ուսուցչի միջին տարեկան ռոճիկը 300 ռ. էր, և դա դեռ Թիֆլիսի պես կենտրոնում: Ընդհանրապես, դժվար է պարզորոշ թիվ հիշատակել ուսուցիչների միջին ռոճիկի համար, քանի որ այն խիստ անկայուն էր և կախված էր տվյալ բնակավայրի նյութական հնարավորություններից: Գյուղական վայրերում մեծ մասամբ ռոճիկը տատանվել է 60—150 ռուբլու սահմաններում, քաղաքներում հասել է մինչև 300—400 ռուբլու: Ինչ խոսք, թեմական և մի շարք այլ աչքի ընկնող դպրոցներում ուսուցիչներն ստացել են ավելի մեծ վարձատրություն:

Նույն վիճակն է եղել և ուսման վարձի հարցում, քանի որ դարձյալ հնարավոր չէր որոշակի գումար սահմանել: Ամենատարբեր չափի ուսման վարձ է եղել տարբեր դպրոցներում: Օրինակ. Մեղրու ծխական դպրոցում սահմանված էր 8, 10, 12 և 14 ռուբլու ուսման վարձ՝ նայած ծնողների կարողությանը[2]: 1884 թ. Ալեքսանդրապոլի վիճակային դպրոցի 747 աշակերտներից 199-ը ուսանում էին անվճար, 504-ը վճարում էին 4—12 ռ., 44 հոգի՝ 12—24 ռուբլի: Բացի այդ, 57 չքավոր աշակերտներ ձրի պիտույքներ էին ստանում դպրոցից[3]:

1875 թ. եղած 555 ուսուցիչներից բարձրագույն կրթություն են ունեցել 16-ը, 240-ը ավարտել են հայկական թեմական և միջնակարգ դպրոցները, իսկ մնացածը պետական կամ մասնավոր դպրոցների շրջանավարտներ էին: Ուսուցիչների ընդհանուր թվից

---

1 «Արձագանք», 1884, № 9, էջ 132:

2 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 50, էջ 120:

3 Տե՛ս «Արձագանք», 1884, № 29, էջ 442:

388-ը աշխարհականներ էին, 167-ը՝ հոգևորականներ (գերազանցապես կրոնուսույցներ)։ Կար 48 կին ուսուցիչ։

Ա. Երիցյանը, ելնելով Ռուսաստանում բնակվող մեկ միլիոն հայերի թվից, աշխատում է մոտավոր պատկեր կազմել ուսման մակարդակի մասին։ Ըստ նրա տվյալների[1], մեկ դպրոցը Շվեյցարիայում ընկնում է 280 բնակչին, Ֆրանսիայում՝ 517, Ռուսաստանում՝ 3098, իսկ Ռուսաստանի հայերի մոտ՝ 3058 բնակչին։ Նույն հերթականությամբ մեկ աշակերտը ընկնում է 5, 9, 77 և 59 բնակչի։ Միջին հաշվով Ռուսաստանի բնակիչը դպրոցի վրա ծախսում էր 9 կոպեկ, հայը՝ 56 և շվեյցարացին՝ 1 ռ. 50 կոպեկ։

Որոշ փաստաթղթերում 1870-ական թվականների վերջերին եղած հայկական դպրոցների թիվը հասցվում է 500-ի, իսկ աշակերտներինը՝ 30 հազարի։ Սա ակնհայտ չափազանցություն է և դալիս է նրանից, որ հայկական որոշ շրջաններ, ցանկանալով շեշտել ցարական բյուրոկրատիայի հասցրած վնասը հայ կրթական գործին, արհեստականորեն մեծացնում էին հայկական դպրոցներին վերաբերող թվերը, դպրոցներ, որոնք փակվեցին 1885 թ.։ Նման ճանապարհով էլ 500 և 30 հազար թվերը մտել են մի շարք պաշտոնական զեկուցագրերի ու փաստաթղթերի մեջ։

Սրան հակառակ, ցարական վարչարարների զրագրություններում և հաշվետվություններում համապատասխանաբար նվազեցվում էին հայ դպրոցին վերաբերող թվային ցուցանիշները։ Օրինակ, վիճակագրական տեղեկությունների 1898 թ. հրատարակված ժողովածուում 1878—1883 թթ. համար հայ դպրոցների տարեկան միջին թիվը համարվում էր 200-ը[2]։

Երկու խոսք Անդրկովկասի պետական և ոչ հայկական մյուս դպրոցների մասին։ 1863 թ. Կովկասյան փոխարքայության սահմաններում կար ընդամենը 43 դպրոց, որոնք հնթարկվում էին ժողովրդական լուսավորության մինիստրությանը, իսկ 1871 թ. այդ թիվը հասավ 56-ի[3]։ 1870-ական թվականներին Կովկասում ևս սկսվեց ընդհանուր դպրոցական վերելք և արդեն 1878 թ. ԺՀՄ-ին հնթակա դպրոցների թիվը հասավ 607-ի, ավելի քան 35 հազ. աշակերտով, որից տարրական էին 558-ը՝ մոտ 25 հազար աշակեր-

---

1 «Արձագանք», 1882, № 11.

2 «Свод статистических сведений по учебн. заведениям Кавк. учеб. округа за двадцатилетний период—1878—1898», стр. 61.

3 «Отчет по главному упр-нию Наместника Кавк-го...», Тифлис, 1873, стр. 259.

տող։ Մնացածները միջնակարգ դպրոցներ, քաղաքային և գավառական ուսումնարաններ էին։

Բացի այդ, կային երկու հազարից ավելի այլ դպրոցներ, որոնք անմիջապես չէին ենթարկվում պետական ուսումնական վարչությանը (հայկական դպրոցները ևս մտնում էին այս շարքի մեջ)։ Դրանց թվում էին 63 մասնավոր, 49 ուղղափառ եկեղեցական-ծխական և մի շարք այլ տիպի դպրոցներ։ Սրանց մեծ մասը (1557 դպրոց, 15818 աշակերտ) մահմեդական խիստ ցածր մակարդակ ունեցող դպրոցներ էին, որոնց ցարական իշխանությունները որևէ նշանակություն չէին տալիս։ Արբունի չհամարվող այս բոլոր դպրոցներում աշակերտների թիվը անցնում էր 41 հազարից։

Ոչ հայկական դպրոցներում ևս սովորում էին զգալի թվով հայ աշակերտներ. նրանց տոկոսը հատկապես բարձր էր մասնավոր դպրոցներում (64,5 տոկոս), պետական արական միջնակարգ և քաղաքային դպրոցներում (20—30 տոկոս)։ Մոտավոր հաշվումներով Կովկասի ոչ հայկական դպրոցներում հայերի թիվը 1878 թ. հասնում էր 5000-ի։ Սրան պետք է ավելացնել նաև էջմիածնից անկախ հայ-կաթոլիկական 24 դպրոցները իրենց 887 աշակերտներով։ Ընդհանուր առմամբ կստանանք 18 հազար հայ աշակերտ, որոնք 1878 թ. սովորում էին ռուսահայ դպրոցներում և Կովկասի ոչ հայկական ուսումնարաններում[1]։

Վիճակագրական այս տեղեկություններին հետաքրքիր կլինի ավելացնել նաև «Արձագանքի» հրապարակած տվյալները հայ ուսանողության թվի մասին, որոնք նա քաղել է արտասահմանի հայ մամուլից։ Ըստ «Արձագանքի» հաղորդագրության Պետերբուրգում հայ ուսանողների թիվն է 110 մարդ, Մոսկվայում՝ 130, Խարկովում՝ 30, Վարշավայում, Դորպատում, Կազանում, Օդեսայում և Կիևում միասին վերցրած՝ 30, ընդամենը Ռուսաստանում՝ 300 ուսանող։ Համապատասխանաբար Ֆրանսիայում եղել է 130, Գերմանիայում և Շվեյցարիայում՝ 40, Եվրոպայի մյուս երկրներում՝ 30 ուսանող։ Այսպիսով հայ ուսանողների ընդհանուր թիվն էր 500[2]։ Հավանաբար այս տվյալները վերաբերում են 1880-ական թվականների կեսերին։

---

1 *Տվյալները վերցված են* «Отчет попечителя Кавк. учеб. округа о состоянии учебных заведений за 1878 г.» *գրքից։*

2 «*Արձագանք*», *1888, № 11, էջ 139։*

* * *

XIX դարի կեսերի ազգային զարթոնքը, որն իր հետ բերել էր մի պատկառելի լուսավորական շարժում, 1870-ականների սկզբներից ընթացավ ավելի լայն ու խորացող հունով: Կյանքի բոլոր բնագավառներում սկսված աշխույժը մեծապես խթանեց հայ հոգևոր կյանքի տեղաշարժմանը: Այս շրջանում էր, որ լայնորեն սկսեցին կենսագործվել այն լուսավոր գաղափարները, որոնց համար մաքառել էին հայ ժողովրդի լավագույն զավակները: Սա մի շրջան էր, երբ ժողովրդին լուսավորելու բարոյն ու կոնկրետ գործը ավելի ամուր շաղկապվեցին իրար և ավելին պայմաններին համապատասխանող ցանկալի արդյունքներ: Եթե 1850—60-ական թվականները ավելի շատ կրթական գործի գաղափարական նախապատրաստության տարիներ էին, ապա հաջորդ մեկ-մեկուկես տասնամյակը եղավ ազգային նոր դպրոցի ձևավորման ու ամրապնդման ժամանակաշրջան:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

1884 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ԿԱՆՈՆՆԵՐԸ: ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Ընդհանուր ռևակցիայի սաստկացումը Երկրում: Նիկոլայի պաշտոնագիրը: Հայկական դպրոցները սահմանափակելու կուրս. 1883 թ. պետական խորհրդակցությունը: Երևանյան դեպքերը և սեպարատիզմի խրտվիլակը: 1884 թ. փետրվարի 16-ի կանոնները: Սինոդի անսպասելի դիմադրությունը: Դպրոցների փակումը: Հայ հասարակության վերաբերմունքը: Կաթողիկոսական նարցը: Կառավարական նոր խորհրդակցության «բացատրությունները» և դպրոցների վերաբացումը: 1886 թ. դպրոցական կանոնները: Յանովսկու ժողոյթները: 1889 թ. խորհրդակցությունը: Նոր իրավիճակ: Ամփոփում:

Յարական Ռուսաստանի մուտքը 1880-ական թվականները նշանավորվեց մի շարք իրադարձություններով, որոնք արմատապես փոխեցին կառավարության դիրքորոշումը սրտաբին և, մանավանդ, ներքին քաղաքականության հարցերում:

Յարիզմն ի վիճակի չեղավ արմատախիլ անել 60-ական թվականների ազատաշունչ դաղափարները: Կապիտալիզմի հարաճուն զարգացումն էլ ավելի սրեց դասակարդային հակասությունները: Սկսեց ձևավորվել բանվոր դասակարդը, որի շարքերում երևացին հեղափոխական կազմակերպություններ: Գյուղացիական հուդումները 1870-ականներին վտանգավոր չափերի հասան: Երկիրը կանդնեց հեղափոխական իրադրության առաջ: Տնտեսապես ամրապնդվող բուրժուազիայի շարքերում սկսվեցին երկչոտ խոսակցություններ սահմանադրական սկզբունքների մասին:

Կառավարությունը հուսահատ փորձեր էր անում ստեղծված վիճակից դուրս դալու համար: 1880 թ. սկզբին իշխանության կոչվեց լիբերալ համարվող կոմս Լորիս-Մելիքովը, որը հեղափոխա-

կան շարժման դեմ հանդուն պայքար ծավալելու հետ մեկտեղ, սկսեց սահմանադրական միրաժներ առնել հասարակության «բարեմիտ» մասի հետ։ Այս վիճակը շարունակվեց մինչև այն պահը, երբ Պետերբուրգում պայթից նարոդնիկական տեռորիստի ռումբը, և 1881 թ. մարտի 1-ին Ալեքսանդր II-ն ընդմիշտ հրաժեշտ ավեց իր գահին։

Հեղափոխական ուժերի թուլությունը, բանվորական շարժման դասակարգային ուրույն գծի բացակայությունը, լիբերալ հասարակության քաղաքական տհասությունը և երկչոտությունը հնարավորություն ավեցին մարտնչող ազնվականությանը գլուխ բարձրացնել և նոր ցարին թելադրել իր կամքը։ Ալեքսանդր III-ի խորհրդատուն գարձավ նրա դաստիարակը՝ նիկոլաևյան ռեժիմի պայմաններում աճած Կ. Պ. Պոբեդոնոսցևը, որի քաղաքական հայացքների հիմնական մեկնակետերն էին՝ ոչնչով չսահմանափակված ինքնակալությունը, ծայրահեղ վելիկոռուսական շովինիզմը և մարտնչող ուղղափառությունը։ Մեկ տարի անց ներքին գործերի մինիստր նշանակված Դ. Տոլստոյը հևալ լրացնելու պակասը։

Տոլստոյ-պոբեդոնոսցևյան ռեժիմը մի առանձին հանդուգն ձեռնամուխ եղավ ժողովրդական լուսավորության վերափոխմանը։ Հատուկ ուշադրություն գարձվեց դասային սկզբունքի վերականգնմանը և կրոնական ոգու ուժեղացմանը։

Ժողովրդական լուսավորության ասպարեզում սկսված վճռական ռեակցիան ավելի ծանր դրություններ ստացավ ազգային ծայրամասերում։ Ընդհանրապես 1880-ական թվականների սկզբից «խիստ ուժեղացավ ազգային ճնշումը։ Մայրենի լեզուներով հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսացմամբ, ուղղափառության սինոդոդական տարածմամբ։ Մարտնչող նացիոնալիզմի դաղափարախոսությունը ստացավ կառավարության ամենայն աջակցությունը։ Հրեական բնակչության հալածանքը բարձրացվեց պետական քաղաքականության աստիճանի»[1]։

«Ազգային ճնշումը հատկապես որոշակի արտահայտություն դտավ մշակույթի ասպարեզում, որտեղ այն նախ և առաջ դրսևորվեց դպրոցների ու հասարակական կյանքի այլ կողմերի ռուսականացման մեջ, և կրոնական ասպարեզում»[2]։

---

1 «История Коммунистической партии Советского Союза», т. I, М., 1964, стр. 93.

2 «История СССР», т. II, М., 1965, стр. 226.

Ազգային հալածանքների ուժեղացումը մի կողմից թևալղրված էր երկրի «այլազգիներին» ռուս ազգի մեջ ձուլելու միապետական-կալվածատիրական կարգերի որդեգրած քաղաքականությամբ, մյուս կողմից ծայրամասերի ազգային ղարթոնքը՝ ծայր առած ազգային-բուրժուական շարժումները, խեղդելու ձգտմամբ։

Այսպիսով, կապիտալիստական հարաբերությունների բուռն ղարգացումը առաջ էր բերել երկու հակադիր պրոցես. մի կողմից ծայրամասերում լայն թափով առաջ էր գնում բուրժուական ազգերի կազմավորումը, որն ուղեկցվում էր այդ պրոցեսին հատուկ բազմաթիվ նոր երևույթներով՝ ազգային լուսավորության և մշակույթի աննախընթաց վերելքով։ Այս ձգտմանը հակադրվում էր պաշտոնական Ռուսաստանը՝ հանձին վեր բարձրացող բուրժուազիայի և բուրժուականացող կալվածատիրության վերնախավերի։ Կապիտալիզմի ղարգացումը թևալղրում էր նրանց ստեղծել մեկ միասնական շուկա, անարգել օգտվել հումքի աղբյուրներից։ Իսկ ծայրամասերի դիմադրությունը խոչընդոտում էր այդ ձգտման իրականացմանը։

Կապիտալիզմի ղարգացումը, խթանելով ազգային ղարթոնքը, միաժամանակ ուժեղացրեց այդ ազգերի դեմ ուղղված ճնշումը։ Ցարիզմի և ազգային փոքրամասնությունների միջև պայքարը գնալով սրվեց. նրանք աշխատում էին փոխադարձաբար ժխտել միմյանց, և որքան խորանում էին բուրժուական հարաբերությունները, այնքան երկու կողմից էլ ուժեղանում էր ճնշումը, ու պայքարը գնալով ընդունում էր սպառնալի կերպարանք։

Ազգային հարցի խճճված հանգուցակետերից մեկն էլ Անդրկովկասն էր։ Պատահական չէր, որ 80-ական թվականներին սկսված քաղաքական շրջադարձն իր ամենաէական կողմերով դրսևորվեց նաև այստեղ։ 1881 թ. Կովկասի փոխարքայության վերացումը ձևական բնույթ չէր կրում։ Այն փոխարինվեց քաղաքացիական կառավարչությամբ, որն ուղղակիորեն ենթարկվելով կենտրոնական կառավարությանը, եռանդով սկսեց կենսագործել ընդհանուր գաղութային քաղաքականություն։ Կառավարչապետի պոստում փորձված բյուրոկրատ, իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովի նշանակումն իսկ շատ բան էր ասում։ 1905 թ. բարոն Նոլդեն ցարին գրած զեկուցագրում այդ առթիվ հաղորդում էր. «1881 թ. փոխարքայությունը վերացվեց։ Այդ փոփոխության հետ համընկավ Կովկասի բարձրագույն իշխանության հայացքների փոփոխությունը։ Կովկասյան նոր վարչության ամենաառաջնակարգ

խնդիրը ճանաչվեց տեղացիների ոուսացումը, իսկ դպրոցը՝ դրան հասնելու լավագույն միջոցը»[1]:

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայերի ազգային-ազատագրական շարժումը նոր թափ ստացավ: Բեռլինի վեհաժողովից հուսախաբվելուց հետո՝ «Ազգային գայրույթը վերածեց համառ պայքարի հոգեբանության և ասպարեզ բերեց իր գործնական նշանաբանը՝ «Եթե չեն տալիս մեր ազատությունը, ապա ինքներս կնվաճենք այն»[2]: Այս հոգեբանությունն ունեցավ և իր գաղափարախոսները, որոնց մեջ աչքի ընկնող դեր էին կատարում Ռ. Պատկանյանը, Րաֆֆին, Գր. Արծրունին: Ազգային-ազատագրական գաղափարներով ոգեշնչված շատ հայ հայրենասերներ սկզբնական շրջանում միամտություն ունեցան կարծելու, թե պայքարելով թուրքական բռնապետության դեմ և հրապարակայնորեն օգնելով արևմտյան իրենց եղբայրներին, նրանք ոչ մի չափով չեն շոշափում ռուսական միապետության շահերը: Սակայն նրանք շուտով դառնորեն հուսախաբ եղան:

Խճճվելով եվրոպական դիվանագիտության ոլորտներում, աշխատելով պահպանել իր միջազգային հեղինակությունը, ռուսական կառավարությունն սկսեց զգույշ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ: Անգլո-ռուսական հարաբերությունների սրումը, Բալկաններում ստեղծված խառը իրավիճակը, դիվանագիտական խաղերը Գերմանիայի և Ֆրանսիայի հետ ստիպում էին ցարիզմին ուժամանակ հաշտ ապրել սուլթանի հետ: Այս պայմաններում հետին պլան էր մղվում արևելյան հարցը և դրա հետ միասին հետաքրքրությունը հայերի նկատմամբ խիստ նվազում էր: Այժմ կարելի էր և բացարձակ ճնշումներ սկսել Ռուսաստանի հայերի նկատմամբ՝ առանց մտահոգվելու, որ դրանով արտասահմանի հայերը կարող են երես դարձնել ցարիզմից:

1882 թ. վերջին Գևորգ կաթողիկոսի մահը արագացրեց ցարիզմի գրոհը հայերի վրա. կաթողիկոսական աթոռը թափուր էր, բողոքի ուժեղ ձայն չէր լսվի և կարելի էր անկաշկանդ գործել:

Էջմիածնի և ընդհանրապես հայության նկատմամբ ցարական կառավարության պաշտոնական նոր վերաբերմունքը իր ձևակերպումն ստացավ Կովկասի փոխարքայի նախկին դիվանատան կառավարիչ բարոն Նիկոլայիի պաշտոնագրում, որ նա կազմել էր կառավարության հանձնարարությամբ 1883 թ., առաջիկա կաթո-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 86 հ. կ.

2 «Հայ նոր գրականության պատմություն», հատ. 3, Երևան, 1964, էջ 25:

դիվոսական ընտրությունները ցույց տրվելիք վերաբերմունքի պարզաբանման համար: (Երեք տարի անց այդ դաղտնի պայմանագիրը հայտնի դարձավ հայությանը և տպագրվեց արևմտահայ մամուլում):

Նիկոլային դտնում էր, որ նախկինում, ելնելով արտաքին քաղաքականության նպատակներից և ձգտելով արտաահմանին, և հիմնականում Պոլսի հայության մեջ տարածել ռուսական ազդեցությունը, կառավարությունը հավանություն է տվել կաթողիկոսական աթոռը արևմտահայ թեկնածուների կողմից դրավելուն: Սակայն Մատթեոսը և Գևորգը չեն արդարացրել իրենց վրա դրված հույսերը, աշխատել են վարել ինքնագլուխ քաղաքականություն, չեն ենթարկվել պետական շահերից բխող պահանջներին, վատաակել են անբարեհույս գործիչների համբավ: (Ցարական բյուրոկրատիայի համար տվյալ դեպքում բարեհուսության չափանիշ էր ռուս ազդության մեջ ձուլվելու չկամության աստիճանը, որն իրոք ուժեղ էր արտահայտված երկու կաթողիկոսների մոտ էլ):

Նիկոլային կառավարության վերոհիշյալ դիրքավորումը սխալ էր համարում, քանի որ արտաահմանի հայության համակրանքը Ռուսաստանի նկատմամբ, ըստ նրա, կապ չուներ էջմիածնի հեղինակության բարձրացման հետ, այլ բխում էր ռուսական կայսրության հզորությունից: Ուրևմն, եզրակացնում էր բարոնը, էջմիածնի ազդեցության բարձրացումը կարևորություն չունի և դրա համար էլ պետք է կաթողիկոս ընտրել ռուսահպատակ այնպիսի եկեղեցականի, որը պատրաստ կլինի կատարել կառավարության բոլոր ցանկությունները: «Համենայն դեպս, ո՛չ մեր կառավարության արժանապատվությունն, ո՛չ էլ մեր ներքին քաղաքականության շահերն չեն թույլ տալիս, որ Կաթողիկոսը մոռանար, թե նա Ռուսաց կայսեր հպատակն է և Ռուսաց օրենքների ենթակայն», — գրում էր Նիկոլային և եզրափակում՝ «Ձևերի մեջ փափուկ եղիր, գործի մեջ՝ ամո՛ր»[1]:

Եթե նախկինում ցարական բյուրոկրատիայի մի մասի նման դրուշացումները գոնե գործողության ուղենիշ չէին դառնում, ապա այս անգամ կառավարական շրջաններն փոխված իրադրության մեջ հավանություն տվեցին Նիկոլայիի առաջադրած քաղաքական գծին:

Դեռևս 1879 թ. սեպտեմբերին, երբ Ռուսաստանին միացված Կարսում հայ հոգևորականությունը երկու արական և մեկ իգական դպրոց էր բացել, հաջորդ օրն իսկ ոստիկանությունը, պատճառ բե-

1 «Արևելյան մամուլ», 1886, № 9, էջ 410:

բելով, որ դրա համար ստացված չի եղել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի համաձայնությունը, փակել նորաբաց դպրոցները։ Ռուսական «Գոլոս» լիբերալ թերթը այդ առթիվ գրում էր. «Հենց նոր այնքան հանդիսավորությամբ, իշխանության ներկայացուցիչների ներկայությամբ բացված դպրոցը ոչ պակաս հանդիսավորությամբ փակվեց»[1]։ Քաղաքում խիստ հուզում առաջացավ, մահմեդական բնակչության մեջ լուրեր տարածվեցին, որ մեդրեսեները ևս փակվելու են։ Ստեղծված վիճակին վերջ տվեց մխայն կաթողիկոսի միջամտությունը և դպրոցները բացվեցին։ Ցարական գործակալները ամեն առիթով հորդորում էին հայերին թողնել իրենց դպրոցները և մտնել արքունի կամ ուղղափառ հոգևորականության անօրինության տակ եղած ռուսական դպրոցները։ Նման մի փորձ Նուխիի գավառի վարդաշեն գյուղում մեծ հուզում առաջացրեց հայ գյուղացիների մեջ[2]։

Կովկասյան նահանգապետերը սկսել էին իրենց զեկուցագրերում խիստ բացասաբար արտահայտվել հայկական դպրոցների մասին, մի բան, որ նախկինում հազվադեպ էր։ 1879 թ. Երևանի նահանգապետը զեկուցում էր, որ հայկական «ծխական դպրոցների մեծ մասը հաղիվ թե կարողանա ծառայել որպես լուսավորություն և քաղաքացիականություն տարածող, հետևաբար, հայերի ժողովրդական կրթության գործը հաղիվ թե նպատակահարմար է մասնավոր ձեռքերում թողնել. անհրաժեշտ են կառավարական, հիշտ կազմակերպված դպրոցներ»[3]։

1882 թ. մարտի 12-ին կառավարչապետին ուղղած զեկուցագրում Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը դժգոհում էր հայ հոգևորականությունից այն բանի համար, որ նա հնդինակություն է վայելում, դպրոցներ է հիմնում, գոլում է ժողովրդի անցյալը, ազգային լեզուն։ Ժանդարմական շեֆը խիստ բացասաբար էր տրամադրված նաև հայկական թերթերի դեմ, որոնք «մշտապես նրանց (հայերի— Վ. Ե.) մեջ հակում են առաջացնում պաշտպանելու լեզուն, նրանց ավանդությունները և ընդհանրապես ազգությունը. այս նույն թեման գործիք է ծառայում նաև հայ հոգևորականության ձեռքին, որը հատկապես արտահայտվում է նրանց կողմից հայկական ժողովրդական դպրոցներ հիմնելու մեջ»[4]։ Այդ դպրոցները, ըստ ցարական ժանդարմի, սխալ ուղեով

---

1 «Голос», 1879, № 271.

2 ՏՀ՛ա ՀՊԿՊԱ, ֆ. 27, գ. 24, էջ 68—69։

3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1268, ց. 25, գ. 269, էջ 260 և հ. կ.։

4 Նույն տեղում, ֆ. 932, ց. 1, գ. 399, էջ 12։

էին ընթանում, նրանցում երբեմն հայտաբերվում էր արգելված գրականություն։ Այդ առթիվ զեկուցագրում ասված էր. «Վերջին ժամանակներս հետաքննություն է կատարվել հայկական ժողովրդական ուսումնարանի ուսուցիչ Կանանովի և ռեալական ուսումնարանի աշակերտ Սարաջևի վերաբերյալ՝ «Նարոդնայա վոլյա»-յի թերթիկի տարածման կապակցությամբ, որը, հավանաբար, հրատարակվել է 1881 թ. ամռանը Պետերբուրգում»[1]։

Հայ դպրոցի դեմ ծավալվող արշավանքում առաջին ջութակի վրա նվագում էր 1878 թ. Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու նշանակված Կ. Պ. Յանովսկին, վիլիկոռուսական նացիոնալիզմի ու ռեակցիայի մոլի մի պաշտպան։ Նա առանձով ձեռնամուխ եղավ արբունի ռուսական դպրոցների տարածմանը, որոնք պետք է դուրս մղեին ազգային դպրոցները։ Այդ նպատակով նա բազմաթիվ արգելքներ էր ստեղծում պետական հովանավորությունից զուրկ, մեծագույն դժվարություններով պահպանվող ազգային դպրոցների դեմ, դիմում էր վարչական-ոստիկանական իշխանությունների օգնությանը։ Միաժամանակ նա արբունի դպրոցներից առանձով դուրս էր մղում այլազգի կրոնի և լեզվի դասավանդումը, պատճառ բերելով, որ միջոցներ և պատշաճ դասատուներ չկան այդ առարկաների համար։ Իր «Հիշատակարանում» Վրաստանի թեմակալ Ա. Սեդրակյանը, այդ առթիվ բերելով Թիֆլիսի իգական գիմնազիայի օրինակը, գրում էր. «Մյուս տարօրինակ երևույթն այն է, որ գիմնազիոնն ունի ներկայումս 145 հայ աշակերտուհի և դարձյալ հայ լեզու չէ ավանդում նորանց։ Շատ զզացվեցի, երբ որ գիմնազիոնից հեռանալուս միջոցին 7-րդ դասարանի հայ աշակերտուհիները դիմելով ինձ օրհնություն առնելու՝ կամաց շշնջալով խնդրեցին ինձանից հոգ տանել իրանց համար հայ լեզվի ուսուցիչ տալու մասին»[2]։

1883 թ. մարտ ամսին ցարի թույլավությամբ Պետերբուրգում ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյի նախագահությամբ տեղի ունեցավ հատուկ խորհրդակցություն, որը պետք է քններ կաթողիկոսի առաջիկա ընտրությունների առթիվ կատարության վարքագծի հարցը։ Խորհրդակցությանը մասնակցում էին ժողովրդական լուսավորության մինիստր, ծագումով հայազգի Ի. Դելյանովը և Դոնդուկով-Կորսակովը։ Բարոն Նիկոլայիի առաջարկած տեսակետը լրիվ հավանություն գտավ պետական այդ բարձր շրջանում։ Օգտվելով հարմար առիթից, կատարաշատները խորհրդակցության

1 Նույն տեղում, էջ 12 հ.կ.։

2 ԳԱՔ, Սեդրակյանի արխիվ, թղթ. 2, վավ. 5, բաժ. 1, էջ 31։

հատուկ ուշադրությունը հրավիրից հայկական դպրոցների «անորմալ» վիճակի վրա, որոնք զուրս լինելով պետական հսկողությունից և գտնվելով կաթողիկոսի գերիշխանության տակ, հաճախ վեր են ածվել օտարերկրյա, հակակառավարական պրոպագանդի օջախների: Նա առաջարկում էր շտապ միջոցներ ձեռնարկել հայ ազգ սերունդը «վերահաս վտանգից» փրկելու համար, մշակել հայ դպրոցների նոր կանոններ, մանավանդ, որ կաթողիկոսական աթոռը թափուր էր և ժամանակը խիստ նպաստավոր: Համաձայնվելով այս տեսակետին, խորհրդակցությունը որոշից առժամանակ որոշում չկայացնել և հանձնարարել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուին տեղեկություններ հավաքելու հայկական դպրոցների վերաբերյալ: Կայսրը հավանություն տվեց այս գործելակերպին:

Այսքանն էլ բավական էր, որպեսզի կովկասյան իշխանությունները նոր թափով լծվեին ազգահալած քաղաքականության իրագործմանը: Իսկ շատ չանցած ներկայացավ և հարմար առիթը:

1883 թ. մարտի 19-ին երևանցի Թումաս Մհերյանը քաղաքային այգում ապտակում է գիմնազիայի դիրեկտոր Բրաժնիկովին, որը վիրավորել էր նրա ազգային արժանապատվությունը: Ընդհանրապես քաղաքի հայ հասարակությունը խիստ դժգոհ էր Բրաժնիկովից, որն առիթը բաց չէր թողնում դրսևորելու իր հակահայկական տրամադրությունները, հալածելու հայոց լեզուն և կրոնը: Նրա պահանջով Ս. Բեգնազարյանը հեռացվել էր գիմնազիայի հայոց լեզվի ուսուցչի պաշտոնից՝ կրոնական երգեցողությունը ռուսերեն կատարելուց հրաժարվելու համար:

Բրաժնիկովը հալածում էր այն աշակերտներին, որոնք չէին ննջարկվում դպրոցում հայերեն խոսելու արգելքին, իրենց ազգանուններին ավելացրել էին «յանց» վերջավորությունը, նա խրտություն էր դնում գիմնազիայի թաթար և հայ աշակերտների միջև, նախապատվությունը տալով առաջիններին, դպրոցից հեռացնում էր նրանց, ովքեր համակրանքով էին վերաբերվում արևմտահայերի ազատագրական շարժմանը: Բրաժնիկովը դպրոցից հեռացնում է 2-րդ դասարանի աշակերտ Հարությունովին այն բանի համար, որ վերջինս կանանց մի հավաքույթում երկտողեր էր գրել, որոնցում կոչ էր արել օգնել Վանի սովյալներին, ավելացնելով՝ «ժամանակն է գործ անել, դռնե մի փոքր մտածեցեք ազգի մասին»[1]:

---

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 62, էջ 3—10:

քաղաքի հայերը զգուշացրել էին Բրաժնիկովին վերջ տալ իր հայատյացությանը, սակայն դա ոչ մի հետևանք չէր ունեցել:

Մարտի 19-ի գիշերը, փաստորեն, պատահականություն չէր. դրանով քաղաքի հայությունն իր դայրույթն էր արտահայտում իշխանությունների բողովրյամբ ծլարձակող ազգային հալածանքների դեմ: Սակայն իշխանությունները չցանկացան խորանալ կատարվածի էության մեջ և մի հսկա գործ բացեցին քաղաքի հայ հայրենասերների դեմ, որը լի էր շատ հետուն գնացող եզրակացություններով: Գործը հասավ մինչև Պետերբուրգ: Մեղադրվող Մհերյանից բացի ձերբակալվեցին նաև մի քանի աչքի ընկնող հայեր, 38 հոգի պատասխանատվության կանչվեցին: Նրանց մեղադրանքներկայացվեց «Հայասերների» կամ «Ազգասերների» խմբակ կազմակերպելու մեջ, որը օժանդակում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը, աշխատում էր հայ պատանեկության մեջ վառ պահել ազգասիրական զգացմունքները և միավորել հայերին: Որպես ապացույց բերվում էին բավական անհեթեթ փաստարկներ. հայերը 1881 թ. Երևանում կազմակերպել են գրադիտություն տարածելու ընկերություն, որը զբաղվել է նաև դրքերի հրատարակությամբ՝ տպագրել է «Անմահական խնձորը» հեքիաթը (!), զբաղվել են անթույլատրելի գործերով՝ դրամ են հավաքել Վանի սովյալներին, Կիլիկիայի հայկական պլրոցներին օգնելու համար (!), այդ դրամը ուղարկել են «Մշակին» և այդ բանը ոչ ոքից չեն թաքցրել:

Ընդունելով, որ հայերն իրենց հիմնական շարիքը «թուրքական բարբարոս կառավարությունն» են համարում, ցարական պաշտոնյաները դժգոհում էին, որ նրանք ցանկանում են սեփական ուժերով, արյան գնով նվաճել «մարդկային իրավունքները»: Նրանց ամենից ավելի զրգռում էր այն հանդամանքը, որ ազգային զարթոնքը իր հետ բերել է գրականության աշխուժացում, նոր դպրոցներ և բարեգործական ընկերություններ են բացվել: Ցարին ներկայացված ներքին գործերի մինիստրության զեկուցագրում այդ մասին ասված էր. «Հայկական ազգային դպրոցները՝ եկեղեցական-ծխական արական ու իգական ուսումնարանները, հոգևոր սեմինարները և ճեմարանը պատանեկության մեջ ազգային ոգի են ներարկում, բոցավառելով սեր դեպի Հայաստանը»[1]: Գայանյան դպրոցի ուսուցիչներ Գայանի Հովհաննիսյանը, Լևոն Տիգրանյանը

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1405, ց. 521, գ. 417, էջ 244 հ. կ.:

և Իվան Տեր-Զաքարյանը մեղադրվում են այն բանում, որ «Այնտեղ (Գայանյան դպրոցում—Վ. Ե.) սովորող աղջիկների մեջ հրահրվում և աշխուժացվում է սերը դեպի հայրենիքը՝ Հայաստանը, որպեսզի նրանք, հետագայում ընտանիքի մայրեր դառնալով, նույն ոգով դաստիարակեն իրենց որդիներին»[1]:

Սակայն ցարական բյուրոկրատիայի հարուցած մեղադրանքները փաստորեն ավազի վրա էին կառուցված: Նա նույնիսկ չկարողացավ ապացուցել որևէ խմբակի ունալ գոյությունը, և դրա համար որպես փաստարկ բերում էր այն հանգամանքը, որ քաղաքում, հատկապես Ս. Բեգնազարյանի ջանքերով, 5000 ռուբլի է հանգանակվել Մհերյանին երաշխավորագրով նախնական կալանքից ազատելու համար:

Բայց կառավարությունն աշխատեց շատ մեծ աղմուկ չհանել այդ գործի կապակցությամբ՝ արտասահմանի ավելորդ ուշադրությունը չգրավելու և առհասարակ հայերի մեջ այդ մասին խոսակցությունները չտարածելու համար: Ցարի հավանությամբ Մհերյանը երեք ամիս բանտ նստելուց հետո երեք տարով աքսորվեց Կազան, իսկ Ռ. Զալալյանը, Հ. Մատակյանցը, Ի. Տեր-Զաքարյանը, Գ. Հովհաննիսյանը, Լ. Տիգրանյանը և Ս. Տեր-Գրիգորյանը 1—3 տարով արտաքսվեցին Օրենսա և Դորպատ: Երեք հոգի ենթարկվեցին ոստիկանական հսկողության: Կասկածի տակ առնվեցին Ս. Բեգնազարյանը, «Պատկի» խմբագիր Վ. Պապաջանյանը և ուրիշներ. շուտով «Պատկ» թերթն արգելվեց:

Որքան մեղմ էին պատիժները, այնքան մեծ էր այդ գործի հետևանքը, որն արտաքինից աչքի չէր զարնվում: Ցարական իշխանությունները թխեցին հայերի «սեպարատիզմի» մասին առասպելը և իրենց յուրաքանչյուր քայլափոխում հարցին մոտենում էին միայն այդ տեսակետից: 1883 թ. սեպտեմբերի 7-ին ներքին գործերի մինիստրի տեղակալ, ոստիկանության պետ Պ. Վ. Օռժևսկուն գրած գաղտնի գրության մեջ Դոնդուկով-Կորսակովը այն կարծիքն էր հայտնում, որ Երևանի դեպքերը ապացուցում են հայերի սեպարատիստական ձգտումների առկայությունը, որ առայժմ հայերի շարժումը մեծ վտանգ չի ներկայացնում, քանի-որ այն փիչ մարդ է ընդգրկում և ուղղված է Թուրքիայի դեմ, բայց ինքը գրում է «անվերապահորեն անհրաժեշտ մի շարք հետևողական, հաստատ, թեև շրջահայաց, միջոցառումներով հենց սաղմի մեջ

1 Նույն տեղում, էջ 245:

արգելակել հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնության վերականգնման մասին դեռևս ազատ դաշափարների հետագա զարգացումը»[1]:

Այդպիսի միջոցառումների մեջ նա առաջինը համարում էր հայկական դպրոցների վրա խիստ հսկողության սահմանումը: «Գլխավորը և ամենից առաջ,— գրում էր կառավարչապետը,— հարկավոր է արմատապես փոխել Կովկասում կառավարական ուսումնական իշխանության վերաբերմունքը հայկական, հատկապես եկեղեցական-ծխական և հոգևոր դպրոցների նկատմամբ, որոնք այժմ գոնվում են էջմիածնի աթոռի գրեթե բացարձակ, իսկ քաղաքական իմաստով՝ ամենևին ոչ հուսալի ազդեցության տակ»[2]: (Ընդգծումը իմն է—Վ. Ե.):

Այնուհետև կառավարչապետը առաջարկում էր խիստ հսկողություն սահմանել հայկական բոլոր ընկերությունների վրա, պահանջել նրանց ամսական հաշվետվությունները, արգելել նոր ընկերությունների կազմակերպումը: Քանի որ հայերի ազգային խորհրդումներին հաճախ մասնակցում էին նաև պաշտոնյանները, Դոնդուկով-Կորսակովը գտնում էր, որ հայաշատ վայրերից պետք է հեռացնել և այլ վայրեր տեղափոխել հայ պաշտոնյաներին և ընդհանրապես այլազգիներին: Առաջարկվում էր նաև գրաքննական խիստ հսկողություն սահմանել հայ մամուլի, ինչպես նաև արտասահմանից ստացվող հայկական պարբերականների վրա:

Սրանք հարցեր էին, որոնք առաջիկա տարիներին սկսեցին աստիճանաբար հավանություն գտնել և կիրառվել կյանքում: Արդեն 1883 թ. վերջին Դ. Տոլստոյը առացավ կայսեր թույլտվությունը հայ պաշտոնյաներին հեռացնելու մասին[3]: Վրացի պաշտոնյաներն էլ նշանակում էին առանում երկրամասի ոչ վրացաբնակ շրջաններում:

Այսպիսով, երկրամասի ռուսացումը գնալով ավելի ու ավելի պաշտոնական ճանաչում և հավանություն էր գտնում: Բարոն Նոլդեի խոսքերով «Միայն ապազգայնացված տեղացին էր բարեհույս համարվում: Հայոց լեզվի իմացությունը, հայերեն գրքի ընթերցանությունը, հայկական թատրոն հաճախելը սկսեց համարվել «սեպարատիզմ», որն անհրաժեշտ էր ճնշել»[4]:

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 229, ց. 2, գ. 1136, էջ 6 հ. կ.:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 1—2:

4 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 92:

Քաղաքական այսպիսի իրավիճակում 1884 թ. հունվարի 27-ին Պետերբուրգում տեղի ունեցավ հատուկ խորհրդակցություն նախկին գործերի մինիստր Դ. Տոլստոյի, ժողովրդական լուսավորության մինիստր Ի. Դելյանովի և Կովկասի կառավարչապետ Դոնդուկով-Կորսակովի մասնակցությամբ, որի նպատակն էր նոր կանոններ մշակել հայոց դպրոցների համար, ինչպես նախատեսվել էր 1883 թ. խորհրդակցությունում:

Խորհրդակցության քննարկմանը դրվեց Ի. Դելյանովի կազմած նախագիծը: Նշվեց, որ առայժմ կարելի է հայկական դպրոցները ամբողջապես չննթարկել ուսումնական վարչության, այլ սահմանել խիստ հսկողություն, որը բավարար կլինի դրանց ցանկալի ուղղություն տալու համար: Դ. Տոլստոյը աննորմալ էր համարում տարրականից բարձր հայկական դպրոցների գոյությունը և գտնում էր, որ դրանք կարող են պահպանվել միայն մասնավոր դպրոցներին հավասարվելու պայմանով: Խորհրդակցությունը հատուկ ուշադրություն դարձրեց թեմական տեսչության վրա, համարելով դա կաթողիկոսի ինքնագլուխ վարքի արատահայտություն: «Կարելի է առանց չափազանցության ասել,— արձանագրված էր՝ խորհրդակցության մատյանում,— որ կառավարական ուսումնական շրջանի կողքին այժմ կազմվել է նոր, կանոնավոր կազմակերպված հայ-լուսավորչական ուսումնական շրջան՝ դեկավարման իր ինքնուրույն մարմիններով, որոնց գործունեությունը, ինչպես ցույց է տվել փորձը, միշտ չէ, որ համաձայնեցվում է կառավարության շահերի ու նախանշումների հետ»[1]: Պահանջ առաջ քաշվեց թեմական տեսչությունը վերացնելու մասին, որով կարելի կլիներ ազատվել անբարեհույս մարդկանցից: (Ի դեպ, այդ ժամանակ երկու հիմնական՝ Վրաստանի և Երևանի թեմերում տեսուչներ էին Ղ. Ալայանը և Պ. Պռոշյանը): Խորհրդակցությունը անհրաժեշտ համարեց 1873 թ. նոյեմբերի 22-ի օրենքի 8-րդ կետը ավելի լրիվ կենսագործելու համար 1874 թ. հուլիսի 19-ի բարձրագույն կարգադրությունը փոխարինել նոր կանոններով:

1884 թ. փետրվարի 16-ին ցարը հաստատեց խորհրդակցության մշակած «Կովկասի հայ-լուսավորչական եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները»: Առաջին կետում որոշվում էր այդ ուսումնարանների սկզբունքը. «Հայ-լուսավորչական եկեղեցական ուսումնարաններ են կոչվում բոլոր հանրակրթական տարրական (սկզբնական) մեկ և երիցս այն ուսումնական հաստա-

1 «Записка об армянских школах», стр. XV.

տուբյունները, որոնք գտնվում են սույն դավանանքի եկեղեցիներին ու վանքերին կից և պահվում են կամ բացառապես եկեղեցիների ու վանքերի գումարների հաշվին, կամ ծխականների կողմից ցույց տրվող օժանդակությամբ»[1]:

Դպրոցների վնկավարությունը իրականացնելու էին թեմակալները, որոնց իրավունք էր տրվում դրանց վրա հսկելու համար կառավարչապետի և հոգաբարձուի գիտությամբ ունենալ մի տեսուչ: Կարևորն այն էր, որ այդ տեսուչը պետք է անպայման հավատարիմ հոգևոր անձ լիներ: Կանոնների երրորդ կետը սահմանում էր, որ եկեղեցական դպրոցները բացվում են հայ հոգևոր իշխանության թույլտվությամբ, որը յուրաքանչյուր անգամ պետք է հոգաբարձուին հայտնի այդ մասին, նշելով դպրոցի տեղը, պահպանության միջոցները, ուսաց լեզվի, Ռուսաստանի պատմության ու աշխարհագրության ուսումնական ծրագրերը և դրանց շաբաթական դասաժամերը: Հոգևոր իշխանությունը պետք է հայտնի նաև դպրոցների փակման, ուսուցիչների նշանակման ու ազատման մասին, ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ: Կանոնները պարտադրում էին հայկական դպրոցներում նախկին փոխարքայի 1881 թ. հաստատած ծրագրով անցնել ռուսաց լեզու, իսկ այն դպրոցներում, որտեղ ավանդվում են ընդհանուր պատմություն և աշխարհագրություն, նաև Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն:

Յոթերորդ կետում ասվում էր. «Ուսումնական գերատեսչության վրա պարտավորություն է դրվում հսկել եկեղեցական դպրոցներում բոլոր առարկաների դասավանդմանը, բացառությամբ կրոնի առարկայի: Ընդ որում, ուսումնական շրջանի հոգաբարձուին, այն դեպքում, երբ նա ուսուցիչներից կամ ուսուցչուհիներից որևէ մեկին համարում է իր կոչմանն անհամապատասխան, իրավունք է տրվում դիմել հոգևոր վարչությանը տվյալ անձնավորությունները դպրոցից անմիջապես հեռացնելու և ուրիշներով փոխարինելու մասին: Հոգևոր իշխանության կողմից այս պահանջը չկատարելու դեպքում, հոգաբարձուն այդ մասին հայտնում է ժողովրդական լուսավորության մինիստրությանը, իսկ հատկապես կարևոր դեպքերում՝ Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին, որը իր իսկ հայեցողությամբ համապատասխան միջոցներ է ձեռնարկում և իր կատարած կարգադրությունն-

---

1 «Правила об армяно-григорянских церковных училищах на Кавказе», стр. 1.

րի մասին տեղեկացնում է ժողովրդական լուսավորության մինիստրին»[1]:

Էական նշանակություն ուներ կանոնների 8-րդ կետը, որտեղ ասված էր. «Եկեղեցական այն ուսումնարանները, որոնք իրենց դասընթացով դուրս են գալիս տարրական դպրոցների սահմաններից և իրենց կազմով երկու դասարանից կամ մեկը մյուսին հաջորդող բաժանմունքներից ավելին ունեն, ենթարկվում են ուսումնական վարչության հսկողությանը՝ մասնավոր ուսումնական հաստատությունների համար ընդհանուր հիմունքներով»[2]:

Վերջապես, կանոններում նշվում էր, որ էջմիածնի ճեմարանը և թեմական դպրոցները, որոնց նպատակը հոգևորականներ պատրաստելն էր, չեն ենթարկվում ուսումնական վարչության հսկողությանը:

Այսպիսով, կովկասյան իշխանություններին հաջողվեց վերջապես ձեռք բերել հայ դպրոցի գործերին անարգել միջամտելու երկար սպասված իրավունքը: Հայ հոգևորականությունը փաստորեն մնում էր որպես նյութական միջոցներ հայթայթող, քանի որ բոլոր առարկաների վրա հսկողություն էր սահմանվում (բացի կրոնից): Այդ էլ հենց պետք էր ցարական վարչարարներին, որոնք ընդհանրապես չնչին գումարներ հատկացնելով ժողովրդական լուսավորությանը, ի վիճակի չէին լինի հայ դպրոցները նյութապես ապահովել, քանի որ, նրանց համոզմամբ, հայ հոգևորականությունը կհրաժարվեր նյութական օժանդակություն ցույց տալ դպրոցին, եթե այն լրիվ դուրս գար նրա անօրինությունից:

Սակայն կանոնների ամենաէական կողմերից մեկն այն էր, որ բացառվում էր տարրականից բարձր դպրոցի գոյության իրավունքը: Դրանով հօդս ցնդեցին 1876 թ. բացատրությունները (տես՝ 85—86 էջերը), որոնք էջմիածնին իրավունք էին վերապահում ունենալու տարրականից բարձր տիպի դպրոցներ:

Կայսերահաստատ կանոններից ոգևշնչված կովկասյան իշխանությունները գործի անցան: Բայց նրանց տհաճ հիասթափություն էր սպասում. էջմիածնի սինոդը անսպասելիորեն դիմադրություն ցույց տվեց: Երբ ապրիլի 6-ին Կառավարիչ սենատի հրամանագրով հրապարակ հանված կանոնները կառավարչապետի կողմից ներկայացվեցին սինոդին և առաջարկվեց դրանց հիման վրա վերակառուցել դպրոցը, սինոդը հրաժարվեց նոր կանոններն

1 Նույն տեղում, էջ 2—3:
2 Նույն տեղում, էջ 3:

ընդունելուց, պատճառաբանելով, որ կրթական գործը կաթողիկոսի վաղուց ի վեր ճանաչված իրավասությանն է ենթակա, և ինքը այժմ, երբ հայրապետական աթոռը թափուր է, չի կարող իր վրա ծանր պարտականություն վերցնել ևկեղեցու հանդեպ: Սինոդը խնդրում է կանոնների իրագործումը հետաձգել մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը[1]:

Կովկասյան իշխանությունը մի քանի անգամ կրկնեց իր առաջարկը, բայց սինոդը անդրդվելի մնաց: Ավելին, նա զգուշացրեց թեմերին, որպեսզի նրանք ոչ մի պայմանով չընդունեն կանոնները, պատճառաբանելով, որ հոգևոր իշխանությունից կարգադրություն չեն ստացել: Սինոդին նորից առաջարկվեց մինչև նոյեմբերի 10-ը ղեկույց ներկայացնել կանոնների ի կատար ածման մասին: Եվ դարձյալ անօգուտ:

Սինոդը ակնհայտորեն ժամանակ էր ուզում շահել, համոզված լինելով, որ նոր ընտրվելիք կաթողիկոսը կկարողանա հասնել կանոնների մեղմացմանը: Սինոդի պնդումը, թե դպրոցը միայն կաթողիկոսին է ենթակա, ձևական բնույթ էր կրում: Ճիշտ է, հայ կաթողիկոսները դարերից ի վեր եղել էին կրթական գործի իրավատերը, բայց և ճիշտ էր, որ 1836 թ. «Կանոնադրությամբ» հիմնականում սինոդի վրա էր դրվել դպրոցական գործի ղեկավարությունը, թեև իրականում դարձյալ կաթողիկոսն էր զբաղվում դպրոցների հարցերով:

Զգալով, որ կովկասյան իշխանությունները երկար չեն հանդուրժի նման վիճակը, սինոդը Աստրախանի թեմական առաջնորդ Սուքիաս եպիսկոպոս Պարոյանին 1884 թ. վերջին ուղարկում է Պետերբուրգ՝ կանոնների հետաձգման համար կառավարական շրջաններին համաձայնություն ստանալու, մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը:

Միաժամանակ սինոդի անդամների միջև խոսակցություն էր գնում հրաժարական տալու մասին: Իսկ կառավարչապետը, տեսնելով, որ սպառնալիքները ոչ մի հետևանք չեն ունենում, դարձյալ դիմեց կենտրոնական կառավարությանը և ինքն էլ մեկնեց մայրաքաղաք:

Պետերբուրգում Սուքիաս եպիսկոպոսը հաջողություն չգտավ: Դոնդուկով-Կորսակովը զայրացին հայտարարեց էջմիածնի պատվիրակին. «Այսպիսի կամայականությունները վերջ ի վերջո բանն այն տեղը կհասցնեն, որ կառավարությունը բոլոր հոգևոր դպրոց-

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 114:

նները կփակեն, ի՞նչ պետք է անեք այն ժամանակ։ Գիտե՞մ, պետք է Կոստանդնուպոլսո ազգային լրագրների մեջ տպագրվին բողոքներ, տպագրվին և մի քանի եվրոպական քաղաքների պարբերական թերթերում արտունչներ։ Թերևս գտնվին և Ռուսաստանի մեջ խմբագրություններ, որոնք հանձն առնեն հյուրընկալել յուրյաքանչյուր հրատարակության մեջ մի քանի հոդվածներ այդ մասին։ Սակայն ի՞նչ օգուտ դորանցից, այդ առ առավելն կտևէ քանի մի ամիս, այնուհետև հայ ժողովուրդը, որ այնքան ուսման և դաստիարակության պետք յուր որդոց համար զգացած է, գունդադունդ պետք է դիմեն քաղաքական իշխանության և թախանձեն՝ յուր հաշվով ուսումնարաններ բանալ և ժողովրդական արբունի տեսուչների հրսկողության ներքո կառավարիլ»[1]։

Ի. Դելյանովի այն հարցին, թե ինչ վնաս են տեսնում հայերը 1884 թ. կանոնների մեջ, Սուբիասը պատասխանում է, որ հայկական դպրոցների բոլոր առարկաներին հսկող արբունի տեսուչները, չիմանալով տեղական պայմանները և լեզուն, հաճախ շատ հարցեր չեն պատկերացնի և ի վերջո կպահանջեն, որ ավանդումը կատարվի ռուսերեն լեզվով, որը «ազգային լեզվի ուսուցման մահացու հարված կտա»։ Այնուհետև եպիսկոպոսը գտնում էր, որ կանոնների գործադրությունը պահանջ կառաջացնի, որ հայկական դպրոցների ուսուցիչները ձեռք բերեն ուսուցչության պետական իրավունք, մի բան, որը շատ դժվար կլինի իրագործել և խիստ կգցի հայկական այն հաստատությունների հեղինակությունը, որտեղ սովորել են այդ ուսուցիչները (ճեմարան և թեմական դպրոցներ)։ Դելյանովը անդրդվելի գտնվեց։ Էջմիածնի պատվիրակը իր իսկ նախաձեռնությամբ հարց բարձրացրեց հայկական դպրոցներին ևս ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցների կանոններին համապատասխան կանոններ տալու մասին (այդ դպրոցները 1884 թ. ենթարկված էին ուղղափառ եկեղեցու սինոդին), բայց արձագանք չստացավ։

Մինչ էջմիածնի պատվիրակը մաշում էր ցարական բարձրաստիճանավորների և Պետերբուրգում գտնվող հայազգի պաշտոնյաների շեմերը, մինիստերական առանձնասենյակներում որոշվում էր հայ դպրոցի բախտը։

---

1 «Պատվիրակություն Սուբիաս եպիսկոպոսի ի Սանկտպետերբուրգ հոգևոր դպրոցների մասին», Վաղ-պատ, 1907, էջ 36—37։ (Ի դեպ այս դիրքը, որի հեղինակն է հենց ինքը՝ Սուբիաս եպիսկոպոսը, գրված է եղել դեռևս 1885 թ. ամռանը։ Հեղինակի ձեռագիրը պահվում՝ ՀՊԿՊԻ-ում՝ ֆ. 57, ց. 1, գ. 389)։

1885 թ. հունվարին կառավարչապետի մասնակցությամբ տեղի ունեցավ նոր խորհրդակցություն, որին ներկա էին Դ. Տոլստոյը, Ի. Դելյանովը և արտաքին գործերի մինիստրության Ասիական դեպարտամենտի պետ Ի. Զինովևը (վերջինիս մասնակցությունը թելադրված էր Հարցի արտաքին-քաղաքական սրությամբ)։

Խորհրդակցությունը որոշեց անհետաձգելի համարել Սուրբիա եպիսկոպոսի միջնորդությունը և անցավ Դոնդուկով-Կորսակովի առաջարկության քննարկմանը, որով պահանջվում էր 1884 թ. կանոնները սինոդի կողմից չընդունվելու դեպքում դիմել ծայրահեղ միջոցների՝ դպրոցների փակմանը։

Կառավարչապետը հարմար էր գտնում այժմ իսկ հայկական դպրոցները խլել էջմիածնի անօրինությունից և հանձնել ԺԼՄ-ին և այդ առիթով վերաիսխել 1884 թ. կանոնները, իսկ եթե դպրոցները չենթարկվեն այս պահանջին ևս, ապա դրանք փակել և երբ նորից կբացվեն՝ ուղղակիորեն կենթարկվեն ԺԼՄ-ին, ու նոր կաթողիկոսն այլևս անելիք չի ունենա։

Դելյանովը առարկում էր այս առաջարկին, քանի որ նրա կարծիքով կովկասյան ուսումնական վարչությունը շատ քիչ աշխատողներ ուներ, նրանցից յուրաքանչյուրին ընկնում էր 436 դպրոց և հայկական դպրոցների ավելացումը լրացուցիչ բեռ կլիներ նրանց վրա։ Լուսավորության մինիստրն առաջարկում էր թողնել կանոնները անփոփոխ և սկսել դրանց ընդունման վրա, քանի որ դրանք բավարար հակոդության հնարավորություն էին ստեղծում։

Սկզբունքորեն համաձայնելով կառավարչապետի հետ, Դ. Տոլստոյը միաժամանակ գտնում էր, որ հայ հոգևորականությանը դպրոցների վրա ունեցած իրավունքներից լրիվ զրկելը մեծ դժգոհացավանք կառաջացնի, մանավանդ որ Ռուսաստանի բոլոր եկեղեցիներն էլ ունեն իրենց դպրոցները։ Նա ասում էր, որ արդեն խլված և ԺԼՄ-ին են հանձնված ծառրականից բարձր տիպի դպրոցները, որոնք, «ինչպես ցույց է տվել փորձը, հանդիսանում են ամենից վտանգավորները, քանի որ նրանք ամենից հաճախ են վերածվում այսպես կոչված Երիտասարդ Հայաստան կուսակցության պրոպագանդի գործիքի»[1]։ Իսկ ծառրական դպրոցները մեծ վտանգ չեն ներկայացնում։

Ի վերջո, խորհրդակցությունը միաձայն որոշեց չփոխել 1884 թ. կանոնները և պահանջել սինոդից 12 օրվա ընթացքում ըն-

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 99, էջ 187։

դունել դրանք և համապատասխան կարգադրություն անել թեմակալներին, հակառակ դեպքում կառավարչապետը միջոցներ պետք է ձեռք առնի հայկական դպրոցները փակելու համար: ԺԼՄ-ի հանձնարարությամբ Յանովսկին պետք է անհապաղ ձեռնամուխ լիներ 1884 թ. կանոնների 8-րդ կետի համաձայն տարրականից բարձր տիպի դպրոցները իր իրավասության տակ ընդունելուն:

1885 թ. փետրվարի 5-ին ցարը հաստատեց խորհրդակցության որոշումները:

Գործի անցանկալի հետևանքը սպասեց Սուքիաս եպիսկոպոսին երկու հետագրով սինոդին համոզել ենթարկվելու կառավարության պահանջին, քանի որ հրաժարումը կարող է դիտվել որպես ապստամբություն և ունենալ «զանխուսափելի ծանրագույն հետևանք»: Փետրվարի 21-ին նիստի հավաքված սինոդի անդամները որոշեցին, որ իրենք դարձյալ իրենց իրավասու չեն համարում շրջանցել կաթողիկոսի իրավունքը, որը սույրբ է հայ եկեղեցու համար և հարցը թողնում են կառավարության բարեհայեցողությանը[1]:

Թեմերը և դպրոցները ևս հրաժարվեցին կանոններն ընդունելուց, և կովկասյան իշխանությունները անհապաղ ձեռնամուխ եղան հայկական բոլոր դպրոցների փակմանը (բացառությամբ թեմական դպրոցների):

Մինչ այդ արդեն որոշ տեղերում արտակարգ ակտիվություն հանդես բերող ցարական չինովնիկները սկսել էին դպրոցների փակումը: Դեռ 1884 թ. նոյեմբերին Գորիի գավառապետի կարգադրությամբ փակվում է Ախալքալակի ծխական դպրոցը:

1885 թ. մայիսի 23-ին ներքին գործերի մինիստրությունը դեկուցում էր ցարին, որ մինչ այդ կանոններն ընդունել է միայն մեկ դպրոց, իսկ 169 դպրոցներ փակվել են[2]: Սակայն այդ թիվը չէր համապատասխանում իրերի իսկական վիճակին: Եթե հենց իրենց, ցարական պաշտոնյաների վկայությամբ կանոններն ընդունվել էր միայն մեկ դպրոցի կողմից, ուրեմն փակվածների թիվը շատ ավելի մեծ պետք է լիներ, քանի որ հենց լուսավորության մինիստր Դելյանովի վկայությամբ գոյություն ուներ 346 հայկական եկեղեցական դպրոց[3] (ակնհայտաբար, այստեղ հաշվված են ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ Ռուսաստանում եղած հայ-

1 Տե՛ս նույն տեղում, էջ 203—204:
2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 272, էջ 43:
3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 99, էջ 185 հ. կ.:

կական դպրոցները)։ Որոշ հեղինակներ (մեծ մասամբ ռուս) փակված դպրոցների թիվը հասցնում են 200-ի։ Դա զարմանալի է նրանից, որ այդ հեղինակների ձեռքի տակ եղել են միայն պաշտոնական տվյալներ։ Մինչդեռ հայ հեղինակների մոտ շրջանառության մեջ է մտել 500 և նույնիսկ 600 թիվը (Ա. Ջիվելեգով, Դ. Զալխուշյան, Է. Ակունի, Մ. Մուրադյան)։

Ամենից իրական պետք է համարել էջմիածնի սինոդի արխիվում բերվող թվերը[1]։ Ըստ այդ տվյալների 1885 թ. մարտ ամսին Վրաստանի թեմում փակվել էր 79 դպրոց, Երևանի թեմում՝ 102, Ղարաբաղի թեմում՝ 23, Կարսի և Բաթումի վիճակներում՝ 27, Շամախիի թեմում՝ 11 և Աստրախանի թեմում՝ 14 դպրոց։ Ընդամենը 256 դպրոց, որից 242-ը Անդրկովկասում, որը գրեթե նույնությամբ համապատասխանում էր երկրամասում եղած դպրոցների թվին (տե՛ս էջ 122-ում բերված տվյալները)։ Բացակայում են տվյալներ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի դպրոցների մասին։ Անտարակույս այդ դպրոցները, եթե ոչ ամբողջությամբ, գոնե նրանց մեծ մասը ևս պետք է փակված լինեին։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ 1885 թ. ցարիզմի կողմից փակված հայկական դպրոցների ընդհանուր թիվը հասնում էր 300-ի։

* * *

Անդրկովկասի հայ հասարակությունը չէր կարող անտարբեր մնալ ցարիզմի սկսած նոր արշավանքի նկատմամբ։

Ինչ միջոցով կարող էր քաղաքական կազմակերպությունից դուրկ մի բուռ ժողովուրդ պայքարել ցարական ամենազոր բյուրոկրատիայի դեմ, երբ ողջ Ռուսաստանն էր անքում մոլեգնող ռեակցիայի ճիրաններում, երբ ցարիզմն իր ճանապարհից սրբում էր դիմադրության ամենաթույլ փորձն անգամ։ Այդ պայմաններում իրական միջոցը էջմիածնի սինոդի կողմից կանոններն ընդունելուց հրաժարվելն էր։

Սինոդի այս վարքագիծը էջմիածնում չէր մշակվել։ Ինչպես վկայում է Սուքիաս եպիսկոպոսը, կանոնների մասին առաջարկն առանալուց հետո սինոդը Մեսրոպ եպիսկոպոսին ուղարկում է Թիֆլիս՝ «բանագնաց անձանց» հետ խորհրդակցելու և նրանց խորհրդով գործելու։ Դրանից հետո է, որ սինոդը պատասխան է ուղարկում կառավարչապետին։ Նույն թիֆլիսեցիների խորհրդով է Սուքիաս եպիսկոպոսն ուղարկվում Պետերբուրգ, որտեղ եղած հայ պաշտոնյաները՝ Կ. Եղյանը, Մ. Սանասարյանը, Ս. Աբա-

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 50։

մելիք-Լազարյանը, Գ. Նևանգուլյանը նախօրոք զգուշացված են լինում և պատրաստակամություն հայտնած՝ օգնելու էջմիածնի պատվիրակին: Վերջիններս, սակայն, աշխատում էին խիստ ըզգույշ գործել, դուրս չգալ օրինականության սահմաններից և իրենց վրա ավելորդ կասկածներ չհարուցել:

Այս դիմադրությունը անհետևանք չմնաց: Դպրոցների փակումն իրականացնելուց հետո Դոնդուկով-Կորսակովը կառավարության առաջ հարց բարձրացրեց սինոդի անդամներին քրեական պատասխանատվության կանչելու մասին՝ «Բարձրագույն կարգադրություններին կանխամտածված կերպով չենթարկվելու համար»[1]: Կառավարչապետը գտնում էր, որ սինոդը ինքնակամ չի գործել, որ նա գտնվում է «հայկական ազգային կուսակցության մի քանի ղեկավարների» ազդեցության տակ, որոնք լուրեր են տարածել, թե կառավարությունն ուզում է արգելել հայերեն կըրթությունը և հայերին ուղղափառ դարձնել[2], դրանով մոլորեցրել են սուրբ Հոգևորականությանը և վերջինս իր «ազմկոտ բողոքներով» ազդել է սինոդի վրա:

Ներքին գործերի մինիստրությունը գտավ, որ սինոդին պատժելը թեև արդարացի, բայց և նպատակահարմար չէ, որովհետև ավելորդ կրոնական հուզում կառաջացնի և առիթ կտա մեղադրելու ռուսական կառավարությանը կրոնական հալածանքների մեջ, իսկ պատժվածները կներկայացվեին որպես հավատի անմեղ զոհեր: Դրան հակառակ, մինիստրությունը ցարին առաջարկեց վարչական կարգով Կովկասից աքսորել կառավարչապետի հիշատակած այն չորս մարդկանց, որոնց նա համարում էր 1884 թ. կանոնների գլխավոր հակառակորդներ: Դրանք էին՝ «Արձագանքի» խմբագիր Ա. Հովհաննիսյանը, Երևանի թեմական դպրոցի տեսուչ Ս. Բեգնազարյանը, մասնավոր հավատարմատար Վ. Եղիազարյանը և նոտարիուս Տ. Վարդանովը (վերջին երեքը խառն էին 1883 թ. Երևանի հայանի անցքերին): Ցարը հավանություն տվեց այդ առաջարկին: (Թե ինչու այդ աքսորը չիրականացվեց, հնարավոր չեղավ պարզել— Վ. Ն.):

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, պ. 272, էջ 45 հ. կ.:

2 Հայերին ուղղափառ դարձնելու մասին լուրերը հիմքից զուրկ չէին, քանի որ ցարիզմը նման ձգտում միշտ էլ ունեցել է: Արիստակես եպս. Սեդրակյանի վկայությամբ 1885 թ. Յանովսկին հայտարարել էր. «Այժմ հույս ունենք ռուս և հայ ևկեղեցին շուտով միացած տեսնել. հո մի մեծ տարբերություն չկա երկու եկեղեցիների մեջ. ուրեմն և առանձին դժվարություն չպիտի լինի այդ միությունը հաջողացնելու համար» (ԴԱՔ, Սեդրակյանի արխիվ, բաժ. 1, վավ. 8, էջ 4):

Սինոդի դեմ ուղղված արշավանքը սրանով չսահմանափակվեց։ Թիֆլիսում հրատարակվող «Կավկազ» պաշտոնաթերթը 1885 թ. իր 56 և 60-րդ համարներում մաղձով լի հոդվածներ տպագրեց (հեղինակը հավանաբար Յանովսկին էր)։ «Կավկազը» գտնում էր, որ սինոդը լրիվ իրավասու է դպրոցական հարցերում, ուստի և հրաժարվելով կատարել կառավարության հրամանը, իր վրա է առնում դպրոցների փակման ողջ պատասխանատվությունը։

Էջմիածնի «Արարատ» ամսագիրը չհապաղեց պատասխանել «Կավկազին», 1885 թ. երրորդ համարում տպագրելով մի հոդված սինոդի անդամների անունից։

Սակայն սինոդի դիմադրությունը մեծ ազդեցություն գործեց ժողովրդի և հատկապես դպրոցական հասարակայնության վրա։ Գրեթե ոչ մի դպրոց կամովին չէր թարկվում կառավարության պահանջին։ Թեև փակման ժամանակ առանձին միջադեպեր չեղան, սակայն ժողովուրդը տարբեր միջոցներով արտահայտեց իր բացասական վերաբերմունքը։ Դպրոցների փակմանը կանչված ոստիկանությունը ամենուրեք հանդիպում էր զսպված սառնության։ Ալեքսանդրապոլի գավառապետը զեկուցում էր. «Փակման և աշակերտների արձակման ժամանակ ևս ականատես եղա խիստ տխուր և թախծալի պատկերի։ Լուռ ու համեստորեն ուսումնարանից միասին դուրս եկող արցունքոտ աչքերով աղջիկներից ու տղաներից բացի, լալիս էին բոլորը, ովքեր ներկա էին դրան»[1]։

Դաղախի դյուղերից մեկում դպրոցի փակումից խիստ վրշտացած մի աշակերտ պարզամտորեն հայտարարել էր ընկերներին. «Թող բացվի, բոլոր աշակերտների խմելու ջուրը ևս կբերեմ աղբյուրից»[2]։ Ալեքսանդրապոլցի աշուղ Հուշարին (Խաչատուր Նահատակյանը) այդ օրերին, սգալով ազգային դպրոցների կորուստը, երգում էր.

«Ախպրտիք, չհանդաք, ըսեմ ընտիրը.
Տունս բլալ, հողը թափալ թնդիրը,
Դուսն է մնացիր հացի դնդիրը,
Իլլաճ չկա. տանիմ եփիմ փռնիրը»[3]։

Աշուղի կարծիքով էլ ուրիշ ելք չկար, մնում էր երեխաներին ուսման ուղարկել արքունի ռուսական դպրոցը։

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 147, էջ 31 հ. կ.— 32։
2 ԳԱՄ, Քամալյանի արխիվ, բաժ. 8-րդ, № 24, էջ 15։
3 ՊԻԱ, Մ. Թամրազյանի արխիվ, № 115։

Հայ պրոլետարական գրող Հ. Հակոբյանն իր հուշերում պատմում է, որ Դանձակի դիմնազիայում սովորելիս 1885 թ. նոյեմբերին ինքը չի կարողանում հանդուրժել ցարիզմի բռնությունները և մի ճառ-թուղթ է գրում ու տարածում աշակերտների մեջ, որտեղ հայհոյում է Ալեքսանդր III-ի ու Դելյանովի (որին «Դելյաշկա» արհամարհական անունն էին դրել) բռնակալ քաղաքականությունը։ Այդ ճառում տակավին պատանի Հակոբյանը գրել էր.

«Հաճո՞ է ձեզ տանել մեջքներիդ այն դահը,
Որի վրա նստած է հյուսիսի ագռավը...»[1]։

Ճառը մեծ աղմուկ է բարձրացնում դիմնազիայում և առիթ դառնում Հակոբյանի հեռացման։

Այդ օրերի մասին նույն Դանձակում հայոց դպրոցի ուսուցիչ եղած Գ. Ղարաջյանը (Արկոմեդ) պատմում է. «Դպրոցների փակման ցնցող տպավորության տակ, ես սաստիկ ճնշված էի, հոգեկան ծանր, արտակարգ դրության մեջ էի գտնվում. այն աստիճան զրգռված էի, որ խիստ գայրույթի, վրեժխնդրության մի տեսակ զգացմունք մղում էր ինձ արտասովոր մի գործ կատարելու, տեսորի ենթարկելու, սպանելու ցարի կառավարության լակեյներից, անմիջական մեղավորներից մեկին— թեկուզ հենց շրջանի ժողովրդական դպրոցների տեսուչ Օռլովին, ոստիկանապետին, որոնք զինված թիկնապահներով, զինվորներով ներս խուժելով ավազակների պես՝ բռնի, զենքի ուժով փակեցին դպրոցները, հենց թեկուզ Յանովսկուն— Կովկասի դպրոցների հոգաբարձուին, որը Թիֆլիսում էր ապրում այդ ժամանակ»[2]։ Բայց նա դիմում է այլ միջոցի. Դանձակում, այրի Բալաղյանի տանը կազմակերպում է գաղտնի դպրոց և անվճար պարապում բարձր դասարանցիների հետ։

Հայերի հակացարական տրամադրությունների սրման ցայտուն արտահայտություններից մեկն էլ 1885 թ. փետրվարի վերջերին Թիֆլիսի հայ նարոդնիկական խմբակի տարածած «Հայ-եղբայրներ և հայ-քույրեր» թռուցիկն էր։ Նրա հեղինակները «սարսափելի ավազակություն» էին համարում հայկական դպրոցների փակման վերաբերյալ միապետության որոշումը, միապետություն, որն սկզբում խոստումներ տալով ու սիրաշահելով փոքր ազգություններին, տիրել է նրանց, «իսկ հպատակեցնելուց հետո՝ աշխատել փոքր

1 Հ. Հակոբյան. Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1958, էջ 24։
2 ՊԻԱ, № 88, Գ. Ղարաջյանի «Հեղափոխականի հիշատակարանը», մաս 1, էջ 100։

ան փոքր ոչնչացնել տված արտոնությունները, ծծել նրանց բոլոր կենսական ուժերը և ապա դեն շպրտել նրանց քամած լիմոնի պես»[1]: Դպրոցը հայերի համար կենսական նշանակություն ունի, առանց նրա հայ ազգը գոյություն ունենալ չի կարող: «Եվ ահա այսօր,— գրված է Թռուցիկում,— երբ մեր Ազգային դպրոցը՝ հին սխոլաստիկայի կապանքներից նոր ազատված՝ պետք է իրականապես ցույց տար իր ուժի մեծությունը, այդ վաղուց փայփայած բոպևին հայտնվում է մի բռնակալ և ձեռքի մի շարժումով ոչնչացնում այն, ինչ որ մենք դարերի ընթացքում հազիվ կարողացել ենք բարեկարգել»[2]:

Թռուցիկի հեղինակներն ղգում էին, որ ցարիզմը թշնամի է բոլոր ժողովուրդներին և հենց ռուս ժողովրդին՝ «Այո՛, հարյուր միլիոնից բաղկացած այդ ժողովուրդը նույնպիսի զոհեր են իրանց բռնակալների ձեռքում, որպիսին և մենք ենք, բայց մի՛ մոռանաք, որ այդ ժողովուրդը այսօր թե վաղը կարող է ազատվել այդ լծից և իհարկե այդ ազատությունը ձեռք բերելու համար նա գործում է, միջոցների է դիմում»[3]: Դրա համար էլ Թռուցիկը կոչ էր անում հայերին անտարբեր չմնալ, «ախ ու վախի փոխարեն» «մահի վճիռ կարդալ այդ բռնակալների ձեռքի տակ գործող այն սուր սողուններին, որոնք մեր լեզուն և նրա հետ նաև մեր ազգությունը մահու են դատապարտել»: Ցարիզմը չի կարողացել բռնի ուժով, «շիկներով» լեհերին և ուկրաինացիներին մոռացնել տալ իրենց լեզուն և դրա համար էլ հայերը ևս պետք է պայքարեն հանուն իրենց ազգային իրավունքների: «Մեր դպրոցները փակվում են շահիկների օգնությամբ, թող այդ լինի բռնակալների միակ մխիթարությունը:

Յուրաքանչյուր հայ ընտանիք թող ներկայացնի իրենից առանձին հայ դպրոց»[4],—ահա Թռուցիկի եզրակացությունը:

Ցարական ոստիկանությունը մեծ ջանքեր թափեց գտնելու Թռուցիկի հեղինակներին, բայց ապարդյուն: Թիֆլիսում, Բաքվում, Դանձակում տարածվում են Թռուցիկի բազմաթիվ օրինակներ: Արտասահմանում հրատարակվող «Նարոդնայա վոլյա» թերթը 1885 թվականի իր վերջին համարում ընդարձակ տեղեկանք դետեղեց այդ Թռուցիկի մասին:

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, պ. 53, էջ 3: (Թռուցիկի մասին տե՛ս նաև Մ. Գ. Ներսիսյանի «Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում» գրքում, էջ 62—65):

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 3 հ. կ.:

4 Նույն տեղում:

Դպրոցների և ընդհանրապես հայերի դեմ ցարիզմի սկսած արշավանքը մեծ դժգոհություն առաջացրեց նաև արևմտահայերի շրջանում: Պոլսի «Արևելքը» ահազանգող հոդվածներ էր տպագրում ցարիզմի քաղաքականության մասին: «Արևելյան մամուլը» միղադրում էր ցարական կառավարությանը, որ չուզեց սպասել կաթողիկոսի ընտրությանը և ժողովրդին զրկեց սեփական դպրոցներից: Ամսագիրը ցարիզմի վարմունքը համարում էր «ոչ միայն մեծ անիրավություն, ապերախտություն... և անարդարանալի բռնաբարություն, այլև քաղաքական ծանր սխալ մը»[1]: «Մասիս» շաբաթաթերթը, նկարագրելով դպրոցների շուրջը ծավալված անցուդարձը, հանգստացնում էր ազգակիցներին այն հեռանկարներով, որ «Դոլըմդոյներու և Տոնաուբոֆներու բռնակալ իշխանությունը չի կրնար մշտնջենական լինել»[2]:

Մելիքսեդեկ եպս. Մուրադյանը, որը Կովկասից էր գնացել Թուրքիա, առանձին ըրքով հանդես եկավ, որտեղ մերկացնում էր ցարիզմի համաձուլարար քաղաքականությունը: «Փակել դպրոցներն,— գրում էր նա,— կնշանակի փակել Հայու սիրտն, Հայու զգացումն, Հայու բերանն ու լեզուն, Հայու ներկայն ու ապագայն»[3]: Բայց ազգային-պահպանողական հայտնի այդ հեղինակը հայոց կրթության ազատության համար այլ միջոց չէր առաջարկում, քան «աքնել, խորհել, աղաղակել, աղերսել, աղաչել, ձանձրացնել բողոքներով»:

Արտասահմանի հայ մամուլն այդ օրերին հաճախ էր տպագրում Կովկասից ուղարկված անստորագիր նամակներ, որոնց հեղինակներն իրենց զայրույթն էին հայտնում կառավարության դեմ: «Արևելյան մամուլում» տպագրված մի նամակում ասվում էր. «Այսօր մեր Կովկասյան Հայք խոր սուգի մեջ են. մեր աչքով տեսնում ենք մեր Ազգի և Եկեղեցու կորստյան վտանգն. ոչ ձայն կարող ենք բարձրացնել և ոչ իրավունք պահանջել. մեր լալն ու ողբն անգամ արգիլված է. ինչպես որ լացող երեխային սուս անելու համար շատ անգամ գլխին տալիս են, ճիշտ այդպես է մեր վիճակն:

Մեր Կովկասի հայ լրագիրներն մի տող անգամ կարող չեն գրել Հայոց նեղ վիճակի վրա»[4]:

---

1 «Արևելյան մամուլ», 1885, № 3, էջ 137:

2 «Մասիս», 1884, 29 դեկտեմբերի, էջ 532:

3 Մ. եպս. Մուրադյանց, Երկու խոսք Ռուսաստանի հայոց կրոնական և կրթական վիճակին վրա, Կ. Պոլիս, 1888, էջ 63:

4 «Արևելյան մամուլ», 1886, № 8, էջ 362:

Դպրոցների շուրջ եղած աղմուկը դուրս էր եկել կայսրության սահմաններից, եվրոպական մամուլում հոդվածներ էին սկսել երևալ այդ մասին, արևմտահայությունն իր հուզմունքն էր արտահայտում: Հանդիպելով անսպասելի դիմադրության, ցարիզմը երկյուղ էր կրում լրիվ վարկաբեկվելուց, ուստի և հարմար առիթի էր սպասում որոշ զիջումներ անելու: Իսկ այդ առիթը իրեն երկար սպասել չտվեց:

Թիֆլիսի և Պոլսի հայ բաղաքական գործիչները եռանդուն պայքար ծավալելով կաթողիկոսական ընտրությունների շուրջը, նախապատվությունը տալիս էին արևմտահայ թեկնածուին, այն հույսով, որ նա կկարողանա ինքնուրույն դիծ վարել, և հատկապես դպրոցների խնդրում: 1884 թ. մայիսին կայացած ընտրությունների ժամանակ, հակառակ իր կամքին, կաթողիկոսական առաջին թեկնածու ընտրվեց Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը: Նրա ընտրությունը հաճելի չէր ցարիզմին և սա մերժեց կաթողիկոսի հաստատումը: Ներսեսի անակնկալ մահը առիթ եղավ նոր ընտրություն նշանակելու: Ցարիզմի ցանկության հակառակ առաջին թեկնածու ընտրվեց դարձյալ արևմտահայերի ներկայացուցիչ Մելիքսեդեկ եպս. Մուրադյանը և իբրև երկրորդ թեկնածու՝ Մակար եպիսկոպոսը, որը դպրոցների շուրջ ծավալված պայքարի ընթացքում շատ դժուշ դիրք էր բռնել: Դա ընդունվեց որպես հավատարմության ու հնազանդության արտահայտություն, ուստի և, շրջանցելով առաջին թեկնածուին, 1885 թ. մայիսին ցարը նրան էլ հենց կաթողիկոս հաստատեց:

Այս բանը դժգոհության նոր ալիք բարձրացրեց: Հատկապես բողոքում էին պոլսահայ շրջանները: Մակարը արհամարհական «ցարընտիր» անունն ստացավ, նրան «տեղական վարչության չինովնիկ» էին համարում և սպառնալից նամակներ հասցեագրում:

Ցարիզմը հարկավոր դտավ ժողովրդի աչքում վերականգնել Մակարի ընկած հեղինակությունը: Մակարը կաթողիկոսական աթոռին բազմեց այն ժամանակ, երբ դպրոցներն արդեն փակված էին: Նրա առջև խնդիր էր ծառանում՝ մի կողմից միջոցներ ձեռք առնել մոբիոտված աղգային դպրոցներին նորից կենդանություն հաղորդելու, և մյուս կողմից չբարկացնել իր հովանավորներին:

1885 թ. հոկտեմբերին ժամանելով Անդրկովկաս (Մակարը մինչ այդ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդն էր), նոր կաթողիկոսը անմիջապես խորհրդակցություն հրավիրեց, որտեղ քննության առնվեցին 1884 թ. դպրոցական կանոնները և մի շարք առաջարկներ մշակվեցին կառավարությանը դի-

մում ուղղելու համար: Ապա կաթողիկոսը հանդիպում ունեցավ Դոնդուկով-Կորսակովի հետ, որի միջոցով հավատարմության հավաստիացումներ անելուց հետո, խնդրեց նրա միջնորդությունը դպրոցների վերաբացման օգտին: Կառավարչապետը բարյացակամ վերաբերվեց նրա դիմումին և համապատասխան հաղորդում արեց Պետերբուրգ[1]:

1885 թ. դեկտեմբերի 17-ին Դ. Տոլստոյը, Ի. Դելյանովը և Դոնդուկով-Կորսակովը Պետերբուրգում դարձյալ (արդեն քանիերորդ անգամ) խորհրդակցության հավաքվեցին: Խորհրդակցությունը որոշեց ոչ մի փոփոխություն չկատարել 1884 թ. կանոնների մեջ, այլ կաթողիկոսի առաջարկների քննարկման եղրակացությունները, որպես բացատրություն, հայտնել նրան և թույլ տալ վերաբացելու դպրոցները:

Ինչպիսի հիմնական հարցեր էր առաջ քաշել կաթողիկոսը:

Նախ, նա խնդրում էր 1884 թ. կանոնների առաջին կետում շեշտել, որ միդասյա դպրոցը ունենալու է երեք տարվա, և երկդասյան՝ հինգ տարվա դասընթաց: Խորհրդակցությունն ընդունեց այդ առաջարկը, դանելով, որ դրանով էական ոչինչ չի փոխվում: Միաժամանակ, կաթողիկոսը խնդրում էր թույլ տալ ծխական դպրոցներին կից բացելու մեկամյա լրացուցիչ դասարաններ, որպեսզի ավարտողներն այդ ընթացքում կրկնեն ողջ դասընթացը: Կաթողիկոսը խորամանկել էր և ցանկանում էր զարտուղի ճանապարհով իրավունք ձեռք բերել տարրականից բարձր դպրոց ստեղծելու համար: Սակայն ցարական բարձր պաշտոնյանները գլխի ընկան և հարցը թողեցին առկախ. քանի որ դպրոցները շրջանավարտ կտան 3—5 տարի հետո, ապա այն ժամանակ էլ կառավարչապետն իր հայեցողությամբ լուծում կտա այդ խնդրին:

Կանոնների երկրորդ կետում Մակարն առաջարկել էր նշել, որ դպրոցները գտնվում են կաթողիկոսի գլխավոր իշխանության տակ և բացվում ու փակվում են նրա կոնդակներով: Այս առաջարկը ևս չընդունվեց, քանի որ 3-րդ կետում նշված «հոգևոր իշխանության» տակ հասկացվում էր կաթողիկոսը:

Կաթողիկոսը խնդրում էր վերափոխել 8-րդ կետը և իրավունք տալ տարրականից բացի, ստեղծելու նաև չորսդասյա դպրոցներ: Սա արդեն դեմ էր ցարական բյուրոկրատիայի բոլոր հաշիվներին: Խորհրդակցությունը ոչ մի նոր բան չէր ասում, երբ արձանագրում էր, որ միայն ներկա կաթողիկոսին, որպես անձնական բա-

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 99, էջ 222—223:

ցառուիթյուն, կարելի է հնարավորութիւն տալ, յուրաքանչյուր առանձին դեպքում, կառավարչապետի միջոցով լուսավորության մինիստրից թույլտվություն խնդրելու՝ նման դպրոց բացելու համար և այն էլ «մասնավոր ուսումնական հաստատությունների համար ընդհանուր հիմունքներով»[1]:

Սորհրդակցությունը չընդունեց նաև այն խիստ էական առաջարկը, որով պետք է դասավանդման պաշտոնական իրավունք տրվեր էջմիածնի հնմարանն ու թեմական դպրոցներն ավարտողներին, պատճառ բերելով, որ առանց այն էլ կաթողիկոսից է կախված ուսուցիչների նշանակման հարցը և նա կարող է իր ցանկացած մարդուն ընտրել: Սրանով խորհրդակցությունը խույս էր տալիս որոշակի պատասխանից և հետագա միջամտություններից հնարավորություն ստեղծում ուսուցիչների ընտրության հարցում:

Ահա այս ոչինչ չասող «բացատրություններն» էին, որ Դոնդուկով-Կորսակովը պետք է հայտներ կաթողիկոսին և թույլ տար բացելու դպրոցները: 1886 թ. հունվարի 16-ին կայսրը հաստատեց խորհրդակցության որոշումները: Հաջորդ օրը Դոնդուկով-Կորսակովը հետագրում էր կաթողիկոսին. «Միայն երեկ տեղի ունեցավ ուսումնական կանոնների վերաբերյալ Ձերդ Վեհափառության միջնորդության առթիվ Բարձրագույն որոշումը, որը չեմ հապաղի Ձեզ հայտնել փոստով: Հուսով եմ, որ այժմ կվերանան Ձերդ Վեհափառությանը մտահոգող կասկածները և Աստծո ու Ձեր բարերար ուշադրության օգնությամբ Կովկասյան հայերի ժողովրդական կրթության գործը կկանգնի ճշմարիտ ուղու վրա»[2]:

Այս լուրը ցնծությամբ ընդունվեց հանրության կողմից, կաթողիկոսը կարգադրեց գոհունակության մաղթանքներ կատարել եկեղեցիներում, Պոլսի ռուսական դեսպանության շենքի առաջ ուրախության ցույցեր եղան: Բայց շատ շուտով պարզվեց գործի խճուճությունը, երբ սաացվեցին կառավարչապետի բացատրությունները: Ընդհանուր ուրախությունը փոխվեց խոր հիասթափության: Կաթողիկոսն ընկավ անհարմար դրության մեջ, բայց այլևս ոչինչ անել չէր կարող. կայացել էր այնքան սպասված կայսերական «հաստատումը», կառավարության բարեխնամության մասին ունեցված սասլն պղպջակը պայթել էր: «Մեր բոլոր հույսերը հօդս ցնդեցան և դաստիարակության գործը մեղա-

1 «Записка об армянских школах», стр. XXIX.

2 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 113, էջ 20:

նում անտանելի շրջանի մեջ է մտնում»[1],—այդ օրերին գրում էին Շուշուց Արիստակես Սեդրակյանին։

Մակար կաթողիկոսին այլևս բան չէր մնում անելու, քան կարդադրել 1884 թ. կանոնների և 1886 թ. «բացատրությունների» հիման վրա նոր ուսումնական տարվանից բացելու դպրոցները։ Իր հիասթափության մեջ Մակարը մխիթարություն էր գտնում նրանում, որ պատվիրում էր գլխավորապես ուշադրություն դարձնել երկդասյա դպրոցների կազմակերպման վրա։

Միաժամանակ «Արարատ» ամսագրի 1886 թ. հուլիսյան համարում տպագրվեցին հայոց եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոններ, որոնք կազմվել էին էջմիածնի կողմից՝ հաշվի առնելով կառավարության պահանջները։ Մակարը աշխատել էր կանոնների մեջ հատկապես շեշտել այն հարցերը, որոնց վրա կառավարական խորհրդակցությունն ավելորդ էր համարել հատուկ կանգ առնել։ Կանոններում պարզորոշ նշվում էին կաթողիկոսի իրավունքները դպրոցների հարցում. նրա հրամանով են բացվում և նրա սահմանած կանոններով առաջնորդվում միդասյա և երկդասյա դպրոցները, կաթողիկոսն է հաստատում հոգաբարձուներին, ուսուցիչների ընտրության և նշանակման հարցը վճռում են առաջնորդները։ Կանոնները սահմանում էին, որ ուսուցչության իրավունք ունեն թեմական և արքունի միջնակարգ դպրոց ավարտածները և կաթողիկոսի թույլտվությամբ՝ ավելի թերի կրթություն ունեցողները։ Մի շարք հիմնական հարցերում կանոնները կրկնում էին 1868 և 1876 թթ. կանոնների պահանջները՝ դպրոցների նյութական միջոցների, աշակերտների տարիքի, հոգաբարձությունների մասին։

Նորություն էր այն, որ շեշտվում էր արական և իգական դպրոցների անջատ լինելու սկզբունքը, թույլ էր տրվում մի քանի միմյանց մոտ գտնվող գյուղերին պահել մեկ կենտրոնական դպրոց, սահմանվում էր դպրոց ընդունվելու ժամկետ՝ հունվարին և սեպտեմբերին, որոշակի սահմանվում էին արձակուրդներ՝ քաղաքներում՝ հունիսի կեսից մինչև օգոստոսի վերջը, իսկ գյուղերում՝ ըստ պայմանների։ Սահմանվում էին նաև եկեղեցական ու կայսերական տոն օրեր՝ ընդամենը 26 օր։ Եկեղեցական-ծխական դպրոցներում ավանդվելիք առարկաներ էին հատատավում՝ հայոց և ռուսաց լեզուները, կրոնը, թվաբանությունը, հայոց, ռուսաց և ընդհանուր աշխարհագրությունը, հայոց և ռուսաց պատմությու-

---

1 ԳԱՄ, Սեդրակյանի արխիվ, բաժ. 1, վավ. 8, էջ 41։

նը, բնական պատմությունը, երգեցողությունը, վայելչագրությունը, գծագրությունը, իսկ իգականներում՝ նաև ձեռագործը։ Հայկական դպրոցներում արդեն արմատներ գցած բնական մի շարք գիտությունների և օտար լեզուների դասավանդումը բացասվում էր։

Ահա այս կանոնների հիման վրա էլ 1886 թ. նոր ուսումնական տարվանից վերաբացվեցին դպրոցները։

Դպրոցների վերաբացման առաջին իսկ օրվանից Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկին սկսեց ամեն առիթով խոչընդոտներ հարուցել նրանց առանց այն էլ խաթարված ընթացքի առջև։ Ցարահաճոտատ օրենքները դուրկ էին որոշակիությունից ու պարզությունից և կամայական մեկնաբանման լայն հնարավորություններ էին առեղծում։

Նախքան դպրոցների վերաբացումը հոգաբարձուի և կաթողիկոսի միջև վեճ ծագեց ռուսաց լեզվի դասավանդումն սկսելու ժամկետի կապակցությամբ։ Հոգաբարձուն պնդում էր, որ պետք ռուսաց լեզվի դրուստությունը սկսվի երկրորդ տարվա առաջին կիսամյակից, իսկ կաթողիկոսը՝ երկրորդ կիսամյակից, քանի որ շուտ սկսելու դեպքում երեխաները, որ դեռ լրիվ չէին տիրապետել մայրենի լեզվին, խիստ կդժվարանային նոր լեզու սովորելիս։ Երկար դրագրություններից հետո կաթողիկոսը որոշեց ղիջել, հետագա անցանկալի բարդություններից խուսափելու համար։

Բայց հաճատ Յանովսկին կանգ չառավ կես ճանապարհին։ Անընդհատ կապ պահպանելով լուսավորության մինիստրի հետ և քաջալերվելով նրա կողմից, նա նորանոր պահանջներ առաջ բաշեց։ Հիմնական հարվածը նա ուղղեց ուսուցիչների նշանակման հարցում կաթողիկոսին վերապահված իրավունքի դեմ։ Յանովսկին պահանջեց, որ այդ հարցը յուրաքանչյուր դեպքում համաձայնեցվի իր հետ և ոչ թե միայն տեղեկացվի իրեն, ինչպես օրենքն էր սահմանել։ Յուրովի մեկնաբանելով «անհամապատասխան» ուսուցիչներին հեռացնելու իրեն տրված իրավունքը, նա պնդում էր, որ կաթողիկոսը կարող է ուսուցիչներ ընտրել միայն ուսուցչական վկայական ունեցողների միջից և պահանջում էր, որ կարճ ժամանակում հայկական դպրոցների ուսուցիչներին ապահովի պետական ուսուցչական վկայականով։ Ըստ նրա, էջմիածնի ճեմարանն ավարտածները իրավունք ունեին դասավանդել միայն կրոն ու հայոց լեզու։ Իր այս պահանջը չկատարելու դեպքում Յանովսկին սպառնում էր հեռացնել վկայական չունեցող ուսուցիչներին։ Նրա հաշիվը պարզ էր. նա ցանկանում էր

հնամարանի և թեմական դպրոցների սաներին զրկել ուսուցչության իրավունքից, շատ լավ գիտակցելով, որ հնարավոր չէ կարճ ժամկետում պարտադրել բոլոր ուսուցիչներին վկայականի քննություններ հանձնել։ Դրանով հայ դպրոցը կկանգներ անելանելի վիճակի առաջ, ինչը իշխանություններին կապացուցեր, որ հոգևորականությունն անզոր է դպրոցները կառավարելու և ուրեմն հարկավոր է դրանք լրիվ ենթարկել իր տնօրինությանը։

Յանովսկին պահանջից նաև հայկական դպրոցներում արգելել հայոց պատմության և աշխարհագրության դասավանդումը, «քանի որ այն վայրերը, որտեղ ապրում են հայերը, ինքնուրույն պետություն չեն կազմում»[1]։ 1877 թ. փետրվարի 17-ին կաթողիկոսին ուղարկված նամակում նա գրում էր. «Այս իսկ պատճառով պարիսպ ունեմ խոնարհաբար խնդրելու Ձերդ Վեհափառությունից, որպեսզի կարգադրություն արվի հայ-լուսավորչական եկեղեցական ուսումնարաններին՝ նրանցում հայերեն լեզվով Հայաստանի պատմության և աշխարհագրության ավանդումը դադարեցնելու և այդ առարկաները ռուսաց պատմության ու աշխարհագրության դասերին ռուսահպատակներով բնակեցված վայրերի մասին համառոտ պատմա-աշխարհագրական տեղեկությունների հաղորդմամբ փոխարինելու վերաբերյալ, որպես Ռուսաստանի պատմության ու աշխարհագրության բաղկացուցիչ մաս, միայն այն հաշվով, որպեսզի այդ տեղեկությունները հաղորդվեն ոչ այլ կերպ, քան ռուսաց լեզվով և իմ կողմից հաստատված ծրագրերով»[2]։

Յանովսկին կանդ չառավ նաև հերյուրանքներ հորինելու առաջ։ Կառավարությանը ներկայացրած իր զեկույցում նա հայտնում էր. «Ներկայումս հայերն ապրում են տարբեր վայրերում և պետություններում, և դա, Հայաստանի պատմության և աշխարհագրության հատուկ առարկայի գոյության պայմաններում, առիթ է տալիս Հայաստանի աշխարհագրական քարտեզները գծել իրրև առանձին պետության, որի կազմում մտնում է ոչ միայն ամբողջ Անդրկովկասը, այլև Հյուսիսային Կովկասը (!?—Վ. Ե.)։ Այսպիսի քարտեզները աշակերտների ու ամբողջ բնակչության մտքերում ակամայից թյուր հասկացողություն են մտցնում իրենց հայրենիքի՝ Ռուսաստանի նկատմամբ հայերի ունեցած վերաբերմունքի մասին»[3]։ Զինովևիկ-մանկավարժը չէր պատկերացնում, թե ինչպես կարող է այլազգիների հայրենական

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 113, էջ 59 հ կ.։ .

2 Նույն տեղում, էջ 59 հ. կ.—60։

3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 100, էջ 44։

պատմություն ու աշխարհագրություն լինել Ռուսաստանի պատմությունից ու աշխարհագրությունից դուրս: Նրան սարսափեցնում էր այն միտքը, որ Կովկասում կարող են լինել «հայերի, վրացիների, թաթարների, օսերի, աբխազների, չերկեսների և այլոց «հայրենական պատմություններ»:

Չսահմանափակվելով հայոց դպրոցներով, Յանովսկին անդրադարձավ նաև արքունի ուսումնարաններին: Նա դիմեց լուսավորության մինիստրին և թույլտվություն խնդրեց, որպեսզի պետական դպրոցներում հայ կրոնը ավանդվի կամ տեղական, կամ ռուսաց լեզվով, եթե աշակերտները տեղական լեզվին չեն տիրապետում, իսկ տեղական լեզվով ավանդվեն միայն աղոթքները: Մինիստր Դելյանովը, այսքանը ևս շատ համարելով, առաջարկում է հայ կրոնը ավանդել միայն ռուսերեն, քանի որ Ռուսաստանի մյուս մասերում լյութերական ու կաթոլիկ կրոնը նույն ձևով է ավանդվում: Մինիստրը թույլ էր տալիս միայն հայերեն իմացող հայ աշակերտներին այդ լեզվով սովորեցնել լոկ աղոթքները:

Որքան էլ որ Մակար կաթողիկոսը զգույշ ու հարմարվող էր համարվում, այնուամենայնիվ, չկարողացավ անտարբեր մնալ այս նոր ոտնձգությունների նկատմամբ: Նա սկսեց հակառակ փաստարկումներ բերել, և մոտ երեք տարի էջմիածնի ու հոգաբարձուի միջև ձգվեց երկար ու հոգնեցուցիչ գրագրություն: Չկարողանալով լուծում տանել Յանովսկու հետ, կաթողիկոսը բողոքներով դիմեց կառավարչապետին, աշխատելով ապացուցել հայ եկեղեցու իրավունքները կրթական հարցում:

Այս ամբողջ պատմությունը Դոնդուկով-Կորսակովին առիթ ծառայեց Մակարին հիշեցնելու նրա աված հավատարմության ու հնազանդության հավաստիությունների մասին և կշտամբելու, որ նա ևս փորձում է դնալ իր նախորդների ըմբոստ ուղիով: Կառավարչապետին առանձնապես զայրացրել էր, որ իրեն ուղղված կաթողիկոսի 1887 թ. փետրվարի 27-ի նամակը հայտնի էր դարձել հանրությանը և նույնիսկ տպագրվել էր Պոլսի «Փունջում»՝ կարծես դրանով հասարակության դատին հանձնելով կառավարության վարքագիծը: (Կարելի է կարծել, որ այդ նամակի հրապարակման գործում Մակարի մատը խառն էր, և նա ցանկանում էր ցույց տալ ժողովրդին, որ ինքն այնքան էլ հնազանդ չէ և ձեռքից եկածն անում է կրթական գործը բարելավելու համար): Կառավարչապետը իրենից հայցած աջակցությունը կապում էր կաթողիկոսի հնազանդության վերականգնման հետ:

Գործը դարձյալ հասավ Պետերբուրգ։ Կայսեր համաձայնությամբ ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ Ֆ. Գիրսը 1888 թ. հունիսին գործուղվեց Անդրկովկաս՝ մոտիկից իրազրությանը ծանոթանալու։ Նա եղավ կառավարչապետի և Յանովսկու մոտ, ապա մեկնեց Էջմիածին։ Գործերի ընթացքից խիստ հուսահատված կաթողիկոսը նրան ևս ներկայացրեց իր բողոքի հիմնական փաստարկները։

Հուլիսի 6-ի իր զեկուցագրում Գիրսը հիմնականում պաշտպանում էր կաթողիկոսի առարկությունները, գտնելով, որ Յանովսկու պահանջները անօրինական են և վնասում են կաթողիկոսի ընկած հեղինակությունը բարձրացնելուն։ Նա գտնում էր, որ արքունի դպրոցներում հայ կրոնի ավանդումը ռուսերեն անցնելու դեպքում դժվար կլինի համապատասխան ուսուցիչներ գտնել, իսկ դա կարող է խիստ դժել կրոնի վարկը ու ծաղրի առարկա դարձնել այն։ Ուշադրավ է, որ ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյը, կարդալով զեկուցագրի այն մասը, որտեղ Գիրսը անօրինական էր համարում հայոց դպրոցների ուսուցիչներից պետական ուսուցչական վկայական պահանջելը, սեփական ձեռքով մակագրել էր. «Ռուսական ժողովրդական դպրոցներում ևս այդ բանը պահանջվում է միայն ժողովրդական լուսավորության մինիստրության ուսումնարանների, և ոչ թե բոլոր դպրոցների համար։ Եթե նույնը պահանջվեր մեր ռուսական դպրոցներից, ապա գրեթե բոլորը ըստիպված կփակվեին»[1] *(ընդգծումը իմն է—Վ. Ե.)*։

Գիրսը հայտնում էր, որ կաթողիկոսը խնդրում է ուսուցիչներին վկայականների քննություններ հանձնելու համար 3—5 տարի ժամանակ տալ։ Նա այդ խնդիրը իրավացի էր համարում։ Յանովսկու պահանջներից Գիրսը պաշտպանում էր միայն հայոց պատմության և աշխարհագրության առարկայի արգելումը, գտնելով, որ ռուսական պետության արժանապատվությունը թույլ չի տալիս այդ առարկաների առանձին դոյությունը։

Հանդստացնելով և հուսադրելով կաթողիկոսին, ցարական պաշտոնյան նրանից համաձայնություն ստացավ, որ նա թույլատրի դեն. Լազարևի արձանի կառուցումը Թիֆլիսում, Էջմիածնի ճեմարանից հեռացնի Բուրբահպատակ Օրմանյան եպիսկոպոսին, շուտով կառավարության քննարկմանը ներկայացնի ճեմարանի ու թեմական դպրոցների կանոնադրությունների նախագծերը, որ նախկին կաթողիկոսները խույս էին տալիս անելուց։

---

[1] ՍՍՀՄ ՊԿՊՄ., ֆ. 821, ց. 138, գ. 103, էջ 38 հ. կ.։

Գիրքի տեսակետների ոգով Դ. Տոլստոյը զեկուցագիր ներկայացրեց ցարին և ստացավ նրա համաձայնությունը հայկական դպրոցների առթիվ ծագած հարցը պետական քննության ենթարկելու համար: Միաժամանակ 1888 թ. սեպտեմբերի 28-ին Մակար կաթողիկոսը հանդիպում ունեցավ Անդրկովկաս այցելած Ալեքսանդր III-ի հետ, որը խոստացավ մոտ ապագայում լուծում տալ նրան հուզող հարցերին:

1889 թ. մարտի 5-ին կայացավ կառավարական խորհրդակցություն՝ Դ. Տոլստոյի, Ի. Դելյանովի, Ա. Դոնդուկով-Կորսակովի և Ֆ. Գիրսի մասնակցությամբ: Խորհրդակցությունը եկավ այն եզրակացության, որ առայժմ կարիք չկա խիստ միջոցների դիմել և որոշ միջումներով պետք է ընդառաջել կառավարությանը նվիրված կաթողիկոսին, «սակայն միայն ժամանակավոր միջոցի ձևով, որպեսզի կառավարությունը հնարավորություն ունենա, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ արտոնությունը»[1]: Որպես այդպիսի ժամանակավոր միջոց ճանաչվեց պետական դպրոցում հայ կրոնի հայերեն լեզվով դասավանդման թույլավությունը: Որոշվեց, որ այժմ ևեթ հայոց դպրոցի ուսուցչությունը լեզվի, Ռուսաստանի պատմության ու աշխարհագրության ուսուցիչները պետք է համապատասխան ցենզ ունենան՝ կամ ավարտած լինեն պետական հաստատությունները, կամ ուսուցչության իրավունքի քննություն հանձնեն, իսկ մյուս առարկաների ուսուցիչները պետք է այդ ցենզը ձեռք բերեն առաջիկա 5 տարում, որից հետո ցենզ չունեցողները կհեռացվեն:

Խորհրդակցությունը հաստատեց կաթողիկոսի իրավունքը ուսուցիչների նշանակման և ազատման հարցում և նշեց, որ «հոգևորական մասնակցությունը որքան էլ որ ցանկալի է, այն իր համար հիմնավորում չի գտնում գործող կանոնների ու նրանց բացատրությունների մեջ»[2]: Էական նշանակություն ուներ Հայաստանի պատմության ու աշխարհագրության դասավանդման վերաբերյալ որոշումը: Խորհրդակցության արձանագրության մեջ ասված էր. «Կառավարությունը պարտավոր է բանվոր ու հողագործ մարդկանց խավար մասսայի մեջ, որը դեռևս չի վարակված հայ ինտելիգենցիայի՝ մեր նկատմամբ թշնամական մասի տենչանքներով, թույլ չտալ թափանցելու հայկական պետության վերականգնման գնորային հույսերը»[3]: Այդ պատճառով արգելվում էր հիշյալ առար-

1 «Записка об армянских школах», стр. XXXVII.

2 Նույն տեղում, էջ XL:

3 Նույն տեղում, էջ XLII:

կանների ավանդումը հայկական դպրոցներում որպես «օրենքով անթույլատրելի»:

1889 թ. մարտի 22-ին ցարը հաստատեց խորհրդակցության որոշումները: Կովկասյան իշխանություններին հաջողվեց սահմանափակումների մի նոր շղթա ևս գցել հայ դպրոցի վրկին: Հայաստանի պատմության ու աշխարհագրության արգելումով ցարական բյուրոկրատներն ուզում էին ժողովրդին մոռացնել տալ իր անցյալը, զրկել ազգի ներկայի ու ապագայի մասին մտածելու հնարավորությունից: Սակայն նրանք մոռանում էին, որ, ինչպես հաստատացած անհատին հնարավոր չէ սոսկել մոռանալու իր կենսագրությունը, այնպես էլ ազգային գիտակցության համար հաստատացած ժողովրդին չի կարելի սոսկել մոռանալու իր բազմադարյա պատմությունը:

Յարիմին հաջողվեց վերջապես փոխել հայ դպրոցի զարգացման բնական ընթացքը: Նախկին դրությունը վերականգնելու մի շարք անհաջող փորձերից հետո կաթողիկոսը համոզվեց, որ դպրոցների դեմ հալածանքը մի կամ մի քանի մարդու քմահաճույքը չէ, այլ կառավարական մշակված վարքագիծ: Նա որոշեց ավելի երևութական դարձնել հոգևոր իշխանության դերը կրթական գործում, աշխատեց դպրոցի կարգ ու կանոնը որոշ չափով համապատասխանեցնել կառավարական օրենքներին՝ նոր միջամտություններից խույս տալու համար: Մակար կաթողիկոսի հրատարակած մի շարք դպրոցական կանոնների նպատակն էր նաև պարզություն ու որոշակիություն մտցնել դպրոցում:

Այդ ժամանակ շատերն էին մեղադրում Մակարին, որ նա իբր չցանկացավ վերականգնել հայ դպրոցի նախկին ընթացքը և կամովին ենթարկվեց կառավարության թելադրանքին: Նրանք չէին տեսնում, որ այժմ դրությունը խիստ փոխվել էր և էջմիածինը չէր այն կազմակերպությունը, ուժը, որն ի վիճակի լիներ դիմակայելու և վնասազերծ անելու լայն ճակատով հարձակման անցած ցարական ռեակցիային: Այդպիսի ուժ հայ իրականության մեջ (և ոչ միայն հայ իրականության մեջ) դեռ նոր էր սկսել կազմավորվել և հետագայում պետք է իր բոլոր ոլորտը ցույց տար ցարական բռնակալությանը:

1889 թ. հրապարակվեց «Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց և ծրագիր առարկայից ավանդելոց ի նոսին»: Այս կանոններով դպրոցի մերձավոր ղեկավարը թեմական առաջնորդն էր, որը գործում էր կաթողիկոսի դիտությամբ ու հա-

մաձայնությամբ։ Դպրոցական հոգաբարձություններն անմիջապես ենթարկվում էին առաջնորդներին։ Ուսուցիչների ընտրության համար սահմանվում էր հետևյալ կարգը. ուսուցիչ լինել ցանկացողները պետք է դիմեին կաթողիկոսին, որը կազմում էր նրանց ցուցակը։ Միայն այդ ցուցակի մեջ մտած մարդկանցից կարելի էր ընտրել ուսուցիչներ։ Կանոնները մտցնում էին նաև ավագ ուսուցչի պաշտոնը, որի ընտրությունը կատարում էր առաջնորդը։ Այնուհետև ավագ ուսուցիչը, հոգաբարձության հետ խորհրդակցելուց հետո, ընտրում էր դպրոցի ուսուցիչներին և ներկայացնում թեմակալի հաստատմանը։ Հատուկ տեղ էր հատկացվում ավագ ուսուցչի նախագահությամբ գործող մանկավարժական ժողովներին։ Նորություն էր նաև դպրոցական հոգաբարձության ընտրությունների կարգի սահմանումը. ընտրություններին կարող էին մասնակցել 25 տարեկանից բարձր անձինք, որոնք իրենց միջից պետք է ընտրեին պատգամավորներ՝ 100-ից 5 հոգու հաշվով։ Վերջիններս էլ իրենց միջից ընտրում էին հոգաբարձուներին։ Ուսուցիչները ընտրությանը մասնակցել չէին կարող։ Հոգաբարձության կազմը փոփոխության չէր ենթարկվում։ Կանոնները սահմանում էին, որ վկայված չքավորները կարող են լրիվ կամ մասամբ ազատվել ուսման վարձ վճարելուց։

Հետաքրքիր էր դիմնապարտության մասին մտցրած կետը. ըստ կանոնների, հոգևոր-ծխական դպրոցները դիմվորադրության հարցում պետք է ունենային պետության կողմից սահմանված չորրորդ կարգի (տարրական) դպրոցի արտոնություններ. ուսուցիչները ազատվում էին դիմվորական ծառայությունից և հաշվվում էին պահեստում, իսկ եթե նրանք վեց տարի անընդմեջ աշխատել էին դպրոցում, ապա լրիվ ազատվում էին դիմվորությունից։ Այս կետը հետագայում նոր վեճերի առիթ ծառայեց, քանի որ Յանովսկին ոչ մի կերպ չէր համաձայնվում որևէ արտոնություն ճանաչել հայկական դպրոցների համար։

Որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում առարկայական ծրագիրը։ Հիմնականում թողնելով նախկին տարրական դպրոցներում ավանդվող առարկաները և ռուսաց լեզվի հարցում համաձայնվելով Յանովսկու հետ, նոր կանոնները ծրագրից դուրս էին դցում բոլոր տեսակի պատմության ու աշխարհագրության առարկաները։ Քանի որ օրենքը սահմանում էր, որ Ռուսաստանի պատմություն և աշխարհագրություն պետք է անցնել այն դպրոցներում, որտեղ ավանդվում են ընդհանուր պատմությունն ու աշխարհագրությունը, ապա վերջիններս հանվում էին ծրագրից, որ-

պետք չավանդվի նաև Ռուսաստանին վերաբերող համանման առարկաները։ Սրանով էջմիածինը յուրօրինակ վրեժ էր լուծում ուսումնական իշխանություններից Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը արգելելու համար։ Դրա փոխարեն հայոց լեզվի ծրագրում ընթերցանության համար հատկապես շեշտվում էին Եղիշեի, Փարպեցու, Խորենացու, Ագաթանգեղոսի և մի շարք այլ պատմիչների գործերը։ Հոգևոր իշխանությունը ցանկանում էր լեզվալ ճանապարհով, ուրիշ անվան տակ, որևէ կերպ վերականգնել հայոց պատմության դասավանդման տարրերը։

Այսպիսով, ակամայից է՛լ ավելի էր սեղմվում դպրոցի ընդգրկած ծավալը. այնտեղ ավանդվող առարկաներն էին մնում՝ հայոց և ռուսաց լեզուները, թվաբանությունը, բնական պատմությունը, երգը, վայելչագրությունը, գծագրությունը և ձեռագործը (իգականում)։

Մյուս հարցերում հիմնականում կրկնվում էին 1886 թ. կանոնները։ Ինչպես առաջին իր կանոնների մեջ, այս անգամ էլ Մակարը ոչ մի խոսք չէր ասում պետական մարմինների իրավունքների և հսկողության մասին։

Բացի կանոններից, Մակար կաթողիկոսը մի շարք կոնդակներով ու կարգադրություններով աշխատեց կարգավորել ուսուցիչների ընտրության գործը։ Դեռ 1887 թ. նա պահանջեց, որ ուսուցիչներն անպայման ավարտած լինեն պետական կամ ազգային միջնակարգ դպրոցները, իսկ համապատասխան կրթություն չունեցողները վկայական ստանալու համար քննություն հանձնեն ճեմարանում։ 1889 թ. պետական խորհրդակցության որոշումներից հետո կաթողիկոսը պատվիրեց ուսուցիչներին պատրաստվել և վկայականի քննություն հանձնել արդեն պետական հաստատություններում։

1889 թ. կանոնները հրատարակվելուց հետո կաթողիկոսը հատուկ դասակարգում սահմանեց ուսուցիչների համար. նայած կրթական մակարդակին, ուսուցիչները բաժանվեցին 13 կարգի և դրան համապատասխան կազմվեց ու հրատարակվեց ուսուցիչների ցուցակը, որի մեջ մանում էին 606 ուսուցիչ-ուսուցչուհիներ։ Դրանից հետո այդ ցուցակները ամեն տարի թարմացվում և վերփոխվում էին։

Հաջորդ տարի, նպատակ ունենալով կարգավորել ուսուցիչների վարձատրության գործը, կաթողիկոսը հատուկ կոնդակով սահմանեց կոպարներ, ըստ որոնց վարձատրությունը պետք է կախ-

ված լիներ ուսուցչի կարգից, առարկայի բնույթից և դպրոցի գըտնըվելու վայրից: Հայ դպրոցի անտեսական երերուն վիճակի պայմաններում սա ուսուցիչների վարձատրության գործում կայունության և որոշակիության մտցնելու փորձ էր. սահմանվում էր աշխատավարձի մինիմում, թեև ավյալ դեպքում էլ տուժում էին բարձր վարձատրվող որակյալ ուսուցիչները:

1890 թ. կաթողիկոսն ստեղծեց նաև ուսումնավարչական հանձնաժողով, որը զբաղվելու էր դասագրքերի ընտրության գործով և ուսուցիչների յուցակագրման մասին վճիռներ էր ներկայացնելու իրեն:

Ինչևէ, Մակարի դպրոցական նորամուծությունները ստեղծված վիճակից ելք գտնելու հուսահատ փորձեր էին, փորձեր, որոնք խորացող ճգնաժամի պայմաններում մի առանձին հաջողություն չէին ունենալու: Սակայն առաջիկա մի քանի տարիներին հայ դպրոցը դեռևս գործելու և առաջնորդվելու էր այդ նորամուծություններով:

* * *

1880-ական թվականների սկզբներից Ռուսաստանում սաստկացած քաղաքական ռեակցիան իր կնիքը դրեց նաև հայկական դպրոցական կյանքի վրա:

Եթե կայսրության մյուս շրջաններում ցարիզմն աշխատեց տարրական կրթությունը ենթարկել ուղղափառ եկեղեցու անկաշկանդ հսկողությանը, ապա հայկական դպրոցների նկատմամբ նա նույնն անել չէր կարող. «ազգային սեպարատիզմ» հրահրող հայ եկեղեցուն այլևս չէր կարելի վստահել մատաղ սերնդի դաստիարակության գործը: Եվ եթե հայ դպրոցների նկատմամբ հնարավոր չէր իրագործել ուղղափառ եկեղեցու հսկողությունը, ապա կառավարությունը որոշեց այդ դեպքում ուժեղացնել վարչական-ուսումնական մարմինների հսկողությունը:

1886 թ. վերաբացված դպրոցներն այլևս նախկին ուժն ու հմայքը չունեին, նրանք վեր էին ածվում լոկ պարզ գրագիտության դպրոցների, ուսման ծավալը խիստ նեղանում էր, միջնակարգ կրթության հնարավորությունը՝ սահմանափակվում թեմական դպրոցների ու Ճեմարանի շրջանակներում: Ավարտվում էր հայ ժողովրդական դպրոցի վերելքի շրջանը և սկսվում էր դոյատևման համար տանջալի պայքարի մի շրջան, երբ այլևս քիչ առիթ էր լինելու մտածել նրա առաջխաղացման ու բարեկարգման

մասին: Այդ ժամանակ էր, որ Ղ. Աղայանը գրեց իր «Հիշողություն» բանաստեղծությունը, որտեղ նոր բույն հյուսող ծիծեռնակի օրինակով այլաբանորեն ողբում էր հայ գպրոցի նախկին բարգավաճ վիճակի կորուստը.

«Բայց նա կրկին բույն էր շինում,
Ե՛վ շինում էր, և՛ երգում,
Ամեն մի շյուղ կպցնելիս՝
Առաջվան բույնն էր հիշում»[1]:

1886 թ. հետո հայ գպրոցական միջավայրն անձուկ ու անհրապույր դարձավ նրա գործիչների համար: Շատերը հեռացան ասպարեզից, մանկավարժական միտքը, որ այնքան եռանդով էր գործում մինչ այդ, հեռանկարներ չտեսնելով, խամրեց ու դատապարտվեց անշարժության: Լուռ հաստնացող մանկավարժական մամուլի ձայնը:

Ծանր, նոր վտանգներով լի կացություն էր ստեղծվում ազգային գպրոցի համար:

---

[1] Ղ. Աղայան, Երկեր, հատ. 1, Երևան, 1947, էջ 70:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ 1890-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՓԱԿՈՒՄԸ

Վճռաւորյուն և հուսալքում: Փրկության ելքի որոնումներ: Դպրոցների կյանքը: Ճեմարանի և բեմական դպրոցների նշանակության աճը: Աշակերտական ընդվզումներ: Կառավարության նոր դիրքորոշումը. 1891 թ. պետական խորհրդակցությունը և նրա որոշումները: Ուսուցչական գենզի հարցը: Յանովսկու և Շերեմետևի «հայտնագործությունը»: 1895 թ. դեկտեմբերի 8-ի առաջարկը և դպրոցների փակումը: Փրկության ճիգեր: 1897 թ. նոյեմբ 2-ի օրենքը և եկեղեցական-ծխական դպրոցների վերացումը: Դպրոցական գույքի հարցը: Ճեմարանի և բեմական դպրոցների հարցը: Ամփոփում:

1880-ական թվականների կեսերից հայ դպրոցի համար ըստեղծվեցին խիստ անբարենպաստ պայմաններ: Ցարական իշխանությունների կողմից նրա վրա տեղացող անդադար հարվածները, ուսումնական վարչության ամենօրյա միտումնավոր հսկողությունը, դպրոցական ասպարեզի սահմանափակումները խոր վհատություն և հուսալքում առաջ բերեցին կրթական գործիչների շրջանում: Ազգային դպրոցի վաղվա նկատմամբ անվստահությունը համակել էր նրանց:

Դրան զուգահեռ, դյուղում խորացող սոցիալական շերտավորումը և ցարական կարգերի փտածությունը էլ ավելի անզոսպ ու ինքնիշխան էին դարձնում ազգայական խավերին, որոնք աշխատում էին ազդել հասարակության կյանքի բոլոր ասպարեզների վրա: Առանց այն էլ ազգաստության հիրաններում գալարվող դըպրոցն էլ ավելի էր խրվում նյութական կարիքի մեջ, դյուղյան ծանր պայմաններ ստեղծելով նրա մշակների համար: Ստեղծվում էր «ուսուցչական պրոլետարիատ»:

Այս ամենն ազդում էր և ժողովրդի վրա, որը շատ դեպքերում անտարբերություն էր ցուցաբերում դպրոցի նկատմամբ։ Խոսք սիրական է 1892 թ. մարտին Ալեքսանդրապոլից ուսուցիչ Հ. Նիկողոսյանի գրած նամակը «Մուրճի» խմբագրությանը. «Այսուհետև ծնողը սառնությամբ է նայում դպրոցի վրա, կարծես նրա համար եղած-չեղած մի հաշիվ լինի։ Ուսուցիչը ձեռք է վերցրել իր սիրած առարկայից, նկատելով նրան ժամանակավոր մի գործ, որ վաղը, կամ մյուս օրը պետք է թողնի ու հեռանա ասպարեզից, ժողովուրդը հեռու քաշված, կասկածում է դպրոցի արդյունքի վրա։ Այդ գրությունը հիշեցնում է մերձ՚ի մահ հիվանդի դրությունը, ամեն ոք րոպե առ րոպե սպասում է, թե երբ կփչե նա իր վերջին շունչը»[1]։ Ու թեև այդ «մերձ՚ի մահ հիվանդի» վիճակը խոր ցավ էր պատճառում ժողովրդին, սակայն «նա այնքան հարկեր ու տուրքեր ունի, որ սրտով էլ ցանկանար, չէր կարող օգնության ձեռք պարզել»[2]։

Դպրոցի տանջանքներն էլ ավելի էին կրկնապատկվում ներքին երկպառակությունների ու անհամաձայնության հետևանքով։ Հոգաբարձական, քահանայական ընտրությունների կամ ուսուցիչների հրավիրման առթիվ երբեմն գյուղը բաժանվում էր երկու անհաշտ խմբավորման, որոնց գլուխ կանգնած էին լինում ագանները։ «Մեր գյուղը,— պատմում է էջմիածնի ճեմարանի ծառա Եղորը,— 120 տուն է, երկու մասի բաժանված, 60 տունը մի քահանա է ուզում, 60-ն էլ՝ մի ուրիշ. կռիվ, զալմազալ՝ ոչ ոքի ասածըն էլ չի լինում»[3]։

Ոչ պակաս երերուն վիճակ էր ստեղծվել հոգևորականության շրջանում։ Պաշտոնական իշխանությունների վերաբերմունքի փոփոխությունը խուճապային տրամադրություններ էր առաջացրել էջմիածնում։ Գլուխ էին բարձրացրել կամայականությունն ու անկարգությունը։ Ենթարկվելով աղայական խավերի ճնշմանն ու թելադրանքին, տեղական քահանաներն ու եկեղեցական երեցփոխները դիմում էին զանազան զեղծումների ու չարաշահումների, շռայլում էին դպրոցների նյութական միջոցները։ 1890-ական թվականներին քահանայական հարցը դարձյալ սուր վիճաբանությունների առիթ էր տվել։ «Մշակը» պահանջում էր, որ քահանաները լինեն կրթված

---

1 ԳԱՔ, «Մուրճի» արխիվ, № 209, II։

2 Նույն տեղում։

3 ՀՊԿՊԱ, ֆ. 312, թղթ. 37, վավ. 1, էջ 19 հ. կ.։

ու բանիմաց մարդիկ՝ ազատ հարուստների կամայականություններից, որպեսզի կարողանան օգուտ տալ ժողովրդին: Էջմիածինը պաշտպանվում էր, վճռատարկելով, որ ժողովրդի տգիտությունը հնարավորություն չի տալիս նրա մեջ ունայլ քահանաների գոյությանը, որ կրթված մարդիկ խույս են տալիս քահանայական կոչումից:

Դպրոցի անհրապույր ներկան և է՛լ ավելի դժգույն ապագան խիստ անհանգստություն էին պատճառում հայ գործիչներին ու մամուլին: Շատերը հույսը դնում էին նորընտիր կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի վրա: 1894 թ. հունիսին Թիֆլիսի մի մեծ խումբ լիբերալ գործիչներ (54 հոգի) նամակով դիմեցին Խրիմյանին աղզտային և հատկապես դպրոցական գործերը կարգավորելու առաջարկներով[1]: Նամակն ստորագրողների մեջ էին՝ Գ. Բաշինջաղյանը, Ստ. Մալխասյանը, Ստ. Լիսիցյանը, Ալ. Քալանթարը, Միք. Թամամշյանը, Ավ. Արասխանյանը, Ս. Բալաղյանը, Հովհ. Սպենդիարյանը, Հ. Առաքելյանը և ուրիշներ:

Դիմումի հեղինակները առաջարկում էին մշակել նոր կանոններ, դրանք ենթարկել նախնական համաժողովրդական քննարկման, գտնում էին, որ պետք է խիստ կարգապահություն սահմանել եկեղեցական և դպրոցական գործերում, քահանաներ ընտրել կրթված մարդկանց և նրանց նյութապես ապահովել, հաշվեհավության սկզբունքը պետք է պարտադիր լինի բոլորի համար, դպրոցներին պետք է տալ միասնական պարտադիր ծրագրեր, բարելավել դպրոցների և ուսուցիչների նյութական դրությունը, պայմաններ ստեղծել, որպեսզի ուսուցիչները բարձրացնեն իրենց մանկավարժական մակարդակը, խիստ որոշակիություն մտցնել թեմական տնօրենների, առաջնորդների և ուսումնալարչական հանձնաժողովի իրավունքների ու պարտականությունների մեջ, էջմիածնում հիմնել մի կենտրոնական մարմին, որ ղեկավարի ամբողջ դպրոցական գործը: Նամակի հեղինակները գտնում էին, որ շատ բներություններ չէին լինի, եթե ժողովուրդը հնարավորություն ունենար ժամանակին դրանք քննադատել ու միջոցներ նշել:

Մամուլում խիստ քննադատության էր ենթարկվում ուսուցիչների ընտրության և վարձատրման կարգը: Առաջարկում էին վերացնել կոպարները: «Մշակը» պահանջում էր հոգևորականությանը հեռու վանել կրթական գործից, մեծացնել ժողովրդի նախաձեռ-

---

1 Տե՛ս ԳԱԹ, Սեդրակյանի արխիվ, № 10, էջ 134:

նության շրջանակները և դրանով նրան կրկին մոտեցնել դպրոցին։ «Մուրճը» բողոքում էր, որ 1889 թ. վերականգնված դպրոցական տեսուչների պաշտոնում նշանակվում են միայն հոգևոր անձինք։

Սակայն լիբերալ քննադատները հաշվի չէին առնում, որ այդ փոփոխությունները կատարվել էին ցարական իշխանության պահանջով։ 1889 թ. դեկտեմբերի 27-ին կառավարչապետը կաթողիկոսին գրած նամակում ժժդհում էր, որ նրա հրապարակած դպրոցական կանոններում չի շեշտված թեմական տեսուչներին պարտադիր կերպով հոգևոր անձանց նշանակելու անհրաժեշտությունը։ Նա տարակուսում էր նաև, որ դպրոցների ղեկավարման գործում ընդլայնված են աշխարհիկ հոգաբարձուները և դռնում էր, որ «ժողովրդական դպրոցների ղեկավարման համար աշխարհիկ մարդկանց ընտրության գործում անհրաժեշտ է մեծագույն զգուշություն, առանձնապես մեր օրերում, որոնք այնքան հարուստ են բայբայիչ ազդեցություններով»[1]։

Սահմանված ծանր վիճակը, հասարակության քննադատությունը, պետական արտոնյալ դպրոցների հետ մրցակցության մեջ դիմանալու ձգտումը ստիպեց էջմիածնին միջոցներ որոնել։ 1893 թ. վերջին Խրիմյանը վերակազմեց էջմիածնի ուսումնավարչական հանձնաժողովը, որի նախագահ նշանակվեց Խորեն Սահակյանն։ Հանձնաժողովը սկսեց կարծիքներ հավաքել դպրոցական կանոնների մասին։ Նա որոշեց նաև ուսուցիչների անընդհատ տեղափոխությունները կանխելու նպատակով նրանց աշխատանքի հրապիրել ոչ թե մեկ, այլ երեք տարով, իգական դպրոցների հոգաբարձությունների մեջ ընտրվելու իրավունք տալ նաև կանանց, ժողովրդի դերը բարձրացնելու համար հոգաբարձության կազմը 3-ից հասցնել 5 հոգու։

Բայց հանձնաժողովը շատ դործ չկարողացավ անել. քննեց բազմաթիվ վեճեր ու բողոքներ, ինքն էլ տարվեց վիճաբանություններով և, ի վերջո, կաթողիկոսը 1895 թ. հոկտեմբերին դարձյալ վերակազմեց այն և նախագահ նշանակեց Սուքիաս Պարոյանին։

Եթե վերևից հնարավոր չէր որևէ բան անել, ապա դպրոցական տարրին օղակները մեծ ճիգերի գնով աշխատում էին փրկել հայերի կրթական օջախները՝ գոնե նրանց քանակական կողմն ամեցնելու միջոցով։ Նրանք զգում էին, որ դպրոցների դրության վատթարացումը գլխավորապես պետական հալածանքի արդյունք է, բայց ժողովրդի կրթության գործին ծառայելու ձգտումը նրանց

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. II, էջ 61 հ. կ.։

մղում էր նորանոր զոհողությունների։ «Ճշմարիտ է,— գրում էր Հ. Նիկողոսյանը «Մուրճի» խմբագրությանը,— շատ բան անցավ այս անբախտ հասատատության գլխից, շատ հարվածներ կրեց ու փոխվեց, որը մեզ համար անդառնալի կորուստ է, բայց դպրոցի էությունը մնաց մեր ձեռքը, այնպես որ դրությունը ամենևին հուսահատական չէ»[1]։

Թեև պաշտոնապես թեմական տեսուչները խիստ սահմանափակված էին, այնուամենայնիվ նրանք զգալի աշխատանք էին կատարում նոր դպրոցներ բացելու, նրանց կյանքը նորմալացնելու ուղղությամբ։ Հիմնականում գործելով միայնակ, նրանք բազմաթիվ հարցեր ու վեճեր էին լուծում, վարում էին հսկայական գրագրություն (1892 թ. երեք ամսում Վրաստանի թեմական տեսուչը գրել էր 500 գրություն և ստացել 300-ը), լինում էին գավառներում, մոտիկից զբաղվում դպրոցական հարցերով։

Հատկապես եռանդով էր գործում Երևանի և ապա Վրաստանի թեմական տեսուչ Մեսրոպ ք. Մելյանը։ 1890 թ. նա կազմում է կանոնադրություն թեմական տեսչության համար, ըստ որի տեսուչը պետք է ընտրվեր թեմի մանկավարժական ժողովի կողմից։ Այդ կանոնադրությունը արժանանում է Մակար կաթողիկոսի հավանությանը, բայց չի գործադրվում, որովհետև էջմիածնի ուսումնական հանձնաժողովի նախագահ Նահապետյանի արտահայտությամբ՝ «ընտրական սկզբունքը խիստ խոտելի է միապետական տիրող սկզբունքի տեսակետից. հետևապես հնարավոր չէ այն ի կիր արկանելը»[2]։ Մելյանը զգալի աշխատանք է կատարում դպրոցական գրադարանների ստեղծման ու կարգավորման ուղղությամբ, պահանջում է կարգի դնել բնագիտության ավանդումը, երեխաների մեջ տարածել մանկական զվարթ երգեր ու խաղեր։ 1895 թ. նա Թիֆլիսում կազմակերպում է ուսուցչական խնայողական դանձարկղ, որին կարող էին մասնակցել նաև գավառների ուսուցիչները։ (Ի դեպ 1893 թվականից նման դանձարկղ ունեին նաև Ախալցխայի ուսուցիչները)։

Չնայած խեղդուկ մթնոլորտին, հայկական մի շարք դպրոցներում սեփական նախաձեռնությամբ կազմակերպվում էին ցերեկույթներ, գրական հանդեսներ, թատերական ներկայացումներ։ Փորձեր էին արվում վերականգնելու դպրոցների նախկին ընդգրկումը. 1890 թ. Բաթումի Հռիփսիմյան օրիորդաց երկդասյա դպրոցի

1 ԳԱՖ, «Մուրճի» արխիվ, № 209, 11։
2 ՀՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 33։

հոգաբարձությունը խնդրում է կաթողիկոսին բացել վեցերորդ դասարան, Երևանի Գայանյան դպրոցից խնդրում են լրացուցիչ արհեստագիտական դասարան ունենալու իրավունք, իսկ Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան դպրոցը ցանկանում է կազմակերպել ևս երկու դասարան, որպեսզի իր սաներին լրացուցիչ կրթություն տա ուսուցչուհու քննություն հանձնելու և ազգային դպրոցներին ծառայելու համար: Իհարկե, իշխանությունները կտրականապես արգելել էին հնգամյա դպրոցից ավելի բարձրն ունենալ, և կաթողիկոսը չէր համարձակվի նման խառնակ ժամանակներում ընդառաջ գնալ դպրոցների ցանկությանը, սակայն այս փաստերն իսկ ցույց էին տալիս, թե ինչ պոտենցիալ էր կուտակված դպրոցներում, որոնք միջոց էին փնտրում պատռելու կաշկանդիչ շրջանակները:

Դպրոցների դրության վատթարացումը տեսնելով, հայկական բարեգործական ընկերությունները ջանացին ընդլայնել նրանց ցույց տրվող օգնությունը: Կովկասի հայոց բարեգործական ընկերության օգնությամբ բացվում և գործում էին մի շարք դպրոցներ: Բաքվի «Մարդասիրականն» ընդլայնում է դպրոցներին ցույց տրվող օգնության աշխարհագրությունը. 1895 թ. նրանից դրամական օժանդակություն էր ստանում արդեն 20 դպրոց: 1892 թ. ընկերությունը փորձում է կարուձևի ու ձեռագործի դպրոց բացել հայ ազքատ աղջիկների համար, սակայն կառավարչապետը պայման է դնում, որ այդ դպրոցը դառնի ուսումնական վարչության հսկողության տակ, նրանում սովորողները լինեն տարբեր ազգերից և ունենան միայն դիմնազիայի կամ պետական այլ դպրոցների առաջին դասարանի կրթություն: Սրանք այնպիսի պայմաններ էին, որոնք ընկերությունն ընդունել չէր կարող:

Բացի դպրոցներից, բարեգործական ընկերությունները նյութապես օժանդակում էին հայ գրական գործիչներին՝ նրանց գործակներին ուսման տալու համար: Այդ շրջանում նման օժանդակություն են ստացել Ռ. Պատկանյանը, Դ. Աղայանը, Պ. Պռոշյանը, Շիրվանզադեն, Հ. Թումանյանը:

Էջմիածնի ձեռնարկած միջոցառումների, դպրոցական շրջանների ու ժողովրդի ջանքերի շնորհիվ 1886 թ. հետո հայ դպրոցը, այնուամենայնիվ սկսեց կրկին կենդանանալ և ձգտել հնարավորության սահմաններում պահպանել գոնե իր թվական կազմը: Արդեն 1886 թ. Անդրկովկասում գործում էր 93 հայկական դպրոց, իսկ 1889 թ. նրանց թիվը հասավ 147-ի[1]: Նոր դպրոցների բացմանը

---

1 «Վիճակագրական տեղեկություններ եկեղեցական-ծխական ուսումնարանց հայոց...», Վաղ-պատ, 1890, տե՛ս գրքույկի վերջում բերված աղյուսակը:

որոշ չափով արդելք եղավ կաթողիկոսի մահը 1891 թ., երբ սինոդը կարգադրեց կաթողիկոսական գահի թափուր շրջանում դադարեցնել դպրոցների բացումը. նա վախենում էր, որ դարձյալ կարող են կրկնվել 1884 թ. դեպքերը: Սակայն, չնայած դրան, դպրոցների աճը շարունակվում էր, իսկ 1893 թ., երբ էջմիածին ժամանեց նորընտիր Մկրտիչ կաթողիկոսը, այն ավելի արագացավ: Սինոդի մոտավոր տվյալներով 1894/95 ուսումնական տարում դպրոցը հետևյալ պատկերն էր ներկայացնում[1]:

Թեմերը	Դպրոցներ			Աշակերտների ընդ. թիվը	Ուսուցիչներ			Աշակ. միջին թիվը մեկ դպրոցում
	տղայական	աղջկան և խառը	ընդամենը		տղամարդիկ	կանայք	ընդամենը	
Վրաստանի և Իմերեթիայի . . .	56	27+5	88	6722	157	77	234	76
Երևանի	43	9+27	76	7449	159	42	201	94
Ղարաբաղի	19	4+4	27	1933	43	11	54	72
Շամախու	10	4+4	18	1332	36	18	54	74
Ընդամենը Անդրկովկասում . . .	128	44+40	212	17436	395	148	543	82
Աստրախանի թեմ	5	3+5	13	1150	39	13	52	88
Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի .	10	7+11	28	1853	83	29	112	66
Ընդամենը	143	54+56	253	20439	517	190	707	81

Հաջորդ ուսումնական տարում, հատկապես Երևանի և Վրաստանի թեմերում բացվեցին մի շարք նոր դպրոցներ ևս և նրանց ընդհանուր թիվն Անդրկովկասում հասավ 240—250-ի: Աշակերտների թիվը նույնպես ավելացավ: 1896 թ. Անդրկովկասի բոլոր հայկական դպրոցներում (ներառյալ թեմականները և ճեմարանը) սովորում էր քսան հազարից ավելի աշակերտ:

Այսպիսով, տասը տարվա դժվարին պայմաններում հաջողվեց մոտավորապես վերականգնել դպրոցների այն քանակը միայն, որ գոյություն ուներ մինչև 1880-ականների կեսերը: Աշակերտության թիվը նկատելիորեն ավելի բարձր էր: Յուրաքանչյուր դպրոցին ընկնող աշակերտների միջին թիվը 53-ից հասել էր 82-ի, որն անհամեմատ բարձր էր նաև պետական դպրոցների ցուցանիշից (60—65): Կային, իհարկե, դպրոցներ, որոնք ունեին 200—400 աշակերտ. դրանք նախկին հոգևոր դպրոցներն էին՝ վերածված երկդասյա ուսումնարանների: Հայ դպրոցների ընդհանուր մեծ

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314:

22—25 տոկոսը այդ տարիներին երկդասյա էր։ Սովորողների 8—10 տոկոսն էին միայն հողևորականների, ազնվականների ու առևտրականների զավակներ, մնացած դերակշռող մասը մանր առևտրականների, արհեստավորների ու երկրագործների զավակներ էին։ Աշակերտների ծնողների չքավորությունն ստիպում էր դպրոցական շրջաններին զգալի տեղ հատկացնել ուսման վարձից ազատվածներին. աշակերտության ամբողջ թվի 30—35 տոկոսը ձրիավարժ էր լինում։ Օրինակ, 1892 թ. Ախալցխայի Կարապետյան դպրոցի 277 աշակերտից 108-ը ձրիավարժ էր։ Շատերը դպրոցից ձրի դրեննական պիտույքներ էին ստանում։

Չնայած որոշ առաջընթացին, այնուամենայնիվ չհաջողվեց վերականգնել դպրոցի նախկին տնտեսական մակարդակը (որն առանց այն էլ ցածր էր)։ Եթե մինչև 80-ական թվականների կեսերը յուրաքանչյուր դպրոցի վրա ծախսվում էր միջինը 1400 ռ., ապա այժմ այդ գումարը 1200—1300 ռուբլուց չէր անցնում։ Է՛լ ավելի էր իջել մեկ աշակերտին ընկնող ծախսի գումարը. այն հասնում էր 18 ռուբլու, նախկին 26-ի փոխարեն։ Ուսուցչի միջին վարձատրությունը տարեկան 300 ռ. էր կազմում։

Որքան էլ որ ծանր էր հայ դպրոցի նյութական վիճակը, այնուամենայնիվ այն որոշ չափով բարձր էր պետական նույնատիպ (տարրական) դպրոցների մակարդակից։ 1895 թ. նման դպրոցներից յուրաքանչյուրի տարեկան ծախսը կազմել է 1167 ռ., իսկ ուսուցչի միջին ռոճիկը 300 ռ. չէր հասնում։ Ցարական իշխանությունը մասսայական դպրոցների նյութականը հոգալու ծանրությունը դրել էր ժողովրդի վրա և այդ նպատակներին արքունի դանձարանից բաց էր թողնում միայն անհրաժեշտ ծախսերի 30 տոկոսը։

Եթե համեմատելու լիներնք պետական և այլ տիպի դպրոցների հետ, հայ դպրոցը Անդրկովկասում դեռևս շարունակում էր որոշակի ուժ ներկայացնել։ 1896 թ. 431 պետական տարրական դպրոցների կողքին գործում էին 240—250 հայկական եկեղեցական-ծխական դպրոցներ։ Թվով ամենից շատը մահմեդական դպրոցներն էին (2060-ից ավելի), սակայն սրանց նշանակությունը խիստ փոքր էր. նրանցից յուրաքանչյուրում սովորում էր 10—12 աշակերտ։

Ընդհանուր առմամբ Անդրկովկասում 1894 թ. տվյալներով կային հետևյալ դպրոցները[1].

---

1 Հաշվումներն արված են «Отчет попечителя Кавк-го учебного округа о состоянии учебных заведений за 1894 г.», Тифлис, 1895, դրքի տվյալների համաձայն։

Ուսումնական շրջանին ենթակա դպրոցներ					Այլ դերատեսչությունների դպրոցներ (հայկական, ուղղափառ եկ.-ծխ. և այլն)		Մասնավորական և տրնտ. դպրոցներ	Ընդհանուր թվաքանակը (մարդկությունը)
Ենթակայքով	Ցրի ուսումնական գրասենյակ	գյուղական	Ժամերգության	ընդամենը	Աղջկական	Հայ երեխաների		
26	37	377	72	510 (43702 աշակերտ)	541 (30607)	215 (15271)	2156 (27225)	3207 (101530)

Ոչ հայկական դպրոցներում ևս նկատելիորեն աճել էր հայ աշակերտների թիվը: 1896 թ. տվյալներով ուսումնական շրջանին ենթակա դպրոցներում սովորում էր 15875 հայ, որից 6500-ից ավելին բաժին էր ընկնում գիմնազիաներին, ռեալական ուսումնարաններին և քաղաքային ու գավառական դպրոցներին: Հայ երեխաներ էին սովորում նաև այլ գերատեսչությունների դպրոցներում: Ընդհանուր առմամբ, 1890-ականների կեսերին Անդրկովկասի բոլոր տիպի դպրոցներում (ներառյալ հայկականը) սովորող հայ երեխաների թիվը հասնում էր 40 հազարի:

1884—86 թթ. հետո, բնականաբար, մեծացավ թեմական դպրոցների, ինչպես նաև Գևորգյան ճեմարանի նշանակությունը: Ուսումնական այս միակ հաստատություններն էին, որ պահպանում էին աճող սերնդին տարրականից բարձր հայացի կրթություն տալու հնարավորությունը:

1886 թ. Մակար կաթողիկոսը, ցանկանալով բարձրացնել թեմական դպրոցների մակարդակը, նրանց համար նոր միասնական ծրագիր հաստատեց: Ըստ այդ ծրագրի, թեմականները պետք է ունենային վեց դասարանյա կազմ (լրիվ միջնակարգ), մի բան, որին հասել էր միայն Ներսիսյան դպրոցը: Վերանում էին թեմականների նախապատրաստական դասարանները և նրանց համար սովորողների կոնտինգենտ պետք է պատրաստեին եկեղեցական-ծխական դպրոցները: Կրոնական մի քանի առարկաներից բացի, նրանցում պետք է ավանդվեին նաև՝ հայոց լեզու, հայոց մատենադրության տեսություն և պատմություն, ռուսաց և ֆրանսերեն լեզուներ, ընդհանուր, հայոց և Ռուսաստանի պատմություն, ընդհանուր և Ռուսաստանի աշխարհագրություն, հոգեբանություն, տրամաբանություն, մաթեմատիկա՝ թվաբանություն, հանրահա-

շիվ, երկրաչափություն, տիեզերագիտություն, հարթաչափություն, բնական գիտություններ՝ կենդանաբանություն, բուսաբանություն, հանքաբանություն, ֆիզիկա, ձայնագրություն, վայելչագրություն, նկարչություն։

Նյութական ծանր պայմաններում, արդեն 1887/88 ուս. տարում Երևանի, իսկ հաջորդ տարի՝ Շուշու թեմական դպրոցներն ունեցան վեց դասարանյա լրիվ կազմ։ Նկատելիորեն սկսեց ավելանալ թեմական դպրոցների աշակերտների թիվը։ 90-ականների կեսերին նրանցից յուրաքանչյուրում սովորում էր 500 և ավելի աշակերտ։ Ուսուցիչների մեծ մասն ուներ եվրոպական կամ ռուսական բարձրագույն կրթություն. հատկապես որակյալ էր Ներսիսյան դպրոցի ուսուցչական կազմը, որտեղ 1895 թ. եղած 26 ուսուցիչներից 17-ը բարձրագույն կրթություն ուներ։ Այդ տարիներին թեմական դպրոցներում ուսուցչություն են արել Կոմիտասը, Ստ. Մալխասյանը, Ստ. Լիսիցյանը, Մ. Նկմալյանը, Պ. Պռոշյանը, Հ. Դաղբաշյանը, Հ. Շիշմանյանը, Ս. Մանդինյանը, Ս. Կանայանը, Ս. Բեգնազարյանը, Իս. Հարությունյանը և հայ մշակույթի մի շարք այլ աչքի ընկնող գործիչներ։

Թեմական դպրոցների մեջ գարձյալ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն էր մնում հայ կրթական գործի առաջատարը։ 90-ականներին այստեղ մի շարք բարեփոխումներ կատարվեցին. վերացվեցին հետճաշյա դասերը, աշակերտների բժշկական քննությունները սովորություն դարձան, ուսուցիչների շաբաթական դասաժամերը 28-ից իջեցվեցին 22-ի, ուսուցիչները վարձվում էին ոչ թե մեկ տարով, այլ անորոշ ժամանակով, սահմանվել էր թոշակարկղ՝ դպրոցում 15—25 տարի աշխատած ուսուցիչների համար, նոր տարվա առնածառի հանդեսները սովորույթ էին դարձել։ 1894 թ. մտցվեց նաև մարմնամարզություն։ Բժիշկ Վահան Արծրունին, որ մշտապես կապված էր դպրոցի հետ, առաջարկեց առողջապահության և տարրական բժշկության դասեր մտցնել, առաջարկություններ էին արվում բացել 7-րդ դասարան, և այնտեղ ավանդել նոր առարկաներ՝ ռուս և ընդհանուր գրականություն, մանկավարժություն, գյուղատնտեսություն։

Ներսիսյան դպրոցի համար հաճելի նորություն էր դպրոցական ճանապարհորդությունների արմատավորումը։ Գերմանիայից վերադարձած երիտասարդ, հոանդուն մանկավարժ Իսահակ Հարությունյանը 1891 թ. մի խումբ բարձր դասարանցիների առաջին անգամ բազմօրյա ճանապարհորդության տարավ Լոռու շրջանը։

Հաջորդ տարին աշակերտները եղան Դիլիջանում, Քարվանսարայում, Գոշավանքում, Հաղարծնում, Սևանում: Այդ ճանապարհորդությունների ընթացքում աշակերտները սիրով ուսումնասիրում էին հայրենի պատմական հուշարձանները, ծանոթանում գյուղացու կյանքին, դրի առնում իրենց տեսածն ու լսածը: Շնորհալի մանկավարժը առաջինն էր հայ իրականության մեջ Աբովյանից հետո, որ մեծ նշանակություն էր տալիս աշակերտական ճանապարհորդություններին: «Դպրոցական ճանապարհորդությունը պետք է լինի դաստիարակության ամենագլխավոր միջոցներից մեկը»[1],— գրում էր Հարությունյանը: Նա գտնում էր, որ այդ միջոցով աշակերտների մեջ զարգանում են ընկերասիրության, մտերմական կապերը, նրանք փորձվում են, կոփվում, սովորում: Ծանոթանալով ճանապարհորդություններից ներսիսյանցիների բերած նյութերին ու գրառություններին, Մառը ասել էր, որ «ամբողջ Ռուսաստանում ցայժմ այդպիսի ծրագրով դպրոցական ճանապարհորդություն չի եղել»[2]:

Գնալով ավելի աճում էին էջմիածնի Գևորգյան ճեմարանի դերն ու նշանակությունը: 1890-ական թվականների սկզբներին ճեմարանն արդեն լրացրել էր լսարանական կազմը և դարձել բարձրագույն համարվող կրթական մի հաստատություն, որտեղ հատկապես առաջնակարգ նշանակություն էին ձեռք բերել հայագիտական առարկաները: Չնայած հոգևոր կոչմանը և կրոնական ուժեղ հակոդության, ճեմարանն այս շրջանում արդեն դուրս էր եկել իր նշանակման նեղ շրջանակներից և առանձնահատուկ տեղ գրավել հայերի կրթական կյանքում: Նրա սանների ճնշող մեծամասնությունը, սառնալով ժամանակի համեմատ բավական կայուն գիտելիքներ, նվիրվում էր ժողովրդին ծառայելու գործին, ջանում զարկ տալ հայ մշակույթի զարգացմանը:

Այդ տարիներին ճեմարանի սովորողների դրած շարադրությունների և ավարտական աշխատանքների թեմաներին ծանոթանալն իսկ ապացուցում է, թե ինչ մակարդակի էր հասել կղերական պատյանով պարուրված ուսումնական այդ հաստատությունը: Իհարկե, դրանց մեջ զգալի տեղ էին գրավում կրոնական թեմաներով գրված շարադրությունները, սակայն քիչ չէին նաև պատմական և գրականագիտական թեմաները, ինչպես, օրինակ, «Պատմություն Արիստակես վարդապետի Լաստիվերտցոյ», «Աշխարհա-

1 Ի. Հարությունյան, Ներսիսյան հոգևոր դպրոցի սաների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Թիֆլիս, 1894, էջ 79:

2 «Հայ մանկավարժներ», գիրք Բ, էջ 483:

յուլյ Մովսես Խորենացվո», «Գր. Մաղիստրոսի փիլիսոփայական աշխարհայացքը», «Հողային հարցը Էջմիածնի դավառում», «Մոլդավիա-Վալաքիայի և Տրանսիլվանիայի հայ գաղթականությունը», «Հ. Պարոնյանը և նրա «Մեծապատիվ մուրացկանները», «Շնքսպիրի նախապատրաստող շրջանը», «Պարի տեղը գեղարվեստի մեջ, նրա զարգացումը և նշանակությունը», «19-րդ դարի գրական ուղղությունները և նրանց արձագանքները ռուսահայոց մեջ», «Պետաալոցցի և Հերբարտ»: Զգալի տեղ էին գրավում նաև ռուս գրականությանը, Ֆոնվիզինին, Լերմոնտովին, Գոգոլին, Տուրգենևին նվիրված շարադրությունները:

Գևորգյան ճեմարանի ուսուցչական կազմում հայ մշակույթի մի շարք ականավոր գործիչների առկայությունը մեծապես նպաստում էր նրա ուսումնակրթական մակարդակի բարձրացմանը: Ուսուցիչների մեջ եղել են՝ կոմպոզիտորներ Կոմիտասը, Կարա-Մուրզան, նկարիչներ Վ. Սուրենյանցն ու Յ. Թադեոսյանը, բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը, հայագետներ Մ. Աբեղյանը, Ստ. Լիսիցյանը, Հ. Աճառյանը, Գ. Լևոնյանը, Ստ. Կանայանը, Կ. Տեր-Մկրտչյանը, Կ. Կոստանյանը և ուրիշներ:

Ցարական ռեակցիայի սաստկացումն իր կնիքն էր դնում նաև Էջմիածնի քաղաքականության վրա: Աշխատելով հարմարվել կառավարության պահանջներին և ոգեշնչվելով հայ պահպանողականության խրախուսանքներից, Էջմիածինը ջանում էր կրթական ասպարեզում խորացնել կրոնական ոգին, սեղմել ժողովրդական ներկայացուցչության իրավունքները: Այս բանն ամենից շատ ըզգացվում էր թեմական դպրոցների և ճեմարանի նկատմամբ: Հոգևոր իշխանությունները սկսել էին ավելի հաճախ միջամտել դպրոցների ներքին գործերին, թելադրել իրենց կամքը: Կրոնական ճնշումը հատկապես ուժեղացավ Երևանի և Շուշու թեմական դպրոցներում: Նույնն անել Ներսիսյան դպրոցում այնքան էլ հեշտ չէր, որովհետև այստեղ դեմոկրատական տրամադրություններն ավելի ուժեղ էին:

Մկրտիչ Խրիմյանի կաթողիկոսության առաջին տարիներին ընդհանուր վարքագծի այս շրջադարձը է՛լ ավելի նկատելի դարձավ: Կաթողիկոսը փորձեց նույնիսկ ստեղծել նշանակովի հոգաբարձություն Երևանի թեմական դպրոցում, մի քանի անգամ հոդաբարձությունն անտես առնվեց տեսուչ նշանակելիս: 1896 թ. «Մշակը» գրում էր. «Էջմիածնի «նոր կուրսը», մի քանի տարի է ահա, անդադար փորփորում է այդ կազմակերպության (հոգաբար-

ձուիյան—Վ. Ե.) հիմքը։ Թողնելով վարչական կարգերը ձևական դրության մեջ, այսինքն չչնչացնելով հոգաբարձական մարմինները, հոգևոր կառավարությունը աշխատում է մեռելության դատապարտել ժողովրդական ներկայացուցչության ֆունկցիաները, դրանց տեղ հաստատելով իր մասնավոր նեղ, կուսակցական միաումնները»[1]։

Ժամանակակից լեոյի վկայությամբ՝ «խրիմյան կաթողիկոսը... իր հետադիմական և հակաժողովրդական ձեռնարկությունները բացատրում էր նրանով, թե ժամանակը չար է և աննպաստ, թե ինքն էլ ստիպված է այդպիսի կարգադրություններ անում»[2]։ Ճեմարանում, որ դառնում էր կաթողիկոսի անմիջական հսկողության տակ, անտարակույս, ավելի ուժեղ էր կրոնական ճնշումը։

Էջմիածնի վարքագծի նման ստիպողական շրջադարձը պատշած ընդունելություն էր գտնում ոչխտ ու կղերամիտ հոգևորականների շարքերում։ Շուշիի թեմական դպրոցն ստուգելու ժամանած Կյուրեղ վարդապետ Սրապյանը, դժգոհելով դպրոցում արմատներ գցած անասունածությունից, հայտարարում էր. «Համալսարան, դիտություն, Դրեպեր, Դարվին—ատոնք դատարկ բաներ են. սուրբ գրքից դուրս մեղի բան չի հարկավոր»[3]։

Թվում է, որ նման պայմաններում մեր թեմական դպրոցներն ու ճեմարանը պետք է խրվեին կղերական ճահիճը ու նրա ատները վերածվեին եկեղեցու հնազանդ կամակատարների։ Սակայն, հենց այն հանգամանքը, որ թեմականների ծրագիրը ընդլայնվել էր, և գլխավորապես աշխարհիկ, բնական գիտությունների հաշվին, ցույց է տալիս, որ կղերական ոգին միայն արտաքին գործոնի դեր էր խաղում. այդ դպրոցները ներքնապես շարունակում էին աշխարհիկ կրթության օջախներ մնալ։ Հենց հոգևոր իշխանությունները բազմիցս արտնջում էին, որ կրոնի ուսուցումը ձևական բնույթ է կրում, որ աշակերտներին ձանձրույթ է պատճառում դոգմատիկ սահմանումների մեքենայական կրկնությունները։

Ներսիսյան դպրոցի մասին Գ. Ղարաջյանն իր հուշերում գրում է. «Դպրոցը թեև հոգևոր դպրոց էր համարվում, բայց ավելի շուտ այնտեղ սիրում էր աշխարհական, քան հոգևորական ուղղությունը։ Ավանդվող առարկաների մեջ լեզուները (ռուսերեն,

1 «Մշակ», 1896, № 106։

2 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմ. հոգևոր դպրոցի, էջ 574

3 ԳԱԲ, Սեդրակյանի արխիվ, վավ. 10, էջ 42։

ֆրանսերեն), պատմությունը, աշխարհագրությունը, մաթեմատիկան, բնագիտական առարկաները շատ ավելի մեծ տեղ էին գրավում, քան կրոնական առարկանները, որոնց թիվը երկուսն էր (կրոն՝ աստվածաբանություն, եկեղեցական պատմություն)»[1]:

Նման վկայություն է տալիս Գևորգյան ճեմարանի մասին նրա սան, մանկավարժ Պողոս Հովվյանը. «Ճեմարանը յուր գոյության ամբողջ ընթացքում իզուր է հոգևոր անունը կրել»— (նրա ավարտողներից շատ քչերն են կրոնավոր դարձել)», դալով այդտեղ դաստիարակվող սերնդի կրթության որակին, ավելի ճիշտ կլինի անվանել ոչ թե հոգևոր, այլ անաստված ճեմարան. չնայելով ձեռք առած կրոնական խստությունններին, դաստիարակվում էին կատարելապես անաստված ուսանողներ»[2]:

90-ական թվականներին Երևանի թեմական դպրոցում եղած անպլիացի ճանապարհորդ Լինչը վկայում էր, որ այնտեղ «Պատրաստմունքների առարկանների ընտրությունը կղերական ուղղության հետք անգամ չէր կրում»[3], և ուսուցիչները, բացի կրոնուսույցից, աշխարհականներ էին:

Հայկական միջնակարգ դպրոցների աշխարհիկ բնույթն էր, որ համբերությունից հանում էր պետական իշխանություններին և նոր ճնշումների մղում նրանց դեմ: 1901 թ. մայիսին Կովկասի կառավարչապետ Գոլիցինը գրում էր ներքին գործերի մինիստրին. «Հայ լուսավորչական հոգևորականության կազմը լրացվում է ոչ այնքան հոգևոր սեմինարիանների սաներով, սեմինարիաներ, որոնք իրենցից ներկայացնում են ավելի շուտ աշխարհիկ, քան հոգևոր ուսումնական հաստատություններ, որքան գյուղական խավի մարդկանցով...»[4]:

Իր գոյության 25 տարվա ընթացքում ճեմարանը տվել էր 284 շրջանավարտ, որից միայն 47-ն էր հոգևոր սթեմ հագել, մյուսներն ընտրել էին աշխարհիկ գործունեության և առանձնապես ուսուցչության ասպարեզը:

Ընդհանրապես բարձր տիպի հայկական դպրոցներում սովորողների 80—90 տոկոսը հասարակ ժողովրդի ներկայացուցիչներ էին: 1887 թ. Երևանի թեմական դպրոցում եղած 243 աշա-

---

1 ՊԻՄ, Գ. Ղարաջյանի արխիվ, № 88, էջ 52:

2 ԳԱՔ, Հովվյանի արխիվ, № 16, էջ 32:

3 Линч Х. Ф. Б. Армения. Путевые очерки и этюды, т. I, Тифлис, 1910, стр. 287.

4 ՀՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 124, էջ 18 հ. կ.:

դերտներից միայն 12-ն էին հոգևորականների և 9-ը՝ պաշտոնյաների որդիներ, մնացածը արհեստավորների, մանր առևտրականների, հողագործների զավակներ էին[1]:

Եվ այդ խավերից եկած աշակերտները չէին կարող անտարբեր մնալ կրոնական ճնշումների նկատմամբ: Ժամանակը, Անդրկովկաս թափանցող ազատաշունչ զաղափարները, կրոնի և բնական գիտությունների միջև եղած աղաղակող հակասությունները բարձր դասարանների հայ աշակերտությանը մտածել էին տալիս, մղում էին ըմբոստանալու իրենց միջավայրում բուն գնող անարդարության, կեղծիքի, սահմանափակումների դեմ:

Ներսիսյան դպրոցի աշակերտները մշտապես ակտիվ վերաբերմունք են ունեցել կրթական կյանքի անարդարությունների, հետադեմ ուսուցիչների բռնություններ նկատմամբ, նրանցից շատերն են մասնակցել Թիֆլիսի աշակերտական հավաքներին և ինքնակրթական միջոցառումներին: Դեռևս 1883 թ. մարտին այստեղ տեղի էր ունեցել աշակերտական խռովություն, որ տևել էր երկու ամիս: Աշակերտները դժգոհ էին որոշ ուսուցիչների կոպիտ ու անարդարացի վերաբերմունքից, ցանկանում էին ազատվել «տիրացուներից»: Երկու տարի անց նոր հուզումներ են տեղի ունենում, որի հետևանքը լինում է մի քանի ըմբոստների հեռացումը:

Աշակերտական խոշոր հուզումներ եղան Երևանի թեմական-նում 1898 թ., որոնց պատճառը տեսուչ Քարամյանի մտցրած անարդարացի խստությունները էին: Հնամոլ ուսուցչությանը դուր չէին գալիս բարձր դասարանցիների աղատամտությունը, ընթերցասիրությունը և հատկապես կրոնական դոգմանների նկատմամբ ընդգծված կասկածն ու հարցապնդումները: Մի քանի աշակերտներ մեղադրվեցին անվայել արարքների համար ու հեռացվեցին դպրոցից: Սա նոր հուզում առաջացրեց: Հուսահատված աշակերտները ծեծեցին տեսչին: Թեմական մի ջամտություն այն արդյունքն ունեցավ, որ աշակերտներին պաշտպանող երկու առաջադեմ ուսուցիչներ՝ Տ. Ռաշմաճյանը և Վ. Տեր-Խաչատրյանը աղատվեցին պաշտոնից, մի քանի աշակերտներ հեռացվեցին, իսկ նրանցից ամենաըմբոստը՝ Ոսկան Մահտեսի-Համբարձումյանը ենթարկվեց ութամսյա բանտարգելման: Ցիրկիկան խիստ սահմանափակվեց:

---

1 «1837—1887. Յիսնամյակ հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երևանայ», Թիֆլիս, 1888, էջ 245:

Շուշու աշակերտության պայքարը սերտորեն շաղկապվում էր կրոնական կամայականության դեմ ուսուցիչների ու հոգաբարձության մղած պայքարի հետ: Գավառական այս փոքրիկ քաղաքում թեմական առաջնորդներն իրենց հատկապես անզուսպ ու ինքնիշխան էին զգում, ձգտում էին կրճատել դպրոցի միջոցները: Դեռևս 1883—84 թթ. այստեղ աշակերտական մի շարք հուզումներ եղան, իսկ երբ 1887 թ. թեմակալ դարձավ հնամոլ ու ինքնահավան կարապետ եպս. Այվազյանը, ընդհարումներն ավելի սուր ու տևական բնույթ կրեցին: Ժողովուրդը պաշտպանում էր դպրոցի իրավունքների համար պայքարող հոգաբարձությանը, բայց եպիսկոպոսը դրան նշանակություն չէր տալիս, նա անբարտավան տոնով հայտարարել էր. «Ես ժողովուրդ չեմ ճանաչիլ, ժողովուրդը ինձ համար ղևրս է, ես նորան մեկ կաթիլ ջրի մեջ կըխեղդեմ»[1]:

Այվազյանին առանձնապես դուր չեկավ նոր տեսուչ Լ. Սարգսյանի հանդուն գործունեությունը, որն աշխատում էր խոչընդոտել թեմակալի ոտնձգություններին: Հոգևոր հոր դրդմամբ 1894 թ. յոթ աշակերտ դիմում են գրում կաթողիկոսին և մի քանի ուսուցիչների ու տեսչին մեղադրում անասունածություն սերմանելու մեջ: Սկսվում են երկար քննություններ ու վեճեր: Հոգաբարձական և ուսուցչական խառը ժողովը որոշում է հեռացնել յոթ ըրպարտիչներին, սակայն կաթողիկոսն արգելում է: Աղդեցություն չի ունենում նաև Շուշու հասարակության կողմից նրան ուղարկված բողոքը թեմակալի բռնություննների մասին: Եվ տեղի է ունենում հայ դպրոցի պատմության մեջ անօրինակ մի դեպք. որպես բողոք իրենց իրավունքների կոպիտ ոտնահարման դեմ, հոգաբարձությունը և բոլոր ուսուցիչները հրաժարական են տալիս: Բարձր դասարանների 42 աշակերտ կամովին թողնում են դպրոցը: Ի վերջո, կաթողիկոսը ստիպված է լինում եռ կանչել Այվազյանին, բայց և նոր տեսուչ նշանակել: Դրանից հետո Շուշում դեռ երկար շարունակվեցին բախումները, մինչդորդը դարձավ հեղձուցիչ:

1900 թ. աշակերտական նոր հուզումներ եղան. 52 հոգու ստորագրությամբ հանրագիր ներկայացվեց դպրոցի տեսուչ Բենիկ վարդապետին, որտեղ պահանջվում էր բարելավել բնագիտական առարկաների, ռուսաց լեզվի դասավանդումը, հեռացնել անորակ ուսուցիչներին: Հաջորդ տարին աշակերտները կրկնեցին իրենց բողոքը: Երկու դեպքում էլ աշակերտական հուզումները ճնշելու հա-

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 311, էջ 220:

մար հարկ եղավ դիմել ոստիկանության միջամտությանը, և մի քանի հոգի աքսորվեցին քաղաքից։

Կրոնական սխոլաստիկայի, բռնությունների դեմ, անկաշկանդ ուսուցման համար աշակերտների մղած պայքարն առանձնապես ցայտուն դրսևորումներ ունեցավ Գևորգյան ճեմարանում։ Կրոնի և գիտության անհամատեղելիության գաղափարն այստեղ ավելի խորն էր թափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնք և՛ տարիքով էին բարձր, և՛ գիտելիքների պաշարով։

Դեռևս 1878 թ., երբ ճեմարանն ընդամենը չորս տարեկան էր, հինգերորդ դասարանցիներն ըմբոստացան այնտեղ բուն դրած այլանդակ բարքերի դեմ, կտրականապես պահանջեցին վտարել անարժան ու ապականված ուսուցիչ Պ. Ճեպեճյանին, որին իրենք նախօրոք ծեծել էին։ Աշակերտների բերած փաստարկներն այնքան անառարկելի էին, որ ճեմարանի ղեկավարությունն ստիպված էր ընդունել դրանք[1]։

Հաջորդ խոշոր ընդվզումը ճեմարանում տեղի ունեցավ 1891 թ.։ Այն ուղղված էր տեսուչ Ա. Նահապետյանի ստեղծած դաժան կարգերի դեմ։ Դեռևս 1883 թ. ճեմարանի տեսուչ եղած ժամանակ Նահապետյանը դարձյալ իր դեմ հուզումներ էր առաջացրել, որի պատճառով ճեմարանից հեռացվել էին և՛ ինքը, և՛ մոտ 50 աշակերտ։ Այժմ էլ Նահապետյանը վարում էր նախկին դիծը։ Նա աշակերտների մեջ խարդախություն էր սերմանել, նրանց բաժանել էր մշակականների ու նոր-դարականների և խրախուսում ու հովանավորում էր վերջիններիս, հալածվում էր առաջավոր միտքը, աշակերտները զրկված էին տարրական իրավունքներից, ամենաչնչին զանցանքի համար նրանք դաժանորեն պատժվում էին, տեսուչը ստիպում էր նրանց լրտեսել միմյանց։

Այլևս չհանդուրժելով նման դրությունը, բարձր դասարանների 30 աշակերտ 1891 թ. հունվարի 31-ին դադարեցնում են դասերը և պահանջում հեռացնել տեսչին ու բարելավել ճեմարանի վիճակը։ Մակար կաթողիկոսին ուղղած իրենց դիմումում[2] նրանք խնդրում էին որոշ իրավունքներ տալ բարձր դասարանցիներին, ոուսլատրել ազատ ժամերին զբոսանքի դուրս գալ, թերթ կարդալ, պահանջում էին, որ վերակացուները իրենց հետ քաղաքավարի վարվեն։

---

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 325։

2 Տե՛ս Մատեն., Երիցյանի արխիվ, թղթ. 149, վավ. 172, էջ 2։

Երկար քննությունների արդյունքն այն եղավ, որ 34 աշակերտ վտարվեց ճեմարանից որպես անհնազանդ, և ոստիկանությանը կարգադրություն արվեց նրանց հեռացնել էջմիածնից ու դնել գաղտնի հսկողության տակ: Ճեմարանից հեռացվեցին նաև առաջադեմ ուսուցիչներ Ստ. Լիսիցյանն ու Լ. Խոջայանը՝ «ի պատճառս անհանգիստ բնավորության յուրյանց»: Վերջիններս համակրանքով էին վերաբերվում աշակերտների իրավացի բողոքներին, մտադրություն էին հայտնել ճեմարանի որոշ այլանդակ բարքերի համար դիմել դատարանին: Փետրվարի 12-ին Նահապետյանը ևս ստիպված հրաժարական տվեց:

Ճեմարանի դեպքերի առաջին իսկ օրից ցարական իշխանությունները ուշի-ուշով հետևում էին ամեն քայլափոխին: Սինոդի դատախազ Կանչելլին և էջմիածնի գավառապետ Ֆորստելը եռանդով զեկուցագրեր էին հասցնում կենտրոն: Երևանի նահանգապետը կարգադրել էր պարզել, թե «այդ անկարգությունները, արդյոք, քաղաքական երանգ չունե՞ն, այսինքն, արդյոք, երիտասարդները չե՞ն ձգտում տարբեր առիթներով դուրս գալ ճեմարանից, որպեսզի դարնանը ակտիվորեն մասնակցեն հայերի այն շարժմանը, որը նպատակ ունի աջակցել Թուրքիայում եղած իրենց ազգակիցների պայքարին այնտեղի կառավարության դեմ»[1]:

Հավատարմանալով, որ ճեմարանականների դժգոհությունը ներքին կարգերի դեմ է, իշխանությունները, այնուամենայնիվ, պատրաստ վիճակում էին պահում ոստիկանական ուժերը. էջմիածնի նկատմամբ գաղտնի հսկողություն էր սահմանվել, գրաքննությանը կարգադրվել էր թույլ չտալ ճեմարանի դեպքերի մասին լուրերի հրատարակումը: 1891 թ. մայիսի 5-ին Կովկասի կառավարչապետ Ս. Ա. Շերեմետևը ներքին գործերի մինիստր Ի. Ն. Դուրնովոյին հաղորդելով ճեմարանի հուզումների մասին, գրում էր, որ կարելի է դրանից օգուտ քաղել՝ կառավարության կողմից ճեմարանի և թեմական դպրոցների վրա հսկողություն սահմանելու համար[2]:

Աշակերտական հուզումներից հոգևոր կառավարությունը հետևություններ չարեց: Դրությունը ճեմարանում մնաց անփո-

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 41, էջ 1 հ.գ.:

2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138,, գ. 101, էջ 24—26:

վոխ, զեկավարության մեջ զարձյալ անօրինություն էին անում Նահապետյանի կողմնակիցները։

1894 թ. ապրիլի 22-ին Ճեմարանի 22 ուսանողներ նամակով դիմեցին նոր կաթողիկոսին և իրենց հիասթափությունը հայտնեցին նրանից, որ նրանց «ցորեն հացի տեղ զարի հաց» էր տվել։ Նրանք ցավ էին հայտնում, որ «Ճեմարանը չէր ծառայում մեծ հիմնադրի նախորոշած նպատակին, շնորհիվ այն վարիչների, որոնք շահադիտական և նեղ կուսակցական տեսակետից նայելով այդ հիմնարկության զեկավարության վերա, շեղել են նրան իր կանոնավոր ընթացքից և առաջուց չի կարելի դուշակել, թե մինչև ու՞ր կբերհասցնեն գործը»[1]։

1894 թ. նոր ուսումնական տարվանից մթնոլորտը Ճեմարանում շիկացավ։ Նոյեմբերի սկզբներին 6-րդ դասարանցիները ըմբոստացան վարչության դեմ և բողոք ներկայացրին կաթողիկոսին, պահանջելով բարելավել Ճեմարանի վիճակը։ Նոյեմբերի 24-ին հուզումը հասավ գագաթնակետին. 3—6-րդ դասարանների աշակերտները տեսչի հետ բանակցելիս պահանջեցին նաև ընդունել նրա հեռացրած դասատուներից մեկին և, երբ տեսուչը հրաժարվեց կատարել այդ բանը, նրանք դիմեցին ուժի, ծեծեցին մի քանի ծառաների և հեղինակազրկված ուսուցիչների։ Միջամտելով գործին, կաթողիկոսը որոշեց հեռացնել ողջ 6-րդ դասարանը։ Իմանալով այդ մասին, զայրացած Ճեմարանցիները նոյեմբերի 27-ին հարձակվեցին վեհարանի վրա, կռվի բռնվեցին պահակների հետ, ծեծեցին տեսչի տեղակալ Կարապետ արեղային, ջարդեցին Ճեմարանի պատուհանների ապակիները։ Շփոթված հոգևորականությունը դիմեց ոստիկանական պրիստավին, որը 64 հոգու բանտարկիլման ենթարկեց։

Աշակերտական հուզումների բուն պատճառները կռծկելու համար հոգևոր իշխանությունը ողջ մեղքը բարդեց աշակերտների կողմից սիրված ուսուցիչներ Գևորգ սարկավագ Զորեքչյանի և Ազատ Աթանասյանի ու Ճեմարանի տնտեսվար Լևոն վարդապետ Խոջայանի վրա։ Առաջին երկուսը հեռացվեցին պաշտոնից, իսկ Լ. Խոջայանը քշվեց ս. Խաչ վանքը, որտեղ և շուտով մեռավ թոքախտից։ 65 Ճեմարանցիներ հեռացվեցին, 6-րդ դասարանցիներն ընդհանրապես զրկվեցին ուսումը շարունակելու իրավունքից։

---

1 Մատեն., կաթ. դիվան, թղթ. 236 ժա, վավ. 84, էջ 1։

* * *

1890-ական թվականներին ցարիզմը նոր ուժ հաղորդեց ռևակցիային։ Բանվորական շարժումը, երկրի դեմոկրատական ուժերի հակացարական օպոզիցիան գնալով ավելի էին ծավալվում և ստիպում իշխանություններին դիմել կտրուկ միջոցների։

Կովկասյան իշխանություններին հատկապես դուր չէին գալիս կաթողիկոսի 1889 թ. դպրոցական նոր կանոնները, որոնք, նրանց կարծիքով, հակասում էին 1884 թ. կանոնների ոգուն։ Հատուկ դժգոհություն առաջացրեց պինապարտության մասին Մակարի մտցրած կարգը (տե՛ս էջ 162)։ Այս հարցի առթիվ տված վերջնական բացատրության մեջ ներքին գործերի մինիստր Ի. Ն. Դուրնովոն գրում էր. «Այդ հաստատությունների (հայկական դպրոցների— Վ. Ե.) ուսուցիչներին և սովորողներին նշված արտոնությունների տրամադրումը կարող է հետևել հիշյալ դպրոցները Կովկասի ուսումնական շրջանում գործող տարրական ուսումնարանների ընդհանուր կանոններին ենթարկելու դեպքում միայն»[1]։

Մակար կաթողիկոսի վիրավորված ազգային զիտակցությունը ստիպեց նրան դիմելու հուսահատ քայլերի։ Նախ նա հասկացնել տվեց, որ ինքը ստիպված կլինի տեղափոխվել Պարսկաստան, և ապա 1891 թ. սկզբին կարդադրեց հոգևորականներին խիստ պատասխանատվության երկյուղի տակ հայերին բանակում կամ դատարաններում երդվեցնել միայն հայերեն լեզվով, քանի որ դա հայ-լուսավորչական եկեղեցու ծես է և պետք է կատարվի միայն հայերենով։ Սա նույնպես խիստ զրգռեց ցարական բյուրոկրատներին և երկար գրագրությունների առիթ տվեց։ (Ի դեպ, այս հարցը բազմիցս քննությունների առարկա եղավ նաև հաջորդ կաթողիկոսի ժամանակ, որը 1899 թ. կտրականապես հրաժարվեց կատարելու կառավարության պահանջը՝ Մակարի 1891 թ. կարգադրությունը վերացնելու մասին։ 1903 թ. կառավարիչ սենատը հատուկ որոշում կայացրեց, ըստ որի հայերը պետական և պինվորական ծառայության մեջ պարտավոր էին երդվել միայն ռուսերեն)։

Կովկասի նոր կառավարչապետ Ս. Շերեմետևը, զնահատելով ստեղծված վիճակը, վերլուծելով հայերի ազգային-ազատագրական շարժման հեռանկարները, պահանջ ներկայացրեց կառավարությանը՝ վերանայել հայերի նկատմամբ պաշտոնական վար-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մաս 2, էջ 75։

գործի հարցը, այդ վերանայումը կապելով առաջիկա կաթողիկոսական ընտրությունների հետ, քանի որ Մակարի տաբիքը խիստ առաջացած էր։

1891 թ. փետրվարի 12-ին ներքին գործերի մինիստր Ի. Դուրնովոյի նախագահությամբ և ժողովրդական լուսավորության մինիստր Ի. Դելյանովի, արտաքին գործերի մինիստր Ն. Գիրսի, Կովկասի կառավարչապետ Ս. Շերեմետևի մասնակցությամբ Պետերբուրգում տեղի ունեցավ «Հայկական գործերի խորհրդակցություն»[1]։

Խորհրդակցությունում նշվեց, որ մինչև դարակեսը հայոց կաթողիկոսը մեծ ազդեցություն ուներ արտասահմանում և դրա համար էլ վայելում էր կառավարության աջակցությունն ու օգնությունը հատուկ արտոնություններից։ «Կաթողիկոսը երբեմն անգնահատելի գործիք էր հանդիսանում կառավարության ձեռքին ոչ միայն Կովկասին սահմանակից բնակչության, այլ և Կոստանդնուպոլսի ու մասամբ Եգիպտոսի հայերի շրջանում ռուսական ազդեցության տարածման համար»[2]։ Սակայն, հետագայում, Թուրքահայերի մեջ ծայր առավ ինքնավարական և ապա լրիվ անկախության շարժում, որի պլուխ անցած ազգային ժողովը իր ձեռքն առավ Թուրքիայի հայկական բոլոր գործերի ղեկավարումը և դրանով դրեց էջմիածնի ազդեցությունն ու հմայքը։ Կաթողիկոսի փոխարեն Թուրքիայի հայերի մեջ բարձրացվում էր Պոլսի պատրիարքի հեղինակությունը։ Ռուսական կառավարության ջանքերը՝ բարձր պահել էջմիածնի հեղինակությունն այնտեղ, հաջողություն չէին ունեցել։ Վերջին երկու թուրքահպատակ կաթողիկոսներին (Մատթեոս և Գևորգ) խոշոր ղիջումներ են արվել ճեմարանի հիմնադրման, կրթական հարցերում, բայց գործը տեղից չի շարժվել։

Գևորգ կաթողիկոսի մահից հետո կառավարությունը հարմար գտավ վերանայել իր դիրքը և մի շարք միջոցառումներ կիրառեց՝ ռուսահպատակ կաթողիկոսի ընտրություն, հայ դպրոցների նկատմամբ հսկողության սահմանում։ Սակայն Մակարը չարդարացրեց իր վրա դրված հույսերը, թեև նրա հեղինակությունը բարձրացնելու համար կառավարությունը նոր ղիջումներ արեց։ Կաթողիկոսը երկդիմի ձևով աշխատեց միայն օգտվել կա-

1 «Խորհրդակցության» լրիվ արձանագրությունը հեղինակի կողմից հրապարակված է «Բաներ Հայաստանի արխիվներից» հանդեսի 1967 թ. № 1-ում, էջ 86—92։

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 10։

տավարության ներողամտությունից և դիմացը ոչինչ չտվեց, նույնիսկ դեմ գնաց իշխանությունների օրինական պահանջներին:

Խորհրդակցությունը կանգ առավ հետևյալ նկատառումների վրա.

«Հայերի կրոնական քաղաքականությանը վերաբերող հարցերում անհրաժեշտ է դլխավոր ուշադրությունը դարձնել մեր հպատակների շրջանում գործերի դրության վրա և միջոցներ ձեռք առնել այն հաշվով, որ թույլ չտրվեն այնպիսի երևույթներ, որոնք կարող են դժվարացնել կառավարության գործունեությունը, որը ձգտում է հայ ազգությունը աստիճանաբար ձուլել Կայսրության միասպետող բնակչության հետ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հետապա ոչ մի արտոնություն և դիջում թույլ չտալ Կաթողիկոսին և անշեղորեն պահանջել նրանից օրենքի ամուլդ կատարում:

Դպրոցական ճարցում ձգտել եկեղեցական-ծխական ուսումնաբաններ աստիճանաբար լրիվ կերպով ուսումնական վարչության ենթարկելուն, *սակայն առժամանակ ուժի մեջ թողնել ոչ միայն այդ դպրոցների վերաբերյալ 1884 թ. կանոնները, այլև Մակարի միջնորդությամբ կայացած դրանց 1886 թ. բացատրությունները և այն ժամանակավոր, թեև խիստ էական, շեղումներն այդ կանոններից, որոնք Կաթողիկոսի պնդմամբ թույլատրվել են 1889 թ. որոշակի ժամկետի համար»*[1]: (Ընդգծումները իմն են — Վ. Ե.):

Խորհրդակցությունն անհրաժեշտ էր համարում նաև ուժեղացնել հոգևորականության նկատմամբ հսկողությունը, խիստ պատժել օրինազանցներին, հատկապես ստորին հոգևորականությանը, որն սկսել էր մասնակցել բնակչության շրջանում նկատվող քաղաքական խմորումներին: Որոշվեց առաջիկա կաթողիկոսական ընտրություններին ակտիվ վերաբերմունք ցույց չտալ, քանի որ «Մեր քաղաքական նպատակներին հասնելու իմաստով ներկայումս կաթողիկոսի վրա ազդելու եղանակներ ու միջոցներ չունենալով, մենք պետք է անտարբեր վերաբերվենք այն բանին, թե ով կընտրվի Մայրաթոռն Պատրիարք:

...եթե հետագայում արտաքսմանի հայերի մեջ շրջադարձ տեղի ունենա հօգուտ էջմիածնի աթոռի և հայերի մեծամասնությունը, համոզվելով, որ Կոստանդնուպոլսի Ազգային ժողովի

---

1 Նույն տեղում, էջ 12:

քարոզած երաշներն անիմաստ ու անիրագործելի են, սկսի ձըգտել ավելի սերտ միասնության իր վաղեմի հովանավորի՝ Ռուսաստանի հետ, ապա էջմիածնի աթոռը կարող է դարձյալ ցանկալի գործիք դառնալ մեր ձեռքում, և Կառավարության հայեցողությունից կախված կլինի, հանգամանքների համաձայն, իրագրության նոր ընթացքից օգավելը»[1]։

Ելնելով այդ բոլոր նկատառումներից, կառավարական խորհրդակցությունը կոնկրետ միջոցառումներ մշակեց։

Գլխավոր հարցում ընդունվեց հետևյալ որոշումը. «Հայլուսավորչական եկեղեցական-ծխական ուսումնարաններին վերաբերող գործերում պահանջել այդ ուսումնարանների մասին 1884 թ. կանոնների ճշտորեն և առարկելի կատարումը՝ այն բացատրություններով ու ժամանակավոր դիջումներով, որոնք արվել են 1886 թ. հունվարի 16-ին և 1889 թ. մարտի 22-ին, և այդ հարցում թույլ չտալ որևէ նոր մեղմացումներ։ Կաթողիկոսի կամ նրան ենթակա հոգևորականներից որևէ մեկի կողմից որևէ ուսումնարանի նկատմամբ այդ կանոնների խախտման դեպքում, Ուսումնական շրջանի հոգաբարձուին թույլ տալ զեկուցագիր ներկայացնելու Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ նման ուսումնարանները փակելու մասին, կամ այդ ուսումնարանները նյութական միջոցներով ապահովող անձանց ցանկության դեպքում շարունակել նրանց գոյությունը, մասնավոր ուսումնական հաստատությունների վերաբերյալ կանոնադրության հիման վրա, ենթարկելով դրանք անմիջականորեն ժողովրդական ուսումնարանների դիրեկցիային և տեսչությանը՝ ըստ 1874 թ. մայիսի 25-ի օրենքի»[2]։

Ընդ որում, նշվում էր, որ եթե բարձրաստիճան հոգևորականությունը խուսափի այս պահանջի կատարումից, ապա տեղական իշխանությունները պետք է դիմեն անմիջական գլխավոր կառավարիչներին և վերջիններիս խուսափելու դեպքում նրանց պատասխանատվության ենթարկեն։

1891 թ. մարտի 2-ին Ալեքսանդր III-ը խորհրդակցության մասյանի վրա մակագրեց՝ «Կատարել», իսկ մարտի 16-ին նա հաստատեց նաև հայ եկեղեցականներին վարչական կարգով պատժելու միջոցառումների մասին կազմված լրացուցիչ որոշումը։

---

1 Նույն տեղում, էջ 13։

2 Նույն տեղում, էջ 13 հ. կ.։

Արտաքինից այդ որոշումներն ուղղված էին, կարծես, էջմիածնի կաթողիկոսների անհնազանդության դեմ, բայց ըստ էության դրանք մի լուրջ մարտահրավեր էին՝ ուղղված հայ ժողովրդի ազգային ձգտումների, գաղութային ճնշմանը դիմագրավելու նրա վճռականության դեմ: Ցարական բարձրաստիճանավորները սահմռկված իրավիճակը այնպես էին ներկայացնում, որ իբր դրա համար միակ պատասխանատուն ու մեղավորը հայ ժողովրդի ազգային շարժումների վերելքն է, արևմտահայության հասարակական-քաղաքական ընդվզումը. ոչ մի խոսք չէր ասվում Ռուսաստանի արտաքին-քաղաքական նկատառումների մեջ տեղի ունեցած խոշոր փոփոխությունների մասին, որոնք և հիմնական դեր էին խաղացել հայերի քաղաքական նշանակությունը անտեսելու գործում:

1891 թ. խորհրդակցության որոշումներն ու ոգին կանխորոշեցին ցարիզմի քաղաքական դիծը հայ ժողովրդի նկատմամբ, որը շարունակվեց երկար տարիներ և փոխվեց միայն ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ:

Հայ դպրոցի բախտն արդեն որոշված էր: Բայց չէր կարելի միանգամից հարվածել. պետք էր նախապատրաստել հասարակական կարծիքը: Գործի դրվեց հայ դպրոցը, և ի վերջո հայ ժողովրդին վարկաբեկելու բյուրոկրատական հզոր մեքենան: Սինոդական ռեակցիան սկսեց իր թույնը թափել, օրը ցերեկով թալանվածի աղմուկ-աղաղակ բարձրացնել, հայերին սեպարատիզմի մեջ մեղադրելու առասպելը նոր դրսևորումներ ստացավ՝ հայերն ուզում են անկախ պետություն ստեղծել և ամբողջ Կովկասը մինչև Վորոնեժ (?!) անջատել Ռուսաստանից, նրանք ուզում են ստըրկացնել Կովկասի ժողովուրդներին, նրանք արհամարհում են պետական լեզուն և հանդգնում են կրթություն ստանալ ազգային դպրոցներում և, օ՜, սարսափ, ազգային լեզվով, ռուսական պետականությանը մահացու վտանգ է սպառնում, և այդ սոսկալի աղետը ծնունդ է առնում եկեղեցական-ծխական դպրոցներում (որտեղ սովորում էին 7—12 տարեկան երեխաները): Դա հրեանաչին նախապատրաստություն էր խոշոր հարձակումից առաջ:

Մակար կաթողիկոսի մահից հետո (1891 թ. ապրիլ) իշխանությունները միջոցներ ձեռք առան էջմիածնի սինոդին հնազանդ պահելու համար, որն սկսել էր ըմբոստության նշաններ ցույց տալ. 1884 թ. նրա դիմադրությունը տհաճ նստվածք էր թողել

բյուրոկրատական հիշողության մեջ։ Ներքին գործերի մինիստրի պահանջով սինոդի անդամներ Սուքիաս և Ներսես արքեպիսկոպոսները, անհնազանդության և Պոլսի հետ կապեր ունենալու մեջ մեղադրվելով, կայսեր հրամանով աքսորվեցին Օրյոլ և Պոլտավա՝ մինչև նոր կաթողիկոսի ընտրությունը։

Էջմիածնի վանքը պարուրվեց կասկածանքի թանձր քողով։ Ոստիկանական զաղտնի հսկողություն սահմանվեց էջմիածին ժամանողների նկատմամբ։ 1894 թ. փետրվարի 24-ին Երևանի նահանգապետը զեկուցում էր կառավարչապետին. «Էջմիածնի վանքը մի տեսակ հատուկ պետություն է պետության մեջ. նրա դարպասների մոտ վերջանում են ոստիկանության իրավունքներն ու իշխանությունը, այնինչ, դատելով մասնավոր տեղեկություններից, այդ դարպասներից այն կողմ միշտ չէ, որ հաշվի են նրատում օրենքների ու երկրամասի կառավարման շահերի հետ»[1]։ Ոստիկանական զեկուցագրերի տարափ սկսվեց, որոնք ձգտում էին ապացուցել, որ էջմիածինը հայերի հեղափոխական շարժման կենտրոնն է, որ այնտեղ զենքի պահեստներ կան. «Հայկական հրոսախմբերի համար զենքը,— զեկուցում էր Կարսի գեներալ-նահանգապետը,— ըստ լուրերի, պատրաստվում է էջմիածնում»[2]։

Հատկանշական է, որ հակահայկական տրամադրությունների հրահրման գործում զգալի դեր էին խաղում Բուրբիայի դեսպանը Պետերբուրգում և հյուպատոսը՝ Թիֆլիսում։ Վերջինս, օրինակ, 1896 թ., իր մարդկանց միջոցով լուրեր էր տարածել, թե իբր հայերը մտադիր են ծննդյան զիշերը Թիֆլիսում կոտորել ռուսներին ու վրացիներին։ Միամիտ մարդիկ հավատացել էին դրան ու զինվել։

Պնդաճակատ ոստիկանությունն իր ջանքերի մեջ հաճախ զավեշտի էր հասնում. Թիֆլիսի տների պատերին երևացել էր կավիճով գրված «ЗЮ» գրությունը, ոստիկանությունն իրարով էր անցել, կարծելով, թե դա նշանակում է «Զևգիոն» և հայկական ապստամբության նշան է։ Ոստիկանապետի տանը արտակարգ խորհրդակցություն է հրավիրվում շտապ միջոցներ ձեռք առնելու համար։ Եվ հանկարծ նույն ոստիկանապետի սրտին հայտնում է, որ դա իրենց՝ դիմնազիստների սարքածն է, որոնք դրանով ուզեցել են իրենց ուսուցիչներից մեկին ձեռ առնել[3]։

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 45, էջ 13 հ. կ.—14։

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 3 հ. կ.։

3 Տե՛ս Դ.Ա.Բ., Անդրակյանի արխիվ, բաժ. 1, վավ. 11, էջ 90։

Հայ երիտասարդության մեջ արևմտահայ եղբայրներին օգնելու համար սկսված շարժումը ցարիզմին դրկել էր հանգստությունից և իրադրությանը ողջամիտ մոտենալու կարողությունից։ Ամեն մի գյուղում ու ավանում, եկեղեցում ու դպրոցում ոստիկանությունը հեղափոխական ագիտատոր էր փնտրում, որոնք իբր վենդի համար դրամ էին հավաքում ու ապստամբության կոչ անում։ Հատկապես կասկածի տակ էին ուսուցիչներն ու ատորին հոգևորականությունը։ 1895 թ. դեկտեմբերի 5-ին կառավարչապետի գրասենյակից հայտնում էին Թիֆլիսի նահանգապետին. «Կառավարչապետին հասած տեղեկությունների համաձայն, հայկական ագիտացիային մասնակցելու մեջ կասկածվել են, ի միջի այլոց, Թիֆլիսի հայկական հոգևոր սեմինարիայի ուսուցիչ Լևոն Մանվելյանը և Կոմիտաս վարդապետ Սողոմոնյանը Թիֆլիսում»[1]։

Հայերի դեմ հալածանքներն էլ ավելի սաստկացան այն ժամանակ, երբ Անդրկովկաս խուժեց թուրքական կոտորածներից վտանգած գաղթականությունը։ Ամեն մի թշվառ գաղթական ցարական բյուրոկրատիայի աչքում սարսափելի ապստամբի կերպարանք էր առնում։ Նրանց օգնելը կասկածելի էր թվում, արգելվում էր կոտորածների ժամանակ զոհվածների հոգեհանդիսաների անցկացումը եկեղեցիներում։ Չկարողանալով գլուխ հանել հասարակական հոսանքների ու կազմակերպությունների էությունից, ցարիզմի աչքում ամբողջ հայ ժողովուրդը ներկայանում էր որպես ըմբոստ մի զանգված։ Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության 1903 թ. փետրվարի 12-ին դրած մի զեկուցագրում այդ շրջանի մասին կարդում ենք. «Հեղափոխական գաղափարը ընդգրկել էր հայ ժողովրդի բոլոր խավերին— ունևորներին ու չքավորներին՝ վաճառականից, հարուստից մինչև գյուղաբնակն ու քաղաքենին և մանր առևտրականը, մտավորականությանը և լրիվ անկուլտուրական խավերին. արհեստավորի կամ գյուղացու կողքին աշխատում էին խմբագիրն ու հայ մամուլի օրգանների աշխատողները, բժիշկները, երդվյալ հավատարմատարները, համալսարանական ցենզով մարդիկ, համարյա ամբողջ ուսուցչական անձնակազմը»[2]։

Ցարական կառավարությանը խիստ անհանգստացնում էր հայերի ազգային ինքնագիտակցության խորացումը։ Նա ահավոր վտանգ էր տեսնում այն բանում, որ հայերն սկսել էին իրենց ազգանուններին «ով» վերջավորության փոխարեն «յանց» ավելաց-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 7։
2 ՀՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 51, էջ 6 հ. կ.։

նել, այն բանում, որ «ունևոր ինտելիգենտ հայերի, որոնք գրեթե ձուլվել էին ռուսներին, և նույնիսկ ռուսական զորքերում ծառայողների ընտանիքները, որոնք չգիտեին հայոց լեզուն և լրիվ անտեսում էին այն, սկսել էին հայ ուսանողներ և գիմնազիստներ հրավիրել իրենց տները, իրենց զավակներին հայերեն սովորեցնելու համար»[1]:

Հատուկ ուշադրություն էր դարձվում հայ մամուլի վրա: Գրաքննական մարմիններն արգելում էին տեղական, և առանձնապես, հայկական նոր պարբերականների հրատարակումը: (Ի դեպ, 1891 թ. Մամուլի գործերի գլխավոր վարչությունը մերժեց Ն. Խոսրովյանի խնդրանքը վերականգնելու «Վարժարան» ամսագրի հրատարակությունը)[2]: Հայ մամուլին արգելվել էր գրել «հայկական հարցի», Թուրքական կառավարության քաղաքականության մասին, 1892 թ. դրաքննությունը խոչընդոտեց Րաֆֆու «Սամվելի» բեմականացմանը, հայ շատ գրողների գործերը արգելքի տակ էին, թույլ չէր տրվում նաև թարգմանել օտարերկրյա, հատկապես բուլղարական, ազատաշունչ ոգով գրող հեղինակներին:

Ազգային հալածանքների սաստկացման ընդհանուր շղթայում կարևոր օղակ էր դպրոցը: Կարսի պինվորական նահանգապետը 1891 թ. սեպտեմբերի 13-ի զեկուցագրում հայտնում էր. «Հայերն հատկապես թանկ են գնահատում դպրոցները, որպես սեպարատիզմի պրոպագանդի օջախներ: Դպրոցներում շարունակվում է ավանդվել Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը նեղ-ազգային ոգով: Դասից առաջ և հետո աղոթքների փոխարեն աշակերտները երգում են երկու հեղափոխական բանաստեղծություն: Հայ մտավորականությունը բաժանվել է երկու լագերի, որոնցից մեկը արքեպիսկոպոս Արիստակեսի, Աբգար Հովհաննիսյանի, նրա փեսա, հյուպատոս Կամսարականի, հայտնի ագիտատոր Ռուբեն Ջալալյանի և ուրիշների գլխավորությամբ գործի է դնում բոլոր ջանքերը Հայաստանի անհապաղ վերականգնման համար, իսկ մյուս, ավելի չափավոր փոքրամասնությունը, որի համար ցանկանում է սպասել մինչև Ռուսաստանում կառավարման սահմանադրական ձևի հաստատումը»[3]:

Կառավարչապետը լուսավորության մինիստրի խնդրանքով 1892 թ. հուլիսի շրջաբերականով պատվիրեց տեղական իշխանու-

---

1 Նույն տեղում, էջ 3:
2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 77:
3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 4:

թյուններին հսկողություն սահմանել հայկական դպրոցների նկատմամբ ու հայտնաբերել ռուսերենից խույս տալու դեպքեր։

Կաթողիկոսական տեղապահ Երեմիան եռանդուն կերպով բողոքեց ռուսերենից խուսափելու մեղադրանքի դեմ, սակայն դա հաշվի չառնվեց, քանի որ ցարիզմին իրականում հետաքրքրում էր ոչ թե ռուսաց լեզվի դրվածքը, որպես առանձին առարկայի, այլ այն, որ հայոց դպրոցներում մյուս առարկաներն ավանդվում էին հայերենով։ Այդ առթիվ Մ. Սմբատյանը իր «Հիշատակարանում» 1892 թ. մայիսի 30-ին գրանցել էր. «Արդեն ինձ մասնավոր նամակներից հայտնի է, որ Թիֆլիսում և Երևան-Գանձակի նահանգների արքունակ. ժողովրդական դպրոցների վերատեսուչները այս գարնան այցելելով մեր գյուղական մի քանի ծխակ.-հկեղ. դպրոցները (Քարվանսարա և այլն) հայտնել են ուղղակի, որ տերությունը այդ դպրոցները թողնելու չէ առանց պատշաճավոր կարգադրության, որ առարկաները ավանդվեն ռուսերեն, որ ուսուցիչների կարգումն լինի իրենց գիտությամբ, և այլն, բայց միայն սպասում են կաթողիկոսի ընտրության և հաստատության»[1]։

(Ի դեպ, պետական խորհրդի 1892 թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ Անդրկասպյան երկրամասում գործող հայոց դպրոցներում բոլոր առարկաները, բացի կրոնից, պետք է ավանդվեին ռուսերենով)։

Արդեն 1892 թ. հուլիսին կառավարչապետը Ի. Դելյանովին գրած նամակում այն կարծիքն էր հայտնում, որ հայոց դպրոցներում կառավարությանը յանկալի ուղղություն հաստատելու համար հարկավոր է դրանք ենթարկել ուսումնական վարչությանը։ «Սակայն դրա հետ միասին,— ավելացնում էր Շերեմետևը,— պարտավորվում եմ նախազգուշացնել, որ այդ իմաստով կառավարության արած կարգադրությունը, անկասկած, անբավականություն և վճռական բողոք կառաջացնի ինչպես բարձրաստիճան ու ստորին հոգևորականության, այնպես էլ հայ հասարակության մտավորական մասի կողմից։ Այդ անբավականությունն ու բողոքները կարող են դրսևորվել նույնիսկ բավական կտրուկ ձևերով, և կպահանջվի, հավանաբար, ձեռք առնել վճռական, ռեպրեսիվ միջոցներ։ Կարելի է սպասել նաև (ինչպես եղել է 1885 թ.), որ սկզբնական շրջանում հայկական եկեղեցական-ծխական բոլոր դպրոց-

1 Մատեն., Մ. Սմբատյանի արխիվ, թղթ. 217, վավ. 1, էջ 12 հ. կ.։

ները կրկին կփակվեն։ Միով բանիվ, Կառավարությունը և տեղական իշխանությունը պետք է պատրաստ լինեն գործ ունենալու մասամբ հրապարակային և մասամբ ընդհատակյա, համառ պայքարի հետ։

Անհրաժեշտ եմ համարում հարակցել, որ եթե դրական որոշում կայացվի ասվածի իմաստով, ապա այն, իմ կարծիքով, պետք է իրագործել ոչ թե հիմա, այլ նոր Պատրիարք-կաթողիկոսի գահակալությունից հետո, որպեսզի տեղ չգտնեն այն ենթադրությունները, թե կառավարությունը, խուսափելով ապագա Պատրիարքի հետ վճռական գործողություններից, ցանկանում է օգտվել պատրիարքական աթոռի թափուր ժամանակից»[1]։

Այս շրջանում Կովկասի իշխանություններին ամենից շատ մտահոգում էր այն, որ կաթողիկոսի գահակալությունից հետո հայ դպրոցն սկսել էր աշխուժանալ։ Նյութական աղքատ միջոցներ ունեցող պետական դպրոցը դժվարանում էր մրցապայքարում և այդ բանն ավելի էր դրդռում բյուրոկրատիային։ Նրա համար պարզ էր, որ «Կովկասի ռուսական կառավարական դպրոցը, որպես ուսումնական-դաստիարակչական հիմնարկություն, ներքին առավելություններից բացի, և՛ իր արտաքին տեսքով և՛ ընդհանուր տնտեսական բարեկարգմամբ պետք է նույնպես բարձր կանգնած լինի, պետք է և՛ այդ տեսակետից հարգանք ներշնչի նրան շրջապատող այլազավան ու տարացեղ բնակչությանը»[2]։ Բայց ինչպես վարվել, երբ հենց Յանովսկու վկայությամբ «Պետական գանձարանը չի կարող այնքան միջոցներ հատկացնել, որքան պահանջվում է տարրական ուսումնարանների ստեղծման ու պահպանության համար,— դրանում պետք է անմիջական մասնակցություն ունենա հենց բնակչությունը, բայց նա, աղգային հոգևորականության ազդեցության տակ, խուսափում է դրանից»[3]։

Հոգաբարձուի երևակայությունը հանդում է այն մտքին, որ պետք է սահմանել մի նոր, պարտադիր դպրոցական հարկ։ «Այդ հարկը,— գրում էր Յանովսկին 1894 թ. փետրվարի 28-ին,— հակառակ հոգևորականության ազդեցությանը, գյուղական համայնքների դրամական միջոցները կհանձնի կառավարության ձեռքը. բնակչությունը չի կարողանա կրկնակի ծախս անել՝ վճա-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. II, էջ 81 հ. կ.— 82։
2 «Русская школа», 1901, № 4, էջ 65։
3 ՀՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 130, էջ 4։

րել հարկը և եկեղեցական դպրոցներ պահել ու, բնականաբար, կնվազեցնի դրամական այն հատկացումները, որ ներկայումս անցնում են հոգևորականության տրամադրության տակ։ Եթե հայկական եկեղեցական ուսումնարանների ենթարկումը մինիստրության լրիվ իրավասությանը անժամանակ է համարվում, ապա դպրոցական հարկի սահմանումը միանգամայն ժամանակին է»[1]։

Սակայն կառավարությունը որոշեց հարցը լուծել ավելի «արմատական» ձանապարհով։ Նա հայ դպրոցի վերացումը հասունացած էր համարում և չուզեց իրեն գլխացավանք պատճառել լրացուցիչ հարկի սահմանումով։

Հայ դպրոցի վրա ամպեր էին թանձրացել, որից միայն կարկուտ էր սպասվում։

1889 թ. պետական խորհրդակցությունը հինգ տարվա ժամկետ էր սահմանել, որպեսզի հայկական դպրոցի ուսուցիչները ուսուցչական պետական վկայական ձեռք բերեն։ Սակայն, չնայած էջմիածնի հորդորներին, հայ ուսուցչությունը դժվարությամբ էր տեղից շարժվում. մի հաճելի բան էլ չէր, երկար տարիներ դպրոցում աշխատելուց հետո, դարձյալ կանգնել քննական հանձնաժողովի առաջ։ Իր կողմից Յանովսկին պատվիրել էր առանձնապես խիստ վարվել քննություն հանձնող հայ ուսուցիչների նկատմամբ։ Առաջին տարիներին ցենզի հարցը մի տեսակ մոռացության մատնվեց, սակայն 1892 թ. հայ մամուլն սկսեց անհանգստանալ, զգալով, որ այդ հարցը կարող է վտանգել դպրոցի գոյությունը։ Վրաստանի թեմական տեսուչ Ղազիշե ք. Գեղամյանը մայիսին դիմեց Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերությանը և օգնություն խնդրեց ցենզի քննություն հանձնողների համար դասընթացներ կազմակերպելու նպատակով[2]։ Բայց այդ տարի ոչինչ անել հնարավոր չեղավ։

Հաջորդ տարի նախաձեռնությունն իր վրա վերցրեց Կովկասի բարեգործական ընկերությունը. Թիֆլիսում և Ախալցխայում մոտ 50 հոգու համար կազմակերպվեցին դասընթացներ[3]։ Փորձ ձեռք բերելով, ընկերությունը որոշեց մյուս տարի ավելի ընդարձակ գործունեություն ծավալել։ Մկրտիչ կաթողիկոսը այդ նպատակով ընկերությանը տրամադրեց 1882 թ. ուսուցչական ժողո-

1 Նույն տեղում, էջ 3 հ. կ.։

2 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 22, ց. 1, գ. 154, էջ 4։

3 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 28, գ. 281։

վից մնացած երկու հազար ռուբլին և պատվիրեց դլխավորել գործը։ Թիֆլիսում ևս հանգանակվեց մոտ 2500 ռ., որոշ օգնություն ցույց տվեցին Հայուհյաց և Բաքվի ընկերությունները։

1894 թ. մարտին ընկերությունը որոշեց դասընթացները կազմակերպել առայժմ միայն Թիֆլիսում, իսկ հետագայում՝ նաև Երևանում, Ալեքսանդրապոլում և Շուշում։ Կաթողիկոսին խնդրեցին համապատասխան մանկավարժական դասընթացներ ստեղծել նաև Ներսիսյան դպրոցում ու ճեմարանում։ Ընկերությունը հատուկ հայտարարությամբ դիմեց Անդրկովկասի հայկական դպրոցներին՝ ամառային արձակուրդների երեք ամսվա ընթացքում Թիֆլիսում կազմակերպվելիք դասընթացների համար հաշվառել վկայականի քննություն հանձնել ցանկացողներին և նրանց գործերը ուղարկել իրեն։ Պարապմունքները պետք է տեղի ունենային Հովնանյան դպրոցի շենքում, իսկ Ներսիսյան դպրոցի շենքը վեր էր ածվելու հանրակացարանի։ Կարիքավոր ուսուցիչներին տրվելու էր դրամական նպաստ։ Դասընթացներին մասնակցելու համար դիմեց 123 ուսուցիչ։ (Այդ ժամանակ Վրաստանի թեմի հայկական դպրոցների 221 ուսուցչից 130-ը, իսկ Երևանի թեմի 221 ուսուցչից 61-ը միայն ուսուցչական ցենզ ունեին)։

Ավարտելով բոլոր նախապատրաստական աշխատանքները, ընկերությունը մասնավոր ռեալական դպրոցի տեսուչ Մելիք-Բեգլարյանի միջոցով, որին հանձնարարված էր դասընթացների վարկավարությունը, դիմեց իշխանություններին՝ թույլտվություն ստանալու համար։ Թիֆլիսի նահանգապետը լուրջ առարկություն չարեց, սակայն գործին միջամտեց Յանովսկին։ Նա պահանջեց, որպեսզի կանայք ու տղամարդիկ պարապեն առանձին դասասենյակներում, դասընթացներին կից գործի օրինակելի դպրոց՝ պրակտիկ պարապմունքների համար, բոլոր հաշվետվությունները ներկայացվեն իրեն, ուսուցումն ընթանա իր մշակած պլանով, դասընթացները գտնվեն ուսումնական վարչության հսկողության տակ, որն իրավունք ունի փակել դրանք, եթե որևէ պայման չկատարվի։ Դա դասընթացներն արգելելու անուղղակի ձև էր։ Ամառային արձակուրդներին պահանջել օրինակելի դպրոցի ստեղծում, նշանակում էր խափանել գործը, մանավանդ, որ Յանովսկին իր պայմանները դիտավորյալ կերպով առաջադրել էլ դասընթացներն սկսվելուց ընդամենը մեկ շաբաթ առաջ։

Եվ այնքան ոգևորությամբ սկսված գործը տապալվեց[1]։

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 28, գ. 283։

1894 թ. հունիսին ընկերությունը հայտարարեց, որ դասընթացները չեն բացվելու և առաջարկեց ցանկացողներին ընկերությունից դրամական նպաստ ստանալ՝ անհատական կարգով պարապելու համար։

Ուսուցչական ցենզի հարցը սուր կերպարանք ստացավ։ Ուսումնական վարչությունն սկսեց որոշ տեղեր ձեռնամուխ լինել դպրոցների փակմանը։ Այդ ժամանակ պետական դպրոցներում աշխատող շատ հայ ուսուցիչներ, որոնք ունեին համապատասխան ցենզ, դիմեցին հայ դպրոցների ղեկավարությանը, իրենց աշխատանքի ընդունելու համար։ Սացխենիսի արքունի դպրոցի ուսուցիչ Նիկ. Ղարագյոզյանը 1894 թ. հուլիսին գրում էր Վրաստանի թեմական տեսուչ Մ. Մելյանին. «Ի նկատի ունենալով, որ գալ ուսումնական տարվանից պահանջվում է հայ ուսուցիչներից ուսուցչական ցենզ, հավանական է, որ մեր ուսումնարաններում ուսուցիչների կարիք կզգացվի, այդ պատճառով ես իմ որդիական և սեպուհ պարտականությունն եմ համարում ըստ կարեաց օգնելու, այսինքն թողնել պետական ուսումնարանում ծառայությունս և մտնել հայ ուսուցչության ասպարեզ»[1]։

Կաթողիկոսը 1894 թ. հունիսի 4-ին դիմեց կառավարությանը, խնդրելով մեկ տարով երկարաձգել ուսուցչական ցենզ ձեռք բերելու ժամկետը և դրանով փրկել հայ դպրոցը փակման վտանգից։ Միաժամանակ, Յանովսկին ևս դիմեց կառավարությանը և կարգադրություն խնդրեց ցենզ չունեցող հայ ուսուցիչներին հեռացնելու մասին։ Այս անգամ կառավարությունը հարգեց Խրիմյանի խնդրանքը, համոզված լինելով, որ դա, միևնույն է, վիճակը չի փոխի, իսկ կաթողիկոսը առիթ չի ունենա հայտարարելու, թե հայ եկեղեցին հալածվում է[2]։

Եվ իրոք, մեկ տարի անց, ամռանը Պետերբուրգում գտնվող կաթողիկոսը դարձյալ դիմեց ներքին գործերի մինիստրին. նա տրտնջում էր, որ ժամկետների սղության պատճառով հաջողվել է ցենզով ապահովել միայն քաղաքային դպրոցների ուսուցիչներին, և խնդրում էր գյուղական ուսուցիչների համար լրացուցիչ ժամկետ նշանակել։ Իր խնդրանքին ավելի նշանակություն տալու համար Խրիմյանը գրում էր, որ եթե ցենզի պատճառով հայ դպրոցները փակվեն, ապա դա առիթ կտա «Ռուսաստանին անբարյացակամ մարդկանց Եվրոպայի հասարակական կարծիքը գրգռել մեր

1 ՀՊԿՊԱ, ֆ. 22, ց. 1, գ. 276, էջ 30։

2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մաս II, էջ 108—112։

Հայրենիքի դեմ՝ այդ փաստը ներկայացնելով որպես կրոնական հալածանքի հետևանք»[1]:

Կաթողիկոսի խնդրանքը մերժվեց, և հրապարակի վրա սկսեց լիիրավ տնօրինություն անել 1891 թ. խորհրդակցության ոգին: Ուսուցչական ցենզի հարցը հետին պլան մղվեց և առաջ քաշվեց բյուրոկրատիայի ըմբռնմամբ մի «զորեղ» փաստարկ, որի դեմ, նրա կարծիքով, էջմիածինն այլևս ոչինչ անել չէր կարող:

Յանովսկու ներշնչումներին ենթարկվելով, Կովկասի կառավարչապետ Շերեմետևը առաջ քաշեց հայ դպրոցի գոյության միջոցների անօրինականության հարցը: Դեռ 1894 թ. հունիսի 29-ին նա շրջաբերականով դիմել էր երկրամասի նահանգապետերին և պատվիրել շտապ կարգով պարզել հայ եկեղեցական-ծխական դպրոցների գոյության աղբյուրները: Նա գտնում էր, որ դպրոցների մեծ մասը չեն համապատասխանում 1884 թ. փետրվարի 16-ի կանոնների առաջին կետի պահանջին, ըստ որի այդ դպրոցները «պահվում են կամ բացառապես եկեղեցիների ու վանքերի գումարների հաշվին, կամ ծխականների կողմից ցույց տրվող օժանդակությամբ»: Մինչդեռ, նրանց մեծ մասը պահվում է «բացառապես տեղական գյուղական հասարակությունների միջոցներով՝ առանց վարչության դիտության կազմվող հասարակական վճիռների համաձայն. այնինչ եկեղեցիներն իրենց եկամուտներից այդ դպրոցների պահպանությանը ոչինչ չեն տալիս»[2]: Կառավարչապետը շեշտում էր, որ նման միջոցները հավաքվում են հարկի ձևով, և ավելի խստությամբ, քան պետական հարկերը: Այս նկատառումներով էլ հայկական դպրոցները անօրինական կերպով են եկեղեցական համարվում:

1895 թ. հուլիսի 28-ին, այն ժամանակ, երբ կաթողիկոսը կառավարությանը խնդրանք էր ներկայացրել ուսուցչական ցենզի ժամկետը կրկին երկարաձգելու մասին, Շերեմետևը Պետերբուրգ ուղարկեց հայկական դպրոցները էջմիածնի ենթակայությունից խլելու իր առաջարկները: Նա գրում էր, որ հայկական 190 ստուգված դպրոցներից 130-ը պահվում են միայն հասարակության հաշվին և չեն կարող եկեղեցական կոչվել: Շերեմետևը գտնում էր նաև, որ այդ դպրոցները միաժամանակ լուրջ խոչընդոտ են ուղղափառության տարածմանը, որ շատ վայրերում հայերը լրիվ

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 119, էջ 12:
2 ՀՊԿՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 776, էջ 2:

հայախոս ու հայասեր են դարձել (!) և այլևս չեն հաճախում ուղղափառ եկեղեցիները։

Կառավարչապետն այն կարծիքին էր, որ եթե հայ ուսուցիչները նույնիսկ ցենզի բննություններ հանձնեն, դրանից գործի էությունը չի փոխվի, քանի որ «հայկական-ծխական դպրոցներում ուսուցչական պաշտոնները սովորաբար զբաղեցնում են ոչ թե կառավարական, այլ նույն հայկական ուսումնական հաստատություններում կրթություն ստացած անձինք, հաստատություններ, որոնք հայտնի են քաղաքական տեսակետից իրենց վնասակար, նեղ-ազգային ուղղությամբ։ Այդ նույն ուղղությունը նման հաստատություններում ուսած ուսուցիչների միջոցով, ինչպես նախկինում, այնպես էլ, անտարակույս, այսուհետև կփոխանցվի ծխական դպրոցներին, եթե նույնիսկ այդ ուսուցիչներն ստանան սահմանված ուսուցչական ցենզը, քանի որ դժվար է պատկերացնել, թե այդ ցենզին նախապատրաստվելը կկարողանա հակազդել այդ անձանց նախնական կրթությանը, որ նրանք ստանում են հարազատ ընտանիքում և ազգային դպրոցում։ Այդ իսկ պատճառով նրանց կողմից ուսուցչական ցենզի ձեռք բերումը ավելի շուտ լոկ միայն ձևականություն կլինի»[1]։ *(Ընդգծումը իմն է—Վ. Ե.)*։ Շերեմետևն առաջարկում էր մերժել կաթողիկոսի խնդրանքը և պահանջել գոյություն միջոցներով 1884 թ. կանոններին չհամապատասխանող դպրոցները հանձնել ուսումնական վարչությանը, իսկ չենթարկվելու դեպքում՝ փակել դրանք։

Կառավարության համար այս առաջարկը հայտնություն էր։ Ներքին գործերի և լուսավորության մինիստրները հավանություն տվեցին դրան, և պատվիրեցին ձեռնամուխ լինել դպրոցների ընդունմանը։ 1895 թ. նոյեմբերի 13-ին Շերեմետևը զեկուցեց նրանց, որ սխալ կերպով եկեղեցական համարվող դպրոցների թիվը հասցվել է 168-ի։ Դեկտեմբերի 8-ին կառավարչապետի օգնական Տատիշչևը Յանովսկուն հանձնեց այդ դպրոցների ցուցակը և կարգադրեց դրանք ընդունել իր ենթակայության տակ։

Նույն օրը Տատիշչևը համապատասխան գրությամբ դիմեց կաթողիկոսին։ Նա գրում էր, որ «եկեղեցական անվանվող հայկական դպրոցների մեծամասնությունը, ինչպես պարզվում է, պահվում են մասնավոր անձանց, հասարակական հանգանակությունների, բարեգործական ընկերությունների նպաստների, ուս-

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. II, էջ 147 հ. կ.։

ման վարձի և այլ աղբյուրների հաշվին»[1], որոնք չեն նախատեսված օրենքով: Այդ դպրոցների հանձնումը կթեթևացնի գործը և հնարավորություն կտա մնացած երեսունի չափ դպրոցներում ապահովել ցենզավոր ուսուցիչների առկայությունը:

Մկրտիչ կաթողիկոսը չհապաղեց դիմելու կառավարությանը և փաստարկելու դպրոցի նկատմամբ ունեցած եկեղեցու օրինական իրավունքները: Նա 1895 թ. դեկտեմբերի 23-ին և 1896 թ. հունվարի 27-ին նամակներով դիմեց ներքին գործերի մինիստր Ի. Լ. Գորեմիկինին: «Օրենքը բոլորովին էլ չի որոշում ծխական ուսումնարանի պահպանության գործում եկեղեցու մասնակցության պարտադիր չափը»[2],— գրում էր կաթողիկոսը: Նա զարմանք էր հայտնում, որ թեև իշխանությունը մինչ այդ էլ գիտեր դպրոցների պահպանության աղբյուրների մասին, բայց միայն հիմա էր դրա վրա ուշադրություն դարձրել: Բացի այդ, նրան տարակուսանք էր պատճառում, որ 168 դպրոցի ցուցակում կային այնպիսինները, որոնք լրիվ պահվում էին եկեղեցու միջոցներով (Վաղարշապատի ծխական, Հառիճի վանքի, Ախալցխայի Կարապետյան և մի շարք այլ դպրոցներ): Միայն այն, որ բոլոր դպրոցները գտնվում են եկեղեցուն պատկանող շենքերում, փաստարկում էր Մկրտիչը, անառարկելի ապացույց է, որ եկեղեցին մասնակցում է նրանց պահպանմանը և փոխանակ ողջունելու, որ հայ հասարակությունը իր կամավոր նվիրատվություններով օգնում է դպրոցի բարգավաճմանը, իշխանությունները այդ պատրվակ են դարձնում դրանք խլելու համար:

Մինչ էջմիածինն զբաղված էր գրագրությամբ, իշխանությունները հունվարից ձեռնամուխ եղան երկար սպասված կարգադրության իրագործմանը: Ոստիկանությունը հրահանգ ստացավ օժանդակել ուսումնական վարչության մարմիններին, կարգադրություն արվեց ցուցակում եղածներից բացի քննել և հայտնաբերել օրենքին չհամապատասխանող նոր դպրոցներ:

Սակայն Յանովսկու արտահայտությամբ՝ «դժբախտաբար ոչ մի դպրոց չհանձնվեց»: Կաթողիկոսը պատվիրել էր թեմերին մինչև իր հատուկ կարգադրությունը ոչինչ չնախաձեռնել և իրեն ճշգրիտ տվյալներ հաղորդել դպրոցների թվի ու պահպանության աղբյուրների մասին:

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 199, էջ 14:

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. III, էջ 33 հ. կ.:

Լինելով դպրոցներում և ստանալով նրանց հրաժարումը, իշխանությունները սկսեցին հապճեպ փակել դպրոցները։ Ուսուցիչներից ստորագրություն էին վերցնում, որ նրանք չեն զբաղվի մասնավոր տներում կամ գաղտնի դպրոցներում երեխաների ուսուցմամբ։ Հաճախ նրանց հրամայում էին հեռանալ տվյալ բնակավայրից։

Այդ գործողությունների ընթացքում լրացուցիչ կերպով «հայտնաբերվեց» 46 «անօրինական» դպրոց, որոնք ևս փակվեցին։

Դպրոցների փակումը ուղեկցվում էր ոստիկանական բռնի ուժով և խոր զայրույթ ու վիշտ պատճառում ժողովրդին։ Մ. Մելյանը, նկարագրելով «սիրտ կտրատող լաց ու կոծով» ուղեկցվող դպրոցների փակումը Թիֆլիսում, գրում էր. «Ավելի քան 1000 աղջիկ ու տղա ցրվեցին իրենց տները աղի-աղի արցունք թափելով և ավելի քան 50 ուսուցիչ-ուսուցչուհի մնացին գլխիկոր ու վշտաբեկ»[1]։ Կաթողիկոսին հղած դիմումի մեջ Բաքվի հայերը գրում էին. «Ջորս հարյուր անմեղ երեխաներ աղիողորմ ձայներ բարձրացրին. կապած սեղաններից և ուսումնարանի դռներից, գըրկում և համբուրում էին ամեն մի ուսումնարանական իր, պատռում էին դպեստները, փետտում էին մազերը... Ոչ ուսուցիչների հորդորները, ոչ հանդիսականների խրատները չէին կարողանում սփոփել մանուկներին և տուն ուղարկել։ Փողոցներում նույն աղետալի տեսարանն էր, կանայք լալիս էին, մարդիկ քար կտրած հեկեկում...»[2]։

Իսկ Յանովսկին իր զեկուցագրում լկտիաբար հայտարարում էր, որ ժողովուրդը գոհունակությամբ է ընդունում կառավարության որոշումը, որ դրանից դժգոհ են միայն հոգևորականությունն ու ազգային մտավորականության մի մասը։ Նահանգապետերը զեկուցում էին, որ դպրոցների փակման ժամանակ «լուրջ» միջադեպեր չեն եղել։

Կանգնելով կատարված փաստի առաջ, Անդրկովկասի հայ հասարակայնությունը զգաստացավ. նա նոր միայն մինչև վերջ գիտակցեց, թե ինչ անդնահատելի դանձ է կորցնում և ինչ նշանակություն ունի ազգային դպրոցը իր գոյատևման համար։ Արդեն 1894—95 թթ. նկատելիորեն սկսել էր աճել հայկական դպրոցների թիվը։ Միայն Ջանգեզուրի գյուղերում 1895 թ. երկրորդ կեսին 10-ից

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 74, էջ 50 հ. կ.։

2 Նույն տեղում, ֆ. 56, ց. 3, գ. 371, էջ 44։

ավելի հասարակական վճիռ էր կայացվել դպրոց հիմնելու մասին։ Եվ այժմ, երբ ցարիզմը որոշել էր լիկվիդացնել հայկական դպրոցները, հայերը սկսեցին միջոցներ որոնել՝ որևէ կերպ դրանք պահպանելու համար։ Կաթողիկոսը և թեմական տեսուչները բազմաթիվ խնդրագրեր էին ստանում տեղերից, որոնց տակ ստորագրողներն ուղղակի աղաչում էին թույլ չտալ դպրոցների կրճատը։

Խնձորեսկ գյուղի ծխականները 406 ստորագրությամբ 1896 թ. փետրվարին գրում էին Երևանի թեմական տեսչին. «Հազիվ մեր երեխաները սկսել էին ընտելանալ մայրենի և ռուսաց լեզուների գիտության, հազիվ մեր եկեղեցիներում ժամերգությունը քիչ շնորհք էր ստացել, ահա նորից ստիպված ենք խավարի մեջ ընկնել։ Մենք նման ենք այն երեխային, որի ձեռքը խավարի մեջ մի մոմ է տված՝ նրան դեպի լույսը առաջնորդելու, սակայն հանկարծ կես ճանապարհին ձեռքի լույսը հանգցնելով, մրնում է հուսահատած, լալով ու ողբալով խավարի մեջ։ Աղաչում ենք, մեր մեծերիս օրերը համարված են, խղճացեք մեր մատաղ սերնդին, մեք թողնի արցունքոտ աչքերով նորից խավարի մեջ խարխափել»[1]։ Չխար գյուղից գրում էին. «Այն ժամանակ (1885 թ.— Վ. Ե.) ուսումնարանից զրկվելը մեր վրա այնպես չազդեց, ինչպես այժմ, որովհետև այն ժամանակ մենք մայրենի լեզվի մասին գաղափար անգամ չունեինք... (Չխարը վիրախոս գյուղ էր.—Վ. Ե.)։ Այժմ մենք հասկացել ենք, թե ով ենք և ինչ է մեր պարտականությունը, հասկացել ենք, որ... մեր միակ ազատարարը և ազգային նեցուկը մեր ուսումնարանն է, առանց որի մեր ապագան շատ թշվառ ու հուսահատեցուցիչ է»[2]։

Տեղերից առաջարկներ արվեցին լրիվ եկեղեցու գումարներով կամ վանքերին կից նոր դպրոցներ բացելու մասին, որոնք կհամապատասխանեին պետության պահանջներին։ Մի շարք վայրերում պահպանված դպրոցները (որոնք չէին մտել փակվողների ցուցակի մեջ) սկսեցին խիստ մեծանալ ի հաշիվ փակվածների աշակերտության։ Որոշ միդասյա դպրոցներ շուտով վերածվեցին երկդասյայի։ Երևանում թեմական դպրոցի հոգաբարձությունը չորս հազար ռուբլի պարտք վերցրեց և ընդարձակելով իր շենքը, փակված դպրոցների աշակերտներին առավ իր ենթակայության

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 7, ց. 1, գ. 153, էջ 5։

2 Նույն տեղում, ֆ. 20, գ. 340, էջ 23։

տակ։ Ախալցխայում, Գանձակում և մի շարք այլ վայրերում որոշում են միացնել եկեղեցիների միջոցները, և դրանք տրամադրել դպրոցներին։

Մկրտիչ կաթողիկոսն էլ իր հերթին փորձեց ստեղծված վիճակից ելք գտնել։ Նա իշխան Արղության-Երկայնաբազուկի միջոցով Յանովսկուց իմացավ, որ եթե դպրոցի ուսուցիչները ցենզ ունենան և նրա պահպանման միջոցները համապատասխանեն կառավարության պահանջներին, ապա դպրոցները կարող են դարձյալ բացվել[1]։ 1896 թ. փետրվարի 10-ի կոնդակով[2] Խրիմյանը կարգադրեց շտապ կազմել փակված դպրոցների ցուցակները և գույքը հանձնել հոգաբարձությունների պահպանությանը, բաշխել ուսուցիչների ռոճիկները։ Ապա պատվիրեց կազմել հայկական բոլոր դպրոցների և նրանց գույության միջոցների մասին մանրամասն տեղեկագրեր։ Ամռանը տեղերում սկսեցին պատրաստություններ տեսնել կառավարության պահանջի համաձայն դպրոցներ բացելու համար։

Միաժամանակ կաթողիկոսը դիմեց ներքին գործերի մինիստրին՝ պաշտոնապես պարզելու համար, թե ծխականների ինչպիսի օգնությունը դպրոցին կարող է օրինական համարվել, որպեսզի ինքը կարողանա նոր պայմաններին համապատասխան կարգադրություն անել։ Օգտվելով կայսեր թագադրության համար Արիստակես եպս. Սեդրակյանի Մոսկվա մեկնելու առիթից, Խրիմյանը նրան հանձնարարեց լինել Պետերբուրգում, անձամբ պարզել այդ հարցը, կայսրին հանձնել իր նամակը, որտեղ խնդրում էր թագադրության ուրախ առիթով ընդհատաջել իրեն և թույլ չտալ դպրոցների փակումը։

Սեդրակյանի առաքելությունը ևս ոչ մի արդյունք չունեցավ։ Օտար դավանանքների հոգևոր գործերի դեպարտամենտի դիրեկտոր Մոսոլովը նրան տվեց շատ հատկանշական պատասխան. «Խնդիր փակման եկեղեցական դպրոցաց հայոց ծագեալ է ըստ էության և ոչ ըստ տեսակաց նպաստից, որք երկրորդական ունի նշանակություն, և ինձ թվի, թե դպրոցքդ այդոքիկ հազիվ թե առաջիկա սեպտեմբերի բացցին։ Հայք հուվանավորեալ ի Ռուսիա և շնորհիվ նորին գտեալ զբարօրություն, սկսան ձգտիլ անկախ պետության յուրեանց և առ այդ նպատակ միաբանեցան ընդ թշնա-

---

1 Տե՛ս Մատեն., Գ. Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 326։

2 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 74, էջ 86։

մեաց մերո»[1]: Իսկ Դելյանովը հասկացրեց, որ դպրոցների փակումը պատիժ է հայերին՝ հեղափոխական դիրք բռնելու համար: Ներքին գործերի մինիստր Գորեմիկինը, ավելի առաջ գնալով, հայտարարեց. «Այդ ամենը երկրորդական խնդիր են. գլխավորն այն է, վի պետությունն այլևս անկարելի համարի թողուլ զդպրոցս ցայնոսիկ ի ձեռին հոգևոր իշխանութեան հայոց: Կարծեմ ազատ ի կարգադրութենն մնացել են քանի մի դպրոցք, սակայն և այնքիկ և ամենայնն ի միասին հանձնիլ պարտին նախարարութեան լուսավորութեան»[2]:

Ցարին դրած կաթողիկոսի դիմումի առթիվ Գորեմիկինը 1896 թ. հուլիսի 4-ին զեկուցագիր է ներկայացնում Նիկոլայ II-ին, որտեղ ամեն կերպ սևացնելով հայ դպրոցը, հայտնում է, որ կաթողիկոսի դեմումը արժանի չէ հարգանքի, մանավանդ, որ հարց է առաջ քաշված հայկական բոլոր եկեղեցական-ծխական դպրոցները պետությանը ենթարկելու մասին:

Հուլիսի 14-ին Գորեմիկինը հայտնեց Խրիմյանին, որ կայսրը բարեհաճել է նրա միջնորդությունը թողնել անհետևանք:

Իրենց կողմից կովկասյան իշխանությունները, տեսնելով, որ հայերը եռանդուն փորձեր են անում վերականգնելու փակված դպրոցները, դիմում են վճռական միջոցների: Թիվում է մի նոր, անտրամաբանական փաստարկ, որ իբր 1891 թ. որոշումների համաձայն, այն վայրերում, որտեղ փակվել են դպրոցները, նորերը բացելու դեպքում դրանք պետք է ենթարկվեն ուսումնական վարչությանը: Կառավարչապետի 1896 թ. դեկտեմբերի 13-ի գաղտնի շրջաբերականում ասված էր. «Եղած տեղեկությունների համաձայն, եկեղեցական-ծխական դպրոցների փակման մասին հիշյալ կարգադրությունից հետո, փակվածների փոխարեն հայ հոգևորականության կողմից բացվում են նոր եկեղեցական դպրոցներ, որոնք ձևական տեսակետից բավարարում են այդ դպրոցների վերաբերյալ եղած կանոնների պահանջները»[3]: Առաջարկվում էր նոր բացվող դպրոցները ենթարկել ուսումնական վարչությանը:

Կաթողիկոսը Պետերբուրգում գտնվող Հուսիկ վարդապետի միջոցով բողոքեց Մոսկովին, որ իշխանությունները թույլ չեն տալիս բացելու 1884 թ. կանոններին համապատասխանող դպրոցներ, միաժամանակ խնդրեց երկկողմանի խորհրդակցություն

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 199, էջ 38 հ. կ.:

2 Նույն տեղում, էջ 39:

3 ՀՊԿՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 68, էջ 29:

հրավիրել և քննել փակված դպրոցների պահպանության միջոցների հարցը, քանի որ դրանց մեծ մասի նկատմամբ անարդարացի որոշում է եղել։ Այս բողոքը ևս անհետևանք մնաց։

Օրակարգում դրված էր հայկական դպրոցները լրիվ վերացնելու հարցը։ Դեռևս 1896 թ. սկզբին կառավարչապետը, կարգադրելով խլել գույության միջոցներով կառավարության օրենքին չհամապատասխանող դպրոցները, հարց էր դրել ընդհանրապես բոլոր հայկական տարրական դպրոցները լուսավորության մինիստրությանը ենթարկելու մասին։

Ցարը, ծանոթանալով Շերեմետևի զեկուցագրին, մակագրել էր. «Չանել... ոչ մի ղիջում Պատրիարքին դպրոցական հարցում»։ Մինիստրների կոմիտեն 1896 թ. հունվարի 16-ին, լսելով հայկական հոգևորական գործերին վերաբերող հարցերը, որոշել էր նրանց լուծումը հանձնարարել ներքին գործերի և լուսավորության մինիստրների հայեցողությանը[1]։ Սկզբունքորեն համաձայնվելով արված առաջարկների հետ, Գորեմիկինը գտել էր, որ «հայ բնակչության շրջանում մտքերի հուզված վիճակի պայմաններում, այժմ դեռ լրիվ ժամանակին չի լինի այդպիսի առաջարկության իրագործումը, մանավանդ, որ այդ ուսումնարանները սակավաթիվ են և արդեն օրենքի համաձայն գտնվում են ուսումնական վարչության հսկողության տակ»[2]։

Սակայն դեպքերի ընթացքը ստիպեց իշխանություններին շուտով անտես առնել «մտքերի հուզված վիճակը» և արագացնել կառավարչապետի առաջարկության իրագործումը։ 1897 թ. հունվարի 8-ին կառավարչապետի տեղակալ Տատիշչևը Պետերբուրգ ուղարկած գաղտնի գրության մեջ նշում էր, որ 230 հայկական դպրոց փակելուց հետո հայ հոգևորականությունը սկսել է նորերը բացել և անտեսել իշխանությունների պահանջները։ Նա գրտնում էր, որ հասել է դպրոցները էջմիածնից իսպառ խլելու ժամանակը, մանավանդ, որ «հայ հոգևորականության ճարպկության պայմաններում» այդ դպրոցների թիվը կարող է նկատելիորեն ավելանալ։ Տատիշչևը նշում էր, որ հայկական քաղաքական շարժումը խիստ սրվել է և դպրոցներն այլևս չի կարելի թողնել քաղաքական ագիտացիայով տարված հոգևորականության իշխանության տակ, «որովհետև ներկայումս... այդ, ինչպես և ամեն մի այլ ռեպրեսիվ միջոցառում հայ ագիտատորների նկատմամբ

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 2։

2 Նույն տեղում, ց. 140, գ. 53, մ. III, էջ 16 հ. կ.։

լրիվ կերպով կհամապատասխանի հայկական հարցի արդի վիճակի կարևորությանը՝ Կովկասյան երկրամասի ապագայի համար՝ նրա պետական ըմբռնմամբ»[1]։

Սրիստակես եպիսկոպոսի հաղորդագրություններից երևում էր, որ Պետերբուրգում ավելի շուտ էին եկել նման եզրակացության։ Դեռ 1896 թ. սեպտեմբերին դրությունը պարզելու և գործողության կոնկրետ միջոցներ մշակելու համար Անդրկովկաս էին գործուղվել օտար դավանանքների հոգևոր գործերի դեպարտամենտի դիրեկտոր Մոսոլովը և նրա տեղակալ, «Սանկտ-Պետերբուրգսկիե վեդոմոստի» թերթի խմբագիր, իշխան Ուխտոմսկին։ Նրանք համեմատաբար ավելի լիբերալ հայացքների տեր էին, մանավանդ Ուխտոմսկին, որը հայերի նկատմամբ բավական բարեհամբաբար էր տրամադրված։ Պետական այս պաշտոնյաները չարդարացրին իրենց վրա դրված հույսերը, և նրանց ներկայացրած զեկուցագիրը, որտեղ փորձ էր արվում մեղմացնել վիճակը և հերքել կովկասյան իշխանությունների այն պնդումը, թե իբր էջմիածինը հեղափոխական շարժման կենտրոն է, ուշադրության չառնվեց։

Կայսեր համաձայնությամբ պետական խորհուրդը 1897 թ. մայիսի 3-ին քննության առավ Տատիշչևի ներկայացրած առաջարկը։ Խորհրդի նիստին մասնակցում էին օրենքների, պետական տնտեսության, քաղաքացիական և հոգևոր գործերի դեպարտամենտների, ինչպես նաև ներքին ու արտաքին գործերի և լուսավորության մինիստրությունների ներկայացուցիչներ։ Նիստում նշվեց, որ վերջին տասնամյակների ընթացքում էջմիածինը չի կատարում պետության օրենքները, անհետևանք է թողնում ուսումնական վարչության պահանջները դպրոցներում ռուսաց լեզու ավանդելու, Հայաստանի պատմություն ու աշխարհագրություն արգելելու, ցենզավոր ուսուցիչներ ունենալու մասին։ Պետական խորհուրդը եկավ այն եզրակացության, որ այլևս չի կարելի հանդուրժել նման վիճակը և հանձեց հետևյալ որոշումը.

«I. Հայ-լուսավորչական եկեղեցիներին ու վանքերին կից ուսումնարանները ենթարկել ժողովրդական լուսավորության մինիստրության տնօրինությանը՝ այդ Մինիստրության տեսչության տակ եղած մյուս տարրական ուսումնարանների հետ ընդհանուր

---

1 Նույն տեղում, ց. 150, գ. 272, էջ 86։

հիմունքներով, այն հաշվով, որ ղեկավարման նոր կարգի պայմաններում պահպանվի հայ-լուսավորչական հոգևորականության իրավունքը՝ նշված հաստատություններում հսկելու պատանեկության կրոնական կրթության վրա։

II. Հայ-լուսավորչական էջմիածնի հոգևոր ճեմարանի և թեմական հոգևոր սեմինարիաների գործող կանոնները թողնել ուժի մեջ։

III. Հայ-լուսավորչական թեմական կոնսիստորիաներն ազատել եկեղեցիներին կից ուսումնարաններում եղած ուսուցիչների և աշակերտների թվի մասին ցուցակներ վարելու պարտականությունից»[1]։

Այս որոշումը 1897 թ. հունիսի 2-ին հաստատվեց ցարի կողմից։

Ստանալով կայսերահաստատ որոշումը, էջմիածինը լրիվ թևաթափ եղավ։ Իր կողմից տալով նոր օրենքի մեկնաբանությունները, Յանովսկին վրաստանի թեմակալ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի միջոցով հայտնեց կաթողիկոսին, որ ուսումնական վարչության տնօրինության տակ անցնող դպրոցների պահպանության նյութական միջոցները պետք է մնան նախկինը, որ հոգաբարձությունների փոխարեն ծխականները կարող են ընտրել պատվավոր վերակացու (блюститель), որ նրանց ծրագրերը լրիվ համապատասխանում են պետական դպրոցի ծրագրին։

Սակայն էականն այն էր, որ այդ դպրոցները լրիվ կորցնում էին իրենց ազգային դեմքը. նրանցում կարող էին սովորել և դաստիարակվել բոլոր ազգերի ներկայացուցիչները, որի համար էլ հայերեն լեզվով ավանդվելու էին միայն կրոնն ու հայոց լեզուն, իսկ «Մնացած առարկաները դասավանդվում են ռուսաց լեզվով»[2]։ Եթե հայ հոգևորականությունը նոր դպրոցներ կբացի, հայտնում էր Յանովսկին, ապա դրանք ևս մասնավոր հիմունքներով կանցնեն ուսումնական վարչության հսկողության տակ։

Նման պայմաններում էջմիածինը չէր կարող եկեղեցական-ծխական մնացած դպրոցները կամովին հանձնել պետությանը։ Էջմիածնից տեղերին ոչ մի ցուցում չտրվեց, և երբ պետության ներկայացուցիչները փորձեցին դպրոցներն ընդունել, ապա ամենուրեք ստացան խուսափողական պատասխան՝ քանի որ հոգևոր իշխանությունից, որին պատկանում են դպրոցները, ոչ մի կար-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. III, էջ 133։
2 ՀՊԿՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 99, էջ 128։

գաղություն չի եղել, իրենք կամովին չեն կարող հանձնել դրանք։ Եվ բաց մնացած 30-ի չափ եկեղեցական-ծխական դպրոցները ևս իշխանությունների կարգադրությամբ փակվեցին։

Այսպիսով, Անդրկովկասում չմնաց այլևս ոչ մի հայկական տարրական դպրոց։

Մինչ Կովկասյան իշխանությունը պատրաստվում էր հայկական տանջամահ արված դպրոցների ավերակների վրա տոնել իր անփառունակ հաղթանակը, պարզվեց տհաճ մի իրողություն։

Ցարիզմի նպատակը պարզ էր. նա ցանկանում էր հայերին զրկել ազգային ինքնագիտակցության դարբնման ամենառեալ միջոցից՝ դպրոցից, և փոխանցման կամ փակելուց հետո կրկին վերաբացելու միջոցով այդ դպրոցը վերածել նրանց ձուլման գործիքի։ Ընդ որում նա չէր ցանկանում այդ նպատակի համար ձեռքը գրպանը տանել, այլ ուզում էր լրիվ տեր դառնալ հայ հասարակության ու եկեղեցու նյութական զոհողությունների գնով ըստեղծված դպրոցին. «ամենաողորմած» ցարը միջոցներ չուներ «լուսավորություն» կոչված շռայլության համար։ Հայ դպրոցի կործանումն օր առաջ տեսնելու մոլուցքով բռնված ցարական բյուրոկրատիան մոռացության էր տվել մի փոքրիկ մանրամասնություն՝ դպրոցների նյութական հնարավորության իրավական կողմը։

Երբ հայ դպրոցները փակվեցին, կաթողիկոսը կարգադրեց դրանց բոլոր ունեցվածքը դնել փակի տակ, իսկ դպրոցական շենքերի պահպանումը վերապահել տեղական եկեղեցիներին, քանի որ այդ ամենի իրավատերը նրանք էին։

Ուսումնական վարչությունը դատարկ հրահանգից բացի, ոչինչ չստացավ։ Յանովսկին գտավ, որ անհրաժեշտ է հայկական բոլոր փակված դպրոցների շենքերը, գույքը և պահպանության միջոցները ենթարկել իր տնօրինությանը։ Կովկասի նոր կառավարչապետ Գոլիցինն անհապաղ կարգադրեց տեղեկություններ հավաքել այդ դպրոցների տնտեսական վիճակի մասին և 1897 թ. նոյեմբերի 28-ին գաղտնի գրությամբ[1] դիմեց ներքին գործերի մինիստրին, որպեսզի նա, ի լրումն հունիսի 2-ի օրենքի, գլուխ բերի հայ դպրոցների գույքի գրավման հարցը։

1898 թ. մարտի 17-ին Մինիստրների կոմիտեն քննեց Գոլիցինի 1897 թ. ամենահպատակ զեկուցագրի մեջ կրկին առաջ քաշված դպրոցական գույքի հարցը, որն արժանացել էր կայսեր հավանությանը։ Իր զեկուցագրում Գոլիցինը դժգոհությամբ արձա-

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մաս III, էջ 166—168։

նագրել էր, որ «Նախկին հայկական դպրոցների տեղը ռուսական դպրոցների բացումը անհնար եղավ, և այդ ծայր աստիճան ցավալի հանգամանքը կարող է միայն ծառայել երկրամասում հայկական գործի առավելագույն հաջողությանը»[1]: Կոմիտեն հավանություն տվեց Գոլիցինի առաջարկին և գտավ, որ դպրոցական գույքը պետք է հանձնվի ուսումնական վարչությանը, որպես իրավական անձի:

1898 թ. մարտի 26-ին կայսրը հաստատեց Մինիստրների կոմիտեի որոշումը, որի մեջ ասված էր.

«I. Հանձնարարել Կովկասի տեղական իշխանությանը կատարելու բոլոր անհրաժեշտ կարգադրությունները Պետական խորհրդի 1897 թ. հունիսի 2-ին բարձրագույն հաստատված կարծիքի հիման վրա իրեն հանձնված հայ-լուսավորչական եկեղեցական ու վանքային ուսումնարաններին պատկանող գույքը իր տնօրինության տակ ընդունելու համար, և.

II. Մինիստրների կոմիտեի ներկա որոշման առաջին կետում նշված գույքը մասնավոր անձանց, հայ-լուսավորչական հոգևորականության ներկայացուցիչներին կամ հիմնարկություններին պատկանելու մասին քաղաքացիական վեճեր առաջանալու դեպքում, իրավունք տալ նրանց այդ գործերն ուղղել ընդհանուր սահմանված դատական կարգով լուծելու»[2]:

Կարծես այլևս բաց տեղ չէր մնում, և կովկասյան բյուրոկրատիան վայրենի հրճվանքով ձեռնամուխ եղավ հայկական դպրոցական գույքի գրավմանը: Յարիզմն ամենայն թեթևությամբ ձեռք պարզեց նույնիսկ այն բանի դեմ, որ սրբագործված էր միապետական օրենքներով և կոչվում էր մասնավոր սեփականություն: Տվյալ դեպքում այդպիսի սեփականություն էր հայկական դպրոցների գույքը և ունեցվածքը, որի իրավատերը պաշտոնապես եկեղեցին էր:

Հայերի կրթական գործի դեմ սկսված լայն հալածանքը միայն տարրական դպրոցներով չսահմանափակվեց: Յարիզմն ավելի մեծ ախորժակով կուլ կտար միջնակարգ-թեմական դպրոցները՝ աղգային «սեպարատիզմի» իսկական օջախները, միայն թե նրանք ավելի ամուր էին պատնեշված կրոնական վարագույրով, պաշտո-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 272, էջ 101 հ. կ.:

2 Նույն տեղում, էջ 103—103 հ. կ.:

նապես ստեղծված էին հոգևորականներ պատրաստելու համար, և այդ պատճառով էլ հարմար չէր մի հարվածով նրանց շարքից հանել։ Պետք էր հարցը նախապատրաստել։

Ամենից հարմար առիթը ճեմարանի և թեմական դպրոցների համար նոր կանոնադրություն մշակելու հարցն էր։ Հայտնի է, որ ճեմարանի կանոնադրությունը 1874 թ. հաստատվել էր ինը տարվա համար, և, երբ 1884 թ. լրացավ նրա ժամկետը, կաթողիկոսական աթոռի թափուր լինելը ժամանակավորապես ձգձգեց այդ հարցի լուծումը։ Թեմական դպրոցները ևս գործում էին կառավարության կողմից հաստատում չգտած կանոններով. բացառություն էր կազմում Նոր Նախիջևանի թեմականը, որի կանոնադրությունը հաստատված էր 1880 թ.։ 1864 թ. Ներսիսյան դպրոցի կանոնադրությունը ևս բուլլատարություն էր ստացել Կովկասի փոխարքայի կողմից, սակայն այդ հանգամանքը դիտավորյալ կերպով անտեսվում էր։

1887 թ. Մակար կաթողիկոսը կառավարության հաստատմանն էր ներկայացրել Գևորգյան ճեմարանի նոր կանոնադրության նախագիծը։ Հիմնականում պահպանելով 1874 թ. կանոնադրության սկզբունքները, նախագիծը շեշտում էր կաթողիկոսի իրավունքը տեսչի հաստատման գործում, աշխատում էր ճեմարանին վերագրել պետական հաստատությունների արտոնություններ՝ սեփական կնիք, փոստային ծառայություններից ձրի օգտվելու և արտասահմանից ազատորեն գրականություն ստանալու իրավունք, ավարտողները հավասարեցվում էին պետական համապատասխան հաստատություններին՝ ուսուցչության և զինապարտության հարցերում։

Յանովսկին կատաղությամբ ընդունեց այդ նախագիծը։ Նրան ամենից ավելի համբերությունից հանում էր այն, որ նախագծում ոչինչ չէր ասված կառավարական հսկողության մասին և փաստորեն ճեմարանը դուրս էր բերած որպես լրիվ ինքնուրույն մի կազմակերպություն։ Նա գտնում էր, որ ճեմարանավարտները ուսուցչության իրավունք չպետք է ունենան, քանի որ ճեմարանը, դուրս լինելով պետական հսկողությունից, հայտնի չէ, թե ինչ ոգով է դաստիարակում իր սաներին, մինչդեռ Յանովսկին սնապարծությամբ նշում էր, որ «Ռուսական կառավարությունն ունի իր բավականաչափ ուսումնական հաստատությունները՝ դպրոցական ուսուցիչներ պատրաստելու համար»[1]։ Նա պահանջում էր նաև ճե-

1 ՀՊԿՊԱ, ֆ. 20, ց. 1, գ. 103, էջ 17։

մարանի ծրագրից հանել հայոց պատմությունն ու աշխարհագրությունը, տեսուչ նշանակել կառավարության համաձայնությամբ, սահմանել պետական հսկողություն:

Երկու կողմերի համաձայնության պատճառով կանոնադրության հարցը անլուծելի մնաց: Իշխանությունները հաջորդ կաթողիկոսից՝ Խրիմյանից պահանջեցին լուծել հարցը: 1896 թ. վերջերին կաթողիկոսը քննարկման ներկայացրեց Էմմարանի և թեմական դպրոցների նոր կանոնադրության նախագծեր: Նա ևս հիմնականում պաշտպանում էր նախկին նախագծի տեսակետները, հատկապես ինքնուրույնության պահպանման իմաստով: Պաշտպանելով հայոց պատմությունն ավանդելու անհրաժեշտությունը, Մկրտիչը հետաքրքիր փաստարկ էր բերում. «Հին Հայաստանի պատմության ուսումնասիրումը ես համարում եմ սովորողների մեջ ազգաստ աշխարհայեցողություն և Ռուսաստանի նկատմամբ պետակցված սեր ձևավորելու միջոցներից լավագույնը, քանի որ Ռուսաստանն է վերջ դրել հանուն խաչի Հայերի այն դարավոր տանջանքներին, որոնց մասին զրույցներն էլ հենց կազմում են Հայաստանի ամբողջ պատմությունը»[1]:

Թեմական դպրոցների կանոնադրությունը կազմված էր Նոր Նախիջևանի դպրոցի կանոնադրության օրինակով, և քանի որ այն արդեն հավանություն էր գտել կառավարության կողմից, Խրիմյանը ավելորդ էր համարում նորը մշակել:

Նախագծերը դարձյալ հանդիպեցին կառավարական շրջանների ուժեղ դիմադրությանը: Բայց նրանք որոշեցին այլ կերպ մոտենալ հարցին: Գոլիցինը գտնում էր, որ այդ հաստատությունները պետք է վերակառուցման ենթարկվեին, որովհետև, նախ, նրանք գտնվում են աշխարհիկ մարդկանց հսկողության և աղդեցության տակ՝ հանձին հոգաբարձությունների, որոնք «մեծ մասամբ կազմված լինելով աշխարհականներից, որ ընտրվում են առանց կառավարության որևէ մասնակցության, կառավարական տեսակետից լրիվ անցանկալի են»[2]: Բացի այդ, հայկական տարրական դպրոցները փակվել են և չկա այլևս ուսուցիչների մեծ կարիք, այնինչ թեմական դպրոցները դնալով ավելացնում են սովորողների թիվը, որի կարիքը բնավ չի զգացվում: այն դեպքում, երբ հայ եկեղեցին ունի 1330 սպասավոր, թեմական չորս դպրոց-

1 Նույն տեղում, էջ 27 հ. կ.—28:
2 ՍՍՀՄ ՊԿՊԱ., ֆ. 821, ց. 139, գ. 11, էջ 10:

ներում սովորում է 1556 աշակերտ։ Ուրեմն, եղրակացնում էին պետական բարձրաստիճան պաշտոնյանները, այդ դպրոցները չեն համապատասխանում իրենց կոչմանը և գերազանցապես հետու են հոգևոր կրթության օջախներ լինելուց։ Առաջարկվում էր, ընդհանրապես, վերանայել հայ եկեղեցու օրենսդրությունը (1836) և այն համապատասխանեցնել 1891 թ. խորհրդակցության ոգուն։ Նախատեսվում էր ճեմարանի փոխարեն բացել բարձրագույն հոգևոր ուսումնարան, իսկ աշակերտների սահմանափակ թվով թեմական դպրոցներ ունենալ միայն Թիֆլիսում, Երևանում և Նոր Նախիջևանում։

Ի վերջո, 1899 թ. ներքին գործերի մինիստրը որոշեց, որ «այդ գործը քննության կենթարկվի հայ-լուսավորչական եկեղեցիների ու վանքերի գույքի առաջիկա բռնագրավումից (секуляризация) հետո»[1]։ (1903 թ. այդ բռնագրավումը տեղի ունեցավ, սակայն վրա հասած հեղափոխությունը խանգարեց ցարիզմին՝ իրագործելու ճեմարանի և թեմական դպրոցների նկատմամբ իր մտադրությունները և դրանք մինչև ցարիզմի տապալումը գրեթե նույն ձևով շարունակեցին իրենց կյանքը)։

Անհավասար պայքարին զուգընթաց հայ հասարակությունն աշխատում էր ավելացնել թեմական դպրոցների թիվը. հայկական տարրական դպրոցների կորուստն ստիպում էր նրան ունենալ մեկ-երկուսով ավելի թեմականներ և բավարարել ազգային կրթություն ստանալու պահանջի գոնե մինիմումը։

Դեռևս 1890-ական թվականների սկզբներին հայ մամուլում սկսեցին խոսել Ասպրախանում և Բաքվում թեմական նոր դպրոցներ ստեղծելու անհրաժեշտության մասին։ Այդ առթիվ հատկապես առանձով էր գրում «Մշակը»։ Մոզդոկ և Շամախի քաղաքների հայերը պահանջում էին դպրոցներն հիմնել իրենց մոտ։ 1890 թ. Բաքվի «Մարդասիրականը» հատուկ որոշում կայացրեց իր կառուցած դպրոցական հսկա շենքը թեմականին հատկացնելու մասին և նույնիսկ կազմեց ապագա դպրոցի կանոնադրությունը։ Տարրական դպրոցների փակումը էլ ավելի ուժեղացրեց այդ ձգտումը։

1895 թ. Ասպրախանի հայերը հատուկ ժողովում որոշեցին իրենց համար թեմական դպրոց հիմնել։ Նոր թեմակալ Արիստակես եպիսկոպոսը առանձով գործի անցավ, և 1896 թ. այդ նպա-

---

1 Նույն տեղում, էջ 11։

տակի համար կառուցվեց հատուկ շենք, որ ամենամեծն էր քաղաքում: Սակայն իշխանություններն անմիջապես արգելեցին դպրոցի բացումը:

Ավելի մեծ աղմուկ եղավ Բաքվի դպրոցի շուրջը:

1896 թ. Շամախիի հայերը 400-ից ավելի ստորագրություններով մի նամակով դիմեցին կաթողիկոսին և խնդրեցին վերականգնել իրենց մոտ եղած երբեմնի թեմական դպրոցը: «Ամենիս սրտագին բաղձանքն է,— գրում էին նրանք,— մեր ճգնաժամի օրերում գեթ բացված տեսնել Շամախում մեր միակ մխիթար յուսա ու ապավեն թեմական դպրանոցը հենց տարվույս սեպտեմբերից սկսած»[1]:

Սակայն Խրիմյանը 1896 թ. հոկտեմբերի 27-ի կոնդակով[2] բաբվեցիներին էր պատվիրում հոգ տանել թեմական դպրոցի բատեղծման համար: Այդ գործը ղեկավարելու նպատակով Բաքու ուղարկվեց Խորեն եպիսկոպոս Ստեփաննեն: Խրիմյանը մտադիր էր թեմի կենտրոնը իր նշանակությունը կորցրած Շամախիից տեղափոխել Բաքու: 1897 թ. հունվարի 1-ին կաթողիկոսին գրած նամակում բաբվեցիները հայտնում էին, որ Խ. Ստեփաննեն եռանդուն քարոզների շնորհիվ և քաղաքի հայ հասարակության կողմից ընտրված 8 ներկայացուցիչների օժանդակությամբ կարողացել է մեկ ամսում հավաքել 275 հազար ռուբլու հանգանակության ստորագրություններ[3]: Ստեփաննեն կարգավորեց նաև «Մարդասիրականի» հոյակապ շենքը: Բաքվում խոսում էին, որ շուտով ժամանելու է կաթողիկոսը՝ դպրոցը բացելու համար:

Կովկասյան բյուրոկրատիան տագնապ բարձրացրեց: Անմիջապես Պետերբուրգ ուղարկվեց համապատասխան զեկուցագիր, իսկ կաթողիկոսին զգուշացրին, որ դպրոցի բացումն առայժմ նպատակահարմար չէ: Զեկուցագրի մեջ Տատիշչևը գրում էր, թե 1836 թ. «Պոլոժենյեի» մեջ նշված է, որ հայկական վեց թեմերում «հաստատված են» հոգևոր սեմինարիաներ և ոչ թե պետք է նոր ստեղծվեն, ուրեմն, տվյալ դեպքում հարցը պետք է քննության առնվի կառավարական ոլորտներում: Տատիշչևը խիստ անցանկալի էր համարում թեմականի հիմնումը Բաքվի պես խոշոր կենտրոնում, որտեղ նա կարող էր ձեռք բերել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 350, էջ 65—66:

2 Տե՛ս «Մշակ», 1896, № 128:

3 Տե՛ս ՊԻԱ, Լեոյի ֆոնդ, ց. 1, գ. 127, էջ 1 հ. կ.:

նշանակությունը և մեծ վնասներ հասցնել ռուսական ազդեցության տարածմանը[1]։

Այս հարցը չվրիպեց նաև ռուսական ռեակցիոն մամուլի ուշադրությունից։ «Նովոյե վրեմյա» թերթի թղթակիցը մեծագույն դժգոհությամբ նկարագրում էր թեմական դպրոցի «հոյակապ» շենքը, որ մեծ «շքեղություն» էր լինելու ապագա հոգևորականների համար։ Նրան մի հայ մտավորական հայտնում է, որ դպրոցից շատերը կգնան համալսարան։ «Իմ այն դիտողությանը,— գրում էր թղթակիցը,— որ ռուսական համալսարաններում նրանց չեն ընդունի, հայ մտավորականը պատասխանեց. «Իսկ մի՞թե արտասահմանում համալսարաններ չկան»[2]։ Փոխանակ դժգոհելու, որ Ռուսաստանի համալսարանների դռները փակ են հայկական դպրոցների սաների առաջ, սարկահոգի թղթակիցը գրում էր, որ այդ դեպքում թեմական դպրոցի բացման համար ուրախանալու ոչ մի առիթ չկա։

1896 թ. դեկտեմբերի 19-ին ներքին գործերի մինիստր Գորեմիկինը առանց պատճառները հայտնելու, կաթողիկոսին գրեց, որ ներկայումս ծայր աստիճան աննպատակահարմար է թեմական դպրոցի բացումը և նրա մեկնումը Բաքու։ Միաժամանակ նա պահանջում էր Ստեփաննին հետ կանչել այնտեղից և ուղարկել Ղրիմի վանքերից մեկը[3]։ Խրիմյանին մնում էր կատարել մինիստրի պահանջը։

Հետագա տարիներին էլ հայերը փորձեցին թեմական դպրոցներ բացել, բայց ամեն անգամ ցարական իշխանությունները խափանեցին նրանց մտադրությունը։

* * *

1914 թ. Վ. Ի. Լենինը գրում էր. «Սև հարյուրյակայիններին «փաստարկները», հարկավ, կարճ են— բոլոր այլազգիներին անհրաժեշտ է հուպ տված պահել և թույլ չտալ նրանց «սանձարձակվել»։ Ռուսաստանը պետք է անբաժանելի լինի, և բոլոր ժողովուրդները պետք է ենթարկվեն վելիկոռուսական սկզբունքին, որովհետև իբր թե վելիկոռուսներն են եղել ռուս երկրի կառուցողներն ու համախմբողները։ Այս պատճառով կառավարող դասակարգի լեզուն

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 52, էջ 8—16։

2 «Новое время», 1897, № 7494.

3 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 199։

պիտի լինի պարտադիր լեզու։ Պարոնայք Պուրիշկևիչները պատրաստ են մինչև անգամ կատարելապես արգելելու «շնային բարբառները», որոնցով խոսում է Ռուսաստանի մոտ 60% կազմող ոչ-վելիկոռուսական բնակչությունը»[1]։ 1890-ական թվականների իրավիճակը ոչ մի բանով չէր տարբերվում Լենինի այս տողերը գրած ժամանակի վիճակից։

Ցարական կառավարությունը կրթության վրա նայում էր լոկ քաղաքական տեսանկյունից և բոլորովին չէր մտահոգվում լուսավորության իսկական նպատակներով։

Յանովսկին արդեն 1897 թ. իր հաշվետվության մեջ շտապել էր պարծենալ, որ «բացարձակապես տեղական լեզուներով դասավանդում ունեցող դպրոցներ (որպիսիք դեռևս 1879 թ. կազմում էին տարրական ուսումնարանների ընդհանուր թվի 1/6 մասը) ներկայումս ուսումնական շրջանում բոլորովին չկան»[2]։ Յանովսկին դա համարում էր պետական լեզվի «փառավոր հաղթանակը»։

Ռուսաստանի «այլազգիների» նկատմամբ ցարիզմի վարած դպրոցական քաղաքականության հրաշալի բնորոշումը դեռևս 1905 թ. տվել է ռուսական մշակույթի լավագույն գործիչներից մեկը, ժողովուրդների իսկական բարեկամության մարտիկ Յուրի Վեսելովսկին. «Բոնի ռուսացումը երևան էր գալիս կառավարության համառ ջանքերի մեջ, որն ուղում էր ոչ միայն դպրոցում սովորող լիհերին, հայերին, վրացիներին, գերմանացիներին կամ լատիշներին ռուս դարձնել, այլ, ամենից առաջ, նրանց զինել այն բանի դեմ, ինչով որ ապրել են նրանց նախնիները, տարանջատել նրանց հայրենի տարերքից, շատ դեպքերում՝ խիստ սահման կանգնեցնել հայրերի ու որդիների միջև, ստիպել նրանց և՛ բառացի և՛ փոխաբերական իմաստով խոսելու տարբեր լեզուներով...»[3]։

Վ. Ի. Լենինը ցարական կառավարության կրթական քաղաքականությունն անվանում էր «ոստիկանական ավերումներ այն բանի, ինչ որ ժողովուրդն անում է իր լուսավորման համար»[4]։ Նույնպիսի «ոստիկանական ավերում» էր հայ դպրոցի բռնի վերացումը, դպրոց, որն ստեղծվել էր ժողովրդի ու նրա լավագույն զավակների տասնամյակների աքնաջան ու անձնազոհ ճիգերի գնով։

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 20, էջ 71—72։

2 «Отчет попечителя Кавк-го учебного округа о состоянии учебных заведений за 1897 год», Тифлис, 1898, стр. 15.

3 «Вестник воспитания», 1905, № 9, էջ 125։

4 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 19, էջ 158։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԸ ԵՎ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԴԵՄ: ՓՐԿԱՐԱՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գոլիցինյան ռեժիմ: «Բարեգործականների» սանմանափակումը: Առաջադեմ Ռուսաստանի բողոքի ձայնը: Պայքար դպրոցների համար: Դատական գործեր: Նկեղեցական գույքի գրավման փորձերը: 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Համաժողովրդական դիմադրության սկիզբը: Գույքի բռնագրավումը և պայքարի սրվելը: Աւետաւհայության վերաբերմունքը: Հասարակական հոսանքների դիրքը: Սոցիալ-դեմոկրատիան և հայերի հակացարական շարժումը. լենինյան «Իսկրան»: Նկեղեցական գույքը պետության ձեռքին: «Պյուրոսյան հաղթանակ»: Հեղափոխության նախօրյակին: «Լիբերալ գարուն»: Կովկասյան փոխարքայությունը: Փոխարքան տագնապ է շեփորում: 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագիրը: Հայկական դպրոցների վերաբացումը և նրանց հետագա հակատագիրը: Ամփոփում:

XX դարի նախօրյակին ու սկզբին Ռուսաստանն արագորեն թևակոխեց կապիտալիզմի բարձրագույն փուլը: Միաժամանակ երկրում հասունանում էր հեղափոխական ճգնաժամը:

Նկատի ունենալով ազգային փոքրամասնությունների հալածանքը, վ. Ի. Լենինը գրում էր, որ «Կառավարությունը ոչ թե կառավարում է, այլ պատերազմում է»[1]: Հասունացող հեղափոխական ճգնաժամի պայմաններում այդ պատերազմն ընդունում էր էլ ավելի անկաշկանդ ու վայրենի ձևեր: Զգուշով հասարակության ուշադրությունը շեղել վերահաս հեղափոխության սուր ու արմատական հարցերից, ցարիզմը արհեստականորեն բորբոքում էր ազգային հարցը, «այլազգիների սեպարատիզմը» դարձնում հեղափոխության ու «միասնական Ռուսաստանի» «կործանման»

---

1 վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 20, էջ 264:*

հետանկարներից խելքները կորցրած բուրժուա-կալվածատիրական քաղքենիներին ահաբեկելու սոսկալի մի խրտվիլակ։

Վերընթաց հեղափոխական շարժման կենտրոններից մեկն էր և Ռուսաստանի հետամնաց ծայրագավառ Անդրկովկասը։ Միաժամանակ այստեղ հեղափոխական շարժման վերելքին զուգընթաց լայն ծավալ էր ընդունել ազգային-ազատագրական շարժումը։ Երկրամասը նման էր վառոդով լի տակառի, որի պատրույգը վառված էր. պայթյունը կարող էր ահավոր ուժ ունենալ ու մեծամեծ տհաճություններ պատճառել ցարիզմին։

«Տասնյակ տարիների ընթացքում,— գրում է Ս. Կասյանը,— ինքնակալությունը ճիգ ու ջանք էր թափել ազգայնապես դիմագրկել անել Անդրկովկասի բազկացուցիչ մասերը, խառնաշփոթ անել նրա ազգային քարտեզը, դարձնել նրան, եթե կարելի է այսպես ասել, ապազգային ազգությունների կոնգլոմերատ։ Քմահաճ վարչական բաժանումներով, բռնի արտագաղթով ու ներգաղթով նա ստեղծում էր Անդրկովկասում ազգությունների ու ժողովուրդների իրար հյուսված և խառնիճաղանճ մի ցանց։ Նա Անդրկովկասը դարձրել էր մի քաոսային «ամբողջություն», որպեսզի հիշատակություն անգամ չլինի ազգային տերիտորիաների մասին, որպեսզի ազգություններից և ոչ մեկը չհամարձակվի մտածել ազգային ամենաչնչին շահի մասին՝ որոշ տերիտորիաների վրա, առանց շոշափելու մի ուրիշ ազգության նույնքան ավելի չնչին շահը։ Նա այնպես էր խառնել ազգությունները, որ սովորական ճարահատյալին վեճերին, դասակարգային հակասություններին կարելի լիներ վերագրել ազգային պայքարի բնույթ»[1]։

Անդրկովկասում (և ոչ միայն Անդրկովկասում) հասել էր այն պահը, երբ եռացող հեղափոխական, դասակարգային պայքարին ցարիզմը ճղնում էր «վերագրել ազգային պայքարի բնույթ»։ Դրա համար պետք էր տարբեր ազգերին լարել ու հակադրել միմյանց, բաժանել ու թշնամացնել և առանձին-առանձին ճնշել բոլորին։ Բազմազգ Անդրկովկասը ցարիզմի որդեգրած «բաժանիր, որ տիրես» սկզբունքի իրագործման խիստ հարմար ասպարեզ էր։ Դավադիր այս քաղաքականությունը առանձնապես սուր դրսևորումներ ստացավ հայերի նկատմամբ։

Որպեսզի հայերի դեմ ուղղված հալածանքը «հիմնավորված» լինի, ցարական բյուրոկրատիան դիմեց ստրկահոգի մամուլի օգ-

1 «Նորք», 1923, գիրք 3, էջ 132։

նությանը։ Ռեակցիոն սևհարյուրյակային Սուվորինի «Նովոյե վրեմյա», ինչպես և «Մոսկովսկիյե վեդոմոստի» թերթերն իրենց վրա վերցրին գլխավոր հարվածի նախապատրաստության հոգսը։ Նրանք ճիգ ու ջանք չխնայեցին հայերի հասցեին ամենաազարելի հերյուրանքներ հորինելու համար։ Իզուր չէ, որ 1899 թ. Մաքսիմ Գորկին Սուվորինին ուղղած բաց նամակում զայրույթով գրում էր. «Ձե՞ք զգում, արդյոք, դուք, հին ժուռնալիստդ, որ Ձեզ համար հասել է փոխհատուցման ժամը այն ամենի համար, ինչ որ Դուք և Ձեր ճարտար աղերքը տպագրել եք «Նովոյե վրեմյայի» էջերում»[1]։

Ռուսաստանի մայրաքաղաքներում սկսված գործն Անդրկովկասում ոչ պակաս «հաջողությամբ» շարունակում էին «Կավկազ» թերթն ու նրա խմբագիր, «փոքր բանաստեղծ ու մեծ մարգատյաց» Վ. Վելիչկոն։ Մինչև ուղն ու ծուծը համոզված միապետական, թթու շովինիստ այս խմբագիր կոչվածի համար ոչ մի սրբություն չկար. նա աջ ու ձախ ցեխ էր շպրտում Կովկասի աղգերի վրա, թունավորում շրջապատը։

1899 թ. հեռնալով Պետերբուրգ, Վելիչկոն նույն կրքով շարունակեց իր ուղեգիծը։ 1904 թ. այդ «Կովկասյան գրական Արակչեևը» հրատարակեց «Կովկաս։ Ռուսական գործը և միջցեղային հարցերը» գիրքը, որն անառարկելիորեն կարող էր հաղթողի «դափնեպսակ» ստանալ, եթե կազմակերպվելու լիներ աղգահալած, շովինիստական գրականության մրցանակաբաշխություն։ Ժուռնալիստի իր ողջ «հմտություններըը», պատմագիտական իր ամբողջ «կարողությունը» բանեցնում էր այստեղ Վելիչկոն Անդրկովկասի ժողովուրդներին լարելու միմյանց դեմ։ Նա հայտարարում էր, որ հայերը Կովկասը տանում են դեպի կործանում, որ իբր նրանք առաջ են քաշել «Կովկասը կովկասցիների համար» լոզունգը, որպեսզի ռուսներին այնտեղից դուրս քշեն և ստրկացնեն «միամիտ» վրացիներին ու «հնազանդ» մահմեդականներին։ Սևհարյուրյակային «մտավորականը» երազում էր հայկական ջարդերի կազմակերպման մասին, երբ ամեն առիթով զուգահեռներ էր անցկացնում հայերի ու հրեաների միջև, երբ թուրքական յաթաղանից փրկված հայ գաղթականների մուտքը Անդրկովկաս համարում էր «մեծագույն աղետ»։ Վելիչկոն «մարգարեաբար» զգուշացնում էր իշխանություններին հայկական վտանգից, մանավանդ, որ «հայ-հեղափոխականները կանգ չէին առել օտոմանյան բանկի դինված գրավման առաջ» և

---

[1] **М. Горький**, Собрание сочинений, т. 28, М., 1954, стр. 67.

կոչ էր անում վճռական միջոցների դիմել, քանի որ «Արևելքը հրնաղանդվում է միայն աճեղ ուժին»։ «Արևելքում,— գրում էր նա, — չկա ավելի վտանգավոր բան, քան կիսամիջոցները, հատկապես ժողովրդական հուզման րոպեներին. կիսամիջոցները մեծացնում են ամեն մի նման շարժման պարագլուխների լկտիությունը, նախաձեռնությունը և հզրինակությունը»[1]։

Յարիզմին հավատարիմ, ծախված մամուլի նման ելույթները մասամբ տեսնում էին իրենց սև գործը։

Մարքսը, ցույց տալով, թե ինչպիսի ավերիչ ազդեցություն կարող էր ունենալ կառավարության վատահուհյունը վայելող մամուլը, գրում էր. «Անբարոյացնող ձևով գործում է միմիայն գրաբրննության ենթակա մամուլը։ *Մեծագույն արատը՝ երեսպաշտությունը նրանից անբաժան է. նրա այդ արմատական արատից բըխում են նրա բոլոր մյուս թերությունները, որոնցում առաքինության սաղմ անգամ չկա, բխում է նրա, նույնիսկ էսթետիկական տեսակետից, ամենազզվելի՝ պասիվության արատը։* Կառավարությունը լսում է միայն իր սեփական ձայնը, նա գիտե, որ լսում է միայն իր սեփական ձայնը, բայց, այնուամենայնիվ, նա իր մեջ շարունակում է ինքնախաբեությունը, թե իբր լսում է ժողովրդի ձայնը, և ժողովրդից ևս պահանջում է, որ նա նույնպես աչակցի այդ ինքնախաբեությանը»[2]։ Իսկ գրաքննության ենթակա մամուլը՝ «ամեն օր գովաբանում է կառավարական կամքի ստեղծագործությունները. բայց քանի որ մի օրը անպայման հակասում է մյուսին, ապա մամուլը մշտապես ստում է և, ընդ որում, պետք է թաքցնի, որ ինքը գիտակցում է իր սուտը, պետք է կորցնի ամեն մի ամոթ»[3]։

Այս նույն վիճակն էր և Ռուսաստանում, երբ ստրկամիտ մամուլն ու իշխանությունները, լրացնելով մեկը մյուսին, ահավոր հերյուրանքներ էին բարդում «այլազգիների» վրա, իրենք էլ հավատում էին իրենց հորինած ստերին ու խաչակրաց արշավանքի ելնում այն ամենի դեմ, ինչը ուզում էր ապրել իր սեփական, յուրօրինակ կյանքով։

Կովկասյան վարչության գլուխ անցնելով (1897) և ոգեշընչվելով ցարական ռեակցիայի ու սևհարյուրյակային մամուլի հզոր

---

1 **В. Л. Величко,** Кавказъ. Русское дело и междуплеменные вопросы, СПб, 1904, стр. 144.

2 **К. Маркс** и **Ф. Энгельс,** Сочинения, изд. 2-ое, т. I, 1965, стр. 69.

3 Նույն տեղում։

աջակցությունից, իշխան Գոլիցինը կոանդուն հարձակում ծավալեց Անդրկովկասի տարբեր ազգությունների դեմ: Նա զարգացրեց ու նոր աստիճանի հասցրեց գաղութային-համաձուլարար քաղաքականությունը և դրանով շատ հեռվում թողեց իր նախորդներին: Ժամանակակիցները նրան «աստվածային պատուհաս» էին կոչում: «Իշխան Գոլիցինը գնաց Կովկասում բնակվող բոլոր ազգությունների դեմ, որովհետև նա բոլորին ուզում էր ռուսացնել, բայց, բնականաբար, ամենից շնամարար նա վերաբերվեց հայերին»[1]:

Սկսվեց հայ մամուլի ու գրականության չտեսնված հալածանք: Ազգային ամենաչնչին հարցեր շոշափող հոդվածներն անգամ արգելվում էին մամուլում: Հայկական թերթերին կտրականապես արգելվեց հաղորդումներ դետեղել Արևմտյան Հայաստանի և առհասարակ հայկական հարցի մասին: Ա. Կ. Ջիվելեգովը պատմում էր, որ Կովկասից իրեն խնդրել էին արևմտահայերի մասին ավելի շատ հոդվածներ տպագրել «Ռուսկիյե վեդոմոստի» թերթում, որպեսզի իրենք հնարավորություն ունենան արտատպել դրանք: Նախնական գրաքննություն հաստատվեց էջմիածնի «Արարատ» ամսագրի նկատմամբ, 1898 թ. փակվեց «Արձագանքը», նոր պարբերականների հրատարակությունը կտրականապես արգելվեց:

1900 թ. փակվեց Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը: Իր գոյության քսան տարիների ընթացքում ընկերությունը հրատարակել էր ընդամենը 174 անուն գիրք, որից 108-ը թարգմանական էր: Գրաքննական հալածանքը հայ գրողների նկատմամբ հասավ մեծ չափերի:

Ցարական բյուրոկրատիան հատուկ ուշադրություն դարձրեց գրական հոբելյանների անցկացումն արգելելու վրա այն բանից հետո, երբ հայ մամուլը 1901 թ. լայնորեն նշեց Ալիշանի մահը[2]:

Գոլիցինի օրոք էլ ավելի ուժեղացավ այլազգի և հատկապես հայ պաշտոնյաների հեռացումը Կովկասից: Եթե 1878 թ. Կովկասյան վարչության պաշտոնյաների 22,1 տոկոսը հայ էր, ապա այդ թիվը 1901 թ. հասավ 12,5-ի: Կառավարչապետը ծայրահեղորեն անցանկալի էր համարում տեղացիներին բարձրագույն կրթություն տալը, քանի որ, նրա կարծիքով, դրանից աճում էր սեպարատիստական ձգտումներ ունեցող ազգային մտավորականության թիվը[3]:

---

1 **С. Ю. Витте**, Воспоминания, т. 2, М., 1960, стр. 207—208.

2 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 78, էջ 56:*

3 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 741, ց. 1, գ. 99, էջ 109 հ. կ.:*

Այն օրերին, երբ արևմտահայությունը արյունաքամ էր լինում թուրք ջարդարարների բարբարոսությունից, երբ 80 հազար անօթևան ու տանջահար գաղթականներ լցվել էին Անդրկովկաս, իսկ հայ հասարակությունը ջանքեր էր թափում նրանց վիճակը մի փոքր թեթևացնելու, Գոլիցինը հարց բարձրացրեց կառավարության առաջ գաղթական հայերին հետ ուղարկելու մասին, իսկ երբ սուլթանը հրաժարվեց նրանց ընդունել, առաջարկեց գոնե խստիվ արգելել գաղթականների նոր խմբերի մուտքը: Մահից ազատված այդ դժբախտների մասին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետը գրում էր. «Հայ մամուլը նրանց ներկայացրեց իբրև թուրքական գազանությունների զոհեր, իսկ նրանց սկզբնական չքավոր կերպարանքը խաբեց և տեղական բնակչությանը»[1]:

Կովկասի «այլազգիների» ռուսացումն արագացնելու նպատակով Գոլիցինը կայսեր առաջ հարց բարձրացրեց, որ «Անդրկովկասի արքունի բոլոր ազատ հողերը այսուհետև բնակեցվեն միայն բուն ռուսական ծագում ունեցող ուղղափառ վերաբնակներով»[2]:

Գոլիցինի առանձնահատուկ մտահոգության առարկան էին հայկական բարեգործական ընկերությունները, որոնց նա համարում էր հեղափոխական-ազգային շարժմանն օժանդակող մարմիններ, ոչ պակաս վտանգավոր՝ քան դպրոցները:

Դեռևս նախորդ շրջանում կովկասյան իշխանությունները մի քանի անգամ փորձել էին սահմանափակել բարեգործական ընկերությունների գործունեությունը: Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը արգելվել էր տեղական նոր բաժանմունքներ բացել: 1895 թ. վերջին կառավարչապետը կայսրին առաջարկել էր ուժեղացնել հսկողությունը այդ ընկերությունների նկատմամբ և կանոնադրական ամենափոքր խախտման դեպքում փակել դրանք: Յարիգմը նման մոտեցում ուներ ոչ միայն հայերի հասարակական կազմակերպությունների նկատմամբ: «19-րդ դարի վերջին ռուսական կառավարությունը և կրթության մինիստրությունը լրջորեն անհանգստացած էին ոչ այնքան զեմստվոյական հիմնարկությունների գործունեության թափից, որոնք այս կամ այն կերպ գտնվում էին որոշակի հսկողության տակ, որքան ժողովրդական կրթության ասպարեզում այն նոանդուն գործունեությունից, որը Ռուսաստանի տարբեր մասերում ծավալվել էր ժողովրդական կրթության բազմապիսի կամավոր ընկերությունների (հանձնաժողովների, կոմի-

1 ՀՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 51, էջ 6 հ. կ.:
2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 741, ց. 1, գ. 99, էջ 80 հ. կ.:

տեների) կողմից, և որը ակնհայտորեն դուրս էր մնում ամեն մի հսկողությունից»[1]։

1896 թ. իշխանությունները սպառնագին տոնով պահանջեցին Կովկասի հայկական բարեգործականներից հաշվետվություններ ներկայացնել. նրանց ամենից շատ հետաքրքրում էր, թե ինչ նպատակների վրա էին ծախսվում ընկերությունների դրամական միջոցները։ Հաջորդ տարի Գոլիցինը ցարին ուղղած զեկուցագրում հայտնում էր, որ սառուցումներից պարզվել է, որ հայկական ընկերությունների հիմնական նպատակը լուսավորությունն է և ոչ թե բարեգործությունը[2] (!?)։

1898 թ. մարտի 17-ին տեղի ունեցած Մինիստրների կոմիտեի նիստը (տե՛ս էջ 208) քննեց նաև հայկական բարեգործական ընկերությունների հարցը։ Ներքին գործերի մինիստրը գտնում էր, որ լուսավորական գործունեությունը թույլատրված է կառավարության կողմից հաստատված կանոնադրություններով, և հայկական ընկերություններին այդ հնարավորությունից զրկելու համար պետք է պարզապես փոխել կանոնադրությունները։ Նա այն կարծիքին էր, որ ընկերությունների ուղղակի փակումը «կարող է ծայր աստիճան անցանկալի հուզումներ առաջացնել հայ բնակչության շրջանում և նույնիսկ ծնունդ տալ գաղտնի խմբակային կազմակերպությունների ստեղծման, որոնց դեմ պայքարելը էլ ավելի դժվար կլինի»[3]։ Դրա համար մինիստրը հույս էր հայտնում, որ հավանաբար այդ ընկերությունները կհրաժարվեն նոր կանոններն ընդունելուց և այն ժամանակ օրինական ճանապարհով կարելի կլինի դրանք փակել։

Կոմիտեն որոշեց հանձնարարել կառավարչապետին նոր կանոններ մշակել հայկական-բարեգործական ընկերությունների համար, որոնք պետք է հնձվեին «Աղքատներին օժանդակելու ընկերությունների օրինակելի կանոնադրության» վրա և լրիվ կերպով բացառեին ամեն մի կրթական գործունեություն ու արգելեին ճյուղային կազմակերպությունների գոյությունը։ Մարտի 26-ին ցարը հաստատեց այդ որոշումը։

1899 թ. հուլիսի 6-ին ներքին գործերի մինիստրը հաստատեց Կովկասի հայկական երեք բարեգործական ընկերությունների նոր կանոնադրությունները, որոնք ուլտիմատիվ կերպով առաջարկվե-

---

1 **Н. А. Константинов, В. Я. Струминский,** Очерки по истории начального образования в России, М., 1953, стр. 200.

2 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. IV, էջ 24 հ. կ.։*

3 *ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ, 821, ց. 150, գ. 272, էջ 104 հ. կ.։*

ցին նրանց: Հակառակ սպասածին, երեք ընկերություններն էլ որոշեցին ընդունել կանոնները, որպեսզի մի կերպ պահպանեն իրենց գոյությունը: Դրանից հետո ամենուրեք փակվեցին Կովկասի հայոց բարեգործականի բոլոր տեղական բաժանմունքները և նրանք կարող էին գոյություն ունենալ միայն որպես առանձին ընկերություններ, եթե ցանկանային: Սակայն, երբ մի շարք վայրերից նման դիմումներ եղան (Երևան, Բաթում, Շուշի), իշխանությունները ամեն կերպ արգելակեցին նոր ինքնուրույն ընկերությունների ստեղծումը:

Մնացած ընկերությունները վերանվանվեցին այն ձևով, որ շեշտվեր նրանց տեղային բնույթը: Նրանց արգելվեց դրադարաններ ունենալ, օժանդակել կարիք ունեցող հայ սովորողներին, հայերեն դրագրություն վարել:

Զրկվելով լուսավորական հարցերով զբաղվելու իրավունքից, հայկական ընկերություններն ստիպված էին անցնել աղքատախնամ գործունեության. նրանք աշխատանքի տուն, անկելանոց, էժանագին ճաշարան, որբանոց բացեցին: Սակայն չքավորներին օգնելու անվան տակ հաճախ փորձեր էին անում դրամական միջոցներ տրամադրել կարիքավոր ուսանողներին, արևմտահայ գաղթականներին: Այս բանն առիթ տվեց իշխանություններին մի քանի անգամ անդրադառնալու ընկերությունների գործունեությանը: 1901 թ. Թիֆլիսի բարեգործականի շենքում ձերբակալված սոցիալ-դեմոկրատ բանվորներ Դ. Կոզլիկյանի (Եսայեմ) և Փիլոսյանի (Հ. Ադամյան) գործի առթիվ ժանդարմական վարչությունը պահանջեց փակել ընկերությունը: Նման սահմանափակումներն ու ճնշումները երկար շարունակվեցին և միայն 1905—1907 թթ. հեղափոխությունից հետո կառավարությունն ստիպված եղավ վերականգնել բարեգործականների նախկին կանոնադրությունները և լուսավորական գործունեության ու տեղական բաժանմունքների գոյության իրավունք տալ:

Այսպիսով, XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Կովկասում հաստատված գոլիցինյան ռեժիմը աննախընթաց աստիճանի հասցրեց հայահալած քաղաքականությունը: Ցարիզմը անողոք բռնություններով ճանապարհով արհեստականորեն հայկական հարց էր ստեղծում նաև Ռուսաստանի սահմաններում: Արտաքին-քաղաքական պայմանները ցարիզմին մղում էին մերձենալու թուրքական սուլթանի հետ և միասնական պայքար ծավալելու ազգային-ազատագրական շարժման դեմ: Պ. Մակինցյանը այդ առթիվ գրում էր. «Այդ ծանր տարիներին տարածում էր ստացել հայկա-

կան պահպանողական շրջաններից եւած համեմատությունը Թուրքիայում և Ռուսաստանում հայերի վիճակի վերաբերյալ: Հայաստանը նմանեցվում էր ծառի. Թուրքիայում ջարդում էին նրա կանաչ շիվերը, որոնք ժամանակի ընթացքում կարող էին նորից աճել, իսկ Ռուսաստանում տակից կտրում էին նրա արմատները...[1]»:

Այն ծանր օրերին, երբ թուրք ջարդարարները մոխրի էին վերածում արևմտահայ շենները, երբ ռուսական ցարիզմը իր հերթին վայրենի հալածանք էր սկսել Ռուսաստանի հայերի նկատմամբ, ռուս առաջադեմ հասարակությունը բարեկամական ձեռք էր մեկնում բազմաչարչար հայությանը: Դեմոկրատական, ազատասիրական ոգով տոգորված ռուս գործիչները խորապես ապրում էին հայ ժողովրդի ողբերգությունը և ջանում հնարավոր միջոցներով թեթևացնել նրա ծանր վիճակը, ասել իսկական ճշմարտությունը այդ ժողովրդի մասին:

Պետերբուրգում, Մոսկվայում, Վլադիկավկազում և մի շարք այլ վայրերում ռուս հասարակությունը դրամական միջոցներ էր հավաքում գաղթական հայերին օգնելու համար: Կազմակերպվում են ընկերություններ, որոնք նպատակ են դնում ուսումնասիրել հայոց պատմությունն ու կուլտուրան, պաշտպանել հայերին անարդարացի մեղադրանքներից: Նույնիսկ պաշտոնական բնույթ կրող «Սանկտ-Պետերբուրգսկիյե վեդոմոստի» թերթում է. Ուխտոմսկին պայքար էր ծավալում ռեակցիոն մամուլի հակահայկական ելույթների դեմ: «Ջափաղանց ծանր և ցավալի է,— գրում էր թերթը,— տեսնել, թե ինչպես մի քանի անկոչ դատավորներ շպրտում են մի ամբողջ ազգի երեսին այնքան ծանր մեղադրանքներ, առաջ չբերելով ոչ մի փաստ, չունենալով նույնիսկ մի խախուտ հենակետ»[2]: Ուխտոմսկին նույնիսկ հայերին պաշտպանելու համար իրեն զրպարտող Վելիչկոյին դատի տվեց:

Նարոդնիկական «Ռուսսկոյե բոգատստվո» ամսագրում Ս. Յուժակովը հանդես է գալիս մի հոդվածով, որտեղ արդարացիորեն մեղադրում է Ռուսաստանում «հայկական հարց» ստեղծողներին, գտնում, որ դրա պատճառն այն է, որ վերջիններս չեն ուզում ընդունել Հայաստանի ռեալ գոյությունը Ռուսաստանի սահմաններում, որ նրանց տեսակետից «իր ազգությանը չդավաճանելը արդեն մի դաղտնի դավաճանություն է հայրենիքի (իմա՝ Ռու-

---

1 «Сборник армянской литературы», под ред. М. Горького, Петроград, 1916, стр. XCVI.

2 *Տե՛ս «Մշակ», 1897, № 75:*

ազատանի— Վ. Ե.) դեմ»: «Հայաստանը գոյություն ունի Ռուսաստանի սահմաններում,— գրում է նա,— (Գանձակի, Երևանի, Կարսի նահանգներ) և այնտեղ, ուրեմն, գոյություն ունեն հայեր, որոնք դավանում են իրենց լուսավորչական կրոնը, խոսում են իրենց հայերեն լեզվով, կարդում են իրենց բազմադարյա գրականությունը, ուսանում են, մտածում, աշխատում, բազմանում, մի խոսքով, իրենց կուլտուրան են ստեղծում, իրենց լուսավորությունը, իրենց բարօրությունը, կեցությունը... Այս ամենը բնական է. այս ամենը անխուսափելի է. այս ամենը ցանկալի է»[1]:

Ռուս մշակութային գործիչներն սկսում են ավելի մոտիկից ծանոթանալ հայ գրականությանն ու արվեստին: Թարգմանվում են մի շարք հայ հեղինակների գործեր, այդ ուղղությամբ հատկապես գնալի աշխատանք է կատարում Ե. Նեկրասովան: Ուսումնասիրվում է հայոց պատմությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը, ձայնագրվում են հայկական ժողովրդական երգերը: 1903 թ. լույս է տեսնում «Գեղարվեստական ալբոմ», որտեղ վեհանդվում են ռուս նշանավոր կոմպոզիտորներ Կյուիի, Բալակիրևի, Ռիմսկի-Կորսակովի և մյուսների հայկական թեմաներով գրված գործերը: Հայ մշակույթի պաշտպանությամբ հանդես են գալիս հռչակավոր դիտնականներ Ն. Մառը, Մ. Կովալևսկին, Ա. Վեսելովսկին և ուրիշներ:

Հայ իրականությանն ու մշակույթին ծանոթանալը առաջնակարգ խնդիր համարող դեմոկրատ-գործիչների մեջ առանձնահատուկ տեղ պրավից Յուրի Վեսելովսկին: Մոտիկից ծանոթանալով հայ ժողովրդի ճակատագրին, նա Ալ. Ծատուրյանի և Մ. Բեբերյանի օգնությամբ հրատարակության պատրաստեց հայ դրականության ժողովածուն և, երբ հրատարակիչները հրաժարվեցին այն լույս աշխարհ հանել, նա իր սեփական միջոցներով, դեռ 1893 թ. հրատարակեց ժողովածուն: Ռուս ընթերցող հասարակության համար, որին ռեակցիան սնում էր հայերի մասին անհեթեթ խրթբրթանքներով, դա մի կատարյալ հայտնություն էր: Հաջողությունից ոգևորված, Վեսելովսկին պատրաստեց ժողովածուի երկրորդ հատորը, որը տպագրվեց առանց նախնական գրաքննության: Բյուրոկրատիան անհանգստացավ: Գրքում դատն առաջադիմական գաղափարներ արտահայտող գործեր, և կառավարության դիտությամբ գրաքննական վանդալները 1894 թ. այրեցին դեռևս չտարածված գրքի ամբողջ տպաքանակը: Սակայն Վեսելովսկին չընկճվեց.

---

1 *Տե՛ս «Մշակ», 1895, № 139:*

նա նոանդով դնկուցումներ էր կարդում ի պաշտպանություն հայ ժողովրդի, հայագիտական հոդվածներով հանդես էր գալիս Բրոկհաուզի ու Էֆրոնի «Հանրագիտական բառարանում»:

Վեսելովսկուն խոր ցավ էր պատճառում փոքր ազգերի դեմ ցարիզմի մղած հալածանքը, որը նա «խաչակրաց արշավանք» էր համարում, գտնում էր, որ մեծ տարբերություն կա «իրենի, հարազատի նկատմամբ եղած բնական սիրո և «սեպարատիզմի» միջև», հայկական դպրոցների փակման համար խիստ քննադատում էր իշխանություններին: Նա գտնում էր, որ Ռուսաստանի ժողովուրդները պետք է անկաշկանդ ու բնական սիրով կապվեն միմյանց հետ: Խոսելով ռուս դրականության ծաղած ազգեցության մասին հայ դրողների վրա, նա գրում էր. «Դա միակ «ռուսացումն» է, որ կարելի է ջերմորեն ողջունել, քանի որ այն ընդհանուր գաղափարների, կուլտուրական ձգտումների ու գեղարվեստական կերպարների հողի վրա մերձեցնում է երկու ժողովուրդներին»[1]:

Հետագայում, հիշելով գոլիցինյան ռեակցիայի տարիները, Վեսելովսկին գրում էր. «Որքա՜ն տանջալի ու ցավալի էր գիտակցել, որ ռուս ժողովուրդը կարծես թե պատասխանատու է այն ամենի համար, ինչ նրա անունով կատարվում էր Ռուսաստանի ծայրամասերում: Ինքնակալական ռեժիմը մեկ անգամ չէ, որ կեղծավորաբար քողարկվում էր նրա շահերով, արշավի ելնելով ուրիշների կուլտուրայի դեմ:

...Բայց միշտ էլ ուզում էիր հավատալ, որ ռուս ժողովուրդը այստեղ մեղք չունի, որ նրա անունով ինքնակոչ կերպով խոսում էին ազատության ճնշողներն ու թշնամիները»[2]:

Հայ ժողովրդի մասին ճշմարտությունը տարածելու տեսակետից բացառիկ նշանակություն ունեցավ 1897 թ. Մոսկվայում հրատարակված և հաջորդ իսկ տարին վերահրատարակված «Братская помощь пострадавшим в Турции армянам» գիրքը: Նրա խորագիրն արդեն շատ բան էր ասում: Դա հայերի պաշտպանության ոգով գրված հոդվածների ու նյութերի մի մեծածավալ ժողովածու էր, որին իրենց մասնակցությունն էին բերել բազմաթիվ ռուս մշակութային գործիչներ, գիտնականներ, հրապարակախոսներ: Գրքի նպատակների մասին էին վկայում հենց նրանում զետեղված Ն. Մատի հոդվածի հետևյալ խոսքերը. «Վերջին տարիներս մեր աչքի առաջ անցավ հայ դրականության, պատմության, լեզվի, ազգության

---

1 «Вестник воспитания», 1905, № 9, стр. 134.

2 «Армянский вестник», 1917, № 14, 9 апреля, стр. 5.

մասին լրագրային ու ամսագրային հոդվածների մի ամբողջ շարք, որոնք ուսանելի էին միայն այն իմաստով, որ Հայաստանի պատմության վերաբերյալ ողջամտության ու տարրական գիտելիքների բացակայությունը ներկայացվում էր որպես գիտության վերջին խոսք»[1]:

Ժողովածուն կոչված էր ճշմարտությունն ասելու հայ ժողովրդի մասին, և նա հասավ իր նպատակին: Ռուս հասարակությունը շատ բան իմացավ և ազատվեց շատ կանխակալ կարծիքներից: Սրա համար էր, որ իշխան Գոլիցինը իրարով անցավ ու կարողացավ արգելել գրքի երրորդ հրատարակությունը: Իր ամբողջ ներքին տրամաբանությամբ ժողովածուն ուղղված էր ցարիզմի վայրենի ազգահալած քաղաքականության դեմ: Կիևում հրատարակվող «Ռոսսիա ի Ազիա»-ի 1898 թ. մայիսի 15-ի համարից արտատպված հոդվածում գրված էր. «Եղբայրական օգնության ձեռք մեկնենք այլազգիներին, վերաբերվենք նրան որպես ձեր մերձավորի, և դուք, պ.պ. կուլտուրարիզներներ, բոլորովին հակառակ արդյունք կտեսնեք»[2]: Այդ տարիներին Ռուսաստանում թարգմանվեցին և հրատարակվեցին նաև արևմտահայերի ծանր կացությունը լուսաբանող մի շարք աշխատություններ ու հուշագրություններ.

Այսպիսով, ցարական ռեակցիան «այլազգիների» դեմ ամբողջ ուժ հասարակությունը մոբիլիզացնելու ձգտման մեջ լուրջ հիասթափության բազմաթիվ ապրներ ուներ. առաջադեմ Ռուսաստանը, մտքի ու խղճի ազատության համար պայքարող Ռուսաստանը հակադրվում էր նրան, հենվելով ուժ ժողովրդի լավագույն տրադիցիաների վրա, անկեղծ բարեկամի ձեռք էր մեկնում իրավազուրկ ու ճնշված ազգերին:

* * *

Հայերի դեմ ծավալված անպատիժ հալածանքի պայմաններում կովկասյան իշխանությունները 1898 թ. ամռանը ձեռնամուխ եղան մարտի 26-ի օրենքով նախատեսված հայկական եկեղեցական-ծխական դպրոցների շենքերի ու գույքի ընդունմանը: 1898 թ. հունիսի 8-ին Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկին շրջաբերականով դիմեց տեղական մարմիններին՝ մինչև հուլիսի վերջը շտապ կարգով ընդունելու հայկական բոլոր փակված դպրոցների շարժական ու անշարժ գույքը, նրանցից ստացված

---

1 «Братская помощь...», изд. 2-ое, М., 1898, стр. 560.

2 Նույն տեղում, էջ 616:

եկամուտները ուսումնական վարչության անունով մուտք անելու պետական դանձարան։ Ընդ որում հաշվի չէր առնվելու գույքի պատկանելությունը (եկեղեցական, մասնավոր, հասարակական). բավական էր, որ ավյալ գույքը օգտագործվել էր որևէ փակված դպրոցի կողմից։

Ուսումնական վարչությունը ձգտում էր իր ձեռքում կենտրոնացնել հայկական դպրոցների գոյության բոլոր միջոցները։ Բռնագրավվում էին ոչ միայն անմիջական դպրոցական շենքերն ու գույքը, այլև դպրոցների համար որպես եկամտի աղբյուր հանդիսացած հողակտորները, այգիները, առևտրական կրպակները, մասնավոր կտակները, արժեթղթերը։ Կարճ ժամանակում իշխանությունները հիմնականում ընդունեցին հայկական դպրոցների գույքը։ 1898 թ. վերջերին, օրինակ, Երևանի ժողովրդական դպրոցների տեսուչը հայտնում էր նահանգապետին, որ նահանգում ընդունված է 600 հազար ռուբլուց ավելի արժողությամբ դպրոցական շենքեր և ունեցվածք[1]։

Իշխանությունները շտապում էին փակված դպրոցների փոխարեն բացել նոր սկզբունքով գործող դպրոցներ։ 1898 թ. վերջին նրանց հաջողվեց բացել 36 այդպիսի դպրոց, հետագա մի քանի տարիների ընթացքում ևս բացվեցին որոշ դպրոցներ. օրինակ, Թիֆլիսի Հովնանյան դպրոցը հինգ տարի փակ մնալուց հետո, նոր հիմունքներով բացվեց 1901 թ.։

Սակայն ցարական բյուրոկրատիայի ջանքերը քիչ թե շատ շոշափելի արդյունքներ չտվեցին. միջոցների սղությունը և այն, որ հայ հասարակությունը մեծ մասամբ հրաժարվում էր ֆինանսավորել իրեն օտարացած դպրոցը, հնարավորություն չէին տալիս ուզած չափով դպրոցներ բացել։ Չնայած հորդորներին, գյուղական բազմաթիվ հասարակություններ հրաժարվում էին նյութական միջոցների հատկացումից՝ պատճառ բերելով իրենց չքավորությունը։ 1899 թ. հունվարի 7-ին Երևանի նահանգապետը հայտնում էր Ցանովսկուն, որ նախատեսված 27-ից միայն 9-ը գյուղեր են համաձայնվել մասնակցելու բացվելիք դպրոցների պահպանությանը[2]։ Ժողովրդին ամենից շատ նոր դպրոցից սառեցնում էր այն հանդամանքը, որ նրանում հաճախ չէր ավանդվում հայոց լեզուն ու կրոնը։

---

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1780, էջ 32։

2 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 111, էջ 73—80։

Զրկվելով սեփական ազգային դպրոցից, հայ աշակերտության մի մասը ստիպված էր հոսել դեպի արքունի ռուսական դպրոցները, մյուս մասն էլ սկսեց սովորել նախկին եկեղեցական-ծխական դպրոցների փոխարեն բացված դպրոցներում, որոնք, փաստորեն, նույն արքունի դպրոցներն էին: Սրա հետևանքով ուսումնական շրջանին ենթակա դպրոցներում սովորող հայերի թիվը նկատելիորեն ավելացավ: Եթե 1896 թ. Կովկասի ուսումնական շրջանին ենթակա բոլոր տիպի դպրոցներում սովորողների 14 տոկոսն էր հայ, ապա 1903 թ. այդ թիվը հասավ մոտ 18-ի: Նույն թվականին նման դպրոցներում սովորում էր մոտ 39 հազար հայ երեխա: Սովորող հայերի տոկոսային աճն էլ ավելի նկատելի էր Անդրկովկասի տարրական դպրոցներում (առանց Հյուսիսային Կովկասի), որտեղ 1896 թ. սովորող հայերի տոկոսը 19,4-ից 1903 թ. հասավ 31,1-ի:

Դպրոցական գույքի դրամման սկզբնական շրջանում էջմիածինը կարծես անտարբեր էր ստեղծված իրավիճակի նկատմամբ: Հուսալքումն ու մոայլ տպագան թևաթափ էին արել հոգևոր հայրերին: Ոչ մի գործնական կարգադրություն չէր արվում, գույքի հանձնման ու նոր դպրոցների բացման բախտը թողնվել էր տեղական բահանաների ու երեցփոխների հայեցողությանը: 1898 թ. նոյեմբերի 30-ին էջմիածնի ուսումնա-վարչական հանձնաժողովի նախագահ Սուրխաս Պարոյանը դադարեցրեց հանձնաժողովի գործունեությունը և արխիվը հանձնեց էջմիածնի դիվանին[1]:

Սակայն, երբ դրությունն սկսեց աստիճանաբար պարզվել, հոգևորականությունը բռնեց դիմադրության ուղին: Եկեղեցիներն սկսեցին հրաժարվել նոր դպրոցները ֆինանսավորելուց, քանի որ դրանք դուրս էին եկել նրանց իրավասությունից, շատ տեղերում դպրոցների համար հավաքված դումարները մուծվում էին եկեղեցական դանձարկղը, փակված դպրոցների շենքերը կնքվում էին և որպես եկեղեցապատկան չէին հանձնվում իշխանություններին, դպրոցներին տրամադրված հատուկ կրպակների վարձակալները հրաժարվում էին նկամուտները մուծել պետական դանձարան՝ ի հակակշիռ կառավարության կողմից փակված հայկական դպրոցների, հաճախացան տնային պայմաններում երեխաներին հայերեն լեզվով կրթություն տալու դեպքերը: Կաթողիկոսի թույլտվությամբ մեծահարուստ Վասիլան Քանքանյանը դպրոց հիմնեց

[1] Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 396:

նոր Ջուղայում։ Թիֆլիսի ժանդարմական վարչությունը հայտնում էր, որ Բաքվի մեծահարուստ Եղիսաբեթ Սարգսյանը «աջակցություն է ցույց տալիս Պարսկաստանի Սալմաստ քաղաքի ընդարձակ հայկական դպրոցին, որը բացվել է ի հակակշիռ այստեղ ռուսական կառավարության կողմից փակված հայկական եկեղեցական-ծխական դպրոցների»[1]։

Իշխանություններին ցույց տրվող դիմադրությունը հատկապես բնորոշ դրսևորումներ ունեցավ Երևանի նահանգում։ Նշանակվելով Երևանի փոխ-թեմակալ, Սուքիաս արքեպիսկոպոսը անհաշտ դիրք բռնեց։ Նրա կարգադրությամբ Երևանի չորս եկեղեցիներին կից նախկին ծխական դպրոցների շենքերը կնքվեցին, և նա ամեն կերպ խույս տվեց դրանք հանձնելուց։ Սուքիասը միաժամանակ արգելեց եկեղեցական գումարներ հատկացնել վերաբացված Գայանյան և Զոլմակչիի դպրոցներին ու այդ առթիվ նույնիսկ կաթողիկոսին հատուկ կոնդակ հրապարակել տվեց։ Դիմադրության նման դեպքեր եղան և Ալեքսանդրապոլում։ Սա խիստ անհանգստացրեց իշխանություններին. նրանք վախենում էին, որ դիմադրությունը կարող է լայն տարածում գտնել։

Եկեղեցուն պատկանող մի շարք հասութաբեր կալվածքներ, շենքեր ու կրպակներ, որոնց եկամուտներով պահվում էին նախկին հայկական դպրոցները, դարձան անդիջում պայքարի առիթներ։ Ուսումնական վարչությունը խլել էր դրանք և ոչ մի կերպ չէր ուզում հաշվի նստել իրավատիրոջ հետ։ Հատկապես սուր վիճեր էին լինում Ալեքսանդրապոլի եկեղեցիներին պատկանող 18 կրպակների, Հառիճի վանքի 15 կրպակների, Ախալցխայի եկեղեցապատկան Կարղախի կամ Կարապետյան 19 հազար դեսյատինի հասնող կալվածքի, Թիֆլիսի Հովնանյան դպրոցի՝ եկեղեցուն կրտակված գումարների, Կաղզվանի 5 այգիների, Կարսում, Նախիջևանում, Ղամարլուում և այլ վայրերում եղած եկեղեցապատկան շենքերի և ունեցվածքի շուրջը։

Վերջապես էջմիածինը որոշեց օգտվել 1898 թ. մարտի 26-ի օրենքի երկրորդ կետով դատարանին դիմելու իրեն վերապահված իրավունքներից։ Փաստաբան Ռ. Հասան-Ջալալյանին, իսկ հետագայում Ս. Հարությունյանին հանձնարարվեց վարել դատական դործերը։ 1901 թ. ընթացքում տեղի ունեցան մի շարք դատեր։ Էջմիածինը ներկայացնում էր գույքի պատկանելության անառարկե-

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 51, էջ 10։

լի փաստեր, և ցարական դատարանը ստիպված էր լինում դործը վճռել նրա օգտին: Ընդ որում, ըստ լուսավորության մինստր Գ. Զինգերի՝ «դատարաններն իրենց որոշումներում բացատրում են, որ ուսումնական վարչությանը պետք է անցներ ոչ թե եկեղեցական ունեցվածքը, որը թեև նախատեսված էր դպրոցների կարիքների համար, այլ միայն նախկին հայկական դպրոցներին, որպես իրավական անձի, սեփականության իրավունքով պատկանած ունեցվածքը»[1]: Ուսումնական վարչությունը պարտության էր կրում:

Դատական դործերը կարգի դնելու համար Պետերբուրգից լուսավորության մինիստրությունն ուղարկեց հատուկ հանձնարարություններով պաշտոնյա Ա. Դաևին: Ուսումնական վարչությունն աշխատում էր վիճելի հարցերին տալ վարչական լուծում, քանի որ դատարանում նա չէր կարողանում հիմնավոր փաստարկներ ներկայացնել և տանուլ տալով դատը, դատարանական ղգալի ծախսեր էր կրում: Իր կողմից ուսումնական վարչությունը դատական դործեր էր սկսում նախկին հայկական դպրոցների պարտատերերի դեմ, որոնք հրաժարվում էին մարել իրենց հին պարտքերը՝ հօդուտ նոր դպրոցների:

Դրությունը բավական խառն էր: Խճճվելով իրավատիրական հարցերի մեջ, ուսումնական վարչությունը ղգում էր, որ չի հասել իր վաղուց փայփայած նպատակին: Բյուրոկրատ վարչարարները հաշվի չէին առել մի շատ ակնառու իրողություն. հայերի դպրոցները պահվում էին հիմնականում անհատատուն միջոցներով, ժողովրդի նվիրատվություններով, հայ ուսուցիչը դպրոցի գոյությունը պահպանելու համար հաճախ թատերական ներկայացումներ էր կազմակերպում, «ավետիս» էր ման դալիս: Իսկ այժմ, երբ դպրոցի բանալին իր ձեռքն էր առել ռուս պաշտոնյան, ժողովուրդը երես էր դարձրել նրանից, և դպրոցական դանձարկղը դատարկվել էր: Մյուս կողմից էլ եկեղեցին էր խոչընդոտ հանդիսանում և տեր կանգնում իր ունեցվածքին: Հայերի դպրոցների դեմ վարած քաղաքականությունը կանգնած էր ֆիասկոյի առաջ, և դրանից խուսք տալու համար բյուրոկրատիան աչքը տնկեց եկեղեցական ունեցվածքի վրա:

Դեռևս 1895 թ. վերջին Կովկասի կառավարչապետ Շերեմետևը դնելով հայկական դպրոցները էջմիածնի տնօրինությունից

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 744, ց. 6, գ. 144, էջ 3 հ. կ.:

հանելու հարցը, միաժամանակ առաջարկել էր, որ, եթե ձեռք առնված միջոցառումները արդյունք չտան, «հայ հոգևորականությունից խլել եկեղեցիներին ու վանքերին պատկանող անշարժ բնակեցված ու չբնակեցված կալվածքները, դրանց դիմաց կառավարության կողմից պատշաճ փոխհատուցում նշանակելով, և այն հաշվով, որ կապիտալը դառնա կառավարության սեփականություն, իսկ այդ կապիտալի տոկոսները ծախսվեն նվիրատուների ցանկության համաձայն, այլ ոչ մի կրոնի հետ ընդհանուր ոչինչ չունեցող գործերի վրա»[1]:

1898 թ. ներքին գործերի մինիստրության հոգևոր գործերի դեպարտամենտը կազմեց «Հայ-լուսավորչական եկեղեցու կառավարման գործերում նախատեսվող փոփոխությունների մասին» նախագիծ, որտեղ դարձյալ շոշափվում էր եկեղեցական ունեցվածքը խլելու հարցը[2]: Նախատեսվող փոփոխությունները պետք է իրագործվեին այն ժամանակ, երբ կաթողիկոսական աթոռը թափուր կլիներ:

Սակայն իշխան Գոլիցինը չուղեց երկար սպասել: 1899 թ. մարտի 13-ին կառավարչապետի դրասննյակը մի ընդարձակ գաղտնի զեկուցագիր ներկայացրեց կառավարությանը, էջմիածնի ունեցվածքը անհապաղ բռնագրավելու առաջարկով[3]: Զեկուցագրում նշվում էր, որ հոգևորականությունը գործուն մասնակցություն է ցույց տալիս հակակառավարական, հեղափոխական շարժմանը, որ նրա դույքը կառավարվում է աշխարհիկ մարդկանց ձեռքով, որոնք եկամուտների մեծ մասը օգտագործում են ապուտացիոն նպատակներով, հատկացնում են դաշնակցության կազմակերպություններին: Այնուհետև նշվում էր, որ դպրոցական դույքի դրավման հարցում նկատի էր առնվել, որ այդ դպրոցները, հանձին հոգաբարձական մարմինների, անկախ են եկեղեցուց և լրիվ տնօրինն են իրենց ունեցվածքին: Սակայն այժմ եկեղեցին տեր է կանգնել այդ ունեցվածքին և դատական գործերով ձգձգում է դույքի ընդունումը, մինչդեռ ուսումնական վարչությունը զրկված է դատերը շահելու հնարավորությունից, մի բան, որը կարող է մեծապես վնասել կառավարության հեղինակությանը: Ըստ զեկուցագրի՝ հայ-լուսավորչական հոգևոր վարչությանը պատկանում էին 243 հոգ. դեսյատին հողային կալվածքներ, 31 բնակեցված ու 70 չբնակեց-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 1—1 հ. կ.:

2 Տե՛ս նույն տեղում, ց. 138, գ. 102, էջ 32—36:

3 Տե՛ս նույն տեղում, գ. 71, մ. I, էջ 23—49:

ված գյուղեր (!?), մի քանի հարյուր մանր կառուցվածքներ՝ կըրպակներ, չրաղացներ և այլն, 1,4 մլն. ռուբլու կապիտալ։ Այս բոլորի տարեկան ընդհանուր եկամուտը հասնում էր մոտ կես մլն. ռուբլու։ Կովկասյան իշխանությունը հատկապես շեշտում էր հողային կալվածքների բռնագրավման անհրաժեշտությունը, քանի որ «բնակեցման համար պետանի այդ հողերը իրենցով կավելացնեն Անդրկովկասում պետական ազատ հողերի անբավարար պաշարը, որը նախատեսված է ռուս մարդկանցով երկրամասը Բարձրագույն նախակարգադրության համաձայն կոլոնիզացիայի ենթարկելու համար»[1]։

Ձեկուցագրի հետ ներկայացվեց նաև եկեղեցական գույքի բռնագրավման նախագիծ[2]։

Ներքին գործերի մինիստր Դուրնովոն 1899 թ. մայիսին այս հարցի առթիվ զեկուցեց ցարին։ Մասնավորապես նա հայտնում էր, որ եկեղեցական գույքի բռնագրավումը արտակարգ միջոցառում է, որը «դուրս է գալիս մեր պետական կառավարման գործերի սովորական շրջանակի սահմաններից և իր բարեհաջող իրագործման համար պահանջում է գաղտնի նախապատրաստություն»[3], դրա համար էլ անհրաժեշտ էր գտնում այն լսել հատուկ կոմիտեում։ Մայիսի 13-ին ցարը համաձայնվեց արված առաջարկությանը և հատուկ կոմիտեի նախագահ նշանակեց սրբազան սինոդի օբեր-պրոկուրոր Պոբեդոնոսցևին։ Վերջինիս շուտով փոխարինեց պետական խորհրդի անդամ է. Ֆրիշը։ Միաժամանակ, Դուրնովոն դիմեց մի շարք մինիստրների, որպեսզի նրանք կարծիք հայտնեն հայկական եկեղեցական գույքի նախատեսվող բռնագրավման մասին։

Ֆինանսների մինիստր Ս. Վիտտեն գտավ, որ եկեղեցական գույքի բռնագրավումը հուզումներ կառաջացնի հայերի մեջ և՛ երկրի ներսում, և՛ նրա սահմաններից դուրս, բացի այդ, բռնագրավումը կարող է և ֆինանսապես չարդարացնել իրեն։ Այս կարծիքը Գոլիցինը դիմավորեց ավիններով. նա պնդում էր, որ հայ ժողովուրդը ուրախությամբ կընդունի բռնագրավումը և բնավ չի ըմբոստանա։

Արտաքին գործերի մինիստր Մ. Մուրավյովը հատուկ կոմիտեի նախագահ Ֆրիշին գրած խիստ գաղտնի նամակում 1900 թ.

---

1 Նույն տեղում, էջ 41 հ. կ.

2 Տե՛ս նույն տեղում, էջ 52—54։

3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 147, գ. 7, էջ 2 հ. կ.։

մարտի 7-ին գրում էր, որ ծրագրվող բռնագրավումը նման է լինելու հայկական եկեղեցու գույքի բռնագրավմանը, բայց այն ժամանակ լինելն ապատամբել էին, իսկ այժմ դրությունն այլ է: Մինիստրը հիշեցնում էր, որ, այնուամենայնիվ, էջմիածնի կաթողիկոսի ազդեցությունը արտասահմանում կարելի է օգտագործել քաղաքական նպատակներով, այնինչ գույքի բռնագրավումը կվնասի այդ գործին, կստիպի արտասահմանի հայերին երես դարձնել Ռուսաստանից, նոր ուժեր կներգրավի հայերի անպարտախտական շարժման մեջ:

Ապրիլի 21-ին նույն հասցեով գրած երկրորդ նամակում Մուրավյովը բերում էր նաև ծանրակշիռ մի փաստարկ, գտնելով, որ կառավարությունը կարող է խիստ անհարմար վիճակի մեջ ընկնել, եթե «Թուրքական կառավարությունը, իր հերթին, ցանկանա շոշափել Թուրքիայում եղած հայկական-եկեղեցական ունեցվածքի հարցը և Տերությունների բողոքներին կպատասխանի, որ ինքը այդ տեսակետից օրինակ է վերցնում Ռուսական կառավարությունից»[1]:

Այս ամենը տեղի էր ունենում խիստ գաղտնի պայմաններում: Սակայն, այնուամենայնիվ, հանրությանը ինչ-ինչ ճանապարհներով հայտնի դարձավ նախապատրաստվող միջոցառման մասին: Գոլիցինն շտապեց ահազանգել Պետերբուրգ և հայտնել, որ Պոլսի «Բյուլանդիոն» թերթում հաղորդումներ են երևացել այդ մասին, որոնք քաղված են եղել նաև անգլիական մամուլից: Իշխանը պահանջում էր արագացնել որոշման ընդունումը, որպեսզի հայերը ժամանակ չունենան հուզումներ կազմակերպել և թաքցնել եկեղեցական գույքը[2]:

1900 թ. մայիսի 8-ին տեղի ունեցավ հատուկ կոմիտեի նիստը, որին Ցարիցից և Պոբեդոնոսցևից բացի, մասնակցում էին ֆինանսների մինիստր Վիտտեն, հողագործության և պետական գույքերի մինիստր Ա. Երմոլովը, արդարադատության մինիստր Ն. Մուրավյովը, արտաքին գործերի մինիստր կոմս Մ. Մուրավյովը, ներքին գործերի մինիստր Սիպյագինը և Կովկասի կառավարչապետ Գոլիցինը: Հատուկ կոմիտեն, լրիվ հաշվի առնելով Վիտտեի ու Մուրավյովի կարծիքները, արձանագրեց, որ «Մեր խնդիրը՝ ռուսական ազդեցությունը սահմանակից երկրների՝ ասիական Թուրքիայի և Պարսկաստանի վրա տարածելու գործում, չի կարող ա-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 145, էջ 8:

2 Տե՛ս նույն տեղում, գ. 71, մ. 1, էջ 147:

վարտված համարվել»[1]: Բացի այդ, կոմիտեն գտավ, որ եկեղեցական գումարները արդելքի տակ դնելով չէ, որ հնարավոր կլինի կանխել հայերի հեղափոխական ագիտացիան: Որոշվեց ուժեղացնել հսկողությունը եկեղեցական գույքի օգտագործման վրա, իսկ բանագրավումը համարվեց անժամանակ: Սիպյագինը բացատրեց, որ դա ժամանակավոր հետաձգում է և անհրաժեշտության դեպքում պետք է վերադառնալ այդ հարցին:

Ձգտելով վերահաս վտանգը, էջմիածինը փորձեց դիմել հակամիջոցների. նա աշխատեց ուժեղացնել ծխի դեմոկրատական սկզբունքները, ժողովրդին շահագրգռել սեփական եկեղեցու և նրա ունեցվածքի կառավարման հարցերով, որպեսզի անախորժության դեպքում նա պաշտպան կանգնի եկեղեցուն: Այդ նպատակով «Արարատ» ամսագրի 1902 թ. մարտ-ապրիլ ամիսների համարում տպագրվեց ծխական համայնքների կանոնների նախագիծը, որը քննարկումից հետո պետք է հաստատվեր կաթողիկոսի կողմից: Նախագիծը մեծ իրավունքներ էր վերապահում ծխական ժողովին, որի կողմից պետք է ընտրվեին բոլոր ծխական-հոգևոր պաշտոնները, ժողովն էր անօրինելու եկեղեցու տնտեսությունը, ծխի բոլոր գործերը: Եկեղեցական գույքի կառավարման համար երեք տարով ընտրվող երեցփոխից բացի, ընտրվելու էին նաև 3—5 հաշվետեսներ, որոնք պետք է հետևեին երեցփոխի գործերին ու հաշիվներին: Ջախտանց ուշադրավ էր նախագծի այն կետը, որը նոր պայմաններում աշխատում էր ծխական ժողովին վերադրել եկեղեցուն կից ազգային կրթության տալու գործը: Նրանում ասված էր. «Ծխական համայնքի ընտանիքների երկու սեռի մանուկների կրոնական դաստիարակման վրա հոգածություն և հսկողություն: Եկեղեցում կամ նրա գավթում սովորեցնել կարդալ, գրել, աղոթքներ, փոխասացություն, ժամերգություն, Սուրբ գրքի և մասնավորապես սուրբ Ավետարանի ընթերցանություն եկեղեցական պաշտոնյանների ձեռքով կամ նրանց հսկողության տակ»[2]: Փաստորեն սա փակված հայկական դպրոցների տեղը ինչ-որ մի բան դնելու փորձ էր:

1902 թ. նոյեմբերի 28-ին Պետերբուրգ ուղարկած զեկուցագրի մեջ Գոլիցինը տագնապով հայտնում էր, որ նախագիծը, «շրջանցելով 1897 թ. հունիսի 2-ի Բարձրագույն կարգադրությունը, ձգտում է գարձյալ հայ հոգևորականության ու ինտելիգենցիայի

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 108, մ. II, էջ 35 հ. կ.:

2 «Արարատ», 1902, մարտ-ապրիլ, էջ 215:

ձևոքը հանձնել տարրական ժողովրդական կրթության գործը»[1]: Եվ նա շրջաբերականով կարգադրեց նահանգապետերին խստորեն հետևել, որ նախագիծը չիրագործվի:

Այդ շրջանում ուսումնական վարչությունն սկսել էր հատկապես նոր դպրոցների բացման համար նյութական միջոցների պակաս զգալ: Տեղերից անընդհատ բողոքում էին, որ միջոցների սղությունը մեծապես վնասում է ռուսական դպրոցի տարածմանը: Երևանի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչը իր 1901 թ. հաշվետվության մեջ գրում էր. «Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները թույլ չտվեցին պետական օժանդակություն ցույց տալ բացման ենթակա և ոչ մի դպրոցի»[2]: Շատ տեղերում դիմում էին ուսման վարձի բարձրացմանը, որը դժգոհություն էր առաջ բերում ժողովրդի մեջ: 1903 թ. Երևանի ու Ելիզավետպոլի նահանգները և Կարսի մարզը դիմեցին կառավարությանը՝ կրթության գործին լրացուցիչ գումարներ հատկացնելու համար: Այդ առթիվ լուսավորության մինիստրը գրում էր, որ պետական գանձարանը չի կարելի չափից ավելի ծանրաբեռնել ուսումնական ծախսերով, քանի որ դա «անարդար բան կլիներ»[3]:

Արտաքին նվաճողական քաղաքականություն վարելով և ըմբաղված լինելով հասունացող հեղափոխական ու ազգային շարժումները ճնշելու գործով, ցարիզմը միջոցներ չուներ ժողովրդի կրթության համար: Այս հանգամանքը ավելի էր զրգռում բյուրոկրատիայի ախորժակը հայ եկեղեցու ունեցվածքի նկատմամբ: Ռեակցիոն մամուլն սկսել էր առասպելական լուրեր տարածել էջմիածնի անհաշիվ գանձերի, Լոնդոնի բանկերում թաքցրած միլիոնների մասին:

Մյուս կողմից ազմուկ էր բարձրացվում դպրոցական դույքի առթիվ տեղի ունեցող դատերի շուրջ: 1903 թ. գարնանը Թիֆլիսի դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի որոշումը Ախալցխայի Կարապետյան խոշոր կալվածքը (19 հազ. դես.) եկեղեցուն պատկանելու մասին: Ուսումնական վարչությունը դատարանական մեծ ծախսերի ենթարկվեց: Իշխանությունների համար սա խոշոր պարտություն էր: 1903 թ. ապրիլի 18-ին լուսավորության մինիստրը ստիպված էր դիմել ցարին և խոստովանել, որ դատական ճանապարհով հնարավոր չէ լուծել դույքի հար-

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 72, մ. II, էջ 128:
2 ՀՊԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 126, էջ 17:
3 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 573, ց. 14, գ. 18994, էջ 16:

ցը, որ ուսումնական վարչությանը ի վերջո ոչինչ չի մնա։ Նա խնդրում էր 1898 թ. մարտի 26-ի օրենքին տալ նոր բացատրություն, ըստ որի ուսումնական վարչությանը պետք է անցնեին այն ամբողջ գույքն ու միջոցները, որոնցով պահվում էին նախկին հայկական դպրոցները, և ոչ թե միայն նրանց պատկանող գույքն ու միջոցները։ Սակայն, իմանալով, որ նախագծվում է հայկական եկեղեցու ողջ ունեցվածքի բռնագրավումը, մինիստրը խնդրում էր մինչ այդ անմիջապես կասեցնել գաղտնի գործերի ընթացքը։ Յարը տվեց իր համաձայնությունը[1]։

Գոլիցինի համար երջանիկ դուրգադիպություն էր Սիպյագինի սպանությունից հետո 1902 թ. ներքին գործերի մինիստրի պաշտոնում փորձված ժանդարմ ու արիստոկրատներ Վ. Կ. Պլևեի նշանակումը։ Ֆիննական ժողովրդին հալածողի մեջ Կովկասի ժողովուրդների դահիճը հոգեհարազատ շատ բաներ գտավ, Պլևեի բարձրացումը նա ընդունեց որպես նոր հարձակման աղդանշան ու կրկնապատկված եռանդով գործի անցավ։

1897—1902 թթ. վերաբերող կայսեր ներկայացված իր գրության մեջ Գոլիցինը, «վերլուծելով» էջմիածնի հակակառավարական դիրքը, վեր հանելով հայերի «սնապարծախտական» ձգտումների վտանգավորությունը, դարձյալ պնդեց հայկական եկեղեցական գույքը հարքունիս բռնագրավելու մասին 1899 թ. արած իր առաջարկությունների վրա։ Յարը կարգադրեց ուսումնասիրել ու առաջարկներ ներկայացնել այդ հարցի առթիվ։

Այս անգամ ևս արտաքին գործերի մինիստրը (Լամզդորֆ) կրկնեց իր նախորդի բոլոր դիտողությունները գույքի բռնագրավման աննպատակահարմարության մասին[2]։

Սակայն երկրում ահավոր չափերի հասած ռեակցիայի պայմաններում նման զգուշացումներն այլևս չէին կարող զսպել կապը կտրած սևհարյուրյակայիններին։ «Շշուկների քաղաքականությունը դարձյալ մի անգամ հաղթանակեց և ծրագիրը երկրորդ անգամ դրվեց մինիստրների ժողովի առջև»[3]։ Պոբեդոնոսցևի նախագահությամբ կայացած մինիստրների կոմիտեի նիստում նրա 17 անդամներից 12-ը դեմ արտահայտվեց բռնագրավմանը, սակայն պլևե-գոլիցինյան խմբակցությունը նախագիծը ներկայաց-

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 744, ց. 6, գ. 144, էջեր 1—4։

2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 72, մ. II, էջ 309։

3 Է. Ակնուեի, *Դևսի կոիվ.*, ժնև, 1904, էջ 10։

րեց ցարին, որը, հակառակ մեծամասնության կարծիքի, 1903 թ. հունիսի 12-ին հաստատեց այն։

1903 թ. հունիսի 12-ի օրենքի[1] համաձայն, հայ-լուսավորչական եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատություններին և ուսումնարաններին պատկանող ամբողջ անշարժ գույքը և կապիտալները՝ բնակեցված ու չբնակեցված հողերը, անտառները, մարգագետինները, արոտավայրերը, ձկնոսարանները, ջրաղացները, անմիջական օգտագործումից դուրս եղող շենքերն ու շինությունները, ինչպես նաև օրենքի ընդունումից հետո նվիրատվությունների ու կտակների ձևով եկեղեցուն տրվող գույքն ու կապիտալը նրանց տնօրինությունից անցնում էին պետական համապատասխան մինիստրությունների տնօրինությանը։ Ընդ որում, անշարժ գույքը կառավարվելու էր հողագործության և պետական գույքերի մինիստրության, իսկ կապիտալները՝ ներքին գործերի մինիստրության կողմից։ Գրավման ենթակա չէին միայն այն հողատարածությունները, որոնց վրա անմիջապես կառուցված էին եկեղեցական շինությունները, բնակարանային և ուսումնական կառույցները, ինչպես նաև երեք դեսյատինից ոչ ավելի անձնական օգտագործման համար եղած հոգևորականների այգիները, բանջարանոցներն ու հողակտորները։ Մոսկվայի և Պետերբուրգի հայկական եկեղեցիները ևս ազատ էին օրենքի ներգործությունից։

Օրենքը սահմանում էր, որ ընդունված գույքի կապիտալների գլխավոր հսկողությունը պետք է իրականացվի ներքին գործերի մինիստրության կողմից։ Հողագործության մինիստրությունը անշարժ գույքի օգտագործման ծախսերն ու հարկերը փակելուց հետո, նրանից ստացվող ամբողջ եկամուտը հանձնելու էր ներքին գործերի մինիստրությանը։ Այդ եկամուտների 10 տոկոսը պահվելու էր հիշյալ գույքի բարելավման համար, 5 տոկոսը առանձնացվելու էր որպես հայ եկեղեցու օժանդակ կապիտալ։ Մնացած գումարները և կապիտալի եկամուտները մինիստրությունը հատկացնելու էր այն հոգևոր հաստատություններին, որոնցից ընդունվել էին գույքն ու կապիտալները. այդ հաստատությունները պարտավոր էին հաշվետվություն ներկայացնել իրենց տրվող գումարների օգտագործման մասին։

Էական նշանակություն ուներ օրենքի երրորդ հոդվածը, որտեղ ասված էր. «Ի փոփոխումն Մինիստրների կոմիտեի 1898 թ. մարտի 26-ին Բարձրագույն հաստատված կանոնների, սահմանել

---

1 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 50, էջ 3—4։

Հողագործության և պետական գույքերի, ներքին գործերի և ժողովրդական լուսավորության մինիստրներին հանձնարարել սույն օրենքի 1 հոդվածում շարադրված կանոնների հիման վրա հայ-լուսավորչական եկեղեցու գույքը պետական տնօրինության տակ ընդունելուց հետո, փոխադարձ համաձայնության միջոցով բացահայտել այն գույքը, որով կապահովվի ժողովրդական լուսավորության մինիստրության տնօրինության տակ ընդունված դպրոցների գոյությունը, և ապա. ա) նշել այն գույքը, որն անհրաժեշտ է հողնել ուսումնարանների անմիջական կարիքների համար, և բ) մնացած գույքի նկատմամբ որոշել դրամական այն գումարի չափը, որն անհրաժեշտ է ամեն տարի հանձնել ժողովրդական լուսավորության գերատեսչությանը՝ վերը նշված ուսումնարանների պահպանության համար»[1]:

Այս ամենից հետո ավելի քան զավեշտական էր օրենքի այն հայտարարությունը, որ հայ եկեղեցին պահպանում է սեփականության իրավունքը գույքի և կապիտալների նկատմամբ:

1903 թ. հունիսի 12-ի օրենքը արտաքինից կարող էր թվալ բավական անվնաս մի միջոցառում, երբ նախատեսվում էր եկեղեցական գույքի, կարծես թե, սոսկ վերակազմման փոփոխություն: Պաշտոնական շրջաններն ու մամուլը գործն այդպես էլ ներկայացնում էին, օրենքը հռչակում որպես իսկական բարիք հայ ժողովրդի համար, որը վերջապես ազատվելու էր եկեղեցական անկարգություններից ու հոգևորականների քմահաճույքներից:

Ձևական-պաշտոնական տեսակետից հունիսի 12-ի օրենքը հրապարակ էր եկել հայ եկեղեցու անօրինական նկրտումներին վերջ տալու, հայկական հեղափոխական կազմակերպությունները նյութական աղբյուրներից զրկելու և, որքան էլ դա տարօրինակ է, հայ եկեղեցու ունեցվածքի կառավարումը իրր կարգի դնելու ու նրանից ավելի շատ եկամուտներ կորզելու՝ հօդուտ հենց այդ եկեղեցու:

Սակայն օրենքի իսկական նպատակները շատ ավելի խորն էին ու հետևն գնացող: Այն ամբողջությամբ ուղղված էր հայ ժողովրդի ու նրա մշակույթի դեմ: Դա մի արտակարգ պատժամիջոց էր ժողովրդի նկատմամբ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը փաստորեն եկեղեցին էր. եթե վերջինս հնազանդեցվեր ու դառնար հլու կամակատար, ապա, ցարական բյուրոկրատիայի կարծիքով, ժողովուրդը կդիմազրկվեր և ոչինչ անել այլևս չէր կարող: Գրավելով

---

1 Նույն տեղում, էջ 4:

եկեղեցու ունեցվածքը և դրա փոխարեն հոգևորականությանը տալով նյութական փոխհատուցում, ցարիզմը ցանկանում էր նրան դնել պետական նպաստ ստացող պաշտոնեության վիճակում, որից նա պետք է դառնար հնազանդ ու ենթարկվող:

Միաժամանակ, եկեղեցուն տրվող նյութական միջոցների օգտագործման վրա խիստ հսկողություն սահմանելով, կառավարությունը ցանկանում էր նրա ակամուտներն ուղղել զուտ հոգևոր կարիքների վրա և կուլտուր-լուսավորական օջախները զրկել նյութական միջոցներից: Ավելին, օրենքի երրորդ հոդվածի իմաստն այն էր, որ հայկական եկեղեցուն ցինիկաբար ստիպում էր միայնակ կրելու նրա ենթակայությունից դուրս եկած և մասամբ սերնդին ուսացնելու նպատակով ստեղծվելիք դպրոցների պահպանության ծախսերը:

Այստեղ տեղին է հիշատակել այն ուսումնասիրողների սխալը, որոնք հունիսի 12-ի օրենքին միակողմանի բացատրություն են տալիս, հայտարարելով, որ օրենքի նպատակն էր հայ դպրոցները զրկել նյութական միջոցներից ու փակել դրանք: Այնինչ դպրոցները փակվել էին դեռևս 1896—1897 թթ.:

Ազգային մշակույթի, մայրենի լեզվի ու կուլտուր-լուսավորական հիմնարկությունների անընդհատ սատակացող հալածանքը, հայերին ձուլելու անդուստ ձգտումը 1903 թ. հունիսի 12-ի օրենքով հասան իրենց բարձրակետին: Ըստ էության, օրենքը հատկապես հայկական դպրոցների դեմ ցարիզմի վարած քաղաքականության արամաբանական վախճանն էր:

Հայ ժողովուրդը, որ երկար տարիներ ցարիզմի կողմից կրել էր ամեն տեսակ հալածանք, զրկվել էր մայրենի լեզվով իր զավակներին կրթություն տալու տարրական իրավունքից, չէր կարող այլևս անտարբեր նայել, թե ինչպես է օտարացվում նրա եկեղեցու՝ դարերով կուտակված ունեցվածքը:

Այս տեսակետից ուշագրավ է երկու տարի անց Կովկասի փոխարքա դարձած Վորոնցով-Դաշկովի կարծիքը. «Հայ ժողովուրդը,—գրում էր փոխարքան,—որ չի ունեցել հոգևոր դաս և հոգևորականներին ընտրել է հենց իր իսկ միջավայրից, զուտ պատմական նշանակություն ունեցող պատճառներով ամուր կերպով կապված է իր հոգևորականության շահերի հետ, նույնիսկ անկախ կրոնական հայացքներից: Այդ պատճառով էլ պետական կառավարման համար եկեղեցական ունեցվածքի խլումը վիրավորեց ժողովրդի բարոյական զգացմունքը և գրեթե անխտիր, առանց դասակարգի

ու գերքի բացառության, նրան նետեց հեղափոխական շարժման մեջ»[1]:

Շուտով ամբողջ Անդրկովկասը տակնուվրա եղավ հայկական ընդվզումից:

* * *

Հունիսի 12-ի օրենքի ընդունումից հետո կովկասյան իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան այն ի կատար ածելու նախապատրաստություններին: Հունիսի 30-ին Պլևեն ստորագրեց գույքի ընդունման կանոնները[2], ըստ որի, այն պետք է սկսվեր նախ կալվածքներից: Դրա համար նշանակված պաշտոնյան ոստիկանության, եկեղեցու ներկայացուցիչների ու ծխականների ներկայությամբ հոգևորականությունից պետք է ստանար գույքամատյանները և ցուցակի համաձայն ընդուներ գույքը: Իր հերթին, ուսումնական շրջանի հոդաբարձուն հուլիսի 15-ին շրջաբերական[3] պատվիրեց ճշտել եկեղեցական այն գումարներն ու գույքը, որոնցով պահվում էին հայկական նախկին դպրոցները, որպեսզի նկատի այդ աղբյուրները համապատասխանաբար անցնեին ուսումնական վարչության: Նշանակվեցին գույք ընդունող հանձնաժողովներ: Էջմիածնի վանքի և դավառի գույքի ընդունման հանձնաժողովի նախագահ նշանակվեց Երևանի փոխ-նահանգապետ Նակաշիձեն, քանի որ հարկ էր լինելու գործ ունենալ կաթողիկոսի հետ: Դրաքննության ցուցում տրվեց արգելել օրենքի վերաբերյալ բացասական նյութերի հրատարակումը տեղական մամուլում: Միաժամանակ «Կավկազ» լրագիրը մի շարք հոդվածներով աշխատեց ժողովրդին հոգեբանորեն նախապատրաստել առաջիկա հարվածին:

Բայց, երբ հանրությանը հայտնի դարձավ հունիսի 12-ի օրենքի մասին (այն հրապարակվեց միայն հուլիսի կեսերին), բոլորովին այլ բան ստացվեց: Առաջին միտքը, որ համակեց հայ հասարակության տարբեր խավերին, չհնթարկվելու, դիմադրելու միաձնական ձգտումն էր: Ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ էին կազմակերպվում, որոշում էին պայքարի ելնել, հանրագրեր էին կազմում և ուղարկում էջմիածին ու թեմական

[1] «Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерала-а'дютанта Воронцова-Дашкова», 1907, стр. 8.

[2] Տե՛ս «Մշակ», 1903, № 195:

[3] Տե՛ս ՀՓԿՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 140, էջեր 176—178:

առաջնորդներին՝ պահանջելով չենթարկվել ցարի որոշմանը, բողոքել, դիմադրել: Միայն Ախալցխայում հանրագրի տակ ստորագրեց 10 հազար մարդ: Էջմիածինը, որտեղ սկզբում ստեղծվել էր հուսալքման մթնոլորտ, սկսեց աշխուժանալ:

Կաթողիկոսը այդ օրերին շրջապատում էր Երևանի թեմի հոգեղեցիները: Շատերը ենթադրում էին (նաև Գոլիցինը), որ նա ցանկացել է դրանով ժամանակ շահել և ծանոթանալ ժողովրդի տրամադրությանը: Երբ հուլիսի 29-ին կաթողիկոսը Ալեքսանդրապոլից պատրաստվում էր մեկնել, հուզված ամբոխը կայարանի հանդիսարհին շրջապատեց նրա կառքը և աղմուկ-աղաղակով պահանջեց չենթարկվել կառավարության որոշմանը: Ա. Սեդրակյանը պատմում է, որ «Մինչև անգամ Հայրապետի վագոնի պատուհանների ապակիները ջարդել էին. ոստիկանությունը միջամտել էր, բայց ոչինչ չէր կարողացել անել. մի երկու քաղաքապահների ծեծել էին: Դավառապետի օգնականը նստած է եղել կաթողիկոսի մոտ կառքում— թևից բռնել վայր են բերել»[1]: Ալեքսանդրապոլցիների բուռն ելույթն արդեն բավական էր, որպեսզի Խրիմյանի համար պարզ լիներ ժողովրդի վերաբերմունքը:

Մի քանի օր հետո ավելի ազդեցիկ ցույց եղավ Երևանում: Օգոստոսի 3-ին փոխ-թեմակալ Սուքիաս Պարզյանը եկեղեցում Մելիքսեդեկ Մուրադյանի հիշատակին նվիրված հոգեհանգստի ժամանակ քարոզում է դիմադրել օրենքին և կաթողիկոսից նույնը պահանջել: Դրանից հետո բորբոքված ամբոխը եպիսկոպոսին ընտեխում է կառք նստել և իր հետ գնալ Էջմիածին: Ոստիկանության միջամտությունն արդյունք չի տալիս: Մի քանի հազարանոց բազմությունը ձգվում է Էջմիածին տանող ճանապարհով, որտեղ դրված ոստիկանական արգելափակոցները, ընդհարումները ժողովրդի ու զորքի միջև չեն կարողանում կանխել այդ ազդեցիկ երթը: Ամբոխը Էջմիածնի վանքի մոտ ցույց է անում, աղմկում և գրվում է միայն այն ժամանակ, երբ կաթողիկոսը նրա ներկայացուցիչներին հավաստիացնում է, որ ինքը հեշտությամբ չի ընկճվի: Ոստիկանությունը ցուցարարների մեջ բազմաթիվ ձերբակալություններ է կատարում:

Օգոստոսի 6-ին նման ցույց է կազմակերպվում Աշտարակում: Աշտարակցիների երթին միանում են և օշականցիները: Տեսնելով, որ ոստիկանությունն անզոր է ցույցի առաջն առնելու, իշխանությունները կապակներ են կանչում, որոնց ժողովուրդը դիմավո-

---

1 ԳԱՔ, Սեդրակյանի արխիվ, բաժ. 1, վավ. 14, էջ 1:

րում է քարերով, տեղի է ունենում փոխհրաձգություն։ Զդիմանալով կազակների ճնշմանը, ցուցարարները նահանջում են։ Զորք եկեղեցական ձերբակալվում են ու շտապ աքսորվում Քութայիսի նահանգ։ Ձերբակալվում է նաև 40-ի չափ ցուցարար։ Նույնպիսի անհաջողություն է կրում էջմիածին դնալու սուրմալեցիների փորձը։ Դրանից հետո պայքարելու իրենց վճռականությունը հայտնելու համար մարդիկ սկսում են էջմիածին գալ ուխտավորների անվան տակ։ Իշխանությունն ստիպված է լինում արգելել ուխտագնացությունը։

Դեպքերի ազդեցության տակ և հակառակ սինոդի դատախազ Կանչելլիի հորդորներին, Սուքիաս արքեպիսկոպոսի նախագահությամբ հուլիսի 30-ին տեղի է ունենում Մայր աթոռի միաբանության հատուկ նիստ[1], որը կաթողիկոսի հրամանով պետք է որոշեր հունիսի 12-ի օրենքին ցույց տալիք վերաբերմունքի հարցը։ Նիստը որոշում է խնդրել կաթողիկոսին, որ նա դիմի ցարին եկեղեցական գույքի կառավարումը նախկին վիճակում թողնելու համար։

Օգոստոսի 4-ի կոնդակով[2] Խրիմյանը պատվիրում է սինոդին առայժմ չհրապարակել օրենքը, քանի որ այն ընդունվել է առանց իրեն տեղյակ պահելու և ինքը պետք է դիմի ցարին։ Օգոստոսի 6-ին կաթողիկոսը հեռագրում է Պլևհին, խնդրելով հետաձգել օրենքի կիրառումը և հնարավորություն տալ դիմելու ցարին։ Հետաքրքիր է, որ մի օր առաջ, Պլևհն հետևյալ հեռագիրն էր ուղարկել էջմիածին. «Տեղեկանալով, որ հունիսի 12-ի Բարձրագույն հրամանի կատարումը եկեղեցական ստացվածքի մասին ձգձգվում է, խնդրում եմ Ձերդ Սրբազնությունից անմիջապես կարգադրություն անել այս մասին։ Ամեն հապաղումն, որպես անհնազանդություն թագավորի կամքին, ծանր հետևանքներ կունենա»[3]։

Օգոստոսի 9-ին էջմիածնում խորհրդակցության են հավաքվում սինոդի անդամները և թեմական առաջնորդները։ Նրանք նույնպես որոշում են դիմել ցարին, և, եթե վերջինս չբավարարի օրենքը վերանայելու խնդրանքը, ապա իրենք հրաժարական կըտան, «որովհետև Ռուսահայոց թեմերում գտնված ստացվածքները պատկանում են օրինական տնօրինությամբ ոչ միայն Ռուսահայոց եկեղեցուն, այլև Տաճկաստանում, Պարսկաստանում և ի սիյուս

---

1 Տե՛ս ՀՊԿՊԱ., ֆ. 56, ց. 4, գ. 333, էջ 7։

2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 107, մ. 1, էջ 218։

3 ՀՊԿՊԱ., ֆ. 57, ց. 1, գ. 433, էջ 12 հ. կ.։

աշխարհի ցրված բոլոր հայերին և ընդհանուր հայ եկեղեցուն, և որովհետև այդ բոլոր ստացվածքը նվեր է հազար վեց հարյուր տարի առաջ ապրող պապերի, որոնց կտակը, իբրև աստվածային սբ. ավանդություն պարտավոր ենք համարում անխախտ պահել, ուստի և որպեսզի չմեղանչենք այդ սբ. ավանդության և կարգի դեմ, մենք մեր իրավասությունից բարձր ենք համարում այդ ստացվածքների հանձնումը...»[1]:

Երկու օր հետո նման որոշում է հանում նաև Սուքիաս Պարոյանի նախագահությամբ կայացած վանահայրերի ու առաջնորդական փոխանորդների ժողովը:

Օգոստոսի 10-ին կաթողիկոսը հեռագրում է անձամբ ցարին և կրկնում Պլևին ուղարկած հեռագրի խնդրանքը: Երեք օր հետո ստացվում է խիստ պատասխան Պլևիից: Նա հայտնում էր կայսեր անբավականությունը էջմիածնի ըմբոստությունից, օգոստոսի 4-ի կոնդակը համարում «մեղանչում ամենահպատակության պարտքի դեմ»: Պլևին գրում էր, որ կայսրը հրամայել է իրեն՝ «հայ-լուսավորչական հոգևորականության ավելի տևողական անհնազանդության դեպքում մտածել այն մասին, թե արդյոք ո՞ր չափով ռուս միապետության կառավարությանը նվիրված հայ-լուսավորչական եկեղեցու կազմակերպությունը շարունակում է համապատասխանել պետության շահերին»[2]: Հայտնում էր նաև, որ կայսրը մերժել է կաթողիկոսի խնդրանքը անձամբ նրան ներկայանալու մասին:

Սա լուրջ նախազգուշացում էր էջմիածնին: Կառավարությունը հույս ուներ եկեղեցու կազմակերպությունը արմատական վերակառուցման ենթարկելու սպառնալիքով սպիսկել նրան հնազանդվելուց:

Պլևիի նամակի մասին շուտով հայտնի դարձավ հանրությանը: ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն իր հրատարակած «Դիմակը պատռված է» թռուցիկում տպագրից նամակի լրիվ տեքստը: Հակառակ ցարիզմի սպասումներին, այն էլ ավելի զրգռեց հուզված ժողովրդին:

Էջմիածինն արդեն արել էր վճռական քայլը և նահանջելու տեղ չուներ այլևս: Կաթողիկոսը որոշեց հոգևորականությանն արգելել մասնակցելու գույքի հանձնման արարողություններին: Օգոստոսի 21-ին հատուկ կոնդակով նա առաջարկեց սինոդին ոչ

---

1 Նույն տեղում, ֆ. 56, ց. 4, գ. 333, էջ 39:

2 «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ—1902—1921», Երևան, 1960, էջ 661:

մի կարգադրություն չանել հունիսի 12-ի օրենքի կապակցությամբ առանց իր դիտության։ Ավելին, նա Սևանի վանք աքսորեց Աստրախանի և Սուրբ Էջմիածնի երեք քահանաների, որոնք մասնակցել էին եկեղեցական գույքի հանձնմանը։ Այս բանը խիստ գրգռեց իշխանություններին, որոնց պահանջով միայն քահանաների պատիժը վերացվեց։

Այդ օրերին Թիֆլիսում երևան եկավ «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե» կոչվող մի մարմին։ Դա շտապ կազմված մի կազմակերպություն էր և չուներ որոշակի ծրագիր, բայց այնուամենայնիվ փորձեց ուղղություն տալ տարեբայնորեն ծավալվող շարժմանը։

Կոմիտեն կապ հաստատեց Էջմիածնի հետ, և վերջինիս քայլերը շատ անգամ թելադրվում էին նրա կողմից։ Լևոն, որ կապված էր կոմիտեի հետ, հանձնարարություն ստացավ պատմական տեղեկանք կազմել հայ եկեղեցական գույքի գոյացման մասին, որը հետագայում օգտագործվեց ցարին ուղարկված կաթողիկոսի դիմումի մեջ։

Իր մի շարք կոչերում ու թռուցիկներում կոմիտեն կոչ էր անում հայ ժողովրդին չենթարկվել ցարի կամքին, բողոքի ձայն բարձրացնել, բոյկոտի ենթարկել օրենքը, դիմել զենքի։ Օգոստոսի 24-ին Բաքվում տարածվեց «Հայ ժողովուրդ, այժմ ի՞նչ լռենք» թռուցիկը։ Առանձնապես ուշագրավ էր «Ռուս համամարդաքացիներ» թռուցիկը՝ գրված ռուսերեն լեզվով։ Այն ուղղված էր Կովկասի ռուս բնակչությանը, որտեղ բացատրվում էր օրենքի խեղկատակ իմաստը և արդարացվում հայերի դժգոհությունը։ Մասնավորապես թռուցիկում ասվում էր, որ «եթե դա լիներ ինքնավար ժողովրդի կողմից կատարվող բռնագրավում, եթե կառավարումը հոգևորականության ձեռքից անցներ որևէ ընտրովի հիմնարկության ձեռքը, որը ներկա կլիներ հասարակական հսկողությանը, ապա դրա հետ կարելի էր հաշտվել։ Իրականում տեղի է ունենում ճիշտ հակառակը. ունեցվածքը, այդ տեսակետից ինքնավար, ժողովրդից և ընտրովի եկեղեցական իշխանություններից անցնում է ոչ ոքի կողմից չընտրված ինքնակալական կառավարության ձեռքը»[1]։ Թռուցիկն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Մենք չենք կասկածում, որ ռուս ժողովրդի լավագույն մասը, բացառությամբ հանցագործ, բարոյալքված ինքնակալական բյուրոկրատիայի, կմիանա ինքնակալության ճնշման նոր դրսևորման դեմ մղվող մեր

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1101, ց. 1, գ. 983։

բողոքին, այն ինքնակալության, որի դեմ ռուս ժողովուրդն արդեն ելել է վերջին, օրհասական կռվի»[1]:

Նույն վերնագրով մեկ ուրիշ թռուցիկում կոմիտեն, ժխտելով Անդրկովկասի մյուս ժողովուրդների նկատմամբ հայերի ագրեսիվության մասին ցարիզմի տարածած սուտ լուրերը, գրում էր. «Ուխտադրուժ կառավարությանը չի հաջողվի թշնամություն դրել ժողովուրդների միջև, որովհետև հայերը լավ են հասկանում, որ ամբողջ չարիքը ինքնակալական կառավարության մեջ է, նրանք հավասարապես ոչինչ չունեն ո՛չ բազմաչարչար ռուս ժողովրդի, ո՛չ թաթարների ու վրացիների դեմ. նրանք գիտեն, որ իրենց ընդհանուր թշնամին մեկն է՝ ինքնակալական կառավարությունը և պատրաստվում են ընդհանուր ուժերով պայքարել նրա դեմ»[2]:

Այս ժամանակ հրապարակ եկավ դաշնակցությունը: Նա, որ մինչ այդ անտարբեր էր ռուսահայերի գործերի նկատմամբ, գերիշխող դիրք գրավեց «Ինքնապաշտպանության կոմիտեում» և որոշեց օգտագործել ժողովրդի ըմբոստությունը ու նրան տալ իր ցանկացած ուղղությունը: Դաշնակցության զեկավարներից Ռոստոմը (Ս. Զորյան) իր վրա վերցրեց զինավոր դիրիժորի պարտականությունը: Անդրկովկասում նկատելի կերպով աշխուժացան նաև հնչակյանները:

Շուտով ժողովրդական ընդվզումները նոր թափ ստացան:

Օգոստոսի 24-ին էջմիածնում տեղի ունեցավ մեռոնօրհնեքի արարողությունը, որը նշանակված էր սեպտեմբերի 28-ին, սակայն կաթողիկոսը այն առաջ էր դրել բարդություններից խուսափելու համար: Չնայած դրան, էջմիածնում հավաքվել էր երեք հազարի չափ մարդ: Արարողությանը ներկա մի քանի հարյուր կանայք առանձին գնացին կաթողիկոսի մոտ և պահանջեցին ոչ մի պայմանով չհանձնել եկեղեցական գույքը: Մեկ օր առաջ, էջմիածին գալու նպատակով, Իգդիրից դուրս եկած ամբոխը ընդհարվել էր ոստիկանության հետ և զոհեր տվել:

Նույն օգոստոսի 24-ին Կարսում Մ. Մուրադյանի հոգեհանդստի առիթով շրջակա գյուղերից մեծ բազմություն էր հավաքվել, որն իր հետ բերել էր 50-ի չափ բողոքի պետիցիաներ: Քաղաքում հուզված վիճակ էր ստեղծվել, մինչև ուշ գիշեր ժողովուրդը շրջել էր փողոցներում, միտինգներ արել, վճռականություն հայտնել մինչև վերջ պայքարելու իր իրավունքների համար: Կարգ հաս-

---

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, ֆ. 1405, ց. 530, գ. 93, էջ 100 հ. կ.:

տառելու նպատակով կանչված զորքը այնպես էլ ձեռնունայն հեռացել էր։

Սակայն օգոստոսի 29-ին Գանձակում տեղի ունեցած դեպքերը վերապանցեցին բոլոր սպասումները։ Աւավոտյան հուզված ամբոխը զանգակահարությամբ հավաքվում է եկեղեցու մոտ ու շարժվում դեպի Բենիկ վարդապետի բնակարանը։ Ամբոխն սկսում է քարերով ջարդել տան ապակիները, գոչելով, որ ինքը թույլ չի տա իրեն պատկանած կալվածքը հանձնել պետությանը։ Վարդապետը աշխատում է հորդորներով հանգստացնել ժողովրդին, որն սկսում է ցրվել։ Այդ ժամանակ դեպքի վայրն է հասնում փոխ-նահանգապետ Անդրևևն իր հետ բերելով երկու վաշտ զինվոր։ Զինվորների երևալը դարձյալ գրգռում է ժողովրդին։ Ցրվելու համար տրված հրամանին ամբոխի միջից պատասխանում են քարեր նետելով, լսվում են կրակոցներ։ Երբ ցուցարար մի բանվոր մոտենում է Անդրևևին և ասում, որ գույքը չեն հանձնի, վերջինս հանում է ատրճանակը և տեղն ու տեղը դնդակահարում բանվորին։ Ապա հրամայում է զորքին կրակ բացել ժողովրդի վրա։ Տասը սպանված և 70-ի չափ վիրավոր, որոնց մի մասն էլ հետո է մահանում— ահա վինվորների տված երեք համազարկի արդյունքը։ Մյուս օրը իշխանությունները թույլ չեն տալիս եկեղեցական ծիսակատարություններ կատարել և սպանվածները թաղվում են զորքի ուղեկցությամբ։

Գանձակի արյունահեղության լուրը ցնցեց Անդրկովկասի հայությանը։ Օգոստոսի 31-ին Թիֆլիսի Վանքի եկեղեցում Գանձակի զոհերի համար հոգեհանգիստ եղավ, որին մի քանի հազար մարդ էր հավաքվել։ «Հոգեհանգստից հետո Տեր-Արարատյան քահանան նղովք կարդաց եկեղեցական կալվածքների առման համար։ Նույն այդ ժամանակ ցրվում էին հեղափոխական կոչեր»[1]։

Դուրս գալով եկեղեցու բակից, զրգռված ամբոխը դեմ առավ նախօրոք կանչված զորքին։ Հին բոլշևիկ Գ. Մելիք-Գրիգորյանը այդ դեպքի մասին հիշում է. «Թիֆլիսի մայր եկեղեցու մոտ հավաքված հավատացյալների բողոքի ցույցին միացան քաղաքի երկաթգործարանի արհեստանոցների բանվորները՝ դրոշակներով ու ռևոլյուցիոն լոզունգներով։ Սակայն ոստիկանությունը զենքի ու-

---

1 «Մշակ», 1903, № 197։ (Այս հաղորդագրությունը արտատպված էր «Պրավիտելստվեննի վեստնիկ»-ից։ «Մշակը» հնարավորություն չուներ սեփական լուրեր հրապարակել նման դեպքերի մասին)։

ժով ցրեց ցույցը։ Ցուցարարների մի մասին անհամար տանջանքների ենթարկեցին, ձերբակալեցին ու բանտ նետեցին»[1]։

Ոստիկանության ու զորքի հետ ընդհարման ժամանակ երկու հոգի սպանվեցին, եղան շատ վիրավորներ, ձերբակալություններ։ Հաջորդ օրը նշանակված էր եկեղեցական դույլի ընդունումը և Գոլիցինն այն պլուխ բերելու համար Վանքի եկեղեցու և Ներսիսյան դպրոցի շրջակայքի փողոցները վեր էր ածել «ռազմական ճամբարի»։

Գանձակի զոհերի համար հոգեհանդիստներ ու միաինդներ եղան նաև մի շարք այլ վայրերում՝ Մեծ Ղարաբլիսայում, Դիլիջանում և այլուր։

Օր-օրի աճող ժողովրդական հուզումն խիստ անհանգստացրեց իշխանություններին։ Գոլիցինը, հակառակ իր պնդումներին, համոզվեց, որ խաղաղ ճանապարհով հնարավոր չի լինի բռնագրավել եկեղեցական դույլը։ Պատասխանելով դույլի բռնագրավումը առժամանակ հետաձգելու առաջարկին, Պլևհին ուղղված հեռագրում նա հայտնում էր, որ «անպայմանորեն անհրաժեշտ է բոլոր միջոցներով պնդել այժմ իսկ հունիսի 12-ի օրենքի անհապաղ իրագործման վրա, քանի որ ամեն մի հետաձգում կբացատրվի որպես ղիջում ցուցաբերվող դիմադրությանը և ապագայում ևս իր հետ կբերի մեծ դժվարություններ ու նույնիսկ զոհեր»[2]։

Գոլիցինը կարգադրեց նահանգապետերին նախապատրաստվել սեպտեմբերի մեկից դույլը ընդունելու։ Ցուցում արվեց դիմադրության հանդիպելու դեպքում դիմել բռնի միջոցների, ոստիկանությունը համապատասխան հրահանգ ստացավ։ Ինչպես գրում էր Գոլիցինը՝ «ժամանակավորապես փոփոխության ենթարկվեց բազմաթիվ դինվորական մասերի նորմալ տեղադրությունը, որոնք տարբեր ժամանակներում, իմ կարգադրության համաձայն, տեղափոխվեցին ավելի կամ պակաս ժամանակով այն վայրերը, որտեղ ծագում էր կամ սպառնում էր բնակչության բացահայտ դիմադրությունը»[3]։ Կարգադրություն արվեց խստությամբ ստուգել երկաթուղային գնացքները՝ զենքի և արգելված իրերի փոխադրումը կանխելու համար, ուժեղացվեց սահմանի պահպանությունը՝ էջմիածնին օգնելու նպատակով արևմտահայերի մուտքը արգելելու համար։

---

1 «Հին բոլշևիկների հիշողություններ», հատ. 1, Երևան, 1958, էջ 88։

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 107, մ. I, էջ 23 հ. կ.։

3 Նույն տեղում, գ. 108, մ. II, էջ 285 հ. կ.—286։

Թիֆլիսի նահանգապետի նախաձեռնությամբ մի հայտարարություն տարածվեց, որն իբր ժողովրդական բարբառով, անշնորհք լեզվով գրված մի թուղթ էր։ Այնտեղ իշխանությունը ճըգնում էր հանգստացնել բորբոքված կրքերը, հավաստիացնում էր, որ գույքի ընդունումը միայն բարիք կբերի, կվերանան գույքերի համար եղած նախկին «կռիվն ու զալմաղալը»։ «Ամենքին լավ հայտնի է,— գրված էր նրանում,— թե ոչով երբեք ոչինչ չի կորցրած, երբ հանձնել են իրանց խնայած փողերից Պետական գանձարաններում պահելու համար»[1]։

Իշխանությունների այս միջոցառումներին ինքնապաշտպանության գաղտնի կոմիտեն պատասխանեց հատուկ «ազդով», որտեղ կոչ էր արվում ենթարկվել կաթողիկոսի հրամանին և կամավոր չհանձնել գույքը։ Հոգևոր պաշտոնյաները, խիստ պատժի սպառնալիքով, զգուշացվում էին չհանձնել գույքի ցուցակները, դանձարկղների բանալիները ու չտորթագրել ընդունման արձանագրությունները։

Խիստ լարված պայմաններում պետական հանձնաժողովները, զորքի ու ոստիկանության պաշտպանությամբ, սեպտեմբերի 1-ից ձեռնամուխ եղան եկեղեցական գույքի ու կալվածքների ընդունմանը։ «Հին տաճարների բակերում շողացին ավիններ, ոստիկանությունը պատսպարեց ելալ գյուղերն ու ավանները, վերսկսվեց տառապանքը՝ հանուն օրենքի...»[2]։ Ամենուրեք եկեղեցու երեցփոխներն ու քահանաները հրաժարվում էին գույքի հանձնմանը մասնակցելուց, ցուցադրական կերպով հրաժարական էին տալիս պաշտոնից, թաքցնում էին գույքն ու կապիտալները։ Գաղափած ոստիկանությունը հաճախ էր ուժի դիմում, սոսկալի ծեծի ենթարկում դիմադրողներին։ Այդ մասին Մ. ք. Թումանյանը Վ. Ադուլիսից գրում էր. «Ս. Աստվածածնա փոխ-Հոգաբարձու պ. Պողոս Աղամիրյանցին ձիավոր սարաժնիկներով ոտով ուղարկեցին Աստվածածնա ուխտատեղին, ուր իրանց գնալուց հետո սարդում են հետները ման գալ ու դորա ունեցած հողերը ցույց տալ և ցանկացած ցուցմունքները չստանալով՝ հայհոյանք թափելով գլխին, գավառապետը հրամայում է թակել, որ կատարյալ նահատակություն է կրում և մինչև հիմա պառկած է անկողնում»[3]։

Շատ տեղերում հանձնաժողովները ստիպված էին լինում կոտրել եկեղեցիների դանձարկղները։ Ժամանելով որևէ բնակա-

1 ՀՊԿՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 50, էջ 71։
2 Է. Ակնունի, Դեպի կռիվ, էջ 166։
3 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 333, էջ 233։

վայր, հանձնաժողովի անդամները հաճախ ականատես էին լինում եկեղեցիների վրա բարձրացված սև դրոշների, կողպված խանութների, սառն ու չարագուշակ ընդունելության։

Երևանի փոխ-նահանգապետ Նակաշիձեի հանձնաժողովը կարուկ դիմադրության հանդիպեց էջմիածնում։ Վանքի վարչությունը հրաժարվեց նրան տրամադրել դանձարանի բանալիները և իր կողմից ներկայացուցիչ նշանակել։ Կաթողիկոսը Նակաշիձեին հայտարարեց, որ ինքը հավատարմության երկու երդում է տվել. «Համաձայն տված երդման՝ հավատարիմ լինել ցարին, ես չեմ կարող մերժել, բայց համաձայն նաև իմ ժողովրդին տված հավատարմության երդման՝ չեմ կարող հանձնել»[1]։ Կաթողիկոսը հայտնում է, որ ինքը դիմել է ցարին վանքի կապիտալին ձեռք չտալու խնդրանքով և առաջարկում է մինչև պատասխանն ստանալը կընքել դանձարանի սենյակը։ Նակաշիձեն այդպես էլ վարվում է և մեկնում գավառում եղած եկեղեցական գույքն ընդունելու։

Նախօրոք էջմիածնի շրջակայքը ուժեղացվել էր լրացուցիչ զորամասերով, և դրա շնորհիվ հանձնաժողովը կարողանում է ահաբեկման հանապարհով դուրս բերել Օշականի, Աշտարակի, Եղվարդի, Վաղարշապատի էջմիածնապատկան կալվածքների բռնագրավումը։ Սեպտեմբերի 25-ին հանձնաժողովը վերադառնում է էջմիածին, առանց վանքի ներկայացուցիչների ջարդում է դանձարանի դուռը և ամբողջ դրամն ու արժեթղթերը (մոտ 350 հազ. ռուբլի) վերցնում։ Հոգևորականները դանձարանի սենյակ են մտնում հանձնաժողովի հեռանալուց հետո միայն։ Նրանք այնուհետև կոտրատված պահարանները ցուցադրում էին վանքի այցելուներին, որը դադարեցվեց միայն նահանգապետի կարուկ պահանջից հետո։

Երևանի նահանգում գույքի ընդունումը լուրջ ընդհարումներ չառաջացրեց, որովհետև այնտեղ վխտում էին ոստիկանական գործակալներն ու կազակային հարյուրյակները։ Միայն Ղամարլուում հուզված ժողովուրդը ընդհարվեց զորքի հետ, որի ժամանակ վերջինիս համազարկից սպանվեց երեք հոգի, եղան վիրավորներ։ Նախիջևանում, Մաստարայում, Ազուլիսում, Նոր Բայազետում և մի շարք այլ վայրերում տեղի ունեցած հուզումների ժամանակ ոստիկանությունը կատարեց բազմաթիվ ձերբակալություններ, շատերն աքսորվեցին։ Դիմադրության պատճառով

---

[1] «Искра», № 50, 15 октября, 1903.

հանձնաժողովն սոխրված եղավ ձեռնունայն վերադառնալ Ալեքսանդրապոլից և երկու ամիս անց կրկնել իր այցելությունը։

Հասարակական լայն արձագանք գտան Բաքվի դեպքերը։ Դեռևս չէին մարել պրոլետարիատի հուլիսյան հզոր գործադուլի ալիքները, երբ քաղաքը դարձյալ ցնցվեց հայկական ընդվզումից։ Սեպտեմբերի 2-ին, եկեղեցական դույլի ընդունման որը, ժողովուրդը զանգակահարությամբ հավաքվեց Պարապետ հրապարակի վրա գտնվող հայոց եկեղեցու մոտ։ Եկեղեցու բակում խմբված ամբոխը որոշել էր արգելել հանձնաժողովի մուտքը։ Կանչվեցին կազակային երկու հարյուրյակ, Սալյանիի գնդի զորամասեր։ Կարճատև փոխհրաձգությունից հետո զինված երիտասարդների մի մեծ խումբ փակվեց եկեղեցում և ուժեղ զանգակահարության տակ շարունակեց օրհասական կռիվը գերակշռող ուժերի դեմ։ Իշխանությունները, սարսափելով նոր բարդություններից, որոշեցին դիմել խորամանկության։ Քաղաքի ազդեցիկ հայերի միջոցով նրանք բանակցեցին պաշարվածների հետ և խոստացան դիմադրությունը դադարեցնելու դեպքում բոլորին ներել։ Միաժամանակ Կասպիական նավատորմը մոտեցվեց ափին։ Բայց, երբ դիմադրողները դուրս եկան եկեղեցուց, նրանք անմիջապես զինաթափվեցին և ուղարկվեցին բանտ։ Զորքերի կողմից գրավված եկեղեցին կատարյալ ռազմական ճամբարի վերածվեց։ Այդ օրը ժողովուրդը տվեց 11 սպանված ու 65 վիրավոր։ Հաջորդ օրը Բաքվի արդյունաբերական շրջանների բանվորները մեծ խմբերով եկան ցույցին մասնակցելու, սակայն զգաստացած ոստիկանությունը նրանց հետ քշեց։ Քաղաքում մտցվեց ուժեղացված պարեկություն, կատարվեցին ձերբակալություններ։

Նույն օրը ժողովրդական ցասումը մոլեգնեց նաև Կարսում։ Ս. Նշան եկեղեցու մոտ հավաքված ժողովուրդը բարերով դիմավորեց մոտեցող հանձնաժողովին ու ոստիկանությանը։ Գարձյալ կանչվեցին կազակներ ու զորքեր, գարձյալ արյուն հոսեց։ Ընդհարում եղավ նաև քաղաքի ս. Աստվածածնի եկեղեցու մոտ։ Երկու սպանված, երկու վիրավոր, հարյուրի չափ ձերբակալվածներ՝ ահա Կարսի դեպքերի արդյունքը։

Ուժեղ դիմադրություն ցույց տվեց Շուշին։ Այստեղ հակացարական խմորումները լայն տարածում էին ստացել, և իշխանությունները, կանխազգալով սպասվելիք դիմադրությունը, մեծ քանակությամբ զորք և հրետանի էին կենտրոնացրել, նախազգուշական նպատակով սեպտեմբերի 15-ին նշանակված դույլի ընդունումը երեք օրով առաջ էին գցել։ Ժամանել էր Գանձակի նահան-

դապետը։ Հակառակ նախօրոք արված խոստման, հոգևորականությունը հրաժարվեց մասնակցել դույքի հանձնմանը։ Հանձնաժողովը հուզված ժողովրդի աղմուկ-աղաղակի, հրմշտոցի միջով հազիվ կարողացավ հասնել նահանգապետի իջևանատեղին։ Այստեղ կենտրոնացված զորքերի ու ամբոխի միջև տեղի ունեցավ ընդհարում, կազակները շղթա կազմեցին ու համազարկ տվին, իսկ նրանց վրա կրակում էին տների կտուրներից ու լուսամուտներից։ Նոր զորամասեր կանչվեցին։ Չդիմանալով հնշմանը, ժողովուրդը նահանջեց, թողնելով երեք սպանված ու մի քանի վիրավոր։ Հաջորդ օրը դադարած ոստիկանությունը բազմաթիվ խուզարկություններ կատարեց. հատկապես կասկածի տակ էին թեմական դպրոցի ու ռեալական ուսումնարանի սովորողներն ու ուսուցիչները։ Լուրեր տարածվեցին, որ կոնսիստորիայի շենքը ականապատված է, և դույքն ընդունող հանձնաժողովը, նախքան այնտեղ մուտք գործելը, կարգադրեց շենքի շուրջը փորել՝ հաղորդալարերը գտնելու համար։ Իշխանությունների պահանջով Շուշիի քաղաքագլուխ Իշխանյանը հեռացվեց պաշտոնից, շատերը աքսորվեցին։

Հատուկ սրություն ունեցավ ժողովրդի դիմադրությունը Լոռու շրջանում, որտեղ «տեղային ժողովրդական շարժումները ձուլվեցին աշխատավոր գյուղացիության՝ կալվածատերերի ու կուլակների դեմ մղվող դասակարգային պայքարի հետ»[1]։ Լոռու գրեթե բոլոր գյուղերը խիստ հուզված վիճակում էին։ Սեպտեմբերի 16-ին Դսեղի մոտի անտառում շրջակա գյուղերից հավաքվել էր մոտ հազար մարդ, որից 200-ը զինված, արգելելու Մարցի վանքի դույքերի բռնագրավումը։ Իշխանությունները կազակներ ու զորքեր բերել ավելցին Ջալալօղլուց, Վորոնցովկայից ու Ալեքսանդրապոլից, սանրեցին անտառը և ձերբակալեցին հարյուրից ավելի մարդ։ Բռնակցությունը զինված դիմադրություն ցույց տվեց նաև Ջալալօղլում։ «Մի քանի րոպե տևող հրաձգությունից և ուժեղ քարկոծությունից հետո,— արձանագրված է ոստիկանական հաղորդագրության մեջ,— բազմությունը, թողնելով սպանվածներ ու վիրավորներ, փախավ»[2]։ Գյուղացիներին ահաբեկելու համար զավառապետը կազակային հարյուրյակներով երկու օր «զբոսանք» կատարեց

---

1 Հ. Ս. Մելիքյան, *Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908 թթ.)*, Երևան, 1957, էջ 70։

2 *Տե՛ս* Գ. Ա. Մուրադյան, *Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին*, Երևան, 1964, էջ 52։

Դանզ, Ուզունլար, Վարդաբլուր, Կուրթան, Դյուլազարակ, Ուռուտ գյուղերում: Բազմաթիվ ձերբակալվածներ տեղափոխվեցին Թիֆլիսի Մետեխի բանտը:

Հուզումներ տեղի ունեցան Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում՝ Բաթումում, Ախալքալակում, Ախալցխայում, Դորիսում, Ջանդեղուրի գյուղերում, Նուխիում, Դերբենդում, Ղզլարում, Արմավիրում, Նոր Նախիջևանում և այլուր: Բողոքի ցույցերին հաճախ մասնակցում էին նաև մեծ թվով կանայք, ինչպես օրինակ, Կարսի մարզի Ուռուտ և Աբբյակ գյուղերում:

Ընդհանուր հուզումն այն աստիճանի էր հասել, որ Պլևեի սեպտեմբերի 15-ի կարգադրությամբ Կարս, Գանձակ, Շուշի, Նուխի քաղաքները, իսկ 21-ից նաև Ալեքսանդրապոլը հայտարարվեցին ուժեղացված պաշտպանական դրության մեջ. բնակչությանն արգելվեց խմբերով փողոցներում երևալ, խիստ հսկողություն սահմանվեց ժամանողների ու մեկնողների, պանդոկների ու տնատերերի վրա, արգելվեց զենք պահելն ու կրելը:

Այդ օրերին տարածված ՌՍԴԲԿ Կովկասյան միության «Ընկերներ» թռուցիկում ասվում էր. «Հունիսի 12-ի վայրենի օրինքը ահագին ցնցում է առաջացրել ամբողջ Կովկասում: Դեպքերը մեկը մյուսից ավելի կարևոր ու ավելի նշանակալից հաջորդում են իրար զարհուրելի արագությամբ: Ամեն մի օր, ամեն մի ժամ անընդհատ նոր լուրեր են ստացվում այն բազմաթիվ արյունահեղ ընդհարումների մասին, որ տեղի են ունենում ժողովրդի և ցարի բաշիբոզուկների միջ. լուրեր՝ Կովկասի բոլոր քաղաքներում ազատ բռնկվող հեղափոխական հրդեհի մասին»[1]:

Սակայն ժողովրդական պայքարը միայն արանով չսահմանափակվեց: Ցարական կառավարության դեմ ուղղված օբստրուկցիան ընդունեց բազմապիսի ձևեր ու դրսևորումներ: Նահանգապետերն իրենց զեկուցագրերում դժգոհում էին, որ ժողովուրդը խիստ մեհամառում է հանդես գալիս, բաբցնում ու հովանավորում է ապստամբներին, արհամարհանքի ու ատելության մթնոլորտ ստեղծում պետական մարմինների նկատմամբ:

Այդ ժամանակ ինքնապաշտպանության գաղտնի կոմիտեները սկսեցին տեռորի տակտիկա կիրառել մատնիչների և նրանց նկատմամբ, ովքեր օժանդակում էին իշխանություններին. սպառնագին զգուշացումից հետո տեռորի ակտն իրագործվում էր ամե-

---

[1] «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 41:

նայն անողոքությամբ, հաճախ հրկիզվում էին «ազգային ուխտը» խախտողների տներն ու գույքը: Այդ ձևով էջմիածնում, ոստիկանության քթի տակ, սպանվեց ոմն Ս. Պոտոյանը: Տեռորը տարածվեց նաև ցարական ոստիկանապետների վրա: Ժողովրդական վրիժառուների դատաստանին ենթարկվեցին Դանձակի դահիճ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ, ռեակցիոներ Բոգուսլավսկին, գրնդապետ Բիկովը, հետագայում նաև՝ Բաքվի նահանգապետ Նակաշիձեն: Էջմիածնի գավառապետ Շմերլինգը ծանր վիրավորվեց: Միայն Երևանի նահանգում և Կարսի մարզում տեռորի էին ենթարկվել քսանից ավելի պաշտոնյաներ: Բոգուսլավսկու սպանության համար իշխանությունները երկու ամսով էկզեկուցիայի ենթարկեցին Իգդիրը, այնտեղ բնակիչների հաշվին ապրելու ուղարկելով կազակային երկու հարյուրյակ և տասը հազար ռուբլու տուգանք նշանակելով:

1903 թ. հոկտեմբերի 14-ին հնչակյան երեք տեռորիստներ Թիֆլիսի բուսաբանական այգու մոտ պրոսպանի կյանք Գոլիցինին ծանր վիրավորեցին և իրենք էլ նահատակվեցին ոստիկանության հետ ունեցած ընդհարման ժամանակ: Կատաղությունից ու սարսափից խելքը կորցրած իշխանը կարգադրեց փորել փոխարքայական պալատի շուրջը, կասկածելով, թե հեղափոխականները գնացնափոր ուղի են անցկացնում դեպի իր կացարանը. գիշերները նրա ականջին խուլ աղմուկ էր հասնում: Ի վերջո պարզվեց, որ դա մոտակայքում գտնվող տպարանի աղմուկն էր: Հայ եկեղեցին խույս տվեց Գոլիցինին ցավակցություն հայտնելուց և եկեղեցական զանգակահարությունից, ինչ որ անում էին մյուս գավառանքների եկեղեցիները:

Գոլիցինի վրա կատարված մահափորձի առթիվ ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը տարածեց «Գագանը վիրավորված է» վերնագրով թռուցիկը[1]: Այնտեղ նշվում էր, որ կառավարչապետի վիրավորվելը ցնծությամբ է ընդունվել, որ նա արժանի էր ավելի խիստ պատժի, որ պատմությունը չի մոռանա մահափորձ կատարած երեք անձնազոհ մարտիկներին: Սակայն թռուցիկն ղգուշացնում էր, որ տեռորի տակտիկան հեղափոխական դիմադրության ճիշտ ուղին չէ և կոչ էր անում բոլոր ուժերով պայքարել ամեն տեսակ չարիքների արմատը ինքնակալությունը տապալելու համար:

Գոլիցինի մահափորձից հետո ցարիզմն էլ ավելի սաստկաց-

---

1 Տե՛ս «Ռեվոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 64:

ընց խաղությունները։ Ձերբակալություններն ու խուզարկությունները սովորական երևույթ դարձան։

Էջմիածնի անհաշտ ու ըմբոստ վարքի դրսևորում նկատվեց կաթողիկոսի այն կարգադրությունը, որով հոգևոր իշխանություններին արգելվում էր կառավարությունից ընդունել խլված գույքի նկամուտներից հատկացվելիք տոկոսները[1]։ Կաթողիկոսը պատվիրեց նաև եկեղեցիներում հանդանակություն սկսել հօգուտ դպրության միջոցներից զրկված Էջմիածնի։ Լրացուցիչ վճար նշանակվեց թաղման, հարսանիքի, կնունքի և այլ արարողությունների համար։ Թեև իշխանություններն արգելեցին այդ բանը, բայց ժողովուրդը մեծ մասամբ իրեն ենթարկում էր կամավոր տուրքերի և օգնում եկեղեցուն։ Առանձին անհատներ թեմական դպրոցներում որդեգիրների համար միջոցներ էին տրամադրում։ Երևանի թեմական դպրոցը փակումից փրկելու համար նյութական օգնություն ցույց տվեցին նաև Ալեքսանդրապոլի արհեստավորները։ Լեոն նշում էր, որ «հասարակությունը ցույց տվեց մի եռանդ և համերաշխություն, որի նմանը տեսնված չէր»[2]։

Անդրկովկասի շատ վայրերում, հենց Գոլիցինի վկայությամբ, հայերն իրենց գործերով դադարել էին պետական հիմնարկներին դիմելուց, նրանք ստեղծել էին տեղական ինքնավարություն, սեփական դատարաններ։ «Կարճ ժամանակում այդ հասարակական դատարաններն այնպիսի հեղինակություն ձեռք բերեցին, որ նրբանց սկսեցին դիմել նաև մոտակայքում բնակվող մահմեդականները»[3]։ Թիֆլիսի հայ հասարակության բողոքի ձևերից մեկն էլ օպերային թատրոն հաճախելուց հրաժարվելն էր, որի համար Գոլիցինն ստիպված էր կառավարությունից լրացուցիչ միջոցներ խնդրել թատրոնը անանկանալուց փրկելու համար[4]։

Հունիսի 12-ի օրենքից հետո իշխանություններին ակնհայտ դարձավ պետական դպրոցների նկատմամբ հայերի ընդգծված սառնությունը։ Այդ մասին հայտնում էր Երևանի նահանգապետը 1904 թ. իր զեկուցագրի մեջ։ Լինում էին դեպքեր, երբ դպրոցների հայ աշակերտները բոյկոտի էին ենթարկում հայերի նկատմամբ ինչնամաբար տրամադրված որոշ ուսուցիչների դասերը (վաղարշապատ), հրաժարվում էին դպրոց հաճախել, մինչև որ այնտեղ չավելացվեն հայոց լեզվի դասերը (Իգդիր)։ Գույքի ընդունման օրերին

---

1 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 109, էջ 107։*

2 Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 484։

3 А. К. Дживелегов, Армяне в России, стр. 34.

4 *Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 108, էջ 61։*

դպրոցների հայ աշակերտները գրեթե ամբողջությամբ չէին հաճախում դասերին: Ալեքսանդրապոլում քաղաքային ուսումնարանի մի խումբ աշակերտներ այրեցին ցարի ու Յանովսկու նկարները և փորձեցին հրդեհել շենքը, կրակեցին տեսչի վրա, որը արգելել էր դպրոցում հայերեն խոսել:

Դրան հակառակ, ինչպես պատմում է Լեոն, «Հայոց լեզուն, գրականությունը դասնում էին ուսումնասիրության առարկա և այնպիսի շրջաններում, որոնք մինչև այդ չէին հետաքրքրվել նրանցով: Գաղտնի դասեր, դասախոսություններ, ընթերցանություններ— ահա ինչ էր նկատվում ոչ միայն Թիֆլիսում և այլ քաղաքներում, այլև նույնիսկ գավառական խուլ անկյուններում: Դուր չէր խոսք գարձել, թե «Գոլիցինը հայերին հայ գարձրեց»[1]: Գյուղերում, մանավանդ Շիրակի կողմերում, կազմակերպվել էին գաղտնի դպրոցներ: «Ես նույնիսկ իմացա,— շարունակում է Լեոն,— որ Ղարսի շրջանում այդ գաղտնի դպրոցներն ունեն և թեմական տեսուչ և այդ տեսուչն էր Ն. Աղբալյանը»[2]:

Հայերի ազգասիրությունը երբեմն նույնիսկ ծայրահեղությունների էր հասնում: Պատահում էր, որ այդ ծայրահեղությունները կրում էին հակառուսական բնույթ: Օրինակ, «Ալեքսանդրապոլի փողոցներում բրածեծ էին անում անցորդներին կամ այլանդակում նրանց «սֆաթը»— նրա ռուսերեն խոսելին»[3]: Շուչիում թղթեր փակցվեցին, որոնք կոչ էին անում ժողովրդին չհաճախել ռուսական ներկայացումները: Նույնիսկ ընդհարումներ եղան հայ-լուսավորչականների և ուղղափառության ընդունած հայերի միջև: Հայերին արգելում էին ամուսնանալ ռուսների հետ, նույնիսկ էջմիածնի գավառում տեսուրի ներարկվեց մի հայ ընտանիք, որի աղջիկը ամուսնացել էր ռուս ոստիկանի հետ: Սրանք մանրբուրժուական ազգայնական նեղմտության արտահայտություններ էին, որոնք տեղ էին գտնում ոտնահարված ինքնասիրությունից հավասարակշռությունը կորցրած մարդկանց մոտ:

Այստեղ տեղին է հիշել Լենինի խոսքերը ցարիզմի վարած ազգահալած քաղաքականության ու դրա դեմ արդյունքների մասին. «Ցարիզմի ժամանակ վերջիններիս (փոքր ազգերի— Վ. Ե.) նկատմամբ իր դաժանությամբ և անհեթեթությամբ անլուր ազգային ճնշումը կուտակել էր ոչ-լիիրավ ժողովուրդների մեջ ուժգին

---

1 Լեո, Անցյալից, էջ 134—135:

2 Նույն տեղում, էջ 135:

3 Ե. Մելիք-Յոլչյան, Հայաստանի բանվորական շարժման պատմությունից. 1903—1907. Երևան. 1930, էջ 52:

աստելություն դեպի միապետները։ Չպետք է զարմանալ, որ այդ աստելությունը դեպի նրանք, ովքեր արգելում էին մայրենի լեզվի դործածությունն անգամ և ժողովրդական մասսաներին անդրագիտության էին դատապարտում, այդ աստելությունը տարածվում էր նաև բոլոր վելիկոռուսների վրա»[1]։

Հայ ժողովրդի հակացարական պայքարը հաջորդ, 1904 թվականին ընդունեց նոր հրանդներ, թեև նկատելիորեն մեղմացավ ու մանրացավ։ Ոստիկանության ու զորքի հետ այլևս խոշոր ընդհարումներ չեղան։ Հունիսի 12-ի օրենքի տարեդարձի կապակցությամբ Երևանում, Թիֆլիսում, Բաքվում, Ալեքսանդրապոլում և մի քանի այլ քաղաքներում փորձեր եղան նոր հուզումներ կազմակերպել, բայց ուշքի եկած իշխանությունները ոստիկանական միջոցներով կանխեցին դեպքերի սրումը։

Կովկասահայության մղած պայքարը լայն արձագանք գտավ արտասահմանի հայերի շրջանում, հատկապես Արևմտյան Հայաստանում։

Երբ ստացվեց հունիսի 12-ի օրենքի լուրը, Պոլսի հայոց պատրիարքարանն սկսեց դավառներից բազմաթիվ դիմումներ ստանալ, որոնք պահանջում էին ակտիվորեն բողոքել ռուսական կառավարության վարքագծի դեմ։ Դույքի գրավման շրջանում նկատելի էին դարձել արևմտահայերի սահմանն անցնելու դեպքերը. էջմիածնի կողմերում շրջում էին նրանց դինված խմբերը՝ նպատակ ունենալով օժանդակել ժողովրդական պայքարին։

Դեպքերի հենց սկզբից էջմիածնի և Պոլսի պատրիարքարանի միջև սերտ նամակագրություն հաստատվեց։ Կաթողիկոսը նույնիսկ այնտեղ և Երուսաղեմ ուղարկեց Մ. ք. Մելյանին, հավանաբար, համապատասխան տեղեկություններ հաղորդելու և գործողությունների միասնական վարքագիծ մշակելու համար։ Էջմիածնում բողոքի բազմաթիվ նամակներ ստացվեցին արտասահմանի հայ գաղութներից ու եկեղեցիներից։ Արդեն օգոստոսի 10-ին Պոլսի տասը եպիսկոպոսներ պատրիարք Օրմանյանի գլխավորությամբ դիմեցին կաթողիկոսին, փաստարկելով, որ Ռուսաստանում եղած եկեղեցական ունեցվածքը պատկանում է աշխարհի բոլոր մասերում սփռված հայությանը, որ սեփականության իրավունքը էջմիածնին տրված է ցարահաստատ «Պոլոժենյեով»։ Տեղեկանալով, որ կառավարությունը ցանկանում է վերանայել հայ եկեղեցու կանոնադրությունը, Պոլսից խորհուրդ տվեցին կաթողիկոսական աթոռը տեղափոխել արտասահման։

1 *Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 419։*

Մարսելից Գևորգ եպս. Յուրուճյանը առաջարկում էր ներկայացուցիչ ուղարկել Հոլանդիա և բողոք ներկայացնել միջազգային դատարանին: Եգիպտոսի առաջնորդարանից գրում էին, որ Կահիրեի մայր եկեղեցում ժամերգության հավաքված ժողովուրդը խիստ հուզվել է և իր ցայրույթն է հայտնել ցարի անօրինակ բռնության դեմ: Բուլղարիայի Սլիվնեն քաղաքի հայերը, զոհունակություն հայտնելով ժողովրդի ըմբոստության առթիվ, գրում էին. «երբեք մի դիջաններ Հայոց ազգին հարստությունը Ռուս կառավարության հանձնելու, և թող ամբողջ աշխարհ հասկնա, թե հալածված հայ ազգը և անոր Հայրապետը գեռ գիտեն իրենց իրավունքները պաշտպանել, և զանոնք ոտնակոխ ընել չտալ նույնիսկ ամենազորեղ կառավարությանց»[1]: Նման դիմումներ ու հանրագրեր էջմիածինն ստանում էր Թուրքիայից, Պարսկաստանից, Հնդկաստանից, Եվրոպայից, Սսի կաթողիկոսից, Երուսաղեմի պատրիարքից և այլն:

Իր հերթին Թուրքիայի կառավարությունն արդելից Պոլսում ցույցեր անել ռուսական կառավարության դեմ, ուժեղացրեց ռուսական դեսպանատան պաշտպանությունը, սաստից հայ մամուլին: Չնայած դրան, Պոլսի պատրիարքարանը բողոքի դիմումներ արեց քաղաքում եղած եվրոպական դեսպաններին, իսկ սեպտեմբերի 9-ին հատուկ հուշագիր ներկայացրեց Ռուսաստանի դեսպան Զինովևին: Չբավականանալով սրանով, պատրիարքարանը տարբեր ժամանակներում չորս անգամ բողոքագիր ուղարկեց ցարին: Համանման դիմումներ արեցին նաև Կիլիկիայի կաթողիկոսն ու Երուսաղեմի պատրիարքը, Եգիպտոսի, Ամերիկայի, Բավրիղի, Պարսկա-Հնդկաստանի թեմական առաջնորդները: Պլևեի ներկայացմամբ, ցարը հայտարարեց, որ իր որոշումն «անդարձ է» և բոլոր խնդրանքները մերժեց[2]:

Հայ եկեղեցու գույքի բռնագրավման ու նրա դեմ մղվող պայքարի հարցերը չվրիպեցին նաև եվրոպական մամուլի ուշադրությունից: Լոնդոնում, Փարիզում և այլ քաղաքներում հրատարակվող թերթերը տեղեկություններ ու հոդվածներ տպագրեցին այդ մասին, որոնցում դատապարտվում էր ցարիզմի քաղաքականությունը: Օրինակ, Փարիզի «Լ'էրոպեեն» («Եվրոպացիներ») շաբաթաթերթը 1903 թ. հոկտեմբերի 3-ի համարում այդ առթիվ գրում

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 333, էջ 357:
2 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 147, գ. 31, էջ 1:

էր. «Պետական բյուրոկրատիան միաժամանակ հալածում է բոլոր այսպես կոչված օտար ազգություններին և կրոնները, այն ամենը, ինչ ռուսական չէ և օրթոդոքս չէ, և թվում է, թե հսկայական կայսրությունը չի կարող ապրել ու հարատևել առանց ազգային, լեզվական ու դավանական բոլոր տարբերությունները վայրագորեն բնաջնջելու»։

Ականատես լինելով ժողովրդի վճռական բողոքին և ստանալով արտասահմանի հայության աջակցությունը, կաթողիկոսն իրեն ավելի ամուր ղգաց, Պետերբուրգ ուղարկած նրա բողոքները դարձան ավելի համառ ու ինքնավստահ։ 1903 թ. դեկտեմբերի 12-ին կաթողիկոսը ցարին ուղարկեց իր ընդարձակ բացատրությունները և խնդրեց հատուկ խորհրդակցություն հրավիրել բարձր պաշտոնյաների և իր մասնակցությամբ հարցերը քննելու և անարդարացի որոշումները վերանայելու համար։ Կաթողիկոսը համանման զրույցներով դիմեց նաև արտաքին գործերի մինիստրին և բարձրաստիճան այլ պաշտոնյաների։

Երբ 1904 թ. հուլիսի 15-ին էսեռական տեռորիստի գնդակից սպանվեց Պլևհն, կաթողիկոսն ավելի համարձակ դարձավ։ Նա նույնիսկ մերժեց եկեղեցիներում Պլևեի համար հոգեհանգիստ կատարելու մասին էջմիածնի սինոդի դատախազի պահանջը։ Հանրաճանաչ դահիճ ու սևհարյուրյակային մինիստրի սպանությունը խորին գոհունակությամբ ընդունվեց հայության կողմից։ Մանկավարժ Հովվյանը իր հուշերում պատմում է, որ երբ ինքը Հ. Թումանյանի և Ղ. Աղայանի հետ զբոսնում էր Թիֆլիսի հրապարակում, մի ծանոթ գնդապետ հայտնում է իրենց այդ սպանության մասին. «Աղայանը հենց որ լսեց այդ խոսքերը՝ «Плеве убит», պարթև ձեռքերը բարձրացրեց ու սկսեց պարել պլացի մեջտեղը, առանց ուշք դարձնելու, որ իրեն են նայում բոլորը»[1]։ Խրիմյանն այդ օրերին, չնայած, որ 84-ամյա ծերունի էր, շրջագայության ելավ Երևանի թեմի գյուղերը, կոչ արեց ժողովրդին օգնություն ցույց տալ էջմիածնին։ Այդ մասին Գոլիցինը զեկուցում էր Պետերբուրգ. «Կաթողիկոսի տրամադրությունը, որ առաջ այնքան հանդիստ, նույնիսկ ճնշված էր, այժմ խիստ կերպով փոխվել է։ Նա ներվային է դարձել, խոսում է հանելուկներով, դեն է նետել ամեն տեսակ դիվանագիտություն և բացահայտ կերպով արտահայտում է իր դժգոհությունը»[2]։

---

1 ԳԱՔ, Հովվյանի արխիվ, № 16, էջ 130։

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 109, էջ 121։

Սակայն երկրում հեղափոխական շարժման հասունացումից և հայ ժողովրդի համառ դիմադրությունից դեռևս ոչ մի եղրակացության չեկած ցարիզմը շարունակում էր սեղմել օղակը, նորանոր խստություններ էր մտցնում։ Այժմ ոստիկանական զեկուցագրերում նշվում էր, որ էջմիածինը սերտորեն կապված է հեղափոխական կոմիտեների հետ։ Գոլիցինը կառավարությանն առաջարկում էր լրացուցիչ միջոցներ տրամադրել Վաղարշապատում ոստիկանական լայն գործակալություն պահելու համար։ Գոլիցինն ու Պլևեն համոզում էին ցարին վերանայելու հայ եկեղեցու կանոնադրությունն առհասարակ, զրկելու կաթողիկոսին ամենայն հայոց հայրապետ կոչվելու իրավունքից և նրան դնելու այնպիսի վիճակում, որը կհամապատասխանի «մեկ միլիոնից մի փոքր ավելի ռուսահպատակ այլադավանների հոգևոր հովվի» վիճակին[1]։ Այս հրահրումների արդյունքն այն եղավ, որ սինոդի դրասենյակը ենթարկվեց դատախազին, սինոդից աղատվեցին «անբարեհույս» անդամները և նշանակվեցին նորերը, էջմիածնին պարտադրվեց եկեղեցական նույնիսկ ամենացածր պաշտոնյաների նշանակումը կատարել կառավարչապետի ու նահանգապետերի համաձայնությամբ։

Սրա հետ միասին իշխանություններն սկսեցին լայնորեն կիրառել հայ հոգևորականներին վարչական կարգով աքսորելու մասին 1891 թ. օրենքը։ Դեռևս 1903 թ. սեպտեմբերի 17-ին Սուրիաս արքեպս. Պարզյանը և Արիստակես արքեպս. Սեդրակյանը կանչվեցին Սամարա, որտեղ հենց երկաթուղային կայարանում նրանց ընդունեց Պլևեն։ Նույն օրն իսկ Պարզյանն աքսորվեց Օրենբուրգ, որպես ժողովրդական հուզումների կազմակերպիչ, իսկ Սեդրակյանը խիստ զգուշացում ստացավ։ Գոլիցինի վիրավորվելու առթիվ ցավակցություն չհայտնելու և ժողովրդին գրգռելու համար կառավարության պահանջով Դեորգ արքեպս. Սուրենյանցն ազատվեց Վրաստանի թեմակալի պաշտոնից։ Ռուսաստանի տարբեր վայրերն աքսորվեցին շատ քահանաներ ու հոգևոր այլ պաշտոնյաներ։ «Անդրանիկի բանդայի» համար «Մահ կամ ազատություն» գրությամբ հատուկ դրոշակ օծելու համար Խաչիկ վարդապետ Դադյանը ևս աքսորվեց։ Ելիզավետպոլի նահանգապետի ներկայացմամբ ցարը 1903 թ. հոկտեմբերի 18-ին կարգադրեց

---

1 Նույն տեղում, գ. 108, էջ 60։

փակել Շուշիի թեմական դպրոցը, իսկ նրա տեսուչ Բենիկ վարդապետան աքսորվեց։ Դպրոցի շենքը վերածվեց զորանոցի։

1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումը մեծ ոգևորություն էր առաջացրել ռնակցիոն շրջաններում։ «Նովոյե վրեմյան» սպառնագին տոնով գրում էր. «Եթե հայ որոշ հոգևորականների ժըպտում է 1863 թ. լեհ քսյոնձների դերը, ապա ռուսական պատմության գծով նրանց տգիտությունն է միայն, որ թույլ է տալիս չիմանալ այն մարդկանց հետագա ճակատագիրը, ում Մուրավյով-Վիլենսկին (Կախաղը— Վ. Ե.), ասում էր, որ մեղքն ապացուցված լինելու դեպքում նրանց «չի փրկի նույնիսկ փարաջան»[1]։ Այդ նույն շրջանում էր, որ Թիֆլիսում հրատարակվեց մի «Պատմական ակնարկ», որը ծուռ հայելու մեջ ներկայացնելով հայ եկեղեցու անցած պատմությունը ռուսական տիրապետության տակ և արդարացնելով հայ դպրոցների փակումն ու եկեղեցական գույքի բռնագրավումը, գրում էր. «Ամենափոքր հիմքն անգամ չկա, որպեսզի մենք հոգ տաննենք էջմիածնի պատրիարքի հատուկ պատվավոր դրության մասին ի սեր արտասահմանյան հայերի վրա ունեցած՝ մեզ համար բոլորովին անօգուտ և անիրագործելի, նրա ազդեցության և դրա համար զոհենք մեր շահերն ու մեր պետական արժանապատվությունը։ Այդ բանը մեզ սովորեցնում է գրեթե դարավոր պատմական փորձը, և ժամանակն է վերջապես ուսկնդրել նրա ուսանելի դասերին»[2] (ընդգծումը իմն է—Վ. Ե.)։

1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ լայն ծավալ ստացած հայկական ընդվզումը հիմնականում համաժողովրդական, տարերային շարժում էր։ Բնական էր, որ հայ հասարակական տարբեր խավերն ու կուսակցությունները պետք է իրենց ուրույն վերաբերմունքը ցույց տային այդ շարժմանը։

Անմիջական պայքարողները աշխատավոր զանգվածներն էին, բանվորն ու գյուղացին, արհեստավորներն ու մանր-բուրժուական այլ տարրերը։ Նրանք չունեին որոշակի ծրագիր, նրանց մեջ, պարզապես, արթնացել ու հորդորում էր ցարիզմի բռնությունների դեմ տարիներով կուտակված արդար զայրույթը։ Երկ-

---

1 «Новое время», 4 сентября 1903 г.

2 «Положение 11 марта 1836 г. и эчмиадзинские католикосы под русским владычеством. Историч. очерк», Тифлис, 1904, стр. 60.

րում և Անդրկովկասում նոր թափով ծավալվող հեղափոխական պայքարը, տեղի ունեցող գործադուլները, քաղաքական լայն ագիտացիան լիցքեր էին տալիս հայ աշխատավորներին, ապացուցում, որ պետք է պայքարել ցարիզմի հակաժողովրդական քաղաքականության բոլոր դրսևորումների դեմ: Ցարիզմն ինքն էր մղում ժողովրդին այդ դիտակցության՝ ավելի ու ավելի անտանելի դարձնելով ճնշումը: Ավելին, 1903 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Անդրկովկասի տարբեր քաղաքներում տեղի ունեցած արյունոտ ընդհարումների ժամանակ իշխանությունները գնդակահարեցին հայ ժողովրդի հավատը «բարեխնամ» ցարի նկատմամբ:

Հայ եկեղեցին որոշակի դեր էր խաղում: Ջանկանալով ղբրկվել ժողովրդի վրա դեռևս ունեցած իր որոշ ազդեցությունից և լրիվ մեկուսացվել, եկեղեցին կամա թե ակամա պետք է բռներ ցարիզմին դիմադրելու ուղին: Ավելին, նա շատ դեպքերում հանդես էր գալիս հրահրողի դերում, սակայն՝ իրեն հատուկ մեթոդներով, աշխատելով խազալ մարդկանց կրոնական զգացմունքների հետ, առաջադրելով պասսիվ պայքարի, լուռ բոյկոտի ուղին: Հոգևորականության վարվելակերպում ակտիվ դեր էր խաղում նրա գլուխ կանգնած Մկրտիչ Խրիմյանը, որ ժամանակին եղել էր ժողովրդական գործիչ, գործուն մասնակցություն էր ունեցել արևմըտահայերի ազատագրական շարժումներին: Կաթողիկոսանալուց հետո Խրիմյանը նկատելիորեն թեքվել էր դեպի աջ, ենթարկվելով ցարական կարգերի ու հետագիմ հոգևորականության ազդեցությանը, սակայն ազգային-ազատագրական շարժման վերելքը 1903 թ. նրա մեջ դարձյալ վերածնել էր ժողովրդական գործչին և իր զառամյալ տարիքին անսովոր աշխուժություն հաղորդել նրան:

Հայ բուրժուազիան, ենթարկվելով ժամանակի ազդեցություններին, որոշ համակրական վերաբերմունք ուներ հակացարական շարժման նկատմամբ: Սակայն նրա համակրանքը պայմանավորված էր բոլորովին այլ շարժառիթներով: Նա ցանկանում էր ազգի ինքնավարության, եկեղեցու ազատության քարոզներով շահել ժողովրդի վստահությունը: Սա մի վարքագիծ էր, որը հատկանշական էր այդ ժամանակի Ռուսաստանի բուրժուազիային ընդհանրապես: Ժողովրդական զանգվածների պայքարի խորացումն ու ծավալումը նրան սարսափեցնում էին: Բուրժուազիայի մեծ մասը, նույնիսկ, կտրականապես դեմ էր որևէ վճռական միջոցի դիմելուն: Նա, որ հաճախ էր սիրում հաշվեհարդարների ու ընդունելու-

թյունների ժամանակ հոխորտալ ազգի իրավունքների ու ազատության մասին, այժմ վախվորած մտել էր թիֆերի տակ ու համբերություն էր քարոզում։ Հատկանշական է այդ տեսակետից իշխան Ս. Աբամելիք-Լազարյանի 1904 թ. ապրիլի 4-ի նամակը կաթողիկոսին։ «Իմ խոր համոզմամբ,— գրում էր իշխանը,— միայն իսկական քրիստոնեական առաքինություններով, հնազանդությամբ ու համբերությամբ կարելի է բարելավել ներկա վիճակը և ուղի նախապատրաստել անցյալի աստիճանական վերականգնման համար»[1]։

Խիստ ուշագրավ է ազգային կուսակցությունների բռնած դիրքը։ Դաշնակցությունը, որ երկար ժամանակ ավելորդ էր համարում Ռուսաստանի գործերով զբաղվելը և իր հիմնական խնդիրը «Թուրքահայ դատի» պաշտպանությունն էր ճանաչում, այժմ կարուկ շրջադարձ կատարեց և հայտ ներկայացրեց ռուսահայերի սկսված շարժումը գլխավորելու համար։ Դաշնակցությունը կարողացավ ամենուրեք տարածել իր կազմակերպությունները, «թափանցել ամենախուլ գյուղերը» (Ստ. Շահումյան)։ Սակայն բորբոքելով հայ ժողովրդի ազգային զգացմունքները, դաշնակցությունը հետամուտ էր նրա պայքարին տալ միայն ազգային բնույթ, հեռու պահել ցարիզմի դեմ ծավալվող համընդհանուր պրոլետարական շարժումից, դասակարգային խնդիրներից։

Դեպի «ռուսահայ հարցը» թեքվեց նաև հնչակյան կուսակցությունը։ Քայքայման պրոցես ապրող հնչակյանները կարողացան 1903—1904 թվականներին որոշ աշխուժություն մտցնել իրենց շարքերում։ Դեպքերի ազդեցության տակ նրանք սկսեցին գործակցել սոցիալ-դեմոկրատների հետ, միաժամանակ չհրաժարվելով արևմտահայ շարժումը ղեկավարելու հավակնությունից։ Լինելով մանր-բուրժուական երերուն կազմակերպություն, հնչակյան կուսակցությունը չկարողացավ կայուն դիրք գրավել և ընտրել պայքարի ճիշտ ուղի, չկարողացավ գտնել ազգային հարցի որոշակի տեղը հեղափոխական պայքարում։

Մարտնչող ժողովրդին ճիշտ ուղիներ մատնանշեց Կովկասում օր-օրի մեծ հեղինակություն ձեռք բերող հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։ Ողջունելով ցարիզմի դեմ ըմբոստացած հայ ժողովրդին, սոցիալ-դեմոկրատները հենց առաջին օրվանից պարզաբանում էին, որ բոլոր չարիքների աղբյուրը ցարական իշխանությունն

---

1 ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 456, էջ 107։

է և միայն նրա տապալումով է հնարավոր վերացնել ամեն տեսակի սոցիալական ու ազգային ճնշում, որի համար պետք է միավորել բոլոր ազգերի աշխատավորների ջանքերը։ Սոցիալ-դեմոկրատական մամուլը մերկացնում էր ցարիզմի թալանչիական, համաձուլարար քաղաքականությունը, պարզաբանում հունիսի 12-ի օրենքի էությունը։ Այդ շրջանում օրենքի և ժողովրդական հուզումների առիթով բոլշևիկները տարածեցին «Դադանը վիրավորված է», «Ընկերներ», «Դիմակը պատռված է», «Բանվորներ և գյուղացիներ», «Ինքնակալությունը և հայերը», «Վճռական վայրկյան» և այլ թռուցիկներ։ Սոցիալ-դեմոկրատիան իր կազմակերպություններին կոչ էր անում գլխավորել հայկական ազգային-ազատագրական շարժումը, պայքարել առաջին շարքերում։ Այդ մասին «Ինքնակալությունը և հայերը» թռուցիկում Կովկասյան միութենական կոմիտեն գրում էր. «Կամայականության դեմ հայերի մղած պայքարում մեր տեղը առաջին շարքերումն է։

Թո՛ղ բոլոր դրոշներից բարձր ծածանվի մեր դրոշը»[1]։

Անդրկովկասի բոլշևիկների համար գործունեության ուղեցույց էր հանդիսանում լենինյան «Իսկրան», որը հայկական հուզումների հենց սկզբից ուշադիր հետևում էր դեպքերի ընթացքին։ «Իսկրայի» 1903 թ. հոկտեմբերի մեկի համարում Բ. Կնունյանցը, որն այդ ժամանակ Վ. Ի. Լենինի հետ մասնակցում էր թերթի աշխատանքներին, տպագրեց «Նոր կողոպուտ» հոդվածը՝ «Կալկաղեց» ստորագրությամբ։ Հաջորդ, հոկտեմբերի 15-ի համարում «Իսկրան» դարձյալ բավական մանրամասն նկարագրեց եկեղեցական գույքի բռնագրավման ու հայկական ընդվզումների ընթացքը։ Իր հոդվածում Կնունյանցն ուրախությամբ նշում էր, որ հայ ժողովրդի ընդվզումների հետևանքով երկրամասում խիստ աճել է թշնամությունը ինքնակալության դեմ, որ սոցիալ-դեմոկրատիայի գաղափարները սկսել են լայնորեն թափանցել հայ բնակչության մեջ։

Հոդվածին կցված խմբագրականում «Իսկրան» ուսանելի դիտողություններ էր անում ազգային շարժման վերաբերյալ։ Նշելով, որ սոցիալ-դեմոկրատները չէ, որ պետք է պաշտպանեն եկեղեցու իրավունքները, թերթը գրում էր. «Բայց մենք պահանջում ենք եկեղեցական ունեցվածքի սեփականազրկում ժողովրդական (դեմոկրատական) կառավարության կողմից՝ ժողովրդի օգտին և ոչ

---

1 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, էջ 89։

թե ոստիկանական կառավարության կողմից՝ ոստիկանության օգտին», ապա ավելացնում. «Մենք պաշտպանում ենք յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքը և, հետևաբար, պետք է անպատճառ ապստամբենք ինքնակալության բռնի ներխուժման դեմ՝ միայն հայերին վերաբերող գործերի մեջ»[1]: «Իսկրան» ավելացնում էր, որ «ոստիկանական բռնությունից մենք պետք է պաշտպաննենք և կպաշտպաննենք ոչ միայն պրոլետարներին, այլև հասարակության բոլոր դասակարգերին, այդ թվում նույնիսկ քահանաներին»[2]:

Լենինյան «Իսկրայի» և Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ծավալած գաղափարական-բացատրական պայքարը կարևոր նշանակություն ունեցավ զանգվածների ձախացման և պրոլետարիատի հեղափոխական դրոշի ներքո նրանց համախմբման գործում, որն ավելի ակնառու դարձավ, մանավանդ, ռուսական առաջին հեղափոխության տարիներին: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակվող բանվոր դասակարգը ջերմ համակրանք ցուցաբերեց հայերի հակացարական պայքարին: «Բաքվի բոլոր ազգությունների բանվորները, — գրում էր այդ օրերին «Պրոլետարիատի կռվի» թերթիկը», — ջերմորեն ողջունում էին իրենց հայ եղբայրների քաջարի կռիվը: Նրանց խորթ է ազգային ատելության ամեն մի զգացում: Առանց ազգերի խորության բոլոր պրոլետարների համերաշխությունը նրանց համար սրբազան պատգամ է»[3]:

Ազգամիջյան հակամարտություն առաջացնելու ուղղությամբ ցարական բյուրոկրատիայի ջանքերը այդ շրջանում հաջողություն չունեցան: Ավելին, ադրբեջանական բնակչությունը հայկական շարժմանն աջակցելու փորձեր արեց: Օգոստոսի 3-ի երևանցիների ցույցի առթիվ «Իսկրան» նշում էր. «Բնորոշ է այն, որ թաթարներից շատերը միացան շքերթին հայտարարելով, թե իրենց ևս քիչ անախորժություններ չի պատճառել ցարը»[4]: Հատկանշական է նաև, որ Բաքվի դեպքերի ժամանակ, ինչպես նշում է նրա մասնակիցներից մեկը՝ «թուրքեր էլ պավլականի օգնեցին մեզ զենքի և փամփուշտի կողմից ձրի»[5]:

---

1 «Искра», 1903, № 49.

2 Նույն տեղում:

3 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 49:

4 «Искра», 1903, № 49.

5 «Նորք», 1923, № 2, էջ 289:

* * *

1903 թ. հեղափոխական ընդհանուր վերելքը երկրում նոր էր սկսում ծավալվել, և ցարիզմը դեռևս հնարավորություն ուներ ճնշելու ազգային ընդվզումները։ Ցարական կառավարությանը հաջողվեց ղենքի ու բռնությունների միջոցով ի վերջո բռնագրավել հայ եկեղեցու գույքն ու կապիտալները։ 1903 թ. վերջերին արդեն բռնագրավումն հիմնականում ավարտվել էր։

1900 թ. տվյալներով Ռուսաստանում հայ եկեղեցին ուներ 175 հազար դեսյատին հողային կալվածքներ, որից 153 հազարը պատկանում էր վանքերին։ Այդ հողատարածություններից տարեկան ստացվում էր 110 հազ. ռուբլու եկամուտ։ Մյուս գույքի հետ միասին եկեղեցին ստանում էր տարեկան 300 հազ. ռուբլու եկամուտ։ Բացի այդ, եկեղեցին ուներ 1,5 միլիոն ռուբլուց ավելի դրամագլուխ՝ տարեկան մոտ կես միլիոն ռուբլու եկամտով[1]։ Այդ գումարները օգտագործվում էին եկեղեցու և վանքերի կարիքների, հոգևորականության պահպանման, իսկ մինչ դպրոցների փակումը նաև նրանց պահպանության վրա։

Ըստ հողագործության ու պետական գույքերի մինիստրության 1905 թ. փետրվարին ներկայացրած զեկուցագրի, Ռուսաստանի 14 նահանգներում և մարզերում կառավարությանն էր անցել եկեղեցապատկան 923 ոչ հողային և 210 հողային ունեցվածք՝ մոտ 145 հազար դեսյատին ընդհանուր տարածությամբ։ Հողային կալվածքների մեծ մասը գտնվում էր Անդրկովկասում, որից 83 հազ. Ելիզավետպոլի, 34 հազ. Երևանի և 21 հազ. դեսյատին Թիֆլիսի նահանգներում[2]։ Ընդունված կապիտալի գումարը ըստ ՆԳՄ-ի տվյալների կազմում էր ավելի քան 1.775 հազ. ռուբլի[3]։

Եկեղեցական գույքի բռնագրավումից հետո ասպարեզի վրա հիմնականում սկսեց գործել հայ գյուղացիությունը, որն ամեն ինչ անում էր կալվածքների կառավարումը ձախողելու համար։ Նրա պայքարը յուրատեսակ պարտիզանական կռվի տեսք էր ստանում։ Այդ պայմաններում բռնագրավված գույքը կատարյալ չարիք դարձավ իշխանությունների համար։ Գաղտնի կոմիտեները ահաբեկման ու սպառնալիքների միջոցով աշխատանքի անհանելի

---

1 Տվյալները վերցված են Մխիթար վարդապետի «Հայերը Ռուսաստանում» գրքից։

2 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 55—57։

3 Նույն տեղում, էջ 42։

պայմաններ էին ստեղծում պետական պաշտոնյաների համար։ Էջմիածնի գավառային վերատեսուչը այդ պատճառով ներվային քայքայում սուացավ և հրաժարական տվեց։ Ամենուրեք ժողովուրդը խույս էր տալիս կրպակներն ու հողամասերը վարձակալելուց, որոնք շատ դեպքերում վերածվում էին մեղյալ կապիտալի։ Այս երևույթն ամենից ավելի ընդգծված էր Երևանի նահանգում։ Էջմիածնին պատկանող 177 կրպակներից հաջողվեց վարձակալության հանձնել միայն 107-ը, այն էլ առանց գրավոր պայմանագրերի և խիստ իջեցված գներով։ Նախկին վարձակալներից շատերը նոր կրպակներ էին բացում՝ միայն թե պետությունից չվարձակալեին։

1904 թ. դաշտային աշխատանքների նախօրյակին նախկին վարձակալներից ոչ ոք չներկայացավ բռնագրաված հողամասերը մշակելու։ Դրությունը կրիտիկական էր, և իշխանությունները ստիպված եղան խիստ իջեցնել վարձակալության գները, գյուղերն ընկած համոզել ու ստիպել մարդկանց ձեռնամուխ լինելու հողերի մշակմանը։ Էջմիածնապատկան «Ջամիր» կալվածքը, որը նախկինում հանձնվում էր 2190 ռուբլով, այժմ հանձնվեց ընդամենը 366 ռուբլով։ Իշխանությունների ջանքերն այդ գործում աղըրբեջանցիներին ներգրավելու ուղղությամբ նույնպես հաջողություն չէին ունենում։

Լուրջ դժվարություններ առաջացան նաև մուլքի հավաքման գործում։ Իշխանությունները մարդ չէին գտնում բերքը հաշվառելու և ընդունելու համար, ստիպված էին լինում այդ նպատակով դիմել զորքի օգնությանը։ Շատ դեպքերում գյուղացիները մուլքը առաջվա նման վճարում էին Էջմիածնին կամ թաքցնում բերքը։ Լուրեր էին տարածվում, որ իբր Էջմիածնապատկան գույքի եկամուտները ուղարկվելու են Հեռավոր Արևելք, որտեղ զորքը սովահար էր լինում։ Սա ավելի էր ուժեղացնում դիմադրությունը, ահռելի էր դառնում մանր ընդհարումների։ Հողագործության մինիստրությունը դժգոհում էր, որ՝ «նույնիսկ այն դեպքերում, երբ հաջողվում էր գրեթե կուլով վերցնել հացահատիկի պահանջվող քանակությունը, ապա փոխադրողները, որոնք հենց նույն հողատերերն էին, այնուամենայնիվ աշխատում էին ճանապարհին թափել կամ ցրել, միայն թե այն պետությանը չհասներ»[1]։ Մինիստրության հաշվետվության մեջ ասվում էր նաև. «Հսկիչների հետ միասին հավաքի ղեկավարների պայքարը այդ չարիքի դեմ բոլորովին արդյունք չէր տալիս, քանի որ հարկ էր լինում պայքարել ոչ թե

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 32 հ. կ.։

առանձին չարակամ մարդկանց, այլ ամբողջ բնակչության դեմ»[1]։

1904 թ. աշնանը իշխանությունները Եղվարդում նախկին 320-ի փոխարեն կարողացան հավաքել միայն 60, Օշականում՝ 120-ի փոխարեն 45,5, իսկ Վաղարշապատում՝ 250-ի փոխարեն 100 խալվար ցորեն։ Է՛լ ավելի մեծ դժվարություններ էին առաջանում մի կերպ հավաքված բերքը վաճառելու ժամանակ։ Ոչ ոք չէր ցանկանում գնել բերքը, և այն վաճառվում էր խիստ ցածր գնով։

Արդյունքն այն եղավ, որ սպասվող 300 հազարի փոխարեն, հայ եկեղեցուց բռնագրավված գույքից ու կալվածքներից կառավարությունն ստացավ միայն 188 հազար ռուբլու եկամուտ։ Ընդ որում, ընդունված գույքի կառավարման ծախսերը մոտ կրկնակի անգամ ավելացել էին։

Այսպիսով, հակառակ Գոլիցինի ու նրա համախոհների պարծենկոտ հայտարարությունների, թե եկեղեցական գույքը պետության ձեռքին կծաղկի և բազմապատիկ եկամուտներ կբերի, ըստացվեց բոլորովին հակառակ պատկեր։ Կովկասյան բյուրոկրատիան «Պյուրոսյան հաղթանակ» էր տարել։

* * *

1905 թ. նախօրյակին հեղափոխական ճգնաժամը Ռուսաստանում ակնառու փաստ էր դարձել։

Թևակոխելով կապիտալիզմի իմպերիալիստական փուլը, Ռուսաստանը վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն։ Առ ժամանակ բավարարվելով Մերձավոր Արևելքում և Բալկաններում status quo-ի պահպանությամբ, ցարիզմն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Հեռավոր Արևելքում։ Պատրաստվելով պատերազմի, նա հեշտ հաղթանակի հույս ուներ և ցանկանում էր զաղութների գրավումով բարձրացնել իր ընկած հեղինակությունը։ Սակայն հաշիվները սխալ դուրս եկան։ Ռուսական բանակն սկսեց իրար հետևից պարտություններ կրել ճապոնացիներից, դժգոհությունն ավելի մեծացավ, հեղափոխությունն օրակարգի հարց դարձավ։ Լիբերալ-բուրժուազիան հեղափոխության ուրվականի սպառնալիքով վախեցնում էր ցարին և նրանից սահմանադրական վիջումներ ակնկալում։ Ռեակցիայի սյուն Պլևեի սպանությունը լիբերալներին նոր հույսեր ներշնչեց։ Նրան փոխա-

---

1 Նույն տեղում, էջ 32։

յինած Պ. Դ. Սվյատոպոլկ-Միրսկին փորձեց զիջումներ անել դեմսավոնների, թեթևացնել կրոնական հալածանքները։

1904 թ. դեկտեմբերի 12-ին ցարն ստորագրեց «Պետական կարգի կատարելագործման նախապատրաստական միջոցառումների մասին» հրամանագիրը[1], որը ցույց էր տալիս, որ ցարիզմն այլևս չի կարողանում միայն ոստիկանական ուժով գործել։ Հրամանագիրն ազդարարում էր որոշ օրենքների փոփոխության անհրաժեշտությունը, խոստանում էր դեմսավոնների ու քաղաքների իրավունքների ընդլայնում, պետական կարգի ամրապնդում։ Ցարը կարգադրում էր շտապ միջոցներ մշակել կրոնական բոլոր ճնշումները վերացնելու ուղղությամբ, մամուլին ազատություն տալ որոշակի սահմաններում։

Նման պոչատ խոստումներն ավելի աշխուժացրին լիբերալներին։ Նրանք հրճվանքով օրորվում էին այսպես կոչված «լիբերալ դարնան» ջերմիկ հովերից, ազատության ու արդարության մասին մեծագղորդ ճառեր էին արտասանում հատուկ կազմակերպված բանկետներում, տաքուկ սենյակներում նստած սահմանադրություն էին երազում։

Այդ ժամանակ ռումբի պես պայթեց Պորտ-Արտուրի անկման լուրը, որը դարձավ Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ու ցարիզմի կապիտուլյացիայի նախերգանքը։ Մինչ ցարն ու բուրժուազիան լիբերալ աչքակապուկ էին խաղում, պատմության թատերաբեմում հանդես եկավ բանվոր դասակարգը։ Բաքվի և Պետերբուրգի պրոլետարիատի 1904 թ. դեկտեմբերյան հզոր գործադուլներին հաջորդեց 1905 թ. Հունվարի 9-ի արյունոտ կիրակին, առատորեն հոսեց ժողովրդի արյունը, և Ռուսաստանում սկսվեց հեղափոխությունը։

Ամեն ինչ խառնվեց իրար, հասարակական բոլոր ուժերը շարժվեցին տեղից։ Յուրաքանչյուրն իր պահանջներն ու սպասելիքներն ուներ, իր ուրույն շահերը։ Եվ միայն հեղափոխական պրոլետարիատն էր, որ պայքարում էր մինչև վերջ ցարիզմը հիմնահատակ անելու համար։

Ցարական գահն սկսեց երերալ։ Ճակատագրական պայթյունից փրկվելու համար ցարիզմը փորձում էր թուլացնել խիստ ձգված փականները։ Նա որոշեց վարել «մտրակի ու կարկանդակի» քաղաքականություն։ Սվյատոպոլկ-Միրսկուն փոխարինելու

---

[1] Տե՛ս «Собрание узаконений и распоряжений правительства», 1904, отдел I, второе полугодие, СПб, стр. 3283—3285.

եկավ բուլիգին-տրեպովյան խմբավորումը, որը մի կողմից սիրաշահում էր բուրժուազիային, մյուս կողմից սեղմում ժողովրդի վիզը գցած օղակը։ Կառավարության տատանումների ու շփոթվածության վկայությունը հանդիսացան 1905 թ. փետրվարի 18-ի ցարական կարգադրությունները։ Սպառնալով հեղափոխական ուժերին, ցարը միաժամանակ պետիցիաներ տալու ազատություն էր շնորհում (որից զրկվում էին միայն բանվորները), նպատակ ունենալով ժողովրդական հուզումներին լեգալ ընթացք հաղորդել և մեղմել ներքևից եկող ճնշումը։ Միաժամանակ ցարը դումայի հրավիրման խոստում էր տալիս։

Ռուսաստանում սկսված հեղափոխության մեջ կարևոր դեր էր խաղում նաև ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, որը սերտորեն կապված էր պրոլետարիատի և գյուղացիության պայքարի հետ։ «Հեղափոխության հենց սկզբից ժողովրդական զանգվածները հանդես էին գալիս ազգային լեզվի և ազգային մշակույթի զարգացման ազատության, ազգային արտոնությունների վերացման և ազգային ճնշման բոլոր ձևերի վերացման լոզունգներով»[1]։

Հեղափոխությունը ցույց էր տալիս ցարիզմին, որ անհնարին է արգելել մայրենի լեզվով ուսուցմամբ ազգային դպրոցների գոյությունը։ 1905 թ. ապրիլին ցարական ուկազի համաձայն թույլատրվեց մայրենի լեզվի և կրոնի դասավանդումը ազգային շրջանների արքունի դպրոցներում։

Հեղափոխության ալիքները ծածկեցին նաև Ռուսաստանի ժողովրդական լուսավորության մինիստրության ժայռոտ ափերը, սոխալելով նրան տեղից շարժվելու։ «Հինգ թվականը,— գրում էր Լենինը,— Ռուսաստանի ժողովրդական մասսաների մեծ զարթոնքի տարին, ժողովրդական մեծ պայքարի տարին՝ հանուն ազատության պրոլետարիատի ղեկավարությամբ, այդ տարին ըստիպեց մինչև իսկ մեր կաղյոննի գերատեսչությանը (նկատի ունի լուսավորության մինիստրությունը— Վ. Ե.) շարժվել մեռյալ կետից»[2]։ Ամենուրեք ձայներ էին լսվում, որ պետական դպրոցը իրեն չի արդարացնում ազգային ծայրամասերում, որ «այլազգիները» խույս են տալիս այդ դպրոցում սովորելուց, ուր արհամարհված է մայրենի լեզուն։ Առաջարկներ էին արվում Ն. Ի.

---

1 «История СССР», т. II, М., 1965, стр. 43.

2 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 19, էջ 152։*

Իլմինսկու սիստեմին[1] անցնելու մասին, քանի որ անսքող ռուսացման քաղաքականությունը առաջ էր բերել «այլազգիների» խոր դժգոհություն: Լուսավորության մինիստրի առաջարկով 1905 թ. մայիսին տեղի ունեցավ մանկավարժական համապետական խորհրդակցություն, որը քննարկեց Իլմինսկու սիստեմին անցնելու հարցը:

Խորհրդակցությունը եկավ այն եզրակացության, որ այլազգիների ձուլման պետք է հասնել ավելի «նուրբ», մեղմ ձևերով: Պաշտպանելով Իլմենսկու սիստեմը, Անդրկովկասի ուսուցչական սեմինարիայի դիրեկտոր Մ. Ա. Միրոպիևը գտնում էր, որ այլազգիներին բռնի կերպով չի կարելի ձուլել, որ դրա համար նախ պետք է բարձրացնել ռուս ժողովրդի կուլտուրական մակարդակը: «Չէ որ,— հայտարարում էր նա,— լատիշներին ու էստոնացիներին, ինչպես նաև հայերին ու վրացիներին՝ նրանց խիստ զարգացած ազգային գաղափարով, կամ մահմեդական թաթարներին՝ նրանց խիստ զարգացած և ամուր կրոնով, մեզ հետ ձուլելն այն չէ, ինչ որ կուլտուրապես թույլ ազգությունների ձուլումը»[2]: Միրոպիևը գտնում էր, որ հայ գպրոցների և եկեղեցական գույքի հետ խիստ վարվելը սխալ էր, որից և առաջացել է ուժեղ դիմադրություն, և առաջարկում էր որոշ զիջումներ անել այլազգիներին դպրոցական հարցում ու նրանց ձուլումը կատարել «բնական ճանապարհով»:

Բյուրոկրատիան նոր եղանակով հին երգ էր երգում: Ճիշտ է, հեղափոխության վերելքից հետո իշխանությունները հրաժար-

---

1 Ն. Ի. Իլմինսկին, որ 1872—1891 թթ. Կազանի ուսուցչական սեմինարիայի դիրեկտորն էր, մերձվոլգյան թաթարների շրջանում մտցրել էր տարրական ուսուցման իր սիստեմը: Լինելով այլազգիներին ձուլելու մոլի կողմնակից ու միապետական, Իլմինսկին գտնում էր, որ ռուսացումը պետք է առանց աղմուկի անել, թույլ տալ, որ այլազգի մանուկը մայրենի լեզվով նախնական կրթություն ստանա: Իր սիստեմի էությունը Իլմինսկին բացահայտել էր Դ. Տոլստոյին գրած նամակում. «Իսկ մենք ռուսացումն ավելի խորն ենք հասկանում: Մենք վերցնում ենք ռուս մարդուն իր իդեալի մեջ և այդ իդեալը աշխատում ենք յուրացնել տալ այլազգիներին: Ռուսական իդեալը գերազանցապես ուղղափառությունն է. ահա թե ինչու մենք հենց ուղղափառության վրա էլ պնդում ենք: Ուղղափառությունը ռուս ազգության հիմնական, արմատական, ամենակապիտալ տարրն է: Որքան որ շուտ այլազգին կյուրացնի ուղղափառությունը գիտակցաբար և համոզված կերպով, մտքով և սրտով, նա արդեն ռուսացած կլինի» (տե՛ս В. М. Горохов, Реакц. школьн. полит. царизма в отношении татар Поволжья, стр. 43).

2 «Труды особого совещания по вопросам образования восточных инородцев», СПб., 1905, стр. 222—223.

վեցին Իլմինսկու սխեմայից, բայց և ստիպված եղան որոշ վերջումներ անել։

Համառուսական հեղափոխությունը իր լայն ու հուժկու արձագանքը գտավ Անդրկովկասում։ Թիֆլիսում, Բաքվում, Բաթումում, Քութայիսում, Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում անընդհատ գործադուլներ ու դասակարգային հակամարտության ազդու ցույցեր էին լինում։ Հուզված էր և գյուղացիությունը։ Գուրիայի գյուղացիական ապստամբության նշանակությունը դուրս էր գալիս Անդրկովկասի սահմաններից։ Ազգային շարժումը նոր բանոր շրջաններ էր ընդգրկում։

Անդրկովկասում իր թևերն էր տարածել նաև «լիբերալ գործունը»։ Բուրժուական մամուլի լեզուն բացվել էր, ամեն կողմից լսվում էին քննադատության ձայներ։ Օգտվելով ստեղծված հնարավորությունից, կովկասյան երեք հիմնական ազգությունների տիրապետող դասակարգերը շտապեցին իրենց պահանջները ներկայացնել կառավարությանը։ Առաջինը հանդես եկավ վրաց ազնվականությունը, որը պահանջում էր հավասար իրավունքներ ռուսների հետ։

1905 թ. մարտին իր պահանջագիր-խնդրագիրը ներկայացրեց Երևանի քաղաքային դուման, որը կազմված էր հայկական բուրժուական տարրերից։ Ապրիլ ամսին Թիֆլիսում կայացավ 24 հայաբնակ կենտրոնների ներկայացուցիչների ժողովը, որը նույնիսկ հռչակվեց որպես հայկական առաջին համագումար։ Ժողովը ընդունեց քսան կետից բաղկացած մի հանրագիր, որը ներկայացվեց մինիստրների խորհրդին։

Այս երկու հանրագրերը էապես իրարից չէին տարբերվում։ Նրանց պահանջները հիմնականում հանգում էին հետևյալին. սահմանադիր ժողովի հրավիրում, զեմստվոների ստեղծում, դատարանի դեմոկրատացում, հողի ազգայնացում, անձի, մամուլի, խոսքի, խղճի, միությունների ազատություն, ութ ժամյա բանվորական օր, օրավարձի մինիմում, կանանց իրավահավասարություն, դասակարգային ու դասային տարբերությունների, ինչպես նաև դրաքննության վերացում։ Կրթության հարցում հանրագրերը պահանջում էին ընդհանուր, պարտադիր, ձրի տարրական ուսուցում մայրենի լեզվով, միջնակարգ դպրոցներում՝ ազգային պատմության, կրոնի, լեզվի և գրականության ուսուցում, Թիֆլիսում՝ համալսարանի հիմնում, ազգային դպրոցներում՝ ռուսաց լեզվի ճանաչում որպես գլխավոր առարկաներից մեկը։ Հանրա-

գրերը պահանջում էին վերականգնել հայ եկեղեցու իրավունքները, վերադարձնել խլված գույքը, վերաբացել ծխական դպրոցները, կրթական ու բարեգործական մյուս հիմնարկությունները, ազատել քաղաքական և կրոնական գործերով դատապարտվածներին։ Երևանցիների խնդրագիրը գնում էր նաև քրիստոնյա հոգևորականության հետ մահմեդական հոգևորականության իրավունքների հավասարեցման հարցը։ Թիֆլիսի ներքաղաքացուցչական ժողովի հանրագրի 15-րդ կետում ասված էր. «Վերադարձնել հայկական եկեղեցուն նրա ծխական դպրոցները և կալվածքները, վերացնելով 1884-ից մինչև 1903 թթ. բոլոր օրենքներն ու կարգադրությունները, որոնք վերաբերվում են թե ծխական դպրոցներին և թե այդ դպրոցների ու հայոց վանքերի եկեղեցիներին և հոգևոր դպրանոցների կալվածքներին»[1]։

Այս պահանջները բավական արմատական կետեր էին պարունակում. դրանք պայմանավորված էին հեղափոխության վերելքով։ Վ. Ի. Լենինն այդ մասին գրում էր, որ «Առաջ է գնում ռևոլյուցիան, նրա հետևից քարշ է գալիս նաև բուրժուական դեմոկրատիան»[2]։ Առաջադրվելով բուրժուազիայի կողմից, այդ պահանջները, խնդրագրի բնույթ կրելով, կախված էին ցարական արքունիքի բարեհայեցողությունից։ Այնուամենայնիվ, հանրագրերում արտացոլված էր ժողովրդին հետաքրքրող խնդիրների մեծ մասը։

Հեղափոխական վերելքից վախեցած ցարիզմը մի կողմից սկսեց թուլացնել սանձերը, բայց և մյուս կողմից նոր զարկ տվեց ազգային հակամարտության սրմանը, հրահրեց հրեական ջարդեր, հայ-ադրբեջանական ընդհարումներ։

Հայ-ադրբեջանական ջարդերը պատահականություն չէին, թեև իշխանություններն այն համարում էին անակնկալ մի երևույթ։ Ցարիզմն իր գաղութային քաղաքականության տասնամյակների ընթացքում էր նախապատրաստել ջարդերը։

Ինչպես տեսանք, դեռ 1903 թ. հունիսի 12-ի օրենքն ընդունելու ժամանակ պետական որոշակի շրջաններ դեմ եղան նրան։

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 103ա, էջ 3։ Նույնը տե՛ս նաև «Մշակ», 1905, № 73։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 209։

Այժմ Ռուսաստանի պաշտոնական շրջաններն սկսեցին ավելի հաճախ անդրադառնալ օրենքի աննպատակահարմարության հարցին: Հողագործության մինիստր Ա. Երմոլովը իր 1905 թ. փետրվարի 24-ի զեկուցագրում հատկապես շեշտում էր ժողովրդի համատարած դիմադրության մասին և գտնում, որ գույքի բռնագրավումը չի արդարացրել իրեն: Նույնն էր գրում իր 1904 թ. հաշվետվության մեջ Կարսի նահանգապետը: Վերջապես այդ կարծիքին էր Մինիստրների կոմիտեի նախագահ Վիտտեն:

Պլևեի սպանությունից և Գոլիցինի հեռացումից հետո զգաստ ձայներն ավելի սաստկացան: Կարծիքներ էին հայտնվում, որ «այլազգիների» բռնի ռուսացման քաղաքականությունն ավելի շուտ վնասում է հենց ռուսացմանը, մեծացնում է փոխադարձ ատելությունը: Ռուս մի բարձրաստիճան գործիչ հայտարարել էր. «Ահա արդեն քսան տարի է, որ ես անդադար լսում եմ ռուսացման փրկարար պլանների մասին, և մեզ խոստացված անհամար բարիքների փոխարեն տեսնում եմ, որ լեհաստանում մեզ ատում են, Ֆինլանդիայում՝ արհամարհում, Կովկասում նախկին սիրո փոխարեն համատարած թշնամություն կա և նույնիսկ Անդիջանում, որտեղ դեռ չեն չորացել ռուսական արյան գետերը, ապստամբություն է պատրաստվում»[1]:

Հայ-ադրբեջանական ջարդերի պատճառները քննելու համար գործուղված սենատոր Կուզմինսկին իր հաշվետվության մեջ նշում էր, որ 1903 թ. օրենքից հետո խիստ աճել է հայերի հեղափոխական ակտիվությունը: «Չի կարելի չնկատել,— գրում էր նա,— որ դրա (օրենքի—Վ. Ե.) հրատարակման ժամանակ նկատի առնված բոլոր նպատակները անհասանելի մնացին՝ հոգևորականությունն ամենևին էլ կառավարությունից նյութական կախվածության մեջ չընկավ, նա շարունակում էր իր անաղքատ գոյությունը..., դպրոցները պետական բնույթ չստացան, քանի որ նրանց մեծ մասը փակվեց, վերջապես, հոգևորականության ազդեցությունը բնակչության վրա ոչ միայն չթուլացավ, այլ ընդհակառակը աճեց»[2]:

«Այլազգիների» նկատմամբ վարվող հալածական քաղաքականությունը բողոքներ առաջացրեց նաև ռուսական մամուլում:

---

1 Վերցված է Գր. Զալեսուչյանի «Армянский вопрос в России» գրքից, Ростов, 1905, էջ 27:

2 «Всеподданнейший отчет о произведенной, по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бак. губернии», 1905, стр. 50.

«Ռուսկիյ վեդոմոստի» թերթում նշանավոր գիտնական Մ. Կովալևսկին գրում էր. «Թող ազգերի դասը զուր չանցնեն Ռուսաստանի համար, թող այս օրինակը փարատե այնպիսիների կասկածները, որոնք հպատակ ժողովրդոց ազգային և տեղական ազատությունը ձնշելու մեջ են տեսնում միությունը պահելու կարելիությունը։ Թո՛ղ այս ապացույց լինի, որ Կայսրության ամբողջությունը չէ պահանջում բոլորովին, որ ռուսները կլանեն այն բոլորին, որոնց բաղդը միացած է նրանց հետ»[1]։ Նույնիսկ ռեակցիոն «Նովոյե վրեմյան» այժմ այլ ձայնով էր երգում. նա գտնում էր, որ Հունիսի 12-ի օրենքը սխալ է եղել, որ հայերի սեպարատիզմը լոկ երևակայության արդյունք էր։ «Վերջ ի վերջո,— կոկորդիլոսի արցունքըն աչքերին, գրում էր թերթը,— մենք հասանք այն ցավալի հեռանկարին, որ կռվելով երևակայական վտանգի դեմ՝ հենց մարմնացրինք, իրականացրինք այդ վտանգը»[2]։

Հեղափոխության անշեղ վերելքը վերջապես ստիպեցին ցարիզմին վերանայելու հայերի նկատմամբ երկու տասնամյակից ավելի վարվող իր քաղաքականությունը։ Բնավ չհրաժարվելով գաղութային համաձուլարար նպատակադրումներից, ցարական կառավարությունը որոշեց փոխել տակտիկան, հայերին ինչ-որ չափով սիրաշահել, ջանալով նրանց կրկին նետել եկեղեցու հովանու տակ ու կտրել հեղափոխությունից։

Կովկասում ստեղծված խառը իրավիճակի համար ցարիզմը մեղքը գցեց միայն տեղական վարչության ղեկավարության վրա և որոշեց վերակառուցել այն։ 1905 թ. փետրվարի 26-ին Նիկոլայ II-ը վերականգնեց Կովկասի փոխարքայությունը և կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը նշանակվեց փոխարքա։ Ավելի փայլուն ընտրություն չէր կարելի երևակայել։ Կոմսը անցել էր ցարական բյուրոկրատի հիանալի դպրոց, թրծվել էր ինքնակալության քուրայում, ձեռք բերել խորամանկ ու նենգ, կեղծավոր ու շինծու լիբերալի բոլոր անհրաժեշտ բարեմասնությունները։ Կոմսի վրա ցարը խնդիր էր դրել «խաղաղեցնել», փաստորեն վերանվաճել Կովկասը։

1905 թ. մարտի 30-ին փոխարքան Պետերբուրգից հատուկ կոչով դիմեց Կովկասի բնակչությանը, որով խոստացավ երկիրը կառավարել հասարակության բոլոր դասերի ու ազգերի հետ խորհրդակցելով, խոստացավ վերականգնել օրինականությունը։ «Հարգելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ամենահպատակ խնդիրը՝ հայ

---

1 Վերցված է «Լումա», 1905, № 8-ից, էջ 87։

2 Վերցված է «Մշակ», 1905, № 66-ից։

եկեղեցուն պատկանած կալվածքները պետական վարչության տակ առնելու գործը, Բարձրագույն հրամայված է վերաքննել»[1], ազդարարում էր փոխարքան: Հետաքրքիր է, որ այդ «վերաքննումը» հռչակվում էր որպես կաթողիկոսին հատկացվելիք հարգանքի հավաստիք:

Այսքանն էլ բավական էր, որ կովկասյան բուրժուական լիբերալները հալվեին բավականությունից: Առաջին անգամ էին նրանք լսում նման մեղրածոր խոստումներ: «Փրկարար ժամը հասավ, կովկասյան ազգեր»,—շնչակտուր բացականչում էր «Մշակը»: Փոխարքան հռչակվեց որպես «արդարադատ», «բարեմիտ», «լուսավորված» կառավարիչ, որը պետք է լուծեր բոլոր խճճված հարցերը:

Էջմիածնում նույնպես իրարով էին անցել: Դեռևս 1904 թ. դեկտեմբերի 12-ի ցարական կարգադրությունից հետո կաթողիկոսը 1905 թ. հունվարին Պետերբուրգ էր ուղարկել Ներսես արքեպս. Խուդավերդյանին ու Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանին, որոնք պետք է ներքին գործերի մինիստր Սվյատոպոլկ-Միրսկուն հանձնեին իր բացատրագիրը[2] հունիսի 12-ի օրենքի մասին և աջակցեին նրա վերանայմանը:

Սակայն էջմիածնի պատվիրակները չկարողացան ներկայանալ մինիստրին. Պետերբուրգում անհանգիստ օրեր էին, և նրանք սպասեցին մինչև դրությունը մի փոքր պարզվեց: Նոր նշանակված ներքին գործերի մինիստր Բուլիգինի հետ պատվիրակները նոր հույսեր կապեցին, ելնելով մասամբ նրանից, որ մինիստրի կինը հայուհի էր: Բուլիգինը և Վիտտեն հուսադրեցին պատվիրակներին, և նրանք շտապեցին կաթողիկոսին հայտնել նոր բացատրագիր ներկայացնելու անհրաժեշտության մասին: Փետրվարի 14-ին այդ բացատրագիրը հանձնվեց Վիտտեին, որի նախագահությամբ պետք է տեղի ունենար Մինիստրների կոմիտեի նիստ՝ հունիսի 12-ի օրենքը վերանայելու համար:

1905 թ. մարտի 1-ին կայացավ Մինիստրների կոմիտեի հատուկ նիստը: Վիտտեի առաջարկով որոշվեց վերանայել օրենքը: Նոր նշանակված փոխարքան, չկարողանալով մասնակցել նիստին, նախօրոք իր բացատական կարծիքն էր հայտնել հունիսի 12-ի օրենքի մասին, բայց քանի որ ինքը մոտիկից դեռ ծանոթ չէր Կով-

---

1 «Մշակ», 1905, № 61:

2 Տե՛ս ՀՊԿՊԱ, ֆ. 56, ց. 6, գ. 501, էջ 5—8: Նաև՝ Մատեն., կաթ. դիվան, թղթ. 237, II, վավ. 4:

կասի իրադրությանը, ապա խնդրել էր հարցի վերջնական լուծումը հետաձգել մինչև ինքը կուսումնասիրեր այն և վերջնական կարծիք կկազմեր։ Կոմիտեն այդպես էլ որոշեց հարցը[1]։

Էջմիածնի պատվիրակները շտապեցին լուր ուղարկել կաթողիկոսին. նրանց հեռագրում ասվում էր. «Այսօր (մարտի 22-ին) մենք ներկայացանք կովկասյան փոխարքային։ Ընդունելությունը շատ սիրալիր էր։ Հունիսի 12-ի Պոլոժենյան կվերաքննվի, աքսորված հոգևորականների հարցը կվերաքննվի և ըստ կարելվույն նրանք կվերադարձվեն և դպրոցական հարցը կկարգավորվի»[2]։

1905 թ. ապրիլի 2-ին կառավարությունը վերացրեց հայ հոգևորականներին վարչական կարգով աքսորելու մասին 1891 թ. մարտի 16-ի կանոնները։

Պատրաստվելով փոխարքայի հետ առաջիկա բանակցություններին, կաթողիկոսը կարգադրեց թեմերին մանրամասն տեղեկություններ հաղորդել խլված գույքի մասին, կազմեց հատուկ հանձնաժողով, որը պետք է մշակեր բանակցությունների ծրագիր և հիշատակագրեր։

Մայիսի 5-ին Վորոնցով-Դաշկովը շուքով ու աղմուկով ժամանեց Թիֆլիս։ Նա անմիջապես ձեռնամուխ եղավ հեղափոխական շարժումները ճնշելու գործին և միաժամանակ սկսեց լիբերալ աչքակապուկ խաղալ Անդրկովկասի ազգությունների վերնախավերի հետ։ Հունիսի մեկին փոխարքան ընդունեց հայ բուրժուական մտավորականության ներկայացուցիչներին և բազում խոստումներ տվեց։ Թիֆլիս շտապեց և Խրիմյանը, որին հայ հասարակությունը չտեսնված շքեղ դիմավորում կազմակերպեց, որպեսզի ցույց տա, թե ինչպիսի նշանակություն ունի կաթողիկոսը հայ ժողովրդի համար։ Հունիսի 26-ին Խրիմյանը արտակարգ հանդիսավորությամբ հանդիպում ունեցավ փոխարքայի հետ և այնուհետև սիրալիր ընդունելությունները հաջորդեցին միմյանց։ Հունիսի 30-ին կաթողիկոսը փոխարքային ներկայացրեց իր բացատրագիրը։ Նա խնդրում էր մի կողմ թողնել միջանկյալ այլ հարցերը և շուտափույթ լուծում տալ երկու հիմնական հարցի՝ հայկական դպրոցների վերաբացմանը և եկեղեցական գույքի վերադարձմանը, որպեսզի հնարավոր լինի նոր ուսումնական տարվանից սկսել դասերը։ Կաթողիկոսը հատուկ ուշա-

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 58—59։

2 «Մշակ», 1908, № 53։

դրություն էր հրավիրում 1884-ից մինչև 1903 թ. եղած օրենքների ու կարգադրությունների վերացման անհրաժեշտության վրա և առաջարկում էր վերադարձվելիք դպրոցները հանձնել ընտրովի հոգաբարձություններին: Միաժամանակ Խրիմյանը դիմեց Բուլիգինին և խնդրեց վերաբացել 1903 թ. փակված Շուշու թեմական դպրոցը:

«Հայկական հարցի» հետ ծանոթանալն ավարտած համարելով, փոխարքան հուլիսի 19-ին գաղտնի գրությամբ դիմեց Մինիստրների կոմիտեի գործերի կառավարիչ բարոն է. Յու. Նոլդեին: Նա գրում էր. «Վերջին երկու տասնամյակներում հայկական եկեղեցու և հայ բնակչության նկատմամբ սիստեմատիկաբար ձեռնարկվող ռեպրեսիվ միջոցառումները, որոնք վերջացել են եկեղեցական դպրոցների և ունեցվածքի խլմամբ՝ ի պետական տնօրինություն, հայ հոգևորականության ու բնակչության շրջանում ընդհանուր դժգոհություն և հայկական հեղափոխական կոմիտեների հանդուն տեռորիստական գործունեություն առաջացրին, որը ծայրահեղ տագնապալի վիճակ ստեղծեց երկրամասում: Բարձրագույն կամքով կոչված լինելով Կովկասի փոխարքայի պաշտոնին, ես նախ և առաջ պետք է հանդիպեի երկրամասը խաղաղեցնելու անհետաձգելի անհրաժեշտությանը և այն պատճառների վերացմանը, որոնք նպաստում են ներկայիս անհանգիստ վիճակին: Այդ նկատառումով ես նախապես ստացա Նորին կայսերական մեծության սկզբունքային համաձայնությունը՝ վերանայելու վերջին շրջանում հայկական հարցի վերաբերյալ հրապարակված սահմանափակիչ օրենքները: Էջմիածնի կաթողիկոսին տված խոստումների աղղեցության տակ հայ բնակչությունը ներկայումս որոշ չափով հանգստացել է և կոմիտեների գործունեությունը՝ դադարեցվել: Սակայն կառավարության խոստումների նկատմամբ հայերի այդպիսի սպասողական վերաբերմունքը, հարավցիների յուրահատուկ կրքոտության պատճառով, երկար շարունակվել չի կարող, և հայերի տրամադրության մեջ արդեն նկատվում են անհամբերության նշաններ: Անհրաժեշտ է ժամանակին միջոցներ ձեռնարկելով կանխել բնակչության կողմից սպասվող ճնարավոր բռնկումները, որպեսզի ճնարավորություն չտրվի աննպատակահարմար ուժերին հավատացնել նրան, որ բոլոր ռեֆորմները ընդունվում են միայն անկարգությունների ճնշման տակ:

Այդ իսկ պատճառով, մտահոգվելով հայկական եկեղեցական դպրոցների և ունեցվածքի վերաբերյալ հարցի շուտափույթ

լուծմամբ, ես իմ պարտքն եմ համարում Ձերդ Գերազանցությանը ուղարկել իմ զրասենյակի զեկուցագիրն այդ հարցի վերաբերյալ և խնդրել Ձեզ, առանց հետաձգելու, ամենահպատակ զեկուցումով դիմել Նորին Կայսերական Մեծությանը՝ այդ զեկուցագրում շարադրված հարցի վերաբերյալ Կառավարիչ սենատին անվանական հրամանագիր տալու համար և արդյունքների մասին հայտնել ինձ հետագրով»[1] (ընդգծումները իմն են— Վ. Ե.):

1905 թ. օգոստոսի մեկին բարոն Նոլդեն պահանջվող զեկուցագրով դիմեց Նիկոլայ II-ին: Զեկուցագրում, որ կազմված էր փոխարքայի ներկայացրած դրույթներից, մանրամասնորեն վերլուծված էր կովկասյան իշխանության վարած սխալ ու հալածական քաղաքականությունը հայկական դպրոցների և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ: Զեկուցագիրը դրականորեն էր արտահայտվում հայկական դպրոցների մասին, ներողամտորեն արդարացնում էր էջմիածնի դիմադրությունը, հայկական ընդվզումը բացատրում գոլիցինյան դաժան ռեժիմով և հուլիսի 12-ի օրենքով, որն իրեն չէր արդարացրել: Այժմ, ցարիզմի ահավոր հալածանքներից հետո, ավելի քան զավեշտական էին հնչում նորաթուխ կովկասյան փոխարքայի հետևյալ խոսքերը. «Չի կարելի ապազգայնացնել մի ժողովրդի, որը գոյություն ունի մի քանի հազարամյակ, ունի պատմություն, որը զբաղվում է գլխավորապես հողագործությամբ, ունի ինքնատիպ մշակույթ, դրականություն, թերթեր, թատրոն: Եթե ժողովրդի մեջ կա որոշակի պահանջ, նա միշտ էլ կկարողանա այն բավարարել»[2]:

Նույն Նիկոլայ II-ը, որը երկու տարի առաջ ստորագրել էր հունիսի 12-ի տխրահռչակ օրենքը, հենց օգոստոսի 1-ին էլ ստորագրեց զեկուցագրի հետ ներկայացված հրամանագրի նախագիծը կառավարիչ սենատի անունով՝ հայ եկեղեցական գույքը և դպրոցները վերադարձնելու մասին: Այժմ բյուրոկրատական քաշքըշուկի ժամանակը չէր: Յուսիմայի խայտառակությունը, ամռան ամիսների հեղափոխական շարժման նոր վերելքը և վերջապես «Պոտյոմկին» զրահանավի հուլիսյան ապստամբությունը խուճապ էին առաջացրել ցարական արքունիքում: Հատկանշական է, որ վեց օր անց, օգոստոսի 6-ին, ընդունվեց նաև Դումա հրավիրելու որոշումը:

---

1 ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, էջ 61—61 հ. կ.:

2 Նույն տեղում, էջ 92 հ. կ.:

1905 թ. օգոստոսի 1-ի ցարական հրամանագիրը սահմանում էր՝ ի փոխհատուցումն 1903 թ. հունիսի 12-ի օրենքի, հայ եկեղեցուն վերադարձնել նրան պատկանող գույքն ու կապիտալները և պետական կառավարման ընթացքում դրանցից ստացված եկամուտները, ինչպես նաև կրթական գործով զբաղվելու իրավունքը։ Հրամանագրի 3-րդ և 4-րդ կետերը վերաբերում էին դպրոցներին։ Նրանցում ասվում էր.

«III. Մեր փոխարքային հանձնարարել մինչև հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոնադրության մշակումը, թույլատրել Կովկասյան փոխարքայության սահմաններում եկեղեցիներին ու վանքերին կից բացելու եկեղեցական-ծխական դպրոցներ՝ 1874 թ. հուլիսի 19-ի Բարձրագույն հաստատված կանոնների համաձայն։

IV. Փոխարքային հանձնարարել. ա) առանց հետաձգելու և առանց գերատեսչությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու, որոշյալ կարգով ներկայացնել հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոններ, կապված 1898 թ. մարտի 26-ի և 1903 թ. հունիսի 12-ի Մինիստրների կոմիտեի Բարձրագույն հաստատված կանոնների համաձայն ժողովրդական լուսավորության մինիստրությանն անցած անշարժ գույքը և կապիտալները հայ լուսավորչական եկեղեցու տնօրինության վերադարձնելու հետ...»[1]։

Ցարը, բացի այդ, թույլատրում էր ժամանակավորապես կիրառել փոխարքայի ներկայացրած գույքի կառավարման կանոնները։ Ըստ այդ կանոնների, գույքի օգտագործումը հանձնվում էր ընտրովի ծխական հոգաբարձություններին, որոնք զբաղվելու էին նաև դպրոցների և ծուխի այլ հարցերով։ Այսպիսով, եկեղեցական գույքի կառավարումը և ծխական դպրոցների տնօրինությունը կենտրոնացվում էր մեկ միացյալ մարմնի մեջ։

Օգոստոսի 4-ին ցարը թույլատրեց նաև Շուշու թեմականի վերաբացումը, իսկ 31-ի կարգադրությամբ օգոստոսի 1-ի հրամանագրի գործադրությունը տարածվեց ամբողջ կայսրությունում եղած հայկական եկեղեցիների վրա։

Օգոստոսի 1-ի հրամանագրի լուրը կայծակի արագությամբ տարածվեց Կովկասում։ Օգոստոսի 7-ին կաթողիկոսը հատուկ կոնդակով ժողովրդին ազդարարեց հրամանագրի մասին և Թիֆլիսի Վանքի եկեղեցում գոհաբանական մաղթանք կատարեց։ Մամուլը լցվեց ցնծագին հաղորդագրություններով, բուրժուազիան

1 Նույն տեղում, գ. 54, էջ 56։

շտապեց իր ջերմ շնորհակալությունները հայտնել թագավորկայսեր՝ նրա «ողորմած և մարդասեր-արդարադատ շնորհի» համար, փոխարքան հռչակվեց հայ ժողովրդի բարերար, որի ջանքերով, իբր, գլուխ էր եկել գույքի վերադարձման ու դպրոցների բացման գործը:

Սակայն ժողովուրդը չուրովի ընդունեց կայսերական հրովարտակը: Բնականաբար ցնծալով ուրախանալի իրադարձության համար, նա դիտակցում էր, որ հաղթանակը հեշտությամբ, առանց պայքարի ձեռք չէր բերվել: Երևանի թղթակիցը «Մշակում» նկարագրելով ժողովրդական ցնծությունը, միաժամանակ հիշեցնում էր. «Որքան հույսեր, որպիսի ակնկալություններ և վերջապես որչափ ջանք, եռանդ, քրտինք, բանտ, աքսոր, արյուն...»[1]: Արշակ Զոպանյանը Փարիզից ողջունելով կաթողիկոսին, ավելացնում էր. «Ձեր վեհափառության կորովի ու քաջ ընթացքը, ինչպես ամբողջ ազգի համառ դիմադրությունը, հաջողությամբ պսակվեցան: Հաճեցեք ընդունիլ անգամ մը ևս խորին հիացմանս հավաստիքը»[2]: Հատկանշական է, որ էջմիածնում եղած մաղթանքից հետո «հոգեհանգիստ կատարվեց սև օրերի ժամանակավա զոհերի համար»[3]:

1905 թ. օգոստոսի 6-ին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն տարածեց «Բոլոր քաղաքացիներին» կոչը, որտեղ պարզաբանում էր, որ ցարը հեղափոխության ճնշման տակ է տվել հրովարտակը. «Ոչ թե ցարի «ողորմածությանն» ենք պարտական այս զիջումով, այլ ինքնագիտակից պրոլետարիատի կռվին: Ոչ թե շնորհակալություն է հարկավոր հայտնել կառավարությանը, այլ կռվել նրա դեմ պրոլետարիատի հետ միացած»[4]:

* * *

1905 թ. սեպտեմբերի 10-ին կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրեց հոգաբարձական ընտրություններ անցկացնել, ուսուցչական խմբեր կազմել և նախապատրաստել դպրոցների բացումը:

Հայ դպրոցը, որ տասը տարի փակել էր իր դռները, այժմ կանգնում էր դժվարին խնդիրների առաջ: Պետք էր հավաքել աշակերտության և ուսուցչության ցիրուցան եղած ուժերը, կար-

---

1 «Մշակ», 1905, № 156:
2 Մատեն., կաթ. դիվան, թղթ. 237, II, վավ. 74, էջ 1:
3 «Արարատ», 1905, № 9, էջ 801:
4 «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 157:

գավորել դպրոցական ծրագրերը, պետությունից ընդունել դպրոցական գույքն ու շենքերը, մի խոսքով, ամեն ինչ նորից սկսել։

Դեռևս 1905 թ. հուլիսի 10-ին կաթողիկոսը Նահապետ եպիսկոպոսի նախագահությամբ մի ուսումնարանական հանձնաժողով է կազմում Թիֆլիսում, որը 1874 թ. հուլիսի 19-ի կանոնների համաձայն մշակում է դպրոցների վարչական կանոնադրության մի քանի սկզբունքներ։ Այդ Ստ. Մալխասյանի նախագահությամբ ընտրվում է մի մասնաժողով՝ այդ սկզբունքների հիման վրա կանոնադրություն և ուսումնական ծրագրեր մշակելու համար։ Մասնաժողովի մեջ մտնում էին՝ Ղ. Աղայանը, Ստ. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը, Ս. Մանդինյանը, Իս. Հարությունյանը, Տ. Ռաշմաճյանը, Լ. Սարգսյանը, Ս. Տիգրանյանը, Հ. Տեր-Միրաքյանը, Սահակ ք. Սահակյանը։

Մասնաժողովի կազմած նախագիծը քննելու համար կաթողիկոսը կարգադրում է Էջմիածնում 1906 թ. մայիսին հրավիրել ներկայացուցչական ժողով և պատվիրում է ընտրություններ անցկացնել։ Դաշնակցությունը, որ ցարիզմի նահանջը վերագրում էր իր մղած պայքարին և ժողովրդի միակ ներկայացուցիչը լինելու հավակնություն ուներ, որոշում է այժմ թելադրել իր կամքը և ղեկավար դեր խաղալ հայ եկեղեցու և դպրոցի կարգավորման մեջ։ Դաշնակցականները սկսում են ակտիվորեն միջամտել ընտրություններին, դիմում բռնությունների։ Այս հանգամանքը սուր դժգոհություն է առաջացնում հատկապես ուսուցիչների շրջանում. Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի, Երևանի, Իգդիրի, Ախալքալաքի և այլ վայրերի ուսուցչական ժողովները բողոքում են կաթողիկոսին՝ ընտրական սկզբունքների կոպիտ խախտումների համար, հրաժարվում են մասնակցել ժողովին և խնդրում են այն հետաձգել։

Դաշնակցությունը ոչինչ հաշվի առնել չի ուզում։ Ավելին, նա զանազան միջոցներով համոզում է զառամյալ կաթողիկոսին մայիսի 10-ին նոր կոնդակով աղդարարել պատգամավորական կենտրոնական ժողովի հրավիրումը, որտեղ հարցերը պետք է քննվեին ավելի լայն ընդգրկումով, քանի որ դրվելու էր եկեղեցու «ժողովրդականացման» հարցը։ Տեղի ունեցած ընտրությունների ժամանակ, որին մասնակցելու իրավունք էին ստացել նաև կանայք, դաշնակցականները դարձյալ բռնությունների ու կեղծիքների միջոցով կարողացան դրավել ձայների մեծամասնությունը։

1906 թ. օգոստոսի 17-ին Էջմիածնում բացվեց կենտրոնական ժողովը, որտեղ անօրինություն էին անում դաշնակցական-

ները։ Նրանք աշխատեցին ժողովին սահմանադրական համագումարի նշանակություն տալ և «լուծել» արևելահայ իրականության կարդինալ հարցերը։ Սա, մեղմ ասած, քաղաքական տհասություն և աղմկարարություն էր։ Այս հարցերի շուրջը եղած վեճերը ո՛չ վերջ ունեին, ո՛չ սահման։ Ելույթներում ամեն ինչ խառնվել էր իրար՝ սոցիալիզմ ու եկեղեցի, ազգ ու դասակարգ, սահմանադրություն ու դպրոց։ Քաղաքական մյուս հոսանքների ներկայացուցիչները, չհանդուրժելով դաշնակցության միահեծան վարքագիծը, հեռացան ժողովից։ Կառավարությունը օգոստոսի 30-ին կարգադրեց փակել ժողովը։ Իսկ հարցերը մնացին չլուծված։

Մինչև 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագրի համաձայն դպրոցական կանոնները պետք է մշակվեին փոխարքայի կողմից։ 1905 թ. նոյեմբերին հաստատելով բռնագրավված եկեղեցական ու դպրոցական գույքը վերադարձնելու կանոնները, փոխարքան կարգադրեց իր վարչական մարմիններին, նախապատրաստել նաև դպրոցական կանոնների նախագիծ։ Ներքին գործերի մինիստրությունը բացատրեց, որ ուսուցումը լինելու է մայրենի լեզվով, որ դպրոցները չպետք է ծառայեն որպես ռուսացման գործիք, որ նրանցում ռուսերենով է ավանդվելու միայն ռուսաց լեզուն, Ռուսաստանի պատմությունը և աշխարհագրությունը, իսկ կառավարությունը հսկելու է միայն, որ նրանցում հակապետական ելույթներ չլինեն, առանց խառնվելու ծրագրերի բովանդակության մեջ[1]։

1908 թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցան հատուկ հանձնաժողովի նիստեր, որոնք հայերի մասնակցությամբ քննեցին դպրոցական կանոնների հարցը։ Չհամաձայնվելով հանձնաժողովի մի շարք կետերին, հայերը հեռացան, և հանձնաժողովը միակողմանի ձևով մշակեց կանոններն ու ներկայացրեց կաթողիկոսին։ Սա ևս իր անհամաձայնությունը հայտնեց։ Չնայած դպրոցներին ազատություն տալու մասին արվող բարձրագոչ հայտարարություններին, կովկասյան իշխանություններն աշխատում էին նոր կանոնները հիմնել 1884 թ. և ոչ թե 1874 թ. կանոնների վրա, ինչպես նախատեսել էր ցարական հրովարտակը։ Դարձյալ առաջ էին քաշվում ուսուցչական ցենզի, ուսուցիչների ռուսահպատակության, ընտրովի հոգաբարձությունների դերի նսեմացման հարցեր։

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. V, էջ 16—17։

Ի վերջո, փոխարքան որոշեց կանոնների հարցը ինքնահոսի թողնել և ընտրեց պետական ու ազգային դպրոցների ազատ մրցության սկզբունքը, հաստատ համոզված լինելով, որ պետական դպրոցը, ունենալով բազմաթիվ արտոնություններ, հաղթող է դուրս գալու։

Այս բոլորից հետո կաթողիկոսը 1910 թ. որոշ փոփոխություններով հաստատեց նախօրոք ժամանակավոր գործածության համար ընդունված ծխական դպրոցների ծրագիրը (փորձի համար)։ Ընդունվեցին նաև մի քանի հրահանգներ ու կանոններ, որոնք մասնակի փոփոխություններով մնացին մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Անհրաժեշտ է հիշատակել, որ այս շրջանում դպրոցական կանոնների ու ծրագրերի մեջ ղգալի ձախացում էր կատարվել, կրճատվել էին կրոնի ժամերը, մտցվել էին նոր բնագիտական առարկաներ, միդասյա ծխական դպրոցի տևողությունը որոշ դեպքերում հասցվել էր չորս, իսկ երկդասյայինը՝ վեց տարվա։

Անկախ կանոններից ու ծրագրերից, 1905 թ. օգոստոսից հետո հայկական եկեղեցական-ծխական դպրոցներն սկսել էին անկի պես աճել։ 1906 թ. սկզբներին Անդրկովկասի հայկական չորս թեմերում կար արդեն 144 այդպիսի դպրոց։ 1912/13—ուսումնական տարում հայկական դպրոցների թիվը հասավ 375-ի, որոնցում կային հազար ուսուցիչ և 28 հազար աշակերտ[1]։ Նախկինի համեմատությամբ ավելացավ նաև միջնակարգ դպրոցների թիվը։

Դարձյալ աշխուժացավ հայ մանկավարժությունը, ձևավորվեց ու զարգացավ նրա մաքսիստական թևը։ Հայ ուսուցչությունը 1905 թ. օգոստոսի 1-ից անմիջապես հետո որոշեց կազմակերպվել, Թիֆլիսում եղան ժողովներ, իսկ 1907 թ. կանոնադրության հաստատումից հետո հրապարակ եկավ «Կովկասահայ դպրոցների ուսուցչական միությունը», որը հաջորդ տարվանից ունեցավ իր տպագիր օրգանը՝ «Նոր դպրոց» ամսագիրը։ Նոր ծավալ ստացավ դասագրքերի ստեղծման գործը. հայ մշակույթի ներկայացուցիչներից շատերը՝ Ավ. Իսահակյանը, Հ. Թումանյանը, Ղ. Աղայանը, Ստ. Լիսիցյանը, Լ. Շանթը, Ա. Աբեղյանը, Լ. Մանվելյանը, Վ. Փափազյանը, Տ. Ռաշմաճյանը և ուրիշներ հավաքական ուժերով ստեղծեցին դպրոցական նոր դասագրքեր։

Սակայն այս շրջանում ևս հայ դպրոցի առաջ կանգնեցին

---

[1] «Նոր դպրոց», 1913, № 8—9, էջ 20։

հին ցավերն ու խոչընդոտները։ Դարձյալ նույն անապահովությունն ու անորոշությունը, դարձյալ ուսուցչի դառն ու աննախանձ վիճակը, աղայական տարրերի կամայականությունն ու գզվռտոցը մաշում էին դպրոցի բազմատանջ մարմինը և դարձյալ հայ ժողովրդի ու նրա լավագույն ներկայացուցիչների անձնազոհությամբ էր, որ նա կարողանում էր գոյություն ունենալ։

Այս վիճակը մնաց անփոփոխ մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը։

* * *

1903 թ. հունիսի 12-ի օրենքի ուժով սանձազերծված համաժողովրդական պայքարը իր կարևոր և ուրույն տեղն ունի հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների մեջ։ Ծագելով ցարիզմի վարած ազգահալած քաղաքականության հողի վրա, այդ պայքարը գործնականորեն ու տրամաբանորեն ուղղվեց ցարիզմի դեմ ընդհանրապես, կարևոր օղակ հանդիսացավ Ռուսաստանի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների շղթայում։ Ռուսական առաջին հեղափոխության մեջ ազգային հարցը ոչ պակաս կարևոր դեր էր խաղում, և ազգային-ազատագրական շարժումները խարխլում էին ցարական բռնակալության հիմքերը։ Ռուսաստանում և, մասնավորապես Անդրկովկասում, հեղափոխական ճգնաժամի հասունացման գործում հայ ժողովրդի հակացարական պայքարը իր որոշակի դերը խաղաց։

Հայկական հուզումները հնարավոր դարձան շնորհիվ երկրում խմորվող հեղափոխական պայքարի։ Այդ մասին Բ. Կնունյանցը հետևյալն էր գրում. «Բայց սխալ կլիներ կարծել, որ միայն այդ օրենքը (հուլիսի 12-ի օրենքի մասին է— Վ. Ե.) ի վիճակի կլիներ նման փոթորիկ առաջացնել։ Խաղաղ կուլտուրական ձեռնարկությունների սիստեմատիկ հետապնդումները, տըխրահռչակ «ռուսացման» քաղաքականությունը, 300-ից ավելի հայկական դպրոցների փակումը, բարեգործական հիմնարկների գործունեության սահմանափակումը, հրատարակչական ընկերության փակումը և մի ամբողջ շարք նման միջոցառումներ կամաց-կամաց առաջ բերեցին սուր հակամարտություն հայկական ազգաբնակչության և կառավարության միջև, որը վաղ թե ուշ պետք է պայթեր։ Բայց վերջին միջոցը, ինչպես և նախորդները, կարող էր մնալ առանց բացահայտ հեղափոխական բողոքի, եթե չլիներ բանվորական մասսաների հերոսական պայքարը Կովկա-

սի արդյունաբերական կենտրոններում, որը ցույց ավելց ամբողջ երկրին, որ ինքնակալության դեմ պետք է և կարելի է պայքարել»[1] (ընդգծումները իմն են—Վ. Ե.)։

Ազդվելով ու ոգեշնչվելով պրոլետարիատի պայքարից, հայկական հուզումներն իրենց հերթին նպաստում էին զանգվածների քաղաքական ակտիվության աճին։ «Իսկրայի» նույն համարում Կնունյանցը գրում էր. «Կովկասի ներկա իրադարձությունների արդյունքներից մեկը հեղափոխական գիտակցության աճն է, անհաշտ-թշնամական տրամադրության աճը ինքնակալության դեմ նույնիսկ խուլ գյուղերում։ Անլեգալ գրականությունը խլում են միմյանց ձեռքից։ Միութենական Կոմիտեն ամեն տեղից ապուատացիոն գրականության պահանջներ է ստանում։ Այս իրադարձությունների ժամանակ մեր պրոկլամացիաները թափանցեցին Կովկասի այն բոլոր անկյունները, որտեղ կա հայ ազգաբնակչություն, և շուտով մեզ կհաջողվի այնտեղ կազմակերպել մեր խմբակները»[2]։

Դասակարգային ու ազգային-ազատագրական պայքարի փոխազդեցության հիանալի օրինակ է Լոռին։ Այստեղ կալվածատիրոջ դեմ ելած գյուղացիների տրամադրության վրա ակնառու էր հայերի հակացարական շարժման ազդեցությունը։ Նույնը կարելի է ասել նաև Բաքվի, Թիֆլիսի, Ալավերդու և մի շարք այլ վայրերի բանվորական շարժումների մասին, երբ քաղաքականապես ակտիվացած հայ աշխատավորությունը ավելի ու ավելի լայնորեն էր ներգրավվում դասակարգային պայքարի մեջ։

Բացի այդ, հայկական հուզումները այն դրական նշանակություն էին ունենում ընդհանուր հեղափոխական պայքարի տեսակետից, որ նրանք շատ դեպքերում իրենց վրա էին դամում ցարիզմի ուշադրությունը, ջլատում ու ցրում էին նրա զինված ուժերը, խանգարում էին հեղափոխության դեմ լայն ճակատով հարձակմանը։

1903 թ. նշանավոր է նաև նրանով, որ այդ տարին հայ ժողովուրդն առաջին անգամ լայն չափերով բացահայտ պայքարի ելավ ցարիզմի ազգային-դաղութային ճնշման դեմ, զենքը ձեռքին կռվեց։ Հայ ժողովուրդը, որ հնազանդ ու բարեհույս տարր էր համարվում, մասսայաբար դեն նետեց այդ կարծեցյալ հնազան-

---

1 «Искра», 1903, № 49։

2 Նույն տեղում։

դության քողը և բռնեց գործուն պայքարի ուղին։ 1903 թ. ՌՍԴԲԿ Կովկասյան միության «Ընկերներ» թռուցիկում այդ մասին ասվում էր հետևյալ պերճախոս միտքը. «Երեկվան խաղաղ ստրուկ հայ մարդը այսօր ազատության մարտիկ է դարձել, երեկվան անհոգ խանութպանը այսօր կուրծքը բաց դուրս է գալիս ցարի զաղանությունների դեմ իր իրավունքները պաշտպանելու և կամ մեռնելու որոշումով»[1]։ Հայ աշխատավորության նորանոր զանգվածներ սթափվում էին ստրկական թմրությունից, վերագնահատում էին հպատակության ու հնազանդության մասին իրենց պատկերացումները, փորձում էին կողմնորոշվել քաղաքական բարդ իրադրության մեջ։

Որ հեղափոխության նախօրյակին բռնկած հայկական հուզումները խոշոր դեր խաղացին ընդհանուր հեղափոխական հըրդեհի բորբոքման գործում, ժողովրդական զանգվածներին հետագա պայքարի լիցքեր հաղորդեցին, դրանում կասկած լինել չի կարող։ Սակայն ցարական բյուրոկրատիան ժամանակին չափից ավելի մեծ տեղ էր հատկացնում հայկական շարժմանը. այն դեպքում, երբ Թուրքիան բռնված էր գյուղացիական ապստամբությունով, քաղաքներում մոլեգնում էր գործադուլային պայքարի հրդեհը, ցարական չինովնիկները առաջին պլանի վրա էին քաշում «հայկական-հեղափոխական շարժումը», նրանում էին տեսնում ցարիզմին սպառնացող գլխավոր վտանգը[2]։

Սրա նպատակը պարզ էր. առաջ քաշելով հակացարական պայքարի ազգային կողմը, բյուրոկրատիան ցանկանում էր հասարակության ուշադրությունը շեղել պրոլետարիատի հեղափոխական-դասակարգային պայքարից, կոծկել սոցիալական սուր հակասությունները, նսեմացնել բանվորական շարժման թափն ու ծավալը։ Միապետական-սահմանադրականները միաժամանակ ցանկանում էին ռուսական հասարակությանը ոտքի հանել «այլազգիների» դեմ, որոնք հայտարարվում էին երկրում սկսված «խառնակությունների» պատճառը։

Անկախ բյուրոկրատիայի միտումնավոր գնահատականից, հունիսի 12-ի օրենքի դեմ սկսված շարժումը, որի ժամանակ ամբողջ ուժով հնչեց ժողովրդի մեջ տարիներով կուտակված ցաս-

---

1 «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 42։

2 Տե՛ս Թիֆլիսի դատական պալատի դատախազի 1904 թ. հոկտեմբերի 20-ի զեկուցագիրը՝ ՍՍՀՄ ՊԿՊԱ, ֆ. 1405, ց. 530, գ. 996, էջ 90—97, ինչպես նաև սենատոր Կուզմինսկու զեկուցագիրը և այլն։

ման ու բողոքի ձայնը, «իր բովանդակությամբ ու բնույթով ազգային-ազատագրական ռևոլյուցիոն մի շարժում էր»[1]: Նրանում գործում էին հասարակական տարբեր ուժեր ու հոսանքներ իրենց տարբեր շահերով ու ձգտումներով: Դրա համար էլ այն կրում էր տարերային բնույթ, ժողովրդական զանգվածներն էին, որ իրենց հախուռն բողոքով, ինքնաբուխ պայքարով ուղղություն էին տալիս շարժմանը: Ստ. Շահումյանը այդ պայքարն անվանեց «ռևոլյուցիոն զգացմունքի տարերային բռնկում»[2]:

Այն հանգամանքը, որ հաճախ մոռացության է տրվում ռուսական առաջին հեղափոխության տարիներին և, մանավանդ, նրա նախօրյակին տեղի ունեցած զանգվածային ըմբոստացումների մեջ առկա տարերայնության մոմենտը, սխալ եզրակացությունների տեղիք է տալիս: «Կասկած չի հարուցում, որ տարերայնության տարրը խիստ էական դեր էր խաղում աշխատավորների լայն զանգվածների ելույթների մեջ»[3]:

Անտեսելով տարերայնությունը, որոշ ուսումնասիրողներ ճիշտ չեն գնահատում 1903 թ. հայկական հակացարական շարժման մեջ սոցիալ-դեմոկրատիայի կատարած դերը: Օրինակ, Հ. Ա. Իսահակյանն իր «Լենինյան «Իսկրան» և ռևոլյուցիոն շարժման վերելքը Անդրկովկասում» աշխատության մեջ ուղղակի գրում է. «...1903 թ. ամռանը և աշնանը Հայաստանում ծավալված հակացարական հզոր շարժումը (ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում) ղեկավարվում էր ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեների կողմից»[4]: Նման եզրակացության հիմքն է ծառայել այն հանգամանքը, որ սոցիալ-դեմոկրատներն իրենց ակտիվ վերաբերմունքով աշխատում էին հեղափոխության շահերին ծառայեցնել ազգային-ազատագրական, հակացարական շարժումները, ցարիզմի դեմ ստեղծել համաժողովրդական միասնական ճակատ, նոր շունչ ու բովանդակություն հաղորդել հայկական աշխատավորական զանգվածի ելույթներին: Դա բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ բոլշևիկների վարած «ձախ բլոկի» տակտիկայի դրսևորումներից մեկն էր: Անառարկելիորեն

---

1 Վ. Պարսամյան, *Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 30:*

2 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 1, Երևան, 1955, էջ 51:*

3 «История Коммунистической партии Советского Союза», т. 2, М., 1966, стр. IX.

4 Հ. Ա. Իսահակյան, *Լենինյան «Իսկրան» և ռևոլյուցիոն շարժման վերելքը Անդրկովկասում, Երևան, 1963, էջ 159:*

հայկական աշխատավորական զանգվածն ավելի ու ավելի ուշադրությամբ էր ունկնդրում բոլշևիկների ձայնին, սակայն բոլշևիկյան կազմակերպությունները դեռևս երկար տարիների դաժան ու համառ աշխատանք պետք է կատարեին զանգվածներին զանազան մանրբուրժուական ու ազգայնական ազդեցությունից հանելու և նրանց մեջ դասակարգային բարձր գիտակցություն արմատավորելու համար:

Հայկական շարժումն ուներ ներքին հակասություններ: Այն հանգամանքը, որ բուրժուազիան ցանկանում էր ժողովրդական պայքարն օգտագործել ցարիզմին վախեցնելու և նրա հետ շահավետ գործարք կնքելու համար, աշխատում էր զանգվածներին հեռու պահել պրոլետարական շարժումից, մեծ չափով վնասում էր շարժման ծավալմանը, հաճախ մանրացնում էր այն: Վ. Ի. Լենինը 1916 թ. գրում էր, որ «Յուրաքանչյուր ազգային ճնշում առաջ է բերում հակահարված ժողովրդի լայն մասսաների մեջ, իսկ ազգայնորեն ճնշված բնակչության յուրաքանչյուր հակահարվածի տեղեկեցն ազգային ապատամբություն է»[1]: Հենց այդպիսի ապատամբություն էր և հայկական ընդվզումը: Սակայն Լենինը ղգուշացնում էր ազգային բուրժուազիայի երկերեսանիությունից և գրում, որ «նման դեպքում ռևոլյուցիոն մարքսիստների քննադատությունը պետք է ուղղվի ո՛չ թե ազգային շարժման դեմ, այլ այդ շարժումը մանրացնելու, գռեհկացնելու, խեղաթյուրելու և մանր գլվուտոցի վերածելու դեմ»[2]:

Հարկ կա երկու խոսքով կանգ առնել մի հարցի վրա ևս: Մի շարք ուսումնասիրողներ (Ե. Մելիք-Յոլչյան, Դ. Ե. Գաբրիելյան, Գ. Հարությունյան) ընդունելով հայկական ելույթների համաժողովրդական, տարերային բնույթը, գտնում են, որ դաշնակցականների դավաճանական քաղաքականության հետևանքով շարժումը շուտով մարեց: Որ դաշնակցականները նեղացնում էին շարժման շրջանակները, այն հեռու էին մղում համառուսական հեղափոխական շարժումից, դրանում երկու կարծիք լինել չի կարող: Սակայն արդյո՞ք մարեց ազգային շարժումը: Ինչպես ցույց են տալիս 1904 թ. իրադարձությունները, շարժումը բռնել էր ցարական իշխանությունների նկատմամբ ակտիվ բոյկոտի ճանապարհը, որը դրսևորվում էր նաև ազգային կյանքի բազմաթիվ

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 68:

2 Նույն տեղում, էջ 69:

այլ ասպարեզներում: Ճիշտ է, շարժման թափը կոտրվեց, երբ ցարիզմը զենքի ուժով բռնագրավեց եկեղեցական ունեցվածքը, այն նկատելիորեն մաներացավ, բայց չմարեց:

Զենքի ուժով հայկական եկեղեցու գույքի բռնագրավումը զբոսիս բերելու գործում ցարիզմին մեծապես նպաստեց այն, որ հեղափոխությունը դեռևս չէր բռնկել, ցարիզմը դեռևս անհրաժեշտ ազատ ուժեր ուներ դրանք հայ ժողովրդի դեմ ուղղելու համար: Անտարակույս, եթե հայերի ազգային-ազատագրական պայքարը պոռթկար մի փոքր ավելի ուշ, հեղափոխության վերելքի շրջանում, ապա պատկերը բոլորովին այլ կլիներ: Չպետք է մոռանալ, որ ցարիզմը զանազան դիջողություններիի, խուսանավման միջոցով աշխատում էր մեղմել իր դեմ ուղղված հարվածը: Չպետք է մոռանալ նաև, որ նրա այդ քաղաքականությունը ռուսական առաջին հեղափոխության շրջանում ընդհանրապես որոշ հաջողություն գտնում էր, չլսելով ցարիզմի պատվարը գրոհող ուժերի միասնությունը: Չպետք է վերջապես մոռանալ, որ սանձազերծված հայ-ադրբեջանական կոտորածները վերջին դերը չխաղացին հայ ժողովրդի պայքարող ուժերը կազմալուծելու և արմատական հարցերից շեղելու գործում:

Այս ամենով հանդերձ, հայկական շարժումը, վերջին հաշվով, հաղթանակով պսակվեց: Այդ շարժումն ուներ իր դրդապատճառներն ու նպատակը: Այն ցանկանում էր վերականգնել հայ ժողովրդի կուլտուրական ինքնավարությունը, կյանքի կոչել ազգային դպրոցները, նաև ստանալ և ժողովրդական կրթության նպատակներին ծառայեցնել եկեղեցու ունեցվածքը, որը ճանաչվում էր որպես ազգային հարստություն: Անշուշտ շարժման նպատակներից էր նաև ազգային եկեղեցին կրոնական հալածանքից ազատելու ձգտումը: 1905 թ. օգոստոսի 1-ին ցարիզմն ստիպված էր բավարարել համաժողովրդական շարժման պահանջները: Անտարակույս, սա հաղթանակ էր, և եթե շարժումը մարած լիներ, դժվար թե ցարը որևէ քայլի դիմեր ժողովրդի պահանջը կատարելու համար: Հասնելով իր առջև դրած հիմնական խնդիրների բավարարմանը, շարժումը նոր միայն, և այն էլ առ ժամանակ, մարեց:

Ամբողջ ասվածից կարելի է եզրակացնել, որ հունիսի 12-ի օրենքի դեմ հայ ժողովրդի հակացարական, ազգային-ազատագրական պայքարը եզակի մի ընդվզում էր, այն բացառիկ կարևոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի և նրա ինքնատիպ մշակութային կյանքի գոյատևման համար:

Հայ ժողովուրդն իր հաղթանակով պարտական եղավ համառուսական ծավալվող հեղափոխությանը, որն ստիպեց ցարիզմին ունկնդրել ոտնահարված, բայց պայքարող ժողովրդի ձայնը։ Վ. Ի. Լենինի խոսքերով ասած՝ «միմիայն համառուսաստանյան ռևոլյուցիան խանգարեց խլել...» հայկական եկեղեցական հողերը[1]։

Հայ ժողովուրդը հնարավորություն ստացավ դարձյալ իր զավակներին մայրենի լեզվով կրթություն տալու, փրկվեց ազգային և կուլտուրական դիմազրկումից։

* * *

Հայ նոր դպրոցի կազմավորումն ու հետագա զարգացումն ըստ էության խորապես առաջադիմական մի երևույթ էր։ Չնայած դպրոցի շուրջը ծավալվող հասարակական տարբեր խմբավորումների պայքարին ու նրա հոդևոր պատյանին, չնայած դպրոցի ունեցած թերություններին ու նրա մարմինը մաշող հակասություններին, այն շեշտված ժողովրդական հաստատություն էր և հանդիսանում էր ազգային լեզվի ու ոգու պահպանության ու զարգացման՝ ժողովրդի համար գրեթե միակ մատչելի ու տարածված հիմնարկությունը։

Հայ դպրոցի համար ծավալված հասարակական պայքարը, նրա բարելավման ու զարգացման համար տեղի ունեցող բախումները, փաստորեն, դեմոկրատական ուժեղ շեշտվածությամբ ազգային մի շարժում էին։ «Ազգային սկզբունքը,— գրում էր Վ. Ի. Լենինը,— պատմականորեն անխուսափելի է բուրժուական հասարակության մեջ, և հաշվի առնելով այդ հասարակությանը՝ մարքսիստը լիովին ընդունում է ազգային շարժումների պատմական օրինականությունը»[2]։

Ցարական բռնակալության պայմաններում, երբ ժողովրդական լուսավորության գործը գտնվում էր ռեակցիոն շրջանների ուժեղ ազդեցության տակ, երբ պետությունն ամեն կերպ աշխատում էր ժողովրդական զանգվածներին հեռու պահել դպրոցի վրա որևէ ներգործություն ունենալուց, վերջապես, երբ «այլազգիներին» մեծամասնությունը, զրկված լինելով ազգային դպրոցներ պահելու հնարավորությունից, պետական ուսումնական հաստատություններում չէր կարող հաղորդակից լինել իր մայրենի լեզվին ու մշա-

---

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 13, էջ 425։

2 Նույն տեղում, հատ. 20, էջ 23։

կույթին, առավել ևս ընդգծվում է հայ դպրոցի առաջադիմական-ժողովրդական բնույթը։

Պայքարելով ազգային դպրոցի ինքնավարության համար, հայ ժողովուրդը ըստ էության, պայքարում էր մայրենի լեզվի, հարազատ մշակույթի ազատության համար, ազգային գոյության համար. մայրենի լեզուն նա դիտում էր իր՝ որպես ազգի, գոյություն ունենալու գլխավոր պայմաններից մեկը։

Վ. Ի. Լենինը բուրժուազիայի տիրապետության պայմաններում ճնշված ժողովուրդների պայքարը հանուն իրենց ազգային սուվերենության դրական երևույթ էր համարում։ 1913 թ. նա գրում էր. «Մարքսիստ չէ նա, անգամ դեմոկրատ չէ նա, ով չի ընդունում և չի պաշտպանում ազգերի ու լեզուների իրավահավասարությունը, ով չի պայքարում ամեն մի ազգային ճնշման կամ անիրավահավասարության դեմ»[1]։

Հայ ժողովուրդն իր համառ պայքարով կարողացավ դիմանալ ցարիզմի ճնշմանը, ու, թեև մոտ տասը տարի դպրոցները փակ մնացին, այնուամենայնիվ, նա ետ նվաճեց ազգային դպրոցի հարաբերական ազատությունը։ Հայ ժողովուրդը պահպանեց իր դպրոցն ու նրա դարավոր ավանդությունները, դպրոցը ժողովրդի համար պահպանեց նրա մայրենի լեզուն ու ազգային կերպարանքը։

Բայց միայն ցարիզմի տապալումից հետո էր, որ Ռուսաստանի մյուս իրավազուրկ ժողովուրդների հետ միասին, հայ ժողովուրդն ստացավ ազգային վերածննդի, ժողովրդական լուսավորության իսկական հնարավորություն։ Բոլշևիկների կուսակցությունը դեռ 1903 թ. իր ծրագրում ի լուր աշխարհի ազդարարել էր. «Բնակչության՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքը, այն ապահովելով պետության և ինքնավարության օրգանների հաշվին անհրաժեշտ դպրոցների ստեղծումով. յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը՝ ժողովներում արտահայտվելու մայրենի լեզվով. բոլոր հասարակական և պետական տեղական հաստատություններում մտցնել մայրենի լեզու՝ պետականի հետ համահավասար կերպով[2]։

Հոկտեմբերյան հեղափոխությունը իրագործեց դեռևս դարասկզբին բոլշևիկների նախանշած սկզբունքները։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 15։

2 «ՍՄԿՊ-ն բանաձևերում», մաս I, 1954, էջ 45—46։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ց Ա Ն Կ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ՍՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվ (Լենինգրադ)

Ֆ. 229, ց. 2, 1136: Ֆ. 573, ց. 14, գ. 18994: Ֆ. 741, ց. 1, գ. 99: Ֆ. 744, ց. 6, գ. 144: Ֆ. 776, ց. 12, գ. 77, 78: Ֆ. 821, ց. 138, գ. 71, 72, 99, 100, 101, 102, 103. 107, 108, 109, 145: ց. 139, գ. 11, 54, 84, 103, ա: ց. 140, գ. 52, 53, մ. I, II, III, IV, V: ց. 147, գ. 7, 20, 31: ց. 150, գ. 272: Ֆ. 880, ց. 5, գ. 369: Ֆ. 932, ց. 1, գ. 399: Ֆ. 1101, ց. 1, գ. 983: Ֆ. 1268, ց. 25, գ. 269: Ֆ. 1405, ց. 521, գ. 417: ց. 530, գ. 93, 996:

Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ

Ֆ. 2, ց. 1, գ. 97: Ֆ. 7, ց. 1, 29, 33, 50, 153: Ֆ. 19, ց. 1, գ. 111, 126, 140, 1780, 1782: Ֆ. 20, ց. 1, գ. 62, 103, 130, 340: Ֆ. 22, ց. 1, գ. 154, 276: Ֆ. 27, գ. 21, 24, 55: Ֆ. 28, գ. 281, 283: Ֆ. 35, ց. 1, գ. 74, 99: Ֆ. 56, ց. 3, գ. 5, 31, 32, 50, 113, 114, 119, 138, 199, 311, 314, 331, 350, 371, 456: ց. 4, գ. 333: ց. 6, գ. 501: Ֆ. 57, ց. 1, գ. 147, 325, 433: Ֆ. 101, ց. 1, գ. 50: Ֆ. 102, ց. 1, գ. 68, 776: Ֆ. 113, ց. 1, գ. 41, 45, 92ա, 124, 583: ց. 5, գ. 65: Ֆ. 114, ց. 2, գ. 51, 53: Ֆ. 115, գ. 5: Ֆ. 312, թղթ. 37, վավ. 1:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտի «Մատենադարանի» արխիվային բաժին

Կաթ. դիվան, թղթ. 336 ժ, վավ. 17, թղթ. 336 ժա, վավ. 84, թղթ. 337, II, վավ. 4, 74: Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 149, վավ. 172: Մ. Սմբատյանի արխիվ, թղթ. 217, վավ. 1: Գ. Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 24, վավ. 326: Մատթեոս արքեպս. արխիվ, թղթ. 168, վավ. 1, թղթ. 169, վավ. 14 դ:

Հայկական ՍՍՀ գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժին

Ագանյանի արխիվ, № 106, 155: Ենիկոլոպովի արխիվ: Հովվյանի արխիվ, № 16: Քամալյանի արխիվ, բաժին VIII, № 24: «Մուրճի» արխիվ, № 209 II: Սեդրակյանի արխիվ, № 4, 5, 8, 10, 14:

Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ

Լեոյի արխիվ, ց. 1, գ. 111, 127: Մ. Թամրազյանի արխիվ, № 115: Գ. Ղարաջյանի արխիվ, № 88: Ն. Նիկողոսյանի արխիվ, № 103:

К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. II, т. I, 1955.

Վ. Ի. Լենին, երկեր, 4-րդ հրատ, հատ. 4, 9, 13, 17, 19, 20, 23, 26։

Աբեղյան Մ. Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, Վաղ-պատ, 1899։

Աբռվյան Խ. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, 5։

«Ա. ընծայաբերություն Ներսիսյան դպրոցի... հոբելյանի օրվան», Մի գյումրեցոց կողմից, Թիֆլիս, 1874։

Անկուևի Է. Դևպի կոխվ, ժնև, 1904։

Անկուևի Է. Կովկասյան վերքեր, հատ. I, ժնև, 1903։

Աղայան Դ. Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1963։

Այվազյան Գ. Պատմություն Խալիպյան ուսումնարանի ազգիս հայոց (1858—1871), Թիֆլիս, 1880։

Անանուն Գ. Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800—1870), հատոր 1, Բաքու, 1916, հատ. 2 (1870—1900), էջմիածին, 1922։

Բարսեղյան Խ. Մի էջ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1964, № 3։

Դեղամյան Ե. Ռուս բյուրոկրատիան և հայերը, Բաքու, 1917։

Գամաղելյան Մ. Գ. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի պատմությունից, «Սովետական մանկավարժ», 1964, № 3։

Գամաղելյան Մ. Գ. Առաջադիմական գաղափարների թափանցումը Գևորգյան ճեմարան և աշակերտական հեղափոխական ելույթները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 10։

Դանիելյան Ս. Գ. Սեդրակ Մանդինյան, Երևան, 1964։

Երզնկյանց Գր. Պատմություն մանկավարժության (Հայկական կրթական բաժնով), Թիֆլիս, 1895։

Երիցյանց Աղ. Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, հատ. 1 (1824—1850), Թիֆլիս, 1898։

Երկանյան Վ. Ս. Էջեր Անդրկովկասի հայկական դպրոցի պատմությունից (1880-ական թթ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1967, № 1։

Երկանյան Վ. Ս. Հայ դպրոցը և ցարիզմի քաղաքականությունը (1890-ական թթ.). (Փաստաթղթերի հրապարակում), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1967, № 1։

Երկանյան Վ. Ս. Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 1։

Երկանյան Վ. Ս. Հայերի կրթական գործի զարգացման ընդհանուր բնութագիրը Անդրկովկասում 19-րդ դարի երկրորդ կեսին, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտ.-ների», 1967, № 6։

Երկանյան Վ. Ս. Արևելահայ մանկավարժական մամուլը և դպրոցը (1870—80-ական թթ.), «Սովետական մանկավարժ», 1967, № 6։

Էդիլյան Գ. Սեդրաք Մանդինյան, Թիֆլիս, 1916։

«Ընդհանուր ցուցակ անձանց յորոց ընտրեսցին ուսուցիչք և ուսուցչուհիք վասն եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց», Վաղ-պատ, 1889։

Իսաևակյան Հ. Ա. Լենինյան «Իսկրան» և ուսուցիչն շարժումները Անդրկովկասում, Երևան, 1963։

Լեո. Հայոց պատմություն, Նորագույն շրջան, մաս 2, Երևան, 1927։
Լեո. Անցյալից, Թիֆլիս, 1925։
Լեո. Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837—1912), Թիֆլիս, 1914։
Լեո. Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838—1913), Թիֆլիս, 1914։
Լեո. Երևանամյակ հայոց բարեգործական ընկերության կովկասում (1881—1911)։ Թիֆլիս, 1911։
Խատիսյան Գ. Մանկավարժական խորհրդակցություններ։ Հայկական ծխական ուսումնարաններ, Ա. մաս, Թիֆլիս, 1882։
«Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց և ծրագիր առարկայից ավանդելոց ի նոսին», Վաղ-պատ, 1889։
Կասյան Ս. Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում, «Նորք», 1923, № 3։
«1837—1887—Յիսնամեակ հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երևանայ», Թիֆլիս, 1888։
Հակոբյան Թ. Խ. Երևանի պատմությունը (1879—1917), Երևան, 1963։
Հակոբյան Հ. Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1958։
Համբարյան Ա. Ս. Հայոց եկեղեցական բունագրաված դույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903—1905 թթ., ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 10։
«Հայ մանկավարժներ (19-րդ դար)», կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա. Մ. Շավարշյանը, գիրք Ա, Երևան, 1958, գիրք Բ, XIX—XX դդ. (1920), Երևան, 1961։
«Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958։
«Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963։
«Հայոց ազգի ուսումնասիրությունը, ուսումնարանները և ուսուցիչները», Ս. Պետերբուրգ, 1865։
Հարությունյան Գ. Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1956։
Հարությունյան Իս. Ներսիսյան հոգևոր դպրոցի սանների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Թիֆլիս, 1894։
«Հին բոլշևիկների հիշողություններ», հատ. 1, Երևան, 1958։
Հովհաննիսյան Աշ. Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա, Երևան, 1955, գիրք Բ, 1956։
«Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակը», Շուշի, 1913։
«Ղարաբաղու Տիրամայր սուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվիլը», Շուշի, 1864։
Ղարաջյան Գ. (Ս. Մ. Արկոմեդ). Հայ անդրանիկ հեղափոխական խմբակն Անդրկովկասում, Թիֆլիս, 1927։
Ղարաջյան Գ. (Ս. Մ. Արկոմեդ). Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918։
Ղևոնյան Ա. Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912), Ալեք-պոլ, 1912։

Մալխասյան Ստ. *Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթանասունհինգամյա գոյության (1824—1899), Թիֆլիս, 1900։*
Մելիք-Թանգյան Ն. Վ. *Հայոց եկեղեցական իրավունքը, դիրք Ա, Շուշի, 1903։*
Մելիք-Յոլչյան Ե. *Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907, Երևան, 1930։*
Մելիքյան Հ. Ս. *Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908 թթ.), Երևան, 1957։*
Մելիքյան Մ. Ա. *Հայ ազգի կազմավորման և նրա սոցիալական վերափոխման հարցի շուրջը, Երևան, 1957։*
Մխիթար վարդապետ. *Հայերը Ռուսաստանում, Վաղ-պատ, 1906։*
Մուրադյան Դ. Ա. *Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907), Երևան, 1964։*
Մուրատյանց Մ. *Եպս. Երկու խոսք Ռուսաստանի հայոց կրոնական և կրթական վիճակին վրա, Կ. Պոլիս, 1888։*
Մովսիսյան Ա., Գասպարյան Մ. *Ուշինսկու ազդեցությունը հայ մանկավարժների վրա 1870-ական թվականներին, Երևան, 1945։*
Մովսիսյան Ս. Ա. *Ժողովրդական կրթության վիճակը և մարքսիստական մանկավարժական գաղափարների տարածումը Հայաստանում (1900—1917), Երևան, 1955։*
Նազարյանց Հովհ. *Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը, Թիֆլիս, 1883։*
Նալբանդյան Մ. *Ընտիր երկեր, Երևան, 1953։*
Ներսիսյան Հ. *Դաստիարակությունն ու կրթությունը հայ կանանց դպրոցներում 19-րդ դարի երկրորդ կեսին, «Գիտական աշխատություններ» (Երևանի պետ. համալսարան), ֆիլոլ. գիտ. սերիա, հատ. 65, պրակ 5, մաս 2, 1958։*
Ներսիսյան Հ. *Թիֆլիսի Գայանյան դպրոցի պատմությունից, «Սովետական մանկավարժ», 1959, № 3։*
Ներսիսյան Մ. Գ. *Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940։*
Ներսիսյան Մ. Գ. *Հայ ժողովրդի պատմություն (1900—1917), ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 5։*
Շահազիզ Ս. *Երկեր, Երևան, 1961։*
Շահումյան Ս. Գ. *Երկեր, հատ. 1, Երևան, 1966։*
«Պատմական համառոտ տեսություն Բաքվա հայոց մարդասիրական ընկերության 25-ամյա գործունեության (1864—1889)», Բաքու, 1891։
«Պատվիրակություն Սուքիաս եպիսկոպոսի ի Սանկտպետերբուրգ Հոգևոր դպրոցների մասին», Վաղ-պատ, 1907։
Պարսամյան Վ. Ս. *Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955։*
Պարսամյան Վ. Ս. *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958։*
Պռոշյան Պ. *Վերին Ագուլեաց երկու սեռից ուսումնարաններուն բացվիլը և կանոնադրությունքը, Մոսկվա, 1868։*
«Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ— 1902—1921», Երևան, 1960։
Սանթրոսյան Մ. Հ. *Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1964։*
Սարգսյան Լ. *Ժողովրդի կրթության գործը մեզանում, Մոսկվա, 1892։*

Սարգսյան Ն. «Դպրոց» ամսագրի դերը հայ մանկավարժության զարգացման գործում, «Սովետական մանկավարժ», 1965, № 7։
«ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս 1, Երևան, 1954։
«Վիճագրական տեղեկություններ եկեղեցական-ծխական ուսումնարանց հայոց...» Վաղ-պատ, 1888, 1889, 1890 թթ. հրատ.-ներ։
«Տաճնամյակ Սահականոցյան օրիորդաց հոգևոր ուսումնարանին հայոց Ալեքսանդրապոլու», Թիֆլիս, 1883։
«Տաճնամյակ սուրբ Գայանյան հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի», Թիֆլիս, 1879։
«Տեղեկագիր 1882/83-ուսումնական տարվա (Ս. էջմիածնի ճեմարանի)»։
Տեր-Գրիգորյան Ա., Դանիելյան Ա. Հայ ուսուցիչների առաջին համագումարը, «Սովետական մանկավարժ», 1958, № 11։
Բաֆֆի. Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1959։
Ուշինսկի Կ. Դ. Մանկավարժական ընտիր երկեր, հատ. 1, Երևան, 1958, հատ. 2, Երևան, 1959։
Օրմանյան Մ. արքեպս. Ազգապատում. հատ. Գ., մաս Գ, Պեյրութ, 1961։

Алибегов И. Г. Народное образование на Кавказе, Тифлис, 1903.
Арешян С. Г. Армянская печать и царская цензура, Ереван, 1957.
«Братская помощь пострадавшим в Турции армянам», II изд., М., 1898.
Величко В. П. Кавказъ. Русское дело и междуплеменные вопросы, СПб., 1904.
Витте С. Ю. Воспоминания, т. 2, М., 1960.
«Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта графа Воронцова-Дашкова», 1907.
«Всеподданнейший отчет о произведенной, по Высочайшему повелению, сенатором Кузминским ревизии города Баку и Бакинской губернии», 1905.
Габриэлян Д. Е. Революция 1905—1907 гг. в Армении, в сборнике «Революция 1905—1907 годов в национальных районах России», М., 1949.
Горохов В. М. Реакционная школьная политика царизма в отношении татар Поволжья, Казань, 1941.
Горький М. Собрание сочинений, тт. 23 и 28, М., 1953 и 1954.
Дживелегов А. К. Армяне в России, М., 1906.
«Доклад Его Императорскому Высочеству Наместнику Кавказскому Главного Инспектора учебных заведений Д. С. С. Неверова».
Ерканян В. С. Армянская школа в Закавказье в 1870—1880-е годы (автореферат канд. диссертации), Ереван, 1967.
«Записка об армянских школах» (составители Ал. Харузин и А. Петров), СПб., типография МВД, 1911.
«История Коммунистической партии Советского Союза», тт. I и II, М., 1964 и 1966.
«История СССР», т. II, М., 1965.
«Колониальная политика российского царизма в Азербайджане в 20—60-х годах XIX в.», ч. I, М.—Л., 1936.

Константинов Н. А., Струминский В. Я. Очерки по истории начального образования в России, М., 1953.

«Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя св. Григория Просветителя Армении с 1864 по 1896 гг.», составил А. Калустянц, Баку, 1896.

Линч Х. Ф. Б. Армения. Путевые очерки и этюды, т. I, Тифлис, 1910.

Оболадзе Уш. Очерки по истории общеобразовательной школы в дореволюционной Грузии, Тбилиси, 1957.

«Отчет по Главному управлению наместника Кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем Его Императорским Высочеством Великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862—6 декабря 1872 гг.», представлен начальником (1864—1900) (по материалам Тбилиси), автореферат кандидатский Гл. управления бароном Николаи, Тифлис, 1873.

«Отчет попечителя Кавказского учебного округа о состоянии учебных заведений за 1878, 1894, 1897 гг.», Тифлис, 1879, 1895 и 1898 гг.

Папава Н. А. Народное образование в Грузии во второй половине XIX в. диссертации, Тбилиси, 1964.

«Положение 11 марта 1836 г. и эчмиадзинские католикосы под русским владычеством. Исторический очерк», Тифлис, 1904.

«Правила об армяно-григорианских церковных училищах на Кавказе».

«Русские писатели об Армении», составители С. Арешян и Н. Туманян, Ереван, 1946.

«Сборник армянской литературы», под редакцией М. Горького, Петг., 1916.

«Свод статистических сведений по учебным заведениям Кавказского учебного округа за двадцатилетний период—1878—1898 гг.».

«Собрание узаконений и распоряжений правительства», 1904, отдел I, второе полугодие, СПб.

«Труды особого совещания по вопросам образования восточных инородцев», под ред. А. С. Будиловича, СПб., 1905.

Чалхушян Гр. Армянский вопрос в России, Ростов, 1905.

Чехов Н. В. Народное образование в России с 60-х годов XIX в., М., 1912.

ՄԱՄՈՒԼ

«Արարատ»—1868, № 3, 6, 1869, № 1, 10, 1873, № 12, 1874, № 7, 1880, № 4, 1883, № 1—2, 1885, № 3, 1902, № 3—4, 1905, № 9։

«Հայկական աշխարհ»— 1874, № 1։

«Դպրոց»— 1874, № 1, 1875, № 7, 1875—76, № 4, 6։

«Մանկավարժական թերթ»— 1878, № 1, 2։

«Վարժարան»— 1882, № 1—2։

«Մանկավարժանոց»— 1884, № 1։

«Պահակ»— 1883, № 1։

«Մշակ»— 1872, № 1, 11, 1895, № 139, 1896, № 106, 128, 1897, № 75, 1903, № 195, 197, 1905, № 53, 61, 66, 73, 126, 127, 156։

«Նոր-Դար»— 1884, № 43։
«Փորձ»— 1877, № 4։
«Արձագանք»—1882, № 11, 27, 28, 1884, № 9, 29, 1888, № 11, 1889, № 33, 1892, № 62։
«Մուրճ»— 1900, № 1։
«Արևելյան մամուլ»— 1885, № 3, 1886, № 5, 8, 9։
«Մասիս»—1884, 29 դեկտեմբերի։
«Հումա»— 1905, № 8, 1911, № 1—2։
«Հովիվ»— 1909, № 43, 46։
«Նոր դպրոց»— 1908, № 1, 1913, № 8—9։
«Նորք»— 1923, № 2, 3։

«Искра» — 1903, № 49, 50.
«Журнал Министерства народного образования» — 1869, ч. 142.
«Русская школа» — 1901, № 1, 4.
«Новое время» — 1897, № 7494, 1903, 4 сентября.
«Вестник воспитания» — 1905, № 9.
«Армянский вестник» — 1917, № 14.

Ա Ն Ձ Ն Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Ց Ա Ն Կ

Աբամելիֆ-Լազարյան Ս. 146—147, 263
Աբեղյան Ա. 284
Աբեղյան Մ. 35, 177
Աբովյան Խ. 17, 24—27, 72, 90, 97, 110, 112, 176
Ագաթանգեղոս 163
Աթանասյան Ա. 184
Ալամդարյան Հ. 90
Ալեքսանդր II 129
Ալեքսանդր III 129, 149, 160, 188
Ալիշան Ղ. 220
Ակնունի Է. 9, 146, 237
Աղամիրյանց Պ. 249
Աղայան Ղ. 42, 49, 53, 54, 58, 65, 81, 97, 98, 100, 105, 106, 111, 112, 116, 118, 139, 165, 171, 259, 282, 284
Աղանյան Գ. 27
Աղասարյան Բ. 58
Աղբալյան Ն. 256
Աճառյան Հ. 177
Ամրիկյան Մ. 27
Այվազյան Գ. 58, 101, 111, 117
Այվազյան Կ. *(եպս.)* 181
Անանով Հ. *(Հովնանյան)* 53
Անանուն Գ. 9, 22
Անդրեև 247, 254
Առաքելյան Հ. 64, 101, 168
Առաքսանյան Ավ. 168
Արզանյան Գ. 17
Արզանյան Հ. 17
Արծրունի Գ. 34, 117, 118, 131
Արծրունի Եր. 29
Արծրունի Վահան 175
Արղության Դաճր. 53
Արղության Սոֆյա 102
Արղության – Երկայնաբազուկ *(իշխան)* 203
Աֆրիկյան Ա. 71

Բաբայան Ավ. 49, 102 116
Բաբայան Գ. 110
Բաբայան Սոֆյա 68, 94, 102, 103, 118
Բաբաջանյան Մասեհ 59
Բալակիրև Մ. Ա. 225
Բալաղյան Ս. 168
Բահաբրյան Առ. 56, 94, 96, 100, 111, 115, 118,
Բաշինջաղյան Գ. 168
Բաստամյան Վ. 86, 92, 93, 101, 115
Բարխուդարյան Գ. 81, 101, 118
Բարսեղյան Խ. 10
Բեգճաղարյան Ս. 49, 52, 54, 57, 100, 105, 116, 118, 135, 137, 147, 175
Բենիկ վարդապետ *(Գաբրիելյան)* 181, 247, 261
Բերբերյան Հ. 110
Բերբերյան Մ. 225
Բիկով 254
Բոգուսլավսկի 254
Բրաժնիկով 135, 136
Բուլիգին Ա. Գ. 276, 278

Գաբրիելյան Գ. 10, 289
Գալֆայան Ամբ. 114
Գամաղելյան Մ. 9
Գեղամյան Ե. 9, 195
Գեորգ IV *(Քևրնատնեյան)* 35, 38, 44, 59, 76, 80–82, 86, 87, 89, 116, 131, 132, 186

Գիրս Ն. Կ. 186
Գիրս Ֆ. 159, 160
Գոգոլ Ն. Վ. 177
Գոլիցին Գ. Ս. 179, 208, 209, 211, 220–222, 227, 232—237, 242, 248, 254–256, 259, 260, 268, 274
Գոլչ 113
Գորեմիկին Ի. Լ. 200, 204, 205, 214, 233
Գորկի Մաքսիմ 218
Գուռոխով Վ. Մ. 271
Գրիգորյան Զ. 110
Գրուբե 113
Գևորգեկյան 113

Դադյան Խաչիկ 260
Դաղբաշյան Հ. 175
Դանիելյան Ա. Գ. 9, 99, 112
Դարվին Չ. 178
Դակ Ա. 231
Դելյանով Ի. Գ. 134, 139, 143—145, 149, 153, 158, 160, 186, 193, 204
Դեռվեբյան Գր. 92
Դիսաեվեգ Ա. 95, 104
Դոնդուկով–Կուրսակով Ա. Մ. 130, 134, 137—139, 142, 144, 147, 151, 153, 154, 158, 160
Դրեպեր 178
Դուրնովո Ի. Ն. 183, 185, 186

Եգյան Կ. 99, 146
Եկմալյան Մ. 175
Եղիազարյան Վ. 147
Եղիշե 163
Երիմիա եպիսկոպոս 193
Երզնկյան Ե. 89, 101, 113,
Երզնկյանց Գր. 8, 19
Երիցյան Ա. 8, 18, 28, 110, 111, 120, 122, 124, 125
Երիցյան Ս. 68,
Երմոլով Ա. 234, 274
Եվանգուլյան Գ. 147
Եվտուշևսկի 113

Ջենգեր Գ. 231
Ջինովև Ի. 144, 258

Ջորյան Ս. *(Թոստոմ)* 246

Թադեոսյան Ե. 177
Թաղիադյան Մ. 90
Թամամշյան Միհ. 168
Թամրազյան Մ. 148
Թաշճյան Ն. 89
Թումանյան Հովհ. 171, 259, 284
Թումանյանց Մ. 249

Իգնատև Ն. Պ. 76, 82, 83
Իլմինսկի Ն. Ի. 271, 272
Իշխանյան 252
Իսահակյան Ավ. 284
Իսահակյան Հ. 10, 288

Լամզդորֆ Վ. Ն. 237
Լենին Վ. Ի. 19, 21, 43, 214—216, 256, 257, 264, 270, 273, 289, 291, 292
Լեո 8, 18, 25, 52, 59, 69, 96, 109, 178, 245, 255, 256
Լերմոնտով Մ. Յու. 177
Լինչ 179
Լիսիցյան Ստ. 168, 175, 177, 183, 282, 284
Լոբանով (—Ռոստովսկի) Ա. Բ. 85
Լոռիս–Մելիքով Մ. Տ. 128
Լևոնյան Գ. 177

Խալիպյան Հ. 59
Խատիսյան Գ. 8, 118
Խլրտենյան Հ. 102
Խոջայան Լ. 183, 184
Խոսրովյան Ն. 94, 192
Խորենացի 163, 177
Խրիմյան Մկրտիչ 168, 169, 172, 177, 178, 195, 197, 200, 203, 204, 211, 213, 214, 243, 259, 262, 277, 278, 281,
Խուդավերդյան Ներսես *(եպս.)* 190, 276

Մատուրյան Ալ. 225

Կամսարական 192
Կանայան Ս. 175, 177
Կանաճով 134
Կանչելլի 183, 243

Դասյան Ս. 217
Կարա-Մուրզա Ք. 177
Կարապետ աբեղա 184
Կարապետ արքեպիսկոպոս 50
Կյուի Յ. Ա. 225
Կնունյանց Բ. 264, 285, 286
Կոզիկյան Գ. *(նկարիչ)* 223
Կոմենսկի Յա. Ա. 95, 104
Կոմիտաս 175, 176, 191
Կոնստանտինով Ն. Ա. 20, 63, 222
Կոչեռով Ա. 74
Կոստանյան Կ. 101, 111, 177
Կովալևսկի Մ. Մ. 225 275
Կորֆ Ն. Ա. 63
Կրիտյան Ա. 71, 72
Կուզմինսկի *(սենատոր)* 274, 287

Հախումյան Համբ. 51
Հախումյան Մ. 51, 52
Հակոբյան Թ. 9
Հակոբյան Հակոբ 149
Համազասպյան Ա. *(վարդապետ)* 68
Համբարյան Ա. 10
Հայկազունի Պ. 35, 71
Հարությունյան Գ. 10, 289
Հարությունյան Իս. 175, 176, 282
Հարությունյան Ս. 230
Հարությունով Ի. 135
Հեռնել 113
Հովհաննիսյան Աբ. 118, 147, 192
Հովհաննիսյան Ա. Գ. 22
Հովհաննիսյան Գայանե *(Մատակյան)* 52, 102, 103, 118, 136, 137
Հովհաննիսյան Դարյա 68
Հովհաննիսյան Եղիսաբեթ 27
Հովհաննիսյան Հովհ. 177
Հովսեփյան Ղ. 113
Հովվյան Պ. 179, 259
Հուշարի, աշուղ *(Նահատակյան խ.)* 148
Հուսիկ վարդապետ 204

Ղարագյոզյան Նիկ. 197
Ղարաչյան Գ. *(Արկոմեդ)* 72, 73, 149, 178
Ղլտճյան Ա. 8, 48, 49
Ղուկասյան Հ. 49, 101, 111, 114, 118

Մագիստրոս Գր. 177
Մալխասյանց Ս. 8, 31, 168, 175, 282
Մակար կաթողիկոս *(Տեր-Պետրոսյան)* 47, 53, 152, 153, 155, 158, 160, 161, 163, 164, 170, 174, 182, 185, 186, 187, 189, 210
Մակինցյան Պ. 223,
Մահտեսի-Համբարձումյան Ո. 180
Մանանդյան Հ. 282,
Մանդինյան Ս. 56, 58, 61, 65, 94, 96, 99, 100, 105, 108, 110, 111—113, 115, 116, 118, 175, 282
Մանկունի Վ. 86
Մանվելյան Լ. 191, 284
Մաո Ն. 176, 225, 226
Մասն 113
Մատակյանց Հ. 137
Մատթեոս I *(Զուխաճյան)* 29, 30, 76, 132, 186
Մատինյան Կ. 71
Մարխս Կ. 219
Մելիք-Ազատյան Թագուհի 68
Մելիք-Բեգլարյան 196
Մելիք-Գրիգորյան Գ. 247
Մելիք-Թանգյան Ն. 13
Մելիքյան Հ. 10
Մելիք-Յոլչյան Ե. 10, 256, 289
Մելյան Մ. 170, 197, 201, 257
Մեսրոպ եպիսկոպոս 246
Մեսրոպ Մաշտոց 117
Միանասարյան Մ. 111
Միրոպիև Մ. Ա. 271
Մխիթար վարդապետ 266
Մհերյան Թ. 135–137
Մոսոլով Ա. 203, 204, 206
Մուրադյան Դ. 10
Մուրադյան Մ. (Դ.) 9, 51, 146, 151, 152, 242, 246
Մուրավյով Մ. 233, 234
Մուրավյով Ն. 234

Յանովսկի Կ. Պ. 128, 134, 145, 147–149, 156–159, 162, 166, 194–201, 203, 207, 208, 210, 215, 227, 228, 256
Յուրունյան Գ. *(եպս.)* 258
Յուժակով Ս. 224

Նազարյան Հովհ. 8, 111, 118,
Նազարյան Տ. 94
Նազարյան Ստ. 24, 26, 56, 65, 90, 96, 97, 110, 113, 116
Նալբանդյան Մ. 22—26, 71—73, 90
Նախաշինե 241, 250, 254
Նահապետյան 170, 182, 183
Նալսսարդյան Բ. 69, 101
Նեկրասովա Ե. 225
Ներսես Աշտարակեցի 28, 30, 54
Ներսիսյան Հ. 9
Ներսիսյան Մ. Գ. 9, 10, 150
Ներսիսյան Ս. 117
Նիկոլայ II 204, 275, 279
Նիկոլայի Ա. Պ. *(բարոն)* 78, 79, 81, 128, 131, 132, 134
Նիկողոսյան Համբ. 167, 170
Նիկողոսյան Ներսես 49
Նոլդե է. Յու. 130, 138, 278, 279
Նևերով Յա. Մ. 78, 79, 84

Շահազիզ Եր. 23
Շահազիզ Ս. 86, 96, 98, 106
Շահումյան Ստ. 263, 288
Շանթ Լ. 284
Շանշյան Պ. 28, 51, 52, 58, 90, 96
Շավարշյան Ա. 9, 97, 104
Շերեմետև Ս. Ա. 166, 183, 185, 186, 193, 198, 199, 205, 231
Շեֆսպիր 177
Շիշմանյան Հ. *(Մերենց)* 175
Շիրվանզադե 171
Շմերլինգ 254

Ջալխուշյան Գր. 9, 146, 274
Ջեխով Ն. Վ. 61, 62
Ջոպանյան Ա. 281
Ջորեկյան Գ. 184

Պալասանյան Ս. 101, 111, 114, 118
Պալյան 56
Պանճուլազյան 113
Պապաջանյան Վ. 58, 94, 137
Պապավա Ն. 107
Պասկևիչ Ի. Ֆ. 15
Պատկանյան Գ. 17, 23, 27
Պատկանյան Մ. 110
Պատկանյան Ռ. 98, 102, 110, 131, 171
Պարգյան Սուխիաս 105, 142—146, 169, 190, 229, 230, 242—244, 260
Պարոնյան Հ. 177
Պարսամյան Վ. 9, 10, 35, 71, 288
Պաուլսոն 113
Պեստալոցցի Ի. Հ. 95, 104
Պետրոսյան Ն. Լ. 62
Պլուգյան Մ. 58
Պլևե Վ. Կ. 237, 241, 243, 244, 248, 253, 258—260, 268, 274
Պոբեդոնոսցև Կ. Պ. 129, 233, 234, 237
Պողոսյան Հ. 43
Պռոսյան Ս. 254
Պռոշյան Պ. 51, 52, 81, 96—98, 105, 118, 139, 171, 175

Ջալալյան Ռ. 137, 192, 230
Ջալալյան Ս. *(նպս.)* 28
Ջիվելեգով Ա. 9, 146, 220

Ռաշմանյան Տ. 180, 282, 284
Ռիմսկի-Կորսակով Մ. Ա. 225
Ռոդոնեժսկի 113
Ռոստոմյան Գ. 65, 101
Ռուսսո Ժան Ժակ 95, 104

Սահակյան Ս. *(քահանա)* 282
Սահակ Պարթև 117—118
Սանասարյան Մ. 49, 99, 146
Սանթրոսյան Մ. 9, 19
Սարաչև 134
Սարգսյան եղիսաբեթ 230
Սարգսյան Լ. 8, 181, 282
Սարգսյան Ն. 9
Սաֆարյան 114
Սեդրակյան Ա. *(նպս)* 41, 50, 81, 86, 87, 101, 134, 147, 155, 192, 203, 213, 260
Սիմոնյան Ն. 114
Սիմոնյան Պ. 39, 47, 114
Սիմոնյանց Մ. 113
Սիպյագին Գ. Ս. 234, 235, 237
Սիվերս է. Կ. 77
Սմբատյան Մ. 193

Սպենդիարյան Հովհ. 168
Սվյատոպոլկ-Միրսկի Պ. Դ. 269, 276
Ստեփանե Խ. *(Ս. Ստեփանյան)* 52, 57, 58, 91, 92, 96, 100, 115, 169, 213, 214, 242
Ստոումիենսկի Վ. Յա. 20, 63, 222
Սրապյան Կ. 178
Սրվանձտյանց Գ. 112
Սունդուկյան Գ. 69
Սուվորին Ա. Ս. 218
Սուրենյանց Գեորգ 86, 207, 260
Սուրենյանց Վ. 177

Վարդանով Տ. 147
Վարժապետյան Ներսես *(պատրիարք)* 82, 83, 152
Վարձելյան 113
Վելիչկո Վ. 218, 219, 224
Վեսելովսկի Ա. Ն. 225
Վեսելովսկի Յու. Ա. 63, 215, 225, 226
Վիտտե Ս. Յու. 220, 233, 234, 274, 276
Վորոնցով-Դաշկով Ի. Ի. 240, 241, 275, 277

Տատիշչև *(կոմս)* 199, 205, 206, 113
Տեր-Ալեքսանդրյան Գ. 110, 111
Տեր-Ասրատյան 247
Տեր-Գրիգորյան Ա. 9
Տեր-Գրիգորյան Հովհ. 81, 101
Տեր-Գրիգորյան Ս. 137
Տեր-Գավրյան Կ. 101, 111, 113,
Տեր-Ջաֆարյան Ի. 137
Տեր-Խաչատրյան Վ. 180
Տեր-Հակոբյան Ավ. 101, 114
Տեր-Հակոբյան Ն. 111, 113
Տեր-Հովհաննիսյան Գ. *(Քաչբերունի)* 49, 102
Տեր-Հովհաննիսյան Հակոբ 81, 93, 116
Տեր-Ղևոնդյան Նիկ. 101, 110, 111
Տեր-Միրաքյան Հ. 35, 282
Տեր-Մկրտչյան Գ. 203
Տեր-Մկրտչյան Կ. 177
Տեր-Մովսիսյան Մ. 276
Տեր-Սարգսյան Մ. 111
Տեր-Ստեփանյանց Ստ. 116
Տիգրանյան Լ. 57, 102, 136, 137
Տիգրանյան Ս. 282
Տոլստոյ Գ. Ա. 129, 134, 138, 139, 144, 151, 153, 159, 160, 271
Տուրգենև Ի. Ս. 177

Բաֆֆի 78, 103, 106, 112, 131, 192

Ուխտամսկի Է. 206, 224
Ուշինսկի Կ. Դ. 63, 104, 107, 110, 111, 113

Փարպեցի Ղ. 163
Փափազյան Վ. 284
Փիլոսյան *(Հ. Ագամյան)* 223

Քալանթար Ա. 168
Քամալյան Ս. 148
Քանհանյան Վառվառե 229
Քարամյան 180

Օռժևսկի Պ. Վ. 137
Օտով 149
Օրբելի Հ. 17
Օրմանյան Մ. 159, 257

Ֆոնվիզին Դ. Ի. 177
Ֆորստել 183
Ֆրեռրել Ֆ. 95, 102, 104
Ֆրիշ Է. 233, 234

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ագուլիս 17, 50, 54, 85, 98, 249, 250
Ադրբեջան 15, 33
Ալավերդի 286
Ալեքսանդրապոլ 17, 27, 40, 41, 48—50, 53, 54, 60, 64, 70—72, 97, 100, 102, 103, 148, 167, 196, 230, 242, 251—253, 255—257, 272, 282
Ալժիր 74
Ախալցխա 15, 17, 27, 50, 70, 97, 100, 122, 170, 195, 203, 230, 236, 242, 253,
Ախալքալակ 17, 50, 145, 253, 282
Անդիջան 274
Անդրկասպյան երկրամաս 193
Անդրկովկաս 7, 11, 15—18, 20, 27, 28, 33—35, 39, 42, 45, 50, 51, 55, 56, 58, 60, 61, 64, 65, 67, 69, 72, 74, 97, 101, 102, 107, 116—118, 120—125, 130, 145, 146, 152, 157, 159, 160, 166, 171—174, 180, 191, 196, 201, 206, 207, 217, 218, 220, 221, 229, 233, 241, 246, 247, 253, 255, 260, 262, 266, 272, 284, 285,
Աշտարակ 242, 250
Աստրախան 212, 245
Աստրախանի բեմ 12, 121, 123, 142, 146, 172
Արմավիր 253
Արևելյան Հայաստան 5, 7, 11
Արևմտյան Հայաստան 68, 220, 257
Արյակ 253

Բաթում 34, 70, 223, 253, 272
Բալականներ 75, 131, 268
Բամվի նահանգ 7
Բարու 34, 50, 54, 64—67, 69, 92, 100, 101, 150, 201, 212—214, 230, 245, 251, 257, 265, 269, 272, 286
Բելոռուսիա 74
Բուլղարիա 258

Գանձակ *(տե՛ս Ելիզավետպոլ)*
Գանձասար 60
Գեղարդ 60
Գերմանիա 49, 95, 102, 126, 131, 175
Գյուլազարակ 253
Գոշավանք 176
Գորի 69, 145
Գորիս 253
Գուրիա 287

Դերբենդ 253
Դիլիջան 176, 248
Դորպատ 126, 137
Դսեղ 252, 253

Եգիպտոս 186, 258
Ելիզավետպոլ *(Գանձակ)* 15, 17, 66, 73, 92, 149, 150, 203, 247, 248, 253
Ելիզավետպոլի նահանգ 7, 193, 225, 236, 251, 260, 266
Եղվարդ 250, 268
Եվրոպա 35, 93, 94, 99, 100, 102, 103, 115, 126, 197, 258
Երնջակ 60
Երուսաղեմ 78, 257, 258
Երևան 15, 17, 27, 30, 40, 52, 54, 58, 64, 70, 72, 84, 94, 97, 100, 136, 137,

147, 190, 196, 202, 212, 223, 228, 230, 241, 242, 250, 257, 272, 281, 282
Երևանի բեմ 12, 19, 81, 97, 120—123, 139, 146, 170, 172, 196, 202, 242, 259
Երևանի նահանգ 193, 225, 228, 230, 236, 250, 254, 266, 267

Ջանգեզուր 201, 253

Էջմիածին 12, 13, 16, 19, 33, 35, 36, 38, 47, 49, 59, 60, 61, 66, 69, 70, 72, 76, 78, 85, 86, 89, 91, 101, 110, 116, 119—121, 126, 131, 132, 138, 141, 144, 146, 148, 155, 158, 159, 161, 167—169, 171, 172, 177, 178, 183, 186, 188, 189, 190, 195, 198, 200, 205—207, 229—231, 234—237, 241—246, 248, 250, 254—261, 267, 268, 276—282

Թավրիզ 98, 258
Թելավ 70
Թեոդոսիա 58, 77, 92, 101
Թիֆլիս 15, 17, 27, 28, 30, 34, 47, 51—54, 64, 67—73, 91—93, 101, 103, 110, 117, 122, 124, 146, 148—152, 159, 168, 170, 180, 190, 193, 195, 196, 201, 212, 236, 245, 247, 256—261, 272, 273, 277, 280, 282, 283, 286
Թիֆլիսի նահանգ 7, 80, 133, 266
Թուրքիա 11, 75—77, 83, 131, 137, 151, 183, 186, 190, 224, 234, 243, 258

Իզդիր 246, 254, 255, 282
Իրան *(Պարսկաստան)* 11, 77, 185, 230, 234, 243, 258

Լայպցիգ 111
Լեհաստան 274
Լոնդոն 236, 258
Լոռի 175, 252, 286

Խարկով 126
Խնձորեսկ 202

Կազան 126, 137, 271
Կանիբեհ 258
Կաղզվան 230
Կարին 48, 50
Կարս 48, 50, 54, 70, 132, 190, 192, 230, 246, 251, 253, 256, 274
Կարսի մարզ 12, 122, 225, 236, 253, 254
Կարսի և Բաթումի վիճակ 122, 123, 146
Կիլիկա 136, 258
Կիև 126, 227
Կոնդ 52
Կոստանդնուպոլիս *(Պոլիս)* 28, 29, 35, 67, 76—78, 111, 118, 132, 143, 151, 152, 154, 158, 186, 187, 190, 234, 257, 258
Կովկաս 12, 15, 18, 36, 50, 62, 69, 74, 75, 78, 79, 84, 125, 126, 130, 131, 138, 139, 147, 151, 158, 186, 189, 194, 206, 209, 218, 220, 222, 223, 237, 240, 245, 253, 263, 274, 275, 280, 285, 286
Կուրթան 253

Հաղարծին 176
Հայաստան 23, 33, 72, 114, 136, 137, 192, 211, 225, 288
Հառին 60, 200, 230
Հեռավոր Արևելք 267, 268
Հյուսիսային Կովկաս 157, 229, 253
Հնդկաստան 7, 258
Հոլանդիա 258

Ղազախ 148
Ղամարլու 230, 250
Ղարաբաղ 60, 65, 81
Ղարաբաղի կամ Արցախի բեմ 12, 19, 81, 120—123, 146, 172
Ղարաբիլիսա 71, 248
Ղզլար 253
Ղրիմ 7, 214
Ղուբա 66

Մասսարա 250
Մարսել 258
Մարց 252

Մեծամոր Արևելք 75, 268
Մեծթաղլիկա 74
Միջին Ասիա 74
Մոզդոկ 212
Մոսկվա 7, 94, 97, 126, 203, 224, 226, 238

Նախիջևան *(Հին)* 15, 70, 230, 250
Նոր Բայազետ 68, 250
Նոր Նախիջևան 58, 59, 65, 67, 101, 102, 212, 253
Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի բեմ 12, 121, 123, 146, 152, 172
Նոր Ջուղա 230
Նուխի 17, 66, 70, 133, 253, 256

Շամախի 54, 60, 66, 67, 212, 213
Շիրակ 256
Շիրվանի կամ Շամախու բեմ 12, 120—123, 146, 172
Շվեյցարիա 100, 125, 126
Շուշի 15, 17, 27, 30, 51, 52, 54, 57, 58, 64, 70, 90—92, 96, 97, 100, 110, 155, 181, 196, 223, 251, 253, 256

Ջխար 202
Ջուլմակլի 230

Պեսթերբուրգ 35, 36, 49, 82, 84, 87, 97, 101, 110, 111, 113, 126, 129, 134, 136, 139, 142, 143, 146, 153, 159, 186, 190, 197, 198, 203, 204, 206, 213, 218, 224, 231, 234, 235, 238, 259, 269, 275, 276
Պոլտավա 190
Պովոլժյե 74
Պորտ-Արտուր 269
Պրուսա 35

Ջալալօղլի 252
Ջալեր 60

Ռուսաստան 5—7, 11—16, 18—20, 33, 35, 57, 61, 63, 65, 66, 72, 73, 75, 77, 78, 97, 102, 103, 113, 114, 120, 122, 124—126, 128, 130—132, 143—146, 157, 163, 164, 176, 188, 189, 192, 197, 211, 214—221, 224—227, 234, 257, 258, 262, 266, 268—270, 274, 275, 285, 292

Սալմաստ 230
Սաղիանի 60
Սամարա 260
Սանահին 60
Սացխենիս 197
Սիմֆերոպոլ 100
Սիս 78, 258
Սլիվեն 258
Ստավրոպոլ 245
Սուրբ Խաչ վանք 184
Սուրմալու 254
Սևան 176, 245

Վաղարշապատ *(տե՛ս էջմիածին)*
Վան 135, 136
Վարդաբլուր 253
Վարդաշեն *(Նուխիի գավառ)* 133
Վարշավա 126
Վլադիկավկազ 224
Վորոնեժ 189
Վորոնցովկա 252
Վրաստան 33, 93, 195
Վրաստանի և Իմերեթիայի բեմ 12, 19, 28, 81, 97, 116, 117, 120—123, 139, 146, 170, 172, 196, 197, 260

Տարև 60

Յուսիմա 279

Ուզունլար 253
Ուլիա-Նորաշեն 41
Ուռուտ *(Լոռի)* 253
Ուռուտ *(Կարսի մարզ)* 253

Փարիզ 258, 281

Քարվանսարա 70, 176, 193
Քութայիս 272
Քութայիսի նահանգ 243

Օդեսա 78, 126, 137
Օշական 250, 268
Օրենբուրգ 260
Օրյոլ 190
Ֆինլանդիա 274
Ֆրանսիա 125, 126, 131

ԴՊՐՈՑՆԵՐ

Աղուրյան *(Ալեքսանդրապոլ)* 53, 54
Գայանյան *(Երևան)* 52, 136, 137, 171, 230
Գայանյան *(Թիֆլիս)* 51, 52, 53, 94, 102
Գևորգյան եկմարան *(Էջմիածին)* 56, 59, 61, 86—88, 99, 101, 141, 156, 159, 166, 167, 174, 176, 177, 179, 182—184, 196, 207, 110
Եղիսաբեթյան *(Ախալցխա)* 54
Երևանի թեմական դպրոց 8, 16, 30, 49, 54, 56, 57, 97, 100, 147, 175, 177, 179, 180, 202 255
Ժառանգավորաց *(Էջմիածին)* 16, 59, 86, 88
Լազարյան եկմարան *(Մոսկվա)* 96, 101, 110, 115, 116
Լուսավորչի *(Բաքու)* 54
Խալիպյան ուսումնարան *(Թեոդոսիա)* 58, 59, 77
Կարապետյան *(Ախալցխա)* 50, 173, 200
Հայկանուշյան *(Վ. Ագուլիս)* 54
Հոխիսիմյան *(Բաքու)* 170
Ղարաբաղի թեմական դպրոց *(Շուշի)* 8, 16, 30, 49, 52, 54, 56—58, 96, 97, 175, 177, 178, 261, 278, 280
Մարիամյան *(Շուշի)* 51—52
Մարիամյան-Հովնանյան *(Թիֆլիս)* 53, 171, 196, 228, 230
Մեղրու ծխական դպրոց 124
Մևարոպյան *(Ախալքալակ)* 50
Ներսիսյան դպրոց *(Թիֆլիս)* 16, 17, 28, 29, 53—56, 61, 96, 100, 101, 174, 175, 177, 178, 180, 191, 196, 210, 214, 248
Նոր Նախիջևանի թեմական դպրոց 58, 59, 100, 210, 211
Նամախու դպրոց 16, 54, 60
Նուշանիկյան *(Կարս)* 54
Սահականուշյան *(Ալեքսանդրապոլ)* 54
Սահականուշյան *(Երևան)* 52
Սուրբ Փրկչի (վիճակային) դպրոց *(Ալեքսանդրապոլ)* 40, 48—50, 54, 71, 124

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարեգործական ընկերություն *(Ալեքսանդրապոլ)* 71—72
Հայոց բարեգործական ընկերություն Կովկասում 69—70, 101, 117, 171, 195, 221, 223
Հայոց բարեգործական ընկերություն *(Նոր Նախիջևան)* 65
Հայուհյաց բարեգործական ընկերություն *(Թիֆլիս)* 68, 195, 196
Հայուհյաց խնամատար ընկերություն *(Նոր Նախիջևան)* 67
Հրատարակչական ընկերություն 67, 220
Մարդասիրական ընկերություն *(Բաքու)* 65—67, 101, 117, 171, 196, 212, 213
Մարդասիրական ընկերություն *(Նոր Բայազետ)* 68

ՎԱՀԵ ՍՄԲԱՏԻ ԵՐԿԱՆՅԱՆ
ВАГЕ СМБАТОВИЧ ЕРКАНЯН

ՊԱՅՔԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1870—1905)

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ



Հրատ. խմբագիր Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ
Կազմը՝ ՅՈՒ. Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՖ 03506 Պատվեր 194 Տպաքանակ 2000
ԽՀԽ 1235, հրատ. 3259։ Հանձնված է արտադրության 18/III 1970 թ., ստորագրված է տպագրության 5/XI 1970 թ., տպագր. 19,37 մամ., հրատ. 16,46 մամ., թուղթ № 1, $60\times901/_{16}$։ Գինը 1 ռ. 34 կ.

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության, 24։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220045932

ЦЕНА
Ап
45932